

34

982

Гард Бессе и
Кибсернелит-рун
Гессе-рун

2000



նկատուրենն վեր չ'վայել'որ որ մենք ալ մեր ուսանողութան համ
Համարակալութան յասուկ դասագիրք մ'ունենանք :

Ո՛չ ապա՛հեն մեր աշխատարարութան յաջորդաբար գտած
նկարքիւնք եւ գործի մարդոց կողմէն այս առթիւ մեզ յա-
զնահասու մը մեր բաժնէրուն նեմարտութիւնք կ'ապացուցանե-
ալլու մեր գրքին ալ կարեւորութիւնք եւ օգտակարութիւնք :

Մեր գործին առաւելութեանց եւ օգտակարութեան վրայ խ-
տեհնինս՝ ամենակատարեալ եւ անբերի գործ մը հրատարակած ք-
լու յաւակնութիւնք չ'ունինք ամենեւին, ընդհակառակը կը խոս-
վանինք որ մեր գործ գուցէ բերի կողմեր ունենայ, այլ փորձա-
քեանք ինչ որ գիտեինք ըստ այնմ ջանացինք ըստ կարի գոհացուցիչ
եւ օգտակար բնծայել զայն յօգուտ ազգային մանկւոյն. մենք բրինձ
ըստ մեր համեստ կարողութեան եւ միջոցին, անելի կատարելագոր-
ծեալ եւ նոխազոյն գործերը մեզուկ աւելի ձեռնհաս եւ կարող մաս-
նագէտներու բողոլով որ պատրաստեն :

Քեւ վստահ եմ քե իր համեստութիւնք վիրտուորած պիտի ըլլամ,
սակայն չեմ կրնար ինքզինքս զսպել հրապարակաւ իմ խորին շնոր-
հակալիս յայտնելէ այն ազնիւ եւ վեհանձն երիտասարդին, ԱԶՆՈՒԱ-
ՇՈՒՔ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖԷՆՏԻ ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆԻ, որ բարեհասնեցաւ
ամենայն սիրով ստանձնել ներկայ գործիս սպազութեան ամբողջ ծախ-
քը, որով ո՛չ միայն զիս, այլ նաեւ ամբողջ ազգային մանկիսն եւ երիտա-
սարդներէ շատերն, որոնք առեւտրական ասպարէզը բեւակոխելու կը
պատրաստուին, երախտապարս բողոք իրեն, զի հակառակ պարտա-
լին՝ կարելի չը պիտի ըլլար ինձ այս անգամուտան սպազութիւնք
ա՛յստան նոխ եւ խնամեալ ընել :

Ն. Տ.

Պեքիբաժ
1 Յունվար 1898

Գրողարան
ՊԵՔԺ ԱՍՊՊԱՂԵԱՆԻ
Հայկա

մեր ազգային վարժարանաց շատերուն մէջ Տոմարակալութեան տարրական
սկզբունքն ալ չ'աւանդուիլը դժբաղդարար, միայն կեղծանական վարժարանք
իր Ա. շրջանին մէջ Համարակալութեան համար մէկ տարւոյ դասընթացը որո-
շած էր :

Ն Ա Մ Ա Կ

Առ երիտասարդ ունև որ՝ վաճառակախութեան ասպարեկը մտնելու համար՝ խորհուրդ կը խնդրեմ փորձառու եւ հմուտ վաճառակախ մը :

Ազնիւ բարեկամ,

Ընկալայ նամակդ, յորում առեւտրական ասպարեկը մտնելու դիտաւորութիւնդ յայտնելով խորհուրդ կը հարցնես ինձ այդ մասին, եւ կը փափաքիս գիտնայ թէ որո՞նք են ապահով միջոցները բարի եւ պարկեշտ վաճառական մ'ըլլալու :

Ահաւասիկ իմ խորհուրդս այդ մասին :

Ամենէն առաջ, ջանա՛ր ըստ կարի պէտք եղած ծանօթութիւններն ստանալ եւ մանաւանդ այն ծանօթութիւններն՝ որք վաճառակախութեան կը վերաբերին. միանգամայն պէտք է ունենաս անստգիւտ, ուղիւղ եւ անկեղծ ընթացք մը, որով կարենաս գտնել կանխաւ վստահութիւն եւ ընդարձակ վարկ, որք էական պայմաններն են տեւականութեան եւ զարգացման ամէն ձեռնարկի :

Մի՛ մտաբերեր դու ինքնին գործի ձեռնարկելու շատ կանուխ, վասն զի երիտասարդ մը չ'ունի տակաւին այն փորձառութիւնն եւ գիտութիւնն, որք հարկաւոր են այդպիսի ձեռնարկի մը համար. մի՛ ընէր նոյնը նաեւ ծերութեան մէջ, յորում մարդ չ'ունենալով բնականաբար այն եռանդն եւ կորովն, զորս պարտիւ ի կիր առնուլ իր գործոց մէջ, անփոյթ կը գտնուի բարեղէպ առիթներէն օգուտ քաղելու, ծերութեան յատուկ անդգայութեան եւ դանդաղութեան պատճառաւ. չափազանց զգուշութիւնն եւս երբեմն անակնկալ կերպով կործանումն կը պատճառէ մարդուս :

Ձեռնարկելիք գործիդ ընդարձակութեանը համեմատ եւ անձնական պէտքերդ եւ տանդ ծախքերը հոգալու չափ դրամագլուխ ձեռք չի բերած գործի մի՛ սկսիր. Լաւ ի միտ ա՛ն թէ, ըստ բնական օրէնքի, ոչինչ կը լինի յոչնչէ, եւ թէ՛ ուրիշներու քսակէն քաղելով՝ մարդ կը յետադիմէ՝ փոխանակ յառաջադիմելու. եւ վերջապէս կը կործանի :

Առաջին եւ զլիաւոր աշխատութիւնդ ըլլայ բոլոր տոմարներդ կարգի եւ կանոնի դնել. միշտ նայէ՛ որ բոլոր գործողութիւններդ արժանագրես կամ արժանագրել տաս փորձ եւ հմուտ համարակալի մը ամենայն ճշդութեամբ եւ կարգաւորութեամբ :

Փոյթ ունեցիր մանաւանդ նամակներդ կանոնաւոր եւ յստակ ոճով գրելու, որովհետեւ ամէն տեսակ գործի մէջ, մանաւանդ վաճառակախութեան մէջ՝ լաւ նամակագրութիւն գիտնալը հազուագիւտ եւ յոյժ յարգի է :

Մի՛ ծուլանար քեզ գրուած նամակներուն պատասխանները ժամանակին տալու, վասն զի այդ կերպով կ'երեւին քու փոյթդ եւ ուշադրութիւնդ, զոր ունիս քու թղթակիցներուդ շահուց նկատմամբ եւ այդ կերպով կը յաջողիս նորանոր գործեր գտնել :

Ջահա ամէն կողմ պատուաւոր Թղթակիցներ ունենալու, ծանօթ իրենց ուղղամտութեամբը, ճշդապահութեամբն եւ յարատեւութեամբը:

Չգոյշ կեցիք անոնցմէ որ երկրորդ ընաւորութիւն եւ կասկածելի համբաւ մ'ունին. զգալապէս պիտի աւելնայ քու վարկը ցորչափ տեսնեն որ զու միմիայն աղէկ տուններու հետ զործ կրնես:

Պարկեշտութեամբ եւ իբրեւ խոհեմ եւ խելացի մարդ վարուէ՛ ամէնուն հետ եւ ամէն պարագայի մէջ. այդ կերպով պիտի աւելնայ պատիւը եւ այնու ձեռնտութիւն պիտի կրնաս գտնել քու նեղութեան կամ կարօտութեան ժամանակներուդ մէջ:

Մի՛ մոռնար առջի վիճակդ՝ երբ բարեբաստ կացութիւն մ'ունենաս, մի՛ հպարտանար երբ գործիդ մէջ յաջողութիւն գտնես, եւ երբէք մի՛ անարգեր դժբաղջ մարդիկն. յիշէ՛ որ բախտին մէկ ձախողութեամբ միկոնները յոչինչ կը դարձնէ:

Քու խոստումներդ ու պարտականութիւններդ ճշդութեամբ եւ ուշադրութեամբ կատարէ՛:

Առանց լաւ խորհելու, երբէք մի՛ ձեռնարկեր գործի, այլ առաջուց լաւ խորհէ՛ եւ կշռէ՛ ինչ որ պիտի ընես. շատ քիչ անգամ տեսնուած է որ յախուռն եւ անխորհուրդ կերպով գործի ձեռնարկող մարդիկ յաջողին:

Կանոնաւոր եւ համեստ կենցաղ մը վարէ՛. կարգ ու կանոն դի՛ր քուր ծախքերուդ. այդ բանը մարդուս վարկը կը պահպանէ. աւելի դիւրին է խրնայել քան թէ շահիլ, եւ խնայողութեամբ պահուած ստակ մը իրական շահ մ'է՛:

Եթէ նեղութեան կամ տագնապալի կացութեան մէջ գտնուիս, նախ եւ առաջ խորհուրդ հարցուր. բայց ջանա՛ զգուշութեամբ ընտրել այնպիսի խորհրդատուներ, որ անշահասէր եւ լուսամիտ անձ մ'ըլլայ. եւ նայէ՛ որ այն կարգի մարդոց մէջէն ընտրես որ քեզ նման ճիշդ միեւնոյն պարագային մէջ գտնուած ըլլան. եւ ապա ուրիշներուն կարծիքն ալ ա՛ռ եւ ըստ այնմ շարժէ: Շատ վաճառականներ որ կործանած են եւ կը կործանին, պատճառն ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ ուրիշներու խորհուրդ չ'հարցնելն եւ իրենց անձին վրայ չափազանց քննադատութիւն ունենալն:

Գործունեայ, աշխատասէր, պարկեշտ եւ արդարասէր եղի՛ր, բայց չըլլայ թէ կարծես որ քու ունեցած տողանդը եւ բարեմասնութիւններդ ապահով երաշխիք են՝ քեզ համար բարեբաստ յաջողութիւն մը պատրաստելու. ս՛չ. այլ գէթ ի ներքուստ հաւաստի պիտի մնաս խլճմտաներդ մարուք եւ անբարեբաւ ըլլալուն, այն է՝ խոհեմութեան եւ իմաստութեան կանոնայ համաձայն գործած ըլլալուդ. եւ ինչ որ ալ ըլլայ քու գործոցդ վախճանը, պիտի վայելես միշտ խելացի մարդոց յարգանքն եւ հաւանութիւնը:

Յաջողութիւն մաղկեկով քու նոր գործիդ

Մնամ յարգանքով
Ձերդ

Արթուր Արթուրյան
Արթուրյան Գրական Կենտրոն
Արթուրյան Գրական Կենտրոն

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՏԱՐԵՐԲ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ



ՔԼՈՒԻ ԱՌԱՋԻՆ

ՓՈՒՍԱՆԱԿՈՒԹԻՒՆ. — ԴՐԱՄ. — ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Վաճառականութիւն ըսելով կը հասկցուի հողին բերքերուն, այսինքն, երկրագործութեան եւ ճարտարարուեստի արտադրութեանց փոխանակութիւնը, որուն նպատակը պէտք է ըլլայ շահ մ'ընել: Փոխանակութեան մէջ երկու անձ կ'ըլլայ. մին՝ որ իր ապրանքը կը տայ եւ միւսը՝ որ զայն առնել կը յօժարի, փոխարէն աւելով անոր համարժէք ուրիշ ապրանք մը: Յայտնի է թէ մինչեւ այսօր Ափրիկէի եւ Ովկիանոսի ժողովրդոց մէջ վաճառականութիւնը աչս կերպով, այսինքն, փոխանակութեամբ կ'ըլլայ. զորօրինակ, եւրոպացիք կը տանին անոնց կերպաններ, ոգելից ըմպելիներ, մանրիկէզէք (խուրճալաք), ապակեայ անոթներ, զորս կը փոխանակեն անոնց երկրին զանազան ապրանքներուն հետ: Միեւնոյն բանը շատ անգամ կ'ըլլայ նաեւ Թուրքիոյ զանազան դաւառներուն մէջ:

Փոխանակութիւն ընող երկու կողմէն մին՝ եթէ իր առած ապրանքին փոխարէն դրամ տայ, այդ գործողութեան փոխանակութիւն չ'ըսուիր, այլ գնումն և վաճառումն, այսինքն, մէկ կողմը բան մը զնած և միւս կողմը բան մը ծախած կ'ըլլայ: Եւ ընդհանրապէս վաճառականական գործողութիւն ըսելով պէտք է հասկընալ շարժուն իրերուն գնումը և վաճառումը:

Վաճառականութիւն ընել կը նշանակէ ուրեմն ապրանք գնել գանձնք շահով վաճառելու համար: Մենք այսօրուան քաղաքակիրթ ընկերութեան մէջ ճնած ըլլալով՝ առեւտուրին վիճակին, այսինքն, փոխանակութեան դրութեան անպատեհութեանց վրայ գրեթէ գաղափար չ'ունինք և մեզի երեւակայական բան մը կը գայ: Ասկէ դատ՝ մեր կեանքին առաջին տարիներէն դրամին գործածութեան վարժուած ըլլալով, բնական է որ գիտակցութիւն չ'ունենանք այն անգին և անժխտելի ծառայութեան, զոր կը մատուցանէ մեզ Դրամը: Մտքով պէտք է ետ ետ երթանք բոլորովին տարբեր ընկերութեան մը մէջ, ուր միայն պիտի կրնանք ճիշդ գաղափար մը կազմել այն դժուարութեանց վրայ, զորս դրամին բացակայութիւնը առաջ պիտի բերէ: Առջի բերան կը կարծուի թէ դրամին գոյութիւնը երկու նեղութիւն կը պատճառէ. որովհետեւ՝ ինչպէս քիչ առաջ ըսինք, դրամով երկու փոխանակութիւն կ'ընենք, գնումն և վաճառումն, մինչդեռ փոխանակութեամբ՝ մէկ: Բայց երբ արագ ակնարկ մը նետենք պարզ փոխանակութեան անբաժան դժուարութեանց և անպատեհութեանց վրայ, այն ատեն պիտի պնտենք թէ՛ առեւտրութիւնը միշտ դրամով առեւտուրին կողմը կը մնայ: Այդ տեսակ քաղաքածք մը միայն կըրնայ մեզի ցոյց տալ թէ՛ դրամը մեզի մէկ ծառայութիւն մը չի մատուցաներ, այլ շատ մը առեւտրութիւններ կը տայ զորս հիմա կարգաւ պիտի տեսնենք:

Փոխանակութեամբ առեւտուրը երեք զլխաւոր անպատեհութիւն ունի, որոնց վրայ կ'արժէ օրինակներով խօսիլ, ի վեր հանելու համար դրամով առեւտուրին առեւտրութիւնները:

1. Հարուադէպ է գտնել երկու անձեր, որ իրենց ձեռքը գտնուած տարբեր ապրանքները իրարու հետ փոխանակելու պէտքըն ունենան. մէկուն ունեցածը միւսին պէտք չըլլար և փոխադարձաբար, զորօրինակ, գիցուք թէ հողագործը մաս մը ցորեն կը բերէ քաղաք և երկաթ գնել կուզէ. սակայն դժուար կ'ըլլայ իրեն գտնել մէկը որ թէ՛ երկաթ ունենայ անոր տալու և թէ՛ ցորեն առնելու պէտք ունենայ: Ուստի հողագործը փոխանակ մէկի՝ երկու փոխանակութիւն կ'ընէ. նախ ցորենը կը վաճառէ դրամով և ետքը առած դրամովը երկաթ կը գնէ: Այլ երկու գործողութիւնով՝ զորով հանազանք փոխանակած եղաւ իր ցորենը

Այլ իմ խօսքի Գնահատման արժեքը

ըննը երկաթին հետ: Սակայն դրամին գործածութեամբը հողագործը մէկ քանի առեւտրութիւններ ունեցաւ, զորօրինակ, կարող եղաւ իր ցորենը ծախելու անանկ մէկու մը, որ անոր պէտքն ունենալով, թէրեւս պատրաստ էր երկաթը ծախողէն աւելի գին վճարել ցորենին և երկրորդ՝ դրամն ի ձեռքին ունենալով կարող էր այլ եւս երկաթը գնել անանկ մէկէն, որ դրամի պէտք ունենալով՝ յօժար էր ուրիշներէ աւելի աժան գինով վաճառել իր երկաթը: Այս կերպով, երկու ապրանքին, այն է՝ ցորենին և երկաթին արժէքները բազդատուեցան և երկուքին համար ալ առանձին գիներ որոշուեցան իրենց չափին համեմատ: Վասն զի, գիցուք թէ՛ 100 հօխ ցորենը 200 դր. ի ծախուեցաւ և մէկ կէնդինար երկաթն ալ նոյնչափ դրամով առնուեցաւ, ըսել է թէ 100 հօխ ցորենը և մէկ կէնդինար երկաթը հաւասար արժէք ունեցան:

2. Փոխանակութեան երկրորդ անպատեհութիւնն է՝ փոխանակելի ապրանքներուն իւրաքանչիւրին ուրիշ ապրանքի մը նըկատմամբ ունեցած արժէքը որոշելու դժուարութիւնը, զորօրինակ, ենթադրենք թէ՛ որոշեալ թուով կով պիտի տանք այսչափ ցորենի փոխարէն, եթէ միեւնոյն կերպով փոխանակութիւն ցորենը պանիրին հետ, պանիրը հաւկիթին հետ, հաւկիթը մեղրամովին հետ և այսպէս շարունակելու ըլլայ, այն ատեն սա հարցը կը ներկայանայ թէ, քանի՞ կով որչա՞փ մեղրի հաւասար է, այսինքն, վերոյիշեալ իւրաքանչիւր ապրանքէ որչա՞փ տալու է որոշեալ քանակութեամբ ուրիշ ապրանք մ'առնելու համար:

Եթէ վերո իշեալ գործողութիւնը փոխանակութեամբ շարունակելու ըլլանք, հարկ կ'ըլլայ շինել ընթացիկ-գնոց գիրք մը, ինչու որ ամէն ապրանք հոն արժէքուցուած պիտի ըլլար ուրիշ ամէն տեսակ ապրանքի հետ, այս կերպով երեւակայելու է այն աշխատութիւնը որ պիտի ըլլայ պատրաստելու այդ տեսակ ըստուար հատոր մը կամ հատորներ, որ պարունակէ բոլոր փոխանակելի ապրանքներուն իւրաքանչիւրին արժէքը հանդէպ բոլոր միւս ապրանքաց: Եւ այս ընթացիկ-գնոց հատորները պատրաստելէ աւելի դժուար պիտի ըլլար առեւտուրի մարդոց ըմբռնել կատարելապէս և գործնականի մէջ օգտակարապէս գործածել անոնց պարունակութիւնը, մանաւանդ՝ երբ ի նկատի առնենք թէ իւրաքանչիւր ապրանք հատատ արժէք մը չ'ունենար երբէք, օրինակի համար. ո՛ր և է երկրի մը կամ մէկ քանի երկիրներու մէջ միանգամայն երաշտութեան պատճառով ցորենը և գարին նըուաղ կ'ըլլան, այդ պարագային՝ անոնց գինը պիտի բարձրանայ և հակառակ պարագային ալ՝ իջնէ ևւայն, ևւայն:

3. Երրորդ անպատեհութիւնը՝ փոխանակելի նիւթոց ոմանց անբաժանելիութիւնն է: Արդարեւ կան նիւթեր, որք կրնան

2000

բաժնուիլ և կան ալ որ անբաժանելի են, օրինակի համար, ցորենը, միսը, կտաւը կրնան բաժնուիլ և անոնցմէ մաս մը մարդ կրնայ տալ մէկուն՝ իր մէկ ուրիշ պէտքի ապրանքն առնելու համար: Բայց դերձակը՝ որ ձեռքը շինուած Բարթո մ'ունի, չի կրնար զայն դիւրաւ փոխանակել հացագործին և մնավաճառին հետ, որովհետեւ այդ քարթօյն արժէքը շատ աւելի է այն հացին և միսին արժէքէն, որուն պէտք ունի դերձակը նոյն օրը: Չի կրնար բալթօն կտոր կտոր ծախել առանց անոր արժէքը բճացընելու: Յայտնի է թ. փոխանակութեան համար ուրիշ միջոցի մը կամ ուրիշ նիւթի մը պէտք ունի, փոխարէն տալու համար իր բալթօն, ալ չի նիւթն ալ դրամն է, որուն փոխարէն ծախելով իր բալթօն, դերձակը կարող կըլայ առած դրամովը հոգալ իր օրական պէտքերը, հացագործէն հաց և մնավաճառէն միս առնելով և դրամին մէկ մասն ալ պահել իր ապագայ ուրիշ պէտքերուն յատկացնելու համար:

Այս օրինակներ կարծենք բաւական պերճախօս են մեզ ըմբռնել տալու համար թէ՛ դրամը ունենալով հաստատ արժէք մը և գործածուելով աւելարական գործառնութեանց մէջ ո՛ր աստիճան մեծ մղում տալու միջոց եղած է անոնց ահագին յառաջադիմութեանց:

Ժամանակէ մը ետքը վարկի սովորութիւնը հաստատուելով, անոնք որ իրենց առած ապրանքին փոխարէն ապրանք կամ դրամ տալու գիւրութիւն չունէին, իրենց ստորագրութիւնովը թղթեր տուին, որք շրջաբերութեան մէջ իրր դրամ գործածուեցան, այդ թղթերուն վաճառականական կամ վաճառելի քրքեր կըլուին, որոնց վրայ ընդարձակօրէն խօսած ենք ԾԳ Գլխուն մէջ: Նոյնպէս հաղորդակցութեանց միջոցները, որք աւելարական շահու տեսակետով կարեւոր դեր մ'ունին, հետզհետէ շատցան և կատարելագործուեցան, որպիսիք են, խճուղիները, ջրանցքները, երկաթուղիները, շոգենաւները եւլն:

Ահա այսպէս վաճառականութիւնը՝ փոխանակութեան և փոխադրութեան միջոցներուն շատնալովը սկսաւ հեռզհետէ զարգանալ և յառաջադիմել և հասաւ այն աստիճանին, ուր կը գտնուի այսօր:

Քաղաքակրթութեան յառաջադիմութեամբը ինչպէս որ աշխատութիւնը բաժնուեցաւ մարդոց մէջ, և արուեստից զանազան ճիւղերը գատուեցան իրարմէ, վաճառականութեան գործերն ալ այլ և այլ դասերու բաժնուեցան: Այսպէս վաճառականութեան երկու գլխաւոր ճիւղերն, այն է՝ ապրանքի արտածութեան և ներածութեան գործերը գատուեցան ներքին վաճառականութենէն, մեծաքանակ-վաճառականութիւնը՝ փոքրաքանակ-վաճառականու-

Եղե Մ

թենէն, նոյնպէս զատուեցան միջնորդութեան, ապրանք փոխադրելու կամ պահելու, դրամ գանձելու և վճարելու գործերն, եւլն, զորս քիչ ետքը պիտի բացատրենք իրենց կարգին:

ԳՈՐԾԲ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Վաճառականական գործ ըսելով պէտք է հասկնալ ամէն տեսակ ապրանքի գնումն ու վաճառումը թէ՛ նախնական վիճակի մէջ և թէ՛ գանոնք գործելէ ետքը, գործածութեան համար ու է վաճառելի իր մը մէկուն վարձու տալը, նոյնպէս ճարտարութեան, յանձնառութեան, միջնորդութեան, գործակատարութեան, փոխանակազրի գործողութեանց, սեղանաւորութեան, ապրանքի փոխադրութեան, ապահովազրութեան, պայմանադրութեան, ևլն. ձեռնարկութիւնները:

Վաճառականական Օրինագիրքը իր հետեւեալ երկու յօդուածներով կ'որոշէ այն գործողութիւնները, որք ըստ օրինի վաճառականական գործ կը համարուին, և հետեւաբար այդ գործողութիւններէն առաջ եկած դատերն են որք կը տեսնուին աւելարական դատարաններուն առջեւ:

Յօդ. 28. « Գանունէն ու մուրք թիճարէթալն ատտ օլունան մէվատ՝ կէրէք հէյէթը ասլիյէսի իլէ վէ կէրէք իմալ օլունաուդատան սօնրա ախէրէ սաթըմազ վէ եախօտ քիրա իլէ վէրիլմէք իչիւն հէր նէվ էշեա վէ էրզազ միւպաշասար. վէ լիէճլիթ թիճարէ Ֆապրիքաճըլըզ վէ դօմիսիօնճըլըզ վէ գարատա վէ տէնիլլէրտէ վէ նէհր վէ կէօլլէրտէ էշեա նազլի վէ պիր մահալլէ գէխայիր վէ էմվալ վէ էշեա վէրիլմէք թէահհիւտաթը վէ լիէճլիթ թիճարէ շունուն պունուն մէսալիհիլի կէօրմէք վէ ֆիւրուիթ օլունաճազ հէր նէվ էշեանըն միւզայէտէսի իճրա օլունմազ իչիւն մահալլէր թախսիս վէ քիւշատը վէ օլ մահալլէրին մուամէլաթը, վէ թէաթրօճըլըզ միսիլլու խալզ իչիւն թէմաշակեահ քիւշատը սէնաաթը իլէ գամպիօ վէ սարբաֆըլըզ վէ սըմաարըզ, վէ պանգալարըն պիլճիլմէք մուամէլաթը վէ թիւճճար վէ էսնաֆ վէ սարբաֆ պէյնիլտէ ալընուպ վէրիլմէքաէ օլան փօլիշա սէնէտաթը վէ եախօտ պիր մահալալէն ափկէր մահալլէ նազլ ու իրզալ օլունմազտա օլան ազճէլէրէ տայիր վէրիլէն, վէ պիր շախսըն էմբիլն վէ եա հէր քիմ խպրազ խտէր խէ անա թէտիյէ օլունմազ իւզրէ էաղըլան պօնօ վէ թահզլիլաթ խուտուպէրիմտէն խպարէթ օլաճազ արը »:

Յօդ. 29. « Բէզալիք գանունէն ու մուրք թիճարէթի պահրիլէտէն ատտ օլունան մէվատ՝ սէֆիլնէ ինչասընա սայիր պիլճիլմ-

լէ թէ ահհհհհհհ Վէ տախիլէն Վէ եա խարիճէն վուգու պուլան սէյր ու սէֆէր իշխն սէֆահն իշթիրասը Վէ ֆիրուլսթը, Վէ պահ- բէն էմվալ Վէ էշեա նազլ ու իրասլը Վէ սէֆինէ նէվիլ Վէ իճար Վէ իսթիճարը Վէ սէֆինէ Վէ կէրէք համուլէսի իւզէրինէ օլուանն իգրազ Վէ իսթիգրազ քէյֆիլէթի Վէ սիդուրթա մատտէսի իլէ սա- յիբ ու մուրը թիճարէթի պահրիլէթի միւթէալլիգ պիլճիւմէ մու- գալէլաթ Վէ սէնէտաթ Վէ կէմի թայիֆէսինին իւճրէթ Վէ մա- աչլարընա տայիր օլան մուգալէլաթ Վէ թիւճճար սէֆահինին խըամէթի իշխն թաիֆէլէրինին թէ ահհհհհ իսուսուլէրինտէն իպարէթ օլուպ, իշպու մէվատար միւթէլիֆէթի միւթէալլիգ քէաֆիֆէի տաալի՝ թիճարէթ մահքէմէլէրինին պահրիլէ մէճիւ- լէրինտէ բույէթ Վէ ֆասլ օլուանազ տըր » :

ԱՊՐԱՆՔ ԿԱՍ ՎԱՃԱՌՔ

Փոխանակութեան համար գործածուած ամէն իր Ապրանք կամ Վաճառք կ'ըսուի, կամ աւելի որոշ ըսելով, թէ՛ նախնական և թէ՛ գործուած ամէն նիւթեր, ինչպէս են, այծի մորթն և անով կօշկակարին շինած կօշիկները, խաղողն և գինեպանին պատրաս- տած գինին, ցորենն և հացը, փայտը և ձեռակերպք, որք վաճա- րատուններու, կրպակներու, տօնավաճառներու, շուկաներու մէջ և հրապարակներու վրայ կը ծախուին՝ Վաճառք կ'ըսուին :

Սակայն հողագործէն, կօշկակարէն, գինեպանէն և կամ որ և է մէկէ մը առնուած վաճառքն այլ եւս ապրանք կամ վաճառք չ'ըսուիր՝ երբ գնողը զայն միայն իր պէտքին գործածելու համար առած ըլլայ և ոչ վերստին ծախելու համար :

ՎԱՃԱՌԵԼԻ ԻՐՔ

Ինչ որ կը գնուի, կը վաճառուի, կը փոխանակուի, կը գեղ- չուի և վարձու կը արուի, վաճառականական լեզուով Վաճառեղի իրք կ'ըսուին : Հետեւաբար արմտիք, դրամք, մետաղեայ նիւթեր, տոմսակներ, փոխանակազրեր, պետական արժէթիթեր, զանազան ընկերութեանց բաժնէթիթեր, վաճառականական կարասիք, դը- րամագլուխ, նաւ, շէնք, եւլին, Վաճառեղի իրեր են :

ՎԱՃԱՌԱՎԱՆՔ

Վաճառականութեան վրայ խօսելով ըսինք թէ՛ առեւտուրը փոխանակութիւն է, հետեւաբար և ամէն առեւտուր ընող անձ

վաճառական ըլլալու է. բայց անանկ չէ : Առեւտրական Օրէնքը վաճառական կը ճանչնայ այն մարդիկը՝ որք միմիայն և զլիսաու- րապէս առեւտրական գործերով կը զբաղին, այսինքն, ապրանք կը գնեն ոչ թէ իրենք սպասելու՝ այլ ուրիշի ծախելու համար, վերջապէս մէկը վաճառական ըսուելու համար միշտ ապրանք առ- նել ու ծախելը իրեն բան գործ ըրած ըլլալու է :

Վաճառականին գործն է ընդհանրապէս ապրանքը գնել այն տեղէն ուր աւելի աժան է կամ անոնց արտադրութեան տեղէն, և զանոնք փոխադրել ու ծախել այն տեղերը, ուր աւելի սուղ են և ուր աւելի պէտք կայ անոնց. նաեւ աժան գինով և մեծ քանա- կութեամբ գնել և սուղ գինով ու փոքր քանակութեամբ ծախել : Վաճառականը երբեմն շահագիտութիւն ալ կ'ընէ, այսինքն, ապ- րանք մը շատ աժան եղած ատենը կը գնէ անկէ և սպասելով գի- նը վրայ դրած ատեն կը ծախէ :

Հոս առաջ կը բերենք Վաճառականական Օրինագրքին վա- ճառականին վերաբերեալ հետեւեալ երկու յօդուածները :

Յօդ. 1. « Թիճարէթիլէ մէշղուլ օլան Վէ թիճարէթէ տայիր պա սէնէտաթ ազտը մուգալէլէ իտէն էշխասա թիւճճար ըթլազ օլու- նուր » :

Յօդ. 2. « Եթիկրմի պիր եաշընը թէքմիլ իտէն շախս ուսուլի թիճարէթէ սիւլիւքէ մէզուս օլուպ, օն սէքիզ եաշընը թէքմիլ ի- տէնլէր տախի վէլի վէ եա վասիսի թարաֆընտան թէքքէֆիլի վէ թիճարէթիսանէ ճանիպիտէն իրաէի բուխասթ օլընմատըզճա թի- ճարէթէ սիւլիւքէ մէզուս օլուպ » :

Վաճառականը պէտք է ունենայ հետեւեալ ծանօթութիւն- ները .

1. Վաճառականը պէտք է գիտնայ պէտքերը, ճաշակները և սովորութիւնները այն ժողովրդին, որուն հետ պիտի գործէ :

2. Իր ձեռնարկած վաճառականութեան վերաբերեալ ապ- րանքներուն վրայ կատարեալ և ճիշդ տեղեկութիւն ունենալու համար պէտք է գիտնայ :

Ա. Ապրանքին վաճառականական և, եթէ ունի, գիտական անունը :

Բ. Թէ ապրանք մը ո՛ր երկրի մէջ կ'արտադրի և ո՛ր երկրէն կը բերուի :

Գ. Թէ ի՛նչ բանի և ի՛նչ կերպով կը գործածուի :

Դ. Զանոնք գնելու և ծախելու սովորութիւնները, պայման- ները, անոնց փոխարէնը գանձելու եղանակը և ծախու առնուած տեղէն մինչև վաճառատունը ըլլալիք ծախքերը, գործընկալ, ապրանքները քա՞նի ամիս պայմանաժամով կ'առնուին և կը ծախ- ուին, ի՞նչ գեղջեր ունին, զի ամէն ապրանք իրեն յատուկ գեղջը

կ'ունենայ ընդհանրապէս, զոր ծախողները կը տան գնողին:

Ե. Ճանչնալ ապրանքի մը կեղծը:

2. Ապրանք մը անվնաս պահելու եւ պատասպարելու համար հարկ եղած խնամքները:

3. Ճիշդ եւ գործնական ծանօթութիւն ունենալու է վաճառականական օրէնքներուն եւ մաքսատուքի վրայ:

4. Վաճառականի մը համար անհրաժեշտ է նաեւ ծանօթութիւն ունենալ առեւտրական իրաւախոհութեանց եւ դատական օրէնքներու եւ կանոններու մասին Վաճառականական Օրինագիրքը յաճախ սերտելով:

Ընդհանրապէս սովորութիւն եղած է որ վաճառական մը կամ վաճառականական ընկերութիւն մը նոր գործի սկսած ատեն, թէ՛ տպագրուած նամակներ ցրուելով, որուն Շրջաբերական կըսուի, եւ թէ՛ անոնց մէկ օրինակը լրագրաց մէջ հրատարակել տալով՝ իրենց ձեռնարկած գործին տեսակը եւ տան (1) անունը կը ծանուցանեն վաճառականներու եւ իրենց գործառնութեանց վերաբերեալ որ եւ է թուղթ (տոմսակ, փոխանակագիր, պայմանագիր ևայլն, ևլն.) այդ անունով կ'ստորագրեն (2): Նոյնպէս վաճառականք շրջաբերականներով կ'իմացնեն որ եւ է գործի մը դադարումը կամ ընկերութեան մը լուծումը, գործի մէջ եղած փոփոխութիւն, գործօրինակ, ստորագրութեան փոփոխութիւնը, ընկերի փոփոխութիւնը կամ մահը, գործի մը ուրիշի մը փոխանցուիլը, ևլն. ևլն: Վերջապէս շրջաբերականին նպատակն է տեղեկացնել վաճառականական հրապարակին որ եւ է նոր փոփոխութիւն, որ գործի մը մէջ տեղի կ'ունենայ, ըլլայ անհատական կամ ընկերական: Այս կարգի շրջաբերական նամակներուն վրայ ալ ուսանողներուն դադար փար մը տալու համար հոս կը զննեք մէկ քանի օրինակներ, որք իրական շրջաբերականներու պատճէններն են (3), եւ որք վերայիշեալ պարագաներէն մէկ քանին կը ներկայացնեն. մին՝ նորահաստատ տան մը բացումը կը ծանուցանէ, ուրիշ մը՝ ընկերոջ մահը եւ այդ առթիւ գործին մէջ փոփոխութիւն մը, երրորդը՝ ընկերութեան մը լուծումը, ևլն:

[1] Գործի մէջ Տուն բառը կը գործածուի վաճառատնի բառին տեղ եւ կ'ըսուի «այսինչը շատ լաւ եւ պատուար տուն է», «այսինչին շատ գործեր աղէկ չեն երթար», ևայլն:

[2] Վաճառականի եւ վաճառականական ընկերութիւնի իրենց անունով կը նանչցուին, որուն Ֆիրմա firme, raison sociale կ'ըսեն առեւտրի մէջ. եթէ վաճառականը ընկեր ունենայ՝ կամ ընկերոջ անունը մէկտեղ կը գրուի եւ կամ ընկերներէն մէկուն անունը միայն գրուելով ծայրը եւ ընկ. Գաղղ. et Cie բառը կ'աւելցնեն, ինչպէս կ'երեւայ մեր առաջին շրջաբերականին վրայ:

[3] Գործի մէջ նամակագրութիւնը շատ կարեւոր ըլլալով՝ կ'արժէ որ անոր վրայ ալ մասնաւոր ուսումնասիրութիւն մ'ըլլայ. մենք մտադիր ենք հրատարակել գործի նամակներու հաւաքածոյ մը, եթէ ժամանակիս ներելու ըլլայ:

4. Պոլիս, 1/13 Յունիսար 1897



Պատիւ ունիմք ծանուցանել ձեզ թէ՛ քաղաքիս մէջ առեւտրական տուն մը հաստատուելիք

4. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

անունով, որ պիտի զբաղի ամէն տեսակ ապրանքի արտադրութեան եւ ներածութեան, փոխանակագրի միջնորդութեան եւ յանձնառութեան վերաբերեալ գործերով:

Հաճեցե՛ք, Տ. ծանօթանալ մեր ընկերական usnrագրութեանց, որ 'ի usnrել, եւ ընդունիլ մեր խորին յարգանաց հաւաստիքն:

ԿԱՐԱՊԵՏ ԲԱՐՍԵՂԵԱՆ
ՄԻՔԱՅԷԼ ԲԱՐՍԵՂԵԱՆ
ՊԵՏՐՈՍ ԹՈՐՈՍԵԱՆ

Տ. Կ. ԲԱՐՍԵՂԵԱՆ պիտի usnrագրէ *Կ. Քարապետեան և ըլլ.*

Տ. Մ. ԲԱՐՍԵՂԵԱՆ պիտի usnrագրէ *Միքայիլեան և ըլլ.*

Տ. Պ. ԹՈՐՈՍԵԱՆ պիտի usnrագրէ *Պ. Քարապետեան և ըլլ.*

Շրջաբերական նամակներն ընդհանրապէս դաղղիներէն կ'ըլլան, որովհետեւ այդ նամակները կը դրկուին թէ՛ հայ եւ թէ՛ օտարազգի բոլոր ծանօթ վաճառականներու եւ սեղանաւորներու, թէ՛ այն քաղաքին մէջ ուր տեղի կ'ունենայ այդ գործը, եւ թէ՛ ուրիշ քաղաքներ: Ուր թղթակիցներ կ'ունենան վաճառականք, հետեւաբար դաղղիներէն լեզուաւ ալ կը տպագրուին անոնք որ անունն հասկնալի ըլլան:

Constantinople, le 13 Janvier 1897

Me.

Nous avons l'honneur de vous informer que nous venons de fonder sur cette place et sous la raison sociale

G. Parseghian & Co.

une maison qui s'occupera des opérations de toutes espèces de marchandises d'importation et d'exportation, de commission et de courtage sur le change.

Veillez prendre note de nos signatures respectives ci-dessous et d'agréer, M. l'assurance de notre considération distinguée.

GARABED PARSEGHIAN
MIKAEL PARSEGHIAN
BEDROS TOROSSIAN

M. G. Parseghian signera, *G. Parseghian & Co.*

M. M. Parseghian » *G. Parseghian & Co.*

M. B. Torossian » *G. Parseghian & Co.*

Շրջաբերականին տեղը իր տան ստորագրութիւնը պէտք է որ ծանօթացնէ հրապարակին, ուստի շրջաբերականներուն տակը կը գրուի ձեռագրով տանը ստորագրութիւնը: Եթէ գործին մէջ ընկերներ ըլլան՝ անոնցմէ որոնք որ ստորագրելու արտօնեալ են, անոնց ալ ստորագրութիւնները դատ դատ ձեռագիր կը գրուին շրջաբերականին տակը, ինչպէս կ'երեւայ մեր առաջին օրինակներուն վրայ:

Constantinople, le 13 Mars 1886

Me.

Nous avons l'honneur de vous informer qu'à la suite du décès de notre très regretté chef Monsieur Séropé Gulbenkian, Monsieur Sarkis Gulbenkian et tous les héritiers du défunt continueront conjointement et d'un commun accord la dite société sous son ancienne raison sociale

SÉROPÉ & SARKIS GULBENKIAN

La société en nom collectif, ainsi reconstituée étant la suite et la continuation de la société ancienne, elle prend pour son compte tous ses engagements, contrats, accords, transactions, et actes quelconques.

Veillez prendre bonne note des signatures ci-dessous de notre Sarkis et Badrig Gulbenkian, seuls gérants de la société.

Agréez, M. nos saluations très-distinguées.

SARKIS GULBENKIAN

Ve. H.

V. TURABIAN [née Gulbenkian]

BADRIG GULBENKIAN

HOVHANNÈS »

GULABI »

MARIE »

HAROUTUNE »

n/s Sarkis Gulbénkian signera

» Badrig » »

SÉROPÉ & SARKIS GULBENKIAN

SÉROPÉ & SARKIS GULBENKIAN

Constantinople, le 1er. Septembre 1885

M.

Nous avons l'honneur de vous faire part que la société existant entre nous à Constantinople et à Manchester sous la raison M. & O. Agopian est dissoute à dater du 1er. Janvier 1885.

Notre Sieur M. Agopian est chargé de la liquidation des affaires de la société à Constantinople et notre Sieur O. Agopian de la liquidation des affaires de Manchester.

Veillez agréer, M. l'assurance de notre parfaite considération .

M. & O. AGOPIAN

Constantinople, le 1er. Septembre 1885

M.

Par suite de la dissolution de la maison M. & O. Agopian annoncée par la circulaire ci-contre, j'ai l'honneur de vous informer que je continuerai en cette ville en mon propre nom et pour mon propre compte le même genre d'affaires et les mêmes opérations que je traitais conjointement avec mon frère Mr. O. Agopian.

Veillez donc prendre note de ma signature ci-bas et agréer, M. l'assurance de ma parfaite considération.

M. AGOPIAN

ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՍՑ

Վաճառականութիւնը այլեւայլ ճիւղերու բաժնուած ըլլալով, վաճառականներն ալ ըստ այնմ կը բաժնուին զանազան կարգերու, որք են.

- Գործարանատէրք եւ Տարագագործք
- Ներկարարք
- Մեծաքանակ-վաճառականք
- Փոքրաքանակ- »
- Յանձնառուք ապրանսց
- Միջնորդք »
- Յանձնառուք փոխադրութեան
- Սեղանաւորք եւ դրամափոխք
- Միջնորդք փոխանակագրի
- Զեռնարկուք
- Նաւայարդարք
- Նաւապետք
- Աւանդառուք
- Ապահովագրողք, եւայլն:

Գործարանատէր եւ Տարագագործ կ'ըսուին անոնք, որ նախական նիւթեր գործածելով՝ գործարաններու միջոցաւ նոր ձեւ մը կը տան անոնց, գործրինակ, տարագագործը բուրդը իր նախնական վիճակէն գործուելու վիճակին մէջ կը դնէ, այն է՝ կը մանէ, կը ներկէ, կը հիւսէ, կը գործէ եւ կամ այս գործողութիւններէն գոնէ մին կը կատարէ:

Գործարանատէրք եւ տարագագործք երկու կարգի կը բաժնուին. մէկ մասը իրենք կը դնեն նախնական նիւթերը, կը գործեն եւ ուրիշ ձեւի մը վերածելով՝ կը վաճառեն զանոնք թէ՛ փոքրաքանակ- վաճառականներու եւ թէ՛ ուղղակի սպառողներու:

Գործարանատէրներու երկրորդ դասը կը կազմեն անոնք՝ որք իրենց յանձնուած նախնական նիւթերը կը գործեն եւ վերստին տիրոջը կը յանձնեն, վասն զի իրենց սեպհական ապրանքը չ'ըլլալուն՝ զանոնք ծախելու իրաւունք չ'ունին:

Այս կարգի գործարանատէրք ալ ապրանքներուն միայն պատրաստութենէն կը շահին: Գործարանատէր կրնան ըսուիլ նաեւ հացագործը, կոշիկարը, գերձակը, ճաշարանապետը, եւայլն: Կան արուեստներ, որոնց համար մեծագումար դրամագլխով ընդարձակ գործարաններ հաստատուած են, որք լի են զանազան մեքենաներով եւ բազմաթիւ գործաւորներով. կան ուրիշ արուեստներ ալ որոնց համար քիչ դրամագլխով փոքրիկ գործարաններ հաստատուած են, ուր գործարանատէրը առանձին կամ քանի մը գործաւորներու հետ կ'աշխատի, ասոնք ընդհանրապէս Արուեստագիտ կը կոչուին, ինչպէս են, կոշիկարը, գերձակը, երկաթագործը, եւայլն:

Ներկարար նախնական նիւթերու, անկուածոյ նիւթերու, կերպաններու, մորթերու, մանածներու, իրենց նախնական գոյնէն տարբեր գոյն մը կը տայ, որով այդ նիւթերը թէ՛ աւելի յարմար կ'ըլլան գործածութեան եւ թէ՛ աւելի շահատուր կերպով կը ծախուին:

Մեծաքանակ-վաճառականն այն է՝ որ իր մեծագումար դրամագլխով մեծ քանակութեամբ ապրանք կը դնէ՝ արտադրողէն, այսինքն, գործարանատէրէն եւ կը ծախէ ամբողջ մասերով, այսինքն, տակառով, հակով, եւայլն:

Այս կերպով, մեծաքանակ-վաճառականը՝ գործարանատիրոջ եւ փոքրաքանակ-վաճառականներու միջեւ գրեթէ միջնորդի դեր կը կատարէ:

Փոքրաքանակ-վաճառականը մեծաքանակ-վաճառականէն ապրանք կը դնէ ամբողջ մասերով, այսինքն, տակառով, հակով, եւայլն, եւ զանոնք կը ծախէ սպառողներու մանր քանակութեամբ, այսինքն, հոխայով, ծրարով, կանգուտով, հատով, եւլն: Պէտք է դիտել սակայն թէ՛ մեծաքանակ-վաճառողներուն առ

հարիւր շահը աւելի քիչ կ'ըլլայ քան թէ փոքրաքանակ-վաճառողներունը, որովհետեւ առջինները ահագին գրամագլուխներու վրայ գործելով՝ ստիպուած են 0/10 աւելի քիչ շահով մը ծախել իրենց ապրանքը, որպէս զի որոշեալ ժամանակամիջոցի մը մէջ կարենան մեծաքանակ ծախել եւ այդպէսով իրենց գրամագլուխը շարժուն վիճակի մէջ դնել. իսկ վերջինները ունենալով շատ համեստ կամ չափաւոր գրամագլուխ մը՝ չեն կրնար բնականաբար մեծ ձիրօ (1) գարձնել. եւ որպէս զի կարենան իրենց վաճառատան եւ տնական ծախքերը հանելէ ետքը՝ դուռ շահ մ'ալ աւելցնել իրենց գրամագլխին վրայ, բաղդատմամբ մեծաքանակ ծախողներուն 0/10 այսչափ մը — գործին տեսակին համեմատ — աւելի շահով ծախել ապրանքը: Հետեւաբար պէտք է միանգամ բնդ միշտ ըմբռնել թէ՛ այն գործին մէջ ուր մեծ գրամագլուխ կայ, անոր ընդարձակութեան աստիճանին հետ 0/10 սաչափ շահը կը նուազի — բացասիկ պարագաներ կրնան պատահիլ ստէպ շահադիտական ձեռնարկութեանց մէջ:

Ապրանքի յանձնառու կ'ըսուի անոնց, որ ուրիշներու հաշւոյն համար ապրանք կը գնեն եւ կը ծախեն եւ գործին ու պարագային համեմատ՝ իրենց աշխատութեան փոխարէն, այսինքն, ծախած կամ գնած ապրանքին գումարին վրայ 0/10 այսչափ վարձք մը կ'առնեն, որուն Յանձնառարձք կամ Յանձնառողչեք կ'ըսուի: Զորօրինակ, Կարնեցի վաճառական մը Պօլսէն ապրանք գնել կ'ուզէ. բայց մէկ կողմէն երթեւեկութեան ծախքը եւ միւս կողմէն իր գործին գլխէն հեռանալու անպատեհութիւնը հաշիւ առնելով՝ կը տեսնէ թէ՛ փոխանակ ինքը Պօլիս երթալով ապրանք գնելու եւ տանելու, իրեն համար աւելի շահաւոր պիտի ըլլայ զանոնք ուրիշի մը ձեռքով բերել տալ, ուստի նամակով կ'ապսպրէ Պօլիս գտնուող յանձնառուի մը իրեն պէտք եղած ապրանքը. յանձնառուն ալ ապրանքը կը գնէ, հակել կը տայ, կ'ապահովագրէ եւ նա կամ շոգեկառք բեռցնել տալով կը զլկէ:

Յանձնառուին սիրտքն է խնայողութեամբ, հաւասարմարար եւ խնամքով կատարել իրեն եղած ապսպրանքները եւ շատանալ միայն իր սովորական յանձնառողչեքովն, առանց ուրեք յաւելում ընելու ուրիշի հաշւոյն գնած ապրանքին գնոյն վրայ, նոյնպէս առանց պակաս ցոյց տալու ուրիշի հաշւոյն ծախած ապրանքին գինը:

Յանձնառուն ենթադրենք որ խարդախութիւն ըրաւ. մէկու մը հաշւոյն ապրանք գնեց, եւ գինը իրականէն բարձր նշանակեց

(1) Առեւտուրի մէջ ձիրօ ընել կամ Դարձնել կը նշանակէ գործ ընել. մէկ մ'ալ փոխանակագրին ետին փոխանցում գրելուն ձիրօ ընել կ'ըսուի:

հաշուեցոյցին մէջ եւ սակէ շահեցաւ 0/10 փոխանակ 2 ի կամ 3 ի՝ 0/10-10 եւ այսպէս շարունակեց: Այն հրապարակին վաճառականները, ուր զրկած էր մեր ակնարկած յանձնառուն իրեն ապսպրուած ապրանքը, շատ պատահական է որ իրենք ալ գնած ըլլան նոյն ապրանքը ուղղամիտ յանձնառուի մը ձեռքով միեւնոյն հրապարակէն. եւ աւելի շուտ ծախելու կատարի մրցման մէջ, որ կը տիրէ համայն աշխարհի առեւտրական հրապարակաց վրայ՝ խարդախ յանձնառուին ձեռքով գնող վաճառականը անմիջապէս պիտի նշմարէ որ իր յանձնառուին կողմէ խարուած է ինք. եւ անշուշտ եթէ երբէք իրական ապացոյցներ ալ չ'ունենայ իր ձեռքը անոր դէմ դատ բանալու համար, անմիջապէս պիտի դադրեցնէ իր յարեբութիւնը այդ յանձնառուին հետ:

Արդ՝ ինչպէս որ որոշապէս կը տեսնուի, առեւտուրի մէջ եղած խարդախութիւն մը ուշ կամ կանուխ երեւան պիտի ելլէ անպատճառ, եւ խարդախողը պիտի դադրի տեւականապէս գործելէ, գէշ համբաւ մը հանած ըլլալով:

Արեւմտեան աւելի լաւ է, օրինակի համար, 0/10 փոխանակ 2-3 ի՝ 6-10 շահիլ եւ վերջապէս օր մը դադրիլ գործելէ թէ՛ գոհանալ 0/10 2-3 ով եւ շարունակաբար գործել:

Ապրանքի միջնորդ կ'ըսուի անոնց, որոնց միջոցաւ կը կատարուին շատ անգամ երկու վաճառականներու միջեւ ապրանքի առուծախները: Սրինակի համար, վաճառական մը իր թիֆթիկը ծախելու գործը միջնորդին կը յանձնէ, սա եւս թիֆթիկի վրայ գործ ընող վաճառականներու հետ յարեբութիւն ունենալով՝ անոնց ամէն մէկուն թիֆթիկի ո'ր աստիճան պէտք ունենալուն տեղեակ ըլլալով, ո'վ որ աւելի գին վճարէ անոր կը ծախէ:

Որպէսզի միջնորդներն իրենց գործը դիւրաւ կատարեն, վաճառականները անոնց կը տան առաջուց իրենց ծախելիք ապրանքներուն վրայ պէտք եղած տեղեկութիւնները, գորօրինակ, տեսակը, գոյնը, որակը, ո'ր երկրին ապրանքը ըլլալը, գինը, մինչեւ անգամ ապրանքին օրինակը, ի հարկին, գնողներուն ցոյց տրուելու համար, որովհետեւ ապրանք մը օրինակովը ցոյց տալով աւելի դիւրին կը ծախուի, քան ուրիշ շատ մը իրաքեր ըսելով անոր վրայ:

Միջնորդները լաւ ճանչնալու են այն ապրանքները, որոնց վրայ գործ կ'ընեն, եւ որովհետեւ ապրանք մը լաւ ճանչնալու համար երկար ժամանակի փորձառութիւն պէտք է, անոր համար շատ միջնորդներ մէկ կամ մէկ քանի ապրանք իրենց մասնագիտութիւն կ'ընեն, եւ միայն ա'յդ ապրանքները գնելու եւ ծախե-

լու կ'զբաղին, այնպէս որ կան միջ-որդներ, որք մինակ ցորենի կամ ալիւրի գործով կ'զբաղին, կան որ միայն Ափիոնի առուծախի գործով կը պարապին, կան ալ որ միայն թիֆթի կ'առնեն ու կը ծախեն, եւ այլն:

Միջնորդք՝ իրենց աշխատութեան փոխարէն՝ կատարուած գործողութեանց գումարին վրայ ⁰/₁₀ այսչափ վարձք մը կ'առնեն, որուն Միջնորդքիւն կամ Միջնորդչի կ'ըսուի:

Փոխադրութեան յանձնառու կ'ըսուի անոնց՝ որ ծովի եւ ցամաքի ճամբով ապրանք փոխադրել տալու գործով կ'զբաղին:

Վաճառականներն իրենց փոխադրելի ապրանքները ուղղակի անոնց կը յանձնեն. անոնք ալ՝ երկաթուղիի եւ շոգենաւի ընկերութեանց եւ ջորեպաններու հետ մասնաւոր պայմանագրութիւն ըրած ըլլալով, նոյն ապրանքները իրենց որոշեալ տեղերը կը դրկեն եւ իրենց այս աշխատութեան փոխարէն որոշեալ վարձք մը կ'առնեն:

Սեղանաւորք եւ Դրամափոխք. — Վաճառականական գործառնութեանց ընդարձակուելուն պատճառաւ, հեռուոր եւ օտար երկիր գտնուող եւ գործի յարարերութիւն ունեցող վաճառականները փոխադարձաբար իրարու պարտական կ'ըլլան շատ անգամ: Տարբեր երկիրներ գտնուող պարտական անձինք իրենց պարտքը վճարելու համար չեն կրնար մեծաքանակ հնչուն դրամ ճարել իրենց հրապարակին վրայ, եւ թէ մետաղ դրամոց փոխադրութեան պատճառաւ յաճախ գանազան դժուարութիւններ կը կրեն, և երբ կանխիկ դրամով իսկ վճարել կարելի ըլլայ, անոնց փոխադրութեան համար քիչ շատ ծախք ընել պէտք է. սակէ զատ՝ փոխադրութեան միջոցին վտանգ ալ կրնայ պատահիլ կամ որոշեալ տեղը ուշ հասնիլ. ուստի թէ՛ այս եւ թէ՛ ուրիշ ամէն տեսակ անպատեհութեանց առաջքն առնելու համար՝ սեղանաւորներու արուեստին պէտքը յոյժ զգալի եւ օգտակար եղած է վաճառականութեան մէջ:

Փոխանակագրիւն առթիւ ընդարձակօրէն բացատրած ենք թէ՛ ինչպէս սեղանաւորի մը միջոցաւ դրամ կը դրկուի օտար երկիր կամ հեռուոր քաղաք մը պարտք վճարելու համար:

Սեղանաւորութեան գործողութիւնք գլխաւորաբար հետեւեալներն են.

1. Վաճառելի թղթեր (մուրհակ կամ տոմսակ, փոխանակագիր, եւ այլն) կը զեղչեն ⁰/₁₀ այսչափ տոկոսով եւ վճարօրին կը

զանձեն, այսինքն, ⁰/₁₀ այսչափ պակաս տալով թուղթը կը գնեն եւ վճարօրին դրամը կը գանձեն պարտական անձէն՝ թուղթը ետ տալով իրեն:

2. Իրենց ստորագրութիւնը կը գնեն ուրիշներու առեւարական թղթերուն վրայ, օրինակի համար, վաճառական մը՝ որ դրամատան մը քով բաց հաշիւ, այսինքն, պահեստի դրամ չ'ունի, կամ հրապարակին վրայ այնչափ ծանօթ մէկը չէ, երբ պէտք եղած երաշխաւորութիւնը չ'ունեցող ուրիշի մը կամ իր ստորագրութեամբ թուղթ մը զեղչել կամ պարտքի տեղ մէկուն տալ ուղէ, այդ պարագային՝ իր վիճակը ճանչցող սեղանաւորի մը կը դիմէ եւ անոր ստորագրութեամբը երաշխաւորել կը տայ իր թուղթը, որով կարող կ'ըլլայ զայն գիւրաւ գործածել իր պէտքին:

3. Փոխատուութիւն կ'ընեն, փոխարէն ընդհանրապէս արժէթըղթեր, այսինքն, պէսական արժէթղթեր կամ գանազան մեծ ընկերութեանց բաժնեթղթեր, և երբեմն կալուածներ և ապրանքներ դրամ առնելով, պարագային համեմատ ⁰/₁₀ այսքան բան մը պակսեցնելով անոնց օրուան արժէքէն:

4. Արուեստական և սեղանաւորական ընկերութեանց կը մասնակցին որոշեալ դրամագլուխ մը գնելով:

5. Տէրութեան փոխատուութիւններ ընելու գործը վրանին կ'առնեն:

6. Աժան տոկոսով փոխատութիւններ կ'ընեն դրամատէրներէ, որք աւելորդ դրամին շահեցնելու տեղ կը փնտռեն միշտ. եւ սուղ տոկոսով փոխատութիւններ կ'ընեն պարկեշտ եւ հաստատուն վաճառականներու կամ արհեստաւորներու, որք շատ անգամ դրամի պէտք կ'ունենան:

7. Ոսկի եւ արծաթ դրամներու, հանրային արժէթղթերու, և ընկերութեանց բաժնեթղթերու վրայ շահագիտութիւն կ'ընեն, հրապարակէ մը աժան գինով առնելով՝ ուրիշ հրապարակի մը վրայ սուղ գինով ծախելու համար:

8. Վաճառականներու տուած հրամաններուն համեմատ՝ թէ՛ իրենց հրապարակին եւ թէ՛ օտար հրապարակներու վրայ անոնց ունեցած պահանջքը կը գանձեն կամ անոնց պարտքը կը վճարեն:

9. Իրենց թղթակիցներուն տոկոսաւոր հաշուընթացներ կը բանան, զորս մասնաւոր կարգադրութեամբ կամ երկրին սովորութեան համեմատ երեք կամ վեց ամիսը, կամ տարին անգամ մը կը գոցեն եւ վերստին կը շարունակեն:

10. Իրենց թղթակիցներուն քաշած փոխանակագրերը կ'ընդունին, անոնց վրայ փոխանակագիր կը քաշեն և ուրիշ հրապարակներէ աժան գինով փոխանակագիր գնելով, սուղ գինով կը ծախեն իրենց հրապարակին վրայ:

11. Ուրիշներու հաշւոյն պետական արժէթղթեր կամ ընկե-
րութեանց բաժնեթղթեր կը գնեն եւ կը ծախեն :

12. Իբր աւանդ կը պահեն արժէթղթեր՝ անոնց անուանական
գնոյն վրայ տարեկան գումար մ'առնելով իբր պահողչէք :

Սեղանաւորին շահը կը գոյանայ գանձած , վճարած կամ ըն-
դունած փոխանակագրոց վրայ իր առած յանձնաւորչէքէն , փոխ
առած եւ փոխ տուած գումարներուն տոկոսի տարբերութենէն ,
դրամոց , արժէթղթոց եւ փոխանակագրոց վրայ ըրած շահագի-
տութենէն եւ այն ընկերութեանց տարեկան շահաբաժիններէն ,
որոց ընկեր եղած է :

Սեղանաւորին յանձնաւորչէքը գործին համեմատ կը փոխուի .
քիչ կ'ըլլայ յանձնաւորչէքը՝ երբ ուրիշի մը հաշւոյն փոխանակա-
գիր ծախէ , ուրիշի մը առնելիքը գանձէ եւ կամ այնպիսի պարագ
մը վճարէ , որուն փոխարէնը առաջուց ստացած է . իսկ շատ կ'ըլ-
լայ յանձնաւորչէքն՝ երբ սեղանաւորն ուրիշի մը համար ինք
անձնապէս իր ստորագրութեամբ պարտական ըլլայ :

Վերոյիշեալ բոլոր գործողութիւնները , որք սեղանաւորական
են , ըսինք , ընդհանրապէս անհատական դրամագլխի տէր սեղա-
նաւորները չեն որ կ'ընեն , այլ մեծ դրամատունները , որք ընկե-
րական մեծագումար դրամագլուխներ ունենալով՝ կրնան այդ գոր-
ծողութեանց ամէնքն ալ մէկանց կատարել . թէեւ կան մասնաւոր
սեղանաւորներ ալ , որք անոնցմէ միայն մէկ քանին կ'ընեն :

Կ. Պօլսոյ հրապարակին վրայ գլխաւոր դրամատունք են Օս-
մանեան Կայսերական Պանֆան եւ Գոթեի շիօնե դրամատունը ,
որք բաժանորդական ընկերութիւններ են եւ իրենց ընկերական
մեծ դրամագլխով թէ՛ Պօլսոյ հրապարակին վրայ եւ թէ՛ Եւրո-
պիոյ եւ Թուրքիոյ այլեւայլ գլխաւոր քաղաքներուն մէջ ունեցած
իրենց մասնաձիւղերովը , որք միեւնոյն անունով կը ճանչցուին ,
շատ չե՛ծ գործեր կ'ընեն :

Օսմ. Պանքան Կայսերական իրատէյով առանձնաշնորհեալ՝
արտօնեալ է եւ շրջաբերութեան հանած է թղթագրամներ մէկ
ո կինոց , հինգնոց , 20նոց , 100նոց , որք օսմ. ոսկիով վճարելի են
Պանքան ներկայացուելուն պէս , եւ իբր դրամ կը շրջաբերին ա-
ռեւտրական հրապարակին վրայ :

Գրամափոխ կ'ըսուին անոնց , որոնց գլխաւոր գործն է բնիկ
կամ օտար երկրի ոսկի , արծաթ եւ այլ ամէն տեսակ դրամ ուրիշ
դրամի հետ , դրամատոմս եւ թղթագրամ ոսկիի հետ փոխանակել ,
եւն : Այդ դրամափոխներէն շատ կան մասնաւորապէս Պօլսոյ Պաշրք-
քազարի եւ Ղալաթիոյ Գարափոյի հրապարակին վրայ , որոնց
Քեօշե Սարրափի կ'ըսեն պաշտօնապէս :

Փոխանակագրի միջնորդ կ'ըսուին անոնց , որ ուրիշի հաշւոյն
փոխանակագիր , պետական եւ ուրիշ արժէթղթեր եւ բաժնեթղթ-
թեր գէելու եւ ծախելու միջնորդութիւնը կ'ընեն՝ իրենց աշխա-
տութեան փոխարէն վարձք մ'առնելով : Ինչպէս որ ապրանքի
միջնորդները գիտեն թէ՛ ո՛րու քով ի՞նչ ապրանք կայ ծախուե-
լիք եւ որո՞նք են անոնց գնողները , անանկ ալ փոխանակագրի
միջնորդները միշտ յարաբերութեան մէջ են իրենց հրապարակին
գրամատուններուն եւ սեղանաւորներուն հետ , որք Եւրոպական
ուրիշ քաղաքներու վրայ քաշուած փոխանակագրեր գնելու եւ
ծախելու պէտք կ'ունենան միշտ : Եւ որովհետեւ վաճառականք
այդ քաղաքներէն իրենց բերել տուած ապրանքին փոխարժէքը
զրկելու համար փոխանակագիր գնելու , եւ իրենց հաշւոյն ծախ-
ուելու համար այդ քաղաքները զրկած ապրանքներուն արժէքը
գանձելու համար փոխանակագիր քաշելու եւ ծախելու պէտք կ'ու-
նենան միշտ , ուստի փոխանակագրի միջնորդները կը կատարեն
այդ գործը , այսինքն , վաճառականին հաշւոյն սեղանաւորէ կամ
գրամատունէ մը կը գնեն եւ կը յանձնեն վաճառականին իր ու-
զած փոխանակագիրը , եւ կամ այդ վաճառականին հաշւոյն համար
անոր քաշած փոխանակագրերը կը ծախեն սեղանաւորներու կամ
գրամատուններու : Երբ միջնորդը փոխանակագիր գնէ կամ ծա-
խէ՛ թէ՛ գնողին եւ թէ՛ վաճառողին իր ստորագրութեամբ թուղթ
մը կը ապ , որով կը հաստատէ այդ փոխանակագիրը այնինչ մար-
դուն համար գնած կամ ծախած ըլլալը . այդ թուղթին , որ Փո-
խանակագրի հաշուեցողցակ (նօթա) կ'ըսուի , ինչպէս նաեւ անոր
վերաբերեալ տեղեկութեանց վրայ խօսած ենք վաճառականա-
կան գրութիւնի գլխուն մէջ :

Կան փոխանակագրի միջնորդներ , որք բաւական դրամագլուխ
ունենալով՝ իրենց հաշւոյն իսկ փոխանակագիր կը քաշեն , կը գնեն
եւ շահով կը ծախեն , միանգամաւ միջնորդչէք ալ առնելով :

Ձեռնարկու կ'ըսուի անոնց , որք շանձն կ'առնեն , առաջուց ու-
րոշուած պայմաններով , ճամբայ , կառուղի , երկաթուղի , ջրանցք ,
կամուրջ , եւլն շինել , ինչպէս նաեւ բանակի մը կամ տէրութեան
պաշտօնատան մը պիտոյքը մատակարարել :

Ձեռնարկուք , որք ընդհանրապէս մէկ քանի ընկեր կամ մեծ
ընկերութիւններ կ'ըլլան , իրենց ստանձնած գործը յաջողապէս գը-
լուի հանելու համար , իբր ապահովութիւն որոշեալ գումար մը գը-
րամատուն մը գրաւ կը գնեն , եւ պէտք եղած նիւթերն իրենք կը
գնեն եւ գործաւորներ կը բանեցնեն . ապա ուրեմն դրամագլուխ
կը գնեն եւ ձեռնարկած գործերնին աւարտելէ ետքը՝ իրենց ա-

ուսման վճարած գումարը եւ աշխատութեանց փոխարէն՝ գործին շինութեանը համար որոշեալ գումարը կ'ստանան գործին տիրոջմէն :

Նաւապարտար կ'ըսուի անոր , որ նաւ կը դնէ կամ կը վարձէ , նաւապետին եւ նաւաստիներուն հետ դաշինք կ'ընէ , նաւադնացութեան միջոցին պէտք եղածը իր ծախքովը կը հոգայ , եւ իր կամ ուրիշներուն ապրանքը բեռնելով որոշեալ նաւահանգիստ մը կը զրկէ : Այս գործին համար մասնաւոր ընկերութիւններ կազմուած են այժմ :

Նաւապետներն ալ վաճառական կը համարուին , վասն զի ասոնք ալ շատ անգամ թէ՛ նաւապարտարին եւ թէ՛ ուրիշի հաշուոյն ապրանք կը դնեն եւ կը ծախեն :

Աւանդառու կ'ըսուի անոր , որ վաճառատան մը հաշուոյն դրամ կը վճարէ կամ կանխավճար կը առայ , տուած գումարին փոխարէն ապրանք գրաւ առնելով . որինս կի համար , վաճառական մը 1000 լիրայի պէտք կ'ունենայ , զոր ձեռք բերելու համար դրամատան մը կամ դրամատիրոջ մը քով 1200 կամ աւելի լիրայի ապրանք գրաւ կը դնէ , եւ 1000 լիրա կ'առնէ տոկոսով եւ որոշեալ պայմաններով :

Այս տեսակ գործողութեանց մէջ , ընդհանրապէս ապրանքին օրուան արժէքին վրայ 10-20-30 դեղչ մ'ընելով դրամ կը արուի . որովհետեւ կրնայ ըլլալ որ նոյն ապրանքին գնոյն վրայ հետզհետէ անկում տեղի ունենալով՝ անոնց արժէքը նուազի , եւ փոխարուած գումարը չի կարենայ ծածկել : Աւանդառուն իրաւունք ունի իր քով գրաւ դրուած ապրանքն ի հարկին ծախել , եւ իր պահանջը տոկոսներով մէկտեղ գանձելէ ետքը՝ աւելցածը աւանդատունին վերագարձնել :

Ապահովագրող կ'ըսուի այն անձին կամ ընկերութեան , որ որոշեալ գնով եւ որոշեալ գումարի մը համար մեծամեծ շէնքեր , տուներ , վաճառատուններ , ապրանք , կարասիք , նաւ եւ կեանք կ'ապահովագրեն , այսինքն , պարտականութիւն կ'ստանանն աւրած , վնասուած , ընկղմած եւ մեռած ատեն՝ որոշեալ փոխարինութիւնը առաջ ապահովագրեալին : Այսպէս ապահովագրութիւնք զանազան տեսակ կ'ըլլան . ապահովագրութիւն հրդեհի դէմ , կեանքի համար եւ ծովային վտանգներու դէմ :

Ապահովագրութեան պայմանագիրք յատկապէս ապագրուած

կ'ըլլան , ապահովութեան դնել տուող անձին անուան եւ ապահովութեան դրուելիք իրին անդերը բաց մնալով , ուր ի հարկին քրշով կը գրուին : Այս թուղթին Ապահովագիր կ'ըսուի :

Վաճառականի մը համար խիստ կարեւոր է իր ապրանքներն ապահովութեան դնել առաջ , մանաւանդ երբ քիչ կամ շատ վտանգաւոր ըլլայ այն ճամբան , ուրկէ պիտի գայ կամ պիտի երթայ ապրանքը : Այսպէս շատ անգամ վաճառականը՝ ապահովագրող ընկերութեանց տուած ջնջին գումարով մը մեծամեծ գումարներ կորսնցնելու դժբաղդութենէն կ'ազատի : Վաճառականք ընդհանրապէս իրենց ապահովագրելիք ապրանքին արժէքին վրայ 10-15 յաւելում մ'ընելու սովորութիւն ունին , իբր փոխարէն նոյն ապրանքէն ըլլալիք շահուն :

Հրդեհի դէմ եղած ապահովագրութիւնք ընդհանրապէս կ'ըլլան մէկ տարուան համար , որոյ լրանալուն վերատին կը նորոգուին միեւնոյն պայմաններով կամ փոփոխութեամբ՝ երկու կողմին համաձայնութեամբ :

Ապահովագրողին առած գնոյն կ'ըսուի Ապահովագրիկ կամ Ապահովողչիկ :

Ապահովագրութեան համար մասնաւոր ընկերութիւններ կան հաստատուած եւրոպական մայրաքաղաքներու մէջ , որք մասնաճիւղեր ունին բոլոր մեծ քաղաքներու մէջ , ինչպէս են Լոնտոնի Եօրթ Պրըքիչ եւս Մերքլընթայլի , Փարիզի Լա Ֆոնտայնի եւ Իւնիսի , եւլն . ընկերութիւնք , որք Պօլսոյ եւ Թուրքիոյ ուրիշ գլխաւոր քաղաքներուն մէջ մասնաւոր գործակալութիւններ ունին :

Պօլսոյ մէջ ալ առաջին անգամ ըլլալով՝ 1892 Օգոստ . 21ին կայսերական իրաւէով հաստատուեցաւ տեղական բաժանորդական ընկերութիւն մը ապահովագրութեան՝ Օսմ . ընդհանուր ապահովագրական ընկ . անուամբ , որ բաւական կը գործէ մեր հրապարակին վրայ :

Այն վաճառականները՝ որ խիստ ընդարձակ գործառնութիւններ ունին եւ միեւնոյն ատեն կարեւոր դրամագլուխ , շատ անգամ իրենք կ'ապահովագրեն իրենց ապրանքները , դրամագլուխ մը յատկացնելով այդ գործին՝ եւ ապահովագրական ընկերութեանց վճարելիք իրենց ապահովողչէքը կը տանին կ'աւելցնեն այդ դրամագլխին վրայ , որ երթալով կ'ստուարանայ բնակտնաբար . եւ եթէ պատահի որ օր մը իրենց մէկ ապրանքը վնասուի կամ ընկղմի՝ գոյացած վնասը այդ դրամագլխէն կ'առնեն :

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ



ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՄ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ

Առեւտրական հաստատութիւնի կ'ըսուի անոնց, որոնց նպատակըն է դիւրացնել առեւտրական գործառնութիւնները եւ հսկել վաճառականութեան ընդհանուր շահերուն:

Իբր վաճառականական հաստատութիւն կը յիշենք գլխաւորաբար հետեւեալները,

Սակարան (պոսայ)

Առեւտրական դատարանք

» սենեակք

Մաքսատուն:

Սակարան կ'ըսուի այն հաստատութեան, ուր որոշեալ ժամեր կը հաւաքուին վաճառականները, սեղանաւորները, փոխանակազրի եւ ապրանքի միջնորդներն ամէն տեսակ գործողութիւններ ընելու. գործինակ, նմուշներու վրայ ապրանքի՝ արժէթղթերու, զանազան ընկերութեանց բաժնեթղթերու եւ պարտաթղթերու, փոխանակազրերու, հրամանի տոմսակներու եւ մետաղադրամներու գնումն եւ վաճառումն, որով ամէն օր հոն կ'որոշուին զանազան ապրանքներու եւ արժէթղթերու, ինչպէս նաեւ փոխանակազրի եւ մետաղադրամներու ընթացիկ գիները:

Ներոպայի գրեթէ բոլոր մայրաքաղաքներն իրենց սակարանը ունին. մենք ալ Թուրքիայիքս ի Կ. Պօլիս ունինք սակարան մը Ղալաթիոյ Գարաքէօյի հրապարակին վրայ, ուր պետական արժէթըղթերու եւ ուրիշ բաժնեթղթերու վրայ գործողութիւններ կ'ըլլան, եւ հոն կ'որոշուին այդ թղթոց օրուան գիները, զորս կը կարդանք օրական լրագրաց մէջ: Պօլսոյ մէջ առեւտրական սակարան չ'կայ. միայն, եթէ ներելի է, իբր սակարան յիշենք ձկնարանը, ուր ամէն առտու ծախու կը հանուին, կառավարական հսկողութեան տակ, Պօլսոյ զանազան կողմերէն որսացուած եւ մօտակայ քաղաքներէն բերուած ձուկերը: Գնողք (փոքրաքանակ ծախողք) հոն կ'երթան եւ կը գնեն իրենց ուզած ձուկերը, որոնց գիները աճուրդով կ'որոշուին: Նոյնպէս իբր Ապրանքի սակարան կրնան համարուիլ զանազան մրգեղինաց եւ բանջարեղինաց վա-

ճառման յատուկ վայրերը, ուր ամէն օր մեծ քանակութեամբ համած այդ ապրանքներն որոշեալ գիներով կը ծախուին:

Առեւտրական դատարանք. — Ահաւասիկ մին այն կարեւոր հաստատութեանց, որ վաճառականութեան համար մեծ օգտակարութիւն ունի, զի վաճառականին շահը շի ներեր որ՝ ո եւ է խընդրոյ մ'առթիւ երկու վաճառականի միջեւ ծագած վէճ մը երկու կողմն ալ երկար առէն զբաղեցնէ, քանզի թէ՛ ժամանակի կուտաւ կ'ըլլայ եւ թէ՛ ծախքի դուռ կը բացուի. ասոր համար բոլոր տէրութիւնք հաստատած են առեւտրական դատարանները, ուր կը կարգադրուին ամէն առեւտրական դատեր, որք կը ծագին վաճառականներու եւ սեղանաւորներու միջեւ առեւտրական գործառնութեանց, մանաւանդ սնանկութեանց առթիւ:

Առեւտրական սենեակք. — Վաճառաչաճ գլխաւոր քաղաքներու մէջ կառավարութեան հաւանութեամբ վաճառականք կ'ունենան ժողովատեղի մը, ուր կը հաւաքուին վաճառականութեան յառաջադիմութեան համար հարկ եղած միջոցներուն վրայ խորհրդակցելու եւ, ի հարկին, իրենց կարծիքը կը հաղորդեն կառավարութեան՝ վաճառականութեան եւ ճարտարարուեստին զարկ տալու համար պէտք եղած միջոցները ցոյց տալով առ ի գործադրութիւն: Այդ հաստատութեան կ'ըսուի Առեւտրական Սենեակ, որուն անդամները վաճառականաց եւ սեղանաւորաց մէջէն կ'ընտրուին եւ վերջէն կառավարութենէն կը վաւերանան:

Պօլիս ալ ունեցաւ 1882 ին իր Առեւտրական Սենեակը, որուն կանոնադրին մէկ քանի յօդուածները մէջ կը բերենք:

Յօդ. 9. « Վաճառականական սենեակը՝ արհեստից եւ ձեռագործաց յառաջադիմութեան եւ տարածման համար պէտք եղած տնօրէնութիւնքը, միջոցները, վաճառականութեան կանոնաց համեմատ կարեւոր եղած բարոքմունք եւ ուղղութիւնքը, մաքսի գիները որոշող ցուցակները, հասարակաց պարտաւիճիք զբաղմանց գործադրութիւնը, նաւահանգիստներու շինութիւն, գետերը նաւարկելի ընելու միջոցները, թղթատարութեանց, հեռագրաց, երկաթուղեաց տարածումն եւ ծաւալումը, ճանապարհաց եւ անցքերու յարգարումը եւ բացումը, սեղանաւորաց եւ վաճառականաց յատուկ հրապարակական ժողովատեղեաց կազմութիւնը, վաճառականութեան վերաբերեալ լրագրեր հաստատել եւ հրատարակելը (1), վերջապէս վաճառականութեան յառաջադիմու-

[1] Կ. Պօլսոյ Առեւտրական Սենեակն ալ ունի իր տնունով լրագիր մը, որ այժմ շարքն անգամ մը կը հրատարակուի:

թեան նպատող բոլոր գործողութիւնքը, թէ՛ ուղղակի ինքնին և թէ՛ այլոց կողմանէ եղած խնդիրքները՝ զբաւոր կերպով պիտի ծանուցանէ վաճառականութեան և երկրագործութեան բարձր պաշտօնատան հանդերձ կարեւոր ազդարարութեամբք» :

Բնակութիւննին Կ. Պոլիս եզող բոլոր վաճառականք, սեղանաւորք և միջնորդք պէտք է արձանագրուին առեւտրական սենեկին տամարին մէջ, որք տարեկան տուրք մը կը տան իրենց աստիճանին համեմատ՝ այդ տուրքերով կը հոգացուին սենեկին պաշտօնէից ամսաթղտակները և ուրիշ ծախքերը :

Յօդ. 29. «Վաճառականական սենեկին ծախուց նպատ մ՞ըլլալու գիտամբ՝ բոլոր վաճառականք չորս կարգի բաժնուելով, առաջին կարգի վաճառականք, սեղանաւորք և արհեստից գործատանց տեարք՝ հինգ. երկրորդ կարգիները՝ երեք, երրորդ կարգիները՝ երկու, և չորրորդ կարգիները՝ իբրև բաժանորդագին միայն մէկ օսմանեան լիրա վճարելու պարտաւոր են : Ասոնք նախ և առաջ սենեկին յատուկ տուամարին մէջ արձանագրուելէ յետոյ, սենեկին անդամոց որոշմամբը ի կարգ կը դասուին, և ըստ այնմ որոշեալ տուրքը տարուէ տարի կանխիկ կը վճարեն : Մէկ ստորագրութիւն գործածող ընկերք և եղբարք իբրև մէկ անձն կը ճանչցուին » :

Ըստ առեւտրական սենեկի կանոնագրին, բոլոր ապրանքի միջնորդք պէտք է որ վաճառականական սենեկին տուամարաց մէջ արձանագրուին. և ասոնք իրենց արհեստը կատարելու համար՝ պարտաւոր են առեւտրական սենեկին կողմանէ ձեռքերնին հրամանագիր մ՞ունենալ :

Մտնատուց կ'ըսուի կառավարութեան այն հաստատութեանց, ուր որոշեալ տուրք մը կ'առնուի օտար երկիրներէ եկած բոլոր ապրանքներու, և երկրէն դուրս ելած մէկ քանի ապրանքներու վրայ :

Վաճառականը՝ օտար երկրէ բերել տուած իր ապրանքներուն վրայ հարկ եղած տեղեկութիւնները և անոնց գիները պարտնակող ցուցակ մը կը տայ իր մաքսի պաշտօնէին, որ ըստ այնմ ապրանքը քննել տալով, մաքսատուրքը կը վճարէ և ապրանքը իր տիրոջ վաճառատունը կը ղրկէ :

Կան մարդիկ, որոնք իրենց մասնաւոր գործ ըրած են զանազան վաճառականներու ապրանքները մաքսէն հանել : Ասոնք սակարկութիւն կ'ընեն վաճառականներուն հետ և ապրանքներուն մաքսատուրքը կ'որոշեն, և իրենց աշխատութեան փոխարէն հակ, տակաւ կամ սնտուկ գլուխ գումար մը կ'առնեն :

Մաքսատունք յատուկ և ընդարձակ միջերանցներ ունին, ուր կը մնայ երբեմն վաճառականներու ապրանքները : Մնացած ապրանքներուն համար օրական որոշեալ վարձք մը կը վճարուի ապրանքին տիրոջ կողմանէ, որուն Մթերալարձֆ (արտիյէ) կ'ըսուի :

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Վաճառականական գլխաւոր և սովորական գործողութիւնները հետեւեալներն են,

- Գնումն
- Վաճառումն
- Ի հաշիւ վաճառումն աւանդ ապրանքներու
- Գնումն և վաճառումն ապրանքի յանձնառոջէքով
- Գնումն և » » ընկերակցութեամբ
- Փոխանակութիւն ապրանքի
- Վճարումն
- Գանձումն
- Վճարումն և գանձումն ի հաշիւ
- Կարգադրութիւն հաշուոյ
- Ջեղչումն կամ գնումն վաճառելի թղթերու
- Վաճառումն » »
- Վարկ բանալ և վարկ ընել
- Փոխանցումն հաշուոյ :

Գնումն. — Վաճառականական առումով, ո՛ր և է ապրանք կամ վաճառելի իր մը որոշեալ գինով մէկէ մը ծախու առնելու գործողութեան Գնումն կ'ըսուի : Կանխիկ գնումն կ'ըսուի՝ երբ ծախու առնուած ապրանքին արժէքը անմիջապէս կամ մէկ քանի օրէն դրամով վճարուի : (Տե՛ս Տոմարակալութեան մէջ մեր Ձեռատետրին թ. 6 և 42 յօդուածները կանխիկ գնման համար) :

Ապառիկ գնումն կ'ըսուի՝ երբ ծախու առնուած ապրանքին արժէքը 31, 61, 91, 121, և այլն օրէն վճարելի ըլլայ : Ինչպէս ուրիշ երկիրներ և քաղաքներ, Պօլսոյ մէջ ևս կարևոր գնումներն ընդհանրապէս Ապառիկ կ'ըլլան, գնողին ստորագրութեամբ

տոմսակներով և կամ ուրիշ վաճառելի թղթերով: (Տե՛ս մեր Ձեռնատետրին Թ. 5 և 10 յօդուածները ապառիկ գնման համար:)

Վաճառում. — Ապրանք մը որոշեալ գինով մէկու մը տալու գործողութեան Վաճառումն կ'ըսուի: Վաճառումը գնման հակառակ գործողութիւնն է, այսինքն, ապրանքն առնողը՝ Գնման իսկ տուողը՝ Վաճառման գործողութիւն մը կատարած կ'ըլլայ: Գնման պէս՝ վաճառումն ալ կ'ըլլայ Կանխիկ և Ապառիկ: Վաճառումը Կանխիկ է՝ երբ ծախուած ապրանքին արժէքը անմիջապէս կամ մէկ քանի օրէն դրամով վճարուի: (Տե՛ս մեր Ձեռնատետրին Թ. 7 և 100 յօդուածները կանխիկ վաճառման համար:) Վաճառումը Ապառիկ է՝ երբ ծախուած ապրանքին արժէքը 31, 61, 91, 121, և այլն օրէն վճարելի ըլլայ: (Տե՛ս մեր Ձեռնատետրին Թ. 11 և 15 յօդուածները ապառիկ վաճառման համար:)

Ի հաշիւ վաճառումն աւանդ ապրանքներու. — Փոխ առնուած գումարի մը փոխարէն կամ ուրիշ հաշուով մէկու մը քով աւանդ դրուած ապրանքին մէկ մասը կամ ամբողջը՝ նոյն ապրանքին տիրոջ հաշուոյն ծախելու գործողութեան՝ Ի հաշիւ Վաճառումն Աւանդ Ապրանքի կ'ըսուի: Օրինակի համար, 20 սնտուկ ափսոս նիւթ, զոր Լծնարա զրկել և ծախել ինձ համար շահուոր կը տեսնեմ. բայց որովհետեւ հոն տուն կամ ներկայացուցիչ չ'ունիմ, ուստի այսինչ անձին կը զրկեմ որ իմ հաշուոյն ծախէ գանձք: (Տե՛ս մեր Ձեռնատետրին Թ. 160 յօդուածը:)

Գնումն եւ Վաճառումն ապրանքի յանձնառոյցով. — Առաջին գլխուն մէջ բացատրեցինք թէ ի՞նչ է յանձնառու. հիմա կը մնայ ըսել թէ՛ յանձնառուին ըրած գործողութեանց կ'ըսուի Գնումն եւ Վաճառումն ապրանքի յանձնառոյցով, այսինքն, ուրիշ մը հաշուոյն ստացած ապրանքները կը ծախէ և կամ ուրիշ մը ստացած հրամանին համեմատ անոր հաշուոյն ապրանք կը գնէ, որոց համար $\frac{1}{10}$ այսչափ վարձք մը կ'առնէ: զորօրինակ, Պօլսեցի վաճառական մը Մանչէսթըրէն կամ Փարիզէն ապրանք բերել կ'ուզէ, բայց ինքը հոն տուն կամ մասնաւոր ներկայացուցիչ մը չ'ունի որ իր ուզած ապրանքը գնէ և զրկէ, ուստի հոն գտնուող յանձնառուի մը կը զիմէ և իրեն պէտք եղած ապրանքը անոր միջոցաւ բերել կը տայ: (Տե՛ս մեր Ձեռնատետրին Թ. 18 յօդուածը:)

Գնումն եւ Վաճառումն ապրանքի բնկերակցութեամբ. — Երկու կամ աւելի վաճառականներ մասնաւոր գործի մը համար առժամեայ բնկերակցութիւն մը կազմելով՝ նոյն գործին վերաբերեալ ապրանք կը գնեն եւ կը ծախեն. այս գնման եւ վաճառման գործողութեանց, որ $\frac{1}{2}$ ի, $\frac{1}{3}$ ի, $\frac{1}{4}$ ի, և այլնի, կամ $\frac{1}{10}$ այսչափի հաշուով կ'ըլլան, բնկերակցող անձանց ունեցած բաժնին համեմատ, կ'ըսուի Գնումն եւ Վաճառումն բնկերակցութեամբ, որուն շահուն կամ փաստին բնկերք իրենց բաժնին համեմատութեամբ կը մասնակցին: Օրինակի համար, Պետրոս Թորոսեան եւ Յակոբ Գրիգորեան առժամեայ բնկերակցութիւն մը կը կազմեն հանքածուխ առնելու և ծախելու համար: Որոշեալ դրամադրութիւն $\frac{2}{3}$ ը՝ Պետրոս կը գնէ եւ $\frac{1}{3}$ ը՝ Յակոբ: Այս գործողութենէն 900 սակի կը շահին. ուրեմն Պետրոս պիտի ստանայ այդ շահուն $\frac{2}{3}$ ը, որ կ'ընէ 600 սակի. իսկ Յակոբ պիտի առնէ $\frac{1}{3}$ ը, որ կ'ընէ 300 սակի. իսկ եթէ փաստ ըլլայ՝ բընականաբար փաստն ալ նոյն համեմատութեամբ պիտի տուփեն:

Պէտք է լաւ ըմբռնել թէ՛ ուրիշ բան է Բնկերակցութեամբ գործելն եւ ուրիշ բան է Բնկերակցութեամբ գործելը: Բնկերակցութեամբ մէկ կամ մէկ քանի բնկերներու մէջ՝ առաջուց որոշուած դրամագլխով մը և մէկ կամ մէկ քանի տարի տեւողութեամբ, շարունակ և շատ գործողութիւններ ընել կը նշանակէ. մինչդեռ Բնկերակցութեամբ կարճ պայմանաժամի մէջ եւ ընդհանրապէս մէկ կամ մէկ քանի գործողութեան համար միայն կ'ըլլայ: (Տե՛ս օրինակներ « Լուծումն Ձեռնատետրի յօդուածոց » մասին մէջ:)

Փոխանակութիւն ապրանքի. — Ապրանք, վաճառելի թղթեր, և դրամէ գատ, ուրիշ ամէն տեսակ վաճառելի իրեր տալով, փոխարէն համարժէք ուրիշ ապրանքներ առնելու գործողութեան Փոխանակութիւն կ'ըսուի: Ինչպէս որ Ա. գլխուն մէջ բացատրեցինք, թէ և ամէն առեւտուր փոխանակութիւն է, բայց վաճառականութեան մէջ սովորութիւն եղած է, առանց դրամի՝ միմիայն արժէնիւթով եղած առեւտուրները Փոխանակութիւն անուանել: Չորօրինակ, Յակոբին 100 հ. խաչվէ տուի 12 զշ. էն և փոխարէն առի 600 հ. շաքար 2 զշ. էն: Ինչպէս կը տեսնուի, տուած 100 հ. խաչվէս, որ 1200 զշ. կ'արժէ, փոխանակեցի 600 հ. շաքարի հետ, որ նոյնպէս 1200 զշ. արժէք ունի: (Տե՛ս մեր Ձեռնատետրին Թ. 93 յօդուածը, որ ապրանքի մասնակի փոխանակութիւն կը պարունակէ:)

Վճարումն. — Հաշուեցուցակի, պարտամուրհակի, փոխանա-

կազմի և ուրիշ գրաւոր կամ բերանացի խոստման մը փոխարէն իրական գրամ տալու գործողութեան վճարումն կ'ըսուի: Զորօրինակ, Պ. Յակոբեանէ 300 հ. թիֆթիկ առի 20 դ.էն և փոխարէն տուի 6000 դ. կանխիկ գրամ. սոյն իրական գրամը տալու գործողութեան վճարումն կ'ըսուի: (Տե՛ս մեր Զեռատեարին թ. 4, 69 և 80 յօդուածները:)

Վճարումները միշտ կանխիկ գրամով չ'են ըլլար, երբեմն ալ կ'ըլլան

Դրամով և տոմսակով կամ փոխանակագրով միանգամայն, Միայն տոմսակով կամ փոխանակագրով:
(Տե՛ս մեր Զեռատեարին թ. 10 և 50 յօդուածները:)

Փանձումն. — Հաշուեցուցակի, պարտամուրհակի, փոխանակագրի և ուրիշ գրաւոր կամ բերանացի խոստման մը փոխարէն իրական գրամ առնելու գործողութեան Փանձումն կ'ըսուի: Զորօրինակ, Յ. Արապեանի 10 պարկ խաչվէ ծախեցի, և փոխարժէքը 6000 դ. ստացայ կանխիկ գրամ: Այս իրական գրամը առնելու գործողութեան կ'ըսուի Փանձումն: (Տե՛ս մեր Զեռատեարին թ. 20 և 60 յօդուածները:)

Վճարումին պէս գանձումներն ալ միշտ կանխիկ գրամով չ'են ըլլար, այլ երբեմն կ'ըլլան

Դրամով և տոմսակով կամ փոխանակագրով միանգամայն, Միայն տոմսակով կամ փոխանակագրով:
(Տե՛ս մեր Զեռատեարին թ. 11 և 21 յօդուածները:)

Վճարման և Փանձման պայմանները. — Վաճառականութեան մէջ վճարումները և գանձումները երկու պայմանով կ'ըլլան.

- Ա. Վճարումն և գանձումն առանց զեղչի
- Բ. » » » զեղչով:

Վճարումն և Փանձումն առանց զեղչի. — Երբ մէկը իր գընած կամ ծախած ապրանքին արժէքն ամբողջապէս վճարէ կամ գանձէ, առանց անիկէ բան մը պակսեցնելու, կ'ըսուի Վճարումն և Փանձումն առանց զեղչի: Զորօրինակ, Ա. Մանուկեանէ 10 հակ վաթէր մանած գնեցի գ. 10 լիրայէն և վճարեցի 100 լիրայ. ըսել է գնած ապրանքիս արժէքը Առանց զեղչի վճարած եղայ: Եւ կամ Միրաք Մալխասեանի ծախեցի 10 հակ վաթէր մանած գ. 11 լիրայէն և գանձեցի 110 լիրա. ըսել է ծախած ապրանքիս արժէքը Առանց զեղչի գանձած եղայ: (Տե՛ս մեր Զեռատեարին թ. 6 և 7 յօդուածները:)

Վճարումն և Փանձումն զեղչով. — Երբ մէկը՝ իր գնած կամ ծախած ապրանքին արժէքին գումարին մէն մի հարիւրէն (որ և է գրամի միութեան մէն մի հարիւրէն) որոշեալ բան մը պակսեցնելով վճարէ կամ գանձէ, այդ տեսակ վճարման և գանձման կ'ըսուի Վճարումն և Փանձումն զեղչով: Զորօրինակ, գնեցի Յ. Ստանլոյլուեանէ 200 ծր. ամերիքան գ. 50 դ. և 1/10 զեղչով վճարեցի 9900 դ.: Արդ՝ 200 ծր. 50 դ. էն 10000 դ. կ'ընէրայց որովհետեւ ես 9900 դ. իրական գրամ տուի, ըսել է զը, նած ապրանքիս արժէքը Զեղչով վճարած եղայ: Եւ կամ ծախեցի Յակոբին 200 ծր. ամերիքան 55 դ. էն և 1/10 զեղչով ստացայ 10890 դ.: Արդ՝ 200 ծր. 55 դ. էն 11000 դ. կ'ընէ, բայց որովհետեւ ես 10890 դ. իրական գրամ առի, ըսել է ծախած ապրանքիս արժէքը Զեղչով գանձած եղայ: (Տե՛ս մեր Զեռատեարին թ. 41 և 46 յօդուածները:)

Վճարումն և Փանձումն ի հաշիւ. — Երբ վաճառական մը կամ սեղանաւոր մը՝ ուրիշ վաճառականի մը կամ սեղանաւորի մը հրամանին համեմատ և անոր հաշւոյն համար երրորդի մը գրամ վճարէ՝ սոյն գործողութեան կ'ըսուի Վճարումն ի հաշիւ: Զորօրինակ, Իզմիրցի Գ. Աբրահամեան ինձ հրաման ըրաւ որ՝ իր հաշւոյն համար Պօլխ իր եղբորը Յակոբին 200 Լիր. օսմ. վճարեմ: Նոյնպէս երբ վաճառական մը կամ սեղանաւոր մը՝ ուրիշ վաճառականի մը կամ սեղանաւորի մը հրամանին համեմատ և անոր հաշւոյն համար երրորդէ մը գրամ առնէ՝ սոյն գործողութեան կ'ըսուի Փանձումն ի հաշիւ: Զորօրինակ, Մանչէսթըրի Գ. Սահակեանի հրամանին համեմատ և անոր հաշւոյն համար Պ. Մինասեան Հոս ի Պօլխ ինձ վճարեց 100 Լիր. օսմ.: (Տե՛ս մեր Զեռատեարին թ. 72 և 82 յօդուածները:)

Կարգադրութիւն հաշւոյ. — Երբ վաճառականի մ'ունեցած պարտքերնիս միմիայն գրամ չի տալով, այլ գանազան վաճառելի իրեր, այսինքն, տոմսակ, փոխանակագիր, ապրանք, արժէթուղթ ևւլն. տալով հատուցանենք, այսպիսի գործողութեան կ'ըսուի Կարգադրութիւն հաշւոյ: Զորօրինակ, Կ. Ասլանեանի ունեցած 40000ի պարտքս կարգադրեցի հետեւեալ կերպով.

Ի/հ 61/ օր. տոմսակ մը տուի	9,000
Պրուսայ գանձելի 1/1 օր. փոխանակագիր մը	10,000
30 հատ բումէլիի երկաթուղիի պարտաթուղթ գ. 92 Ֆր.	12,000
Զանազան ապրանք	9,000
(Տե՛ս մեր Զեռատեարին թ. 59 և 93 յօդուածները:)	40,000

Կարգադրութիւնն հաշտոյ կ'ըսուի նաև՝ երբ մէկը վաճառականի մը հետ շարունակաբար ունեցած առեւտուրէն մնացած հաշիւը վճարելով գոցէ:

Ձեղջուռն կամ գնումն վաճառելի քրոնց. — Քիչ կամ շատ պայմանաժամ ունեցող հրամանի տոմսակներ, հեռաւոր քաղաքներու կամ օտար երկիրներու մէջ վճարելի փոխանակագրեր, որք ընդհանրապէս մէկ քանի ստորագրութեամբ կ'ըլլան, մէկէ մը գնելու գործողութեան կ'ըսուի **Ձեղջուռն** վաճառելի քրոնց: Առեւտուրի լեզուով **Թուղթ** զեղչել կ'ըսուի այս գործողութեան, որովհետեւ զեղչողը կամ գնողը առած թղթին Իրական արժէքը կը վճարէ և տէր կ'ըլլայ անոր, եւ Անուանական արժէքը վճարօրին կ'ստանայ տոմսակը ստորագրողէն կամ փոխանակագիրը ընդունողէն:

Պէտք է գիտնալ թէ՛ պայմանաժամ ունեցող հրամանի տոմսակները եւ օտար երկիր վճարելի փոխանակագրերը՝ երկու տեսակ արժէք կ'ունենան, այն է՝ Անուանական արժեք, որ թղթին մէջ թէ՛ թուանշանով եւ թէ՛ գլխագրով (1) կը գրուի, և Իրական արժեք, որ անուանական արժէքէն զեղչը, յանձնառուէքը, դրամատուրքը վար իջնելով՝ մնացած զուտ գումարն է որ կը վճարուի թուղթը զեղչել տուողին:

Թուղթ զեղչելու գործողութեան մէջ, զեղչը՝ որ, ինչպէս ըսինք, թղթին Անուանական եւ Իրական արժէքներուն միջեւ եղած տարբերութիւնն է, թուղթը զեղչել տուողին կը վերաբերի. այդ զեղչը՝ թուղթը զեղչողին կամ գնողին համար շահ մ'է:

Թուղթ Ձեղչելու Օրինակ

Գ. Յակոբեանի 90 օրէն վճարելի 10000 ղ. նոց տոմսակը տարեկան 12 տոկոսով զեղչեցի, այսինքն, 10000 ին 90 օրուան 10 12 էն տոկոսը, որ կ'ընէ 300 ղ. 10000 էն զեղչելով՝ 9700 ղ. ք վճարեցի. ըսել է այդ տոմսակը 9700 ղ. ի Գնած եղայ: Քիչ մ'առաջ ըսինք թէ՛ պայմանաժամ ունեցող թղթերը երկու տեսակ արժէք կ'ունենան, Անուանական եւ Իրական: Արդ՝ վերի օրինակին մէջ, 10000 ղ. ք թղթին Անուանական արժէքն է. որովհետեւ Գ. Յակոբեան՝ որ այդ տոմսակը ստորագրած է, 90 օրէն 10000 ղ. վճարելու պարտական է. իսկ 9700 ղ. ք թղթին Իրական արժէքն է, որչեալ տոկոսով զեղչը տոմսակին Անուանական արժէքէն իջնելէ ետքը: (Տե՛ս մեր Ձեռատետրին թ. 106 յօդուածը:)

(1) Տե՛ս այս մասին Անուանական քրոնց գլխուն մէջ:

Օրինակ գնեսև օտար երկիր վճարելի փոխանակագրոց

Բ. Կիւզէլ ի Փարիզ կը զեղչէ կամ կը գնէ Ս. Ասլանեանի հաշտոյն, որ ի Կ. Պօլիս, 17000 ֆր. ի Մարսիլիոյ եւ Փարիզի մէջ վճարելի զանազան պայմանաժամներով 4 կտոր փոխանակագիր: Տարեկան 10 3 տոկոսի հաշտով այդ թղթերը զեղչելով, եւ դրամատուրքն եւ իր յանձնառուէքը վար իջնելով. որոնց ընդհանուր գումարն եղած է ֆր. 132.05, զուտը՝ ֆր. 16867.95 Ս. Ասլանեանի պահանջքին կ'անցնէ, նամակաւ զրկելով անոր հաշիւը, որուն կ'ըսուի **Ձեղչի ցուցակ**, որուն ձեւին և ուրիշ մանրամասնութեանց վրայ խօսած ենք **Չանագան** գրութիւնի վաճառականական գլխուն մէջ, ուր կայ նաև վերոյգրեալ փոխանակագրոց **Ձեղչի ցուցակը**, նամակը, ինչպէս նաև վաճառման վերաբերեալ օրինակին (Գ. Յակոբի): Արդ՝ վերի օրինակին մէջ՝ 17000 ֆր. ք Ս. Ասլանեանի զրկած թղթոց Անուանական արժէքն է, որովհետեւ այդ թղթոց վճարօրին Բ. Կիւզէլ 17000 ֆր. պիտի գանձէ. իսկ 16867.95 ֆր. ք թղթոց Իրական արժէքն է, որոչեալ տոկոսով զեղչը եւ ուրիշ ծախքերը Անուանական արժէքէն իջնելէ ետքը: (Տե՛ս մեր Ձեռատետրին թ. 81 եւ 145 յօդուածները:)

Վաճառումն վաճառելի քրոնց. — Քիչ կամ շատ պայմանաժամ ունեցող հրամանի տոմսակներ, հեռաւոր քաղաքներու կամ օտար երկիրներու մէջ վճարելի փոխանակագրեր, որք ընդհանրապէս մէկ քանի ստորագրութեամբ կ'ըլլան, մէկու մը ծախելու գործողութեան կ'ըսուի **Վաճառումն** վաճառելի քրոնց: Առեւտուրի լեզուով **Թուղթ** զեղչել սալ կ'ըսուի այս գործողութեան, որովհետեւ ծախողը կամ զեղչել տուողը ծախած թղթին Իրական արժէքը ստանալով՝ այդ թուղթը ծախած կ'ըլլայ զեղչողին, որ վճարօրին կը գանձէ թղթին Անուանական արժէքը տոմսակը ըստորագրողէն կամ փոխանակագիրը ընդունողէն:

Այս գործողութիւնը իր նախորդին, այսինքն, թուղթ զեղչելուն հակառակն է. առաջին պարագային՝ պարապ մնացած դրամնիս շահագործելու համար զանազան վաճառելի թղթեր կը զեղչենք. իսկ երկրորդ պարագային՝ ունեցած դրամի պէտքերնիս հոգալու համար սեղանաւորի մը կամ դրամատան մը թուղթ զեղչել կը տանք:

Թուղթ զեղչել տալու գործողութեան մէջ, զեղչը՝ որ թղթին Անուանական եւ Իրական արժէքներուն միջեւ եղած տար-

բերութիւնն է, թուղթը զեղջել տուողը կամ ծախողը կը տուժէ. հետեւաբար եւ անոր համար վնաս մ'է:

Թուղթ զեղջել տալու օրինակ

Մ. Պողոսեանի 60 օրէն վճարելի 10000 զշնոց տոմսակը տարեկան 1/10 12 տոկոսով զեղջել տուի, այսինքն, 10000 զշին 60 օրուան 1/10 12 էն տոկոսը, որ կ'ընէ 200 զշ. 10000 էն զեղջել տալով՝ 9800 զշ. գանձեցի. ըսել է այդ տոմսակը 9800 զշ. ի Շախաժ եղայ: Արդ՝ այս օրինակին մէջ ալ 10000 զշ. ք տոմսակին Անուանակիան արժէքն է. որովհետեւ Մ. Պողոսեան՝ որ այդ տոմսակը ըստորագրած է, 60 օրէն 10000 զշ. վճարելու պարտական է. իսկ 9800 զշ. ք թղթին Իրական արժէքն է, որոշեալ տոկոսով զեղջը տոմսակին Անուանակիան արժէքէն իջնելէ ետքը (1): (Տե՛ս մեր Զեռատեսարին Թ. 57 եւ 113 յօդուածները:)

Օրինակ վաճառուան օտար երկիր վճարելի փոխանակագրոց

Գ. Յակոբ իր պարաքին փոխարէն կը զրկէ Լօնտրա Պանք օվ էճիբթի այլեւայլ պայմանաժամներով 6 կտոր՝ ընդամենը £ 3331 ի փոխանակագիր, զորս տարեկան 3 1/2 և 4 ով զեղջելով և դրոշմատուրքը վար գնելով, զուտ գումարը, £ 3310. — . 3, անոր պահանջքին կ'անցնէ, զրկելով անոր Զեղջի ցուցակը:

Արդ՝ վերի օրինակին մէջ ալ, £ 3331 ք զրկուած փոխանակագրոց Անուանակիան արժէքն է, որովհետեւ այդ թղթոց վճարորին Պանք օվ էճիբթի £ 3331 պիտի գանձէ. իսկ £ 3310. — . 3 ք թըղթոց Իրական արժէքն է, որոշեալ տոկոսով զեղջը եւ ուրիշ ծախքերը Անուանակիան արժէքէն իջնելէ ետքը:

Վաճառելի թղթոց գնման և վաճառման գործողութիւնք թէ-եւ վաճառականութեան մէջ ալ կը պատահին, սակայն դրամականի վերաբերեալ ըլլալուն՝ աւելի սեղանաւորական գործողութիւն կը համարուին քան վաճառականական, ինչպէս որ այդ մասին խօսած ենք Ա. գլխուն մէջ սեղանաւորաց յատուկ գործողութեանց շարքին մէջ:


Վարկ բանալ եւ վարկ բնել. — Վարկ բանալ եւ վարկ ընել մէկու մը իրարմէ տարբեր բաներ են: Նախ խօսինք թէ ի՞նչ է վարկ բանալը:

[1] Զեղջի վերաբերեալ նախկներուն վրայ խօսած ենք Լաշուական գիտելաց գլխուն մէջ:

Վարկ բանալ տեսակ մը հրաման է, զոր վաճառական մը կամ սեղանաւոր մը ուրիշ քաղաք մը գտնուող իր մէկ կամ տարբեր քաղաքներ գտնուող մէկ քանի թղթակիցներուն միանգամայն կ'ուղղէ, յանձնարարելով անոնց, որ այսինչ անուն վաճառականին կամ ոչ-վաճառական անձի մը իր հաշուոյն վճարեն որոշեալ գումար մը: Սոյն հրամանը նամակի ձեւով գրութեամբ մը կը տրուի, որուն Վարկագիր կ'ըսուի, երբ մէկ քաղաքի մէջ գտնուող միայն մէկ թղթակցի ուղղեալ է. իսկ, ինչպէս վերը ըսինք, երբ մէկէ աւելի քաղաքներու մէջ մէկ քանի թղթակցի ուղղեալ ըլլայ՝ Շրջաբերական վարկագիր կ'ըսուի:

Վարկագիրը հնարուած է՝ գլխաւորաբար զգործի պատճառով կամ գրօսական պտոյտի համար դանազան քաղաքներ ճամբորդողներու համար: Վաճառականը՝ որ գործի համար շատ անգամ օտար երկիրներ կը ճամբորդէ, փոխանակ հետը հնչուն դրամ կամ որոշեալ պայմանաժամով վճարելի փոխանակագիր տանելու, ընելիք գործին եւ ճամբու ծախքին համար պէտք եղած գումարը առաջուց կը տայ իր գտնուած քաղաքին մէջ սեղանաւորի մը, եւ անկէ կ'առնէ վարկագիր մը անոր մէկ կամ մէկ քանի թղթակիցներուն ուղղեալ, որք կը գտնուին իր երթալիք քաղաքներուն մէջ: Վարկագրին առաւելութիւնը այն է որ, ճամբորդողը ազատ կ'ըլլայ անոր մէջ նշանակուած գումարն ամբողջ չի գործածելու, եթէ իր առաջադրած գործը չի կատարուի. կամ եթէ ծախքն իր ենթադրած գումարէն պակաս ըլլայ՝ իր պէտքին չափ միայն դրամ առնելու. մինչդեռ եթէ հետը հնչուն դրամ առնէր՝ այս առաւելութիւնները չ'ուեննալէ զատ, կրնայ դանազան վտանգներու եւ անպատեհութեանց ենթարկուիլ, այսինքն, գողութիւն, օտար երկրի մէջ իր ունեցած տարբեր դրամները նոյն երկրին դրամին հետ փոխելու դժուարութիւնը, և ստակի վնասը, եւլն. իսկ եթէ փոխանակագիր առած ըլլայ վրան՝ փոխանակագրին վճարորին անպատճառ նոյն քաղաքը գտնուիլ պարտաւոր է, ինչ որ ճամբորդի մը համար շատ անգամ դժուար է. զի կրնայ ըլլալ որ այսինչ քաղաքը մէկ քանի օր աւելի մնալու ստիպուի, որով չի կրնար որոշեալ օրը հոն հասնիլ եւ փոխանակագիրը վճարորին իսկ գանձել, թէեւ նոյն միջոցին դրամի ամենեւին պէտք ալ չ'ուեննայ:

Վարկագիրը հետեւեալ իմաստով կը գրուի:



Վ. Ա. Բ. Կ. Ա. Գ. Ի. Բ.

Կ. Պոլիս, 20 Սեպտեմբ. 1897

§

Մարտիշեա

Պատիւ ունիմ Ձեզ յանձնարարել զրամասոյցս Պ. . . (իմ բարեկամն, կամ իմ գործակաւսարս) որուն կրնաք միեւնէ հիւնգ հազար ժրակ վճարել, փոխարէնը իմ հաշիս անցնելով:

Պ. . . Ձեզ պիտի տայ առած գումարներուն համար երկերկու օրինակով ընկալագիր, որունց մէկ օրինակը Ձեր քով պիտի մնայ, իսկ միւսը ինձ պիտի դրկեմ:

(Ստորագրութիւն)

Ահաւասիկ Պ. . . ի ստորագրութիւնը

(Ստորագրութիւն)

ՉԵԿՈՒՑԱԳԻՐ Վ. Ա. Բ. Կ. Ա. Գ. Ի. Բ.

Կ. Պոլիս, 20 Սեպտեմբ. 1897

§

Մարտիշեա

Ներկայիս կը զեկուցանեմ Ձեզ որ՝ հիւնգ հազար ժրակի համար Ձեր վրայ վարկագիր մը տուած եմ՝ խափս վաճառականներէն Պ. . . ին:

Ներփակեալ կը գտնեմ յիշեալիւս ստորագրութիւնը կրող քուղի մը, որուն միայն պէտք է վստահութիւն ընեմ:

(Ստորագրութիւն)

Վարկագիրը առողջ միեւնոյն թղթատարով կ'իմացնէ այս գործողութիւնը այն թղթակցին կամ թղթակիցներուն, որոնց ուղղած է վարկագիրը, ուրիշ նամակաւ մը, որուն կ'ըսուի Ձեկուցագիր վարկի բացման, որ վերինին պէս կը գրուի:

LETTRE DE CRÉDIT

Constantinople, le 20 Septembre 1897

Me.

Marseille

J'ai l'honneur de vous recommander le porteur de la présente, M... (mon ami ou mon employé): vous voudrez lui payer jusqu'à concurrence de cinq mille francs, dont vous débilerez mon compte.

M... vous remettra ses reçus par duplicata; l'un d'eux restera chez-vous, l'autre me sera envoyé.

(Signé)

Voici la signature de M...

(Signé)

LETTRE D'AVIS DE CRÉDIT

Constantinople, le 20 Septembre 1897

Me.

Marseille

Je forme la présente pour vous faire part que je viens de délivrer à M... de notre ville, une lettre de crédit sur votre caisse de la somme de cinq mille francs.

Ci-inclus vous trouverez un bulletin portant la signature de M... à laquelle seule vous devrez ajouter foi.

(Signé)

Սովորութիւն է վարկագիրը ստացող անձին ստորագրութիւնը դնել առ զեկուցագրին մէջ կամ զառ թղթի մը վրայ, եթէ վարկագրին մէջ գրուած չըլլայ. որպէս զի նշանակեալ գումարը վճարող թղթակիցը կարող ըլլայ բազմաթիւ անոր ստորագրութիւնը այն ընկալագրոց ստորագրութեան հետ, զորս պիտի առնէ ամէն անգամ որ անոր դրամ վճարէ: Ասկէ կը հետեւի թէ՛ վարկագիրք վաճառելի թուղթ չ'են, այլ անձնական են, եւ անոր մէջ նշանակեալ գումարն այն անձը միայն կրնայ ստանալ, որուն անունին տրուած է վարկագիրը:

Ինչպէս օրինակին վրայ կ'երեւայ, վարկագրին տէրը հետըզհետէ առած գումարներուն համար երկու օրինակով ընկալագիր պիտի տայ դրամը վճարող թղթակցին. սա եւս անոնց մէկ օրինակը իրեն պիտի պահէ, անոնցմով իր առած գումարներուն ի հաստատութիւն, եւ միւս օրինակը պիտի զրկէ վարկագիրը տուողին ի գիտութիւն: (Տե՛ս մեր Ձեռատետարին թ. 141 յօդուածը:)

Շրջապէտակսն վարկագրին խմբագրութիւնը նման է պարզ վարկագրին, սա տարբերութեամբ միայն որ՝ վարկագիրը փոխանակ մէկ անձի ուղղեալ ըլլալով՝ մէկ քանի անձի միանգամայն ուղղեալ կ'ըլլայ, իւրաքանչիւրին անունը եւ հասցէն նամակին ճակատը գրուելով, իր թէ ատոնք ամէնքը մէկ անձ եղած ըլլային: Ձորօրինակ, գիցուք թէ մէկը Պօլիսէն կ'ուզէ ճամբորդել Վիէննայ, Փարիզ եւ Լոնարայ. փոխանակ դրամը հետը պտօցնելու, որուն անպատեհութիւնները թուեցինք, Պօլսոյ Գուէտի Լիօնէին առաջուց կը վճարէ իրեն ճամբորդութեան համար պէտք ըլլալիք գումարը, օրինակի համար, 6000 ֆր. եւ կ'առնէ անկէ վարկագիր մը յիշեալ դրամատան այդ քաղաքներուն մէջ ունեցած մասնաձիւղերուն ուղղեալ: Ճամբորդը, որ հետզհետէ այդ քաղաքները պիտի այցելէ եւ հոն ժամանակ պիտի անցնէ, իրեն պէտք եղած գումարները մաս առ մաս կ'առնէ անոնցմէ. կամ, եթէ ուզէ, անոնցմէ միայն մէկէն կ'առնէ ամբողջ գումարը. միայն թէ՛ այդ գումարները վճարողը պէտք է գրէ վարկագրին ետին իր վճարած գումարը, որպէս զի միւսները զայն տեսնելով՝ գիտնան եւ ըստ այնմ մնացորդ գումարը միայն վճարեն եւ ո՛չ աւելի: Օրինակի համար, եթէ Վիէննայ 2000 ֆր. առած եւ վարկագրին ետին գրուած ըլլայ՝ Փարիզի Գուէտի Լիօնէն զայն կարգաւով 4000 ֆր. միայն կը վճարէ. իսկ եթէ Փարիզէն ալ 2000 ֆր. առնէ՛ այն ատեն կը մնայ 2000 ֆր. ի պահանջը, զոր Լոնարայի Գուէտիէն պիտի առնէ. կամ փոխանակ այսպէս ընելու՝ ամբողջ 6000 ֆր. ը կրնայ այդ երեքէն միայն մէկէն առնել, այն ատեն վարկագրին ետին գրուելով, միւս երկուքէն բան մը պահանջելու իրաւունքը չի մնար:

Մէկու մը վարկ ընելը պարզապէս մէկու մը վստահիլ կը նշանակէ, այսինքն, ոեւ է գումար մը վստահիլ անոր՝ որոշեալ ժամանակէ մը վերջը նոյն իրեն վերագարձնելու պայմանով:

Վարկը հետեւեալ պարագաներու մէջ կ'ըլլայ.
Պայմանաժամով ապրանք ծախելով, այսինքն, ապառիկ տալով,

- Դրամ փոխ տալով,
- Գումարի մը համար ուրիշի մը երաշխաւոր ըլլալով:
- Վարկը երկու եղանակու կ'ըլլայ.
- Ա. Փոխարեկնով վարկ, այսինքն, վարկ ընողը առաջուց կ'առնէ իր ըրած վարկին գումարը, տոմսակ, փոխանակագիր կամ իւրըր գրաւ, արժէթուղթ եւ կամ որ եւ է արժէքաւոր բան մը:
- Բ. Բաց վարկ, այսինքն, փոխարէն առանց բան մ'առնելու:

Փոխանցումն հաշուց կ'ըսուի այն գործողութեան, որով վաճառական մը ուրիշի մը քով իր ունեցած անելիքը կամ հաշիւը ուրիշ վաճառականի մը կը փոխանցէ, զորօրինակ, գիցուք թէ կ. Գէորդեան 200 լիրայի պահանջը մ'ունի կետարիա Գ. Սարգիսեանի վրայ, եւ միւս կողմէն հաշիւ ունի դարձեալ նոյն քաղաքին մէջ Բարսեղ Չայլաքեանի քով: Արդ՝ կ. Գէորդեան կը գրէ Գ. Սարգիսեանի որ իր 200 լիրայի պարտքը Բարսեղ Չայլաքեանի վճարէ:

Ինչպէս կ'երեւայ, այս գործողութիւնով կ. Գէորդեանի՝ Գ. Սարգիսեանի քով ունեցած 200 լիրայի հաշիւը Բարսեղ Չայլաքեանի փոխանցեցաւ, այսինքն, հաշիւ մը մէկուն քովէն ելաւ եւ ուրիշի մը քով անցաւ:

Փոխանցման գործողութիւնք աւելի տօնավաճառներու մէջ կ'ըլլան, որովհետեւ ապրանք գնողները՝ վճարման կարգադրութեան համար աւելի լաւ կը սեպեն այս միջոցը, քան թէ հետերին դրամ տանիլ: Վաճառականական գործառնութեանց մէջ ըստեպ կը պատահին Հաշիւի փոխանցումն, որք ընդհանրապէս նամակով կ'ըլլան:

Վաճառականական գործողութիւն կրնայ համարուիլ նաեւ այն գործողութիւնը, որով պայմանաժամին չի վճարուած կամ չի վճարուելիք վաճառելի թղթի մը աեղ ուրիշ նոր թուղթ մը կը շինուի: Երբ փոխանակագրի մը վճարողը կամ տոմսակի մը ստորագրողը տեսնէ որ՝ վճարօրին չ'պիտի կրնայ կամ չ'է կրցած վճարել անոր փոխարէնը, եւ կ'ուզէ առջի թղթին աեղ ուրիշ նոր թուղթ

մը տալ՝ առջի պայմանաժամէն աւելի երկար պայմանաժամէ մը վճարելի, կրնայ իր առջի թուղթը նորոգել թղթին տիրոջ հաստատմամբ:

Անվճար թղթի մը տեղ անպատճառ միեւնոյն տեսակ թուղթ տալ հարկ չ'ըլլար. փոխանակազիր քաջողը կրնայ իր ստորագրութեամբ ուրիշ տոմսակ մ'ալ տալ իր վճարելիք փոխանակազրին տեղ. նոյնպէս տոմսակի մը վճարողը կրնայ անոր տեղ իր ստորագրութեամբ փոխանակազիր մը կամ ուրիշ թուղթ մը տալ՝ դարձեալ անվճար թղթին տիրոջ հաստատմամբ:

ԳԼՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ

ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ ՓՈՒՍԴՐՈՒԹԻՒՆԸ

Ապրանքներու քաղաքէ մը ուրիշ քաղաք, կամ երկրէ մը ուրիշ երկիր փոխադրութիւնը ծովու կամ ցամաքի ճամբով կը կատարուի: Յամաքի ճամբով ապրանք փոխադրելու միջոցներն են, երկաթուղի, կառք, ջորի, ուղտ, եւլն. իսկ ծովու ճամբով փոխադրութեան միջոցներն են, շոգենաւ, նաւ, նաւակ, լաստափայտ, եւայլն:

Ապրանք մը հեռու տեղ անվնաս փոխադրելու համար հարկ է զայն լաւ պատաստել եւ հակ շինել, յորմէ յառաջ կը գայ Պասասուռն, Զուս կշիռ, Անգուս կշիռ եւ Ապրայ:

Պատաստում. — Կան ապրանքներ, որք չօշափումէ. խոնաւութենէ, օդէն, իրարու դարնուելէն եւ կամ, եթէ հեղուկ են, թափուելու վտանգէն ազատ մնալու համար, առանց բանի մը մէջ պատապարելու, կարելի չ'է ուրիշ տեղ փոխադրել: Ապրանք մը որ եւ է բանի մէջ, այսինքն. հակի, պարկի, կառուի, մորթի, կողովի եւ սնտուկի մէջ պատասպարելուն Պասասուռն կ'ըսուի. իսկ ընդհանուր կերպով Պասաս կ'ըսուի ապրանք պատասպարող ամէն նիւթոց, ինչպէս են, պարկ, տակառ, սնտուկ, կարաս, չոր խոտ, եւ կամ ուրիշ տեսակ ամաններ:

Ապրանքներն իրենց տեսակին, արժէքին եւ երթալիք տեղոյն հեռաւորութեան համեմատ կը պատասպարուին եւ կը պատաստուին: Դիւրաբեկ նիւթերն ընդհանրապէս սնտուկի մէջ կը դրուին, որոնց վրայ սեւ ներկով շիշ մը կը գծեն կամ գաղղիբեկէն fragile

(դիւրաբեկ) բառը կը դրեն, որով սնտուկին մէջ կոտրելիք ապրանք գտնուիլը կը հասկցուի եւ գանոնք տեղափոխելու ատեն ուշագրութիւն կ'ըլլուի: Առեւտուրի լեզուով սովորաբար Հակ կ'ըսուի սնտուկին, տակառին, եւլն. թէ՛ պարունակող եւ թէ՛ պարունակեալ նիւթերն մէկտեղ առնելով:

Զուս եւ Անգուս կշիռ. — Ապրանքի մը Զուս կշիռը մինակ ապրանքին կշիռն է, առանց հաշուելու պատաստին կշիռը. իսկ անգուս կշիռը ամբողջ հակին կշիռն է, որ թէ՛ պատաստին եւ թէ՛ ապրանքին կշիռները միանգամայն կը պարունակէ գործրինակ, պարկ մը խաճվէ կշռելով 70 հ. գտանք, յետոյ խաճվէն պարունակող պարկը կը կշռենք. որ 1 հ. կը գայ. արդ' 70 հօխան պարկին Անգուս կշիռն է, յորմէ զեղչելով պատաստին 1 հօխան, կը մնայ 69 հ. որ է խաճվէին Զուս կշիռը:

Ապրայ. — Ապրանքը պարունակող նիւթին կշռոյն կ'ըսուի Ապրայ (տարայ), որ հակին անգուս կշիռէն կը զեղչուի, զուս կշիռը գտնելու համար: Վերի օրինակին մէջ, պարկին 1 հ. ծանրութիւնը Ապրայ կ'ըսուի: Ասկէ կը հասկցուի թէ՛ ապրանքներու փոխադրութեան գինը անգուս կշռին վրայ կը վճարուի. իսկ ապրանք գնելու եւ ծախելու գործողութիւնք ընդհանրապէս զուս կշռին վրայ կ'ըլլան, այսինքն, ապրան զեղչելով: Ծանրութեան հաշուով ապրանքի համար տրուելիք մաքսատուրքն եւս զուս կըշռին վրայ կը տրուի. բայց դիւրութեան համար, մաքսատուներ իբրեւ ապրայ հակ գլուխ որոշեալ բան մը կը զեղչէ՝ ապրանքին տեսակին եւ պատաստման կերպին համեմատ:

Մաքսատուրք. — Մաքսատան վրայ խօսած ատեննիս ըսինք թէ՛ օտար երկրէ եկած ապրանքներուն վրայ մաքսատան տուրք մը կը տրուի. այդ տուրքին կ'ըսուի Մաքսուրք կամ առեւտուրի լեզուով Մաքս: Այս տուրքն ապրանքին տեսակին, կշիռին, արժէքին եւ չափին համեմատ աւելի կամ պակաս կ'ըլլայ. վասն զի ամէն տեսակ ապրանքի համար մասնաւոր գիններ դրուած են եւ այդ գիններուն վրայ 0/0 8 մաքս որոշուած է, որք նշանակուած են յատկապէս տպուած տետրակի մը մէջ, որուն թարիփա կ'ըսուի:

Թարիփան բաւական տարիէ ի վեր գործադրութենէ դադրած է, ըստ որում Եւրոպական տէրութեանց հետ թուրքիոյ մաքսային պայմանագրին պայմանաժամը հասած ըլլալով՝ մինչեւ նոր թարիփային պատրաստութիւնը, եկած ապրանքներուն՝ մաքսին այդ գործին յատուկ պաշտօնեան, որուն գնահատող (էսթիմաթէօր) կ'ըսուի, գին մը որոշելով այդ գինին վրայ 0/0 8 մաքս կը տրուի հիմա:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՎԱՐՁՔ ԵՒ ՁԵՂՁ

Վաճառականութեան մէջ ընդհանրապէս Վարձք ըսելով պէտք է հասկնալ որ եւ է աշխատութեան համար տրուած ամէն փոխարինութիւն . զորօրինակ ,

Յանձնառողջէք

Երաշխողջէք

Միջնորդէք .

Իսկ Ձեղջ կ'ըսուի ինչ որ բանի մը արժէքէն կը պակսեցնեն ,

Ձեղջ ապրանքի

Տժգին

Տոկոս

Փոխանակագին

Դրամագեղջ :

Յանձնառողջէքն ինչպէս Ա . Գլխուն մէջ յանձնառուին վրայ խօսած ատեննիս բացատրեցինք , տեսակ մը վարձք է , զոր յանձնարարողը կը վճարէ յանձնառուին , այսինքն , իր հաշուոյն ապրանք գնող կամ ծախող վաճառականին :

Յանձնառողջէքն ընդհանրապէս կատարուած գործողութեան գումարին վրայ այսչափ 0/0 , կամ երբեմն ամէն մէկ հակի , սնտուկի տակառի , ելն . ի համար որոշեալ բան մը կ'ըլլայ : Ապրանքի վերաբերեալ գործողութեանց մէջ յանձնառողջէքը 1-3 0/0 կ'ըլլայ ընդհանրապէս և քիչ անգամ 3 էն աւելի . իսկ գրամական գործողութեանց մէջ 1/10 , 1/8 , 1/4 , 3/8 , 1/2 0/0 : Ասոնցմէ զատ յանձնառողջէքը տեղական սովորութեանց և գործին տեսակին համեմատ փոխուելով նշանակեալ սակերէն աւելի կամ պակաս ալ կ'ըլլայ :

Երաշխողջէքը կրկին յանձնառողջէք մ'է , զոր յանձնառուն կ'առնէ , երբ մէկու մը հաշուոյն ապառիկ ծախած ապրանքին վրձարմանը ինքը պատասխանատու ըլլայ : Զորօրինակ , շատ մը եւրոպացի գործարանատէրներ կան , որք Պոլսոյ կամ ուրիշ հրապարակի յանձնառուներու ապրանք կը զրկեն իրենց հաշուոյն ծախուելու համար : Յանձնառուն երբ իր ճանչցած մէկուն ապրանք ծախէ ապառիկ եւ գործարանատէրն այդ մարդը չի ճանչնալուն հա-

մար ապառիկ տալ չուզէ , այն ատեն յանձնառուն իր սովորական յանձնառողջէքէն զատ 0/0 այսչափ , ըստ համաձայնութեան , բան մը եւս առնելով , ինքը կ'ըլլայ պատասխանատու այդ գումարին վճարման համար , այսինքն , ապրանքը գնողը եթէ օրին չի վճարէ կամ սնանկանայ յանձնառուն կը վճարէ գործարանատիրոջ պահանջքն ամբողջապէս :

Երաշխողջէքն ընդհանրապէս յանձնառողջէքին կրկինը կամ անոր քանի մը պատիկը կ'ըլլայ , այն է՝ 2-6 0/0 : Երաշխողջէքն ալ յանձնառողջէքին պէս տեղական սովորութեան , ժամանակին եւ գործին տեսակին համեմատ փոխուելով նշանակեալ սակերէն աւելի կամ պակաս ալ կ'ըլլայ :

Միջնորդէք . — Միջնորդներն իրենց ձեռքով կատարուած գնման եւ վաճառման գործողութեանց գումարին վրայ 0/0 այսչափ վարձք մը կ'առնեն , որուն Միջնորդէք կ'ըսուի :

1888 Սեպ . 26 թուական կայսերական Իրատէով՝ միջնորդէքներու համար հետեւեալ սակացոյցը որոշուած է , զոր կ'արտասակենք ի գիտութիւն գործի մարդոց : (Տե՛ս Թ . 56 երեսը :)

Ձեղջ ապրանքի . — Վաճառականութեան մէջ հաշուեցոյցի մը գումարը վճարօրէն ստալ վճարուած ատեն այսչափ 0/0 պակաս կը արուի , որուն Ձեղջ կ'ըսուի : Այս գեղջը ընդհանրապէս ամիսը 0/0 1 ի հաշուով կ'ըլլայ , այսինքն , եթէ ապրանքը 2 ամիս պայմանով ծախուած է՝ գեղջը 0/0 2 կ'ըլլայ . եթէ 4 ամիս պայմանով ծախուած է՝ գեղջը 0/0 4 կ'ըլլայ , եւն : Բայց գործին եւ պարագային համեմատ՝ գեղջը աւելի կ'ոմ պակաս ալ կ'ըլլայ . ինչպէս կան ապրանքներ , որոնք ունին իրենց որոշ գեղջը , զոր ամէն գնող կ'ստանայ ծախողէն՝ նոյն իսկ եթէ գնումը պայմանաժամով ըլլայ :

Տժգին ըսելով պէտք է հասկնալ հաշուեցոյցի մը ընդհանուր գումարէն բան մը պակսեցնել՝ ապրանքի գեղջին պէս . բայց սա տարբերութեամբ որ՝ Տժգինն ընդհանուր գումարէն ո՛ր եւ է բան մ'իջնել կը նշանակէ , մինչդեռ Ձեղջը ընդհանուր գումարին վրայ սովորաբար այսչափ 0/0 ի հաշուով բան մը պակսեցնել կը նշանակէ :

Տժգինը պատահական պատճառներով տեղի կ'ունենայ , ինչպէս են , կշիռի կամ չափի պակասութիւն , որակի ստորնութիւն և գոյներու տգեղութիւն , նաու մէջ պատահած վնաս . սակէ զատ , տժգինը ընդհանրապէս հաշուեցոյցի մը փոխարէնը վճար-

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՕԱԿԱՅՈՅՑ ՄԻՋՆՈՐԳՉԷՔՆԵՐՈՒ

ԲԷՍՄԸ ՏԷԼԼԱԼԻՅԷ ԹԱՐԻՖԱՍԸ ՏԸՐ

Ն.Է.Վ.Ի.Է.Մ.Թ.Ա.Ա.		Երևզե		Միջերի քարաքանակ	Երևզե	
		Ղ.Ղ.	Փր.		Ղ.Ղ.	Փր.
Ձէխայիր իւզէրինէ	Սաճըճը Թա- րաֆընտան		20			20
Գօլօնեալ Թապիր օլունան գանձա- րիյէ մալի վէ Եսրիթօ, Բօմ, Բէ- ձէն Թօխուժու, Ֆասուլեա, Պազա, Նօհուտ, Թէրէ կաղը, Բէօուէլէ, Տէրի, Սուսամ, Սալէպ վէ պունդարս մէմասիլ սայրէ էմձաա	»	1				
Մանիֆաձուրա	»	1				
Աճէմ Թագլիտի մանիֆաձուրա	»	1	20	»		20
ձէհրի, Բամուգ, վէ Ջամս	»	1		»		
Տագիգ	»	1		»		
Հարիր աչըզ պաշ վէ Խօզանտ Թա- պիր օլունան էմձաա	»	1		»		
Պու տախի Բէշթ վէ Խօրասան Թա- պիր օլունան Իրան իրիկի	»	—		»	1	
Բէրէսձէ	»	1		»		
Բէօմիւր	»	1		»		
Մատէն քէօմիւրի	»	2		»		
Աֆիեօն	»	1		»		20
Եարագ	»	1		»	1	
Թիֆթիթ	»	1		»	1	
Գըյմէթի 10 դուրուշա գատար օլան տուխան	»	զըյէ	10	»		
Գըյմէթի 10 դուրուշ ֆէլզինտէ պու- լունան տուխան	»		20	»		
Թէնպէթի	»		20	»		20
Էմլար ֆիրուխթ վէ իճարը	»	2		»	2	
Նավ	Գարտան	5				
Պէրրէն վէ պահրէն սիկուրձա	Սիկուրձա Թարաֆըն- տան սիկուր- ձաճը իւճրէ- թի իւզէրինէ	5				
Էվրօրա իւզէրինէ գամպիյօ	Պայի Թարա- ֆընտան		5	»		

աւելու միջոցին կը կարգադրուի, մինչդեռ զեղչն սպրանքը յանձ-
նուած պահուն իսկ կը կարգադրուի հաշուեցոյցին վրայ:

Ըսածնիս օրինակով մը բացատրենք.

Գնեցի Ն. Մ. Մուրատեանէ հակ մը տպածոյ, որուն ար-
ժէքն էր ըստ հաշուեցոյցին 120 Լ. օսմ: Այս գումարէն իջնե-
րով սովորական զեղչը 2 0/0, կը մնայ գուտ պարտքս Լ. օսմ.
117.60: Սակայն հակը բացուելով տեսայ որ՝ սպրանքին մէկ մա-
տը ծովու ջրէն փխսուած է. արդ՝ բնական է որ առաջուց սակար-
կուած և որոշուած գումարէն բան մը պակսեցնելու իրաւունք ու-
նիմ. ուստի կ'առաջարկեմ Ն. Մ. Մուրատեանի որ իմ պարտքէս
Լ. օսմ. 17.60ը իջնէ փխսուած սպրանքին համար: Ահա այս
Լ. օսմ. 17.60 ի գումարն է որ Տժգիկն կ'ըսուի, որ՝ ինչպէս տես-
նուեցաւ, զեղչէն բոլորովին տարբեր բան է: (Տե՛ս մեր Ձեռա-
տեարին Թ. 35 եւ 53 յօդուածները:)

Տոկոս. — Փոխ տրուած գումարի մը համար այսչափ 0/0 վարձք
մը կամ շահ մը կ'առնուի, կամ որ նոյնն է՝ փոխ առնուած գումա-
րի մը համար այսչափ 0/0 վարձք մը կը տրուի, որուն Տոկոս կամ
Վաշի կ'ըսուի:

Վաճառականութեան մէջ տոկոսին գինը, որուն Սակ կ'ըսուի,
կը փոխուի եւ հրապարակին վրայ դրամին շատութեան եւ նուա-
զութեան, կամ Խնդրանքի և Մատուցման համեմատութեամբ կ'իջ-
նայ կամ կը բարձրանայ:

Թուրքիոյ տոկոսի օրինական սակը՝ որ սակէ առաջ 0/0 12
էր, 1304 Բէճէպ 9 եւ 1887 Մարտ 22 Թուականաւ նոր հրամա-
նագրով մը 0/0 9 ի իջած է: Թէեւ տոկոսին սակը ըստ օրինի 0/0
9 որոշուած է, սակայն այս գինէն աւելի կամ պակասով ալ գոր-
ծեր կ'ըլլան հրապարակին վրայ. բայց երբ օրէնքին դիմել հարկ
ըլլայ դատավարութեամբ՝ 0/0 9 էն աւելի չ'ընդունուիր. եւ եթէ
այս սակէն աւելի տոկոս վճարուած է՝ աւելին ետ կը տրուի վը-
ճարողին:

Հոս կը դնենք տոկոսի նոր սակազնոյն կանոնադիրը, որ ու-
անողներուն ընդհանրապէս եւ գործի մարդոց մասնաւորապէս
պատկար է, մանաւանդ մեր դաւառացի ազգայնոց, որք, առանց
գիտնալու այս օրինական կէտերը, տոկոսի բեռին տակ կը հեծեն
շարունակ:

ՏՈՎՈՍԻ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

Յօդ. Ա. — Սոյն կանոնագրոյ հրատարակութեան թուականէն ամէն տեսակ պարզ և վաճառականական փոխատուութեանց առկոսի մեծագոյն սակը որոշուած է տարեկան ինն առ հարիւր :

Յօդ. Բ. — Սոյն կանոնագրոյ հրատարակութեան առաջ տասներկու առ հարիւր կնքուած տոկոսեաց պայմանագիրք վաւերական են մինչեւ ներկայիս հրատարակութեան թուականը :

Յօդ. Գ. — Եթէ հաստատուի թէ, կամ մուրհակով եւ կամ դրամագլխին վրայ աւելցնելով, օրինական քանակութեանէն աւելի տոկոս մը պայմանագրուած է պարտականին եւ պարտապահանջին միջեւ, այդ տոկոսի քանակութիւնն ինը առ հարիւրի պիտի իջնուցուի :

Յօդ. Դ. — Փոխատուութեանց պայմանաժամն որչափ որ ալ երկար լինի, տոկոսը պէտք չ'է դրամագլուխն անցնի : Արդիւուած է դատաւորաց վճուել դրամագլուխն անցնող տոկոսները :

Յօդ. Ե. — Փոխատուութեանց տոկոսք պէտք չ'է բազադըրեալ հաշուելն, բայց Ա. եթէ պարտականն երեք տարի ո ե է վճարում մ'ըրած չ'է ի հաշիւ փոխ առնուած գումարին՝ և Բ. եթէ երկուստէք համաձայնած են երեք տարւոյ մէջ բանած տոկոսները դրամագլխին վրայ յաւելուլ, այն ատեն միայն երեք տարւոյ համար բազադըրեալ տոկոս կրնայ հաշուիլ : Իսկ ըստ առեւտրական օրինաց, վաճառականաց միջեւ հաշուընթացները բազադըրեալ առկոսով կրնան բռնուիլ ըստ առաջնոյն :

Յօդ. Զ. — Պարտականին եւ պարտապահանջին միջեւ փոխառութեան ու փոխատուութեան գործողութիւնն որչափ տեւէ, ծայրայեղ տոկոսներն օրինական քանակութեան իջեցնելու համար եղած բողոքները լսելի են, նոյն իսկ եթէ հաշիւները փոխադրուած եւ կամ մուրհակները նորոգուած լինին. սակայն այս բողոքները անլսելի կը մնան, երբ պարտականն իր պարտքն ամբողջովին վճարած եւ երկուստէք գործողութիւնք դադրած են :

Յօդ. Է. — Սոյն կանոնագրոյ հրատարակութեան թուականէն սկսեալ ջնջուած է 1280 տարւոյ 16 Շէվլալ թուականաւ հըրատարակեալ տոկոսեաց կանոնագիրք : (1/10 12 ի սակը ըսել կ'ուզէ) :

Յօդ. Ը. — Սոյն կանոնագրի գործադրութիւնը յանձնուած է Գատական Նախարարութեան :

9 Քէճէպ 304

22 Մարտ 1887

Փոխանակագին ըսելով պէտք է հասկնալ այն շահը, զոր բռնայափոխք կամ դրամափոխք կ'առնեն, երկրին կամ օտար երկրի որ եւ է մէկ դրամը այլապէս դրամի հետ փոխանակելու համար, ինչ որ բացատրեցինք արդէն սեղանաւորաց վրայ խօսած ատեննիս անոնց մէկ մասին, այսինքն, դրամափոխաց վրայ : Զորօրինակ, Օսմ. լիրա կը տանք եւ արծաթ մէճիտ կ'առնենք, Անգլ. լիրա կը տանք եւ Օսմ. լիրա կ'առնենք, եւլն :

Փոխանակագին կ'ըսուի նաեւ այն շահը, զոր սեղանաւորը կ'առնէ որ եւ է գումարի մը փոխարէնը ուրիշ քաղաք մը վճարելու յանձն առնելուն համար, որ ընդհանրապէս Փոխանակագիր⁽¹⁾ ըսուած թղթով մը կը կատարուի եւ երկու տեսակ կ'ըլլայ, ներքին եւ Արտաքին Փոխանակագին ⁽²⁾ :

Դրամագեղջ. — Դրամական կամ սեղանաւորական գործողութեանց մէջ Դրամագեղջ ըսելով պէտք է հասկնալ տոկոս, յանձնառուչէք, փոխանակագին, դրոշմաթղթի և ուրիշ ծախք, որք վաճառելի թղթոց անուանական արժէքէն կը զեղչուին եւ մնացորդը կ'ըլլայ թղթին զուտ կամ իրական արժէքը, ինչպէս բացատրեցինք թղթոց վաճառման վրայ խօսած ատեննիս :

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ

Վաճառականական ընկերութիւնը դաշնադրութիւն մ'է, որով մէկէ աւելի անձեր կը համաձայնին մէկտեղ իրբեւ դրամագլուխ բան մը զնել, օրինակի համար, դրամ, ապրանք, գործիքներ, ևայլն, ձեռնարկելու համար վաճառականութեան, ճարտարարուեստի կամ դրամական որ եւ է գործի մը, որուն նպատակը պէտք է ըլլայ բնականաբար այդ գործերէն շահ մ'ընել, և այդ շահը ընկերներն ամէնքն ալ մէջերնին բաժնել իրենց դրամագլխին համեմատութեամբ. առանց այդ պայմաններուն եղած ընկերութիւնք՝ Վաճառականական ընկերութիւն չ'են համարուիր :

[1] Առեւտրական բոլոր գլխուն մէջ ընդարձակօրէն խօսած ենք Փոխանակագրին վրայ :
[2] Այս մասին ընդարձակ բացատրութիւն տես 12րդ գլուխը Փոխանակական [զամպիո] վրայ գրուածը :

Ընկերութիւնը երկու կերպ է, Վաճառականական և Սոցիալական ընկերութիւն: Զորօրինակ, ցորենի առեւտուր ընելու համար՝ երկու հոգի ընկերութիւն մը կը կազմեն, այդ տեսակ գործողութիւնները (ինչպէս որ վաճառականական գործողութեանց առթիւ ըսինք) վաճառականական ըլլալուն՝ այդ գործին համար կազմուած ընկերութիւնն ալ Վաճառականական ընկերութիւն կ'ըսուի: Բայց երբ երկու հոգի ընկերանալով՝ շահելու նպատակաւ որ և է անշարժ կալուածի, հողի, տունի, եւլն. ի առեւտուրով զբաղին՝ այդ տեսակ գործողութիւնները վաճառականական չ'ըլլալուն՝ այդ գործին համար կազմուած ընկերութիւնն ալ Սոցիալական ընկերութիւն կ'ըսուի:

Առեւտրական օրէնքը հետեւեալ յօդուածով երեք տեսակի կը բաժնէ վաճառականական ընկերութիւնները,

- 1. Հաւաքական ընկերութիւն
- 2. Գլխադրական »
- 3. Անանուն »

Յօդ. 10. « Հասպէլ գանուն՝ թիճարէթ շիրքէթլէրի իւշ նէվ օլուպ ,

Պիրինճի՝ Գոշէթիթ թապիր օլունուր ումումի պիր իսմ իլէ շէրիքլէրին մէճմուրին շամիլ օլան շիրքէթ աիր .

Իքինճի՝ Գօնանիթ թապիր օլունուր սըփարըշ թարիգի իլէ օլան շիրքէթ աիր .

Իւշիւնճի՝ Անօնիթ թապիր օլունուր հիշ պիր հըսսէսարըն իսմի մէղքիւր օլմագսըզըն էսհամ իւղէրինէ վագը օլան շիրքէթ աիր » :

Հ Ա Ի Ա Ք Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ն

Հաւագական ընկերութիւնն այն է, զոր կը կազմեն երկու կամ աւելի անձինք Ընկերական անունով վաճառականութիւն ընելու համար:

Ընկերական անուն ըսելով պէտք է հասկնալ հաւաքական ընկերութեան անունը, որով պիտի ճանչցուի և գործէ առեւտրական հրապարակին վրայ, և այդ անունով պիտի ստորագրէ իր բոլոր անձնառութիւնները: Ընկերական անունը՝ ընկերութիւնը կազմող անդամոց անուններէն կը բաղկանայ: Եթէ ընկերութիւնը երկու հոգիէ կը բաղկանայ՝ ընկերական անունը կ'ըլլայ օրինակի համար

Մ. ԹԱԳԻՈՐԵԱՆ & Յ. ՄԻՆԱՍԵԱՆ

Իսկ եթէ ընկերք երկուքէ աւելի ըլլան՝ պարտաւորիչ չ'է որ

ընկերութիւնը բոլոր ընկերներուն անունովը գրուցուի. այլ անոնց գլխաւորներէն մէկ երկուքին անունը գրուելով, ծայրը « և Ընկ » բառերը կ'աւելցուին մնացեալ անդամներուն համար, որով կը հասկըցուի թէ՛ այդ երկուքէն զատ ուրիշ ընկերներ ալ կան նոյն ընկերութեան մէջ, զորօրինակ, Գրիգոր Մինասեան, Յակոբ Պալեան, Պօղոս Սիսաքեան և Սիմօն Մարգարեան ընկերութիւն մը կազմելով որոշեր են որ ընկերական անունը ըլլայ

ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍԵԱՆ, ՅԱԿՈՐ ՊԱԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

որ այսպէս կը ճատեալ կը գրուի. իսկ գաղղիերէնի մէջ կը գրուի

KRIKOR MINASSIAN, AGOP BALYAN & Cie

Ընկերներուն պատասխանատուութիւնը. — Հաւաքական ընկերութեան անդամք Անձնապէս և Համեմատաբար պատասխանատու են ընկերութեան բոլոր յանձնառութեանց նկատմամբ, նոյն իսկ եթէ միայն մէկ ընկերը ստորագրէ, բաւական է որ ընկերութեան անունովը ստորագրած ըլլայ. սա կէտը միայն նկատողութեան առնել հարկ է թէ՛ եթէ ընկերութիւնը իր յատուկ Տնօրէնը կամ Վարչներն ունենայ՝ որք, ընկերութեան պայմանագրին համեմատ՝ արտօնեալ կ'ըլլան միանգամայն յանուն ընկերութեան ըստօրագրելու, եւ այդ կէտերը առեւտրական դատարանին կողմէն պաշտօնապէս հաստատուած՝ և շրջաբերականներով առեւտրական հրապարակին ծանուցուած ըլլայ՝ այն ատեն վերոյիշեալ անձերէ զատ ուրիշ որ և է ընկերով տուած ստորագրութիւնը՝ նոյն իսկ եթէ ընկերութեան անունով ալ ըլլայ՝ վաւերական չի համարուիր. օրինակի համար, ըսենք թէ՛ ընկերներէն մէկը 1000 լիւրա փոխ առնելով տուած մուրհակը նոյն իսկ ընկերութեան անունովը ստորագրած ըլլայ՝ այդ գումարը ընկերութենէն չի կրնար պահանջուիլ. միայն թէ՛ Ա. եթէ այդ ընկերը ուրիշ անդամներ ալ իր միւս ընկերներուն գիտութեամբ և հրամանովը ընկերութեան հաշոյն նմանօրինակ փոխառութիւններ ըրած, և այդ գումարները ընկերութեան սնտուկէն վճարուած ըլլալը հաստատուելու ըլլայ. Բ. եթէ փոխատուն կարենայ հաստատել թէ՛ իր տուած գրամը այդ ընկերութեան գործին համար գործածուած է՝ այն ատեն լսելի կ'ըլլայ, և այն ալ այդ ընկերով միջոցաւ ընկերութեան առած գումարին չափ միայն ընկերութիւնը գրամ հաստացանելու պարտաւոր կ'ըլլայ և ո՛չ աւելի. զի կրնայ ըլլալ որ այդ 1000 լիւրան առնող ընկերը անոր 500ը միայն ընկերութեան տուած՝ և միւս 500ը իրեն պահած ըլլայ. այդ պարագային՝ ընկերութիւնը միայն 500 լիւրան կը ճանչնայ. միւս 500ը նոյն ընկերով անձնա-

կանին կը վերաբերի. հետեւաբար եւ անկէ կրնայ պահանջուիլ և ո՛չ ընկերութեանէն: Նոյնպէս այդ ընկերը կրնայ ըլլալ որ ընկերութեան անունովը չ'ըլլալով՝ նոյն իսկ իր անձնական ստորագրութեամբ դրամ փոխ առած ըլլայ, և այդ դրամը ընկերութեան գործառնութեանց համար գործածուած ըլլալը հաստատուի իսկ՝ գարձեալ ընկերութիւնը այդ դրամը վճարելու պատասխանատու և պարտաւոր չ'ըլլար:

Ընկերք Անձնապէս պատասխանատու են ըսինք, այսինքն, հաւաքական ընկերութեան մը պահանջատէրը՝ ո՛չ միայն ընկերներուն ընկերութեան մէջ դրամ գրամագլուխը, այլ նոյն իսկ անոնց հօրենական ժառանգութիւնը կամ ուրիշ անձնական ստացուածքը կամ հարստութիւնն ալ կրնայ գրաւել, եթէ ընկերութիւնը՝ գրամագլուխը բճանալով, իր պարտքերը վճարելու անկարող վիճակի մէջ գտնուի:

Նոյնպէս ընկերք Հաւերաշխաբար պատասխանատու են ըսինք, այսինքն, հաւաքական ընկերութեան մը պահանջատէրը իրաւունք ունի իր ամբողջ առնելիքը պահանջելու իւրաքանչիւր ընկերէ. ընտրութիւնը իր ձեռքն է, ո՛ր ընկերէն ուզէ՝ անկէ կը պահանջէ: Թէեւ երբ մէկ քանի անձինք միմեանց երաշխաւոր չ'ըլլալով որ և է գումար մը վճարելու պարտական ըլլան, գործիւնակ, 3 հոգի 3000 դշ. վճարելու պարտական են (ոչ-համերաշխաբար). այն ատեն անոնցմէ ամէն մէկը իր 1000 դշ. ի բաժինը միայն վճարելու պարտական է և ո՛չ ամբողջ գումարը, մինչդեռ եթէ Հաւերաշխաբար պարտական ստորագրած ըլլային՝ այն ատեն անոնցմէ իւրաքանչիւրն ամբողջ գումարը վճարելու պարտական կ'ըլլայ ըստ օրինի (1): Բայց այս օրէնքը հաւաքական ընկերութեան անդամոց նկատմամբ բացառաբար զանց առնուած է, որպէս զի, վաճառականական գործողութիւնք աւելի զիւրանան և հասարակաց շահը աւելի հաստատ հիման մը վրայ դրուի: Որովհետեւ եթէ այսպէս չ'ըլլար՝ հինգ անդամով ընկերութեանէ մը 500 լիրա առնելիք ունեցող մը՝ իր պահանջքը ձեռք բերելու համար իւրաքանչիւր ընկերը իր բաժնին (100 լիրաի) համար զատ զատ գատի կանչելու պիտի ստիպուէր, ինչ որ իրեն համար ժամանակի կորուստ և մեծ ծախքի գուռ մը պիտի ըլլար. թո՛ղ այն դժուարութիւնները, զորս ամէն մէկ ընկեր պիտի հանէր այդ մարդուն դէմ. մինչդեռ ընկերներուն ամբողջին ալ ընկերութեան բոլոր պարտքերուն համար Հաւերաշխ պարտական ըլլալին այդ դժուարութեանց առջքն առած է. հետեւաբար և հաւաքական ընկերութիւնք իրենց այս կարեւոր հանգամանքին համար, որ մեծ

[1] Տե՛ս այս մասին Վասնականակաւէրոց գլխուն մէջ Համապատասխանալը:

առաւելութիւն մ'է, բնական էր որ առեւտրական հրապարակին վրայ մեծ համարում ունենային:

Ընկերութեան Վարչութիւնը. — Քանի որ հաւաքական ընկերութեան բոլոր անդամք անձնապէս և համերաշխաբար պարտական և պատասխանատու են, հետեւաբար ամենքն ալ ընկերութեան գործերուն վարչութեան կրնան մասնակցիլ: Բայց որովհետեւ բոլոր անդամոց միջամտելը գործնականին մէջ շատ անգամ գործոց բարւոք և կանոնաւոր ընթացքին արգելք կ'ըլլայ, ուստի սովորութիւն եղած է և առեւտրական Օրէնքն ալ ընդունած է որ՝ ընդհանրապէս այս տեսակ ընկերութեանց մէջ Տնօրէն մը կարգուի, կամ ընկերներէն մէկ երկուքին յանձնուի ընկերութեան վարչութիւնը, և անոնց պաշտօնն ու պարտականութիւնները յատկապէս կը գծուին և կը նշանակուին ընկերութեան պայմանագրին մէջ, և այդ կէտերը շրջանակուին ընկերութեան առեւտրական հրապարակին: Առանց այդ ծանուցման՝ որուն մանրամասնութիւնը քիչ մը վերջը պիտի բացատրենք, ընկերութեան անդամներէն մէկուն ըրած բոլոր գործողութիւնք՝ հաւաքաբար միւս ընկերներուն կողմէն եղածի պէս կը նկատուի և հետեւաբար ամենքն ալ պատասխանատու կ'ըլլան առ այդ:

Տնօրէնը կամ Վարիչները ընկերութեան անունով ի՛նչ յանձնառութիւն որ ընեն, ընկերութիւնը պարտաւոր է զայն գործադրել կէտ առ կէտ, նոյն իսկ եթէ ընկերութեան զնասակար ըլլայ: Եթէ Տնօրէնը ընկերութեան անունով փոխ առած գումարը իր անձնական պէտքին ալ գործածած ըլլայ՝ ընկերութիւնը դա՛րձեալ պատասխանատու և վճարելու պարտական է. որովհետեւ այդ դրամը փոխ տուողը Տնօրէնին գիտաւորութիւնը կամ նենգութիւնը քննելու պարտաւոր չ'է, այլ ինքը այդ դրամը ընկերութեան համար առած նկատուած է. հետեւաբար և այդ երեսէն յառաջ գալիք զնասն ալ, յայտնի է որ, ընկերութեան կը վերաբերի:

Սա կէտը եւս պէտք է գիտնալ թէ՛ Տնօրէնն իր անձնական պէտքին համար, զորօրինակ, տանը համար գնած կարասիներուն կամ իրեն համար շինել տուած զգեստներուն հաշուէն՝ դերձակին ունեցած պարտքին դէմ եթէ ընկերութեան անունով մուրհակ տրուած ըլլայ՝ դերձակը Տնօրէնէն ունեցած առնելիքը ընկերութեան պահանջելու իրաւունք չ'ունենար. որովհետեւ այդ կարասիքը կամ զգեստները ընկերութեան ծախսած չ'են. այլ Տնօրէնին, հետեւաբար և իր առնելիքը անոր վրայ է. ընկերութեան հետ առեւտուր ըրած չ'ըլլալով՝ յանուն ընկերութեան ստորագ-

[1] Տե՛ս թ. 25 երեսի կիւպկեանի օրաբերականը, ուր հուստական քնկերութեան բոլոր անդամոց կողմէն որոշուած եւ քննուած են քնկերութեան վաւիչ եւ քնկերութեան անունով ստորագրելու արձեանքը:

բուած մուրհակ առնելը՝ Տնօրէնին հետ համաձայնութեամբ անոր նենգութեանը ինքն ալ գիտակից և մեղսակից ըլլալով՝ և իրեն ալ խարդախ ըլլալը հասկցուելով, այդ դրամին ընկերութեան սընտուկէն վճարուելուն համար վճիռ չի տրուիր: Ըսել է թէ՛ այս տեսակ ընկերութեան մը մէջ ընկերք ո՞ր աստիճան հոգածու ըլլալու են իրենց Տնօրէնին ընտրութեան մասին:

Ընկերութեան պայմանագիրը այն դաշնագիրն է, որ ընկերներուն միջև եղած պայմանները կը պարունակէ: Ընկերութեան պայմանագիրը կրնայ պարունակել ընկերներուն հաճելի թուած բոլոր պայմանները, բաւական է որ անոնք օրէնքին հակառակ չ'ըլլան:

Պայմանագրին խնթագրութիւնը. — Ընկերութեան պայմանագիրը պէտք է պարունակէ հետեւեալ կէտերը.

1. Ընկերութեան անունը
2. » նպատակը, այսինքն, ի՞նչ տեսակ գործ ընելը
3. » կազմութեան և լուծման թուականները
4. » գործատեղին
5. » ամբողջ գրամագլուխը՝ և իւրաքանչիւր ընկերի առանձինն դնելիք գրամագլուխը
6. » անդամոց անունները
7. » Տնօրէնին կամ վարիչներուն անունները, որք յանուն ընկերութեան պիտի ստորագրեն
8. » անդամոց առնելիք տարեկան գումարը (իբր կերման)
9. » անդամոց իրենց գրամագլխէն զատ՝ ընկերութեան փոխ տալիք գումարներուն համար վճարելի տոկոսին սակը
10. Ետհուն ի՞նչ համեմատութեամբ բաժնուիլը
11. Հաշուեյարդարութիւնը:

Պայմանագրին վաւերացումը եւ Հրատարակութիւնը. — Ընկերութեան կազմութենէն ետքը՝ պայմանագիրը պէտք է ներկայել առեւտրական դատարանին նօտարութեան դիւանը (մուգավէլաթ մուհարրիլիկի). ուր բնագրոց սենեկին մասնաւոր տուժմարին մէջ կ'ընդօրինակուի և կը վաւերացուի, և սպա առեւտրական դատարանը՝ իր պաշտօնական ծանուցումները հրատարակող մէկ քանի լեզուով լրագրաց մէջ պայմանագրին համառօտ մէկ օրինակը հրատարակել կը տայ (1):

[1] Ինչպէս կ'երեւայ յաջորդ օրինակին վրայ, որ Կ. Պօլսոյ քաղաքացի մօտեցող շոգեմուկներուն մաքանք բեռնելու եւ մաքանք պարպելու համար հաւաքական գաղղիական ընկերութեան մը կազմութիւնը եւ ուրիշ մանրամասնութիւնը կը ծանուցանէ, եւ որուն մէկ օրինակը պատճառաւորապէս հրատարակուեցաւ 1895 թ. օգոստոսի 29 ի Levant Herald լրագրին մէջ:

Եթէ ընկերութիւնը մէկ քանի քաղաքներու մէջ մասնաճիւղեր ունենայ՝ պայմանագրին վաւերացման և հրատարակութեան վերջիչեալ օրինական ձեւակերպութիւնները նոյն քաղաքներուն առեւտրական դատարանաց և նօտարութեանց կողմէն ևս պէտք է որ ի գործ դրուին:

Այս գործողութենէն ետքը՝ ընկերութիւնն ալ իր կողմէն աըպադրուած շրջաբերականներով իր կազմութիւնը կը ծանուցանէ վաճառականներուն:

AVIS

D'un acte sous seings privés en date du vingt neuf Août 1895 déposé le même jour à la Chancellerie du Consulat de France à Constantinople, il appert qu'une Société en nom collectif au capital de 100,000 fr. ayant pour but d'entreprendre et effectuer toutes opérations de débarquement ou d'embarquement des marchandises chargées ou à charger à bord des vapeurs ou navires s'amarrant sur les quais du port de Constantinople, a été formée entre Mess. Charles Doquin, Aimé Charrier et Eugène Arland, tous trois domiciliés en cette ville, sous la raison sociale

DOQUIN & Cie.

dont la signature sociale appartient à M. Charles Doquin seul ou à M. M. Charrier et Arland par procuration et conjointement. Le siège de la Société est fixé à Constantinople, sur les quais, et sa durée a cinq années à dater du 5 Février 1895 pour prendre fin le 4 Février 1900. Constantinople, le 29 Août 1895

Գ Լ Ե Ա Դ Բ Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Գլխադրական կ'ըսուի այն ընկերութեան, որուն անդամոց մէկ մասը հաւաքական ընկերութեան անդամներուն պէս իրարու պատասխանատու և համերաշխ կ'ըլլան, և մէկ մասը՝ առանց ընկերութեան պատասխանատու ըլլալու, միայն որոշեալ գրամագլուխ մը կը դնեն և այդ գրամագլխէն աւելի որ և է պատասխանատուութիւն չ'են ունենար. այս վերջիններուն Գլխադրող, հետեւաբար և այս տեսակ ընկերութեանց ալ Գլխադրական Ընկերութիւն կ'ըսուի:

Ընկերական անուն. — Գլխադրական ընկերութեան անունը հաւաքականին պէս բոլոր անդամոց անունովը չի յիշատակուիր. այլ միայն իրարու պատասխանատու և համերաշխ ընկերներուն անունովը կը ճանչցուի և կը գործէ առեւտրական հրապարակին վրայ, և այդ անունով կ'ստորագրուին իր բոլոր յանձնառութիւնները. գլխադրող ընկերներուն անունը, ըստ օրինի, եր-

բէք չի յիշուիր գլխադրական ընկերութեան անունին մէջ, նոյն խի եթէ ընկերութիւնը երկու անգամէ բազկացած ըլլայ: Դիցուք թէ հինգ հոգի ընկերութիւն մը կազմելով՝ անոնցմէ մէկը միայն պատասխանատու և համերաշխ ընկեր է, միւս չորսը Գըլ-խադրող են. այդ պարագային՝ ընկերութեան Տնօրէնը համերաշխ պատասխանատու անդամը կ'ըլլայ և ընկերութեան անունն ալ այդ անձին անունովը կը յորջորջուի, միայն անունին քով եւ Ընկ. բառերը կ'աւելցուին. գորօրինակ, կ'ըսուի

Ս. ՍԻՄՕՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Գլխադրող ընկերներն ո՛րչափ ալ հարուստ եւ պատուաւոր ըլլան՝ քանի որ անուննին ընկերութեան անուն մէջ չ'պիտի յիշատակուի, հետեւաբար եւ ընկերութեան յանձնառութեանց համար երբէք անձնապէս պատասխանատու չ'են ըլլար: Հակառակ սոյն օրինական արամադրութեան՝ երբ գլխադրող անդամի մը անունը ընկերութեան անուն մէջ գտնուի, այդ գլխադրող ընկերն իրեն յատուկ վերոյիշեալ առանձնաշնորհումը (այսինքն, իր գրամագլխէն աւելի վնաս չի ճանչնալը) կորսնցնելով, ընկերութեան բոլոր յանձնառութեանց գործադրութեանը պատասխանատու եւ պարտաւոր կ'ըլլայ՝ նոյն խի եթէ ընկերութեան կազմութեան ժամանակ իրեն Գլխադրող ընկեր ըլլալը, եւ հետեւաբար դրած գրամագլխէն աւելի վնաս չի ճանչնալը ծանուցած ալ ըլլայ՝ դա՛րձեալ այդ պատասխանատուութենէն չի կրնար ազատիլ: Որովհետեւ հարուստ եւ պատուաւոր ճանչցուած գլխադրող անդամի մը՝ իր անունը ընկերութեան անուն մէջ դրուելու մասին ըրած թոյլտուութիւնը երկու պատճառի կրնայ վերադրուիլ. կա՛մ գիտնալով ընկերութեան աւելի յարգ եւ վարկ մը տալ ուղեով՝ ժողովուրդը խաբել փորձած է, կա՛մ առանց այդ նպատակին՝ միայն իր սոցիալութեան հետեւանքով ըրած է: Եթէ առջի պատճառին համար ըրած ըլլայ՝ գլխադրող ընկերը յատուկ օրինական առանձնաշնորհումէն զրկուիլը իրեն պատիժ մ'է. եթէ երկրորդ պատճառին համար ըրած ըլլայ՝ քանի որ իր սոցիալութեամբ եղած է, դարձեալ իբր պատիժ իր սոցիալութեան, անոր հետեւանքն ալ ինք պէտք է տուժէ:

Ընկերներուն պատասխանատուութիւնը. — Ինչպէս քիչ առաջ ըսինք, գլխադրական ընկերութեան անդամք երկու տեսակ են. մին՝ Հաւերաշխ պատասխանատու և միւսը՝ միայն Գրամագլխի skv կամ Գլխադրող: Արդ՝ համերաշխ պատասխանատու անդամք ընկերութեան բոլոր յանձնառութեանց նկատմամբ անձնապէս եւ համերաշխաբար պատասխանատու են ա՛յնպէս՝ ինչպէս բացառութեցինք հաւաքական ընկերութեան վրայ խօսած ատեննիր. իսկ

գլխադրող անդամք իրենց գրամագլխին շափ ըլլալիք վնասին համար միայն պատասխանատու են. աւելին համար ո՛չ: Ասոր համար է որ գլխադրող ընկերը թէ՛ անձնապէս և թէ՛ փոխանորդաբար ընկերութեան գործոց մէջ չի գործածուիր: Ըստ օրինի արգիլեալ է իրեն ընկերութեան ապրանքը ծախել, ընկերութեան հաշույն ապրանք գնել, մէկէ մը փոխառութիւն ընել, վերջապէս ընկերութեան վերաբերեալ որ եւ է գործ ընել: Վասն զի գլխադրողին՝ իր գրամագլխէն աւելի վնասի չի մասնակցելու առանձնաշնորհումը՝ ընկերութեան գործերուն չի միջամտելու համար եղած է: Հակառակ այս օրինական արգելքին՝ երբ ընկերութեան մէջ գործօն դեր մ'ունենայ, և ընկերութեան վնաս մը ըլլայ, այդ վնասը, ըստ օրինի, ընկերութեան պիտի վերաբերէր: Ահա ա՛յս պատճառին համար Օրէնքը որոշած է որ գլխադրող անդամը ընկերութեան գործերուն մէջ չի գործածուի: Միայն թէ՛ գլխադրող ընկերն իբր բացէն մէկը կրնայ ընկերութեան հետ գործ ընել. գորօրինակ, ընկերութեան փոխառութիւն, ընկերութենէն փոխառութիւն ընել, ընկերութենէն ապրանք գնել և անոր ապրանք ծախել, եւ այլն:

Գլխադրող անդամն ազատ է ընկերութեան տետրակները քննել և միւս անդամներուն հետ ընկերութեան գործոց վրայ դադափար և տեղեկութիւն առնել. բայց ասոնք ընելով ընկերութեան գործերուն միջամտած չի համարուիր:

Ընկերութեան Վարչութիւնը. — Գլխադրական ընկերութեան մէջ պատասխանատուութիւնը՝ միայն իրարու համերաշխ անդամոց վերաբերելուն, և գլխադրող ընկերը և ո՛չ մէկ կերպով պատասխանատուութեան տակ ըլլալուն համար, բնական էր որ ընկերութեան վարչութիւնն ալ յանձնուէր այդ միմեանց համերաշխ անդամներուն, որոնցմէ մէկը, ըստ օրինի, ընկերութեան Տնօրէնը կը կարգուի և անոր պաշտօնն ու պարտականութիւնը յատկապէս կ'որոշուին եւ կը գծուին ընկերութեան պայմանագրին մէջ:

Հաւաքական Ընկերութեան վրայ խօսած ատեն ինչ որ ըսինք ընկերութեան Պայմանագրին, Սկզբնական, Վաւերացնան և հրատարակութեան մասին, նոյնը պէտք է հասկնալ նաեւ Գլխադրական Ընկերութեան նկատմամբ. միայն իբր յատկաւորապէս տեղեկութիւն պէտք է ըսենք թէ՛ երկու տեսակ ընկերութեան ալ պայմանագիրը թէ՛ առանձինն ընկերներուն միջեւ, և թէ՛ առեւտրական դատարանին միջոցաւ կրնայ պատրաստուիլ: Եթէ պայմանագիրը ընկերներուն միջեւ պատրաստուած է՝ ընկերներուն թուոյն շափ օրինակով պէտք է գրել գայն և իւրաքանչիւր օրինակին մէջ յատկապէս նշանակել պայմանագրին քանի՛ օրինակ շինուած ըլլալը. եւ ամէն մէկ օրինակ բոլոր ընկերներուն կողմէն

ստորագրուիլ հարկ է: Բայց եթէ առևտրական դատարանին միջոցաւ պատրաստուած և անոր տեսարակներուն մէջ արձանագրութեւրով վաւերացած է՝ (ինչպէս որ բացատրեցինք հաւաքական ընկերութեան վրայ խօսած առեւնիս) այն առեւն ընկերներուն թըւոյն չափ օրինակ շինելու հարկ չի մնար. այլ բաւական է մէկ օրինակը, զոր պէտք է որ բոլոր ընկերները ստորագրեն, եթէ ընկերութիւնը հաւաքական է. իսկ եթէ գլխադրական՝ միայն համերաշխ անդամները և Տնօրէնը պէտք է ստորագրեն, գլխադրող անդամներուն ստորագրութեան հարկ չ'կայ:

Գլխադրական ընկերութեան գլխադրող անդամոց դրամագլուխը բաժիններու կրնայ վերածուիլ եւ հրապարակ հանուելով՝ ուզողը այդ բաժիններէն գնելով՝ նոյն ընկերութեան անդամ եղած կ'ըլլա: Բայց գլխադրական ընկերութեան օրինական միւս բոլոր արամագրութիւնք անեղծ կը մնան և կը գործադրուին:

Թէ ընկերութիւն մը ի՞նչպէս բաժին կը հանէ և բաժնետէրք ընկերութեան հանդէպ ի՞նչ պարտքեր և իրաւունքներ ունին, զանոնք պիտի բացատրենք այժմ Անանուրն ընկերութեան վրայ խօսելու առթիւ: Ահաւասիկ Գլխադրական ընկերութեան մը կազմութիւնը ծանուցանող շրջաբերական մը, որ պատկանեալ կառավարութեանէն վաւերացած է:

Constantinople, le 24 Mai 1888

Me.

Nous avons l'honneur de porter à votre connaissance que, suivant contrat déposé à la Chancellerie du Consulat de France de notre ville, en date du 14 Mai 1888, nous venons de fonder sur cette place, sous les auspices et avec le concours de quelques amis, une Société en commandite sous la raison sociale

RALLI & Cie.

Notre maison s'occupera spécialement des affaires de courtage, de banque et de commission.

Nous osons esperer que vous reporterez sur elle la confiance que vous nous avez individuellement témoignée jusqu'à ce jour.

En vous priant de prendre note de notre signature sociale, nous vous présentons, M... l'assurance de notre parfait dévouement.

C. D. RALLI
JEAN NOMICCO

N. Sr. C. D. Ralli signera RALLI & Cie.
N. Sr. Jean Nomicco » RALLI & Cie.

Ա Ն Ա Ն Ո Ւ Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Որ և է մեծ ձեռնարկութիւն մը, օրինակի համար, կամուրջ մը, ջրանցք մը, հոյակապ պանդոկ մը շինել, հանք մը բանեցնել և շահագործել, շոգենաւային ընկերութիւն մը կազմել, և ուրիշ նմանօրինակ մեծ ձեռնարկներ, զորս ի գլուխ հանելու համար մեծամեծ գումարներ մէջտեղ բերել հարկ է, գումարներ, որոնց շատ անգամ անհատական հարստութիւնք չ'են բաւեր, կամ եթէ բաւեն իսկ՝ ամեն մարդ չ'ուզեր իր անձնական հարստութիւնը վտանգի դնել, այս պարագային՝ շատ մը մարդիկ իրենց պղտի դրամագլուխները մէկտեղ բերելով՝ որ և է մեծ գործի մը կը ձեռնարկեն աւելի համարձակութեամբ, քան ինչ որ չ'պիտի կրնային համարձակիլ ընել իւրաքանչիւրը զատ զատ իրենց սահմանաւոր դրամագլուխը վտանգելով մեծ ձեռնարկի մը մէջ: Զորօրինակ, երկաթուղիի մը շինութեան համար 1,000,000 լիւրա դրամագլխի պէտք կայ. այդ գործը յղացողք ընկերութեան դրամագլուխը մանր մասերու կը բաժնեն, օրինակի համար, ամէն մէկը 10 լիւրանոց 100,000 բաժինի կը վերածեն և այդ բաժինները հրապարակ հանելով և ուզողին ծախելով՝ ընկերութեան դրամագլուխը կը զոյանայ և այդ բաժնեթղթերը գնողներուն միջեւ ընկերութիւն մը կը կազմուի բոլոր է, և այս կերպով երկաթուղին շինելու և շահագործելու կը ձեռնարկուի և եղած շահը ընկերներուն միջեւ կը բաժնուի:

Ահա այսպէս դրամագլուխը բաժիններու վերածուելով՝ ամենէն մեծ ձեռնարկները դիւրաւ ի գլուխ կ'ելնեն ի մեծ դիւրութիւն և յատաճադիմութիւն վաճառականութեան և արուեստից: Վերոյիշեալ կերպով կազմուած ընկերութեան կ'ըսուի Անանուրն ընկերութիւն:

Ընկերակաւ անուրն. — Անանուրն ընկերութեան անդամոց անունը, որոնց Բամենեօր կ'ըսուի և որոնց թիւը գործին և ընկերութեան հանած բաժնեթղթոց համեմատ շատ ստուար կ'ըլլայ, չ'յիշատակուիլը ընկերութեան անունին մէջ. միայն իր ձեռնարկելիք գործին անունովը կը գրուցուի, կը ձանչցուի և կը գործէ. այս կարգէն են, Բումէլիի, Անաստուի երկաթուղիի, Կորնթոսի ջրբանցքին, Տէրքոսի ջրին, Ծխախոտի Բէժիի, Օսմ. ապահովագրական, Շիրքէթը խայրիէի, Լոյտի, Մէսսաթըրիի ընկերութիւնք. նոյնպէս դրամական գործերու համար կազմուած դրամաստունք, Պանք Օթոմանը, Գուէտի Լիօնէն, Սօսիէթէ Օթոմանը, եւլն. ասոնք ամենքն ալ բաժիններու վրայ կազմուած Անանուրն ընկերութիւններ են: Անանուրն կ'ըսուի այս տեսակ ընկերութեանց, որովհետեւ և ո՛չ մէկ ընկերին անունովը կը յորջորջուի:

Անանուն ընկերութեան դրամագրուիւր. — Անանուն ընկերութեան դրամագրուիւր, ինչպէս ըսինք, բաժնեթղթերէ կը բաղկանայ և բաժնեթղթերն ալ կրնան մանր մասերու բաժնուիլ: Բաժնեթղթերը երկու տեսակ կ'ըլլան Բերողին վճարելի և Անուանական: Բերողին վճարելի բաժնեթուղթը դրամի պէս ձեռքէ ձեռք կ'անցնի և ո՛րուն ձեռքը որ գտնուի՝ նա կ'ըլլայ տէր նոյն բաժնեթղթին, զոր ծախել ուղած ատեն, բաժնեթուղթը գնողին յանձնելով վաճառման գործողութիւնը կատարուած կ'ըլլայ: Իսկ Անուանական բաժնեթուղթը ծախելու համար, տիրոջը անունը՝ ընկերութեան այդ գործին յատուկ տետրակին մէջ արձանագրուած ըլլալով՝ ծախողին ստորագրեալ մէկ յայտարարութիւնը դարձեալ նոյն տետրին մէջ գրուելով, անոր տեղ գնողին անունը կը նշանակուի: Ծիրքէթը խայրիէի բաժինք Անուանական ըլլալով անոնց գնման և վաճառման գործողութիւնք իրենց յատուկ վերոյիշեալ ձեւակերպութիւնն ունին: Այս կանոնական ձեւակերպութիւնը ի՛նչ կերպով ալ կատարուի, ամէն պարագայի մէջ՝ բաժնեթուղթը ծախողին պարտքն և իրաւունքը գնողին կը փոխանցուի, օրինակի համար, և թէ ընկերութիւնը շահի՝ շահը գնողին կը վերաբերի. իսկ բաժնեթղթոց վրայ եթէ ընկերութեան կրկին դրամ վճարել հարկ ըլլայ՝ դրամը տալը դարձեալ նոյն գնողին կը վերաբերի: Որովհետեւ կրնայ ըլլալ որ բաժնեթղթի մը գնոյն վճարումը երկու կամ աւելի մասնավճարի բաժնուած ըլլայ, մէկ մասը՝ ընկերութեան կազմութեան ատեն կանխիկ կը վճարուի և միւս մասերը՝ ի հարկին, ընկերութիւնը հրաւէր կ'ընէ բաժնետէրններուն որ վճարեն, այսինքն, ընկերութիւնը 20 լիւրանոց բաժիններ կը հանէ և առջի բերան 10 լիւրան միայն կ'առնէ, վերջը հարկ եղած ատեն միւս 10 լիւրան եւս կը պահանջէ. հետեւաբար բաժնեթուղթը գնողն այդ վերջին մասն ալ վճարելու պարտաւոր է:

Բաժնեկրեւորն պատասխանատուութիւնը. — Անանուն ընկերութեան անդամք՝ Հաւաքական և Դիւխարական ընկերութեան անդամներուն ունեցածէն բոլորովին սարքեր պատասխանատուութիւն ունին: Անանուն ընկերութեան անդամք՝ իրենց ձեռքը գրտնուած բաժնեթղթերուն արժէքէն աւելի փնաս հատուցանելու պարտականութիւն չ'ունին ընկերութեան հանդէպ, օրինակի համար եթէ անանուն ընկերութեան մը 10 լիւրանոց մէկ բաժնեթուղթը գնած ըլլաս և ընկերութիւնը սնանկանայ՝ միայն տուած այդ 10 լիւրագ կը սուժես, իրրեւ ընկեր ուրիշ որ և է փնաս տալու պարտաւոր չ'ես ըլլար ըսա օրինի. ըսել է թէ՛ այս տեսակ ընկերութեան մը անդամներուն անձնական հարստութեան և հըրապարակի վրայ ունեցած վարկին չ'է որ բաժնետէրք վստահութիւն կ'ընեն, այլ այդ ընկերութեան դրամագրուիւր կարեւորու-

թիւնը և ձեռնարկած գործին ո՛ր աստիճան հաստատ և շահաւոր ըլլալը միայն նկատողութեան կ'առնուի:

Ընկերութեան վարչութիւնը. — Անանուն ընկերութեան վարչութիւնը՝ առժամեայ փոխանորդութեամբ անուանումին և հըրաժարեցումին ընկերներուն կամքովը՝ բաժնետէր կամ ոչ-բաժնետէր, թողալով կամ անթողալ, որոշեալ թուով մէկ քանի անձերու կը յանձնուի, որոնք ընկերութեան յանձնատուութեանց նըկատմամբ անձնապէս պատասխանատու չ'են ըլլար. որովհետեւ անանուն ընկերութիւնը միւս երկու ընկերութեանց պէս ընկերներուն անձնականին վրայ հիմնուած չ'է, այլ դրամագրուի ընկերութիւն մ'է, այնպէս որ, եթէ անանուն ընկերութեան անդամներէն մէկը մեռնի կամ սնանկանայ՝ ընկերութիւնը չի լուծուիր: Ընկերութեան գործերը վարելու համար յիշեալ անձանց միութեան կ'ըսուի Վարչական կամ Գործադիր ժողով, որուն անդամոց թիւը մինչեւ 10, աւելի կամ պակաս ալ կ'ըլլայ, որ կը նշանակուի ընկերութեան կանոնագրին մէջ: Վարչական ժողովը իր մէջէն կամ զուրսէն մէկը կ'ընտրէ իբր Տնօրէն և երբեմն Բ. Տընօրէն մը, որուն պատասխանատուութիւնը՝ միայն բաժնետէրններուն հաճութեամբ որոշուած և ներքին կանոնագրին մէջ գծուած պարտոց կատարման մէջ կը կայանայ, իսկ ընկերութեան համար իր յանձնատուութեանց գործադրութեան մասին ինքը համերաշխ պարտական չ'ըլլար. բայց երբ անանկ գործ մ'ըրած ըլլայ, որուն ընկերութեան կանոնագրով արօժենեալ չ'ըլլայ և կամ ընկերութեան գործողութիւններէն բոլորովին դուրս ըլլայ՝ այն ատեն բաժնետէրք իրաւունք կ'ունենան այդ գործողութիւնը չի ճանշնայ և անոր գործադրութիւնը Տնօրէնին անձին կը վերաբերի: Ահա ո՛սոր համար է որ, Տնօրէնը անցաւոր ըլլայ կամ ոչ՝ բաժնետէրք կատարեալ ազատութիւն ունին զինքը պաշտօնանկ ընելու և իրեն տեղ ուրիշ մը կարգելու:

Մէկը Վարչ. ժողովոյ անդամակցելու համար պէտք է որ ընկերութեան պայմանագրին մէջ որոշուած թուով բաժնեթուղթ ունենայ, որք ընկերութեան սնտուկը կը պահուին իբր երաշխաւորութիւն:

Ընդհանուր ժողով. — Վարչական ժողովը ընկերութեան բաժնետէրներուն կողմէն կ'ընտրուի. բայց որովհետեւ աչս տեսակ ընկերութիւնները շատ բաժնեթղթեր կը հանեն, որք թէ՛ ընկերութեան գտնուած հրապարակին և թէ՛ օտար հրապարակներու վըրայ կը ծախուին, ասոր համար ընկերութեան բոլոր բաժնետէրք, որք բնականաբար թուով շատ կ'ըլլան, ի մի ժողովի և անոնց կարծիքը առնել գործնականին մէջ դժուար ըլլալուն՝ բաժնետէրներուն ամբողջութիւնը ներկայացնող ժողով մը կ'ըլլայ, որուն կ'ըս-

ուի Ընդհանուր ժողով, որուն անդամակցելու համար ընկերութեան ներքին կանոնագրին մէջ առաջուց կ'որոշուի թէ ո՞րքան թուով բաժին ունենալ հարկ է: Ահա այս կերպով կազմուած Ընդհ. ժողովն է որ կ'անուանէ ընկերութեան Գործ. կամ Վարչ. ժողովոյ անդամները, և կ'որոշէ անոնց պաշտօնն ու պարտականութիւնը:

Վարչական ժողովոյ գործառնութեանց համարը լսելու և ընկերութեան շահը կամ փաստը հասկնալու համար, տարին անգամ մը և, ի հարկին, աւելի, Ընդհ. ժողով կը գումարի, ուր կը կարգացուի Վարչ. ժողովոյ ամիսփ մէկ տեղեկագիրը, ուր յատկապէս կը բացատրուին ընկերութեան ըրած շահը կամ փաստը գանազան հաշիւներէ, մէկ խօսքով՝ ընկերութեան հաշուեկշիւը, ուր կ'երեւայ ընկերութեան Գոյնն ու Պարտքը, և եթէ շահ հանած է՝ իւրաքանչիւր բաժինի տրուելիք շահարածինը կ'որոշուի: Նոյնպէս Ընդհ. ժողովոյ մէջ կ'որոշուին ընկերութեան գործառնութեանց նկատմամբ զանազան առաջարկներ, որք կ'ընդունուին կամ կը մերժուին ներկայից ձայնին մեծամասնութեամբը:

Ընդհ. ժողովոյ գումարումէն 10-15 օր առաջ՝ մասնաւոր նամակով կամ լրագրաց մէջ ազգաբարութեամբ կը ծանուցուի ի գիտութիւն բաժնետէրներուն Ընդհ. ժողովոյ գումարման տեղը, օրը և ժամը, ընկերութեան այսինչ տարւոյ հաշիւները նայելու և օրակարգին խնդրոց վրայ խորհրդակցելու համար, ծանուցանելով միեւնոյն ատեն թէ՛ բաժնետէրք ազատ են ուղած ատեննին ընկերութեան կեդրոնատեղին և ուրիշ քաղաքներու մասնաճիւղերէն ստանալ տպուած տեղեկագիրը, յորում կը դանուի նաև ընկերութեան գոցուած հաշիւներուն ամփոփումը: Բաժնետէրք զայն առաջուց ստանալով կը սերտեն, կ'ուսումնասիրեն և Ընդհ. ժողովոյ մէջ իրենց դիտողութիւնները կ'ընեն, եթէ ունին:

Պահեստի գոռւմար. — Թէեւ ընկերութեան հանած տարեկան շահը բաժնետէրներուն միջեւ բաժնել հարկ է, բայց պատահական ծախուց և անակնկալ փոստի դէմ ընկերութեան դիրքը հաստատ բռնելու համար, սովորութիւն եղած է որ այս տեսակ ընկերութեանց մէջ ամէն տարուան շահէն, Ընդհ. ժողովոյ հաւանութեամբ, գումար մը գուրս կը ձգուի և այդ գումարը ընկերութեան տեսարակներուն մէջ Պահեստի գոռւմար անունով կը նշանակուի: Պահեստի գումարը ընկերութեան ըրած գուա շահուն առնուազն ¹/₂₀ մասը կ'առնուի, իսկ երբ պահեստը ընկերութեան գըրամագլխին ¹/₁₀ ին հաւասարի՝ այն ատեն պահեստ հանելը պարտաւորիչ չ'ըլլար: Ասոր հետ մէկտեղ այս պարագաները Ընդհ. ժողովին կամքէն կախեալ է: Այն ընկերութիւնը, որ կրթը շահ մը տալէ ետքը պահեստի մեծ գումար կ'ունենայ, բնական է որ աւելի յարգի ըլլայ հրապարակին վրայ:

Քննիչներ. — Ամէն տարի Ընդհ. ժողովը կ'ընտրէ իր մէջէն երկու կամ աւելի անձեր իբր քննիչ, պաշտօն տալով անոնց որ ընկերութեան տեսարակները աչքէ անցնեն, տեսնելու համար թէ՛ ամէն բան կանոնաւոր արձանագրուած և Ընդհ. ժողով բերուած հաշուեկշիւը տեսարակներուն հետ համաձայն են. քննել և ստուգել միանգամայն ընկերութեան սնտուկին վիճակը, թղթապանակը գտնուած գանձելի թղթոց և ուրիշ արժէթղթոց քանակութիւնը, և յն. որք կ'երեւան հաշուեկշիւին մէջ: Այս գործերը կատարելով, քննիչներն ալ իրենց ստորագրեալ տեղեկագիրը կը տան յատենի Ընդհ. ժողովոյ:

Պայմանագիրը. — Ինչպէս որ տեսանք՝ անանուն ընկերութեան գրամագլուխը մանր մասերու բաժնուելով ժողովրդին դիւրամտաշիւ կ'ըլլայ. անոր համար հանրութեան շահը պաշտպանելու նպատակաւ կառավարութիւնք այդ տեսակ ընկերութիւնները իրենց հսկողութեան տակ կ'առնեն, այսինքն, անանուն ընկերութիւն մը կազմուած ատեն ընկերութեան պայմանագիրը և ներքին կանոնագիրը, որոնցմով պիտի գործէ ընկերութիւնը, կառավարութեան կը ներկայացուի, զորս քննելով կը տեսնէ թէ հանրութեան շահուն փաստակար բան մը կա՞յ թէ ոչ. այն ատեն բարձրագոյն հրամանի, այսինքն, Իրաճէի կ'երթայ, զոր առանց ստանալու անանուն ընկերութիւն չի կրնար կազմուիլ: Այս տեսակ անանուն ընկերութիւնները, ինչպէս առաջ ըսինք, մեծ ձեռնարկներու համար ըլլալով՝ այս կարգի գործերու ալ ընդհանրապէս մենաշնորհ կ'առնուի: այդ պարագային՝ կառավարութիւններն ալ այդ ընկերութեանց գործերուն աւելի մօտէն հսկելու համար իւրենց կողմէն որոշեալ թուով Գումարներ կը յատկացնեն, որովհետեւ եթէ ընկերութիւնը՝ իր կանոնագրին հակառակ գործելով բաժնետէրներուն փոստ հասցնելու վիճակին մէջ ըլլայ՝ կառավարութիւնը իրաւունք ունի, սուած արտօնութիւնը ետ առնելով, ընկերութիւնը լուծեալ հռչակելու: Գարձեալ եթէ մէկ քանի անձինք, առանց կառավարութեան դիմելու և կայտերական իրատեղով վաւերացնել տալու, անանուն ընկերութիւն մը կազմուած համար մէջընդմիջ պայմանագիր կնքեն՝ ժողովրդին կողմէն այդ ընկերութիւնը իբր անանուն չի ձանչուելով՝ հաւաքական ընկերութիւն կը համարուի, այսինքն, Տնօրէնը և անդամք ընկերութեան պարտուց համեմալս պարտական ըլլալով՝ յանձնառութեանց կատարմանը համար ալ պատասխանատու և պարտաւոր կ'ըլլան:

Անանուն ընկերութիւններն՝ իրենց ձեռնարկած գործին մեծութեան համեմատ կ'ունենան իրենց պայմանագիրն ու ներքին կանոնագիրը, որք զանազան մասերու կը բաժնուին յօդուած առ յօդուած: Անանուն ընկերութեան պայմանագրին մէջ կը գրուին

ընկերութեան անունը, նպատակը, տեւողութիւնը, գործատեղին, դրամագլուխը, բաժիններուն որքանութիւնը և անոնց արժէքը, բաժնեկէտից բերողին կամ անուանական ըլլալը, քա՞նի վճարումով վճարելի ըլլալը, վճարումին ուշացողներուն վճարելիք տուութիւնը, վարչ. ժողովոյ կազմութիւնը, անոր անդամոց թիւը, պաշտօնավարութեան պայմանաժամը, անոնց պաշտօնը և պարտքը, եթէ թոշակաւոր են՝ ընկերութեան շահէն առնելիք բաժիննին, թէ քա՞նի բաժին ունենալ հարկ է այդ ժողովին անդամակցելու համար, Տնօրէնին անուանման եղանակը և անոր պաշտօնը, Ընդհ. ժողովոյ կազմութիւնը, թէ քա՞նի բաժին ունենալ հարկ է Ընդհ. ժողովոյ անդամակցելու և ձայն ունենալու համար, ժողովին գումարման ժամանակները, անոր պաշտօնը և պարտաւորութիւնները, ընկերութեան հաշուեկշիռը պատրաստելու առաջնորդը և զայն, ինչպէս նաև ընկերութեան բոլոր հաշիւները աչքէ անցնելու պաշտօն ունեցող քննիչներուն անուանումը, շահը բաժնելու ժամանակը, ո՞րչափ պահեստ հանուիլը, ընկերութեան լուծումը, հաշուեյարդարութիւնը և ուրիշ մանրամասնութիւններ:

Անանուն ընկերութեան կազմութիւնը հաստատող կայս. իրաւէն և պայմանագրին մէկ պատճէնը առեւտրական պաշտօնատան պատին վրայ կը փակցուի և ստեն մը հոն կը մնայ ի գիտութիւն ժողովրդին:

Իրոշմարոյք պայմանագրոց. — Բոլոր ընկերութեանց պայմանագիրք պէտք է որ դրոշմաւոր ըլլան, ամէն մէկ օրինակին 10ական դր. ի դրոշմաթուղթ փակցնելով:

ԱՌԺԱՄԵԱՅ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Յիշուած երեք ընկերութիւններէն զատ՝ առեւտրական Օրինագիրքը 36^{րդ} յօդուածով վաճառականական ընկերութիւն կը ճանչնայ նաև Առժամեայ բաժանորդակալ ըսուած ընկերակցութիւնը, որ, առանց ընկերական անուն մ'ունենալու, երկու կամ աւելի անձերու միջև կը կազմուի պատահարար, մէկ կամ մէկ քանի որոշեալ առեւտրական գործի համար: Առեւտրական Օրէնքը այս տեսակ ընկերակցութեամբ գործողութիւնները բուն իսկ ընկերութիւն ըսուած և մեր սորված երեք տեսակ ընկերութեանց կարգը անոր համար դասած է՛ որ՝ այս ընկերութիւնը կը տարբերի միւսներէն իր գոյութեամբը:

Միւս ընկերութիւնները, ինչպէս տեսանք, բարոյական անձնաւորութիւններ կը համարուին, որոնք իրենց որոշ անունն ունին, որով ինքզինքնին կը ներկայացնեն առեւտրական հրապար-

բակին վստահութեան: Առժամեայ ընկերութիւնը այս տեսակ հանգամանք մը չ'ունի. իր նպատակն է միայն մէկ քանի գործողութիւններ, որք շատ անգամ ընկերակցողներէն մէկուն միջոցաւ և անոր անունովը կը կատարուին: Եթէ գործողութիւնը ապրանքի վերաբերեալ է՝ անոնցմէ մէկը կը կատարէ գնման և վաճառման գործերը, և միւս ընկերներուն կը ներկայացնէ անոնց հաշիւը, որով կ'որոշուի այդ գործողութենէն ընկերներուն առնելիք շահը կամ տալիք փաստը: Օրինակի համար, մէկ քանի անձեր որոշեալ դրամագլուխ մը դնելով՝ յառաջ գալիք շահը կամ փաստը մէջերնին բաժնելու պայմանով նաև մը արմտիք կը գնեն, այս կերպով թէև մէջերնին ընկերութիւն մը կը կազմուի, բայց որոշեալ պայմանաժամ մը չ'ունենար, արմտիքին վաճառումին հետ ընկերութեան գոյութիւնն ալ կը վերջանայ: Առժամեայ ընկերութիւն կրնայ սեպուիլ նաև՝ երբ մէկ քանի անձինք քաղաքի մը այսինչ տարուան տասանորդի տուրքը կը վարձակալեն: Այս տեսակ ընկերակցութիւնները թէև հաւաքական ընկերութեան նմանութիւն ունին, բայց Առժամեայ կամ Բաժանորդակալ կ'ըսուին:

Առժամեայ ընկերութիւնը կը տարբերի հաւաքականէն, այնու դի՛ տեղինը մասնաւոր մարմին մը չ'ըլլալուն՝ իրեն յատուկ անուն, գործատեղի և առանձին դրամագլուխ ալ չ'ունենար. այսինքն, առժամեայ ընկերութեան յատուկ դրամագլուխը՝ միայն այդ ընկերութենէն պահանջ ունեցողներուն չի յատկանար իբր առանձնաշնորհումն. այդ բաժանորդական ընկերութիւնը եթէ «անականայ» անոր անդամներէն անձնապէս պահանջ ունեցողները առժամեայ ընկերութեան դրամագլուխն ալ իրենց պահանջք ազելու իրաւունք կ'ունենան. վերջապէս թէ՛ այդ ընկերութեան և թէ՛ այդ ընկերութիւնը կազմող անդամոց բոլոր պահանջատէրները հաւասարապէս և անխտիր կը մասնակցին սնանկութեան Մասային (1):

Թէև միւս երեք ընկերութեանց գոյութիւնը հաստատելու համար ըստ օրինի մասնաւոր պայմանագիր մէջտեղ բերել հարկ է, բայց առժամեայ ընկերութեան համար այնպէս չ'է. այս տեսակ ազգացոյցներու հարկ չկայ երկու անձերու միջև եղած առժամեայ ընկերութեան մը գոյութիւնը հաստատելու համար. ընկերներուն միջև փոխանակուած նամակները և անոնց տետրակները մէջտեղ բերել բաւական է: Զորօրինակ, Պօլիս գտնուող վաճառական մը վառանցի վաճառականի մը նամակաւ կ'առաջարկէ որ՝ «չն ու փաստը մէջերնին հաւասարապէս բաժնուելու պայմանով, նաև մը ցորեն դրկէ իրեն»: Նա ալ կ'ընդունի այս առաջարկը և

[1] Քիչ վերջը խօսած ենք թէ ի՞նչ է Սնանկութիւնը, Մասան, եւլն.

ցորենը կը զըկէ. բայց վերջը եթէ Պօլսեցի վաճառականը այդ տեսակ ընկերութեան մը գոյութիւնը ուրանալու ըլլայ՝ ցորենը զըրկողը՝ իր անկէ ստացած և իր գրած նամակներովը և, ի հարկին, իր տեսարակներովը կընայ ապացուցանել մէջերնին այդ տեսակ ընկերութեան մը գոյութիւնը:

Սա կէտը եւս աւելորդ չենք համարիր նշանակել թէ՛ առժամեայ ընկերութեան անդամք թէ՛ եւ այդ ընկերութեան պարտքին համերաշխ պարտական են, բայց երբ անոնցմէ մէկը բոլոր ընկերներուն անունովը մէկուն պարտամուրհակ տայ՝ միւս ընկերք պարտական չեն զայն վճարելու. պարտամուրհակը ստորագրողը միայն վճարելու պարտական է: Ասոր հետ մէկտեղ, եթէ բոլոր ընկերք այդ պարտամուրհակը ստորագրած ըլլան՝ և համերաշխ պարտական ըլլալու մասին մէջը մասնաւոր արամագրութիւն մ'ալ եղած չ'ըլլայ՝ դարձեալ իբր համերաշխ նկատուելով՝ ամենքն ալ մէկանց անոր վճարմանը պարտաւոր կ'ըլլան: Բայց երբ պարտամուրհակին մէջ ընկերներուն պարտքին բաժինը զատուած և որոշուած ըլլայ՝ օրինակի համար, հինգ ընկեր 500 լիւրայի պարտամուրհակ մը տուած ըլլան, և ամէն մէկ ընկերի կողմանէ 100 տական լիւրա վճարուիլը որոշ կերպով գրուած ըլլայ՝ այն ատեն իւրաքանչիւր ընկեր միայն իր որոշեալ բաժինը վճարելու պարտական է. միւսները, ըստ օրինի, համերաշխ չ'են համարուիր:

Այս տեսակ ընկերութեանց հաշիւներն ալ Տոմարակալութեան մէջ ընկերներուն իրենց բաժնին համեմատ կը գրուին և կ'ըտուին, Ընկերութիւն 1/2ի, 1/3ի, 1/4ի, կամ 0/10 50ի, 0/10 60ի, ևլն. ի նաշնով:

Կրկնատուարի հաշիւներուն վրայ խօսած ատեննիս՝ այս մասին մասնաւորապէս և ընդարձակօրէն գրած ենք:

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ

Սնանկութիւնը՝ վաճառականին այն վիճակն է, յորում իր գործերուն խանգարման պատճառաւ վճարումները զազրեցնելու կ'ստիպուի:

Վաճառականութեան զարգացումը, որ Տէրութեանց զարգացման հետ սերտ յարաբերութիւն ունի, կը պահանջէր որ մասնաւոր միջոցներ ձեռք առնուէր այն պարագաներուն համար, ուր վաճառականը իր յանձնառութիւնները կատարելու անկարող կ'ըլ-

լայ: Պէտք էր որ օրէնքը ապահովեր և պաշտպաներ շարիքը, պատժել անհոգութիւնը և անխելք ընթացքը, դատապարտել խարդախութիւնը, պաշտպանել ճշմարտապէս դժբաղդ վաճառականը, միեւնոյն ատեն արգելել որ պարկեշտ պահանջատէրներու շահերը չի զոհուին յանցապարտ նենգութեանց, ըստ կարի ծանր պատիժներով առաջքն առնել այն յանգուզն շահախնդրութիւններուն, որով անամօթ մարդիկ՝ ի վնաս իրենց պատւոյն, կեղծ անանկութիւններ կը պատրաստեն:

Այս բաներուն առաջքն առնելու համար՝ վաճառականական Օրինագիրքը սնանկութեանց համար բաւական մեծկակ տեղ մը նուիրած է բազմաթիւ յօդուածներու տրամագրութեամբ, զորս հոս մի առ մի թուել մեր նպատակէն դուրս ըլլալով՝ պիտի ջանանք ըստ կարի հակիրճ տեղեկութիւն մը տալ Սնանկութեան և անոր յարակից գլխաւոր պարագաներուն վրայ:

Սնանկութեան յայտարարութիւնը. — Օրէնքը կը պահանջէ որ անանկանալու աստիճանին հասած վաճառականը՝ վճարումները զազրեցուցած օրէն սկսեալ 3 օրուան մէջ՝ իր գտնուած քաղաքին առեւտրական դատարանին աղերսագրով մը իր սնանկութիւնը յայտարարէ: Եթէ ինքը չ'ընէ այս յայտարարութիւնը, պահանջատէրները կամ անոնցմէ միայն մէկը իրաւունք ունին առեւտրական դատարանէն անոր սնանկութիւնը պահանջելու, քանի որ իրենց պահանջքը չի կրնար վճարել և դատարանը՝ ի բացակայութեան, անոր սնանկութիւնը պաշտօնապէս կը հռչակէ լրագրաց մէջ, դատարանին պատին և սնանկացողին վաճառատան դրան վրայ մասնաւոր ազգագրեր փակցնել տալով, միեւնոյն ատեն կնքոյ տակ կ'առնէ անոր վաճառատունը, գրասեղանները, գրամարկղը, թղթապանակները, տետրակները, կարասիքը, ինչպէս նաեւ տանը աւելորդ կարասիքը, բանտարկելով միանգամայն սնանկացողը:

Սնանկութիւն յայտարարող վաճառականը պէտք է որ միեւնոյն ատեն դատարանին յանձնէ իր ստորագրեալ Հաշուեկշիռը, այսինքն, ցուցակ մը, ուր գրուած ըլլայ զատ զատ իր գոյքը կազմող բոլոր ստացուածքը, շարժուն թէ՛ անշարժ, իրենց արժէքով, պարտքն ու պահանջքը, շահն, ու վնասը, ինչպէս նաեւ ըրած ծախքերը, որք իր տեսարակներուն հարադատ ընդօրինակութիւնը ըլլալու են: Եթէ 3 օրուան մէջ չի կարենայ իր հաշուեկշիռը տալ, չի տալուն պատճառները պէտք է յայտնէ վերոյիշեալ աղերսագրին մէջ:

Յանձնակասար դասարտ կամ ժխժ ֆոլխսեռ. — Սնանկութեան պաշտօնական յայտարարութենէն ետքը՝ դատարանը իր անդամներէն մէկը կը կարգէ ժխժ ֆոլխսեռ անունով, որ իբր տեսուչ

ցորենը կը զրկէ՝ բայց վերջը եթէ Պօլսեցի վաճառականը այդ տեսակ ընկերութեան մը գոյութիւնը ուրանալու ըլլայ՝ ցորենը զըրկողը՝ իր անկէ ստացած և իր գրած նամակներովը և, ի հարկին, իր տետրակներովը կրնայ ասպացուցանել մէջերնին այդ տեսակ ընկերութեան մը գոյութիւնը:

Սա կէտը եւս աւելորդ չ'ենք համարելը նշանակել թէ՛ առժամեայ ընկերութեան անդամք թէ՛ եւ այդ ընկերութեան պարտքին համերաշխ պարտական են, բայց երբ անոնցմէ մէկը բոլոր ընկերներուն անունովը մէկուն պարտամուրհակ տայ՝ միւս ընկերք պարտական չ'են զայն վճարելու: պարտամուրհակը ստորագրողը միայն վճարելու պարտական է: Ասոր հետ մէկտեղ, եթէ բոլոր ընկերք այդ պարտամուրհակը ստորագրած ըլլան՝ և համերաշխ պարտական ըլլալու մասին մէջը մասնաւոր տրամադրութիւն մ'ալ եղած չ'ըլլայ՝ դարձեալ իբր համերաշխ նկատուելով՝ ամենքն ալ մէկանց անոր վճարմանը պարտաւոր կ'ըլլան: Բայց երբ պարտամուրհակին մէջ ընկերներուն պարտքին բաժինը զատուած և որոշուած ըլլայ՝ օրինակի համար, հինգ ընկեր 500 լիբայի պարտամուրհակ մը տուած ըլլան, և ամէն մէկ ընկերի կողմանէ 100ական լիբա վճարուիլը որոշ կերպով գրուած ըլլայ՝ այն ատեն իւրաքանչիւր ընկեր միայն իր որոշեալ բաժինը վճարելու պարտական է: միւսները, ըստ օրինի, համերաշխ չ'են համարուիր:

Այս տեսակ ընկերութեանց հաշիւներն ալ Տոմարակալութեան մէջ ընկերներուն իրենց բաժնին համեմատ կը գրուին և կ'ըսուին, Ընկերութիւն 1/2ի, 1/3ի, 1/4ի, կամ 1/5 50ի, 1/6 60ի, ևլն: ի հաշիւով:

Կրկնատոմարի հաշիւներուն վրայ խօսած ատեննիս՝ այս մասին մասնաւորապէս և ընդարձակօրէն գրած ենք:

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ

Սնանկութիւնը՝ վաճառականին այն վիճակն է, յորում իր գործերուն իրանգարման պատճառաւ վճարումները դադարեցնելու կ'ստիպուի:

Վաճառականութեան զարգացումը, որ Տէրութեանց զարգացման հետ սերտ յարաբերութիւն ունի, կը պահանջէր որ մասնաւոր միջոցներ ձեռք առնուէր այն պարագաներուն համար, ուր վաճառականը իր յանձնառութիւնները կատարելու անկարող կ'ըլ-

լայ: Պէտք էր որ օրէնքը ասպակներ և պաշտպաններ չարիքը, պատժել անհոգութիւնը և անխելք ընթացքը, դատապարտել խարդախութիւնը, պաշտպանել ճշմարտապէս դժբաղդ վաճառականը, միեւնոյն ատեն արգիլել որ պարկեշտ պահանջատէրներու շահերը չի զոհուին յանցապարտ նենգութեանց, ըստ կարի ծանր պատիժներով առաջքն առնել այն յանդուգն շահախնդրութիւններուն, որով անամօթ մարդիկ՝ ի վնաս իրենց պատւոյն, կեղծ սնանկութիւններ կը պատրաստեն:

Այս բաներուն առաջքն առնելու համար՝ վաճառականական Օրինագիրքը սնանկութեանց համար բաւական մեծկակ տեղ մը նուիրած է բազմաթիւ յօդուածներու տրամադրութեամբ, զորս հոս մի առ մի թուել մեր նպատակէն դուրս ըլլալով՝ պիտի ջանանք ըստ կարի հակիրճ տեղեկութիւն մը տալ Սնանկութեան և անոր յարակից գլխաւոր պարագաներուն վրայ:

Սնանկութեան յայտարարութիւնը. — Օրէնքը կը պահանջէ որ սնանկանալու աստիճանին հասած վաճառականը՝ վճարումները դադարեցուցած օրէն սկսեալ 3 օրուան մէջ՝ իր դտնուած քաղաքին առեւտրական դատարանին աղերսագրով մը իր սնանկութիւնը յայտարարէ: Եթէ ինքը չ'ընէ այս յայտարարութիւնը, պահանջատէրները կամ անոնցմէ միայն մէկը իրաւունք ունին առեւտրական դատարանէն անոր սնանկութիւնը պահանջելու, քանի որ իրենց պահանջքը չի կրնար վճարել և դատարանը՝ ի բացակայութեան, անոր սնանկութիւնը պաշտօնապէս կը հռչակէ լրագրաց մէջ, դատարանին պատին և սնանկացողին վաճառատան դրբան վրայ մասնաւոր աղղագրեր փակցնել տալով, միեւնոյն ատեն կնքոյ տակ կ'առնէ անոր վաճառատունը, գրասեղանները, գրամարկղը, թղթապանակները, տետրակները, կարասիքը, ինչպէս նաեւ տանը աւելորդ կարասիքը, բանտարկելով միանգամայն սնանկացողը:

Սնանկութիւն յայտարարող վաճառականը պէտք է որ միեւնոյն ատեն դատարանին յանձնէ իր ստորագրեալ Հաշուեկշիռը, այսինքն, ցուցակ մը, ուր գրուած ըլլայ զատ զատ իր գոյքը կազմող բոլոր ստացուածքը, շարժուն թէ՛ անշարժ, իրենց արժէքով, պարտքն ու պահանջքը, շահն, ու վնասը, ինչպէս նաեւ ըրած ծախքերը, որք իր տետրակներուն հարազատ ընդօրինակութիւնը ըլլալու են: Եթէ 3 օրուան մէջ չի կարենայ իր հաշուեկշիռը տալ, չի տալուն պատճառները պէտք է յայտնէ վերոյիշեալ աղերսագրին մէջ:

Յանձնակալատ դասաւոր կամ ժիւժ ֆոլիսեռ. — Սնանկութեան պաշտօնական յայտարարութենէն ետքը՝ դատարանը իր անդամներէն մէկը կը կարգէ ժիւժ ֆոլիսեռ անունով, որ իբր տեսուչ

կամ Տնօրէն կը հսկէ սնանկութեան բոլոր գործողութեանց և օրինական ձեւակերպութեանց գործադրութեան :

Ժիւժ քօմիսէնը սնանկացողին հաշուեկշիւին պատրաստութիւնը կը վտւթացնէ, եթէ սնանկացողը ժամանակին իր հաշուեկշիւը դատարանին տուած չ'ըլլայ, սնանկացողին պահանջատէրները տասնհինգ օրուան մէջ ժողովքի կը հրաւիրէ, և սնանկացողին գործոց վրայ անոնց կարծիքը և դիտողութիւնները լսելով կը տեղեկագրէ դատարանին, որ ձեռնհաս մարմինն է առ այդ վճիռ տալու :

Գործակալ կամ Սիկսիֆ, Մասսա. — Վերը յիշուած դատարանին որոշած ժիւժ քօմիսէնէն դատ՝ պահանջատէրներուն մէջէն կամ բացէն, սնանկացողին ազգական չ'ըլլալու պայմանաւ, Սիկսիֆ անունով 2-3 անձինք կ'որոշուին, որոնք պահանջատէրներուն ամբողջութիւնը կը ներկայացնեն և այս կերպով կազմուած ժողովին ալ՝ օրինական բառով, Մասսա (masse) կ'ըսուի : Սինտիքները երեք տեսակ պարտաւորութիւն ունին : Անոնք կը ներկայացնեն պահանջատէրներուն ամբողջութիւնը, սնանկացողը և Օրէնքը : Ըսել է թէ՛ ո՞ր աստիճան լաւ ընտրութիւն ընել հարկ է այս անձերուն վրայ, որք իրենց ուղղամտութեամբը կարող ըլլան այս երեք շահերը իրարու չի զոհել : Սինտիքներուն պաշտօնն է ժիւժ քօմիսէնին հետ կնքոյ տակ առնել սնանկացողին բոլոր գոյքը, (ինչպէս քիչ առաջ ըսինք) եթէ իրենց անուանումէն առաջ դատարանին կողմէն այդ ձեւակերպութիւնները կատարուած չ'ըլլան, պատրաստել հաշուեկշիւը, եթէ սնանկացողը զայն առաջուց դատարանին տուած չ'ըլլայ, քննել սնանկացողին պատրաստած հաշուեկշիւը և անոր տետրակները, ծախել շարժուն և անշարժ ըստացուածքները, գանձել պահանջները և գոյացած գումարը յատկացնել և բաժնել պահանջատէրներուն, որոնք, յայտնի է թէ, իրենց պահանջքէն 10 այսչափ վնաս մը պիտի ընեն, եթէ գործը բաց ունենայ, վերջապէս սնանկացողին Գոյքին և Պարտքին հաշուեյարդարութիւնը ընել, եթէ պահանջատէրք չի համաձայնին Գօնգօրսաքօյի մասին, որուն վրայ իր կարգին պիտի խօսինք : Սինտիքները նախապէս և առժամապէս դատարանին կողմէն կը կարգուին, որք վերջէն դարձեալ կը հաստատուին իրենց պաշտօնին մէջ, կամ անոնց տեղ ուրիշներ կը կարգուին պահանջատէրներուն հաւանութեամբ :

Պահակալներու ֆինոքսիւնը. — Առեւտրական դատարանին հրաւերին վրայ՝ որոշեալ 3 օրեր սնանկացողին պահանջատէրները կը ներկայանան սինտիքներուն և իրենց պահանջքն արձանագրել կը տան : Սինտիքները իրաւունք ունին պահանջատէրներէն ուղելու սնանկացողին ստորագրութեամբ պարտավորեցակ, և, եթէ չ'ունին, իրենց պահանջքը հաստատող ցուցակ մը, զորս անակին

տետրակներուն հետ քննելէ վերջը կ'ընդունին և կ'արձանագրեն, զի կրնայ ըլլալ որ ենթագրական կամ կեղծ պահանջատէրներ ալ ներկայանան, որք՝ ճշմարիտ պահանջատէրներուն դիտողութեան վրայ կը մերժուին սինտիքներուն կողմէն :

Սնանկութեան մը գործը երկու կերպով կը կարգադրուի, Գօնգօրսաքօ և Իւնիօն :

Իրաւախոնութիւն պահանջատէրներու կամ Գօնգօրսաքօ. — Գօնգօրսաքօն սնանկացողին և իր պահանջատէրներուն միջև կատարուած իրաւախոնական դաշնագիր մ'է, որով այս վերջինք՝ իրենց առնելիքէն քիչ վնաս ընելու համար, կը հաւանին որ իրենց պարտական վաճառականը պարտքերը կարենալ վճարելու համար պայմանաժամ մ'առնէ, եթէ՛ գործին մէջ բաց չ'ըլլալով՝ իր վճարմանց դադարումը միայն նեղութեան արդիւնք եղած ըլլայ, կամ իր պարտքին 10 այսչափը միայն վճարէ, այսինքն, 100 լիբր պարտքին 70-80 լիբր վճարէ և մնացածը իրեն կը թողուն : Այս կարգադրութեամբ՝ սնանկացողը կրնայ դարձեալ իր գործին զգիլ և իր պատիւը տեղը բերել :

Գօնգօրտաթօյին պատրաստութեանը համար ժիւժ քօմիսէնը ըրագրաց միջոցաւ ժողովքի կը հրաւիրէ առնելիքնին ստուգուած և արձանագրուած պահանջատէրները :

Գօնգօրտաթօն գործադրուելու համար՝ ըստ օրինի պէտք է որ սնանկացողին պահանջատէրներուն անձի թիւի կողմէ մեծամասնութեամբ և գումարի կողմէ 5/11 համեմատութեամբ ընդունուած ըլլայ, այն ատեն դատարանէն ալ կը վաւերացուի և գօնգօրտաթօյի գործողութիւնը կը վերջանայ : Սարգախ սնանկութեան համար, որուն վրայ ետքէն պիտի խօսինք, գօնգօրտաթօ չ'ըլլար :

Միտքիւն պահանջատէրներու կամ Իւնիօն. — Շատ անգամ գանազան պատճառներով սնանկացողին գօնգօրսաքօ չի տրուիր, և սնանկութեան գործը տարբեր կերպով կը կարգադրուի, որուն, օրինական բառով, Իւնիօն կ'ըսուի : Օրինակի համար, երբ պահանջատէրք գօնգօրտաթօյին վրայ չի համաձայնին, որ ատեն սնանկութեան գործը հաշուեյարդարութեամբ կը վերջանայ, կամ կատարած ունենան անոր սնանկութեան ճշմարտութեան վրայ, կամ դատարանը չի վաւերացներ զայն, ևլն. այն ատեն պահանջատէրք կը միանան և Իւնիօնի միջոցին կը դիմեն, այսինքն, սնանկացողին բոլոր ունեցածը առնելէ ետքը՝ մնացած պահանջներն 10 հարիւրի հաշով և ուղած ատենին սնանկացողէն պահանջելու իրաւունքը կը պահեն ըստ օրինի : Արդարեւ սնանկութեան մը այս կերպ կարգադրութիւնը սնանկացողին համար շատ ձախող է և կործանիչ, զի Իւնիօնով վերջացած սնանկացողը նորէն իր անու-

նովը գործի չի կրնար սկսիլ, վասն զի առջի գործէն պահանջը ունեցողները գինքը կը հալածեն միշտ և ի՛նչ որ գտնան կը գրաւեն ի հաշիւ իրենց առնելիքին :

Առեւտրական օրէնքը երեք դասի կը բաժնէ սնանկութիւնները . ճշմարիտ, Յանգաւոր և Խարդախ սնանկութիւն :


Ճշմարիտ սնանկութիւնն այն է՝ որ գործոց բնական ընթացքէն առաջ եկած է . սնանկացողը չ'է ունեցած այն պակասութիւնները, զորս քիչ վերջը պիտի թուենք սնանկութեան միւս երկու տեսակներուն վրայ խօսած ատեննիս :

Յանգաւոր սնանկութիւնն այն է՝ յորում սնանկացողը անխոհեմութեամբ կամ անհոգութեամբ վարած է իր գործերը, այսինքրն, եթէ իր տան և անձնական ծախքերը, որոնց գումարը, ըստ օրինի, ամէն ամիս Օրհաշիւ անուն տետրակը պիտի գրէ, չափազանց նկատուին, եթէ խաղամուտութեան և բաղդի խաղերու մեծակազ գումարներ վատնած է, եթէ հաստատուի որ, հակառակ իր վերջին հաշուեկշիւին⁽¹⁾ ցուցուցած բացին՝ դարձեալ գործը շարունակած է բարձր տոկոսով փոխառութիւններ ընելով և հրապարակի գինէն և իրեն արժածէն շատ վար գինով ապրանք ծախեր է, եթէ, առանց արգելիչ պատճառի, որոշուած օրերը սինտիքներուն անձամբ չ'է ներկայացած, եթէ տետրակները անկանոն և ապօրինաւոր բռնուած են, ևլն :

Խարդախ սնանկութիւնն այն է՝ յորում սնանկացողը կարգ մը խարդախութիւններ ըրած է, օրինակի համար, ճշմարտութիւնը ծածկելու համար տետրակները պահած կամ խարդախած է, պարտքերը աւելի և պահանջքները պակաս ցուցնելով, տանը և անձնական ծախքերը խիստ չափազանց ըլլան, շատ մը ենթադրական ծախքեր, նուէրներ կամ ֆլասներ ցուցուցած ըլլայ, որք իրապէս ամենեւին տեղի չ'են ունեցած, գործէն մաս մը գրամ կամ սպրանք հանած և պահած ըլլայ, ևլն, որոնց համար օրէնքը մասնաւոր պատիժներ որոշած է, և որոնց օրինակները պարբերաբար կը կարգանք լրագրաց մէջ, թէ «այսինչը խարդախ սնանկ ըլլալուն՝ դատարանը այսչափ տարուան տաժանակիր բանաբերութեան դատապարտած է», ևլն :

[1] Ասոր համար է որ Առեւտրական Օրինագիրքը իր 4րդ յօդուածով հաւուեկուի սեբակը կը պահանջէ. սե՛ս Բ. մասին մէջ՝ օրէնքներու այս բաղումը քին մէջ :

ԳՐՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ



ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վաճառականական դանազան գործողութեանց ի հաստատութիւն կարգ մը գրութիւններ կամ պաշտօնաթղթեր կը գործածուին : Օրինակի համար, մէկէ մը ապրանք առած ըլլալնիս, ի հարկին, հաստատելու համար, ապրանքը ծախողէն թուղթ մը առած ըլլալու ենք, նաև մը վրայ ապրանք բեռցուցած ըլլալնիս նաւապետին ստորագրութեամբ թուղթ մը ձեռքերնիս ունենալով կրնանք հաստատել, որ և է հաշիւի մը համար մէկուն գրամ տրած ըլլալնիս՝ անոր ստորագրութեամբ թղթով մը պիտի ապացուցանենք, ևլն . ևլն . ահա այդ գրութիւնները կամ պաշտօնաթղթերն են, զորս այս գլխուն մէջ պիտի ցուցնենք իրենց յաւելից գործնական կարեւոր գիտելիքներով :

Ահաւասիկ այդ գրութեանց գլխաւորները

1. Հաշուեցուցակ
2. Հաշուեգիր գնման
3. » վաճառման
4. Փոխադրագիր
5. Բեռնագիր
6. Ստացագիր կամ ընկալագիր
7. Դարձի հաշիւ
8. Հաշուեցուցակ փոխանակագրի
9. Զեղչի ցուցակ :

Հ Ա Շ ՈՒ Ե Ց ՈՒ Ց Ա Կ

Ապրանքի մը վաճառումը հաստատող կամ մէկուն ծախուած սպրանքին հաշիւը ներկայացնող գրութեան կամ թղթին Հաշուեցուցակ կամ Հաշուեցոյց կ'ըսուի, որուն վրայ ծախողը կը նշանակէ սովորաբար ծախած ապրանքին կարեւոր մանրամասնութիւնները, և կը տայ կամ կը զրկէ զայն գնողին, եթէ սա ուրիշ քաղաք մը գտնուի : Ընդհանրապէս մէկ երես թղթի վրայ կը պատաստուին : Հաշուեցուցակին մէջ պէտք է գրել,

1. Վաճառումը կատարուած տեղը և վաճառման թուականը .
2. Գնողին անունը և տեղը եւ անմիջապէս ետքը նոյն սո-

զին վրայ դէպ ի ծայրը՝ գլխադրով Պարսի կամ Պարսին (եթէ գնողը մէկէ աւելի է) .

3. Յաջորդ տողին վրայ ծախողին անունը՝ առջին առ նախադիրը գնելով, կամ անունին ծայրը ին մասնիկն աւելցնելով .

4. Եթէ, ինչպէս ըսինք, ապրանքը գնողը ուրիշ քաղաք մը գտնուի՝ եւ ծախողը ապրանքը ինք անձամբ զրկէ, պէտք է գրուի ինչ միջոցաւ զրկուած ըլլալը, այսինքն թէ՛ շոգենաւո՞վ կամ շոգեկաւքով, եւ ինչ նշանակելով միեւնոյն աստէն ճամբուն վտանգը որո՞ւ վերաբերիլը, այսինքն, ապրանքը զրկողին թէ՛ ընդունողին .

5. Ապրանքին կարեւոր մանրամասնութիւնները, այսինքն, քանակը, տեսակը, որակը, գինը . իսկ հեռուն զրկուած ապրանքներու համար՝ ասոնցմէ զատ գրել նաեւ անզուտ կշիւրը, ապրանքուտ կշիւրը, ինչպէս նաեւ հակերուն նշանադիրն եւ թիւերը .

6. Եթէ հաշուեցոյցի մը մէջ քանի մը տեսակ ապրանք գրուուի, իւրաքանչիւր ապրանքի գինը և քանակին հետ բազմապատկելով՝ գոյացած մասնակի գումարները և այս գումարներուն ընդհանուր գումարը իրենց յատուկ սիւներուն մէջ, որք սպազրուած հաշուեցուցակներուն վրայ յատկապէս գծուած կ'ըլլան ապրանքին տեսակին համեմատ .

7. Փոխադրութեան, պատտաման, եւլն . ծախքերը, յանձնառողչէքն և միջնորդչէքը, զորս ապրանքին ընդհանուր գումարին վրայ պէտք է աւելցնել, յետոյ սովորական զեղչը, ինչպէս նաեւ տժգինը, եթէ կայ, զորս ապրանքին ընդհանուր գումարէն պէտք է զեղչել .

8. Ինչ տեսակ դրամով (1) եւ ինչ հաշուով վճարուիլը .

9. Ինչ պայմանով ծախուած ըլլալը, այսինքն՝ կանխիկ կամ քանի՞ ամիսէն կամ ո՞ր օր վճարելի ըլլալը . այս մասը երբեմն հաշուեցոյցին վերնագրին մէջ կը գրուի, երբեմն ալ հաշուեցոյցին տակը ընդհանուր գումարին ուղղութեամբ :

Հաշուեցուցակը երկու մասի կը բաժնուի . Ա. մասը՝ վերնագիրը կամ գլխադրութիւնն է . Բ. մասը՝ բուն իսկ հաշուեցոյցին մասը կամ մարմինը . այս երկու մասերը զոյգ մը ուղիղ գիծով իրարմէ կը բաժնուին :

Վերնագրի մասին մէջ կը գրուին վերոյիշեալ թ. 1-4 մանրամասնութիւնները, իսկ թ. 5-9 մանրամասնութիւնները՝ բուն իսկ հաշուեցոյցին մէջ, ինչպէս կ'երեւայ մեր օրինակներուն վրայ :

[1] Թուրքիոյ մէջ սովորութիւն մը կայ շահ տեսուի մէջ Օսմ. լիւրան, որ իր սկզբնաւ 100 դե. կ'արժէ, 108-115 եւ աւելի իսկ հաւելով գործածելու : Ինչպէս կան տեղեր ալ, ուր ասկէ աւելի ալ կը գործածուի լիւրան, զորոհմակ Ազրիանուպոլիս 123 դե. եւ Թոսոսըն օսմ. լիւրան 135 դե. ի եւ Ջմիւռնիոյ մէջ ալ բարեմա սակ 135 1/4 դե. ի կ'առնուի եւ կը տրուի :

Հաշուեցուցակները կրնանք երկու տեսակի բաժնել, Տեղական կամ Հրապարակի, և Ուղղարկելի հաշուեցոյց անուններով :

Տեղական կամ Հրապարակի հաշուեցոյցը՝ միեւնոյն քաղաքին մէջ և միեւնոյն հրապարակին վրայ գտնուող երկու անձերու միջեւ կատարուած վաճառումը կը հաստատէ : Տեղական վաճառման առթիւ ապրանքին փոխադրութեան ծախքը գնողին վրայ կ'ըլլայ, կամ ծախողը յանձն կ'առնէ երբեմն մինչեւ գնողին վաճառատունը յանձնել ապրանքը, եթէ առաջուց այսպէս պայման դնեն :

Ուղղարկելի հաշուեցոյցը՝ գնող ու ծախող տարբեր քաղաքներու մէջ գտնուող երկու անձերու միջեւ կատարուած վաճառումը կը հաստատէ . ապրանք ծախողը հաշուեցոյցը պատրաստելով նամակով գնողին կը զրկէ : Այս տեսակ վաճառման առթիւ ապրանքին փոխադրութեան ծախքը, եթէ առաջուց պայման գրուած չ'ըլլայ՝ բնականաբար գնողին վրայ կ'ըլլայ . հետեւաբար եւ փոխադրողչէքը, ապահովողչէքը եւ ուրիշ ծախքերը, ինչպէս վերը ըսինք, հաշուեցոյցին գումարին վրայ կ'աւելնայ :

Այս երկու տեսակ հաշուեցուցակները իրարմէ միայն իրենց վերնագրով կը տարբերին . միւս մանրամասնութիւնք գրեթէ նոյնը մնալով :

Օրինակ Տեղական հաշուեցոյցի

Ա. և Խ . Խորասանճեան, ի Կ . Պօլիս, Պ . Մինասեանի, նոյնպէս ի Կ . Պօլիս, 1896 Յնվր . 15ին՝ 1547 1/2 ղշ . ի ապրանք կը ծախեն 2 ամիս պայմանաժամով, կամ 0/10 2 զեղչով :

Արդ՝ Խորասանճեան իր հաշուեցոյցը պիտի պատրաստէ եւ տայ Պ . Մինասեանի հետեւեալ վերնագրով .

Կ . Պօլիս, 15 Յունվար 1896

Տ . Պ . Մինասեան ի Կ . Պօլիս

Պարսի

Առ Տեարց Ա. և Խ . Խորասանճեան, իրեն ծախուած եւ յանձնուած հետեւեալ ապրանքներուն համար, վճարելի 2 ամիսէն, կամ կանխիկ 0/10 2 զեղչով :

Յետոյ այս վերնագրին տակէն զոյգ մը ուղիղ գիծ քաշելով՝ հաշուեցոյցին Բ . մասին մէջ կը գրուի ծախուած ապրանքին մանրամասնութիւնը իրենց յատուկ սիւներուն մէջ, զորս առաջուց պէտք է գծել գրչով :

Ա. ՕՐԻՆԱԿ ՀԱՇՈՒԵՑՈՒՄ

Ա, Ե Խ, ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ


Թ. Գ. Թ. Ա. Վ. Ա. Ճ. Ա. Թ.

Կ. ՊՕԼԻՍ, ՍՈՒԼՔԱՆ ՀԱՄԱՄ, ՀԱՃՕՓՈՒԼՕ ԽԱՆԻՆ ԴԷՄ

A. & H. KORASSANDJIAN
PAPETERIE

Sultan Hamam, En face de Kassopulo Han, Constantinople

Թ. 3.
ԿՐԱՍԵՆԵԿԻ
Պ Ի Տ Ո Ց Ք



N. 3.
ARTICLES
DE BUREAU

Կ. ՊՕԼԻՍ, 15 Յունվար 1896

Տ. Պ. Միևսուան ի Կ. ՊՕԼԻՍ Պարսի

Առ Տրց. Ա. Լ. Ս. Սորասանձեան, իրեն ծախուած էլ յանձնուած հետեւեալ ապրանքներուն համար, վճարելի 2 ամիսէն, կամ 2 զեղչով.

12	Մր. նամակի բուրբ	40	480	
10	Հաս քնդօրինակութեան սեւրակ	18	180	
20	Շիւք միլան	8	160	
10	Տուգինա մասիս	5	50	
5	Տուկի գրչի ծայր	3 1/2	17	20
3	Հաս Օրհաուի սեւրակ	60	180	
3	» Մայր-հաուի »	80	240	
2	Մամուլ քնդօրինակութեան	120	240	
			1547	20
	Լ. Օ. 108 դե. են. = Լ. Օ. 14.33			
ա	բ	գ	դ	ե

Նախընթաց հաշուեցոյցին սիւնոց բացատրութիւնը

- Ա. սիւնին մէջի թիւերը՝ ծախուած ապրանագ ամէն մէկուն քանակը կը ցուցնեն
- Բ. » » » » » տեսակները իրենց մանրամաս. թր
- Գ. » » » » » զինները
- Դ. » » » » » իւրաքանչիւր ապրանքի իր զինովը բազմապատկելով՝ արտադրեալ մանակի զուժաբը
- Ե. սիւնակին մէջ գրուածները՝ զուժարներուն կոտորակները:

Բ. ՕՐԻՆԱԿ ՀԱՇՈՒԵՑՈՒՄ

Թ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՊԱՐԵՂԻՆԱՅ Ի Կ. ՊՕԼԻՍ, ՎԱԼԱԹԱ

ԲԻՆԻԷԻՔԱՆՈՒՐ. ԹԻՒ 10

Տ. Գրիգոր Պօղոսեան, յանձնառու ի Կ. ՊՕԼԻՍ Պարսի

Առ Տ. Թ. Պետրոսեան, հետեւեալ ապրանքներուն համար, վճարելի 31 օրէն.

Պ. Պ.									
8-12	Հինգ պարկ բնիք անառ								
	Թ. 8 9 10 11 12								
	Հ. 78 82 75 79 76	390							
	Ապրայ	12							
	Չուս կեիւ	378	4	1512					
	Չեղչ 5%			75	20				
101	Չորս պարկ շաբար							1436	20
108	Թ. 101 108 114 116								
114	Հ. 56 58 62 54	230							
116	Ապրայ	11							
	Չուս կեիւ	219	2	438					
	Չեղչ 3%			13					
								425	
	Լ. Օ. 108 դե. են = Լ. Օ. 17.23 1/2							1861	20
	Կ. ՊՕԼԻՍ, 28 Մարտ 1897								
ա	բ	գ	դ	ե	զ	է	զ	է	զ

Նախընթաց հաշուեցուցակին սիւնոց բացատրութիւնը

- Ա. սիւնին մէջ գրուած են հակերուն նշանագրերը եւ թիւերը
- Բ. » » ապրանաց տեսակները իրենց մանրամասնութեամբ
- Գ. » » կշիռները
- Դ. » » զինները
- Ե. Ե. սիւներուն մէջ՝ անգուտ գումարները իրենց կոտորակով
- Զ. Զ. » » զուտ » » » »

Նոյն հաշուեցոյցին մէջ հակերուն կշիռները զատ զատ գրուած են , հաւասար չափով չըլլալուն համար . հետեւաբար երբ միեւնոյն չափով մէկէ աւելի հակեր , պարկեր , ևլն . գըտնուին՝ հարկ չ'կայ զանոնք մի առ մի նշանակել :

Օրինակ Ուղղարկելի հաշուեցոյցի

Գ. Թորոսեան ի Մանչէսթըր , Պոլիս Տ. Ազամ Ն. Տիւզէն-ճեանի ծախելով կը շրկէ £. 150. 19. — ի արժէքով 1 հակ տպածոյ , վճարելի 3 ամիսէն :

Արդ՝ Գ. Թորոսեան իր շրկելիք հաշուեցոյցը կը պատրաստէ հետեւեալ վերնագրով ,

Հաշուեցոյց մեկ հակ սպածոյի ճաւթու դրուած անոյս 18ին «Բերսիան» շոգեմատով Լիւրթուրէ ի Կ. Պոլիս , Տ. Ազամ Ն. Տիւզէնճեանի հրամանին եւ անոր հաշունն :

Յետոյ այս վերնագրին տակէն զոյգ մը ուղիղ գիծ քաշելով՝ հաշուեցոյցին Բ. մասին մէջ կը գրէ շրկուած ապրանքին մանրամասնութիւնը իրենց յատուկ սիւներուն մէջ , ինչպէս կ'երեւայ յաջորդ օրինակին վրայ :

Invoice of 1 Package shipped on the 18 th. Inst. per S. S. «Persian» from Liverpool to Constanti-nople, being by order and for account of Mr. Atam N. Duzendjian.

Manchester, Sept. 27 th. 1897

Pees		Price	£	s	d	£	s	d	
135	Width ²⁸ / ₈ 1/2 in. 55 yrd. Pink & Purple made up in 35 in. 7487 yrd.	12/4	83	5					
180	Width 26 in. 50 1/2 yd. yellow grounds made up in 35 in. 9174 yrd.	6/10 1/2	61	17	6				
6	Width 31 in. 24 yrd. Mexicans	3/8 1/2	1	2	3				
	Allowance for short length — 5 8	£	146	4	9				
	» » 13 jobs — 6. 6					—	16	5	
	» » 17 » — 4. 3								
		£	145	8	4				
		»	2	3	10	143	4	6	
	1 1/2 0/0 Discount								
Expenses									
	Packing of one Package		2	12	10				
	Freight to Cons/ple		1	15	8				
	Insurance			9			4	17	6
	Commission on £ 143 à 2 0/0						2	17	
			£	150	19				
	Due Septembre 14 th. 1897								

Ծանօթ. — Ուղղարկելի հաշուեցուցակները երբ օտար երկրէ կը գան՝ բնականաբար նոյն երկրին լեզուով գրուած կ'ըլլան , բնդմանապէս , անգլ. գաղղ. գերմաներէն , եւայլն — ինչպէս վերի օրինակը՝ որ Անգլիոյ Մանչէսթըր քաղաքէն՝ անգղ. լեզուով պատրաստուած է , որուն հայերէն քարգմանութիւնը կ'երեւայ յաջորդ երեսին վրայ :

Հաշուեցոյց 1 հսկ սպածոյի նաւթու զրուած անոյս 18 ին «Բերսիան» շոգեհաւով Լիվրքուլի ի Կ. Պոլիս, Տ. Աղաւ ն. Տիւրքեմեանի հրահանքին եւ անոր հաշոյն.

Մանկարար, 17 Սեպտ. 1897

A.D.	Եր.		Գ.	£	Շ.	Բ.		
6990	135	Լայն 20/28 1/2 ինչ. 55 երս.						
		վրդոյն . եւ կապոյտ սպոյ ծալք 35 ինչ.	12/4	83	5	—		
		7487 երս. բնդամէնք						
	180	Լնֆ. 26 ինչ. 50 1/2 երս. դեղ. սպո. ծլ. 36 ինչ.	6/10 1/2	61	17	6		
		9174 երս. բնդամէնք						
	6	Լայն 31 ինչ. 24 երս. պատաս	5/8 1/2	1	2	3		
		Տժգին պկս. ծրարներու հսր. — 5. 8						
		13 աւրուած » » — 6. 6						
		17 » » » — 4. 3						
			£	146	4	9		
		1 1/2 0/10 Ձեղչ						
		Մախֆ						
		Հակողչեք մեկ հակի		2	12	10		
		Նաւողչեք ի Կ. Պոլիս		1	15	8		
		Ապահովողչեք		—	9	—	4	17
		Յանձնաւորչեք 20/0 £ 143ի վրայ					2	17
							£	150
								19
		Վճարոր 14 Սեպտ. 1897						

Ստացագիր հաշուեցոյցի. — Հաշուեցոյցի մը գումարն ամբողջապէս վճարուած ասեն, սովորութիւն է որ ծախողը հաշուեցոյցին տակը կը գրէ

«Վասն ստացման»

եւ տակը թուականը գնելով կ'ստորագրէ, որով նոյն հաշուեցոյցին դրամը ստացած ըլլալը կը յայտարարէ:

Դրոշմաբուրք հաշուեցոյցի. — Ըստ Դրոշմաթղթի Օրէնքին, (1) հաշուեցոյցներուն 20 փարանոց դրոշմաթուղթ փակցնել պէտք է, եւ վերոյիշեալ ստացագիրը փակցուած դրոշմաթղթին վրայէն անցնելով կը գրուի և կ'ստորագրուի:

Արձանագրութիւն հաշուեցոյցի. — Վաճառականը ծախած սպրանքներուն հաշուեցուցակները սովորաբար գրչով կ'ընդօրին

[1] 11րդ գլխուն մէջ խօսած ենք Դրոշմաբարի Օրէնքին վրայ:

ձեռքէ Տեսր վաճառման կամ Հաշուեցոյցի տեսակ ըսուած մասնաւոր տետրակի մը կամ Ձեռաստորին մէջ: Շատեր փոխանակ գրչով օրինակելու, իրենց Նամակի ընդօրինակութեան տետրին մէջ, կամ ուրիշ թափանցիկ թղթերու վրայ մամուլի (1) միջոցաւ կ'ընդօրինակեն: Իսկ գնած սպրանքներուն հաշուեցոյցները 6 ամէ 6 ամիս, կամ տարուէ տարի ծրարելով կապոց մը կ'ընեն և վրան տարւոյն թուականը գրելով կը պահեն:

Հաշուեցոյցներուն մամուլով ընդօրինակութիւնը թէ՛ շուտ, թէ՛ անխալ և թէ՛ բնագրին հարապատ նման կ'ըլլայ, առանց անելի կամ պակաս բան մ'ըլլալու. զի գրչով ընդօրինակութեան մէջ կրնայ ըլլալ որ օրինակողը մէկ մասը կամ գո'նէ մէկ բառը գրելու մոռնայ կամ սխալ օրինակէ:

Ընդարձակ գործ ընող վաճառականները մասնաւորապէս վիճադրեալ կամ տպագրեալ հաշուեցոյցի թղթեր չինել կը տան, որոնց հակառակ իրենց վաճառատան անունը և հասցէն, (2) իրենց ծախած սպրանքին տեսակները կարգաւ կը նշանակեն, ինչպէս կ'երեւայ մեր առաջին օրինակին վրայ: Նոյնպէս տպագրուած հաշուեցուցակներուն Բ. մասին մէջ պէտք եղած գիծերը գծել էր արուի գործին պահանջման համեմատ:

Հաշուեցոյցի երեք օրինակ դրած ենք. երկուքը՝ Տեղական և մէկը՝ Ուղղարկելի հաշուեցոյց: Ուրիշ զանազան ձեւերով հաշուեցուցակներ ալ կրնայ շինուիլ. բայց, ինչպէս տրուած օրինակներէն կ'երեւայ, անոնց հիմնական ձեւերը գրեթէ նոյն են. անոնց պարունակութեան վերաբերեալ մասերը միայն կը տարբերին գործին տեսակին համեմատ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ք

1. — Մանուկ կարագեան ծախեց Տրապիզոնցի Պօլոս Արագեանի 1897 օգոստոս 12ին՝ 2 ծր. անթափ տպածոյ 30 ինչ. բայց ըրով 95 երա. գ. 2 դշ. եարտան. — 5 ծր. դունաթափ անկուածոյ 32 ինչ. 202 երա. գ. 2 1/4. — 10 ծրար անթափ անկուածոյ 35 ինչ. 440 երա. գ. 3 1/2. — 6 ծր. ամերիքան 7 վրար գ. 35. — օսմ. լիբան 115էն. — Վճարելի 91 օրէն:
2. — Սարգիս Շամբեան, յանձնառու ի Կ. Պոլիս, ծախեց

[1] Մանուկ ընդօրինակութեան կերպին վրայ գրած ենք Տոմարակալութեան մասին մէջ՝ Նամակի ընդօրինակութեան տետրին վրայ խօսած ասեմքիս:

[2] Որովհետեւ թուրիկոյ մէջ զանազան ազգեր կը գտնուին, ուստի աս վաճառակամք իրենց սպեալ հաշուեցոյցներուն նակարք իրենց անունը, հասցէն և գործին տեսակը՝ իրենց լեզուէն զատ օտար լեզուներով ալ սպագրել կը տան:

1897 ապրիլ 10ին Յ. Նշանեանի 5 հակ բուրդ Տ. Ն. Նշանագրով թ. 1—3ին մէջ՝ 60ական և թ. 4—5ին մէջ՝ 58ական հ.— Ապրայ 25 հ.— Գ. 12 ղշ. հօխան.— Զեղշ 50/10 կանխիկ վճարման համար:

3.— Յ. Մ. Ստամպուլուեան և Եղբարք, մեծաքանակ վաճառական ճերմակեղէն ապրանքներու, ի Կ. Պոլիս, ծախեցին 1897 յուլիս 19ին՝ Կարնեցի Յովակիմ Աբէեանի H. M. S. F. Նշանագրով թ. 280/281, 2 հակ ճերմակ մատամբով. 36 ինչ. 40 երտ. ծրարը 88 էն. մէն մի հակի մէջ 100 ական ծր.— օսմ. լիբրան 115 էն.— վճարելի 4 ամիսէն կամ 0/0 4 զեղշով:

Հ Ա Շ Ո Ւ Ե Գ Ի Բ Գ Ն Մ Ա Ն

Ապրանքի յանձնառուն՝ (տե՛ս թ. 28) ուրիշ քաղաք մը գտնուող իր յաճախորդին հրամանին համեմատ և անոր հաշույն համար գնած և զրկած ապրանքներուն հաշիւը պէտք է նամակաւ զրկէ անոր, այդ հաշիւին կ'ըսուի Գնման հաշուեզիր:

Գնման հաշուեզիրին մէջ, որ քիչ առաջ բացատրուած ուղղարկելի հաշուեցոյցին նմանութիւնն ունի, գնուած ապրանքին մանրամասնութիւնը իրենց յատուկ սիւներուն մէջ զրկելէ ետքը՝ պէտք է զրկել նաեւ յանձնառողչէքը, միջնորդչէքը, եթէ կայ, և այն ամէն ծախքերը, զորս յանձնառուն ըրած է ապրանքին պատատման, փոխադրութեան, ապահովագրութեան, նաւողչէքի կամ կառավարձքի համար, որոնց գումարը պէտք է աւելցնել ապրանքին գումարին վրայ:

Գնման հաշուեզիրին վերնագիրը ուղղարկելի հաշուեցոյցին վերնագրէն տարբեր կ'ըլլայ, փոխանակ ըսելու.

«Տ. այսինչ պարտի այնինչին, եւայլն» կը գրուի այսպէս,

«Հաշուեզիր գնման . . . ապրանքի՝ գնուած եւ բեռնուած «ձեռակը . . . ի ի հաշիւ . . . ի, եւայլն»

Ըսածնիս օրինակով մը բացատրենք: Կարնեցի Ս. Սէֆէրեան նամակաւ հրաման կը տայ ապրանքի յանձնառու Պ. Յակոբեանի, ի Կ. Պոլիս, որ իր հաշույն 10 հակ տպածոյ գնէ և իրեն զրկէ: Պ. Յակոբեան ապրանքը գնելով կը զրկէ իրեն, հետեւեալ Գնման հաշուեզիրը նամակաւ անոր յղելով:

Ա. ՕՐԻՆԱԿ ԳՆՄԱՆ ՀԱՇՈՒԵԳԻՐ

Պ. Յ Ա Վ Ո Ր Ե Ն Ա Ն Կ. Պոլիս, 10 Մարտ 1897
ՅԱՆՁՆԱՌՈՒ ԱՊՐԱՆՔԻ

Կ. ՊՈԼԻՍ
Թօփայեան հան թ. 7—8

Հաշուեզիր գնման 10 հակ տպածոյ, զոր գնեց Պ. Յակոբեան՝ Կարնեցի Տ.Ս. Սեֆէրեանի հրամանին համեմատ եւ անոր հաշույն համար, եւ ուղղարկեց այսօր իր հասցէին ի Տրասպիզօ գաղղիական շոգենառով:

Ս. Ս. Վր.	Երկրորդ	Երկր. Գ.	Երկր. Գ.	Երկր. Գ.
1 35	Երկրորդ տպածոյ	36 ինչ.	1000 2 1/2	2500 —
2 25	6 / գոյն	36 »	900 3 1/2	3150 —
3 25	Ասարցու մատամբով	36 »	800 2	1600 —
4 35	1 / գոյն կարմիր տպածոյ	34 »	1050 3	3150 —
5 35	» » ցալաւոր տպ.	36 »	1045 3 1/8	3265 20
6 35	Կարմիր ամառ. անկուածոյ	38 »	1055 3 1/2	3692 20
7 30	Գունաքաւ տպածոյ	32 »	905 2	1810 —
8 30	Ճերմակ յասակ » ծաղկ.	36 »	900 2 1/2	2250 —
9 25	Կարմիր տպածոյ դրկ.	36 »	995 5	4975 —
10 35	» » սարքան	36 »	1040 3 1/8	3250 —
310				29643 —
20	Պատասցու ամերիկան 6 լիպրա		30	600 —
				30243 —
Մասի				
	Հակողչէք	10 հակի 25էն	250	—
	Նաւողչէք	10 » 20 »	200	—
	Փոխադրողչէք	10 » 5 »	50	—
	Ապահովողչէք		27	—
	Յանձնառողչէք 2 0/0	29643 ի վրայ	593	1120 —
	Լ. Օ. 110 դե.էն	= Լ. Օ. 285. 12		31363 —
	Վճարելի 91 օրէն			
	Բ. Ս. Ե. Մ.		Գ. ՅԱԿՈԲԵԱՆ	

Յիշեալ գնման հաշուեզիրին համեմատ՝ Ս. Սէֆէրեան 31363 ղշ., որ կ'ընէ Լ. Օ. 285. 12, կը պարտի Պ. Յակոբեանի անոր հաշույն գնած ապրանքներուն համար: Պէտք է զիտել որ, ինչպէս քիչ առաջ ըսինք, ապրանքին արժէքին 30243ի գումարին վրայ աւելցած են 0/0 2 յանձնառողչէքը 593 ղշ. և 527 ղշ. այլ և այլ ծախուց գումարը. վասն զի Ս. Սէֆէրեան ո՛չ միայն ապրանքին արժէքինը կը պարտի Պ. Յակոբեանի, այլ նաեւ անոնց համար ըրած բոլոր ծախքերն և յանձնառողչէքը:

Բ. ՕՐԻՆՈՎ ԳՆՄԱՆ ՀԱՇՈՒՆԳՐԻ

ԹԷԲԷՆԱՆ ԵՂԲԱՐԲ
ՅԱՆՁՆԱՌՈՒՔ Ի ՄԱՐՍԻԼԻԱ

Մարտիկիս, 1 Յունվար 1897

TÉKÉIAN FRÈRES
COMMISSIONNAIRE
à Marseille



Տ. Մ. Սիեֆոնեանի, ի Կ. Պոլիս, հրատարակելու համարելուս եւ իր հաշույնի համար գնուած եւ «Օրորա» շոգեկաւով դրկուած հե՛սեւեայ սպրակները.

Մ. Ս.					
Թ. 6—17	12 սկ. տր. գուս կո. 2040 ֆլ. 100 ֆ. 40 Ֆ.			816	
	Ձեղչ 3 0/0			24	
				792	
Թ. 70—80	11 պրկ. խամուկ գուս կո. 900 ֆ. 1 1/2 Ֆ.	1350			
	Ձեղչ 4 0/0	54		1296	
				2088	
Ծախք					
	Կոնոյչեք		6	50	
	Քեռնակրոյչեք		32	50	
	Հակոյչեք		25		
	Միջնորոյչեք 1 0/0		21		
	Յանձնառոյչեք 2 0/0 2088 ի վրայ		42	127	
	Բ. Ս. եւ Մ.		Ֆ.	2215	
	Վճարելի Յունվար 31 ին				

ԹԷԲԷՆԱՆ ԵՂԲԱՐԲ

Յանձնառուս սպրակները բեռնելէն անմիջապէս ետքը, պարտի հազորդել զայն իր յաճախորդին նամակաւ մը, ներփակելով անոր մէջ զրկած սպրակներն Գնուան հաշուեզիրն եւ սպրակներն բեռնագիրը, նշանակելով մասնաւորապէս սպրակներն ինչ ճամբով զրկած ըլլալը, վճարորը եւ գումարը, հրաւիրելով սպրակներն որ հաշուեզիրը քննելէ ետքը հաշուի անցնէ, կամ փոխարէնը զրկէ ըստ պայմանի:

Այս կարգի նամակներուն վրայ ալ ուսանողաց գաղափար մը տարու համար՝ գնման հաշուեզիրի Բ. օրինակին ծանուցման նամակը կը դնենք հոս:

ԹԷԲԷՆԱՆ ԵՂԲԱՐԲ

Մարտիկիս, 1 Յունվար 1897

ՅԱՆՁՆԱՌՈՒՔ Ի ՄԱՐՍԻԼԻԱ

TÉKÉIAN FRÈRES

COMMISSIONNAIRE
à Marseille



Մեծապահի Տեր

Մ. Սիեֆոնեան

Ի Կ. Պոլիս

Պատիւ ունինք ծանուցանել Ձեզ թէ՛ այսօր մեկնող «Օրորա» շոգեկաւով Ձեզ քանիք Ձեր սպրակներ 12 տակաւ շարքն եւ 11 պարկ խամուկն: Ներփակել կը գտնէք անոնց բեռնագիրն եւ հաշուեզիրը, որուն գումարն է Թ. 2215. — զոր, յետ քննուածէն, հասցէք անցնել մեր պահանջքին 1897 Յունվար 31 թուականով:

Յիշեալ սպրակները ապահովագրել չ'տուինք, որովհետեւ այդ մասին հրաման չ'էիր տուած մեզ:

Կը յուսանք որ զո՞ն պիտի մնար յիշեալ սպրակաց թէ՛ տէսակէն, թէ՛ քանիք աճնուածէն եւ թէ՛ ծակերու չափաւորութենէն, եւ պիտի հասցնէք մտերս նորանոր հրամաններ զրկել մեզ, զորս պիտի շանանք Ձեզ նպաստոր կերպով գործադրել:

Հասցէք, Տէր, ընդունիլ մեր յարգանքները:

ԹԷԲԷՆԱՆ ԵՂԲԱՐԲ

Գնման եւ վաճառման հաշուեզիրն տակ կը գրուի Բ. Ս. եւ Մ. սպրակները, որք «բացի սխալներէն եւ մոռացումներէն» բառերուն վերջնատառերն են, որով ըսել կ'ուզուի թէ՛ եթէ հաշուեզիրն մէջ հաշուի սխալմունք եղած է կամ բան մը գրուիլ մոռցուած է, վերջէն կրնայ ուղղուիլ:

Նայնպէս հաշուեզիրն տակ կը գրուի անոր գումարին երբ վճարելի ըլլալը, ինչպէս կ'երեւայ մեր օրինակներուն վրայ:

Յանձնառուք՝ իրենց գնման եւ վաճառման հաշուեզիրը վաճարականութիւն տալու համար, շատ անգամ գնանք կ'ստորագրեն եւ այնպէս կը զրկեն իրենց յաճախորդներուն:

Իրոշմարտը հաշուեզիրը. — Հաշուեզիրն պէ՛տ գնման եւ վաճառման հաշուեզիրն ալ գրուի օրէնքին ենթակայ ըլլալով անոնց ալ 20 փր. նոց գրուածութեամբ փակցնել հարկ է:

ՀՐԱՀԱՆԳ

1. — Գ. Մինասեան, ի Սէլանիկ, Յ. Կարապետեանի հաշուոյն, որ ի Կ. Պօլիս, 3 տակառ գինի կը գնէ և 1897 Յունվար 13 թուականով կը զրկէ նոյնին հասցէին՝ Փրանսական Տէրրա շոգեհատով. Յ. Կ. նշանագրով թ. 77-79, ընդամէնը 200 հ. գ. 3 1/4 զշ. զանազան ծախք 120 զշ. (տակառի և լին.). — նաւողչէք 40 զշ. տակառին. — յանձնաւողչէք 1 1/2 0/0. — ապահովողչէք 10 զշ. — վճարելի կանխիկ. — լիւր. օսմ. 108 էն:

ՀԱՇՈՒԵԳԻՐ ՎԱՃԱՌՄԱՆ

Երբ յանձնառուն՝ ուրիշ քաղաք մը գտնուող իր յաճախորդին իրեն զրկած ապրանքը անոր հրամանին համեմատ և անոր հաշուոյն ծախէ, պարտաւոր է նոյն ապրանքը քանի՜ ծախած ըլլալուն հաշիւը նամակով մը զրկել անոր: Այս հաշիւին հաշուեցիր վաճառման կ'ըսուի:

Վաճառման հաշուեցրին մէջ ալ, որուն հիմնական ձեւը հաշուեցոյցին նման է, ծախուած ապրանքին կարեւոր մանրամասնութիւններէն զատ՝ որք իրենց յատուկ սիւներուն մէջ կը գրուին, պէտք է գրել նաեւ զեղջը, յանձնաւողչէքը, երաշխողչէքը, միջնորդչէքը, նաւողչէքը, մաքսատուրքը՝ եթէ ապրանքը օտար երկրէ եկած է, և այն ամէն ծախքերը, զորս յանձնառուն ըրած է այդ ապրանքին վաճառման առթիւ, և որոնց գումարը պէտք է պակսեցնել ապրանքին գումարէն:

Վաճառման հաշուեցրին վերնագիրը գնման հաշուեցրին վերնագրին պէս է, միայն բառերու փոփոխութեամբ:

Հստակ օրինակով մը բացատրենք: Կ. Բարսեղեան և Ընկ. ի Կ. Պօլիս, Մանչէսթըրի թ. Սրապեանէն ստացած 3 հակ տպածոյները ծախելով, նամակով հաշիւը կը զրկեն անոր, նշանակելով անոր մէջ թէ՛ ապրանքները քանի՜ ծախուեցան, ինչ ծախքեր եղան, և թէ գուտ ո՞րչափ առնելիքը կը մնայ իրենց վրայ:

Ահաւասիկ այդ վաճառման հաշուեցրի:

Ա. ՕՐԻՆԱԿ ՎԱՃԱՌՄԱՆ ՀԱՇՈՒԵԳԻՐ

Կ. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Կ. Պօլիս, 20 Յունվար 1897

Կ. ՊՕԼԻՍ

ՆԵՐՈՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՏԱՆՈՒԹԻՒՆ

Հաշուեցիր վաճառման 3 հակ տպածոյի՝ Մանչէսթըրի Տ. թ. Սրապեանի հրամանին համեմատ և անոր հաշուոյն համար ծախուած կանխիկ ձեռանք Srg. Կ. Բարսեղեան և Ընկ. ի Կ. Պօլիս.

Թ. Ս.	Մր.				
1	150	ձեւմակ տպածոյ	4500	2 1/2	11250
2	200	1/4 գ. կարմիր	5900	3	17700
3	150	Գունաքափ	4425	2	8850
	15	Պատասցու ամերիկան 8 լիպ. 24 երս.		36	540
					38340
					1150
					37190
		Չեղչ 3%			
		Մախի			
		Մախուտի 3 հակի	2339	—	—
		Միջնորդչէք 1%	372	—	—
		Փոխադրողչէք	80	—	—
		Յանձնաւողչէք 2% 37190 ի վրայ	744	—	3535
		Լ. 0. 100 դե.եց			33655
		Բ. Ս. և Մ.			

Կ. Բարսեղեան և Ընկ.

Վերոյիշեալ վաճառման հաշուեցրին համեմատ՝ Կ. Բարսեղեան և Ընկ. 37190 զշ. կը պարտին թ. Սրապեանի, անոր հաշուոյն ծախուած ապրանքին համար: Պէտք է զիտել որ, ինչպէս թէ՛ ստաջ ըսինք, ապրանքին 37190 ի գումարէն իջուած է 0% 2 յանձնաւողչէքը 744 և 2791 այլևայլ ծախուց գումարը. վասն զի յանձնաւողչէքը եւ միւս ծախքերը թ. Սրապեան Կ. Բարսեղեան և Ընկ. ն վճարել պարտական ըլլալով՝ անոր պահանջած 37190 էն իջեցնել բնական է:

Բ. ՕՐԻՆԱԿ ՎԱՏԱՌՄԱՆ ՀԱՇՈՒԵԳՐԻ

Մարտիիս, 30 Յուլիս 1897

Հաշուեցիր վաճառման 38 ծր. պարսկական մեսախի, որք Տրց. Հ. Շեխեան եւ Ընկ-ն կողմեն զրկուած եւ անոնց հաշւոյն հաւեար կանխիկ ծախուած են Լուի Տեկրան եւ Ընկ-ն ձեռամբ.

Հ.Շ.	1-38	1291 80	Քիլ. 38 ծր. պարսկական մեսախ			
		47 30	» ապրայ			
		1244 50	Զուս կեիւ, քիլ. 27 քր.էն Զեղ 1 0/0	33601	50	
				336		
				33265	50	
			Ծախիք			
			Միջնորդչեք 1/3 0/0	110	90	
			Յանձնաւորչեք եւ երաւորչեք 3 0/0	997	95	
			Նաւորչեք եւ ապահովորչեք	614	80	
			Մաքսաւորք	75	40	
			Փոխադրորչեք, նամակի, եւայլն	90	45	
			Մքերորչեք	91	20	
			Ապահովորչեք 1 0/00 (մքերաւորչի)	33	25	
			Կուորչեք եւ մանր ծախիք	37	90	2051 85
			Բ. Ս. եւ Մ.	Ֆ.	31213	65

ԼՈՒԻ ՏԵԿՐԱՆ ԵՒ ԸՆԿ.

Յանձնաւորն ապրանքը ծախելէն ետքը՝ պարտի ծանուցանել իր յաճախորդին նամակով մը. ներփակելով ծախած ապրանքին վաճառման հաշուեցիրն, նշանակելով մասնաւորապէս ապրանքին գումարը եւ վճարօրը, հրաւիրելով զրկողն որ հաշուեգիրը քննելէ ետքը հաշիւի անցնէ, կամ փոխարէնը կը զրկէ միեւնոյն ատեն ըստ պայմանի:

Վաճառման հաշուեգրի Ա. օրինակին ծանուցման նամակն ալ կը դնենք հոս:



Կ. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Կ. Պոլիս, 20 Յունվար 1897

Կ. ՊՕԼԻՍ



Կիւլպէնկեան-Խան Թ. 19-20



Մեծապահիւ Տիար Թ. Մրապեան

ի Մանչեսթր

Ներկայիս նպատակն է ծանուցանել Ձեզ թէ՛ Ձեր հրամանին համեմատ եւ Ձեր հաշւոյն համար, ծախեցիրն եւ յանձնեցիրն Ձեր զրկած Թ. 1-3 երեք հակ տպածոյները:

Ներփակեալ կը զրկենք Ձեզ սոյն վաճառման հաշուեցիրն, որուն գումարը Լ. 0. 336.55 անցուցիրն Ձեր պահանջքին 20 Յունվար 1897 թուականաւ:

Նաո ուրախ պիտի ըլլանք, եթէ այս առաջին գործէն զոհ մնալով՝ հաշիւը շարունակել մեզ հետ Ձեր յարաբերութիւնները, որոնց մէջ պիտի չանանք ամէն կերպով հասելի եւ օգտակար ըլլալ Ձեզ:

Ընդունեցէք, Տէր, մեր բարեկամական ողջոյնները:

Կ. Բարսեղեան և ընկ.

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

1. — Յ. Գասպարեան, ի Կ. Պոլիս, Մանչեսթրի Գ. Պօլսեանի կողմէն իրեն զրկուած Գ. Պ. նշանագրով եւ 124 / 133 քիւլերով 10 հակ մանածը կը ծախէ անոր հաշւոյն. — Թ. 124-136 հակերուն մէջ կան 20 ական կպ. վաթէր մանած Թ. 8/10 գ. 40 դ. կապոցը. — Թ. 127-128 ին մէջ՝ 20 ական կպ. վաթէր մանած Թ. 16/24. գ. 47 1/2. — Թ. 129-131 ին մէջ՝ 40 ական կպ. կապոցա մանած Թ. 28/32 գ. 75. — Թ. 132-133 ին մէջ՝ 120 ական կպ. գուլպացու Թ իրէ ճերմակ Թ. 6/16 գ. 60 դ. կապոցը. — Ձեզ 3 0/0. — միջնորդչէք 1 0/0. — յանձնաւորչէք 2 0/0. — քրաւորչէք 2 0/0. — Ծախք, Մաքսատուք 10 հակին 1841 դրշ. — փոխադրորչէք եւ մանր ծախքեր 131 դրշ. — Լ. 0. 105 էն:



Փ Ո Ւ Ա Գ Ր Ա Գ Ի Ր

Երբ ապրանք մը ցամաքի ճամբով ուրիշ քաղաք մը ղրկուի՝ ապրանք ղրկողը փոխադրող-յանձնառուի (Տէ'ս Թ. 30), կառավարի, ջորեպանի, կամ երկաթուղիի ընկերութեան մը կը դիմէ, որոնց գործն է իրենց յանձնուած ապրանքները որոշեալ տեղը փոխադրել:

Արդ՝ ղրկողը նամակ մը կը տայ փոխադրող կառավարին, ջորեպանին, ուղղեալ ապրանքն ընդունող անձին, որ ապրանքը կ'ընդունի այդ նամակին համեմատ, որուն Փոխադրագիր կ'ըսուի:

Փոխադրագիրը՝ ապրանքը ղրկողին և կառավարին, ջորեպանին կամ երկաթուղիի ընկերութեան միջև կնքուած պայմանագիր մ'է, որով այս վերջինք կը պարտաւորին իրենց յանձնուած ապրանքը որոշեալ ժամանակին ուրիշ քաղաք մը այսինչ անձին տանիլ յանձնելու, փոխարէն առնելով վարձք մը, որ ընդհանրապէս ծանրութեան, այսինքն, հօխայի կամ քիօի վրայ կը հաշուի, և տեղւոյն հեռաւորութեան և ճամբաներուն դժուարութեան համեմատութեամբ աւելի կամ պակաս կ'ըլլայ:

Փոխադրագրին խմբագրութեան և պարունակութեան մասին որոշ դադափար մը տալու համար՝ Առեւտրական Օրինագրքին հետեւեալ յօդուածները առաջ կը բերենք:

Յօդ. 61. «Իրաւիյեէ գախմէսի թապիր օլունան սէնէա՝ մալ կէօնտէրէն շախս իլէ քիրաճը վէ քէզալիք մալ կէօնտէրէն շախս իլէ սրփարըքեար վէ էմանէթճի՝ վէ քիրաճը պէյնինտէ օլան մուգավէլէյի հավի պիր սէնէա տիր»:

Յօդ. 62. «Մէզքիւր իրաւիյեէ գախմէսինտէ թարիս օլմադ վէ նազլ օլունաճագ էշեանըն մըգտար վէ ճընը վէ բէնկլէրինին նէվի, վէ քաշ կիւն գարֆընտա մահալլինէ իսալ գըլընմաղը վէ նազլ վէ իսալընա միւթահիւտ օլան սրփարըքեար վէ էմանէթճիին իսմ վէ շէօհրէթ վէ մահալլը իգամէթի, վէ էշեանըն քիմէ թէսլիմ օլունաճագը վէ քիրաճընըն իսմ վէ շէօհրէթ վէ սաքին օլտուղը մահալլը վէ իւճրէթի նազլիյեէնին մըգտարը, վէ թաքին օլունաճագ միւտտէթ գարֆընտայ եէթիշաիրէմէզ իսէ՝ էտա օլունաճագ թագմինաթ քէյֆիյեէթի մուհարրէր վէ միւնտէրիճ պուլունմագ, վէ սրփարըքեար վէ էմանէթճի վէ եախօա իրաւ իսէն շախս թարաֆլարընտան իմզա գըլընմագ վէ համիշի սէնէտտէ կէօնտէրիլէն էշեանըն նօմէրօ վէ ալամէթի նէ իսէ՝ իշարէթ օլունմագ վէ սէնէաի մէզքիւր սրփարըքեար վէ էմանէթճիին տէֆիթէրինէ այնը իլէ գայա գըլընմագ լաղըմէտէն տիր»:

Փոխադրագրին ընդօրինակութիւնը կարելու է, երբ փոխադրագիրը կորսուելու կամ անոր վրայ վէճ մը ծագելու ըլլայ:

Փոխադրագիրը նամակի ձեւով գրուած՝ օրինական մասնաւոր ձեւ մը չ'ունի, բաւական է որ Օրէնքին պահանջած բոլոր

կէտերը պարունակէ: Փոխադրագիրք ընդհանրապէս տպուած թղթեր կ'ըլլան՝ ապրանքին քանակութեան, վարձքին, թուականին եւն. կէտերուն համար պարսպ մասերով, որք վերջէն գրչով կը լեցուին:

Փոխադրողը ըստ օրինի պատասխանատու է՝ եթէ, առանց արգելիչ պատճառի, ապրանքը ճամբան կորսուի կամ ա՛նանկ ֆլաս մը կրէ, որ նոյն իսկ ապրանքին գէշութենէն առաջ եկած չ'ըլլայ: Իսկ ընդհակառակը պատասխանատու չ'է, երբ հեղուկ ապրանք մը թափի, կամ դիւրարեկ նիւթեր կորսին, եթէ այդ մասին առաջուց մասնաւոր պայման դրուած չ'ըլլայ: Երկրորդ՝ ապրանքը ուշացած ատեն ընդունողը փոխադրողէն բան մը պահանջելու իրաւունք չ'ունենար, եթէ յապագումը արգելիչ պատճառով տեղի ունեցած է, ինչպէս են, ողողմունք, փոթորիկք եւն: Նոյնպէս փոխադրողը պատասխանատու չ'ըլլար, եթէ ապրանքը ընդունելէ և փոխադրողէքը վճարելէ ետքը վէճ մը ծագելու ըլլայ: Ըսել է թէ՝ ապրանքը ընդունելէ և փոխադրողէքը վճարելէ առաջ մանրամասնարար ապրանքը քննել, և, եթէ ֆլասուած տեսնուի՝ առաջուց ֆլասը հաստատել և հատուցում պահանջել պէտք է. վասն զի, վաճառականը ո՛չ միայն սոյն երկու կարելուր կէտերը գործադրելէն ետքը փոխադրողէն բան մը պահանջելու իրաւունք չ'ունենար, այլ անոնցմէ միայն մին ալ կատարելէն ետքը, դա՛րձեալ կը ղրկուի իր իրաւունքէն: Այսպէս եթէ վաճառականը ֆլասուած ապրանք ընդունի, և իր ֆլասին իբր փոխարինութիւն փոխադրագրին վարձքը չի վճարէ, կարծելով թէ այս կերպով ամէն բան կարգադրուած է, կը սխալի: Վասն զի ատեն անցնելէ ետքը՝ կրնայ ըլլալ որ փոխադրողը վաճառականին դէմ դատ բանայ, և դատարանը՝ չի կրնալով այլեւս հաստատել թէ՛ ապրանքը ո՞րու ձեռք գտնուած ատեն ֆլասուած է, կը դատապարտէ գվաճառականը փոխադրողէքը և երբեմն ուրիշ ծախքեր ալ վճարելու:

Փոխադրագրին մէջի բոլոր թուանշանները պէտք է գրով ալ գրել, որպէս զի չ'ըլլայ թէ փոխադրողն՝ որուն քով պիտի մնայ փոխադրագիրը, թուանշանները ի նպաստ իրեն փոխէ: Փոխադրութեան պայմանեալ օրերը փոխադրագրին թուականէն պսելուն համար՝ պէտք է օրուան թիւն ալ գրով գրուի, որպէս զի փոխադրողը թուանշանները ուզածին պէս չի փոխէ:

Փոխադրագրին ձակատը կամ ստորելը պէտք է գրել փոխադրողէքին հաշիւը, գոր ապրանքը ընդունողը պարտի վճարել: Սոյն գումարը կը բաղկանայ ընդհանրապէս փոխադրողէքէն՝ և դրոշմատուրքէն. կան փոխադրագրեր, որոնց մէջ ստոնցմէ գատ կը նշանակուին նաեւ ապահովողէքն, և ապրանքին ամբողջ արժէքը կամ անոր միացորդը, որ պիտի վճարուի ապրանքը յանձնուած ատեն, եթէ այդ կերպ պայմանեալ ըլլայ:

Իրոշմաբուրք Փոխադրագրի. — Փոխադրագրին 10 փր.նոց գրոշմաթուղթ փակցնել պէտք է:

Ա. ՄԱԽՈԽԵԱՆ

ՅԱՆՉՆԱՐՈՒ ՓՈՒԱԳՐՈՒԹԵԱՆ
Ի ՏՐԱՊԻԶՕՆ

Ոչ ոք իրաւունք պիտի ունենայ ինձմէ բան մը պահանջելու, եթէ նախ իր վնասուն փոխարէնը պահանջած չ'ըլլայ փոխադրողէն :

Փոխադրողէն 726
Ֆրանսարուր — 1/4
Լրջ 726 1/4

Տրապիզոն, Տաւրիս մէկ Մայիս 1897

Մեծապատիւ Յովակիմ եփ. Ֆեկերճեան

Ի Գովրէժ

Նշան. գիր	Թ.	Կշիռ
Գ. Ս.	1	60
	2	58
	3	60
	4	59
	5	62
	6	63
	7	61
	8	57 1/2
	9	61 1/2
	10	63
		605

Աստուծոյ պաշտպանութեամբն եւ սեղուոյ Տէրի պաշտպան Անուխ շորեպանին ձեռամբ՝ պիտի ընդունիմ Տասը պարկ խաճուտ, որոնց ամենուն վրայ ալ լուսանցիկն մէջ գրուածին պէս նշանագիր եւ բխեր գրուած են. ընդամենը վեց հարիւր հինգ հոխայ է. Զորեպանը միևնույն Զեր վաճառատան դուռը պիտի բերէ զանոնք անվնաս երեսուն օրուան մէջ, պայմանաւ որ եթէ սոյն որոշեալ օրն անցնի՝ իր վարձին 1/3 ը վար պիտի դնէք: Պիտի վճարէք իրեն մէկ մի հարիւր հոխային հարիւր քսան դո. նաեւ տասը փրջ՝ փոխադրողին զրոգմարդին համար:

Ա. ՄԱԽՈԽԵԱՆ

ՆՔԱՆՕՔ.— Ս.ձանց իմ հաւանութեանս աւելցած կամ արտած մասերն ոչինչ պիտի համարուին:

A. MAHOKIAN

COMMISSIONNAIRE DE TRANSPORT
à TRÉBIZONDE

On sera sans recours contre le Commissionnaire, dans le cas d'avarie ou manque de marchandises, si au préalable on n'a fait ses diligences contre le voiturier.

Voiture 726
Timbre — 1/4
726 1/4

Trébizonde, le onze Mai 1897

Monsieur O. Fénérdjian

TAURIS

Marques	Nm.	Poids
K. S.	1	60
	2	58
	3	60
	4	59
	5	62
	6	63
	7	61
	8	57 1/2
	9	61 1/2
	10	63
		605

A la garde de Dieu et sous la conduite de Délibachoglou Ahmed muletier de notre ville, vous recevrez dans le délai de trente jours, sous peine au muletier de perdre le tiers du montant de sa voiture.
dix sacs café
le tout marqué et numéroté comme en marge, pesant ensemble six cent cinq ocques. Il les apportera devant la porte de votre magasin. Vous lui payerez cent vingt piastres pour cent ocques et rembourserez dix paras pour le timbre de la présente.

A. MAHOKIAN

NOTA. — Seront nulles toutes surcharges ou ratures non approuvées par le signataire.

**COMPAGNIE
DES MESSAGERIES MARITIMES**
LIGNES DE LA
MÉDITERRANÉE ET MER NOIRE

le 189.....

Ont été chargées sur le Paquebot à Vapeur
Français ou seront chargées sur l'un des deux Paquebots
suivants, pour être transportés et être délivrés, à l'heureuse arrivée
du Paquebot de la Compagnie
les marchandises marquées comme ci-après:

Connaissance N.

	F.	C.	Marques	Numéros	Nombre de colis	CONTENU DÉCLARÉ	Poids	Mesures	Valeur.	Somme assurée	Taux du fret
Fret											
Chapeau du Capitaine											
	F. C.										
Frais et déboursés de la Compagnie	}										
Remboursement	}		(Suite de frais del' Expéditeur Sur valeur de la marchandise)								
Assurance jusqu'à sur fr. à %											
Jusqu'à Marseille sur fr. à % } fr.											
De Marseille à sur fr. à % } fr.											
TOTAL											
Change maritime											
Commission de remboursement											
de consignation ou de transit au dehors											
TOTAL payé d'avance, F.											
TOTAL à payer à dest. on F.											
<i>VU, BON à EMBARQUER</i>											

LE CHARGÉ

LE CAPITAINE

Ծանոթ. — Բեռնազրկին միւս երեսը տարւած կ'ըլլան այլեւայլ յօդուածներ, որոնք ֆոխազրուեան պայմանները կը պարունակեն:

Երկաթուղիի ընկերութիւնք՝ իրենց փոխադրած ապրանաց համար Ընդունագիր անունով թուղթ մը կը տան բեռցնողին: Այդ թուղթն ալ գրեթէ փոխադրագրին պարունակութեամբ կ'ըլլայ. այսինքն, անոր մէջ կը գրուին հակին նշանագիրը, թիւը, կշիւը, եւն: Ընդունագիրը երկու օրինակ կ'ըլլայ. մէկը՝ բեռցնողին կը տրուի, և միւսը՝ ապրանքին հետ ընդունողին կը յանձնուի:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ

1897 Մարտ 28 ին՝ Ա. Մախոսեան 10 հակ տպածոյ զրկեց Տրապիզոնէն Կարին Յովակիմ Խրէեանի, Պէյթուլլահ անուն պարսիկ ջորեպանին միջոցաւ. — ամէն մէկ հակին 80 զշ. փոխադրողէք որոշելով. — 12 օրէն Կարին հասցնելու, եւ եթէ ուշանալու ըլլայ՝ վարձքին ¹/₄ը վար դրուելու պայմանաւ. — Գրողմաթուղթ 10 փոյ. — հակերուն նշանագիրն է Յ. Խ. թիւերը 71-80:

Բ Ե Ռ Ն Ա Գ Ի Ր

Բեռնագիրը՝ նաւապետէն ստորագրուած և բեռնատիրոջ տըրուած ընկալագիր մ'է, որով նաւապետը ապրանքին իր նաւը բեռցած ըլլալը և որոշեալ նաւահանգիստ մը փոխադրելու յանձնառութիւնը կը յայտնէ: Ի՛նչ որ է փոխադրագիրը ցամաքի ճամբով փոխադրութեան համար, նոյն է բեռնագիրը ծովու ճամբով փոխադրութեան համար:

Բեռնագրին մէջ կը գրուի թուականը, բեռցուած ապրանքին տեսակը, բեռնատիրոջ կամ ապրանքը ընդունողին անունը և հասցէն, նաւապետին անունը և տեղը, նաւուն անունը և տարողութեան տակառաջափը (1), նաւուն մեկնած և երթալիք տեղերը, և լուսանցքին մէջ՝ նաւողչէքն եւ բեռցուած հակերուն նշանագիրն ու թիւերը:

Բեռնագիրը կը շինուի Հրամանի, Ռոշեալ մեկուռ և Բերոդիս կամ Ներկայացնողի:

Բեռնագիրը վաճառելի թղթի պէս ուրիշի կրնայ փոխանցուիլ: Եթէ Հրամանի շինուած է՝ ապրանքին տէրը բեռնագրին ետին « Բեռնագրիս մեջ նշանակուած ապրանքները... ին նրանանիս յանձնեցիք » գրելով կ'ստորագրէ. ալ ևս այն մարդը կ'ըլլայ տէր բեռնագրին մէջ գրուած ապրանքին, զոր նաւէն հանելու համար պէտք եղածը ինք կ'ընէ: Եթէ Ռոշեալ մեկուռ անունին գըր-

[1] Տակառաջափ [թօնո] նաւուն մեծութիւնը, այսինքն, քանի՜ տակառաջափ ապրանք պարունակելի կը ցուցնէ. ծովային տակառաջափ 1000 ֆիւտ է: Երբեմն՝ քէւ քէւ, բայց բեռցնելու համար օտ աշխատութիւն պահանջող ապրանքներու համար, եթէ 1000 ֆիւտէն ալ պակաս ըլլան՝ դարձեալ մէկ տակառաջափ համար նաւողչէք կը հաշուեն:

ուած է՝ որ քիչ կը պատահի, նաւապետին գիտութեամբ եւ անոր ստորագրած մէկ գրութեամբ միայն ուրիշի կը փոխանցուի բեռնագիրը: Իսկ եթէ Բերոդիս կամ Ներկայացնողի է՝ առանց որ և է ձեւակերպութեան, բեռնագիրը ձեռքէ ձեռք կ'անցնի եւ ո՛րուն ձեռքը որ գտնուի՝ իրաւունք կ'ունենայ անոր պարունակած ապրանքը նաւապետէն պահանջելու:

Բեռնագիրը չորս օրինակ կը շինուի, Ա. ը՝ բեռցնողին համար, որով սա կրնայ, ուզած ատեն, ճամբան եղած ապրանքը ծախել, կամ փոթորիկի պատճառաւ ապրանքը ծովը նետուած ատեն՝ հաստատել այդ նաւը ունեցած ապրանքները. Բ. ը՝ ապրանքը ընդունողին համար, որպէս զի նաւը հասած ատեն՝ անով ապրանքը նաւապետէն պահանջէ և ստանայ. Գ. ը՝ նաւապետին համար, որով սա իր պարտքը կատարած ըլլալը հաստատելով՝ նաւողչէքը կ'ստանայ ապրանքը ընդունողէն, եթէ բեռցնողը առաջուց վճարած չ'ըլլայ. Դ. ը՝ նաւայարդարին կամ նաւապետին համար, որով կարող կ'ըլլայ իր նաւուն նաւողչէքի ընդհանուր գումարը գիտնալ եւ նաւապետին հետ իր հաշիւները ըստ այնմ կարգադրել:

Քանի որ բեռնագիրը վերոյիշեալ ձեւակերպութեամբ ձեռքը գտնուող անձը անոր մէջ գրուած ապրանքին տէրն է, հետեւաբար շատ անգամ դրամի պէտք ունեցող վաճառականք բեռնագիրը գրաւ տալով՝ փոխառութիւն կ'ընեն սեղանաւորներէ:

Բեռնագիրը սովորաբար տպուած կ'ըլլան՝ որոշեալ տեղերը, օրինակի համար, բեռցնողին կամ ընդունողին անունին, քանակին, եւն. մասերը պարսալ թողլով, որք վերջէն գրչով կը լեցուին:

Բեռնագրին շարագրութեան ձեւը ամէն նաւահանգիստի մէջ նոյնը չ'է: Հին ձեւերով խմբագրուած բեռնագիրներ կան, որք դարերէ ի վեր նոյն ձեւով կը գործածուին Միջերկրականի մէկ քանի նաւահանգիստներուն մէջ: Աւելի նոր ոճով և աւելի կանոնաւոր գրուածներ ալ կան: Բայց ի՛նչ ձեւով և ի՛նչ ոճով ալ գրուած ըլլան՝ բեռնագիրը ամէն տեղ ալ գրեթէ միեւնոյն վաճառականական արգիւնքն և օրինական գորութիւնն ունին:

Թէև նաւային ընկերութիւնք իրենք կը տան բեռնագիրը, և վաճառականը պէտք չ'ունի բեռնագիր գրելու կամ պատրաստելու, այսուհանդերձ մենք դրած ենք հոս նոր ոճով նաւային Մեքսիկայի Մարիթիմ ընկերութեան բեռնագիրը. Տե՛ս Թ. 102-103:

Յայտագիր, (Մանիֆէստ) . — Յայտագիր կամ գործի լեզուով Մանիֆէստ կ'ըսուի այն ցուցակին, ուր նաւապետին ստորագրութեամբ նշանակուած կ'ըլլան նաւուն ամբողջ բեռներուն մանրամասնութիւնը, այսինքն, նշանագրերը, թիւերը, ապրանքներուն տեսակը, զրկողներուն և ընդունողներուն անունները, կշիւը, նաւողչէքին գինը, նաւողչէքը, եւն:

Նաւը նաւահանգիստ հասած ատեն՝ 24 ժամու մէջ նաւապետը պարտաւոր է յանձնել այդ յայտագիրը տեղւոյն մաքսատան: Դրոշմարուղիք բնոնագրի. — Բեռնագրին ալ փոխադրագրին պէս 10 փր. նոց դրոշմաթուղթ փակցնել հարկ է:

ՍՏԱՅԱԳԻՐ ԿԱՄ ԸՆԿԱՂԱԳԻՐ

Ստացագիր կ'ըսուի այն թղթին, որով ստորագրողը կը յայտարարէ որ և է գումար մը կամ արժէնիւթ մը ուրիշէ ստացած ըլլալը: Դրամ կամ արժէնիւթ տուողը այդ թղթով, ի հարկին, կրնայ հաստատել այդ գումարը կամ այդ արժէնիւթը տուած ըլլալը:

Ստացագիրը նոյն իսկ գործողութիւնը կատարուած ատեն պէտք է առնել ընդունողէն: Առեւտուրի մէջ ամէն վճարումի համար ստացագիր առնել սովորութիւն եղած չ'է: Ինչպէս քիչ առաջ ըսինք, հաշուեցուցակ մը վճարուած ատեն ստացողը անոր տակը Վասն ստացման գրելով կ'ստորագրէ. ահա ա՛յդ իսկ ստացագիր մ'է: Նոյնպէս առեւտրական թղթերուն, որոնց վրայ յաջորդ գլխուն մէջ պիտի խօսինք, վճարման իբր ստացագիր կը ծառայէ թղթին ետին Վասն ստացման գրելով ստորագրելը:

Կան ուրիշ տեսակ վճարումներ, որոնց համար, ինչպէս մեր տուած օրինակներէն կ'երեւայ, պէտք է ստացագիր առնել, որպէս զի ապագային դրամը վճարողը ձեռքը գրաւոր ապացոյց մ'ունենայ:

Ստացագիրը պէտք է պարունակէ,

1. վճարման տեղը և թուականը
2. Գումարը, թէ՛ գրով և թէ՛ թուանշանով, կամ առնուած արժէնիւթին տեսակը
3. վճարման պատճառը
4. վճարողին անունը
5. Դրամը կամ արժէնիւթը առնողին ստորագրութիւնը:

Օրինակի համար, Ս. Գալստեան 200 Լ. ի արժէքով 10 կտոր պարսկական գորգ կը գնէ Ն. Գրիգորեանէ, որ կը խոստանայ 15 օրէն յանձնել զանոնք և ի հաշիւ 100 Լ. կը տայ անոր: Արդ՝ հարկ է որ Ս. Գալստեան տուած 100 Լ. ին համար ստացագիր մ'առնէ Ն. Գրիգորեանէ, որպէս զի այս վերջինը ապրանքը յանձնած ատեն ամբողջ 200 Լ. չի պահանջէ:

Դրոշմարուղիք ստացագրի. — Ստացագիրներուն ալ 20 փր. նոց դրոշմաթուղթ փակցնել և ստորագրութիւնը դրոշմաթղթին վրայ դնել պէտք է:

Հոս կը գնենք Ս. Գալստեանի առած ընկալագրին օրինակը և ուրիշ երեք ընկալագրեր, որոնցմէ կրնայ հասկցուիլ թէ՛ ի՞նչ տեսակ պարագաներու մէջ ընկալագիր կ'առնուի:

Ա. ՕՐԻՆԱԿ ՍՏԱՅԱԳՐԻ

Ստացայ Տ. Ս. Գալստեանէ, յանձնառու ի Կ. Պոլիս, Հարիւր իրա օսմանեան, ի հաշիւ սաւր կսոր պարսկական գորգերու, զորս իրեն ծախած եւլ քուակակու 15 օր ետքը յանձնելու պայմանով: Կ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
Կ. Պոլիս, 18 Յունվար 1897

Բ. ՕՐԻՆԱԿ ՍՏԱՅԱԳՐԻ

Ստացայ Տ. Գ. Սնդիբեանէ, խանութպան ի Մանուկ փաշա, Հագար Բասն դշ. արծաթ դրամ, ջանս եռանկայ վարձիին համար, զոր իրեն վարձու տուած եւլ ներկայ տարւոյ Յունվար 1 կն սկսեալ: Կ. ԳՐԻԳՐԵԱՆ
Կ. Պոլիս, 10 Յունվար 1897

Գ. ՕՐԻՆԱԿ ՍՏԱՅԱԳՐԻ

Ստացայ Տ. Մ. Աքրահամեանէ Հարիւր իրա օսմանեան, Տ. Ն. Գասապեանի հրամանիկ համեմատ եւ անոր հաշիւն համար: Ա. ՍԱՐԳԻՍԵԱՆ
Կ. Պոլիս, 15 Ապրիլ 1897

Դ. ՕՐԻՆԱԿ ՍՏԱՅԱԳՐԻ

Ստացայ, իբր աւանդ, Տ. Գ. Վարժապետեանէ Բուռնիի Երկարուղիի Երեւ պարտարդեր Թ. 60,142. — 84,750. — 1,708,219. — 12րդ կտրոնը վրան, զորս ուրած ասեւը իրեն վերադարձնելու պարտաւոր եւլ: Ե. ՍԱԳՍԵԱՆ
Կ. Պոլիս, 11 Յունիս 1897

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Պ. Թորոսեան հրաման կ'ստանայ Կարենցի Յ. Սրէկանէ, որ անոր հաշիւն սեղանաւոր Ն. Հանէսեանէ 105 Լ. Օ. առնէ: Ն. Հանէսեան սոյն գումարը վճարելով՝ փոխարէն ընկալագիր մը կ'առնէ Պ. Թորոսեանէ:

Դ Ա Ր Զ Ի Հ Ա Շ Ի Ի

Անվճար փոխանակագիրը գանձելու համար, երբ քաշողն և փոխանցողը սարքեր քաղաքներ ըլլան՝ ծախքի և տոկոսի խընդիր առաջ կը գայ. այդ պարտղային՝ առևտրական Օրէնքը կ'արտօնէ՝ Դաւի հաշիւ անուն ցուցակը պատրաստելու, ուր անվճար թղթին աէրը՝ իրաւունք ունի գրելու բողոքագրի ծախքէն զատ, ուրիշ ծախքեր և վնասներ զորս պիտի կրէ՝ մինչեւ որ դրամը ձեռքը անցնի: Այդ ծախքերն են՝ յանձնառուչէք, միջնորդչէք, դրոշմատուրք, թղթատարի ծախք, բողոքի օրէն մինչեւ դրամը վճարուելու օրը բանած տոկոսներն և կրկին փոխանակագիրն:

Դարձի հաշիւն ընդհանրապէս պզտի թղթի մը վրայ գրուելով՝ զնդատելով անվճար թղթին կը կցուի և և կը դրուի անոր, որմէ աւելուած է: Երբեմն ալ բողոքագրին պարագ կրեսին վրայ կը գրուի:

Առևտրական Օրինագրքին 138 րդ յօդուածին համեմատ՝ Դարձի հաշիւին մէջ կը գրուի, բողոքուած թղթին գումարը, բողոքի և թղթատարի ծախքը, յանձնառուչէքը, միջնորդչէքը, դրոշմատուրքը, անունը անոր, որուն վրայ Փոխարեկն-փոխանակագիր քաշուած է. և այդ քաշուած փոխանակագրին փոխանակագիրն: Փոխանակագրի միջնորդի կամ միջնորդ չէղած տեղերը, երկու վաճառականի կողմէ պէտք է վաւերացնել սալ Դարձի հաշիւը, որպէս զի դրամը վճարողը կրկին փոխանակագիրն վրայ դիտողութիւն չ'ընէ:

Անվճար փոխանակագրին տէրը՝ երբ զայն զրկողին հետ հաշուընթաց ունենայ՝ բողոքուած թղթին գումարը իրական ծախքերովն անոր պարտքին կ'անցնէ պարզապէս՝ անվճար թղթին վճարօրին թուականովն, և փոխանակագիրը բողոքագրով և միայն իրական ծախքերը պարունակող դարձի հաշուով ետ կը զրկէ, աւանց միջնորդչէք, տոկոս, կրկին փոխանակագիրն, և ուրիշ ծախքեր վրան բարդելու: Իսկ զրկողին հետ հաշուընթաց չունեցողը՝ բողոքուած թուղթը բոլոր ծախքերը պարունակող դարձի հաշուով իրեն կը զրկէ, և իր պահանջը կ'ստանայ Փոխարեկն-փոխանակագրի միջոցաւ, որուն վրայ պիտի խօսինք փոխանակագրին մէջ:

Դարձի հաշիւները շատ անգամ սեղանաւորաց ոմանց համար շահախնդրութեան միջոց մ'ըլլալով, որք փոխանակագրին չի վճարուելէն օգտուելով՝ չափազանց և անտեղի ծախքեր կ'առնեն թուղթը զրկողէն կամ փոխանցողէն: Թէեւ օրէնքը միայն փոխանակագրի համար Դարձի հաշիւ կ'արտօնէ, բայց անվճար մուրհակի համար ալ կարելի է շինել զայն:

Երկու Դարձի հաշիւ դրած ենք. մին՝ ինչպէս բոլոր, փոխանակագիրը զրկողին հետ հաշուընթաց չ'ունեցող, և անվճար թղթին գումարը Փոխարեկն-փոխանակագրով գանձուելու պարագան կը ներկայացնէ, իսկ միւսը՝ հաշուընթաց ունեցող սեղանաւորին զրկած պարզ Դարձի հաշիւն է:

Ա. ՕՐԻՆԱԿ ԴԱՐՁԻ ՀԱՇՈՒԻ

Դարձի հաշիւ, զոր պարտի Տ. Գ. Օհանեան, յանձնաւոր ի Գ. Պօլիս, առ Տ. Ա. Յակոբեան, սեղանաւոր ի Մարսիլիա.

Գումար բողոքուած փոխանակագրին	Ֆր. 3000. —
Չվճարուելուն համար բողոքագրի և ուրիշ ծախք	» 6. —
Միջնորդչէք և վկայողչէք	» 7. 65
Յանձնառուչէք $\frac{1}{2} \%$	» 15. —
Դրոշմատուրք փոխարեկն-փոխանակագրի	» 3. 35
Տոկոս	» 4. —
Թղթատարի ծախք	» 3. 30
	<hr/>
	Ֆր. 3039. 30
Փոխարեկն-փոխանակագրի վաճառու մէն վնաս 1%	» 30. 70
	<hr/>
	Ֆր. 3070. —

Վերոյգրեալ Երեւ հազար եօթանասուն ճրանքն ստացած եմ՝ քաշելով Տ. Գ. Օհանեանի վրայ փոխանակագիր մը սեւօրին Ա. ՅԱԿՈԲԵԱՆ

Ստորագրեալս, միջնորդ փոխանակագրի, կը վկայեմ որ Տ. Ա. Յակոբեանի Տ. Գ. Օհանեանի վրայ քաշուած փոխարեկն-փոխանակագրին վնասը՝ համաձայն է այսօրուան հրապարակի գնոյն, որ է 1% :

Տ. ՄԱՐՏԻՆ, Միջնորդ փոխանակագրի
Ս. ՔԻԵՐԵ, » »

Մարսիլիա, 20 Սեպտ. 1897

1. MODÈLE D'UN COMPTE DE RETOUR

Compte de retour que doit M. K. Ohanian, commissionnaire à Constantinople, à M. A. Agopian, banquier à Marseille.

Principal de la lettre de change protestée	Frs. 3000. —
Protêt faute de paiement et divers frais	» 6. —
Courtage et certificat de l'agent de change	» 7. 65
Commission $\frac{1}{2} \%$	» 15. —
Timbre à la retraite	» 3. 35
Intérêts	» 4. —
Ports de lettre	» 3. 30
	<hr/>
	Frs. 3039. 30
Perte à la négociation de la retraite 1%	» 30. 70
	<hr/>
	Frs. 3070. —

De laquelle somme de Trois mille soixante dix francs je me rembourse par ma traite à vue sur M. K. Ohanian, à l'ordre de moi-même.

A. AGOPIAN

Nous soussignés, agents de change, certifions que la perte à la retraite de M. A. Agopian sur M. K. Ohanian de Constantinople, est conforme au cours de ce jour.

J. MARTIN, Agent de change
S. PIERRE, » » »

Marseille, le 20 Septembre 1897

Բ. ՕՐԻՆԱԿ ԳՈՐԶԻ ՀԱՇՈՒՒ

Դարձի հաշիւ

Փոխանակագրին գումարը	£ 550. —. —
Բողոքի ծախք	» —. 14. —
Թղթասարի ծախք	» —. 2. 6
Ցանձնառոյշի 1/2 %	» 2. 15. —
Արժեք 10 Նոյեմբեր 1897	£ 553. 11. 6
Ք. Ս. Եւ Մ.	
London, 19 Նոյեմբեր 1897	
Ան Ս. Գ. Յովսէփեան, ի Կ. Պոլիս	

ԱՆԿԱՆՈՒՅՈՐԻՆ ՊԱՆՔ

2. MODÈLE D'UN COMPTE DE RETOUR

Compte de retour

Principal de la lettre de change	£ 550. —. —
Protêt	» —. 14. —
Ports de lettre	» —. 2. 6
Commission 1/2 %	» 2. 15. —
Valeur au 10 Novembre 1897	£ 553. 11. 6
S. E. & O.	
London, le 19 Novembre 1897	
ANGLO-FOREIGN BANK	
à Monsieur K. Hovsepian à Constantinople	

Դրոշմաբույժ. — Դարձի հաշիւներուն 20 փր.նոց դրոշմաթուղթ փակցնել պէտք է:

ՀԱՇՈՒՆՅՈՒՑԱԿ ՓՈՒՍՆԱԿԱԳՐԻ

Փոխանակագրի միջնորդներուն վրայ խօսելով (տե՛ս Թ. 33) ըսինք թէ՛ միջնորդք ուրիշի հաշւոյն փոխանակագիր գնած կամ ծախած ասեննին՝ թէ՛ գնողին և թէ՛ ծախողին իրենց ստորագրութեամբ թուղթ մը կը տան, որուն Փոխանակագրի հաշուէցոյց կամ գործի լեզուով՝ Նօթա կ'ըսուի, որով միջնորդը՝ որոշեալ գումարի փոխանակագիր որոշեալ գինով մէկէ մը գնած, և ուրիշին ծախած ըլլալը կը յայտարարէ:

53-0
0.05
24.50

Նօթային մէջ, որք ընդհանրապէս մեր օրինակներուն մեծութեամբ կ'ըլլան, կը գրուի թուղթը գնողին և ծախողին անունները; գումարը, գինը, փոխանակագրին անցած օրերուն համար արուելիք տոկոսին սակը, և այդ հաշիւներուն արդիւնքը Օ. Լ. ի վերածուած, եթէ ծախուած կամ գնուած փոխանակագիրը օտար երկրի վրայ քաշուած և օտար դրամով վճարելի է: Այս տեսակ նօթաներն ընդհանրապէս փոխանակագրի կանխիկ գնմանց և վաճառմանց համար կը գործածուին:

Ահաւասիկ փոխանակագրի միջնորդի նօթայի մը օրինակը, մէջը պարապ, որ ի հարկին գրչով կը լեցուի. (Տե՛ս Թ. 112):

Նոյնպէս երբ սեղանաւորը Լօնտրայի, Փարիզի, Վիէնայի, Պէրլինի, Էլն. ի վրայ քաշուած փոխանակագիր ծախէ՝ գրեթէ Թ. 112 ին հիմնական ձեւովը նօթա մը կը պատրաստէ և գնողին կը տայ, գրելով անոր մէջ փոխանակագրին գումարը, որ բնականաբար կ'ըլլայ սթէյշոնին, Ֆրանք, Ֆիօրին, մարք, Էլն. և անոնց գինը Օ. Լ. ի հետ, փոխանակագրին տեսակը, այսինքն, տեսօրին կամ ի՛նչ պայմանաժամով ըլլալը, տոկոսին օրուան սակը, օրինակի համար, սթէյշոնի փոխանակագրի համար՝ Անգղիոյ Պանքային տոկոսի օրուան սակը, Ֆրանքի փոխանակագրի համար՝ Փաղղիոյ Պանքային տոկոսի օրուան սակը, Էլն. Էլն. վճարման պայմանը, այսինքն, փոխանակագրին արժէքը կանխիկ կամ ապառիկ վճարելի ըլլալը, գնողին անունը և գործողութեան թուականը: Իսկ երբ վաճառումը ապառիկ և տոկոսով վճարելի է՝ այսինքն, եթէ փոխանակագրին արժէքն եղող Օ. Լ. ի գումարը մաս առ մաս վճարելու, և այդ մասնավճարներուն վրայ տոկոս բանեցնելու պայմանով ծախուած է՝ Թուրքիոյ տոկոսին սակագրին ալ կը գրուի: Ապառիկ վաճառման ատեն, փոխանակագիր գնողը պարտաւոր է նօթան ստորագրել և ծախողին յանձնել, նշանակեալ գումարը անոր հրամանին վճարելու պայմանով. այնպէս որ երբեմն նօթան, երբ վճարողը ծանօթ և պատուաւոր է՝ իբր վաճառելի թուղթ կրնայ ուրիշի անցնիլ:

Դրամատունք և սեղանաւորք իրենց անունին յատուկ արպուած նօթաներ կ'ունենան, գումարներուն, գինին, թուականին, տոկոսի սակերուն (Եւրոպականին և Թուրքիոյ) և գնողին անունին տեղերը բաց թողլով, զորս վերջէն գրչով կը լեցնեն:

Ապառիկ ծախուած փոխանակագրին ի հաշիւ արուած մասնավճարներն՝ իրենց վճարման թուականներովը նօթային ևսին կը գրուին պարտականին ստորագրութեան կողմէն սկսելով: Վճարուած գումարները թէ՛ թուանշանով և թէ՛ գրով միանգամայն պէտք է գրել: Երբ նօթային գումարն այսպէս մասնավճարներով սմբողջապէս վճարուի՝ տոկոսի որոշեալ և նշանակեալ սա-

A G O R I A N & C O

De M.

Ordre } de M.
Valeur }

à de date sur

T. Turques

Intérêts de jours passés à 0/0 l'an

T. Turques

Payables comptant.

Appoints

Constantinople, le

189

N° 9056

£ 1400

M. GUMCHIAN

Ordre }
Valeur } de Mrs. G. Parseghian & Cie

Au Change de no 1/4

Recu les effets comme
Turques effectives en or mille
nous nous engageons à payer
M. H. Gumchian comptant ou à quel
sés à Paris 1897

MENTS

- turques trois cent cinquante
- » quatre cents
- » deux cents
- » cent
- » deux cent cinquante
- » deux cent quarante sept et 10¹/₄

կովը նօթային թուականէն մինչեւ այդ վճարմանց օրերը տոկոսը կը հաշուեն, որուն գործնական եղանակին վրայ պէտք եղած տեղեկութիւնը տուած ենք Հաշուական գիտելեաց գլխուն մէջ:

Նօթաներն ընդհանրապէս գաղղիերէն կ'ըլլան: Փոխանակապէրի գլխաւոր միջնորդներն ալ իրենց անունին յատուկ տպուած նօթաներ կ'ունենան, գումարներուն ելն ի տեղերը պարապ ձգուած:

Երբեմն փոխանակագիր ծախող սեղանաւորք կամ գլխաւոր միջնորդք՝ իրենց ծախած փոխանակագրոց ընդունելութիւնը (1) կ'երաշխաւորեն, գրելով նօթային տակը գաղղիերէն հետեւեալը և ստորագրելով:

Je garantis l'acceptation des effets susmentionnés jusqu'à jours à partir d'aujourd'hui, et à défaut d'avis de la part de M la présente garantie sera nulle et non avenue.

Ներկայիս կ'երաշխաւորեմ վերոյիշեալ բոլոր ընդունելութիւնը այսօրու ընկ մինչև . . . օր, որոյ միջոցին երբ Տ ի (գնողին անունը) կողմէն տեղեկութիւն չի տրուի՝ այս երաշխաւորութիւնս առ ոչինչ պիտի համարուի:

Իրոշմարուղի նօթայի. — Ըստ օրինի նօթաներուն ալ 20 փարանոց դրոշմաթուղթ կը փակցուի:

Նօթայի երկու օրինակ դրած ենք, մին՝ փոխանակագրի միջնորդին և միւսը՝ սեղանաւորին կողմէն տրուած, որ £ 1400 ի փոխանակագրի վաճառման բոլոր մանրամասնութիւնները կը պարունակէ: (Տե՛ս քովի թղթերը):

Հ Ր Ա Հ Ա Ն Ք

Կ. Գէորգեան 1897 Փետր. 18 ին կը գնէ Թ. և Ն. Գարակէօզեանէ £ 520 ի փոխանակագիր, նոյն օրէն Լօնտայի վրայ քաշուած՝ գ. 110 ¹⁷/₄₀. — £ 300ը ³/₄ ամս. և £ 220ը ¹/₄ ամս. Լօնտայի տոկոսին սակն է 2 0/0. փոխարէնը ամբողջապէս վճարուած է գնած օրէն 8 օր ետքը՝ տարեկան 0/0 1/2 տոկոսով: Արդ՝ նախ պէտք է պատրաստել այս նօթան Թ. և Ն. Գարակէօզեանի կողմէն տրուած, վերջը նօթային գումարին անցած 8 օրուան տոկոսը հաշուել: (2)

(1) Փոխանակագրին մէջ խօսած ենք թէ՛ ե՛րբ եւ ի՞նչու համար փոխանակագիր ընդունելութեան կը դրուի, առ որ կը հրաւիրենք ուսանողին ուշադրութիւնը:

(2) Հաշուական գիտելեաց գլխուն մէջ փոխանակագրի վաճառման գործողութեանց վերաբերեալ հաշիւներն ալ դրած ենք:

ՁԵՂՉԻ ՑՈՒՑԱԿ

Թողը գեղջերու և Ձեղջեղ սալու գործողութեանց առթիւ ըսինք թէ՛ թուղթ գեղջողը նամակով գեղջել տուողին կը զրկէ անոր հաշիւը, որուն Ձեղջի ցուցակ կ'ըսուի:

Ինչ որ է հաշուեցոյցը ապրանքի գնման և վաճառման համար, նոյնն է Ձեղջի ցուցակը առեւարական թղթոց գնման և վաճառման համար:

Ձեղջի ցուցակը երես մը թղթի վրայ կը գրուի, և հաշուեցոյցին պէս երկու մասի կը բաժնուի. Ա. մասը՝ վերնագիրը, Բ.՝ բուն իսկ ցուցակին պարունակութիւնը կամ մարմինը, որք զոյգ մը ուղիղ գիծով իրարմէ կը զատուին: Վերնագրին մէջ կը գրուին գործողութեան թուականը, զեղջողին և զգեղջել տուողին անունները. իսկ Բ. մասին մէջ՝ գեղջուած թղթոց մանրամասնութիւնը իրենց յատուկ սիւներուն մէջ, ինչպէս կ'երեւայ մեր օրինակներուն վրայ:

Ձեղջի ցուցակները երկու տեսակի կը բաժնենք, Տեղական և Օսար երկրի Ձեղջի ցուցակ:

Տեղական Ձեղջի ցուցակը՝ զեղջող և զգեղջել տուող միեւնոյն քաղաքի մէջ գանուող երկու անձերու միջեւ եղած զեղջի գործողութիւնը կը հաստատէ, երբ զեղջուած թղթերը միեւնոյն հրապարակին մէջ և տեղական դրամով վճարելի են:

Տեղական զեղջի ցուցակին մէջ՝ զեղջողը իր զեղջելիք թըղթերը զեղջել տուողին ձեռքով գրել կը տայ իրենց վճարօրերուն կարգովը, այսինքն, ամենէն շուտ վճարելի թղթէն սկսելով՝ հեղհեղէ կարգով կը գրէ այդ ցուցակին վրայ, նախ թղթին թիւը, ետքը գումարը, վճարողին անունը, տեղը, պայմանաժամը, զեղջելի օրերը, և այդ օրերուն համապատասխանող թըղթոց գումարներուն հետ արտադրած թիւերը, որոնց գումարին վրայ որոշուած տոկոսի սակովը կը հաշուուի տոկոսը կամ զեղջը, (1) որ զեղջուած թղթոց Անուանական ընդհանուր գումարէն կը զեղջուի և մնացորդը կ'ըլլայ անոնց Իրական արժէքը:

Տեղական զեղջի ցուցակներուն համար դրամատունք և սեղանաւորք իրենց անունին յատուկ ապուած թղթեր կ'ունենան, որոնց վրայ զեղջել տուողը վերոյիշեալ կերպով իր զեղջելիք թղթերը (փոխանակագիր, հրամանի տոմսակ) գրելէ, և զեղջի հաշիւը ընելէ ետքը՝ անոնց զուտ գումարը ստացած ըլլալուն ի հաստատութիւն վասն ստացման գրելով և թուականը գնելով կ'ստորագրէ, և ցուցակը զեղջողին յանձնելով գումարը կ'ստանայ անկէ:

[1] Հաշուական գիտելաց գլխուն մէջ Ձեղջի ցուցակներու հաշիւն վրայ եւս խօսած ենք:

Օրինակ Տեղական Ձեղջի ցուցակի

Պօլսեցի Մ. Սահակեան դրամի պէտք ունենալով՝ 1897 Մայիս 8 ին զեղջել կը տայ Թ. և Ե. Գարակէօզեանի հետեւեալ թղթերը,

- Թ. 168. Յովն. Քասարճեան, Հաճօփուլօ Խան Լ. Օ. 175.62 վճօր. 20 Սպ. 1897
- » 241. Ս. եւ Ք. Տամատեան, Չարմարճըլար » 369.40 » 18 Օգ. 1897
- » 139. Յովհաննէս Փափագեան » » 125.— » 29 Օգ. 1897

Մ. Սահակեան այդ թղթերը Թ. և Ե. Գարակէօզեանի հրամանին փոխանցելով, որու մասին պիտի խօսինք փոխանակագրին մէջ, և իր ձեռքով գրելով Թ. և Ե. Գարակէօզեանի կողմէն արուած զեղջի ցուցակին վրայ, զոր քիչ առաջ բացատրեցինք, կ'ստանայ անոր գումարը:

Հոս կը գնենք այդ Ձեղջի ցուցակը, որուն Տեղական Ձեղջի ցուցակ կ'ըսուի ըսինք: (Տե՛ս յաջորդ երեսը):

Գրողնաքող Ձեղջի ցուցակներու. — Ձեղջի ցուցակներուն ալ 20 փր.նոց դրոշմաթուղթ փակցնել և անոր վրայէն ստորագրել պէտք է:

Օսար երկրի Ձեղջի ցուցակը՝ զեղջող և զգեղջել տուող տարբեր քաղաքներու մէջ գանուող երկու անձերու միջեւ եղած զեղջի գործողութիւնը կը հաստատէ, երբ զեղջուած թղթերն օտար դրամով և օտար երկրի մէջ վճարելի են:

Օտար երկրի զեղջի ցուցակին մէջ՝ զեղջողը իր զեղջելիք թղթերը ինքը կը գրէ իրենց վճարօրերուն կարգովը ա՛յնպէս, ինչպէս բացատրեցինք Տեղական Ձեղջի ցուցակին առթիւ: Այդ ցուցակին մէջ կը գրուին զեղջուած թղթոց իւրաքանչիւրին Անուանական գումարը, վճարման տեղը, պայմանաժամը, զեղջելի օրերն, և այդ օրերուն համապատասխանող թղթոց գումարներուն հետ արտադրած թիւերը, որոնց գումարին վրայ նշանակուած տոկոսի սակովը կը հաշուուի տոկոսը կամ զեղջը, երկրին դրոշմատուրքն, (1) և եթէ թուղթը հետու քաղաք մը գանձելի է՝ թղթատարի ծախքը և յանձնառողջէքը, որոնց գումարը զեղջուած թղթոց Անուանական ընդհանուր գումարէն կը զեղջուի, և մնացորդը կ'ըլլայ նոյն թղթոց Իրական արժէքը, որ կը վճարուի զեղջողին կամ, եթէ զեղջողը զեղջել տուողին հետ հաշուընթաց ունենայ՝ անոր պահանջքին կ'անցնի: Օրինակի համար, Եւրոպիոյ մեծ հրապարակներուն հետ, ինչպէս, Լօնտրա, Փարիզ, Վիէննա,

[1] Ինչպէս որ Թուրքիոյ մէջ Գրուսի Օրէնքին ենթակայ են առեւտրական բոլորք, անանկ ալ օսար երկր մսած առեւտրական բոլորք նոյն երկրին Գրուսի Օրէնքին ենթակայ կ'ըլլան, և զեղջուած բոլորք դրոշմատուրք բուրքը զեղջողը կը վճարէ:

4. Պոլիս, 8 Մայիս 1897

Shupp B. & C. Գարակոզեան

Յուզակիս մէջ նշանակեալ քաղցրը գեղջեղու հանար կը յանձնեն Չեզ. ասոնք իմ ձիրոյով
ըզպով, վճարօրին ետ յի վճարուին ստորագրեալ պարտի վճարեց ասուց ո եւ է ստարկութեան

Վ.ՃԱՆՈՎՈՂ	Հ.Ս.ՍՅԷ	Գ.ՈՒՄՄՈՒՐ	Վ.ՃԱՆՈՐՈՐ	ՕՐ Թ.ԻՆ	
241	Չախմուխար » Հանօրուլօ խան Չեզ 9%	369	18	102	
139		40	Օգոստոս 97	37679	
168		125	»	»	113 14125
		175	20	»	135 23709
		670	02	»	75513
		18	88		
		651	14		

Վ.ՃԱՆՈՐՈՐ

4. Պոլիս, 8 Մայիս 1897

Մ. ՍԱՀԱԿԵԱՆ

Ս. & Գ. Տամասեան
Յովհաննէս Փախազեան
Քասարեան

241
139
168

Պէրլին, և ինչ. յարարեութիւն ունեցող Պօլսեցի կամ ուրիշ տեղացի սեղանաւորք և վաճառականք՝ իրենց պարտքին փոխարէն ընդհանրապէս նոյն քաղաքներուն վրայ քաշուած 3/ ամս. կամ կարճ փոխանակագրեր կը զրկեն իրենց պահանջատէրներուն, որք զանոնք տակոսի օրուան սակովը, կամ երբեմն ա՛նկէ ալ պակասով⁽¹⁾ զեղջելով՝ զուտը անոնց պահանջքին կ'անցնեն, և Չեզի ցուցակը նամակով կը զրկեն թուղթերը իրենց զրկողին:

Օրինակ Օսար երկրի Չեզի ցուցակի

1897 Փետր. 2 ին՝ Պօլսեցի Գ. Յակոբ իր պարտքին համար Լօնտրա Պանք օվ Էճիրթի կը զրկէ հետեւեալ թղթերը, զանոնք անոր հրամանին փոխանցելով.

£ 171	— Sarkis Manoukian's sons	վրայ, վճօր. 11 Մրա. 1897
» 650	— Allatini Brothers	» » 13 » »
» 1000	— Anglo Foreign Bank. Comp. L ^d	» » 16 » »
» 160	— Jivan Tékéian & Cie	» » 9 Ապրիլ »
» 500	— Gumushguerdan Frères	» » 26 » »
» 850	— O. Agopian & son	» » 29 » »
£ 3331	—	

Պանք օվ Էճիրթ զանոնք զեղջելով՝ զուտը, որ եղած է £ 3310.— 3, 1897 Փետր. 6էն Գ. Յակոբի պահանջքին կ'անցնէ նամակաւ զրկելով անոր Չեզի ցուցակը:

Ահաւասիկ Պանք օվ Էճիրթի զրկած Չեզի ցուցակը, որ Օսար երկրի Չեզի ցուցակ կ'ըսուի. հետեւաբար և զազդիւրէն կամ ուրիշ լեզուով կը գրուի սովորաբար, ինչպէս հետեւեալ օրինակները, որք զազդիւրէն են, և որոց հայերէններն ալ գրած ենք:

[1] Եւրոպիոյ գլխաւոր քաղաքներու մեծ դրամատուներէն իրենց սոկոսի որոշեալ սակը դրամին տասուրեան կամ նուազուրեան համեմատութեամբ կ'իջեցնեն կամ կը բարձրացնեն. բայց հակառակ այդ որոշեալ սակին՝ ուրիշ երկրորդական դրամատուներու դրամին խիտ առատ տեսնելով, շատ անգամ մեծ դրամատուներու պակասով ալ բուրք կը զեղջեն. ինչպէս որ 1895 ին Անգլիոյ Պանթային սոկոսի սակը բէել սարեկան 0/0 2 եր, բայց մինչեւ 0/0-3/4 ո՛վ ալ 3/ ամս. բոքեր զեղջուեցան Լոնտրայի մէջ, որուն վրայ մեր տեղական հայերէն լրագիր պարբերաբար տեղեկութիւններ գրած էին այն ժամանակ:

BANK OF EGYPT

Londres, le 6 Février 1897

Bordereau à M. K. Agop, Constantinople

Jours	Nombres	Taux	Sommes	Echéances
33 Jours	56	4 0/0	£ 171	au 11 Mr. 97
35 »	228	» »	» 650	» 13 » »
38 »	380	» »	» 1000	» 16 » »
62 »	99	3 1/2 »	» 160	» 9 Av. »
79 »	395	4 »	» 500	» 26 » »
82 »	697	3 1/2 »	» 850	» 29 » »
			£ 3331	
Escompte 4 0/0	£ 11.12.1			
» 3 1/2 »	» 7.12.8			
Timbre	» 1.15.-			
S. E. & O.			£ 20 19 9	
			£ 3310	3 Valeur 6 courant

ՊԱՆՔ ՕՎ ԷՃԻԲԹ

Iolissru, 6 Փետրուար 1897

Ձեղյի ցուցակ առ Տ. Գ. Յակոբ ի Կ. Պոլիս

ՕՐԵՐ	Ք Ի Ի	ՍԱԿ ՏՈԿՈՍԻ	ԳՈՒՄԱՐ	ՎՃԱՐՐՐ
33 ՕՐ	56	4 0/0	£ 171	11 Մարտ 97
35 »	228	» »	» 650	13 » »
38 »	380	» »	» 1000	16 » »
62 »	99	3 1/2 »	» 160	9 Ապրիլ »
79 »	395	4 »	» 500	26 » »
82 »	697	3 1/2 »	» 850	29 » »
			£ 3331	
Ձեղյ 4 0/0	£ 11.12.1			
» 3 1/2 »	» 7.12.8			
Դրոսմասուրֆ	» 1.15.-			
Բ. Ս. Է. Մ.			£ 20 19 9	
			£ 3310	3 Արժեք 6 Փետր. 97

PIERRE GUZEL

Paris, le 7 Février 1897

Bordereau à Monsieur S. Aslanian, Constantinople

Sommes	VILLES	Echéances	Jrs.	Nombres
2000	Sur Marseille	5 Mars 97	26	52000
3000	» »	10 Avril »	62	186000
10000	» »	30 » »	82	820000
2000	» Paris	3 Mai »	85	170000
17000				
Frs. 102.30 Escompte 3 0/0				
» 8.50 Timbre				
» 21.25 m/commis. 1/8 0/0				
132	05			
16867	95	Net à v/ crédit		
Valeur 8 courant				
S. E. & O.				

ՔԻԷՌ ԿԻԻՁԷԼ

Փարիզ, 7 Փետրուար 1897

Ձեղյի ցուցակ առ Տ. Ս. Ասլանեան, ի Կ. Պոլիս

ԳՈՒՄԱՐ	ՔԱՂԱՔ	ՎՃԱՐՐՐ	ՕՐ	Ք Ի Ի
2000	Մարսիլիոյ վրայ	5 Մարտ 97	26	52000
3000	» »	10 Ապրիլ »	62	186000
10000	» »	30 » »	82	820000
2000	Փարիզի »	3 Մայիս »	85	170000
17000				
Ֆր. 102.30 Ձեղյ 3 0/0				
» 8.50 Դրոսմասուրֆ				
» 21.25 Յանձնառ. 1/8 0/0				
132	05			
16867	95	Արժեք 8 Փետրուար 97		
Բ. Ս. Է. Մ.				

Ձեզի ցուցակներուն զուտ գումարին տակ գոյզ գիծ քաշելով՝ անոր քով կը գրուի նոյն գումարին ո՛ր թուականով զրկողին պահանջքին անցած ըլլալը, ինչպէս մեր օրինակներուն վրայ կ'երեւայ:

Եւրոպական դրամատունք և սեղանաւորք. որոնց գլխաւոր գործն է այս տեսակ թղթեր զեղչել, իրենց անունին յատուկ տպուած զեղչի ցուցակներ կ'ունենան, պարագ մասերով, զորս վերջէն գրչով կը լեցնեն:

Օտար քաղաքներ նամակով այս տեսակ փոխանակագիր զրկելուն դաղղիերէն remise և գործի լեզուով՝ Ռըմեսս ընել կ'ըսուի: Հոս կը գնենք այս տեսակ նամակի մը և անոր պատասխանին օրինակը, որք ընդհանրապէս դաղղիերէն կամ ուրիշ լեզուով կը գրուին:

Գ. Յակոբի դրամ նամակը Պանք օվ Էնթրթի.

K. AGOP

Constantinople, le 2 Février 1897

MAISON DE BANQUE

A l'Honorable Direction de la Banque of Egypt

Londres

Messieurs,

J'ai l'honneur de vous remettre ci-inclus les effets suivants,

£ 171. —	S Sarkis Manoukian's Sons	au 11 Mars	97
» 650. —	» Allatini Brothers	» 13	»
» 1000. —	» Anglo Foreign Banking Comp. L ^d	» 16	»
» 160. —	» Jivan Tekéian & C ^{ie}	» 9 Avril	»
» 500. —	» Gumushguerdan Frères	» 26	»
» 850. —	» O. Agopian & Son	» 29	»
£ 3331. —			

Que je vous prie de les faire escompter et placer le produit net au crédit de mon compte.

Agréez, Messieurs, l'assurance de ma parfaite considération.

K. AGOP

Պանք օվ Էնթրթի պատասխանը.

BANK OF EGYPT

Londres, le 6 Février 1897

LONDRES



Monsieur K. Agop

Constantinople

Nous avons reçu votre lettre du 2 courant, par laquelle vous nous remettez £ 3331 —, dont nous avons placé à votre crédit, suivant le bordereau ci-inclus, le produit net £ 3310. — 3. Valeur 6 Février 1897 S. B. F. (1)

Agréez, Monsieur, nos sincères salutations.


Pour la Bank of Egypt

Directeur.....


Նամակներուն՝ հետ զեղչի ցուցակներն ալ կ'ընդօրինակուին զրկողին նամակի ընդօրինակութեան տետրին մէջ:

[1] S. B. F. գրեր՝ Sauf bonne fin բառերուն սկզբնատեղն են, որ կը նշանակեն թէ՛ այդ գումարը թէ՛ս պահանջին անցած է, սակայն պայմանաւ որ օրին ամբողջապէս զանձուին. որովհետեւ սեղանաւորք զեղչած բոլորեցին ընդհանրապէս զեղչել տուողին երաշխաւորութեամբ կ'առնեն, այսինքն, եթէ օրին չ'զնաւորին՝ ըստ օրինի զեղչել տուողէն կը պահանջեն անոր գումարը:

ԳՆՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ



ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԹՂԹԵՐ



Ա. Գլխուն մէջ վաճառականութեան և վարկի հաստատութեան վրայ խօսելով ըսինք թէ՛ անոնք որ իրենց զնած ապրանքին փոխարէն կանխիկ դրամ տալու դիւրութիւն չ'ունէին, իրենց ստորագրութեամբ թղթեր կը տան, որք իբր դրամ կը շրջաբերին և որոնց Առևտրական կամ Վաճառեղի քղթեր կ'ըսուին: Ահա այդ թղթերուն (1) վրայ ընդարձակօրէն պիտի խօսինք այս գլխուն մէջ:

Վաճառականք և սեղանաւորք Վարկով, այսինքն, ապառիկ գործեր ըրած ատեննին՝ զանազան ձեւով թղթեր կը շինեն, այսինքն, այլեւայլ տեսակ մուրհակներ կ'առնեն ու կը տան իրարու, որոնցմով, ի հարկին, դրամի պէտքերնին կը հոգան զանոնք սեղանաւորին զեղչել տալով:

Այդ թղթերն, որոնցմէ ամանք Փոխանցումով և ոմանք առանց փոխանցումի ձեւքէ ձեւք տրուելով՝ իբր դրամ կը շրջաբերին վաճառականական և սեղանաւորական հրապարակներուն վրայ, կ'ըսուին Առևտրական քղթեր:

Առեւարական Օրինագրքին համեմատ՝ երկու հատ են առեւարական թղթերը.

- 1. Փոխանակագիր
- 2. Հրամանի տոմսակ կամ մուրհակ

Սակայն այս երկուքէն զառ՝ վաճառականութեան և սեղանաւորութեան մէջ կը գործածուին հետեւեալ թղթերն ալ.

- 3. Մուրհակ կամ տոմսակ բերողին կամ ներկայացնողին
- 4. Համապարտ մուրհակ
- 5. Վճարագիր կամ չէք
- 6. Հրամանագիր:

[1] Գործի մէջ սովորութիւն եղած է փոխանակագրին տեղ թուղթ բար գործածել. գործիմակ, «փոխանակագիր առի՞ր», «փոխանակագիրներ բանի՞՞ զեղչել տալիք» բառով տեղ «թուղթ առի՞ր», «քղթեր բանի՞՞ զեղչել տալիք» կ'ըսուին: Ասոր համար է որ մենք ալ այս գրքին մէջ շատ տեղ թուղթ բար գործածեցինք, զոր փոխանակագիր հասկնալու է:

Փ Ո Ւ Ա Ն Ա Կ Ա Գ Ի Ր

Վաճառականք ընդհանրապէս հեռաւոր քաղաքէ կամ օտար երկրէ ապրանք բերել տալով՝ պարտք կ'ունենան հոն, և կամ հեռաւոր քաղաք կամ օտար երկիր ապրանք զրկելով՝ պահանջք կ'ունենան հոն: Սակայն թէ՛ իրենց այդ պարտքը վճարելու և թէ՛ այդ պահանջքը դանձելու համար՝ Հնչուն դրամ չ'են կրնար փոխադրել, վասն զի հնչուն դրամի փոխադրութիւնը ծախքի կը կարօտի, փոխադրութեան ժամանակամիջոցին շափ տոկոսի կորուստ կը պատճառէ, և վտանգի կ'ենթարկի. ասկէ զառ՝ անկարելի է շատ անգամ ուղուած ատեն տեղական հրապարակի վրայ օտար երկրի մը դրամը գտնել պէտք եղած քանակութեամբ: Օրինակի համար, Անգղիա կամ Գաղղիա ունեցած պարտքերնիս զրկելու համար՝ Պօլսոյ կամ Թուրքիոյ ուրիշ մէկ հրապարակին վրայ անգղ. կամ գաղղ. ոսկի ուղուած քանակութեամբ և ածան գինով գտնալ շատ անգամ անկարելի կ'ըլլայ. նոյնպէս օտար երկիր ունեցած պահանջքնիս Պօլիս կամ Թուրքիոյ ուրիշ մէկ քաղաքը բերելու համար՝ նոյն հրապարակներուն վրայ պէտք եղած քանակութեամբ օսմ. ոսկի գտնել դարձեալ շատ անգամ անկարելի կ'ըլլայ: Ահա այս և ասկէ առաջ յիշուած անպատեհութեանց առաջին անելու համար ժամանակին հնարուած է Փոխանակութեան դրութիւնը, որուն առեւտուրի լեզուով Գաւազիո(1), և ասոր համար գործածուած թղթին ալ Փոխանակագիր կ'ըսուի, որ գաղղիերէն Lettre de Change բառին հարազատ և բառական թարգմանութիւնն է, որ կը նշանակէ՝ նամակ կամ Գիր փոխանակութեան (փոխանակագիր):

Ուրեմն Փոխանակագիր (2) կ'ըսուի այն գրաւոր հրամանին, զոր պահանջատէրը (վաճառական կամ սեղանաւոր) կ'ընէ ուրիշ քաղաք մը գտնուող իր պարտականին որոշեալ գումար մը երբորդի մը վճարելու համար: Ըսածնիս լաւ հասկցուելու համար օրինակներով պիտի բացատրենք:

[1] 12րդ գլխուն մէջ ընդարձակօրէն խօսած ենք Փոխանակութեան (գաւազիո) վրայ. նոս միայն Փոխանակագիր բառով քղթին եւ անոր կարեւոր գիտելիներուն վրայ պիտի խօսինք:

[2] Որոշ ծանօթութիւն մը չ'իւայ քէ՛ փոխանակագրի դրութիւնը նր բուականին հնարուած է: Ոմանք կ'ըսեն քէ՛ այն հրէայի հնարած են զայն, որք երբ անգամ Գաղղիայէն արտահանեցան. մայր՝ 638 բուականին Տակոպէտ առաջնոյն, երկրորդ՝ 1180ին՝ Փիլիպպոս Օթոսոսի, եւ երրորդ՝ 1316ին երկայն բուած փիլիպպոսի իշխանութեանց ասեն: Աստուծոյ հրէայի, Գաղղիա գացող նախորդներ:

Սեպտեմբեր թիվը վաճառական մը ապրանք դնելու համար Պոլսէն Մանչէսթըրը կը ճամբորդէ. հոն իր առնելիք ապրանքներուն համար երկրին դրամովը՝ 5000 անգղ. լիրայի պէտք պիտի ունենայ : Որովհետեւ խոհեմութիւն չէ այդչափ մեծ գումար հետը տանիլ, զի կրնայ ըլլալ որ ճամբան գողցնել տայ կամ կորսնցնէ, ուստի Մանչէսթըրի մէջ գործ կամ առն ունեցող դրամատան կամ սեղանաւորի մը, օրինակի համար, Յ. Յակոբեան եւ Որդիին (1) կը դիմէ, և այդ 5000 անգղ. լիրան Մանչէսթըր փոխադրելու համար՝ ամէն մէկ անգղ. լիրային օսմ. լիրայով նոյն օրուան փոխանակութեան գնովը (2), որ զիցուք թէ՛ 110 ղշ. եղած ըլլայ, (եթէ մէկ անգղ. լիրային 110 ղշ. օսմ. վճարել հարկ ըլլայ՝ 5000 անգղ. լիրային համար) 5500 Լ. Օ. վճարելով՝ կ'առնէ անկէ աւոր Մանչէսթըրի տանը վրայ քաշուած և Մանչէսթըրի մէջ վճարելի Փոխանակագիր ըսուած թուղթը, որով Յ. Յակոբեան և Որդի հրաման կ'ընեն իրենց Մանչէսթըրի տան՝ որ թղթին մէջ նշանակեալ անձին հրամանին այդ 5000 անգղ. լիրան վճարէ :

Ճամբորդը փոխանակագիրը դրպանք դնելով, երբ հոն հասնի, թուղթը ներկայացնելով Յ. Յակոբեան եւ Որդիի Ման-

րուն եւ վաճառականներուն կարեւոր ցամակներ կը տային՝ ուղղուած Գաղղիա գտնուող այն անձներուն, որոնցմէ պահանջ ունէին կամ այն բարեկամներուն, որոնց յանձնած էին իրենց դրամներ, եւ անոնց միջոցաւ ձեռք կը բերէին իրենց դրամները : Ըստ այսոց, կիպէլեանց ձեռք իսպիայէն ախտուած Ֆիորենցացի հնարած են զայն, որ Լիօնի եւ ուրիշ քաղաքներու մէջ հաստատուելով, փոխանակագիր հնարեցին Ֆիորենցաէն բաւելու համար այն դրամներ, զոր չ'էին կրցած հաւաքել եւ հետ տանիլ : Թէեւ փոխանակագրի ծագման պատմութիւնը բաւական յստակ չ'է, բայց կ'ըսուի թէ 14րդ դարուն սկիզբներ հաստատուած է փոխանակագրի դրութիւնը եւ անոր վերաբերեալ ձեւեր, սովորութիւններ եւ օրէնքներ այն ասեւն եւ գրեթէ հիմնականին նման էին : Ոմանք ալ իսպաղաց կը վերագրեն փոխանակագրին ծագումը, մէկ բանի իսպիւրէն բառերու համար, որ կը գործածուին փոխանակութեան գործողութեանց մէջ : Իսկ փոխանակագիրը քանի որ դրամ մը տեղ մը ուրիշ տեղ փոխադրելու կը ծառայէ, այդ տեսակ գրեթէ փոխանակագրի, Արեւելացու եւ Հարավայեցու ասեւն ալ կը գտնուէ : Միջին դարուն մէջ փոխանակման ձեւն ալ հնարուած չ'էր . միայն Ամերիկայի գիւտէն ետք փոխանակագիրը իր այժմու ձեւով կրցաւ մաս գտնել վաճառականութեան մէջ : Կը կարծուի նաեւ թէ՛ պարզապէս վաճառականական յարաբերութեանց հետզհետէ զարգացումը փոխանակագրի պէտքը զգալի եղած եւ հնարուած ըլլալ : Փոխանակագրի դրութիւնը ինչ կերպով ալ հնարուած ըլլայ՝ անոր հնարումը վաճառականութեան համար խիստ օգտակար եղած է :

[1] Յ. Յակոբեան եւ Որդի, առաջնակարգ Հայ սեղանաւոր ՚ի Կ. Պոլիս, որ ունի նաեւ Մանչէսթըրի մէջ համանուն տունը, երկուքն ալ իրենց նրապարակներուն վրայ հաւասարապէս խիստ համարաւոր եւ պատուաւոր :

[2] Տե՛ս թ. 59, ուր խոսուած է փոխանակագրին վրայ :

չէսթըրի Տան՝ կը գանձէ անկէ 5000 անգղ. լիրան (1) : Ըսել է թէ՛ այդ ճամբորդը դրամը Պոլիս և օսմ. լիրայով առու և անոր համարժէքը ստացաւ Մանչէսթըրի մէջ նոյն երկրին և իրեն պէտք ըլլալիք դրամով (անգղ. լիրայով) :

Ուրիշ օրինակ մը .
1897 Մարտ 10 ին՝ ապրանքի յանձնառու Պոլսեցի Պ. Յակոբեան Կարին Ս. Սէֆէրեանի 10 հակ ապրանք զրկեց, (Տե՛ս թ. 91 Գնման հաշուեգրի Ա. Օրինակը), որուն արժէքը Լ. Օ. 285.12 Կարին վճարելի է 91 օրէն :

Բայց ենթադրելով որ՝ Պ. Յակոբեան դրամի պէտք ունի և այդ (91 օր) պայմանաժամէն առաջ նոյն գումարը ձեռք բերել կ'ուզէ . ի՞նչ կ'ընէ այդ պարագային : Կարինի հետ գործ ունեցող սեղանաւորի մը կը դիմէ, որուն ծախելով իր պահանջը՝ դրամը կ'ստանայ անկէ Փոխանակագրով մը, այսպէս :

Արդ սեպտեմբեր թիվը՝ այդ սեղանաւորը ըլլայ Ն. Հանէսեանը, որ Կարին դրամ զրկելու պէտք ունենալով՝ Պ. Յակոբեան այդ գումարը կ'առնէ Ն. Հանէսեանէն (անշուշտ վճարելով անոր փոխանակագիրը և դրամն առած օրէն մինչեւ փոխանակագրին վճարօրը մնացած օրերուն տոկոսը) և փոխարէն կը տայ անոր թուղթ մը, որով հրաման կ'ընէ Ս. Սէֆէրեանի որ 91 օր (թուղթը քանի՛ օրուան պիտի քաշուի նէ) լրանալուն՝ վճարէ Ն. Հանէսեանի հրամանին Լ. Օ. 285.12 դրամ պարտական էր զըրկած ապրանքին համար : Ահա այդ առած թուղթը նոյնպէս Փոխանակագիր կ'ըսուի :

Ինչպէս այս օրինակէն ալ կ'երեւայ՝ միեւնոյն փոխանակագրով թէ՛ Պ. Յակոբեան Կարին ունեցած պահանջը Պոլիս ստացած եղաւ՝ առանց Կարինէն Հնչուն դրամ բերել տալու, և թէ՛ Ն. Հանէսեան զրկելիք գումարը Կարին զրկած եղաւ՝ առանց Հնչուն դրամ զրկելու ի Կարին : Արդ՝ Ն. Հանէսեան ալ

[1] Թէ փոխանակագրի միջոցաւ ինչ գումարներ տեղ մը ուրիշ տեղ կը փոխադրուին՝ հոս կը դնենք հետեւեալը, որ հաստատուած է «Արեւել» լրագրին մէջ : Թուղթի կտր մը ամենէն ցած 100 ֆրանկ հաստատուած է և 100 ֆրանկէ քիչ քիչ քանակութեամբ կը կարծուէ թէ՛ Ամերիկացի միլիառաւոր Պ. Վանստրայքի բաւած 700,000 անգղ. սկիւտ փոխանակագիրն ամենէն մեծաքանակ փոխանակագիրն էր : Բայց այս օրերս Հնչուսեանի երկարուող ընկերութիւնն 1,250,000 անգղ. սկիւտ փոխանակագիր մը զրկեց ՚ի Լոնտոն : Յայտարարուած մեծագոյն փոխանակագիրը, սակայն դարձեալ Ամերիկայի մէջ հաստատու է, եւ այն ալ 1883 ին, երբ Փենսիլվանիոյ երկարուող ընկերութիւնը 15 միլիոն ֆրանկ կամ 3,000,000 անգղ. սկիւտ փոխանակագիր մը բաւած վճարելի Քիսթ փալոսի եւ ընկերութեան վրայ, ՚ի վնարումն Ֆիլադելֆիոյ, Ուիլմինկըքքի եւ Պալմեր-մոնի երկարուող պարտատուներուն : Թուղթի կտր մը որ երեք միլիոն անգղ. սկիւտ արժէ :

Պ. Յակոբեանէ այդ փոխանակագիրն առնելով՝ նամակով կը զրկէ Կարին իր թղթակցին կամ բարեկամին, անոր հրամանին փոխանցելով զայն, որ վճարօրին այդ գրամը կը դանձէ Ս. Սէֆէրեանէ: Ուրեմն խօսքերնիս ամփոփելով փոխանակագրին ճիշդ սահմանը գծելու համար կ'ըսենք, Փոխանակագիրը ստորագրուած պայմանագիր մ'է, որով ստորագրողը կը հրաւիրէ ուրիշ քաղաքի կամ օտար երկրի մէջ իր պարտականը՝ որ իր հաշտոյն որոշեալ ժամանակէ մը վերջը (երբեմն տեսօրին իսկ) այսչափի գումար մը Հնչոյն գրաստով վճարէ թղթին մէջ գրուած անձին, յորմէ արդէն ստացած է կամ պիտի ստանայ քաշած թղթին արժէքը, այսինքն անոր մէջ նշանակուած գումարը, կամ վճարէ անոր հրամանովն ուրիշի մը և կամ վերջապէս այս կերպով նոյն թղթին տէր եզող վերջին անձին:

Ուրեմն քանի որ փոխանակագիրը՝ քաղաքի մը մէջ եղած պարտքը կամ պահանջը ուրիշ քաղաք մը վճարել կամ դանձելու համար հնարուած է, ըսել է թէ՛ փոխանակագիրը օրինաւոր և վաւերական ըլլալու համար պէտք է որ անպատճառ քաղաքէ մը ուրիշ քաղաքի, գիւղէ մը ուրիշ գիւղի, և աւանէ մը ուրիշ աւանի վրայ քաշուած ըլլայ, ինչպէս որ Առեւտրական Օրէնքն ալ 70րդ յօդուածովն այնպէս կը տրամադրէ:

Յօդ. 70. « Բօլիշա քեաղըտը պիր մահալատէն տիկէր մահալլէ շէքիլուպ՝ էլպէթ պիր թարիխի օլմագ վէ թէտիյէ օլունահագ մէպալիդին մըգտարը վէ կէրէք ազէշի վիրէճէք շախսըն իւմի վէ նէ՛ վագըթ վէ նէ՛ մահալատէ թէտիյէ օլունահագը թասօրիհ օլունուպ, գարշուլըը նուգուտ վէ էմթիատէն մի իպարէթ տիր, եօգաս պիր հիսապա մահսուպէն վէ եա պաշգա պիր ճիհէթտէն մի տիր պէյան օլունմագ լաղըմ տըր. վէ պիր շախսը դայըպըն էմրինէ՞ մէնութ մը տըր, եօգաս շէքէն առէմին թէսարրուֆընտա մը տըր սարահաթէն զիքր օլունուպ, անհագ պիր, իքի, իւշ, աէօրթ վէ պունտան զիյատէ նուսխէսի օլուր իսէ՛ անը տախի զիքր իսէրէք, գաշընճը նուսխէ օլտուղընը պէյան իթմէք լաղըմ տըր»:

Հետեւաբար Պօլսոյ վրայ և Պօլսոյ մէջ վճարելի փոխանակագիր չի կրնար քաշուիլ, որովհետեւ տեղի փոփոխութիւն չկայ. բայց Սեբաստիայէն Պօլսոյ վրայ կամ Պօլսէն Կարնոյ վրայ փոխանակագիր կրնայ քաշուիլ, (1) որովհետեւ քաշուած և վճարելի տեղերը տարբեր են:

[1] Գաղղիոյ առեւտրական Օրէնքը՝ որուն վրայ ձեռուած է գրեթէ թուրքիոյ առեւտրական օրինագիրը, բէւե ասկէ առաջ փոխանակագրին համար կազմէ մը ուրիշ կազմի վրայ կառուած ըլլալ կը պահանջէր, բայց 1894 Յունիս 8

Առեւտրական Օրէնքին համեմատ՝ փոխանակագիրն օրինաւոր ըլլալու համար հետեւեալ կէտերը պարունակելու է.

1. Քաշուած տեղը կամ քաղաքը
2. » օրը, այսինքն թուականը
3. Վճարելի գումարը
4. Վճարողին անունը
5. Վճարման տեղը կամ քաղաքը
6. Պայմանաժամը
7. Արժէքին համար ի՞նչ բան առնուած ըլլալը, դրամ, սպրանք կամ ի հաշիւ ըլլալը
8. Քաշողին թէ ուրիշի մը հրամանին ըլլալը
9. Քանի օրինակով քաշուած ըլլալը
10. Քաշողին ստորագրութիւնը: (2)

Օրէնքը փոխանակագրին համար տեղէ մը ուրիշ տեղ քաշուած ըլլալու է ըսելով կը շատանայ, առանց որոշելու այդ երկու (քաշուած և վճարելի) տեղերուն միջեւ եղած հեռաւորութիւնը, որ դատարանաց ձեռնհասութեան միայն վերապահուած է, բաւական է որ թղթին քաշուած և վճարելի տեղերը իրարմէ տարբեր ըլլան:

Փոխանակագիր չինելու գործողութեան՝ Փոխանակագիր քաշել կ'ըսուի. փոխանակագիր չինողն՝ այն է՝ ստորագրողը, որ անոր արժէքը ստացած է, Քաշող կ'ըսուի. այն՝ որուն վրայ քաշուած է թուղթը, որ զայն վճարելու հրամանը քաշողէն կ'ստանայ, Վճարող, որ Ընդունող կ'ըսուի՝ երբ փոխանակագիրը պայմանաժամով քաշուած ըլլալով՝ օրին վճարելու համար զայն ընդունի. իսկ այն՝ որուն հրամանին քաշուած է թուղթը և որ անոր արժէքը վճարած է՝ Գնող կամ Տէր կ'ըսուի:

Մեր փոխանակագրի Ա. օրինակին մէջ (Տե՛ս Թ. 132) Պ. Յակոբեան՝ Քաշող է, Ս. Սէֆէրեան՝ Վճարող, Ն. Հանէսեան՝ Գնող կամ Տէր:

բուականու պատճառաւ ծանուցուեցաւ թէ՛ միեւնոյն կազմի մէջ կառուած բոլորէն ալ օրէնքին առջեւ իր փոխանակագիր հանցուելով՝ ըստ այնմ պիտի վայելեն փոխանակագրին յատուկ օրինական առանձնաւորութիւնները, Արդէն եւրօպական ուրիշ ազգեր, որպէս են, Անգղիա, Ռուսիա, Գերմանիա, Հունգարիա, շատեց իր փոխանակագիր ընդունած են՝ միեւնոյն կազմի մէջ կառուած եւ միեւնոյն կազմի վնարելի բոլորէրը:

[1] Թէեւ առեւտրական օրէնքին մէջ կառուցին ստորագրութեան նկատմամբ քաջայայտութիւն մը չ'կայ, սակայն յայտնի է, որ ամէն պայմանագիր առանց ստորագրութեան զօրութիւն չ'ունենաւ, եւ քանի որ փոխանակագիրն ալ մէկ քանի անձերու միջեւ եղած պայմանագիր մ'է, ըսել է թէ ա՛նպատճառ ստորագրութիւն ունենալու է:

Ըսել է փոխանակագիր քաշելու համար երեք անձ պէտք է.

- 1. Քաշող
- 2. Վճարող կամ Ընդունող
- 3. Գնող կամ Տեր :

Քաշողն երբ թուղթը իր հրամանին շինէ, տէրն ալ ինք կ'ըլլայ, որոնց վրայ պիտի խօսինք իրենց կարգին :

Այս երեքէն զատ՝ (Քաշող, Վճարող և Տեր), 4րդ մ'ալ կ'աւելնայ անոնց վրայ, երբ թղթին տէրը զայն շրջաբերութեան հանելով՝ անոր գումարը ստանալու Իրաւունքն ուրիշի կը տայ (Իրաւասու) կամ կը փոխանցէ (Փոխանցող), այն ատեն այդ 4րդ ին, որուն կ'անցնի թուղթը, կ'ըսուի Փոխանցող կամ Իրաւասու :

Փոխանակագրի մը իրաւատուաց կամ գործածական բառովը՝ փոխանցողներուն թիւը անասման է, այսինքն, փոխանակագիր մը քանի մարդու ձեռք որ անցնի, այնչափ Փոխանցող կ'ունենայ : Իսկ կրող կամ ներկայացնող կ'ըսուի այն վերջին անձին՝ որ վճարորին թուղթը ընդունողին ներկայացնելով՝ անոր գումարը կ'ստանայ :

Փոխանակագիրը շինող երեք անձերէն և փոխանցողներէն զատ՝ ուրիշներ ալ կրնան մասնակցիլ փոխանակագրի մը՝ զանազան անուններով, գործրինակ, Միջաւսուրքեալք ընդունող և Միջաւսուրքեալք վճարող, Երաշխաւոր, ևլն. որոնց վրայ վերջէն պիտի խօսինք :

Փոխանակագրին գործնական ձեւը. — Փոխանակագիրը՝ որուն ծագումը շատ հին է ըսինք, օրինաւոր ըլլալու համար ի՞նչ կարելուր կէտեր պարունակելը քիչ առաջ թուեցինք : Հիմա պիտի ցուցնենք՝ հին ժամանակներէ ի վեր հետզհետէ կրած փոփոխութիւններէն ետքը՝ փոխանակագրին այժմու խմբագրութիւնը և վերջնական ու գործնական ձեւը :

Օրէնքին պահանջման համեմատ և սովորութեամբ ընդունուած ձեւով փոխանակագիր շինելու համար պէտք է գրել,

1. Թուական և ճշգրտ աւուր. — Թղթին ճակատը և գէպի ձախ կողմը՝ փոխանակագիրը քաշուած քաղաքին անունը և թուականը, այսինքն, քաշուած ամսուն օրը, ամիսը և տարին. ամսաթիւր և տարեթիւր թուանշանով : Փոխանակագրին թուական դնելը խիստ կարեւոր է, Ա.՝ երբ քաշողը սնանկանայ՝ այդ թուականով կը հաստատուի թէ՛ սնանկութենէն առաջ քաշած է թէ՛ ետքը. հետեւաբար և վաւերակա՞ն է թէ՛ ոչ. Բ.՝ Փոխանակագրին վճարօրը ճշգրտ համար, վասն զի եթէ թուականէն այսքան օր կամ ամիս ետքը վճարելի է՝ բնականաբար թղթին մէջ թուական մը գրուած ըլլալու է որ, ըստ այնմ հաշուելով վճարօրն որոշուի : (Տե՛ս Պայմանաւճալին վրայ գրուածը) :

2. Նոյն տողին վրայ դարձեալ թղթին ճակատը և աջ կողմը՝ Փ. Վ. Լ. Օ. գրելը, որք գլխագրով կը գրուին և ապա փոխանակագրին գումարը, որ թուանշանով կը գրուի : Փ. Վ. Լ. Օ. գրելը՝ Փոխանակագիր վասն յիստ օսնանկան բառերուն սկզբնաւաստերն են : Փոխանակագրին գումարը եթէ ուրիշ տեսակ դրամով ըլլայ՝ Լ. Օ. գրելուն տեղ՝ նոյն դրամին սկզբնաւաստերը կը գրուին, գործրինակ, Ֆր. կը գրուի՝ եթէ փոխանակագրին գումարը Ֆրանք ըլլայ՝ Ֆր. կը գրուի՝ եթէ ֆիօրին ըլլայ. Լ. Օ. կամ Է այս նշանը՝ (որ սթէնդին կամ անգղ. լիրայ կը նշանակէ) եթէ անգղ. կամ սթէնդին լիրա ըլլայ. այսպէս կ'ըլլայ ամէն տեսակ դրամի համար : Ասոնց այսպէս թղթին ճակատը գրուելուն պատճառն այն է որ՝ փոխանակագրին պարունակութիւնը առանց կարգալու, մէկ նայուածքով հասկցուի գումարը, որ վերնագրին համաձայն պէտք է ըլլայ :

3. Պայմանաւճալը, այսինքն թէ փոխանակագիրը ե՞րբ պիտի վճարուի, որմէ կ'սկսի թղթին բուն խմբագրութիւնը : Փոխանակագրին պայմանաժամը այսպէս գրով կը գրուի. Թուականէս կամ Տեսօրէն . . . օր կամ ամիս յրանայուն : Քիչ վերջը պիտի ըսենք թէ՛ փոխանակագիրը ի՞նչ պայմանաժամերով կ'ըլլայ. բայց ի՞նչ պայմանաժամով ալ ըլլայ, պէտք է որ Որոշ ըլլայ, զի փոխանակագրին պայմանաժամը ո՛չ անորոշ կ'ըլլայ և ո՛չ պայմանաւոր :

4. Վճարման հրաւերը կամ Հրամանը, որ կը գրուի այսպէս. Հանեցե՛ք վճարել կամ պարգապէս Վճարեցե՛ք :

5. Փոխանակագրին ֆակտորողը, այսինքն փոխանակագիրը քանի՞ օրինակ քաշուած ըլլալը : Եթէ միայն մէկ օրինակ շինուած է մեր փոխանակագրի Ա. Օրինակին պէս՝ (Տե՛ս Թ. 132) Այս միակ փոխանակագրով կը գրուի, եթէ մէկէ աւելի օրինակ շինուած է՝ Այս առաջին կամ երկրորդ, երրորդ փոխանակագրով կը գրուի : Մէկ քանի օրինակ շինուած փոխանակագրին մէջ, եթէ օրէնքին պահանջած այս կէտը մասնաւորապէս չ'գրուի՝ վճարողը զանոնք զատ զատ քաշուած թղթեր կարծելով, ամէնքն ալ վճարել կ'ստիպուի : Ասոր համար է որ՝ թէ՛ փոխանակագիրը քաշողին և թէ՛ վճարողին շահուն համար այս կարեւոր կէտը փոխանակագրին մէջ գրել օրէնքով պարտաւորել եղած է : Քիչ վերջը խօսած ենք փոխանակագրին մէկ քանի օրինակով շինուելուն վրայ :

6. Հրամանը. այսինքն անունն անոր, որուն հրամանին քաշուած է փոխանակագիրը և տէրն է անոր. հրամանն այսպէս կը գրուի, ի Հրաման Տ. կամ Տրց . . . եսնի կամ Տ. կամ Տրց . . . եսնի հրամանին : Այս կէտը փոխանակագրին բուն իսկ հոգին է, զի առանց այդ Հրամանի բառին՝ փոխանակագիրը չի կրնար ու-

բիշի փոխանցուիլ և կ'ըլլայ պարզ հրամանագիր մը . մինչդեռ Հրամանի գրուելով թղթին տէրը կրնայ գայն ուրիշի ծախելու կամ փոխանցելու , որպէս զի վճարօրին թուղթը անոր կամ անոր հրամանին վճարուի : (Տե՛ս Փոխանցման վրայ գրուածը) : Կը պատահի երբեմն որ , քաշողը առաջուց չ'գիտնալով թէ փոխանակագիրը որո՞ւ պիտի ծախէ , նոյն իսկ իր հրամանին կը շինէ , այն ատեն կը գրէ Իմ կամ Մեր հրամանին (եթէ քաշողը երկու հոգի են) . և այդ պարագային՝ քաշողը փոխանակագիրը ծախելէ առաջ անոր Առաջինը ընդունելութեան կը զրկէ , ինչ որ աւելի կը գիւրացնէ թղթին շրջաբերութիւնը կամ վաճառումը :

7. Գուռարք . — վերնագրէն գատ , գոր թ . Չ ին մէջ բացատրեցինք , Ի . անգամ ըլլալով գումարը գլխագրով կը գրուի փոխանակագրին մարմին մէջ : Թէեւ օրէնքը թուանշանով չի գրուելու մասին բան մը չէ բաց , բայց սովորութիւնը և խոհեմութիւնը գրով գրելն է , զի մի գուցէ մէկը թուանշանները փոխելով թղթին գումարն աւելցնէ : Տպուած փոխանակագրոց վրայ , ուր գումարի համար մանր սեւ գիծերով մէկ կամ երկու սող կը յատկացուի , գումարը գլխագրով գրուելէ ետքը՝ նոյն սողին կամ յաջորդին վրայ պարագայ մնացած մասը հաստ գիծով մը կը լեցուի , որպէս զի հոն նոր բան մը չ'գրուի : Գումարը եթէ կտորակ ունենայ՝ կտորակը գրով գրելու տեղ՝ թուանշանով ալ կրնայ գրուիլ :

8. Արժեքը , որ կը ցուցնէ թէ՛ թուղթը քաշողը կամ ծախողը ի՞նչ տեսակ բան ընդունած է գնողէն , և որուն փոխարէնը ուրիշ քաղաք մը վճարել տալ յանձն առած է : Փոխանակագրի մը արժէքն ընդունելու համար անպատճառ փոխանակագիրը գնող մը ըլլալու է , ուստի Յոյ կէտին մէջ բացատրուածին պէս՝ երբ քաշողը թուղթը իր հրամանին շինէ՝ արժէքին համար կը գրէ Արժեքն ինձնեկ կամ ձեզնեկ , որ ամենեւին նշանակութիւն չ'ունենար և փոխանակագիրը թերի կ'ըլլայ , վասն զի , ինչպէս ըսինք , փոխանակագիր շինելու համար երեք անձ պէտք է , Քաշող , Վճարող և Տեր : Բայց երբ քաշողն իր հրամանին շինած թուղթը որիշի փոխանցէ կամ ծախէ , թուղթը գնողէն ի՞նչ տեսակ արժէք ստացած ըլլալը ըստ օրինի պէտք է որ գրէ իր փոխանցման մէջ , այն ատեն միշտ փոխանակագիրը կ'ըլլայ կտտարեալ , Քաշող , Վճարող և Գնող կամ Տեր միանգամայն գտնուելով անոր մէջ :

Արժեքը կանխիկ կամ դրամով ընդունուած և կը գրուի՝ եթէ քաշողը իր ծախած թղթին համար գնողէն կանխիկ դրամ առած ըլլայ : Արժեքը ապրանքով ընդունուած է կը գրուի՝ եթէ քաշողը իր գնած ապրանքին փոխարէն քաշած է այդ փոխանակագիրը , որուն գումարը տարբեր քաղաք մը վճարել տալ կը խոստանայ :

Արժեքն ի հաշիւ կը գրուի՝ եթէ քաշողը գնողին հետ ունեցած հաշույն համար տուած է . Արժեքը մնացորդ հաշուի կը գրուի՝ եթէ իր հաշույն մնացորդին համար քաշած է : Արովհետեւ արժէքը չ'գրուած ատեն փոխանակագրի գործ եղած չ'ըլլար , այլ պարզ փոխառութիւն , որուն իբր տոկոս կը համարուի քաշողին առած փոխանակագիրն . ասոր համար Օրէնքը ուզած է որ այս կէտն որոշուի փոխանակագրին մէջ :

9. Պատճառը , այսինքն , փոխանակագիրը քաշուելուն պատճառը , որ այսպէս կը գրուի , եւ անցուցեք ի հաշիւ ետն . , որ կը նշանակէ թէ՛ քաշողն ի՞նչ հաշուի համար որ քաշած է , վճարողն ալ նոյն հաշույն համար պիտի ընդունի և վճարէ . ինչպէս որ երբեմն կը գրուի եւ անցուցեք ի հաշիւ . . . թուական հաշուեցոյցիս : Փոխանակագրին մէջ պատճառը միշտ գրել սովորութիւն եղած չ'ըլլալով , շատ անգամ զանց կ'առնուի և սեղանաւորք՝ որք ընդհանրապէս իրենց տան կամ թղթակիցներուն վրայ թուղթ կը քաշեն , անոր մէջ պատճառը չեն գրեր , այլ միայն եւ անցուցեք ի հաշիւ ըստ ծանուցման կը գրեն , եթէ ինչ հաշուի համար քաշած ըլլալին ընդունողին ծանուցանել յարմար դատեն :

Փոխանակագրին մէջ Լստ ծանուցման գրուած ատեն , քաշողը պարտաւոր է անպատճառ նոյն օրուան թղթատարով՝ վրան փոխանակագիրը քաշած անձին նամակով ծանուցանել քաշած թղթին թուականը , գումարը , պայմանաժամը , որո՞ւն հրամանին քաշած ըլլալը և թիւը , որպէս զի ան ալ գիտնալով ընդունի և անոր վճարման համար պէտք եղածը առաջուց հոգայ . զի կրնայ ըլլալ որ՝ տեղեկութիւն չ'ունենալուն համար թուղթը չ'ընդունի . և փոխանակագրին չ'ընդունուիլը քաշողին համար մեծ անպատուութիւն կը համարուի : Իսկ երբ քաշողը հարկ չ'գատէ ծանուցանել , օրինակի համար , եթէ պարտականը իր վրայ այսչափ գումարի և աչափ օրուան փոխանակագիրը քաշելու մասին առաջուց քաշողին իմացուցած և զինքը արտօնած ըլլայ՝ այն ատեն փոխանակ Լստ ծանուցման գրուելու՝ եւ անցուցեք ի հաշիւ առանց ուրիշ ծանուցման կը գրուի :

Եթէ փոխանակագիրը ուրիշի հաշույն քաշուած ըլլայ՝ անոր անունին սկզբնատառերը կը գրուին այսպէս , եւ անցուցեք ի հաշիւ Գ . Ս . ի և այլն :

10. Քաշողին ստորագրութիւնը , որ փոխանակագրին ներքեւ աջ կողմը կը գրուի առանց հասցէի : Եթէ քաշողը փոխանակագիրը ինքն իր ձեռքով գրած չ'ըլլայ՝ և կամ ուրիշ լեզուով գրուած ըլլալով , ինքն այդ լեզուէն չ'հասկնայ՝ սովորութիւն է որ ստորագրութեանը վրայ իր հասկցած լեզուով կը գրէ Փոխանակագիր վասն . . . ի գումարն ամբողջ գրով : Այսպէս

գրուելով, թէ՛ դումարին խարդախուելուն առաջքը կ'առնուի և թէ՛ վճարողը իր տուած գումարին համար աւելի վաւերական ընկալագիր մը կ'առնենայ ձեռքը:

11. Վճարողին ակունքը եւ հասցեն, որ նոյնպէս փոխանակագրին ներքեւ ձախ կողմը կը գրուի այսպէս.

Առ Տ. կամ Տրք.

(Անունը և մականունը)

... Փողոց կամ . . . Խան Թիւ . . .

Ի . . . (Քաղաքին անունը)

12. Փոխանակագրին թիւը, որ թղթին ձախաւր թուականէն առաջ, և երբեմն ներքեւը վճարողին հասցէին տակ կը գրուի: Փոխանակագիր քաշողն՝ քաշած թղթին վրայ կարգի թիւ մը կը դնէ թ. 1 էն սկսելով, որ պէտք է համապատասխանէ իր Փոխանակագրի տեսրին թիւին, ուր կ'օրինակուին քաշուած թղթերը:

Որովհետեւ փոխանակագիրը ուրիշ քաղաք մը գտնուող մէկուն վրայ կը քաշուի, ըսինք, հետեւաբար և փոխանակագրին մէջ այդ անձին անունը, մականունը և հասցէն որոշ և յստակ գրուելու է, որպէս զի թղթին տէրը զիւրաւ գտնայ անոր տեղը փոխանակագիրը ընդունել տալու և վճարօրին գանձելու համար: Այն փոխանակագիրը՝ որուն քաշուած և վճարելի տեղերը, վճարողին անունը և հասցէն և կամ ասոնցմէ միայն մէկը սխալ գրուած ըլլայ՝ փոխանակագրի օրինական հանգամանքը կորսնցնելով՝ Օրէնքին առջեւ իբր պարզ մուրհակ կը սեպուի, բայց քաշողը միշտ պատասխանատու է:

Փոխանակագրին պարունակութեան օրինական կէտերը թուելէ և գործնական ձեւն ու անոր վերաբերեալ բացատրութիւնները տալէ ետքը, հոս կը գնենք Պօլիսէն Պ. Յակոբեանի՝ Կարին Ս. Սէֆէրեանի վրայ քաշած փոխանակագրին օրինակը:

Փոխանակագիրը ընդհանրապէս այս մեծութեամբ թղթի վրայ կը գրուի: Անոնք որ փոխանակագիր շատ կը քաշեն և կանոնաւորութիւնը կը սիրեն (1), իրենց անունին յատուկ փոխա-

[1] Մեր գործին բերմամբ ձեռքերի շատ անցած էգաւտներէն եկած այլանդակ խմբագրութեամբ կարգ մը փոխանակագրեր, որոնց մէկ նոյնը կը գնենք հոս:

Միևակի վարքուն հաս Օսմանցու յիւրա ե, որ եղև Ակն 1 Օգոս. 1895 թիւի 11 օր

Առ ի սեղս . . . աղաքն միևակի վերոյ վարքուն հաս Օսմանցու յիւրան, բարեաւ երթայ քանիչիւ Սալսերու կամ Թօխարու վրային Պօլիս Պիթ Բագարը աւիին Ակնացի . . . աղային մօտ՝ տեսնելու զկնի տւխունը տեսնելու օրէն Ակնացի . . . Աղային կերին ետս ընես եւ հաշիվի կէտ ընես, ինչպիս յառաջիկայ փօսքայիւ այլ ինաց կուտաւ: (....)

Ուրախ եմք սակայն որ բանի մը տարիէ ՚ի վեր սկսած է գաւտներէն խիտ կանոնաւոր խմբագրութեամբ սպագրուած փոխանակագրեր ալ գալ:

ձախագրեր տալել կը տան, (որ մեծ ծախքի չ'կարօտիր) փոխանակագրին կարեւոր մասերը, որք են, պայմանաժամին, գումարներուն, քաներողին, հրամանին, արժէքին, ևլն. պարսպ թողով, որք պէտք եղած առեն գրչով կը լեցուին:

59 132



Կ. ՊՕԼԻՍ, 10 Մարտ 1897

Թուականն էս ինտուն և մէկ օր յաւանդու
Տ. Ն. Հանէսեանի հրատանին

Երկու հարիւր ութսուն եւ հինգ յիստ օսմ. և
արժեքը կանխիկ գրատ ընդունած եմ, եւ սնց

Առ Մեծապատիւ
Տ. ՍԱՐԳՍԻ ՍԷՖԷՐԵԱՆ
Նոր-Խան Թիւ 7
Ի Կարին

Թիւ 265

ներուն հանդէպ, որովհետեւ թուղթը ինք ստորագրած է: Բայց ընդունողին հանդէպ այսպէս չ'է, որովհետեւ ինքը (քաշողը) փոխանակագիրը ստորագրած է իրեն քաշելու հրամայողին հրամանին համեմատ. հետեւաբար ընդունողը՝ եթէ առանց հրամայողէն փոխարէնը ստացած ըլլալու փոխանակագիրը վճարէ, միայն հրամայողին կրնայ դիմել վճարած գումարը պահանջելու համար և ո՛չ թէ քաշողին:

գրուելով, թէ՛ դումարին խարդախուելուն առաջքը կ'առնուի և թէ՛ վճարողը իր առած դումարին համար աւելի վաւերական ընկալագիր մը կ'ունենայ ձեռքը:

11. Վճարողին անունը եւ հասցեն, որ նոյնպէս փոխանակագրին ներքեւ ձախ կողմը կը գրուի այսպէս.

Առ Տ. կամ Տրք.

(Անունը և մականունը)

Պակ խմբագրութեամբ գտրգ սր փոխտտագագտր, որաց ու.գ ստյոբ գր աստ աստ.

Մինակ վարցուն հաս Օսմանցու շիրս Կ, որ եղել Ակն
1 Oguz. 1895 sojիի 11 or

Առի տեղս... աղակն մինակ վերոյ վարցուն հաս Օսմանցու շիրան, քարեաւ երբայ քանվիշու Սայսերու կամ Թօխարու վրայիկ Պոշիս Պիք Բագարր սախին Ակնացի... աղայիկ մօսն՝ տեսանեղուդ զկնի տուխուչ տասնեւմեկ օրեկ Ակնացի... Աղայիկ կերին հես ընես եւ հաշիվի կէյտ ընես, ինչպէս յառաջիկայ փօսքայիւ այլ ինաց կուտամ:

(....)

Ուրախ եմ սակայն որ քանի մը տարիէ ՚ի վեր սկսած է զաւաններէն խիտ կանոնաւոր խմբագրութեամբ տպագրուած փոխանակագրեր ալ գտլ:

նակագրեր տպել կը տան, (որ մեծ ծախքի չ'կարօտիր) փոխանակագրին կարեւոր մասերը, որք են, պայմանաժամին, դումարներուն, քաներորդին, հրամանին, արժէքին, ևլն. պարսպ թողլով, որք պէտք եղած ատեն գրչով կը լեցուին:

Փոխանակագրին փոխարէնը. — Փոխանակագրին վճարման յատկացած ամէն արժէնիւթ՝ ընդհանուր առմամբ Փոխարէն փոխանակագրի կ'ըսուի:

Փոխանակագրին փոխարէնը շատ կերպով վճարողին կրնայ զրկուիլ կամ հատուցուիլ:

1. Փոխանակագրին դումարին չափ Հնչոուն դրամ զրկելով
2. Ուրիշ գանձելի փոխանակագրեր կամ հրամանի տոմսակներ զրկելով
3. Ծախուելու համար ապրտնք զրկելով
4. Հրամայել վճարողին որ ինքն ալ նոյնչափ դումարի համար և միււնոյն պայմանաժամով իր վրայ փոխանակագիր քաշէ
5. Երկուստէք համաձայնութեամբ՝ վճարողը քաշողին որոշեալ դումար մը կանխավճար կամ վարկ կ'ընէ
6. Քաշողին ունեցած պահանջքին կամ անոր մնացորդին ի հաշիւ:

Փոխանակագրի սկզբունքով՝ քաշողը պարտաւոր է փոխանակագրին փոխարէնը զրկել կամ հատուցանել, եւ փոխանակագիր քաշողն՝ ինչպէս ըսինք, գո՛նէ քաշած թղթին դումարին չափ ո՛ր և է հաշուէ պահանջք մ'ունենալու է վրան թուղթ քաշած անձէն, որպէս զի նա ալ կարենայ թուղթը ընդունիլ և օրին վճարել: Երբեմն մէկը ուրիշի հաշույն փոխանակագիր կը քաշէ. այդ պարագային՝ փոխանակագրին Փոխարէնը զրկելն ո՛չ թէ քաշողին, այլ քաշելու հրամայողին կը վերաբերի. բայց և այնպէս՝ ուրիշի հաշույն փոխանակագիրը քաշողը դա՛րձեալ անձնապէս պատասխանատու է թէ՛ փոխանակագրին, ահրող եւ թէ՛ փոխանցողներուն հանդէպ, որովհետեւ թուղթը ինք ստորագրած է: Բայց ընդունողին հանդէպ այսպէս չ'է, որովհետեւ ինքը (քաշողը) փոխանակագիրը ստորագրած է իրեն քաշելու հրամայողին հրամանին համեմատ. հետեւաբար ընդունողը՝ եթէ առանց հրամայողէն փոխարէնը ստացած ըլլալու փոխանակագիրը վճարէ, միայն հրամայողին կրնայ դիմել վճարած դումարը պահանջելու համար եւ ո՛չ թէ քաշողին:

Փոխանակագրին բնդունելուրիւնք փոխանակագիրը վճարողին ստորագրած յանձնառութիւնն է, որով իր վրայ քաշուած և իրեն ներկայացած թուղթը ընդունած ըլլալը գրաւորապէս յայտնելով՝ օրին զայն վճարելու յանձնառու և պարտաւոր կ'ըլլայ:

Ընդունելութիւնը ապացոյց մ'է թէ՛ ընդունողը փոխանակագրին փոխարէնը առձեռն ունի: Ընդունելութեան նպատակը՝ վճարողը կամ որ նոյնն է՝ ընդունողը փոխանակագրին տիրոջ հետ կերպով մը կապել է: Փոխանակագիրն ընդունել տալու համար ընդունողը բռնադատել ըստ օրինի ներքի չէ: Բայց անգամ մը որ ընդունեց, այլ ևս անդառնալի է: Այնպէս որ, ընդունած ատեն եթէ քաշողն՝ առանց անոր գիտութեան, սնանկացած իսկ ըլլայ՝ իր այդ ընդունելութեան յանձնառութենէն և ո՛չ մէկ կերպով կրնայ ազատիլ: Ըսել է թէ՛ փոխանակագրին տիրոջ համար թուղթը ընդունել տալը ո՞րչափ կարեւոր նախադրուածութիւն մ'է, որովհետեւ այդ ձեւակերպութեամբ թղթին օրին վճարման մասին իր ապահովութիւնը կը շատնայ, փոխանցողներէն զատ՝ երկու անձի ստորագրեալ յանձնառութիւնն ևս իր ձեռքը ունենալով, մին՝ Քաշողինը, որ արդէն ստորագրած է, և միւսը՝ Ընդունողինը:

Ընդունելութեան ձեւը. — Օրէնքը կը պահանջէ որ՝ փոխանակագիրը վճարողը իր ընդունելութիւնը յայտնէ անպատճառ, Ընդունեցայ գրելով թղթին վրայ և տակը ստորագրելով. որովհետեւ առանց ստորագրութեան յանձնառութիւն չ'ըլլար. եթէ միայն Տեսայ գրէ և ստորագրէ՝ դա՛րձեալ բաւական չ'է:

Ընդունելութիւնը՝ փոխանակագրին առջի երեսին վրայ վճարողին հասցէին և քաշողին ստորագրութեան միջեւ և փոխանակագրին գրութեան վրայէն խոտորնակ կերպով կը գրուի այսպէս:

Ընդունեցայ զայն 1883
Գ. Պոլիս
Գ. Պոլիս

Փոխանակագիր շատ ընդունող սեղանաւորք և դրամատունք՝ ընդունելութեան այս ձեւին համար մասնաւոր կնիք կ'ունենան, զոր թուղթը ընդունած ատենին վրան կը դարնեն: Կնիքին վրայ գումարին, թուականին, վճարօրին տեղերը պարագ ձգուած են, զորս վերջէն գրելով կը լեցնեն և այնպէս կը ստորագրեն:

Ընդունողը շատ անգամ թղթին գումարին և վճարօրին փոխուելուն (եթէ թուղթը տեսօրէն այսքան օր կամ ամիս ետքը վճարելի է) առաջին առնելու համար՝ Ընդունեցայէն ետքը կ'աւելցնէ նաեւ Վասն... ի գումարն ամբողջ գրելով, և Վճարելի ... 189. վճարօրին պատահած օրն, ամիսը և տարին ևս գրելով կը ստորագրէ այսպէս:

Ընդունեցայ զայն

Օսմ. գիրայի

Վճարելի, 8 Յունիս 1897

Կ. Պոլիս, 28 Մայիս 1897

Գ. Պոլիս

Ընդունելութեան գործնական ձեւը կը տեսնուի թ. 134 երեսին վրայ:

Տեսօրին վճարելի փոխանակագրի համար ընդունելութիւն գրելու հարկ չ'կայ, քանի որ թուղթը տեսնուած օրն իսկ վճարելի է:

Ընդունելութեան քուակառուց. — Փոխանակագիրք զանազան պայմանաժամներով կը քաշուին, զորս ընդարձակօրէն պիտի բացատրենք Պայմանաժամին վրայ խօսած ատենին: Ընդունելութեան թուական դնել հարկ չ'ըլլար՝ եթէ փոխանակագիրք քաշուած թուականէն այսքան օր կամ ամիս ետքը վճարելի է. իսկ ընդհակառակը թուական դնելն օրէնքով ալ պարտաւորիչ է՝ եթէ թուղթը տեսօրէն այսքան օր կամ ամիս ետքը վճարելի է. որպէս զի թուական դրուելով՝ փոխանակագրին վճարօրն որոշուի: Եթէ

ընդունուած ատեն թուական գրուած չ'ըլլայ՝ ըստ օրինի քաշուած թուականէն պայմանաժամը կը հաշուի և ըստ այնմ դրամը կը պահանջուի: Օրինակ, Ապրիլ 18էն՝ տեսօրէն 2 ամիսէն վճարելի փոխանակագիր մը, թէև Ապրիլ 25 ին ընդունուած՝ բայց թուական գրել մոտցուած ըլլալով՝ թղթին թուականէն, այն է՝ Ապրիլ 18էն հաշուելով, վճարօրը կ'ըլլայ Յունիս 18 ին, փոխանակ Յունիս 25 ի՝ որ պիտի ըլլար ձիշգ վճարօրը ընդունելութեան թուականէն՝ այն է՝ Ապրիլ 25 էն հաշուելով, եթէ ընդունուած օրը թուականը գրուած ըլլար:

Ընդունելութիւնը պայմանաւոր չ'կրնար ըլլալ, զորօրինակ, « եթէ այսինչ գործս լմնցնեմ » կամ « եթէ երկաթուղիի մեծ պարգևը շահիմ » . բայց ընդունողն ազատ է թղթին գումարին մէկ մասին համար միայն ընդունիլ. օրինակի համար՝ 100 Լ. թղթին միայն 70 ին համար կ'ընդունի. այս պարագային՝ թղթին տիրոջ օրինական պարտքն է մնացած 30 Լ. ին համար բողոքել՝ պատասխանատուութեան տակ չ'մնալու և այդ 30 Լ. ին համար իր իրաւունքները չի կորսնցնելու համար:

Փոխանակագրին տէրը թուղթը ընդունուելու ներկայացուցած ատեն՝ 24 ժամու մէջ պէտք է անպատճառ ընդունել տայ. եթէ 24 ժամն անցնելէ ետքը զայն զրկողին կամ փոխանցողին ետ չի տայ կամ չի զրկէ, փոխանակագիրը ընդունուած ըլլայ կամ ոչ՝ ամէն տեսակ վնաս թուղթը վար դնողին կը վերաբերի, և հետեւաբար նոյն թղթին տիրոջ նկատմամբ ինքը պատասխանատու կ'ըլլայ: Օրէնքը՝ ընդունելութեան համար 24 ժամու միջոցն անոր համար տուած է, որ ընդունողը քաշողին հետ ունեցած հաշիւները նոյն միջոցին նայելով՝ կարենայ իր վիճակը հասկնալ և ըստ այնմ փոխանակագիրն ընդունիլ կամ չ'ընդունիլ:

Փոխանակագիր քաշողն և փոխանցողը անոր ընդունելութեանը և օրին վճարմանը ըստ օրինի համերաշխ են. հետեւաբար ամէն փոխանցող իր ձեռքը գտնուած փոխանակագրին ընդունելութիւնը պահանջելու իրաւունք ունի, եթէ չ'ընդունուի՝ թղթին օրին վճարմանը համար փոխանցողներէն երաշխաւորութիւն կրնայ ուզել:

Երբեմն քաշողը փոխանակագրին վրայ կը գրէ Ոչ ընդունելի, որ կը նշանակէ թէ՛ փոխանակագիրը ընդունել տալու հարկ չ'կայ: Ասոր ալ պատճառը սա է թէ՛ կրնայ ըլլալ որ քաշողը դեռ հանած չ'ըլլալով անոր փոխարէնը, չ'ըլլայ որ փոխանակագիրը ընդունելութեան ներկայացուելով չ'ընդունուի, որով բողոքի և ուրիշ ծախքերու տեղի արուի:

Երբ մէկը իր վրայ քաշուած փոխանակագիրը չ'ընդունի կամ պայմանով ընդունիլ ուզէ՝ անոր տէրը պարտաւոր է չ'ընդունուելը Բողոքագիր ըստուած պաշտօնական թղթով հաստատել, որպէս զի օրինական պատասխանատուութենէ ազատի: Իր կարգին պիտի խօսինք Բողոքագրին վրայ մասնաւորապէս:

Միջամտութեամբ ընդունելութիւն . — Փոխանակագրին շրջաբերութեան ատեն՝ տարբեր անձեր զանազան անուններով և այլեւայլ առթիւ կը մասնակցին փոխանակագրին ընդունելութեանը և վճարմանը, զորս մի առ մի պիտի բացատրենք:

Չ'ընդունուելուն համար փոխանակագիրը բողոքուելէն ետքը՝ բացէն մէկը կրնայ, ըստ օրինի, ընդունիլ զայն և օրին վճարել՝ քաշողին կամ փոխանցողներէն մէկուն համար, որուն կ'ըսուի Միջամտութեամբ ընդունելութիւն, որ բողոքագրի թղթին վրայ գրուելով միջամտողը կը ստորագրէ, որովհետեւ, ինչպէս ընդունելութեան առթիւ ըսինք, յանձնառութիւն մը առանց ստորագրութեան արժէք չ'ունենար:

Փոխանակագրին բացէն մէկուն միջամտութեամբ ընդունուելուն և վճարուելուն պատճառն այն է որ՝ թուղթը ետ զրկելու և այդ առթիւ Գարձի հաշիւ պատրաստելու հարկ չ'ըլլայ, և մասնաւոր քաշողին կամ փոխանցողին պատուոյն արատ չ'գայ:

Միջամտութեամբ ընդունողն, առանց ժամանակ անցնելու, նամակով կամ հեռագրով պէտք է իմացնէ իր միջամտութիւնը անոր, որուն համար ըրած է այդ միջամտութիւնը, որովհետեւ եթէ չ'իմացնէ՝ քաշողը՝ թղթին չ'ընդունուելէն տեղեկութիւն չ'ունենալով, կրնայ ըլլալ որ փոխանակագրին փոխարէնը նոյն օրերը վճարողին զրկէ, հետեւաբար միջամտութեամբ ընդունողը պատասխանատու կ'ըլլայ, եթէ այդ պատճառաւ քաշողին վնաս ըլլայ:

Փոխանակագիրը միջամտութեամբ ընդունուելէն ետքն ալ անոր տէրը քաշողին և փոխանցողներուն նկատմամբ ունեցած իրաւունքները կը պահէ, որովհետեւ կրնայ ըլլալ որ թղթին տէրը ընդունողին վրայ մեծ համարում ունենալուն համար զայն առած ըլլայ, ո՛չ թէ միջամտողին, որ թերեւս իրեն անյնչափ վատահաւթիւն չ'ներշնչէ: Քաշողը բուն առջի ընդունելութիւնը խոստացած էր, բայց որովհետեւ հիմա այդ չի տրուիր իրեն, ուստի անոր համար է որ քաշողին դիմելու իրաւունքը կը պահէ:

Բազմաթիւ միջամտողներ ընդունելութեան համար . — Եթէ չ'ընդունուած փոխանակագիրը շատեր ուզեն ընդունիլ միջամտութեամբ, պէտք է նայիլ թէ՛ միջամտողները տա՞րբեր մարդոց համար կը ներկայանան, թէ ամէնքն ալ նոյն մարդուն համար: Առաջին պարագային՝ այսինքն, եթէ միջամտողը տարբեր մարդոց համար ներկայանի՝ զորօրինակ, անոնցմէ մէկը՝ քաշողին և ուրիշ մը՝ փոխանցողներէն մէկուն համար միջամտեն, առաջինին նախապատուութիւն տալու է, որովհետեւ նա թէ՛ քաշողը և թէ՛ փոխանցողները կ'ազատէ. մինչդեռ միւս միջամտողը միայն անոր փոխանցողը և անկէ ետքինները կ'ազատէ և

ո՛չ անկէ առջինները: Երկրորդ պարագային՝ այսինքն, եթէ միջամտողներն ամենքն ալ միեւնոյն մարդուն համար ներկայանան՝ նախապատուութիւնը առաջին անգամ ներկայացողին տալու է:

Բռն ընդունողն իր միջանոցը. — Փոխանակագրին ընդունողն ալ երբեմն միջամտող կ'ըլլայ. օրինակի համար, ընդունողը՝ իր վրայ քաշուած թղթին փոխարէնը քաշողէն ստացած չ'ըլլալուն կը մերժէ քաշողին համար ընդունիլ. բայց միեւնոյն ատեն փոխանցողներէն մէկուն պարկեշտութեան և պարտաճանաչութեան վրայ վստահ՝ անոր պատուոյն համար միջամտութեամբ կ'ընդունի թուղթը, անշուշտ բողոքուելէն ետքը, ինչպէս առաջ ալ ըսինք:

Այսպէս՝ միջամտողը փոխանակագիրը վճարելէն ետքը՝ կըրնայ այդ փոխանցողէն և անկէ առջիններէն, ինչպէս նաեւ քաշողէն պահանջել իր վճարած գումարը, մինչդեռ եթէ պարզապէս քաշողին համար ընդունած ըլլար՝ միայն անոր կրնար դիմել, իսկ փոխանցողներուն ո՛չ:

Պայմանաժամ. — Ինչպէս որ փոխանակագրին վճարումը պայմանաւոր չի կրնար ըլլալ, անանկ ալ անորոջ ժամանակի մէջ վճարելի չ'ըլլար: Այլ փոխանակագիրը վճարելի կ'ըլլայ տեսնուած ատեն, որուն Տեսորին վճարելի կ'ըսուի, թուականէն կամ տեսորէն որոշեալ պայմանաժամէ մը ետքը: Հետեւաբար Պայմանաժամ ըսուածը՝ թղթին վճարուելու օրն որոշող յայտարարութիւնն է, որ, ինչպէս փոխանակագրին գործնական ձեւին վրայ խօսած ատեննիս ըսինք, փոխանակագրին խմբագրութեան սկզբնաւորութիւնն է: Արդարեւ ի՞նչ նշանակութիւն կ'ունենայ այն թուղթը, որուն մէջ վճարուելու օրն որոշող յայտարարութիւն մը չ'ըլլայ:

Փոխանակագիրը զանազան պայմանաժամներով կը քաշուին: Առեւտրական Օրէնքը փոխանակագրին պայմանաժամները այսպէս որոշած է:

- 1. Տեսորին կամ ներկայացուելուն վճարելի
 - 2. Մէկ կամ աւելի օր ետքը
 - 3. » » » ամիս »
 - 4. » » » օր »
 - 5. » » » ամիս »
- } Տեսորէն
- } Թուականէն
- 6. Ո՛ր եւ է ամսոյ որոշեալ մէկ օրը
 - 7. Տօնավաճառի մէջ վճարելի:

Միւս երեսը յիշուած պայմանաժամներն որոշելու համար հետեւեալ պարբերութիւնները կը գործածուին, զորս նախորդ թիւերովը կը նշանակենք:

- 1. Տեսորին կամ Փոխանակագիրս ներկայացուելուն վճարեցիք, ևլն.
- 2. 3. Տեսորէն այսօր կամ այսօր ամիս շրանաշուն վճարեցիք. ևլն.
- 4. 5. Թուականէս այսօր կամ այսօր ամիս շրանաշուն վճարեցիք, ևլն.
- 6. Յառաջիկայ Յունիսար 10 ին կամ Մարտ ամսոյ վերջին վճարեցիք, ևլն.
- 7. Այսինչ տեսութեան վճարեցիք, ևլն:

Փոխանակագրոց վերաօրերը գտնալ. — Տեսորին կամ ներկայացուելուն վճարելի թղթերը վճարողին ներկայացած օրը կը վճարուին, որովհետեւ այս տեսակ փոխանակագիր ա՛յն ատեն կը քաշուի, երբ պարտականը իր պարտք գումարը պահանջատիրոջ տրամադրութեանը պահելով՝ կ'արտօնէ զինքը որ ո՛ւզած ատենը և ո՛ւզած պայմանաժամովը վրան թուղթ քաշէ:

Վճարող՝ տեսորէն այսօր կամ ամիս ետքը վճարելի թղթերը. — Փոխանակագրին ընդունելութեան ստիճակ ըսինք թէ փոխանակագիրը եթէ տեսորէն այսքան օր կամ ամիս ետքը վճարելի է՝ ընդունուած ատեն թուական զնել պարտաւորիչ է թըզթին վճարօրն որոշուելու համար: Արդ՝ տեսորէն այսքան օր կամ ամիս ետքը վճարելի փոխանակագրոց վճարօրը՝ անոնց ընդունուած օրէն կը հաշուուի. իսկ չ'ընդունուելուն համար բողոքուած ատեն՝ բողոքագրին թուականէն կը հաշուուի:

Օրինակ տեսորէն այսօր կամ ետքը վճարելի փոխանակագրի

Մարտ 10 ին կարինէն քաշուած տեսորէն 11 օր ետքը վճարելի փոխանակագիրը Մարտ 22 ին ընդունել տուինք: Արդ՝ Մարտ 22 էն սկսելով, որ ընդունուած օրն է, 11 օրը լրացած օրը գրամը պիտի զանձենք: Սովորութիւն է ընդունուած օրը, այսինքն, Մարտ 22-րդ օրը ձգել և յաջորդ օրէն հաշուել: Ուրեմն Մարտը 31 օր (ամիսները իրենց օրերովը կը հաշուեն) ըլլալով, Մարտ 23 էն 31՝ 9 օր կ'ընէ, որուն վրայ աւելցնելով Ապրիլէն 2 օր եւս, կ'ըլլայ 11 օր, որ է փոխանակագրին պայմանաժամը. ըսել է Ապրիլ 2 ին կ'ըլլայ այդ թղթին վճարօրը: Իսկ ընդհակառակը, ամիսներուն 30 էն աւելի կամ պակաս օրերը նկատողութեան

չառնուիր՝ երբ թուղթը տեսօրէն այսքան ամիս ետքը վճարելի է: Այս տեսակ թղթոց վճարօրը անոնց տեսօրի թուականին ամսոյն քաներորդէն մինչեւ վճարօրին պատահած ամսոյն նոյն-երորդ օրը հաշուելով կը գտնուի:

Օրինակ տեսօրէն այսօր ամիս ետքը վճարելի փոխանակագրի

Մայիս 15 ին՝ տեսօրէն 3 ամիս պայմանաժամով քաշուած և Յունիս 10ին ընդունուած փոխանակագրին վճարօրը՝ փոխանակ Սեպ. 8ի՝ (Յունիս 10էն Սեպ. 8 ճիշդ 90 օր կ'ընէ) Սեպ. 10ին կ'ըլլայ, առանց հաշուելու Յուլիսի և Օգոստ.ի 30 էն աւելի 2 օրերը, որ 92 օր կ'ընէ:

Վճարօր՝ քուականէն այսօր ամիս ետքը վճարելի քրդ-թերու. — Դարձեալ ընդունելութեան առթիւ ըսինք թէ՛ փոխանակագիրը եթէ թուականէն այսքան օր կամ ամիս ետքը վճարելի է՝ անոր ընդունելութեան թուական ղենելու հարկ չկայ, քանի որ թուղթը քաշուած ատեն իր թուականն ունի. հետեւաբար վճարօրն ալ թուականէն սկսեալ հաշուելով կ'որոշուի:

Օրինակ քուականէն այսօր ամիս ետքը վճարելի փոխանակագրի

Մայիս 18 էն 21 օրէն վճարելի փոխանակագրին վճարօրը Յունիս 8 ին կ'ըլլայ, որովհետեւ, ինչպէս ըսինք, առեւարական թղթոց վճարօրը գտնալու համար առջի օրը չեն հաշուեր. հետեւաբար Մայիս 18օր օրը չ'հաշուելով՝ Մայիս 19 էն 31՝ 13 օր կ'ընէ, որուն վրայ աւելցնելով Յունիսէն 8 օր եւս, կ'ըլլայ 21 օր, որ է փոխանակագրին պայմանաժամը. ըսել է Յունիս 8 ին կ'ըլլայ այդ թղթին վճարօրը: Նոյնպէս, ամիսներուն 30 էն աւելի կամ պակաս օրերը նկատողութեան չ'առնուիր՝ երբ թուղթը թուականէն այսքան ամիս ետքը վճարելի է: Այս տեսակ թղթոց վճարօրը անոնց թուականին ամսոյն քաներորդէն մինչեւ վճարօրին պատահած ամսոյն նոյներորդ օրը հաշուելով կը գտնուի:

Օրինակ քուականէն այսօր ամիս ետքը վճարելի փոխանակագրի

Յունվար 4 էն 2 ամիսէն վճարելի փոխանակագրին վճարօրը փոխանակ Մարտ 5ի՝ (Յունվար 4 էն Մարտ 5 ճիշդ 60 օր կ'ընէ) Մարտ 4 ին կ'ըլլայ, առանց հաշուելու, ինչպէս ըսինք, Յունվարի 30 էն աւելի 1 օրն և Փետր.ի 30 էն պակաս 2 օրերը, որոնց գումարը 59 օր կ'ընէ: Այսպէս կը հաշուուի այն թղթերը (փոխանակագիր, հրամանի տոմսակ), որք թուականէն կամ տեսօրէն այսքան ամիս ետքը վճարելի են:

Պէտք է գիտնալ սակայն թէ՛ երբ փոխանակագրին վճարօրին պատահած ամսոյն մէջ՝ թղթին քաշուած կամ ընդունուած թուականին ամսոյն համապատասխանող միեւնոյներորդ օրը չ'գտնուի՝ այն ատեն պայմանաժամը կրճատուելով, նոյն թղթին վճարօրը կ'ըլլայ պայմանաժամին պատահած ամսոյն վերջին օրը, օրինակ. Հոկտ. 31 ին քաշուած (եթէ թուականէն վճարելի է) կամ նոյն օրն ընդունուած (եթէ տեսօրէն վճարելի է) 4 | ամս. թղթին վճարօրը փոխանակ Փետր. 31 ի՝ Փետր. 28 ին կ'ըլլայ, զի Փետր.ը 31 օր չունի, ուստի պայմանաժամը կրճատուելով վճարօրը Փետր. 28 ին կ'ըլլայ: Իսկ ընդհակառակը Փետր. 28 էն 3 | ամս. թղթին վճարօրը՝ Մայիս 28 ին կ'ըլլայ, որ 89 օր կ'ընէ, որովհետեւ, ըստ օրինի պայմանաժամը չի կրնար երկարիլ: Ուրիշ բան է, եթէ թուղթը դարձեալ Փետրուարի վերջին օրը քաշուած ըլլալով՝ թուականը, փոխանակ Փետր. 28 գրուելով՝ Փետրուարի վերջին 3 | ամիսէն գրուած ըլլայ, այն ատեն պայմանաժամը կրնայ երկարիլ (որովհետեւ ամսոյն վերջը գրուած է) եւ թղթին վճարօրը կ'ըլլայ պայմանաժամին պատահած ամսոյն վերջին օրը, այն է՝ Մայիս 31 ին, փոխանակ Մայիս 28 ին ըլլալու, որ օրի հաշուով 92 օր կ'ընէ: Բայց, ինչպէս ըսինք, այս տեսակ պարագաներու մէջ ամսոյն աւելի կամ պակաս օրերը նկատողութեան չ'առնուիր:

Վճարօր՝ որ եւ է ամսոյ որոշեալ մեկ օրը վճարելի փոխանակագրի. — Օգոստ. 10ին կամ Փետր. 8ին վճարելի: Այս պարագային՝ թղթին վճարօրը կ'ըլլայ անոր մէջ գրուած և որոշուած օրը. հետեւաբար և վճարօրը գտնալու համար՝ վերոյիշեալ թուականները փնտել եւ հաշուելու հարկ չի մնար:

Վճարօր՝ տեսիլաձևադր վճարելի փոխանակագրի. — Տօնաժամուտի մէջ վճարելի փոխանակագրին վճարօրը տօնաժամուտը վերջանալուն նախընթաց օրը կ'ըլլայ. զորօրինակ, տօնաժամուտը եթէ 5 օր տեւողութիւն ունի՝ փոխանակագիրը 4րդ օրը կը վճարուի. եթէ մէկ օր տեւողութիւն ունի՝ վճարօրը կ'ըլլայ նոյն օրն իսկ:

Փոխանակագրին վճարօրը եթէ Օրինական տօնի պատահի՝ օր մ'առաջ կը վճարուի: Թէև Թուրքիոյ մէջ ասոր հակառակն ըլլալով, օր մը ետքը վճարել սովորութիւն եղած է:

Օրինական տօնի օրերը. — Առեւտրական Օրէնքը պաշտօնապէս տօնի օր կը ճանչնայ Մահմեդականներու համար՝ Ուրբաթը, Քրիստոնէից համար՝ կիրակին և Հրէից համար՝ շաբաթը:

Փոխանակագրին վճարօրին պէտք է որ անոր գումարը վճարուի: Ըստ օրինի արգելեալ է՝ իրր տեղական սովորութիւն, որ և իցէ միջոց տալ և թոյլտուութիւն ընել վճարողին: Թէև Քաղաքային Օրէնքը շատ խիստ չ'է այս մասին, և դատարանք

կրնան քիչ կամ շատ միջոց տալ ոչ-առեւտրական պարտքերու վճարման համար, բայց վաճառականութեան շահը կը պահանջէ որ առեւտրական յանձնառութիւններն օրը օրին և ճշդիւ գործադրուին. ա՛տոր համար է որ վերոյիշեալ թոյլտուութիւնք ջընջուած ⁽¹⁾ և արգիլուած են:

Անգլիոյ մէջ սովորութիւն կայ որ պայմանաժամով փոխանակագրոց վրայ Jours de grace անուանով 3 օր եւս կ'աւելցնեն, և թղթին բուն վճարօրէն 3 օր ետքը կը վճարուին. այսինքն, Մայիս 16 էն 3 | ամս. թուղթը, որուն պայմանաժամը Օգոստ. 16 ին կը լրանայ, Լօնտրայի մէջ Օգոստ. 19 ին կը վճարուի: Եւ անգլիական դրամատունք և սեղանաւորք այս տեսակ թղթեր զեղչած ատեննին՝ յաւելուածական այդ 3 օրուան տոկոսն ալ կ'աւնեն:

Փոխանցումն. — Փոխանակագրին հրամանին համար ըսինք թէ՛ այն՝ որուն հրամանին շինուած է թուղթը, անոր տէրն է և առանց այդ կարեւոր կէտը (Հրամանը) գրուելու՝ փոխանակագիրը չի կրնար ուրիշի անցնիլ:

Արդ՝ հոս պիտի բացատրենք թէ՛ փոխանակագիրն ի՞նչպէս ուրիշի կ'անցնի, և թէ՛ օրինական ի՞նչ կարեւոր գիտելիքներ կան այդ մասին:

Փոխանցումն կ'ըսուի այն ստորագրուած գրութեան, որուն գօրութեամբ փոխանակագրին տէրը՝ Օրէնքին պահանջած ձեւակերպութիւններովը և միեւնոյն ատեն թղթին օրին վճարուելուն համերաշխ ըլլալու պայմանով՝ անոր մէջ գրուած գումարը ստանալու սեպհականութիւնը ուրիշի կը թողու կամ կը փոխանցէ՛ համարժէքը ստանալով անկէ:

Փոխանակագիր քաշողն՝ անոր մէջ Վճարեցե՛ք..... ի հրամանին գրելով, թուղթը ձեռքը գտնուող անձին իրաւունք կը տայ վճարօրէն առաջ, եթէ դրամի պէտք ունենայ՝ զայն երրորդի մը ծախելու և անոր իրական արժէքն անմիջապէս անկէ ստանալու, նա ալ ուրիշի կը ծախէ և այսպէս շարունակաբար. հետեւապէս փոխանակագրին փոխանցողաց թիւը, ինչպէս ըսինք, որոշեալ չէ. փոխանակագիր մը ո՛րչափ շատ շրջաբերի՝ ա՛յնչափ ալ փոխանցում շատ կ'ունենայ: Ահա այս կարեւոր առաւելութեան համար ըսինք թէ՛ Հրամանի վճարուելու կէտը փոխանակագրին հոգին է:

[1] Jours de grace ին համար քսել կ'ուզէ, զոր ուրիշ եւրոպական ազգեր ալ ջնջած են, որպէս Գաղիա, Գերմանիա, Զուիցերիա, Իսպիա, Սպանիա և Պելճիկա:

Ուրեմն փոխանակագրին տէրը երբ զայն ուրիշի ծախէ կամ փոխանցէ՛ թղթին ետին կը գրէ

Վճարեցե՛ք S. Մ. Սիմօնեանի
հրամանին,
Արժէք կանխիկ դրամով ըն-
դունած եմ:
Կ. Պոլիս, 8 Յունիս 1897
(Փողանցողին Ստորագրութիւնը)

Փոխանցումը փոխանակագրին ետեւի պարագ պրեսին վրայ կը գրուի. առջի փոխանցումը քաշողին ստորագրութեան կողմէն կ'սկսի թղթին լայնքին, որպէս զի առաջին փոխանցումը թղթին պարագ լուսանցքին վրայ չ'իյնայ, և կարելի հանելն անկարելի ըլլայ ⁽¹⁾, որովհետեւ եթէ այդ վիճակին մէջ կարուի՝ քաշողին ստորագրութիւնն ալ հետը կ'ելլայ:

Փոխանցումն օրինական ձեւակերպութիւնը. — Փոխանցումը օրինաւոր ըլլալու համար պէտք է գրուի անոր մէջ,

1. Որո՞ւն հրամանին փոխանցուիլը
2. Արժէքն ի՞նչ բանով վճարուած ըլլալը, այսինքն, դրամ, սպրանք կամ ի հաշիւ ըլլալը
3. Փոխանցման թուականը
4. Փոխանակագիրը ծախողին կամ փոխանցողին ստորագրութիւնը:

Այս շորս կէտերը չպարունակող փոխանցումը անկանոն կ'ըլլայ, և անկանոն փոխանցումով փոխանակագիրը ուրիշի չի կրնար անցնիլ. այլ միայն փոխանցողին կողմէն տրուած փոխանորդագիր մը կը համարուի անոր հաշոյն դրամը գանձելու համար:

Փոխանցման մէջ թուական գրելն անհրաժեշտ դատած է

[1] Անգլիոյ վրայ բաւուած փոխանակագրի մը փոխանցման անուններուն մէջ եթէ տառասխալ մ'իսկ գտնուի՝ այսինքն, փոխանցման մը հրամանախոյ անունն եւ յաջորդ փոխանցողին, որ միեւնոյն անուն է՝ ստորագրութիւնն եթէ տարբեր գրելով գրուին՝ նոյն բուզը կը մերժուի եւ չի վճարուի:

Օրէնքք. Ա.՝ փոխանցողներուն կարգը որոշուելու համար, որովհետեւ, ինչպէս ետքը պիտի բացատրենք, ամէն փոխանցող իրմէ ետքի փոխանցողներուն նկատմամբ համերաշխ է փոխանակազրին վճարման համար. Բ.՝ հասկցուելու համար թէ՛ փոխանցողը՝ իր փոխանցած օրը ըստ օրինի արտօնեա՞լ էր ստորագրելու, այսինքն թուղթը ծախած և դրամն առած օրը արդէն սնանկացա՞ծ թէ սնանկանալու վրայ էր: Որովհետեւ սնանկութենէն 11 օր առաջ եղած փոխանցումներն ոչինչ կը համարուին: Ասո՛ր համար է որ Օրէնքք արգիլած է փոխանցումը կատարուած օրէն առաջ թուական դնելը, և ասանկ բան մ՞ընողն Օրէնքին առջև խարդախ կը ճանչցուի, և իրեն յատուկ պատիժը կը կրէ:

Բաց փոխանցումն այն է՝ որ փոխանցողը թղթին ետին միայն կ'ստորագրէ, առանց գրելու Օրէնքին պահանջած միւս երեք կէտերը, որոնցմով միայն կարելի է հաստատել թղթին յաջորդաբար տէրերը: Օրէնքք փոխանցման օրինաւոր ձեւը թէեւ որոշած՝ բայց և այնպէս գործի մէջ դիւրութեան համար փոխանակազրերը և հրամանի տոմսակները շատ անգամ Բաց փոխանցումնով կը շրջաբերին: Թուղթ զեղչող սեղանաւորք ընդհանրապէս բաց փոխանցումով կ'առնեն զեղչած թղթերինն: Այստեղանգերմ՝ ամէն փոխանցող կրնայ իր ձեռքով գրել և լրացնել փոխանցման միւս երեք կէտերը: Վերջին փոխանցողը, որ թուղթը պիտի գանձէ, փոխանցումը կ'ամբողջացնէ իր անունին՝ փոխանցման միւս կէտերը գրելով՝ իրեն փոխանցողին ստորագրութեան վրայի պարագ մասին մէջ, և դրամը առած ատեն ալ իր ստացազիրը գրելով կ'ստորագրէ: Այս կերպով փոխանցումը իր օրինաւոր ձեւը կ'առնէ, բաւական է որ փոխանցողին սնանկութենէն կամ մահէն ետքը եղած չ'ըլլայ:

Բաց փոխանցման անպատեհութիւնները. — Որովհետեւ բաց փոխանցման մէջ փոխանցողը միայն իր ստորագրութիւնը կը դնէ, յորմէ յայտնի չ'ըլլար թուղթը ձեռքը գտնուող անձին անոր տէրը ըլլալը. այս պարագային՝ վճարողը եթէ կասկածի, իրաւունք ունի դրամը չ'վճարել և պահանջել որ թուղթը ներկայացնողը անոր ճշմարիտ տէրն ըլլալը հաստատէ, նոյն խոյ եթէ ներկայացնողը ինքն իր ձեռքով լեցուցած ըլլայ փոխանցման միւս կէտերը: Ասկէ զատ՝ փոխանցողը եթէ թղթին վճարօրէն առաջ մեռնի կամ սնանկանայ՝ փոխանակազրիւրը ներկայացնողը անոր տէրը եղած ըլլալը ապացուցանելու համար պէտք է հաստատէ անոր Արժեքն ինչո՞վ առած ըլլալը. եթէ չ'կրնայ հաստատել՝ այդ անձը, ինչպէս անկանոն փոխանցման մասին ըսինք, կը նկատուի փոխանցողին իրր փոխանորդը՝ թուղթը ծախելու և դրամը անոր հաշույն գանձելու համար, և այդ փոխանորդու-

թիւնը իրաւամբ կը ջնջուի՝ փոխանորդողին (այսինքն, փոխանցողին) մահուամբ կամ սնանկութեամբ: Եւ թուղթը անկանոն կերպով փոխանցողին սնանկութեան ատեն՝ այդ թղթին տէրը չի կրնար զայն ուրիշի փոխանցել, մինչեւ անգամ կրնայ ըլլալ որ դատարանէն վճիռ ստանայ յիշեալ փոխանակազրիւրը սնանկացողին Մասաին յանձնելու:

Աննշան փոխանցումը. — Շատ անգամ փոխանակազրիւր գնողը՝ փոխանակ իր հրամանին շինել տալու՝ Ենթադրական կամ Աննշան մէկուն (ընդհանրապէս գնողին վաճառատան մէկ պաշտօնէին կամ բեռնակրին) հրամանին շինել կը տայ, և ծախած ատեն նոյն աննշան անձին ստորագրութեամբ կը փոխանցէ՝ անշուշտ առնողին գիտութեամբն ու հաւանութեամբը, որով ծախողը նոյն թղթին պատասխանատուութենէն կ'ազատի: Այս տեսակ փոխանակազրիւր չ'վճարուած ատեն՝ թղթին տէրը, բնականաբար առանց այդ աննշան անձին դիմելու, նոյն խոյ քաշողին կը դիմէ անոր գումարը պահանջելու, եթէ վրան ուրիշ փոխանցում չ'ըլլայ: Այս աննշան անունին գաղղիերէն Homme de bois կ'ըսուի, որ հայերէն Փայտե մարդ ըսել է:

Այս միջոցը աւելի կը գործածեն փոխանակազրի միջնորդները, որք մեծ դրամատուններէ և զլրաւոր սեղանաւորներէ մեծաքանակ փոխանակազրիւր գնելով և ծախելով՝ չ'են ուզեր իրենց համեստ կարողութիւնը վտանգի ենթարկել՝ թղթերը իրենց հրամանին շինել տալով՝ վերջէն իրենց ստորագրութեամբ ուրիշի ծախելով:

Փոխանցումը եթէ սխալ գրուի կամ պատճառով մը ջնջելու դուրի՝ չ'կարգացուելու աստիճան կրնայ արուել վրան մեղանով հաստ գիծեր քաշելով, և անոր տակը ուղիղ փոխանցումը գրուել:

Փոխանակազրի շատ գործ ընող սեղանաւորք և դրամատունք, ժամանակի կորուստ չ'ըլլալու և փոխանակազրին իր վաշելու ձեւը չ'կորսնցնելու համար, Փոխանցման անուն համար, զոր Թ. 143 ին մէջ ցուցուցինք, մետաղէ կամ քառուէ կնիք կ'ունենան, փոխանցման անունին, արժէքին և թուականին տեղերը պարագ ձգուած: Երբ փոխանակազրիւրը փոխանցել հարկ ըլլայ, կնիքը իրեն յատուկ մեղանով կը վարնուի փոխանակազրին ետին, և մէջի պարագ մասերը գրչով կը լեցուին:

Երկայնորդ փոխանակազրի. — Փոխանակազրին փոխանցումներուն թիւը անասճման է ըսինք: Արդ՝ երբ փոխանակազրին ետին փոխանցումներով լենայ և նոր փոխանցում գրելու տեղ չ'ըլլայ, թղթին տէրը՝ փոխանակազրին մեծութեամբ և տարա-

ծութեամբ պարզ թուղթ մը կը փակցնէ փոխանակագրին ա՛յն ծայրը, ուսկից փոխանցումները պիտի շարունակուին, որով փոխանակագրին աւելի երկայնութիւն մը տրուած կ'ըլլայ. այս փակցուած թղթին կ'ըսուի երկայնորդ, որուն վրայ կը շարունակուին այնուհետեւ նոր գրուելիք փոխանցումները: Երբ այս երկայնորդն ալ լենայ՝ երկրորդ մը և երրորդ մ'ալ կրնայ փակցուիլ. բայց այս վերջինը քիչ կը պատահի, երկայնորդը կ'երեւայ աւելի եւրոպական քաղաքներու վրայ քաշուած թղթերու վրայ, որք ընդհանրապէս 3 | ամս. ըլլալով՝ շատ քաղաքներ կը շրջաբերին: Թուրքիոյ գաւառներէն քաշուած և Թուրքիա վճարելի թղթերը մտակայ քաղաքներէ և ընդհանրապէս կարճ պայմանաժամով (այսինքն, 3—11 օր) ըլլալուն՝ շատ ձեռքէ չեն անցնիր, հետեւաբար և երկայնորդ ալ չ'են ունենար:

Երկայնորդին առջի երեսին վրայ, այսինքն, փոխանակագրին գրութեան կողմը կը գրուին փոխանակագրին բոլոր կարեւոր մանրամասնութիւնները, որպէս զի եթէ փակած տեղէն գտաուի՝ ո՛ր փոխանակագրին երկայնորդն ըլլալը հասկցուի: Նոյնպէս կարելի է երկայնորդին վրայ պարզապէս օրինակել փոխանակագիրը, բայց այնպէս մը գրելու է որ երկայնորդին վրայ գրուած տողերը փոխանակագրին վրայ աւարտին. սակէ գատ, իբր զգուշութիւն, երկայնորդ փակցնողը՝ իր գրելիք փոխանցման մէկ մասը փոխանակագրին վրայէն սկսելով գրելու է, և մէկ մասը երկայնորդին վրայ և հոն աւարտելու է:

Փոխանակագիրը փոխանցումով լեցած ատեն՝ երբեմն առանց երկայնորդ փակցնելու ալ նոր փոխանցում կը գրուի: Փոխանցողը՝ վերջին փոխանցման վրայէն, որ միւս բոլոր փոխանցումներուն պէս սեւ մելանով գրուած է, հակառակ ուղղութեամբ, այսինքն, թղթին երկայնքին իր փոխանցումը կարմիր մելանով կը գրէ յտակ երեւալու համար, և ստորագրութիւնը միայն սեւ մելանով կը դնէ: Այսպէս կը շարունակուին հետզհետէ միւս ըլլալիք փոխանցումները նախորդ փոխանցումներուն վրայ գրուելով, մինչև որ լենայ, ինչպէս կ'երեւայ փոխանակագրի քովի օրինակին վրայ: Փոխանակագիրը վճարուած ատեն՝ վառն ստացմանը ո՛չ թէ երկայնորդին՝ այլ բուն իսկ փոխանակագրին վրայ կը գրուի:

Համերաշխութիւն. — Հաւաքական ընկերութեանց վրայ խօսած ատեննիս՝ մասամբ բացատրեցինք թէ ի՞նչ է համերաշխ պարտականութիւնը կամ Համերաշխութիւնը: Աւելորական Օրէնքը համերաշխութիւնը փոխանակագրին համար ալ դրած է, այնպէս որ փոխանակագիր քաշողը, ընդունողը և փոխանցողը թղթին

տիրոջ հանդէպ պատասխանատու և համերաշխ պարտական են, քանի որ ատենք թղթին վրայ մէկ մէկ կերպով ստորագրութիւն դնելով՝ անոր անթերի վճարմանը յանձնատու կ'ըլլան: Օրէնքին թոյլատրած այս համերաշխութիւնը՝ փոխանակագրին տիրոջ իրաւունք կը սայ դիմել և թղթին վճարումը պահանջել փոխանակագիրը ստորագրողներէն թէ՛ հաւաքապէս և թէ՛ անհատապէս:

ՍԵՆՏԵՄԲԵՐ 1897

Գրութեան արտադրող ընկերութիւն:

Ստորագրողը. 24 սեպտ. 1897

Նշողը. Ստորագրողը

Ստորագրողը. Ստորագրողը

Ստորագրողը. Ստորագրողը

Ստորագրողը. Ստորագրողը

Ստորագրողը. Ստորագրողը

Ստորագրողը. Ստորագրողը

Ստորագրողը. Ստորագրողը

Ստորագրողը. Ստորագրողը

փոխանակագրին վրայ գրուած թղթին կամ փոխանցողներէն մէկուն համար. այն յանձնատուութեան

[1] ո՛չ փոխանցող, ո՛չ ետող և ո՛չ ալ ընդունող, այսինքն, փոխանակագրին վրայ ստորագրութիւն չ'ունեցող մէկը ըլլալու է. վասն զի անոնք սրբից զլիաւոր պատահաններն ըլլալով՝ երաժշտութիւն չ'են կրնար ըլլալ:

ծուծեամբ պարզ թուղթ մը կը փակցնէ փոխանակագրին ա՛յն ծայրը, ուսկից փոխանցումները պիտի շարունակուին , որով փոխանակագրին աւելի երկայնութիւն մը արուած կ'ըլլայ . այս փակցուած թղթին կ'ըսուի Երկայնորդ , որուն վրայ կը շարունակուին այնուհետեւ նոր գրուելիք փոխանցումները : Երբ այս երկայնորդն այլ լենայ՝ երկրորդ մը և երրորդ մ'այլ կրնայ փակ-

Handwritten notes in Armenian and French, including dates like 1897 and names like M. Michaelian.

Համերաշխութիւն . — Հաւաքական ընկերութեանց վրայ խօսած ատեննիս՝ մասամբ բացատրեցինք թէ ի՞նչ է համերաշխ պարտականութիւնը կամ Համերաշխութիւնը : Աւետարական Օրէնքը Համերաշխութիւնը փոխանակագրին համար ալ դրած է , այնպէս որ փոխանակագիր քաջողը , ընդունողը և փոխանցողը թղթին

որտը հանդէպ պատասխանատու և համերաշխ պարտական են , շանի որ ատենք թղթին վրայ մէկ մէկ կերպով ստորագրութիւն դնելով՝ անոր անթերի վճարմանը յանձնատու կ'ըլլան : Օրէնքին թոյլատրած այս համերաշխութիւնը՝ փոխանակագրին տիրոջ իրաւունք կը սայ դիմել և թղթին վճարումը պահանջել փոխանակագիրը ստորագրողներէն թէ՛ հաւաքապէս և թէ՛ անհատապէս . ընտրութիւնը իր ձեռքն է . այնպէս որ , ստորագրողները չեն կրնար պահանջել որ այդ դիմումը և պահանջումը բոլոր ստորագրողաց վրայ հաւասարապէս բաժնուի . այսինքն անվճար 4000 դր. թղթի մը դումարը , որուն վրայ քաջողէն և ընդունողէն գատ , դիցուք թէ՛ երկու ալ փոխանցող կայ , (ըսել է 4 անձ) չի կրնար 1000ական դր. ի բաժնուիլ և ամէն մէկ ստորագրողէ այնչափ գումար վճարուելու որոշում արուիլ . այլ թղթին տէրը ազատ է անոնցմէ որո՛ւ որ ուղէ անոր դիմելու , (քաջողին , ընդունողին , փոխանցողներէն մէկուն) և ըստ օրինի ստանալու թղթին ամբողջ գումարը : Սա կէտը պէտք է ուշադրութեան առնուլ թէ՛ փոխանակագրին տէրը բնականաբար նախ ընդունողին կը ներկայացնէ և անոր վճարուիլը կը պահանջէ . երբ սա չի վճարէ՝ ա՛յն ատեն միայն կը դիմէ իրմէ առջի փոխանցողին , այսինքն , թուղթը իրեն ծախողին և անոր գումարը կը պահանջէ . և եթէ ան ալ չ'վճարէ՝ կը դիմէ անկէ առջի փոխանցողին . այսպէս փոխանցողէ փոխանցող մինչեւ քաջողին կը դիմէ և անկէ կը պահանջէ թղթին գումարը ծախքերով մէկտեղ : Եթէ փոխանցողներէն մին վճարէ , այն ատեն այդ փոխանցողը փոխանակագրին տէրը ըլլալով՝ ան ալ իրաւունք ունի , ըստ օրինի , իրմէ առջի փոխանցողներուն և մինչեւ քաջողին դիմելու և իր վճարած գումարը անոնցմէ պահանջելու : Պարագայ մը միայն փոխանցողներուն համերաշխութիւնը կ'ոչնչացնէ , այսինքն , եթէ փոխանակագիրը ժամանակին բողոքուած չ'ըլլայ :

Երաշխաւորութիւն . — Ընդունողէն և փոխանցողներէն գատ՝ ուրիշներ ալ զանազան անուններով կը միջամտեն . ըսինք , փոխանակագրին մէջ . այդ միջամտողներէն մէկն ալ Երաշխաւորն է , որ բոլորովին բացէն մէկը (1) կ'ըլլայ , և պարզապէս յանձն կ'առնէ փոխանակագրին վճարումը երաշխաւորել , քաջողին , ընդունողին կամ փոխանցողներէն մէկուն համար . սոյն յանձնատուութեան

[1] Ա՛յ փոխանցող , ո՛չ քաջող եւ ո՛չ ալ ընդունող , այսինկն , փոխանակագրին վրայ ստորագրութիւն չ'ունենցող մէկը ըլլալու է . փասն զի անոնք արդէն զլիաւոր պարտականներն ըլլալով՝ երաշխաւոր չ'են կրնոր ըլլալ :

Երաշխատութիւն կ'ըսուի. Օրինակ, երբ փոխանակագիր զնոյր վճարողին վրայ շատ վստահութիւն չ'ունենայ՝ ըստ օրինի իրաւունք ունի թուղթը ծախողէն ուրիշ երաշխաւոր մ'ուզելու, որպէս զի եթէ ընդունողը չ'վճարէ՝ երաշխաւորէն պահանջէ թղթին գումարը:

Փոխանակագիրը երաշխաւորողը՝ քաշողին և փոխանցողներուն պէս և միեւնոյն ճամբով համերաշխ է ըստ օրինի, եթէ երաշխաւորին և երաշխաւորութիւն ուղղին միջեւ տարբեր պայման մը չ'ըլլայ. զի կրնայ ըլլալ որ երաշխաւորութիւնը սահմանափակ ըլլայ. զորօրինակ, փոխանակագրին ընդունելութիւնը կամ գումարին միայն մէկ մասին վճարումը կ'երաշխաւորէ, քանի որ օրէնքն ալ այդ մասին թոյլատուութիւն կ'ընէ. հետեւաբար երաշխագրին մէջ այդ կէտերը գրել պէտք է:

Երբ երաշխաւորը փոխանակագիրը վճարէ՝ իրաւունք ունի իբր փոխանցող, զիմեւ անոր որուն համար որ երաշխաւորած է, և անկէ պահանջել երաշխաւորած գումարը, նոյնպէս անկէ առջի փոխանցողներէն: Երաշխաւորութիւնը երկու կերպ կ'ըլլայ, զատ թղթի՝ կամ նոյն իսկ փոխանակագրին վրայ գրուելով: Եթէ երաշխաւորութիւնը փոխանակագրին վրայ գրել ուզուի՝ երաշխաւորը քաշողին ստորագրութեան և վճարողին հասցէին միջեւ վճարմանը համար կ'երաշխատուի կամ Երաշխատը վասն վճարման գրելով թուական կը գնէ և կ'ստորագրէ:

Փոխանակագրին վրայ գրուած երաշխաւորութիւնը, զոր ուրիշներ ալ կը տեսնեն, փոխանակագրին վրայ ստորագրութիւն ունեցողներուն հաճելի չ'ըլլար, ուստի փոխանակագրին վրայ երաշխաւորութիւն շատ քիչ անգամ կը գրուի, այլ ընդհանրապէս զատ թղթի վրայ կ'ըլլայ, որ այսպէս կը գրուի:

Ե Ր Ա Շ Խ Ա Գ Ի Ր

Ստորագրեալս՝ Գ. Սիմոնեան՝ պարտիւս այս երաշխագրովս, վճարել էրկու հարիւր անգղիական լիբայի (£ 200) փոխանակագրին գումարը, զոր քաշած է Մ. Քալվոֆօրեհի 1898 Մայիս 28ին, վճարելի 1898 Օգոստոս 31ին, Լոնտոնի Լ. Ռոսօֆանաֆի վրայ Ս. Յակոբեանի հրամանին, որմէ փոխանցուած է հետզհետէ Մ. Սարգիսեանի, Կ. Սերոպեանի եւ Ե. Միսասեանի, երբ Լ. Ռոսօֆանաֆի՝ որուն համար կ'երաշխատուի, այն թուրք չ'վճարէ:
Կ. Պոլիս, 10 Յունիս 1898 Գ. ՍԻՄՈՆԵԱՆ

A V A L

Je soussigné, K. Simonian, m'engage par le présent aval, à payer la somme de Deux cents (£ 200) livres sterling montant de la lettre de change datée du 28 Mai 1898, à l'échéance du 31 Août 1898, tirée par Mr. M. Calvocoressi sur L. Rodocanachi à Londres à l'ordre de M. S. Agopian, passée à Mess. M. Sarkissian, G. Séropian et E. Minassian, dans le cas où M. L. Rodocanachi ne la payerait pas.
Constantinople, le 10 Juin 1898 K. SIMONIAN

Չատ թղթի վրայ երաշխաւորութիւնը այսպէս կ'ըլլայ: Նախ երաշխագրին վրայ պէտք է բառ առ բառ օրինակել երաշխաւորելի թուղթը, և օրինակուած փոխանակագրին թուականին և գումարին մէջտեղը գրել Ընդօրինակութիւն կամ Օրինակուած: Այս ընդօրինակութեան տակը կը գրուի երաշխաւորութիւնը՝ երկու կողմին մասնաւոր պայմաններն ալ, եթէ կան, ինչպէս քիչ առաջ ըսինք, գրելով անոր մէջ, ապա երաշխաւորը կ'ստորագրէ:

Ահաւաստիկ այս պարագային մէջ գրուելիքը:

Ստորագրեալս կը յայտարարեմ թէ՛ ներկայիս կ'երաշխատուիմ վերոյիշեալ փոխանակագրին վճարումը, եւ կը խոստանամ վճարել S..... ի, երբ վճարօրին S..... չ'վճարէ զայն:
Կ. Պոլիս, 189. (Ստորագրուիմ)

Je soussigné déclare garantir, par le présent aval, le paiement de la lettre de change ci-dessus transcrite et m'engage à la payer à M....., si elle n'était pas acquittée à son échéance par M..... (Signé)

Constantinople, le 189.

Իրոչնաթուրք երաշխագրի. — Երաշխաւորութիւնը գրուած ըլլայ փոխանակագրին կամ զատ թղթի վրայ՝ պէտք է գրուած թուղթ փակցնել, որ մինչեւ 20,000 դր. համար (Լ. Օ. 100 դր. հաշուով) գումարին համեմատութեամբ կ'ըլլայ. իսկ անկէ աւելիի համար միայն 10 դր. նոյն:

Փոխանակագրին վնասումը . — Վճարումին ինչ ըլլալը Գ. Գլխուն մէջ բացատրուած ըլլալով՝ հոս փոխանակագրին վճարման եղանակին և անոր վերաբերեալ օրինական գիտելեաց վրայ միայն պիտի խօսինք:

Փոխանակագրին տէրը վճարօրին իսկ զայն պէտք է ներկայացնէ և անոր վճարումը պահանջէ ընդունողէն, որ պարտաւոր է թղթին մէջ գրուած դրամովը վճարել: Ըստ օրինի փոխանակագրին վճարման համար միջոց տալ դատարանաց ձեռնհասութենէն ալ վեր է, միայն կայսերական հրամանագրով կարելի է պարտամուրհակներու վճարման համար պայմանաժամ տալ (1):

Փոխանակագրին զումարը եթէ 0. Լ. է՝ 0. Լ. ով կը վճարուի եթէ անգլ. Լ., ֆրանք, մէճիտիէ, ևլն. է՝ անգլ. Լ., ֆրանք, մէճիտիէ, ևլն. ով կը վճարուի: Վճարման ատեն՝ թղթին տէրը իր ստացագիրը պէտք է գրէ փոխանակագրին վրայ և ստորագրելով վճարողին յանձնէ:

Փոխանակագիրը ո՛ր երկրին մէջ որ վճարելի է՝ ընդհանրապէս այն երկրին դրամովը կը քաշուի. օրինակի համար, Կ. Պօլէն

[1] Ինչպէս 1895 ի դրամական մեծ սագնային ասեն 4/ամս. երկարաձգում մը (Moratorium) եղաւ պարսկերու հետեւեալ Պաւսօնական Զեկուցմամբ, որ հրատարակուեցաւ այն ասեն Արեւելի մէջ:

« Եկատելով որ Եւրոպայի եւ Օսմանեան երկրներու հրապարակաց վրայ դրամական աստիկ սագնայ կայ եւ ասոր հետեւանք երող գործոց դադարում, նկատելով որ դրամի նուազութիւն ալ կայ, եւ նկատելով որ արդարութիւնը կը պահանջէ պարսկերներու այնպիսի պայմանաժամ տալ, որով կարելի ըլլայ իրաց վիճակը կանոնաւորուած միջոցին իրենց պարսկեր վնասել, ուստի Նախարարաց Խորհուրդը հետեւեալ որոշումները սուած է, որ վաւերացած են կայս. իրաւունքով:

« Պայմանաժամ ունեցող, կամ ի սեռ վնասելի փոխանակագրներէ եւ հրամանի գրուած կամ բերողին վնասելի բայտ մուրհակներէ անոնց, որոնց պայմանաժամներն այժմ լրացած են, զուտները հասուցանելու համար ներկայ յայտարարութեան քուականէն սկսեալ (1895 Ն. Տ. Նոյ. 1) կարելի է հարիւր բան օր (120) պայմանաժամ պահանջել:

« Նոյնպէս վերոյիշեալ մուրհակներէ անոնց համար, որոց պայմանաժամն այդ 120 օրուան պայմանաժամէն առաջ կ'աւարտի, կարելի պիտի ըլլայ այդ պայմանաժամին աւարտելուն հասուցանելու համար պահանջում րենել:

« Այս որոշում չ'վերաբերի այն մուրհակներու, որ ներկայ Յայտարարութեան քուականէն յետոյ կը տրուին: Իբրեւ քայլաւորութիւն տրուած այս պայմանաժամ գործադրելի է նաեւ սակարանի գործառնութիւններէ ետոմ յանձնառութեանց, ինչպէս նաեւ ընթացիկ-հաշիւներու համար:

« Պայմանի սակ եղոմ տկոսներ մինչեւ վնասման օր պիտի հաշուին որոշեալ ֆանկութեան (սակ) համաձայն: Եթէ պայմանագրութիւն չ'ըլլայ, տկոսը 10 6ի հաշուով պիտի ըլլայ՝ մուրհակներու պայմանաժամին աւարտելու քուականէն ըկրտելով մինչեւ վնասման օր:

« Առումայէ եւ առեւտրական ապրանքներու գնումէն գոյացած պարսկեր այս որոշմանց ենթակայ չ'ենք »:

կամ ուրիշ քաղաքէ Լօնտրայի վրայ թուղթը անգլ. կամ սթէնլին լիրայի կը քաշուի. Փարիզի վրայ՝ ֆրանք. Վիեննայի վրայ՝ ֆիօրին. Օտէսայի վրայ՝ ռուպլի, ևլն: Այսու ամենայնիւ, տարբեր քաղաքներէ տարբեր դրամով ալ փոխանակագիր կը քաշուի: Օրինակի համար. Փարիզէն Պօլսոյ վրայ փոխանակագիրք ընդհանրապէս ֆրանքով կը քաշուին. որովհետեւ այն տեղի վաճառականը կամ դործարանատէրը ֆրանքով ծախած է սպրանքը, և իր առնելիքին համար ալ ֆրանքի թուղթ կը քաշէ: Այս տեսակ փոխանակագրերը, որք գանձման համար դրամատուններու կը զրկուին, անպատճառ ֆրանքով չեն վճարուիր, այլ ֆրանքի չեֆին օրուան գինովն 0. Լ. ով կը վճարուին: Եւ այս տեսակ թղթոց շատերուն վրայ կը գրուին՝ Վճարելի օրուան գնով, Payable au cours du jour, կամ Վճարելի Փարիզի վրայ չեֆով, Payable en chèque sur Paris.

Փոխանակագրին վճարումը պէտք է պահանջել վճարողէն, նոյնիսկ եթէ սա ընդունած չ'ըլլաւուն երրորդ մը միջամտութեամբ ընդունած ըլլայ: Փոխանակագիրը օրէն առաջ վճարողը՝ անոր դէմ եղած նենգութեանց և խաբէութեանց մասին պատասխանատուութենէ չ'ազատիր. իր վճարման վաւերականութիւնը և օրինաւորութիւնը միայն Առեւտրական Դատարանը կրնայ որոշել. օրինակի համար, կրնայ ըլլալ որ փոխանակագիրը կորսուի կամ գողցուի՝ և մինչև անոր վճարօրը կորսնցնողը վճարուիլը արգելէ վճարողին, և այսպէս առաջքն առնէ ի վնաս իրեն եղած խաբէութեան մը, կամ թուղթը գանձողը անոր վճարօրէն առաջ սնանկանայ՝ այն ատեն օրէն առաջ վճարուիլը սնանկացողին պահանջատէրներուն շահուն վնասած կ'ըլլայ: Ահա այս և այս տեսակ անպատեւելութեանց առաջքն առնելու համար Օրէնքը արգելած է օրէն առաջ վճարումը, Իսկ փոխանակագիրը ճիշդ վճարօրին և առանց որ և է կողմէ արգելք (1) կամ ընդդիմութիւն մը եղած ըլլալու վճարողը՝ պատասխանատուութենէ կ'ազատի: Փոխանակագրին տէրը չի բռնադատուիր որ օրէն առաջ դրամը առնէ: Մէկ քանի օրինակով փոխանակագրին վճարումը որ և է մէկ օրինակին վրայ ալ կրնայ ըլլալ, եթէ թուղթը ընդունուած չէ. բայց միեւնոյն ատեն վճարուած օրինակին վրայ պէտք է գրել թէ՛ միւս օրինակներն իրենց արժէքը կորսնցու-

[1] Արգելք կամ ընդդիմութիւնը եղաւ պարագայի մէջ կ'ըլլայ. փոխանակագիրը կորսուած կ'ըլլայ եւ անոր տէրը դատարանի միջոցաւ բոլորին վնասուիլը կ'արգիլէ կամ փոխանակագրին տէրը սնանկացած կ'ըլլայ, որ ասեն փոխանակագրին զուտը ըստ օրինի սնանկութեան Մասին կը վճարուի եւ ո՛չ թէ սնանկացողին: (Տե՛ս Թ. 144) փոխանցման քուականին վրայ գրուածը:

ցած են: Իսկ երբ այդ օրինակներէն մին ընդունուած ըլլայ՝ վճարողը իր ընդունած օրինակը տեսած և ազատած ա՛տեն միայն կրնայ վճարել. ապա թէ ոչ՝ պարտքը վճարած չի սեպուիր: Փոխանակագրին համար թերհաշիւ վճարում կրնայ ըլլալ, բայց թըզ-թին տէրը պարտաւոր է բողոքել զայն, որպէս զի մնացորդ գումարին համար քաշողին և փոխանցողներուն վրայ ունեցած իրաւունքները չ'կորսնցնէ:

Փոխանակագրին կորուստը. — Փոխանակագիրը օրէն առաջ կրնայ կորսուիլ: Երեք պարագայ կայ, զորս որոշել հարկ է:

Ա. Կորուստ չ'ընդունուած փոխանակագրի մէկ քանի օրինակով Բ. » ընդունուած » » » »

Գ. » փոխանակագրի միայն մէկ օրինակով:

Ա. Կորուստ չ'ընդունուած փոխանակագրի. — Ա. Բ. Գ. ով քաշուած, բայց դեռ չ'ընդունուած փոխանակագիրը եթէ կորսուի՝ աւեր տէրը միւս օրինակներովը կրնայ դրամը պահանջել:

Բ. Կորուստ ընդունուած փոխանակագրի. — Ա. Բ. Գ. ով քաշուած և կորսուած փոխանակագիրը եթէ ընդունուած է՝ վերը ըսուածին պէս, միւս օրինակներովը դրամը չի կրնար գանձուիլ, եթէ ոչ՝ դատարանին հրամանովը և երաշխաւոր տալով:

Ըսինք թէ վճարողը երբ փոխանակագիրը ընդունած է, պէտք է որ ընդունուած օրինակը ետ առնելով վճարէ: Բայց ի՞նչ ընելու էր այն մարդուն, որ արդարեւ թղթին ճամբիա տէրն ըլլալով հանդերձ՝ զայն կորսնցուցած էր: Ահա ճիշդ այդ պարագան նախատեսելով՝ և թէ՛ թուղթը կորսնցնողին դրամը վրայ չ'երթալու և թէ՛ վճարողին շահը պաշտպանելու համար է որ Օրէնքը երաշխաւոր տալը պարտաւորիչ ըրած է. որպէս զի, վերջէն եթէ թղթին ընդունուած օրինակը ներկայացնող մը երեւան ելնէ՝ վճարողը իր առած երաշխաւորութեան գօրութեամբ կարենայ տուած դրամը ետ առնել, և փոխանակագրին բուն տիրոջը վճարել:

Գ. Կորուստ փոխանակագրի միայն մէկ օրինակով. — Կորսուած փոխանակագիրը եթէ միայն մէկ օրինակ է՝ կամ քանի մը օրինակ քաշուած ըլլալով հանդերձ՝ կորսնցնողը անկարող ըլլայ միւս օրինակները ձեռք բերել և ներկայել, փոխանակագիրը ընդունուած ըլլայ կամ ոչ՝ կարելի է պահանջել և ստանալ կորսուած թղթին գումարը Առեւտրական Դատարանին վճարովը, որ կը տրուի թուղթը կորսնցնողին տեսրակները քննելէ, և այդ թըզ-թին ճամբիա տէրն ըլլալուն լաւ համոզուելէ ետքը միայն, այն ալ պատուաւոր երաշխաւոր մ'առնելով:

Վերոյիշեալ օրինական ձեւակերպութիւնները կատարելով հանդերձ՝ եթէ ընդունողը դա՛րձեալ չ'վճարէ, փոխանակագրին տէրը իր իրաւունքները չ'կորսնցնելու համար պէտք է այդ մերժումը օրինապէս հաստատել՝ կորսուած թղթին վճարօրին հետեւեալ օրը բողոքելով դատարանին, և միանգամայն քաշողին, վճարողին և փոխանցողներուն զրկելով իր բողոքին մէկ օրինակը, ճիշդ այնպէս, ինչպէս կ'ըլլայ սովորաբար բուն իսկ բողոքագրին առթիւ:

Փոխանակագիրը կորսնցնողը անոր Բ.ը ձեռք բերելու համար իրմէ առջի փոխանցողին կը դիմէ, որ եթէ ունենայ իր քով Բ.ը, պէտք է որ անոր յանձնէ, ան ալ իրմէ առջի փոխանցողներուն, որք իրենց աջակցութիւնը պէտք է նուիրեն, այնպէս որ՝ փոխանցողէ փոխանցող երթալով մինչեւ թուղթը քաշողին կը դիմուի: Այս մասին ըլլալիք ծախքը, բնականաբար փոխանակագիրը կորսնցնողին կը պատկանի:

Երաշխաւորութեան պայմանաժամը. — Բ. և Գ. պարագաներուն մէջ՝ կորսուած փոխանակագրին համար առնուելիք երաշխաւորութիւնը միայն երեք տարի պայմանաժամ կ'ունենայ. եթէ այդ ժամանակամիջոցին մէջ դատական որ և է ձեռնարկ չ'ըլլայ՝ երաշխաւորութիւնը, ըստ օրինի ջնջուած կը սեպուի:

Ինչպէս իր կարգին պիտի խօսինք՝ փոխանակագրին ժամանցի պայմանաժամը 5 տարի է, մինչդեռ այս երաշխաւորութեան պայմանաժամը 3 տարի ըլլալով, քիչ մը իրարու հակասական կ'երեւայ. բայց երբ ի նկատի առնենք թէ՛ այսչափ երկար (3 տարի) պայմանաժամով երաշխաւոր գտնելն ալ շատ անգամ դժուար է, ասկէ զատ՝ 3 տարին քիչ ժամանակ չ'է, որոյ միջոցին եթէ կորսուած թուղթը չէ ներկայացած, անկէ ետքն ալ շատ դժուար և հազուադէպ է որ ընդունուած փոխանակագիրը ներկայացուի թղթին բուն տիրոջ կողմէն, և եթէ ներկայացուի իսկ՝ այսչափ երկար ատեն առանց օրինական ձեռնարկի անհոգ կերպով սպասելուն համար պակասաւոր կը սեպուի, հետեւաբար և երաշխաւորէն ալ բան մը չի կրնար պահանջել:

Այս հազուադէպ կարելիութեան վախով փոխանակագրին վրձարումը արգելել կարելի չ'էր՝ արդէն բաւականէն երկար 3 տարւոյ պայմանաժամէն աւելի տեւողութեամբ յանձնառու եղող երաշխաւոր գտնելու դժուարութեան առջև: Ահա ասոր համար է որ այս տեսակ երաշխաւորութեան համար Օրէնքը երեք տարի միայն պայմանաժամ որոշած է:

Միջամտութեամբ վնասումն. — Ինչպէս որ չընդունուած փոխանակագիրը բողոքուելէն ետքը բացէն մէկը Միջամտութեամբ կ'ընդունին՝ անանկ ալ երբ ընդունողը փոխանակագիրը օրին չ'վճարէ, բացէն մէկը՝ նոյն իսկ ընդունողը (եթէ ընդունած չ'է) քաշողին կամ փոխանցողներէն մէկուն համար կրնայ Միջամտութեամբ վճարել փոխանակագիրը, ըստ օրինի, ընդունողին դէմ բողոքուելէն ետքը. միայն թէ՛ միջամտութեամբ վճարման պարագաները բողոքագրին մէջ գրուելու է:

Փոխանակագիրը բողոքուելէն ետքը, միջամտութեամբ վճարողը կ'ըլլայ այլեւս թղթին տէրը, և անկէ վերջը անո՛ր կ'անցնին փոխանակագրին տիրոջ պարտքն ու իրաւունքները, զորս ըստ օրինի կատարել պարտաւոր է:

Վերը բողոքուելէն ետքը ըսինք, որովհետեւ մինչեւ որ փոխանակագրին անվճար մնալը ըստ օրինի բողոքով չ'հաստատուի՝ միջամտութեամբ վճարողը չի կրնար վայելել փոխանակագրին տիրոջ՝ քաշողին և փոխանցողներուն վրայ ունեցած իրաւունքները: Օրէնքն այս առաւելութիւնը պէտք էր տալ, որպէս զի քաշողին և փոխանցողներուն բարեկամները սիրոյ՛սօժար յանձն առնէին այդ ծառայութիւնը ընել և ատով անոնց պատուոյն խնայել:

Միջամտութեամբ վճարումն փաշտողին համար. — Միջամտութեամբ վճարումը երբ քաշողին համար ըլլայ՝ փոխանցողը իրենց օրինական պատասխանատուութենէն կ'ազատին, քանի որ միջամտողը միայն քաշողին համար վճարած է և ո՛չ թէ փոխանցողներուն. հետեւաբար և իր առնելիքը քաշողէն ըլլալով, փոխանցողներէն, ըստ օրինի, բան մը պահանջելու իրաւունք չ'ունենար:

Միջամտութեամբ վճարումն փոխանցողներուն համար. — Միջամտութեամբ վճարումը երբ փոխանցողներէն մէկուն համար ըլլայ՝ այդ փոխանցողէն ետքի փոխանցողը իրենց օրինական պատասխանատուութենէն կ'ազատին, և միջամտողը միայն անկէ՛ առջի փոխանցողներէն իրաւունք կ'ունենայ պահանջելու և ո՛չ անկէ ետքիներէն:

Միջամտութեամբ վճարումն քրքիս թուելու վճարողին կամ ընդունողին կողմէն. — Միջամտողներուն վրայ խօսելով՝ ընդունողն ալ իբր միջամտութեամբ վճարող ներկայացուցինք: Արդ՝ փոխանակագրին վճարողը՝ անոր փոխարէնը քաշողէն ստացած չ'ըլլալուն թուղթը արդէն ընդունած չ'ըլլալով, զայն վճարել ալ չ'ուզեր քաշողին համար, որովհետեւ եթէ վճարէ՝ անոր գումարը ըստ օրինի միայն քաշողէն կրնայ պահանջել, մինչդեռ եթէ փոխանցողներէն մէկուն համար վճարէ՝ այն առեւն թղթին տէրը կ'ըլլայ և ո՛չ միայն այդ փոխանցողէն, այլ նաեւ անկէ

առջի փոխանցողներէն և մինչեւ իսկ քաշողէն ալ անոր գումարը պահանջելու ըստ օրինի իրաւունք կ'ունենայ:

Բազմաթիւ միջամտողներ վճարման համար. — Ի՞նչ ընելու է երբ անվճար փոխանակագիրը բողոքուելէն ետքը՝ միջամտութեամբ վճարելու մէկէ աւելի անձեր ներկայանան: Միջամտութեամբ վճարել ուզողներէն անո՛ր աւելու է նախապատուութիւնը, որ աւելի շատ փոխանցող կ'ազատէ. այսպէս երբ անոնց մէջ քաշողին համար միջամտող գտնուի՝ նախապատուութիւնը անո՛ր տալու է. որովհետեւ ինչպէս բացատրեցինք, փոխանակագրին բողոք փոխանցողը պատասխանատուութենէ կ'ազատին: Անկէ վերջը կը գայ Ա. փոխանցողին համար միջամտողը. յետոյ Բ. փոխանցողին համար միջամտողն, այսպէս շարունակաբար. օրինակի համար, եթէ անվճար փոխանակագրին վրայ տասը փոխանցող կայ և միջամտութեամբ վճարող երկու անձ, մին՝ Բ. փոխանցողին համար կ'ուզէ վճարել, իսկ միւսն՝ Դ. փոխանցողին համար:

Արդ՝ այդ պարագային նախապատուութիւնը Բ. փոխանցողին համար միջամտողին տալու է, որովհետեւ անկէ վերջը 8 փոխանցողներ եւս կան, որք այդ միջամտութեամբ ըստ օրինի կ'ազատին իրենց պատասխանատուութենէն, մինչդեռ Դ. փոխանցողին համար միջամտողը անկէ ետքի միայն 3 փոխանցողները կ'ազատէ:

Բուն վճարողն իբր միջամտող. — Եթէ միջամտողներուն մէջ փոխանակագրին բուն վճարողն ալ գտնուի՝ պարագայ մը, զոր վերը բացատրեցինք, այն առեւն միւս բոլոր միջամտողներուն վրայ նախապատուութիւնը անո՛ր կը տրուի, որուն միջամտութեամբ դարձեալ միեւնոյն թուով փոխանցողը կ'ազատին պատասխանատուութենէ:

Ի հարկին. — Երբ քաշողը կամ փոխանցողներէն մին՝ փոխանակագրին ընդունուելուն կամ վճարուելուն վրայ կասկածին, նոյն քաղաքին մէջ ուրիշ թղթակից մը կը նշանակեն փոխանակագրին վրայ, որ իրենց հաշոյն Ի հարկին ընդունի կամ վճարէ, երբ բուն վճարողը թուղթը չ'ընդունի կամ չ'վճարէ:

Այնպէս որ վրան Ի հարկին գրուած փոխանակագրին բուն ընդունողը երբ մերժէ զայն ընդունիլ և վճարել, թղթին տէրը՝ զայն բողոքելէ առաջ Ի հարկին վճարողին ներկայացնելու է թղթին ընդունուելը կամ վճարուելը պահանջելու համար:

Ի հարկին ծանօթութիւնը սովորաբար փոխանակագրին ստորեւը՝ քաշողին ստորագրութեան և վճարողին հասցէին միջեւ կամ ուրիշ պարագա տեղ մը կը գրուի այսպէս,

Ի հարկին առ Տ (Au bescin chez M), որուն տակ ստորագրութիւն չի գրուիր:

Ի հարկին վճարողը եթէ շատ ծանօթ չէ, անոր հասցէն ալ կը գրուի: Որպէս զի այդ անձը կարենայ հասկնալ թէ՛ Ի հարկին վճարելու հրաւերը ո՞ւրկէ եղած է իրեն, այդ ծանօթութիւնը գրողը անոր քովը կը գրէ նաեւ Ի հաշիւ ին, իր անուան սկզբնատառերը գնելով, որպէս զի փոխանակագիրը չ'ընդունուելուն կամ չ'վճարուելուն համար բողոքագրով և Գարձի հաշուով ետ չ'գրկուի՝ և հետեւաբար իրենց վարկին և ստորագրութեան արատ չ'գայ:

Ի հարկին վճարման հրաւերը ընդհանրապէս կ'ուզուի սեղանաւորներու, որք զայն գրողներուն հաշույն կը վճարեն կամ կ'ընդունին: Ի հարկին ծանօթութիւնը մասնաւոր կնիքով կը զարնուի փոխանակագրին վրայ, անունին տեղը բաց թողուած որ գրչով կը գրուի:

Փոխանակագրին տիրոջ պարտերն ու իրաւունքները. — Առեւտրական Օրինագիրքը՝ որ փոխանակագրին համար բազմաթիւ յօդուածներ ունի, որոցմէ կարեւորներուն վրայ թարգմանաբար ցարդ բաւական տեղեկութիւն տուինք, փոխանակագրին տիրոջ պարտքերը և իրաւունքները գծող 13 յօդուածներ ալ ունի, զորս ամբողջութեամբ յառաջ բերել թէեւ դատագրքի մը անձուկ էջերը չ'են ներքը, այսուհանդերձ՝ մենք այդ մասին վրայ եւս կ'ուզենք ուսանողաց հակիրճ քաղուածք մ'ընել, հասկցնելու համար թէ՛ փոխանակագրին աէրը օրինական ի՞նչ պարտքեր ունի կատարելիք, զորս գործադրելով ի՞նչ իրաւունքեր ձեռք պիտի բերէ, և թէ՛ այդ պարտքերն անտես ըրած ատեն՝ ի՞նչ վնասներ պիտի կրէ:

Առաջ բսինք թէ՛ (Տե՛ս թ. 146—147) փոխանակագրին աէրը անոր գումարը թէ՛ բուն վճարողէն, և եթէ սա չ'վճարէ՛ փոխանցողներէն և մինչեւ իսկ քաշողէն պահանջելու, ըստ օրինի իրաւունք ունի. զոր ձեռք բերելու համար պէտք է կատարէ իր հետեւեալ պարտքերը:

Փոխանակագրին տիրոջ պարտքն է,

1. Վճարօրին փոխանակագրին վճարումը պահանջել թէ՛ իր և թէ՛ նոյն իսկ փոխանակագիրը ստորագրողներուն (քաշողին և փոխանցողներուն) շահուն համար, որովհետեւ ինչպէս գիտենք, փոխանակագիրը վճարուելէն ետքը այդ ստորագրողք իրենց յանձնառութենէն կ'ազատին:

Ընդունելու քեան եւ վճարման պայմանաժամը. — Եւրոպայի ցամաքային քաղաքներէն և կղզիներէն և Ափրիկէի հիւսիսային ծովեզերեայ քաղաքներէն քաշուած և Թուրքիոյ մէջ վճարելի թէ՛ տեսօրին և թէ՛ տեսօրէն այսքան օր կամ ամիս ետքը վճարելի փոխանակագրին տիրոջ օրինական պարտքն է՝ անոր վճարումը կամ ընդունելութիւնը պահանջել թղթին թուականէն 6 ամս. ժամանակամիջոցի մէջ. եթէ այս պարտքը չ'կատարէ՛ փոխանցողներուն և նոյն իսկ քաշողին դէմ դատ բանալու իրաւունքը կը կորսնցնէ; եթէ քաշողը անոր փոխարէնը ժամանակին զրկած ըլլայ, օրինակի համար, եթէ վճարողը սնանկանայ՝ թղթին տէրը Օրէնքին որոշած ժամանակին մէջ փոխանակագիրը եթէ ընդունել տուած կամ անոր վճարումը պահանջած չ'ըլլայ՝ վնասը ըստ օրինի ինքը կը տուժէ. եթէ փոխարէնը զրկած չ'ըլլայ՝ քաշողը դա՛րձեալ պարտական կը մնայ վճարել թղթին տիրոջ, քանի որ փոխանակագրին համար իր յանձնառութիւնը չ'է կատարած: Իսկ Ափրիկէի հարաւային ծովեզերքներէն Բարեյուսոյ Գլուխն ալ մէջը ըլլալով՝ քաշուած թղթոց համար վերոյիշեալ ժամանակամիջոցը մէկ տարի է: Նոյնպէս մէկ տարի ժամանակ տրուած է այն փոխանակագրոց, որք Ամերիկայի և Հնդկաստանի ցամաքային քաղաքներէն և կղզիներէն և ուրիշ հեռաւոր երկիրներէ քաշուած ըլլալով՝ Թուրքիոյ մէջ վճարելի են: Գարձեալ Թուրքիայէն քաշուած և օտար երկիր վճարելի փոխանակագրին աէրը՝ եթէ վերոյիշեալ հեռաւոր քաղաքներուն համար որոշուած ժամանակամիջոցին մէջ թուղթը ընդունել տալու կամ անոր վճարումը պահանջելու իր պարտքին մէջ անհոգ գտնուի՝ այն ատեն իր իրաւունքներէն կը զրկուի. միայն պէտք է գիտնալ թէ՛ պատերազմի ատեն վերոյիշեալ ժամանակամիջոցները կը կրկնուին, այսինքն, 6 ամիսը՝ 12 ամիս, և մէկ տարին՝ 2 կ'ըլլայ: 2. Փոխանակագրին չ'վճարուիլը հաստատել տալ վճարօրին հետեւեալ օրը Բողոքագիր ըսուած պաշտօնական թղթով, իրեն յատուկ ձեւակերպութեամբը. եթէ նոյն օրը տօնի պատահի՝ հետեւեալ օրը ընելու է բողոքը: Օրէնքին այսչափ կարճ (24 ժամ) միջոց տալը քաշողին և փոխանցողներուն շահուն համար է, որպէս զի ասոնք թղթին չ'վճարուելուն վրայ շուտով տեղեկանալով, իրենց շահը պաշտպանելու համար պէտք եղածը ժամանակին հոգան: Փոխանակագիրը բողոքել հարկ է, նոյն իսկ եթէ ժամանակին ընդունուած չ'ըլլալուն համար արդէն բողոքուած ըլլայ. նոյնպէս բողոքել հարկ է՝ եթէ ընդունողը սնանկանայ կամ մեռնի: 3. Բողոքը ծանուցանել փոխանակագիրը ստորագրողներուն և բողոքի օրէն 15 օրուան մէջ դատաւարութեան սկսիլ, եթէ այն փոխանցողը, որուն դէմ դատ պիտի վարէ, մէկ

Քօնախ (1) հետուն գտնուի . եթէ մէկ Քօնախէ աւելի հետուն բնա-
կի՝ աւելի եղած ամէն մէկ քօնաքի համար յ կան օր կ'աւելնայ
դատաւարութեան համար որոշուած այդ 15 օրուան վրայ :

Փոխանակագրին աէրը վերոյիշեալ պաշտօնական ձեւակեր-
պութիւնները կաւարելով՝ թուղթը ստորագրողներէն երաշխա-
ւոր ուզելու իրաւունք ունի : Բողոքուած փոխանակագրին տէրը
իր պահանջքն ապահովելու համար երաշխաւոր ուզած ատեն՝
քաշողին , ընդունողին և փոխանցողներուն ապրանքը , դրամը
կամ պահանջքը եթէ ձեռք անցնէ՝ առեւտրական դատարանին
նօտարութեան գիւանին (Մուգավէլաթ Մուհարիրիլիի) միջոցա-
կրնայ զանոնք արգելքի տակ առնել տալ (Սէքէսթրօ ընել) : Իսկ
վերոյիշեալ պարտքը չ'կատարող թղթին տէրը՝ փոխանակագիրը
ստորագրողներուն վրայ ունեցած իրաւունքներէն կը զրկուի հե-
տեւեալ կերպով :

Վնարողիկէ կաւ ընդունողիկէ . — Փոխանակագրին պարտա-
զանց տէրը բան մը չի կորսնցնէր վճարողին նկատմամբ , եթէ
սա ժամանակին թուղթը ընդունած ըլլայ . որովհետեւ , ինչպէս
ընդունելութեան աւթիւ ըսինք , ընդունողը գլխաւոր պարտա-
կանը կ'ըլլայ , քանի որ ընդունելութիւնը փոխանակագրին փո-
խարէնը ստացած ըլլալը կ'ենթադրէ ըստ օրինի , և փոխանակա-
գրին տիրոջ պարտազանցութիւնը այդ պայմանը չի կրնար փո-
խել : Եթէ վճարողը փոխանակագիրը ժամանակին ընդունած չ'ըլ-
լայ՝ ա՛յն ատեն միայն յանուն քաշողին և անոր տեղ կրնայ գոր-
ծել , եթէ քաշողը փոխարէնը ժամանակին վճարողին զրկած ըլլայ :

Քաշողիկէ . — Եթէ քաշողը թղթին փոխարէնը ժամանակին
վճարողին զրկած ըլլալը հաստատէ՝ փոխանակագրին պարտա-
զանց տէրն անկէ բան մը պահանջելու իրաւունք չ'ունենար :
Եթէ փոխարէնը զրկած չ'ըլլայ՝ թղթին տէրը՝ հակառակ իր
պարտազանցութեան , քաշողին վրայ ունեցած իրաւունքները կը
պահէ : Եթէ այսպէս չ'ըլլար , քաշողը՝ փոխանակագրին արժէքն
արդէն առած և անոր փոխարէնը վճարողին զրկած չ'ըլլալով՝
ի վնաս ուրիշին ինքը գրպանած պիտի ըլլար այսպէս անոր և
շատերուն դրամները :

Փոխանցողիկէ . — Փոխանակագրին պարտազանց տէրը
փոխանցողներուն վրայ ունեցած բոլոր իրաւունքներէն կը զրկ-
ուի , և փոխանցողք , ըստ օրինի պարտաւոր չ'են հաստատելու
թէ՝ փոխանակագրին փոխարէնը վճարողին զրկուած է թէ ոչ ,
բաւական է որ փոխանցողք այդ փոխանակագիրը գնելու համար
անոր արժէքը արդէն վճարած են :

[1] Քօնախ բնակ մէկ օրուան համբայ հասկնալու է :

Միջաւեճութեանը ընդունողիկէ կաւ երաշխաւորիկէ . — Փոխա-
նակագրին տէրը՝ երաշխաւորին և միջամտութեամբ ընդունողին
նկատմամբ պէտք է վարուի ա՛յնպէս , ինչպէս պիտի վարուէր ա-
նոնց նկատմամբ , որոնց համար ատոնք երաշխաւորած կամ միջա-
մտութեամբ ընդունած են :

Հետեւարար եթէ ատոնք քաշողին համար միջամտած կամ ե-
րաշխաւորած են , փոխանակագրին տէրը՝ հակառակ իր պարտա-
զանցութեան , անոր (քաշողին) վրայ ունեցած իրաւունքները կը
պահէ , եթէ սակայն , ինչպէս ըսինք , քաշողը թղթին փոխա-
րէնը վճարողին զրկած չ'ըլլայ : Եթէ փոխանցողին համար միջա-
մտած կամ երաշխաւորած են՝ փոխանակագրին տէրը այն ատեն
իր բոլոր իրաւունքները կը կորսնցնէ , ինչպէս բացառեցինք
փոխանցողներուն վրայ խօսելու աւթիւ : Մէկ խօսքով՝ փոխանա-
կագրին տէրը , որ իր օրինական պարտքերը չ'է կատարած , փո-
խանցողներուն , քաշողին՝ որ փոխարէնը զրկած է , և բոլոր այն
ստորագրողներուն վրայ՝ որ անոնց համար միջամտած են , ունե-
ցած իրաւունքները կը կորսնցնէ :

Փոխանակագիր՝ 1ին , 2րդ , 3րդ , 4րդ , և վն . օրինակով . — Փո-
խանակագիրները ըսինք մէկ քանի օրինակ կը շինուին , որք սա-
կայն միայն մէկ հատի արժէք ունին : Հիմա պիտի ցուցնենք թէ՝
փոխանակագիրը ինչո՞ւ մէկ քանի օրինակով կը շինուի :

Փոխանակագրին Առաջին , Երկրորդ , Երրորդ , Չորրորդ , մինչեւ
խիկ Հինգերորդ օրինակները կրնան շինուիլ հետեւեալ պարագա-
ներու մէջ : Փոխանակագրին Գ . ը քիչ անգամ պէտք կ'ըլլայ ,
այսինքն , եթէ Ա . ը և Բ . ը միանգամայն կորսուին , որ հազուա-
դէպ է : Ա .՝ փոխանակագիրը քաղաքէ մը ուրիշ քաղաքի վրայ
քաշուելով , երբ այդ քաղաքներն իրարմէ շատ հեռու ըլլան՝
թուղթը գնողը , որ զայն հեռու տեղ մը պիտի զրկէ , վախնալով
որ թուղթը ճամբան կորսուի կա՛մ ուշանայ , փոխանակ մէկի՝ մէկ
քանի օրինակ շինել կը աայ , և միևնոյն օրը մէկ օրինակը՝ մէկ
թղթատարի ճամբով (չօգնաւով) կը զրկէ և միւսը՝ ուրիշ թղթ-
թատարի ճամբով (երկաթուղիով) , որպէս զի եթէ մէկ օրինակը
պատճառով մ'ուշանայ կամ կորսուի՝ միւսը՝ որ տարբեր թղթա-
տարով զրկուած է , ժամանակին տեղը հասնելով գործը ետ չի
մնայ և ծանր հետեւանքներ չ'ունենայ : Բ .՝ երբ քաշողը փոխա-
նակագիրը ծախած ատեն անոր մէկ օրինակն ալ ընդունելու-
թեան զրկել ուզէ : Այն ատեն փոխանակագիրը երկու կամ ա-
ւելի օրինակով շինելով՝ Առաջինը ընդունելութեան կը զրկէ ըն-

դուռնողին քաղաքը գտնուող իր թղթակցին, յանձնար սրելով անոր որ զայն ընդունել տայ և անոր երկրորդին տէր եղողին տրամադրութեանը պահէ:

Գ.՝ Երբ փոխանակագրին տէրը ուզէ զայն ուրիշի ծախել և միեւնոյն ատեն անոր Ա.ը կամ Բ.ը ընդունելութեան զրկել: Որովհետեւ այս տեսակ թղթերն ընդհանրապէս Յ/ամս. կ'ըլլան, և փոխանակագիրը ընդունել տալը ո՛ր աստիճան կարեւոր ըլլալը արդէն բացատրուած ըլլալով՝ փոխանակագիր ծախողը կ'ուզէ որ ժամ առաջ ընդունուի, ուստի Ա.ը ընդունելութեան կը զրկէ իր թղթակցին և Բ.ը կը ծախէ: Սեղանաւորք ընդհանրապէս իրենց թղթակիցներուն կը զրկեն փոխանակագիրները ընդունել տալու համար. իսկ փոխանակագրին տէրը, եթէ նոյն քաղաքը թղթակից չունենայ՝ ընդունելութեան համար ուղղակի ընդունողին ալ կրնայ զրկել թուղթը, որ ընդունելով զայն անոր կը վերադարձնէ, կամ, ինչպէս ըսինք, զրկողին հրահանգին համեմատ զայն կը պահէ անոր Բ.ին տրամադրութեանը:

Փոխանակագիրը ընդունելութեան զրկելու համար նամակ կը գրուի այն թղթակցին կամ նոյն իսկ ընդունողին, որուն կը զբրկուի թուղթը, ներփակելով անոր մէջ ընդունուելիք փոխանակագրին օրինակը:

Հոս կը դնենք այդ երկու նամակներուն ալ օրինակները:

ԹՂԹԱԿՅԻ ՄԸ ԳՐԾՆՈՐ ՆԱՄԱԿԻՆ ՕՐԻՆԱԿԸ

Կ. Պոլիս, 10 Սեպտեմբեր 1897

Մեծապատիւ Տեառք Թէֆէեան Եղբարք

Մարտիիս

Ներփակեալ կը դրկեմ Ձեզ հետեւեալ առաջին փոխանակագրերը.
Ֆր. 3500 . — 3 / ամս. ի վրայ Թ. 1862
» 2500 . — » ի » » 9270
Ֆր. 6000 . — զորս խնդրեմ որ հաճիք ընդունել տայ և պահել անոնց երկրորդներուն տրամադրութեանը:

Ընդունեցիք, Տեառք, իմ բարեկամական ողջոյններս:

(Ստորագրութիւն)

Constantinople, le 10 Septembre 1897

Messieurs Tékéian Frères

Marseille

Je vous remets ci-inclus les premières des lettres de change suivantes,

Frs. 3500 . — 3 / m. sur N. 1862
» 2500 . — » » » 9270

Frs. 6000 . — dont veuillez soigner l'acceptation et les tenir ensuite à la disposition des secondes en règle.

Agréez, Messieurs, mes sincères salutations.

(Signé)

ԸՆԳՈՒՆՈՂԻՆ ԳՐԾՆՈՐ ՆԱՄԱԿԻՆ ՕՐԻՆԱԿԸ

Կ. Պոլիս, 8 Նոյեմբեր 1897

Մեծապատիւ Տեառք ձիվան Թէֆէեան և ԸՍԿ

Լիվրքուս

Ներփակեալ կը դրկեմ Ձեզ առաջին փոխանակագիր մը Ձեր սան վրայ քաշուած

£ 250 . — 3 / ամս. 1897 Նոյ. 2 էն Թ. 726

զոր կը խնդրեմ որ հաճիք ընդունիլ. և պահել անոր երկրորդին տրամադրութեանը:

Հաճեցիք ընդունիլ, Տեառք, իմ բարեկամական ողջոյններս: (Ստորագրութիւն)

Constantinople, le 8 Novembre 1897

Messieurs Jivan Tékéian & Cie

Liverpool

Je vous remets ci-inclus une première lettre de change sur vous mêmes de

£ 250 . — 3 / m. du 2 Novembre 1897 N. 726

que je vous prie de vouloir bien accepter et la tenir ensuite à la disposition de la seconde en règle.

Agréez, Messieurs, mes salutations empressées.

(Signé)

Ընդունելութեան զրկուած փոխանակագիրը չ'փոխանցուի ր անոր, որուն կը զրկուի. վասն զի փոխանցումը, ինչպէս ըսինք, թղթին տէր կ'ընէ զինքը. որովհետեւ փոխանակագիրը անոր ծախուած կամ Ռընկեսա եղած չ'է, այլ ընդունել տալու համար միայն զրկուած է, հետեւաբար փոխանցել հարկ չ'է:

Ընդունելութեան զրկուած օրինակը, եթէ դեռ փոխանցուած չ'է, այսինքն, եթէ թուղթը ընդունելութեան զրկողին հրամանին քաշուած է՝ փոխանակագրին ետեւի պարագայ երեսին վրայ թղթին երկայնքին երկու գիծ կը քաշուի այսպէս,

(Փոխանակագրին ետին)



որով կը հասկցուի թէ՛ այդ օրինակը միայն ընդունելութեան համար զրկուած է և անոր վրայ փոխանցում չ'կայ և չ'պիտի ըլլայ:

Տրուած բացատրութենէն կը հասկցուի թէ՛ վերոյիշեալ երեք պարագաներուն մէջ ալ ընդունելութեան զրկուած օրինակը, առանց անպատեհութեան, կրնայ մնալ անոր քով (նոյն իսկ ընդունողին), որուն զրկուած է, և միւս օրինակը չըջարեութեան հանուիլ: Թուղթը չըջարեութեան հանողը՝ չըջարեելի օրինակին վրայ քաշողին ստորագրութեան և ընդունողին հասցէին տակ այսպէս կը գրէ,

Առաջինը կամ Երկրորդը (1) ընդունելութեան զրկուած է Տ..... ին (մարդուն անունը և հասցէն գրելով):

La tere à l'acceptation chez M.....

Երբեմն ալ ընդունելութեան զրկուած օրինակին ճակատը կը գրուի,

Միայն ընդունելութեան համար. A servir seulement pour l'acceptation.

Վրան այս ծանօթութիւնը գրուած թղթին տէրը անմիջապէս կ'երթայ նշանակեալ անձին, և իր ձեռքը գտնուած ու կա-

[1] Ընդհանրապէս Ա ը ընդունելութեան կը զրկուի եւ Ք.ը օրհանրութեան կը համուի:

նոնաւորապէս իր հրամանին փոխանցուած փոխանակագրին Բ.ը ցուցնելով՝ ընդունուած Ա. օրինակը կ'առնէ անկէ, և այսպէս տէր կ'ըլլայ այդ թղթին երկու օրինակին ալ, որք, ինչպէս ըսինք, միայն մէկ հատի արժէք ունին:

Ընդունուած օրինակը յանձնողը՝ առնողին ձեռքը գտնուած Բ. օրինակին վրայ գրուած և քիչ առաջ յիշուած

Ա.ը ընդունելութեան զրկուած է Տ..... ին ծանօթութիւնը գծելով. անոր վրայ



Հանով գրուած գումարին և թուականին մէջտեղի պարագայ մասին մէջ գլխագրով Պասնէն կամ Օրինակ գրելով, բառ առ բառ և բնագրին ուղղագրութեամբ կ'օրինակէ փոխանակագիրը և փոխանցումներն ալ անոր ետին: Քաշողին և փոխանցողներուն ստորագրութիւններն օրինակելէ առաջ՝ անոնց քով փակագծի մէջ գրելու է (Ստորագրեալ) կամ

Constantinople, le 30 Novembre 1897 B.P. £300 - Stg



A trois mois de date veuillez payer par cette
Premiere de Change (la Seconde ne l'etant) à l'Ordre
de Monsieur G. Capamadjian la somme
de ~~Livres trois cents Sterling~~
Valeur recue et que passerez en compte suivant avis

A Messieurs
Sarkis Manoukian's sons
Manchester

D. Karagulian

Payable à Londres

Constantinople, le 30 Novembre 1897 B.P. £300 - Stg



A trois mois de date veuillez payer par cette
Seconde de Change (la Premiere ne l'etant) à l'Ordre
de Monsieur G. Capamadjian la somme
de ~~Livres trois cents Sterling~~
Valeur recue et que passerez en compte suivant avis

A Messieurs
Sarkis Manoukian's sons
Manchester

D. Karagulian

Payable à Londres

Ընդունելութեան զրկուած փոխանակագիրը չ'փոխանցուիր անոր, որուն կը զրկուի. վասն զի փոխանցումը, ինչպէս ըսինք, թղթին տէր կ'ընէ զինքը. որովհետեւ փոխանակագիրը անոր ծախուած կամ Ռըմեսսո եղած չ'է, այլ ընդունել տալու համար միայն զրկուած է, հետեւաբար փոխանցել հարկ չ'է:

Ընդունելութեան զրկուած օրինակը, եթէ դեռ փոխանցուած չ'է, այսինքն, եթէ թուղթը ընդունելութեան զրկողին հրամա-

նոնաւորապէս իր հրամանին փոխանցուած փոխանակագրին Բ.ը ցուցնելով՝ ընդունուած Ա. օրինակը կ'առնէ անկէ, և այսպէս տէր կ'ըլլայ այդ թղթին երկու օրինակին ալ, որք: ինչպէս ըսինք, միայն մէկ հատի արժէք ունին:

Ընդունուած օրինակը յանձնողը՝ առնողին ձեռքը գտնուած Բ. օրինակին վրայ գրուած և քիչ առաջ յիշուած

Ա.ը ընդունելութեան զրկուած է Տ. ինչ ծանօթութիւնը գծելով, անոր վրայ կը գրէ

Ա.ը (կամ Բ.ը) յանձնուած կամ տրուած է Տ. ինչ:

Վճարօրին՝ փոխանակագրին տէրը, ինչպէս ընդունելութեան առթիւ ըսինք, ընդունուած օրինակին վրայ կը գրէ իր ստացագիրը և դրամն առնելով՝ վճարողին կը յանձնէ թէ՛ ընդունուած և թէ՛ միւս օրինակը, որուն վրայ գրուած են փոխանցումները: Այս երկու օրինակով մէկ փոխանակագրի գործ տեսնուեցաւ, որովհետեւ մէկ օրինակին վրայ՝ փոխանակագրին փոխանցումները գրուեցան և միւսին վրայ՝ ընդունելութիւնը և ստացագիրը:

Քանի մը օրինակով փոխանակագրին խմբագրութիւնը ամէն օրինակին ալ նոյնը կ'ըլլայ. միայն թէ՛ Ա. օրինակին մէջ կը գրուի՝ Վճարեցե՛ք այս առաջին փոխանակագրով և փակագծի մէջ (երկրորդն և երրորդն ոչ գոչով կամ ոչ գոչով Վճարեալ). Բ.ին մէջ կը գրուի՝ Վճարեցե՛ք այս երկրորդ փոխանակագրով և դարձեալ փակագծի մէջ (Առաջինը և երրորդը ոչ գոչով):

Օրինակ կամ Պասսէն փոխանակագրի ըսուած թուղթ մ'ալ կայ, որ երբեմն փոխանակագրին Բ.ին կամ Գ.ին տեղը կը բռնէ:

Երբ փոխանակագրին տէրը ընդունելութեան զրկելու ուզէ թուղթը և միեւնոյն ատեն զայն ուրիշի ծախել, և եթէ թուղթը մէկ օրինակ չ'իյնուած է՝ կամ թէեւ քանի մը օրինակ քաշուած՝ բայց փոխանակագիրը իրեն զրկողը մոռցած ըլլայ անոր Բ.ը զրկելու, կամ քաշողը հեռու տեղ մը գտնուի, այնպէս որ Բ.ը բերել տալը շատ ծամանակի կարօտի, այդ պարագային՝ փոխանակագրին տէրը փոխանակ թուղթը իրեն զրկողէն կամ քաշողէն անոր Բ.ը բերել տալու, իր ձեռքը գտնուած փոխանակագրին մէկ Պասսէնը կը շինէ, այսինքն, պարզ թուղթի վրայ ձակատը՝ փոխանակագրին թուանշանով գրուած գումարին և թուականին մէջտեղի պարապ մասին մէջ գլխադրով Պասսէն կամ Օրինակ գրելով, բառ առ բառ և բնագրին ուղղագրութեամբ կ'օրինակէ փոխանակագիրը և փոխանցումներն ալ անոր ետին: Քաշողին և փոխանցողներուն ստորագրութիւններն օրինակելէ առաջ՝ անոնց քով փակագծի մէջ գրելու է (Ստորագրեալ) կամ

l'acceptation.

Վրան այս ծանօթութիւնը գրուած թղթին տէրը անմիջապէս կ'երթայ նշանակեալ անձին, և իր ձեռքը գտնուած ու կա-

[1] Ընդհանրապէս Ա.ը ընդունելութեան կը զրկուի և Բ.ը օրհանդէսէն քեան կը նսնուի:

(Ստորագրութիւն) բառը և վերջին փոխանցումը օրինակելէ ետքը՝ անոր տակը կը գրուի գլխագրով և փակագծի մէջ կամ առանց փակագծի (Միևեջև հոս օրինակուած է):

Ասոնք գրելէ ետքը՝ թղթին տէրը իր փոխանցումը անոր տակէն կը գրէ և այդ Օրինակը կամ Պասնէկը շրջաբերութեան հանելով՝ կրնայ ուրիշի ծախել և միեւնոյն ատեն անոր բնագիրը ընդունելութեան զրկել թէ՛ իր թղթակցին և թէ՛ նոյն իսկ ընդունողին, խնդրելով վերջինէն որ զայն ընդունի և բնագրին կանոնաւորապէս տէր եղող անձին արամագրութեանը պահէ, ճիշդ ա՛յնպէս ինչպէս պիտի ընէր, եթէ փոխանակագիրը Ա. և Բ. ով ըլլար:

Փոխանակագրին պատճէնը ծախուած ատեն՝ անոր առջի երեսին վրայ քաշողին ստորագրութեան և ընդունողին հասցէին տակ կը գրուի Ընդունուած քննագիրը ին ինչ, փոխանակ Ա.ը կամ Բ.ը գրելու, ինչպէս ըսինք քիչ առաջ, որով կը հասկցուի թէ՛ նոյն պատճէնին բնագիրն ընդունուած և ուրիշի քով ի պահ տրուած է: Վրան այս ծանօթութիւնը գրուած փոխանակագրին տէրը անմիջապէս կ'երթայ նշանակեալ անձին, և իր ձեռքը գտնուած և կանոնաւորապէս իր հրամանին փոխանցուած այդ Պասնէկը ցուցնելով՝ ընդունուած բնագիրը կ'առնէ անկէ և այսպէս այդ թղթին թէ՛ բնագրին և թէ՛ պատճէնին տէր կ'ըլլայ: Միայն թէ՛ ընդունուած բնագիրը յանձնողը վերոյիշեալ Ընդունուած քննագիրը ին ինչ ծանօթութիւնը գծելով՝ անոր վրայ կը գրէ Ընդունուած քննագիրը յանձնուած է Տ ին:

Վճարօրին թղթին տէրը իր ստացագիրը բնագրին վրայ կը գրէ, ա՛սինքն, ըստ օրինի, ընդունուած օրինակին վրայ, ուր կը գտնուի նաև քաշողին բուն ստորագրութիւնը՝ և պատճէնն ու բնագիրը վճարողին յանձնելով՝ գումարը կ'ստանայ անկէ, ինչպէս կ'ըլլար Ա. և Բ. ով փոխանակագրոց համար:

Պատճէնը կը շինուի նաև երբ փոխանակագիրը կորսուի, գողցուի և կամ անոր գրերն աւրուած ըլլալով բոլորովին անգործածելի ըլլայ:

Ի հաշիւ Բաշուած փոխանակագիր. — Երբեմն մէկը ուրիշին հաշուոյն և հրամանին համեմատ փոխանակագիր կը քաշէ երրորդի մը վրայ, որուն հետ ամենեւին գործ և յարաբերութիւն չ'ունի, այս կարգի թղթոց կ'ըսուի Ի հաշիւ կամ Երրորդի մը հաշուոյն Բաշուած փոխանակագիր:

Ի հաշիւ քաշուած փոխանակագիրը սովորական փոխանակագրի պէս կը գրուի, միայն թէ՛ եւ անցուցեմ ի հաշիւ էն ետքը

կը գրուի ա՛յն մարդուն անունին և մականունին սկզբնատառերը, որուն հաշուոյն այդ թուղթը քաշուած է: Փոխանակագիրն ընդունողը՝ որ մեծ շահ ունի գիտնալու թէ՛ թուղթը ո՞վ և ինչո՞ւ քաշած է, այդ սկզբնատառերը տեսնելով անմիջապէս կը հասկնայ թղթին որո՞ւ հաշուին քաշուած ըլլալը: Գալով փոխանակագրին ծանուցման՝ յայտնի է թէ՛ այդ պարտքն ալ կը մնայ անո՛ր վրայ, որ թուղթը քաշել հրամայած է. վասն զի քաշողն, ինչպէս ըսինք, այդ մարդէն ո՛չ առնելիք ունի և ոչ ալ յարաբերութիւն. առնելիքն ու յարաբերութիւնը ա՛յն անձն ունի, որ թուղթը քաշել հրամայած է իրեն. հետեւաբար ինքը պէտք է ծանուցանէ իր հաշուոյն քաշուած փոխանակագրին համար, որպէս զի ընդունողն ալ գիտնալով ընդունի և օրին վճարէ:

Ի հաշիւ փոխանակագիր քաշելն ընդհանրապէս հեռաւոր քաղաքներու մէջ եղած գործողութեանց համար կ'ըլլայ: Ասկէ զատ՝ սեղանաւորք շատ անգամ չ'ուզելով որ իրենց ստորագրութիւնը հրապարակին վրայ շատ շրջաբերի՝ այս միջոցը կ'ընտրեն:

Վերջապէս իր հաշուոյն ուրիշի ձեռքով փոխանակագիր քաշել տալու պարագաներ յաճախ կը պատահին. օրինակ, դիցուք թէ՛ Ա. Մովսէսեան Կեսարացի վաճառականը, որ Պօլիս թղթակից ունի Կոստիկեան Եղբարք Տունը, Իզմիրի Ս. Գրիգորեանէ 200 Լ. ի ապրանք յանձնարարէ, և այս վերջինը ուզէ իր այդ պահանջը ստանալ Պօլսոյ վրայ փոխանակագրով: Այդ պարագային՝ Ա. Մովսէսեան կը հրամայէ Իզմիրի Ս. Գրիգորեանին որ իր հաշուոյն Պօլիս Կոստիկեան Եղբարք վրայ փոխանակագիր քաշէ: Ինչպէս ըսինք, Ա. Մովսէսեան միեւնոյն ատեն ծանուցանելու է Կոստիկեաններուն՝ Ս. Գրիգորեանի 200 Լ. և այսչափ օրուան իրենց վրայ փոխանակագիր քաշելու հրամայած ըլլալը:

Ուրիշի ձեռքով վճարելի փոխանակագիր. — Երբեմն փոխանակագիրը մէկուն վրայ քաշուած՝ բայց գումարը ուրիշը կը վճարէ. այդ պարագային՝ փոխանակագիրն ընդունողը իր ընդունելութեան մէջ կամ իր հասցէին տակ ուրիշի մը հասցէն կը գրէ, որպէս զի օրին փոխանակագրին գումարը անկէ՛ պահանջուի: Այս տեսակ թղթոց կ'ըսուի Ուրիշի ձեռքով վճարելի փոխանակագիր:

Վճարողը գիւրութեան համար փոխանակ իր թուղթը ինք վճարելու՝ սովորութիւն է որ իրեն սեղանաւորին վճարել կը տայ, որուն քով դրամ կ'ունենայ. ընդունած ատեն, ինչպէս ըսինք, գրելով թղթին վրայ վճարող սեղանաւորին անունը և հասցէն:

Այս սովորութիւնը Անգղիոյ մէջ շատ ընդհանրացած է, և սեղանաւորք միշտ իրենց յաճախորդաց հաշուոյն կը վճարեն անոնց վճարելի թղթերը, և կը գանձեն անոնց գանձելի թղթերը:

Ուրիշի ձեռքով վճարելի փոխանակագիր շինելու շատ պատճառներ կ'ըլլան, որոցմէ մէկ քանին յիշենք:

Փոխանակագիրն ընդունողը ճամբորդ կ'ըլլայ, որ մինչեւ թղթին վճարօրը նոյն քաղաքը չի կրնար մնալ, անոր համար միշտ հոն գտնուող սեղանաւոր մը կամ դրամատուն մը կը նշանակէ իր ընդունելութեան վրայ, որ թուղթը օրին անկէ գանձուի: Ընդունողը անանկ քաղաք մը կը գտնուի, որուն հետ սեղանաւորական յարաբերութիւն շատ քիչ ըլլայ կամ ամենեւին չ'ըլլայ:

Ուրիշ օրինակ մը. Գաղղիա գտնուող գործարանատէր մը Պօլիս Թ. և Գ. Սէմէրճեան Եղբարց զրկած ապրանքին համար 3 | ամս. փոխանակագիր կը քաշէ՝ օրին Գաղղիոյ մէջ սեղանաւորի մը կամ դրամատան մը ձեռքով վճարուելու պայմանով: Սէմէրճեան Եղբարք թուղթը ընդունելով՝ Փարիզի Գոհեսի Լիօնէն կը նշանակեն իրենց ընդունելութեան մէջ այսպէս,

Հնդուներցիներ
 վճարելի ի փարիզ
 Գոհեսի Լիօնէի՛ն ձեռքով
 Կ. Պօլիս, 10 Մարտ 1897
 (Ստորագրութիւն)

 Acceptée
 Payable chez
 Crédit Lyonnais à Paris
 Constantinople, le 10 Mars 1898
 (Signé)

եւ ընդունուած թուղթը գործարանատիրոջ կը զրկեն, եթէ սա ընդունելութեան համար ուղղակի իրենց զրկած է փոխանակագիրը (1), եթէ դրամատան զրկած է՝ ընդունելով անոր կը յանձնեն:

Սակայն պէտք է գիտնալ թէ՛ փոխանակագիրն վրայ Գոհեսի Լիօնէի՛ն ձեռքով վճարելի գրուելով, ըսել չ'է թէ Գոհեսի Լիօնէն պարտաւոր է օրին անպատճառ վճարելու. այլ Սէմէրճեան Եղբարք պարտական են վճարօրին այդ թղթին գումարը հասցնել յիշեալ դրամատան, որպէս զի նա ալ վճարէ:

[1] Տե՛ս Թ. 160 ընդունելութիւնը ուղղակի վճարողին զրկելով:

Ուրիշի ձեռքով վճարելի փոխանակագիրը եթէ օրին նշանակուած Տան ձեռքով չ'վճարուի՝ անոր փոխարէնը ստացած չ'ըլլալուն համար, նոյն տունը ըստ օրինի պատասխանատու և պարտական չ'է վճարելու, քանի որ ինքը չ'է փոխանակագիրն ընդունողը: Եւ քանի որ գիտենք թէ՛ փոխանակագիրն վրայ Լիօնէի՛ն ընդունողը գրութիւնն է որ ընդունողը յանձնատու և պարտական կ'ընէ, հետեւաբար միւս երեսի օրինակին մէջ Սէմէրճեան Եղբարք եթէ իրենց ընդունած թղթին գումարը առաջուց չ'զրկեն, Գոհեսի Լիօնէն կը մերժէ և չի վճարեր ըստ օրինի, զի սա փոխանակագիրը ընդունած չ'է իր Տան ստորագրութեամբը, հետեւաբար և յանձնատուութիւն մ'ալ չ'ունի:

Պաշտօնագրով փոխանակագիր կ'ըսուի այն փոխանակագրոց, որոնց կցուած կ'ըլլան զանազան պաշտօնաթղթեր, բեռնագիր, ապահովագիր, վարձագիր (նաւու), աւանդ ապրանքներու ընկալագիր, ևլն:

Այս պաշտօնագրեր, որոնց մէկ մասը փոխանակագիրն ընդունողին ուղղեալ ապրանքներ և մէկ մասը ապրանքի վերաբերեալ գանձելի ծախքեր կը ներկայացնեն՝ ընդունելի կամ վճարելի փոխանակագրոց կցուած՝ դրամատուններու կողմէն կը ներկայացուին թուղթը ընդունողին կամ վճարողին:

Կան գործարանատէրներ կամ վաճառականներ, որք, ըստ պայմանի, իրենց զրկած ապրանքին արժէքին համար կամ տեսօրին փոխանակագիր կը քաշեն, և այդ փոխանակագիրը ապրանքին բեռնագրին հետ կը զրկեն թուղթը վճարողին քաղաքը սեղանաւորի մը կամ դրամատան մը, որ կը ներկայացնէ փոխանակագիրը և բեռնագիրը միանգամայն, և դրամը գանձած ատեն միայն բեռնագիրը վճարողին կը յանձնէ: Յայտնի է թէ այս միջոցն անոր համար կ'ըլլայ, որ ապրանք զրկողը չ'ուզեր վարկ ընել այդ մարդուն: Նոյնպէս կրնայ ըլլալ որ այդ պաշտօնագրերը դարձեալ սեղանաւորի մը միջոցաւ յանձուին ապրանքին տիրոջ, եթէ, ըստ պայմանի, փոխանակագիրը ներկայացած ատեն ընդունի: Բեռնագիրները չորս օրինակով կը շինուին ըսինք. հետեւաբար այդ տեսակ պաշտօնագրով փոխանակագիր գնելու կամ գեղջելու մէջ պէտք է ուշագրութիւն ընել և պահանջել բեռնագրին չորս օրինակն ալ միանգամայն, առանց որոյ, ապրանքը բեռնողը խարդախութիւն ընելով՝ բեռնագրին մէկ օրինակը կրնայ ուրիշի փոխանցել, և այն ատեն ապրանքը ստանալու համար երկու կամ աւելի անձինք կը ներկայանան նաւապետին, որ մեծ դժուարութեանց պատճառ կ'ըլլայ:

Պաշտօնագրով փոխանակագիրը սովորական փոխանակագրի պէս կը գրուի, միայն թէ՛ ինչպէս ըսինք, այդ պաշտօնագիրք գնդատելով փոխանակագրին կցուած կ'ըլլան:

Հանոյակատարութեան փոխանակագիր. — Նեղը մնացած երկու վաճառականներ գրամ ձարելու համար, շատ անգամ առանց պատճառի, փոխադարձաբար իրարու վրայ փոխանակագիր կը քաշեն, զորս իւրաքանչիւրն իր սեղանաւորին կը ծախէ: Այդ տեսակ թղթոց Հանոյակատարութեան կամ գործի լեզուով՝ Քաշեմ ֆաշես քորթեր կ'ըսեն: Այս կերպով թէեւ առժամեաց դրամ կը ձարեն, բայց այդ քաշուած թղթոց վճարօրին իւրաքանչիւրը պէտք է զրկէ անոր փոխարէնը. ապա թէ ոչ՝ փոխանակագիրները չեն վճարուիր և իրենց խարդախ հնարքը երեւան կ'ելնէ: Սակայն այս միջոցը գործածողները վճարօրին դարձեալ ուրիշ թղթեր կը քաշեն, ի հարկէ առջիններուն դրամը ձարելու համար, և այսպէս կը շարունակեն, մինչեւ որ իրենց հնարքը հասկցուելով՝ թղթերնին այլևս զնոյ չ'գտնուի, և կամ իրենք զիրենք այսպէս կործանեն միշտ փոխանակագին և սոկոս վճարելով:

Բողոքագիր (Բրօքէտթօ). — Բողոքեղ (Բրօքէտթօ ընել) կ'ըսուի այն պաշտօնական գործողութեան՝ որով առեւտրական թղթոց (փոխանակագիր, հրամանի տոմսակ) չ'ընդունուիլը կամ օրին չ'վճարուիլը կը հաստատուի. իսկ այս գործողութիւնը հաստատող թղթին Բողոքագիր կ'ըսուի: Հետեւաբար երկու պարագայի մէջ բողոքագիր կ'ըլլայ.

Բողոքագիր չ'ընդունուելուն հարևար
» չ'վճարուելուն հարևար:

Փոխանակագրին տիրոջ պարտուց և իրաւանց մասին մէջ բացատրեցինք թէ՛ փոխանակագրի կամ հրամանի տոմսակին տէրը թղթին վրայ ստորագրողներէն իր համերաշխութեան իրաւունքը չ'կորսնցնելու համար՝ ձեռքը գտնուած թուղթը եթէ չ'ընդունուի, կամ օրին եթէ չ'վճարուի՝ պարտաւոր է ըստ օրինի բողոքել որ այսպէս կ'ըլլայ:

Չ'ընդունուած կամ օրին չ'վճարուած թղթին տէրը (փոխանակագիր կամ հրամանի տոմսակ) վճարօրին հետեւեալ օրը տանելու է զայն տեղւոյն Առեւտրական Դատարանին Նօսարութեան Դիւանը (Մուգավէլաթ Մուհարրիրլիկի) կամ Առեւտրական Սենեակը (Թիճարէթ Օտասը) և անոր բողոքագրին ուղելու է. եթէ նոյն քաղաքին մէջ այդ տեսակ պաշտօնատուներ չ'գտնուին՝

քաղաքին Իսարեի Ժողովին միջոցաւ ալ օրինական ձեւակերպութիւնը կատարուելու ըլլայ՝ վաւերական կը սեպուի: Նօտարութեան Դիւանը բողոքագիրը պատրաստելէ առաջ՝ թուղթը իր բարապաններէն (միւլաշիր) մէկուն միջոցաւ ընդունողին կամ վճարողին, և կամ Ի հարկին վճարողին ներկայացնել կը տայ՝ անոր ընդունուիլը կամ վճարուիլը պահանջելով. հակառակ պարագային՝ վճարողը կամ ընդունողը՝ բարապանին ներկայութեանը բողոքագրին մէջ թուղթը չ'ընդունելուն կամ չ'վճարելուն պատճառը գրելու և ստորագրելու է: Ահա այսպէս պաշտօնապէս և հանդիսաւորապէս կը հաստատուի թղթին չ'ընդունուիլը կամ չ'վճարուիլը:

Բողոքագիրը պաշտօնական թուղթ մ'ըլլալուն, անոր ձեւն ալ Օրէնքով որոշուած և տպագրուած է, մէջը պարսպ մասերով, ուր վերջէն Նօտարութեան դիւանի գրագիրը պէտք եղածը կը գրէ այսպէս:

Բողոքագրին մէջ կը գրուին.

1. Բողոքուած թղթին օրինակը, ընդունուելութիւնը, փոխանցումներն և ի հարկին ընդունող կամ վճարողներուն անունները բառ առ բառ ընդօրինակուելով
2. Փոխանակագրին գումարը պահանջուած ըլլալը
3. Դրամը պահանջուած ատեն վճարողին ներկայութիւնը կամ բացակայութիւնը
4. Չ'վճարուելուն պատճառները, վճարելու և ստորագրելու անկարողութիւնը և հակառակիլը:

Փոխանակագրին տիրոջ կողմէն պատրաստուած ո՛չ մէկ գրութիւն կրնայ բողոքագրին տեղը բռնել: Փոխանակագրին չ'վճարուիլը հաստատելու համար վաճառականներու և ուրիշներու կողմէն իբր վկայագիր պատրաստուած թղթերը բողոքագրի տեղ մէն կրնար ընդունուիլ ըստ օրինի: Բացի կորսուած թղթի համար ըլլալիք ձեւակերպութեանց՝ որոյ մասին ասկէ առաջ խօսած ենք, որ դարձեալ բողոքագրով կ'ըլլայ. միայն թէ՛ այդ տեսակ բողոքագրին մէջ փոխանակագրին բառ առ բառ ընդօրինակութիւնը չի կրնար գրուիլ, քանի որ թուղթը կորսուած է:

Բողոքագիրը ո՛ւր ընել հարկ ե. — Բողոքագիրն ընդհանրապէս թղթին վճարելի քաղաքը կ'ըլլայ, բայց որովհետեւ փոխանակագիրը Միջամտութեանը ընդունողներ և ի հարկին վճարողներ կը գտնուին երբեմն՝ ուստի բողոքագիրը կ'ըլլայ հետեւեալ երեք տեղերը:

1. վճարողին բնակավայրը (այսինքն, գործին տեղը)՝ եթէ թուղթը անոր քաղաքը վճարելի է

2. Վճարողին և ընդունողին բնակավայրը միանգամայն՝ եթէ փոխանակագրին վրայ միջամտութեամբ ընդունող գտնուի

3. Միջամտութեամբ վճարողներուն բնակավայրը՝ եթէ փոխանակագրին վրայ ի հարկին վճարող գտնուի:

Բողոքագիրը մէկ օրինակ կը շինուի, իսկ անոր մէկ մէկ պատճէնը բարապանի միջոցաւ կը հաղորդուի վերոյիշեալ անձերուն բնակավայրը՝ միանգամայն փոխանցողներուն ծանուցուելով:

Եթէ վճարողին հասցէն սխալ գրուած ըլլալով փնտռուի և չգտնուի, բարապանը՝ հակառակ իր խուզարկութեանց, վճարողը գտած չըլլալը կը ծանուցանէ ձեռնհաս դատարանին Տեղեկագիր խուզարկութեան անուն տեղեկագրով, յորմէ ետքը կ'ըլլայ բողոքագիրը, որուն պատճէնը կը փակցուի տեղւոյն Առեւտրական Դատարանին պաշտօնատան և եթէ սա չգտնուի՝ կառավարական պաշտօնատան մեծ դրան վրայ:

Բողոքագրին նպատակը՝ քաշողին և փոխանցողներուն պաշտօնապէս ծանուցանել և հաստատել է թէ՛ թղթին տէրը թէ՛ եւ վճարորին դայն ներկայացուցած է, բայց չէ վճարուած: Պէտք է զիտնալ թէ՛ ամէն անվճար թղթի համար բողոք չըլլար. օրինակի համար, բողոք ընել հարկ չէ, եթէ քաշողը թուղթը ուրիշի ծախած չըլլալով, օրին գանձելու ինք ներկայացնէ: Այդ պարագային՝ թուղթը բողոքելով միւսն սոկոսի առաւելութիւն ձեռք կը բերուի, այսինքն, ըստ օրինի գումարին սոկոսը բողոքուած օրէն կը հաշուուի: Ասկէ դատ՝ կան մարդիկ ալ, որք բողոքագիրը ներկայացնող բարապանին աւելի շուտ կը վճարեն, քան բուն իսկ թղթին տիրոջ, կերպով մը առջինէն վարկաւորով կամ ակնածելով:

Միւս երեսը կը դնենք բողոքագրին պաշտօնական օրինակը, ուր ընդօրինակուած է անվճար թուղթ մը իր մանրամասնութեամբ:

- Բողոքագրին համար հետեւեալ ծախքը կը վճարուի.
- 50 դր. Բողոքագրին համար
- 10 » Բարապանին (այս ծախքը կ'աւելնայ, եթէ տեղը հետու ըլլայ)
- 2 » Դրոշմաթղթի
- 62 դր.

Բողոքագրի համար արդարացուցիչ պահանջներ. — Փոխանակագրին տէրը՝ առանց պատասխանատուութեան միայն հետեւեալ երկու պարագաններուն մէջ կրնայ չբողոքել թուղթը:

Ա. Դարձ առանց ծախի. — Քաշողն չուզելով որ թուղթը չվճարուած ատեն բողոքուի և Դարձի հաշիւ զրկուի՝ իր ստորագրութեան տակ կը գրէ Դարձ առանց ծախի կամ Առանց ծախի: Այդ պարագային՝ ըսել է թէ՛ փոխանակագիրը քաշողն

در سعادت محاکم بدایت مقاولات محردلی

یومیه نومروسی
صره نومروسی
فهرست نومروسی

اشوبیك اوچویوز او نه بشن سنسی رمضان شریفك او نه سكرنجی
 كونه واقع بیك سكرز یوز طقساه سكر سنسی ثانویك تا بیسك بكمی
 سكرنجی مهران شنبه كوئی والده خاتنره مقیم نشانه افندی روزنجیاه
 عدلیه نظارت جلیله سنده در سعادت محاکم بدایت مقاولات محردلیكنه
 كهرك صورتی دیگر صحیفه ده محرز اولوب حاملی بولندیغی الی لبرالع
 برقطعه یولیجی بافود امره محرز سنرینك عدم تأدی سنره بافود قبولنره
 طولای نظاماً تنظیم وتبلیغی لازم كلان پروتستونك اجرانی طلب
 ایتش اولمغله ذكر اولنان یولیجی نك بافود امره محرز سنر ك قبولی
 بافود تأدی سچونه بیوك بیکی خاتنره مقیم تجارده افندی طرفنه
 چاوش مأموراً كوندریلهرك برلنك ایفاسی كندوسنه
 تكلیف اولند فره مومی البرهك نحریر اوبرمتس اولدیغی جوابك صورتی
 زبرده عینله درج ایدلسی

(Հոս վճարողին տուած պատասխանը պէտք է նոյնութեամբ գրուի)
(Բողոքագրին միւս երեսը կ'օրինակուի բողոքուած թուղթը և փոխանցումները բառ առ բառ)

اولمسيله اشبو عدم ایفاده طولای ترتب ایده جك ضرروزیان وكذشته
 ومصارفات واقعه سیه برابر نظاماً ادعا اولته بیه جك تضمینانك طلب اولته جفی
 معلوم اولیق اوزره اشبو پروتستو تنظیم وتمهیر اولنمشدر

در سعادت محاکم بدایت مقاولات محردلی

առանց բողոքի ալ պարտաւոր է դրամը վճարելու : Նոյն ծանօթութիւնը փոխանցողներն ալ կրկնելու են իրենց ստորագրութեան տակ , որպէս զի թղթին տէրը զայն տեսնելով չբողոքէ : Բ. երբ փոխանակագրին տէրը արգելիչ պատճառով մը անկարող ըլլայ բողոքը բողոքել . — Արգելիչ պատճառներն են , պատերազմ , քաղաքի մը պաշարումը , տեղատարափ անձրեւ , համաճարակ հիւանդութիւն , պարագաներ՝ որք քաղաքի մը ուրիշ քաղաքի հետ յարաբերութիւնը և գործոց կանոնաւոր ընթացքը դադարեցնելու պատճառ կ'ըլլան :

Ծանօթ . — Եթէ փոխանակագիրը բաց փոխանցումով ըլլայ՝ բաց փոխանցումները լեցնելու և այնպէս բողոքի տանելու է թուղթը :

Փոխարէն - փոխանակագիր . — Օրին չ'վճարուած և բողոքուած փոխանակագրին տիրոջ՝ իրմէ առջի փոխանցողներէն երաշխաւոր ուզելու , և ի հարկին անոնց ինչքը արգելքի տակ առնելու մասին ունեցած իրաւունքէն զատ՝ Օրէնքը ուրիշ իրաւունք և միջոց մ'ալ տուած է անոր անվճար թուղթը շուտով գանձելու համար . որովհետեւ շատ անգամ փոխանակագրին տէրն այդ գանձելի գումարը իր վճարումներուն յատկացուցած կ'ըլլայ , և անոր չ'վճարուելովն՝ ինքն ալ նեղը կը մնայ : Այս պարագան նախատեսելով է որ՝ Օրէնքը որոշած և իշխանութիւն տուած է անվճար թղթին տիրոջ որ՝ ինքն ալ այդ թուղթը իրեն տուողին , ուրիշ փոխանցողի մը և կամ նոյն իսկ քաջողին վրայ (ընտրութիւնը իր ձեռքն է) ուրիշ նոր փոխանակագիր մը քաշէ , որուն կ'ըսուի Փոխարէն - փոխանակագիր , որով անվճար թղթին գումարը , բողոքի և ուրիշ ծախքերը , և կրկին փոխանակագիրը կը գանձէ : Իսկ այդ նոր փոխանակագիրը ծախելու համար արուած տարբերութեան ալ կ'ըսուի Կրկին - փոխանակագրին , որովհետեւ միեւնոյն գումարին համար դարձեալ փոխանակութեան (Գամպիո) գործ եղաւ :

Եթէ Փոխարէն - փոխանակագիրը քաջողին վրայ չ'ինուի , կըրկին փոխանակագիրը կ'ըլլայ՝ փոխարէն - փոխանակագիրը քաշուած և բուն իսկ անվճար թղթին հրապարակին միջեւ եղած փոխանակութեան տարբերութիւնը : Ամերիկայէն Լօնտրայի վրայ քաշուած փոխանակագրին , որ եգիպտոս և Կ . Պօլիս շատերու ձեռքէ անցած է , բայց օրին չ'է վճարուած , փոխանակագիրն միայն Ամերիկայի և Լօնտրայի հրապարակներուն միջեւ եղած փոխանակագնով կը վճարուի , որ , ինչպէս Դարձի հաշուին առթիւ ըսինք , կը հաստատուի փոխանակագրի միջնորդներուն գրաւոր և ստորագրեալ վկայութեամբ , զոր կը գնեն Դարձի հաշուին տակը (Տե՛ս Թ . 109) :

ՓՈՒՍԵՒԼՆ - ՓՈՒՍԵՒՆԱՅԱՍԿԱՐԿԻ ՕՐԻՆԱԿ

ՄԱՐՍԵՒԼՈՒ , 20 Մետսեմբեր 1897

Փ . Վ . ՅՐ . 3070/ի

Տեսորին վճարեցեք այս փոխարէն - փոխանակագրոյս Գոնէփ Լիօնէի հրամանին

Պրանց երեք հազար եօթսուունը

արժեք 3000 Ժր . ի քրքիս կից անվճար փոխանակագրին եւ անոր դարձի հաշոյն համար , առանց ծանուցման :

Մեծագոսիւ

Տ . Գ . Օ Հ Ա Ն Ն Ս Ս Ն

ՅԱՆՉԵՆՈՒՄ

Կ . Պօլիս , Մուրաբեմն Խոն Թ . 9

Ա . ՍԵՐՈՎԵՅԱՆ

Եթէ Փոխարէն - փոխանակագիրը փոխանցողներէն մէկուն վրայ քաջուի՝ վճարելի փոխանակագրին և փոխանցողին հրապարակներուն միջեւ եղած փոխանակագիրը կը վճարուի :

Սա կէտը պէտք է լաւ ըմբռնել թէ՛ անվճար թուղթը գանձելու համար Փոխարէն - փոխանակագիր քաշուած ատեն , միեւ-

RETRAITE

MARSEILLE, le 20 Septembre 1897

B. P. Frs. 3070—

A vue payez par celle re traite à l'ordre du Crédit Lyonnais

La somme de francs Trois Mille sixante dix

valeur en remboursement de la traite de frs. 3000. — impayée et compte de retour. le tout ci-annexé, sans autre avis.

A Monsieur

K. O H A N I A N

COMMISS IONNAIRE

Constantinople, Mouradian-Han N. 9

A. SEROPIAN

նոյն ժամանակ փոխանակագրին տէրը իր օրինական պարտքերը, զորս սակէ առաջ թուեցինք, պէտք է կատարէ, այսինքն 24 ժամ ետքը թուղթը բողոքել, եթէ մինչեւ այն ատեն չէ ըրած, և 15 օրուան մէջ դատաւարութեան սկսիլ. որովհետեւ կրնայ ըլլալ որ Փոխարեն-փոխանակագիրն ալ չ'վճարուի' և մինչեւ որ անի ետ

դայ, առգին թղթին տէրը՝ ժամանակ անցնելէ ետքը միւս փոխանցողներուն վրայ ունեցած իրաւունքը կը կորսնցնէ:

Սովորութիւն է վրան փոխարէն - փոխանակագիրը քաշուած անծին շրկել հետեւեալները, կցելով զանոնք փոխարէն - փոխանակագրին.

1. Անվճար և բողոքուած փոխանակագիրը
2. Բողոքագիրը կամ անոր մէկ օրինակը
3. Գարձի հաշիւը:

Փոխարէն - Փոխանակագիրը, որ սովորաբար տեսօրին վճարելի կը քաշուի, ընդունելութեան պէտք չ'ունենար, որովհետեւ բողոքուած թղթի մը դուժարը կը ներկայացնէ: Փոխարէն - փոխանակագիր շատ չի քաշուիր. ընդհանրապէս անվճար թղթին տէրը միայն բողոքագրով և Գարձի հաշուով ետ շրկելով փոխանակագիրը իր պահանջքը կ'ստանայ թուղթը իրեն շրկողէն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ք

1. Պրուսայէն 1897 Մարտ 14 ին Ս. Թորոսեան՝ Լ. Օ. 145. 59 ի մէկ օրինակ փոխանակագիր մը կը քաշէ, տեսօրէն 11 օրէն վճարելի Ս. Շէրպէթճեանի վրայ ի Կ. Պոլիս, Կալաթա Մէհմէտ Ալի Փաշա Խանը Թ. 17, Գ. Մինասեանի հրամանին, որ փոխանցելով Ս. Թօղաթեանի հրամանին անոր կը տայ զայն՝ առած ապրանքին հաշոյն:

2. Մ. Թօղաթեան ի Կ. Պոլիս, 1897 Նոյմ. 30 ին կը քաշէ Տրապիզօն Պօղոս Արապեանի վրայ Լ. Օ. 214. 29 ի՝ թուականէն 121 օրէն վճարելի իր հրամանին փոխանակագիր մը երկու օրինակով (Ա. և Բ.) իր զրկած ապրանքին համար. Ա. ը ընդունելութեան կը զրկէ Տրապիզօն Ա. Մախօիեանի, առանց անոր անունին փոխանցելու և Բ. ը կը պահէ իր քով, անոր տակը գրելով Ա. ը ընդունելութեան զրկուած ըլլալը:

3. Թ. և Ե. Գարակէօղեան, ի Կ. Պոլիս, 1897 Յու. 17 ին կը քաշեն Լօնարա Անկլօ-Աւստրեան Պանքային վրայ (Anglo-Austrian Bank) £ 500 ի 3 | ամս. փոխանակագիր մը երկու օրինակով, Խօրասանճեան և Արզրեանի հրամանին, որք կանխիկ վճարած են անոր արժէքը. այդ փոխանակագիրը չըջաբերելով և այլեւայլ փոխանցումներով ետին լինալով, երկայնորդ ալ փակցուած է. իսկ այդ երկայնորդն ալ լինալով, վերջին փոխանցման վրայէն կարծիր մելանով ալ երկու փոխանցումն եղած է:

4. Մամբրօֆիզ և Ընկերք, յ'Օտէսա, 1897 Օգոստ. 27 ին £ 480 ի 2 | ամս. երկու օրինակով փոխանակագիր մը կը քաշեն Լօնարա Վալթանօ և Ընկերք վրայ՝ Ժ. Ժ. Բասարթիի հրամանին, սակայն վախնալով որ Վալթանօ և Ընկերք թուղթը

չեն ընդունիր և չեն վճարեր, իրենց թղթակիցը Մավրօ Վալիէսին կը նշանակեն, որ ի հարկին ընդունին և վճարէ զայն իրենց հաշոյն:

Այս հրահանգները ուսանողը պատրաստելու է ամէն մանրամասնութեամբ հայերէն եւ գաղղիերէն, հետեւելով մեր օրինակներուն:

ՀՐԱՄԱՆԻ ՄՈՒՐՀԱԿ

Հրամանի մուրհակ կամ Տոմարակն այն է, որով պարտականը կամ ստորագրողը յանձն կ'առնէ որոշեալ ժամանակէ ետքը և որոշեալ տեղ մը ո՛ր և է գումար հնչուն գրամով վճարել թղթին մէջ գրուած անձին, կամ անոր հրամանովն ուրիշի մը և կամ փոխանցումով նոյն թղթին տէր եղող վերջին անձին:

Առեւտրական Օրէնքին համեմատ՝ հրամանի տոմսակը օրինաւոր ըլլալու համար պէտք է պարունակէ,

- 1. Մուրհակին գրուած թուականը
- 2. Վճարելի գումարը
- 3. Որո՞ւ հրամանին վճարելի ըլլալը (անունը և մականունը)
- 4. Պայմանաժամը
- 5. Արժէքին համար ի՞նչ առնուած ըլլալը, այսինքն, գրամ, ապրանք կամ ի հաշիւ տրուած կամ ուրիշ ի՞նչ կերպով առնուած ըլլալը
- 6. Վճարողին ստորագրութիւնը և հասցէն:

Հրամանի մուրհակն այ ենթակայ է առեւտրական Օրէնքին՝ փոխանակագրին Պայնանաժամին, Փոխանցումին, Համերաշխութեան, Երաշխաւորութեան, Վճարման, Միջամեջութեան վճարման, Բողոյի, Փոխարեկ - փոխանակագրին կամ Տոկոսին, Փոխանակագրին սիրոջ պարտոց եւ իրաւանց վերաբերեալ տրամադրութեանց զորս բացատրեցինք Փոխանակագրին մէջ, ասոնք ամէնքն ալ հրամանի տոմսակին համար եւս գործադրելի են:

Հակառակ Օրէնքին այս հաւասարութեան՝ հրամանի տոմսակը կը տարբերի փոխանակագրէն այնու զի, առջինը (մուրհակը) ստորագրողը և վճարողը նոյն անձն է, մինչդեռ փոխանակագրին մէջ երկու տարբեր անձ կան. մէկը՝ Ստորագրողը և միւսը՝ Վճարողը: Ասկէ զատ՝ փոխանակագրին Փոխարեկին և Ընդունեալութեան վերաբերեալ տրամադրութիւնք հրամանի տոմսակին համար չեն. վասն զի հրամանի տոմսակը ստորագրողէն և անոր գտնուած քաղաքը վճարելի ըլլալով՝ ո՛չ փոխարէնի և ո՛չ ալ ընդունելութեան հարկ կայ:

Մուրհակը շինողին կ'ըսուի՝ Պարտակն կամ Ստորագրող, իսկ այն՝ որուն հրամանին շինուած է թուղթը՝ Հրամանատու կամ

Պահանջատու և կամ պարզապէս Տէր, որ փոխանցող կ'ըլլայ, երբ թուղթը ուրիշի ծախէ: Մեր Ա. օրինակին մէջ՝ Իբրանտեան Եղբարք՝ Ստորագրող Էն, Ա. և Մ. Գարակէօղեան՝ Հրամանատու կամ Տէր, որ Փոխանցող կ'ըլլայ: Երբ թուղթը ուրիշի ծախէ: Փոխանակագրին պէս հրամանի տոմսակին ալ փոխանցողաց թիւը անսահման է, այսինքն, մուրհակը քանի՜ մարդու ձեռք որ անցնի, այնչափ ալ փոխանցող կ'ունենայ. իսկ կրող կամ ներկայացնող կ'ըսուի այն վերջին անձին՝ որ վճարօրին մուրհակը ստորագրողին ներկայացնելով՝ անոր գումարը կ'ստանայ անկէ:

Հրամանի տոմսակին գործնական ձեւը. — Օրէնքին պահանջման համեմատ և սովորութեամբ ընդունուած ձեւով Հրամանի տոմսակ շինելու համար պէտք է գրել,

1. Թուական եւ տեղոյն անունը. — թղթին ճակատը և ձախ կողմը կամ տակը տոմսակը գրուած օրը և քաղաքին անունը: Հրամանի տոմսակին ալ վճարօրը զանապու համար հարկաւ մէջը թուական մը գրուելու է, ինչպէս բացատրեցինք փոխանակագրին առթիւ:

2. Նոյն տողին վրայ դարձեալ թղթին ճակատը և աջ կողմը Մ. կամ Տ. Վ. Լ. Օ. զլխագրերն, որք Մուրհակ կամ Տոմարակ վասն Լիրայ Օւն՝ բառերուն սկզբնատառերն են. միւս մանրամասնութիւնք փոխանակագրին առթիւ բացատրուածին պէս:

3. Պայնանաժամը. — Փոխանակագրին համար գրուածին պէս:

4. Վճարեալ յանձնառութիւնը որ կը գրուի Պարտիմ կամ Պարտիմ վճարել:

5. Հրամանը, որ երկրորդի մը կը վերաբերի, այսինքն, անունն անոր, որուն հրամանին շինուած է թուղթը և տէրն է անոր: Հետեւաբար ստորագրողը փոխանակագրին պէս չի կրնար իր հրամանին մուրհակ շինել, քանի որ վճարողն ալ ինքն է:

Հրամանը կը գրուի այնպէս, ինչպէս ըսինք փոխանակագրին առթիւ: Առանց Հրամանի բառին՝ մուրհակն ալ չի կրնար ուրիշի փոխանցուիլ: Հրամանի բառով տոմսակն ալ գրամի պէս կը շրջաբերի ձեռքէ ձեռք:

6. Գումարը, զոր ամբողջ գրով գրելու է. միւս մանրամասնութիւնք փոխանակագրին պէս:

7. Արժեքը. — Արժեքն ապրանքով ստացած կամ Ընդունած եւ կը գրուի՝ եթէ մուրհակը ստորագրողն առած ապրանքին փոխարէն սուած ըլլայ զայն: Արժեքը կանխիկ դրամ կամ Գրամով ընդունած եւ կը գրուի՝ եթէ ստորագրողն առած գրամին փո-

խարէն տուած ըլլայ եւն: Քանի որ ստորագրողն իր հրամանին մուրհակ չի կրնար շինել, հետեւաբար և հրամանի տոմսակին մէջ Արժեքն ինձնեկ կամ Մեզմե ալ չի գրուիր:

8. Մուրհակը տուողին ստորագրութիւնը եւ հասցեն՝ էթէ հարկ ըլլայ:

9. Մուրհակին քիւր, որ թղթին ճակատը թուականէն առաջ և երբեմն թղթին ներքեւը կը գրուի: Մուրհակ ստորագրողք անոնց վրայ կարգի թիւ մը կը դնեն 1 էն սկսելով, որ պէտք է համապատասխանէ տոմսակի արձանագրութեան տետրին թիւին:

Հրամանի մուրհակին օրինական կէտերը թուելէ և դործնական ձեւը ցուցնելէ ետքը՝ ըսածնիս օրինակով մը բացատրենք:

97 Յուլիս 20 ին՝ Ա. և Մ. Գարակէօզեան Իբրանտեան Եղբարց (1) 150 Լ. Օ. ի ապրանք ծախեցին իրենց հրամանին 121 օրուան տոմսակով:

(Տե՛ս յաջորդ երեսը Իբրանտեան Եղբարց տուած մուրհակը):

Այս թղթով Իբրանտեան Եղբարք առած ապրանքնուն գումարը 121 օրը լրանալուն իրենց պահանջատիրոջ (Ա. և Մ. Գարակէօզեանի) հրամանին վճարելու պարտականութիւն կ'առանձնեն: Եթէ Ա. և Մ. Գարակէօզեան օրէն առաջ դրամը ձեռք անցնել ուզեն, թուղթը ուրիշի կը ծախեն անոր հրամանին ֆոխանցելով, որոյ մասին պէտք եղածը փոխանակողին առթիւ խօսած ենք:

Փոխանակողոց պէս հրամանի տոմսակներն ալ շատ անգամ Բաց ֆոխանցուելով կը շրջաբերին եւ կը զեղչուին սեղանաւորներէ:

Հրամանի տոմսակը գրեթէ փոխանակողի թղթին մեծութեամբ թղթերու վրայ կը գրուի: Շատ վաճառականներ իրենց անունին յատուկ մուրհակներ տալել կը տան:

Ահաւասիկ տոմսակի ուրիշ օրինակ մը գաղղիերէն լեզուով: (Տե՛ս Թ. 180):

Հանոյակասարուքեան կամ Գիւրուքեան տոմսակներ. — Ինչ որ ըսինք հաճոյակատարութեան փոխանակողոց համար, նոյնը հասկնալու է այն մուրհակներուն համար, զորս նեղը մնացած երկու անձինք իրարու փոխանակելով, և իւրաքանչիւրն իր սեղանաւորին զեղչել տալով՝ դրամի պէտքերնին կը հոգան առժամուպէս:

[1] Խիստ առաջնակարգ եւ պատուաւոր վաճառական մանիւթաբուրձի, բնիկ Ամասիացի երկու եղբայրներ, որք ֆոքր Ասիոյ հետեւալ բազմներուն մէջ Տուներ ունին. Մամսոն, Ամասիա, Թօզար, Զիլէ, Զօրուս, Եօզկաս, Արվագ եւ Լնկիւրիւ եւ այս արի [1868] Մանչեսթր ալ տուն մը բացին:

— S. 4. L. O. 150

4. ՊՕԼԻՍ, 20 Յուլիս 1897

Թոմսակներս հարիր քան եւ մէկ օր լրանալուն պարտով վճարել
ի Կ. Պօլիս Տեարց Ա. և Մ. Գարակէօզեանի հրամանին
ԼԿՐԱ ՕՍՄ. հարիր յիսուն, որոյ արժեքը կատարելու համար
ապրանք ստացած եմ:

ԻՐԱՆԱՍՏԱՆԻ ԵՂԵՐԸ

7 1/2 ՂՇԻ
ԳՐԱՆՄԱՐԿՈՒՄ

Թ. Ե. Կ. 327



Constantinople, le 28 Septembre 1897

N. P. L. V. 367.59



A Quatre vingt onze jours de date je payerai à l'ordre de Monsieur Moïse Behar Isac la somme de Quatre cent soixante sept et cinquante huit centimes, Valeur reçue en marchandises à mon entière satisfaction.

M. Papazian

20 150 1 ԳՐՈՍՍՄԱՐԿԵՐ

Բնակավայրի կամ Երրորդէ վնարելի տոմսակ . — Երբեմն հրամանի տոմսակ ստորագրողն անոր վճարմանը համար նոյն քաղաքը կամ ուրիշ տեղ մը գտնուող երրորդ անձ մը կը նշանակէ տոմսակին տակը, որպէս զի օրին դրամը անկէ գանձուի . այս տեսակ թղթերուն, կ'ըսուի Բնակավայրի կամ Երրորդէ վճարելի տոմսակներ :

Այս տեսակ տոմսակները բուն իսկ երրորդէ վճարելի փոխանակագիրներուն հետ շփոթելու չէ . զի պարզապէս հրամանի տոմսակներ են դարձեալ . սա տարբերութեամբ միայն որ՝ տոմսակին տէրը օրին դրամը պահանջելու համար փոխանակ ստորագրողին դիմելու, վճարող նշանակուած երրորդին կը դիմէ, որ շատ անգամ տոմսակը ստորագրողին սեղանաւորը կ'ըլլայ :

Այս տեսակ տոմսակ շինելու պատճառները գրեթէ նոյն են, ինչ որ ըսինք Ուրիշի ձեռքով վճարելի փոխանակագրին համար : Թ. 165) : Սա կէտը յիշել հարկ է թէ՛ տոմսակը ստորագրողը (Տէ՛ս պարտաւոր է անոր դուժարը ժամանակին զրկել վճարողին, որ ան ալ օրին վճարէ . զի, այն անձը ըստ օրինի պարտաւոր չէ այդ տոմսակը վճարելու, քանի որ ինքը անոր վրայ ստորագրութիւն չ'ունի, այլ պարզապէս իբր վճարող նշանակուած է . եթէ սա տոմսակը ստորագրողէն դրամը ստացած ըլլալով հանդերձ չ'վճարէ, տոմսակը ստորագրողը դարձեալ պարտական է նոյն թղթին տիրոջ հանդէպ :

Ահաւասիկ օրինակ մը բնակավայրի տոմսակի .

Թ. 692 Կ. Պօլիս, 8 Ապրիլ 1897 Գ. Վ. Լ. 0. 65 -

Թոմսականես վարսուն եւ մեկ օր յաւանարուն պարսիւ վճարել 8. Գ. Թորոսեանի հրահանքին

Վարսուն եւ հինգ լիւրա Օսմանեան

արժէքը կանխիկ դրամ ստացած եւ :

Մ. ՍԱՀԱԿԵԱՆ

Վճարելի
 ՊԱՆՔՈՒԾՄԱՆԷ
 և Պօլիս
 Պօլսոյ Մասնաճիւղ

BILLET à DOMICILE

N 692 Constantinople, le 8 Avril 1897 B. P. L. T. 65—

A soixante et un jours de date je m'engage à payer à l'ordre de Monsieur K. Torossian la somme de _____
Soixante cinq livres turques _____
Valeur reçue en espèces.

M. SAHAKIAN

Payable chez
LA BANQUE IMPÉRIALE OTTOMANE
Constantinople
Agence de Stamboul

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ք

- 1. Յ. Մինասեան 97 Յունիս 28 ին Մելիքեան Եղբայրներէն զնեց Լ. 0. 87 ⁶⁸/₁₀₀ ի սպրանք, տարով 91 | օր. անոնց հրամանին տոմսակ մը:
- 2. Գ. Յակոբեան 97 Հոկտ. 8 ին Պ. Էքսէրճեանէ 200 Լ. 0. առաւ, տարով 45 | օր. յիշեալին հրամանին տոմսակ մը:

ՄՈՒՐՀԱԿ ԿԱՄ ՏՈՄՍԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԻՆ

Առեւտրական թղթերէն, ըսինք, ոմանք փոխանցուածով եւ ոմանք առանց փոխանցումի ձեռքէ ձեռք կը շրջաբերին: Ահա այս վերջիններէն մէկն է Ներկայացնողին կամ Բերողին տոմսակը, որուն մէջ պահանջողին անունն անգամ չի գրուիր, այլ բերողին վճարելի է, այսինքն, թուղթը որո՞ւ ձեռք օր գտնուի:

Քանի որ բերողին վճարելի տոմսակին մէջ պահանջատիրով անունը կամ հրամանը չի գրուիր, հետեւաբար փոխանցում ալ չըլլար: Ըսել է թէ՛ այս տեսակ մուրհակները պարտականին ստորագրութենէն զատ ուրիշ երաշխաւորութիւն չունին, ուստի և դիւրաւ չեն կրնար գեղջուիլ կամ պարագի տեղ ուրիշ տրուիլ, երբ մանաւանդ՝ վճարողը այնչափ վստահելի չէ:

Բերողին մուրհակը գէշ պատճառներու, զօրօրինակ, խաղամուրթեան կամ բռնի սուգանքի առթիւ անուելուն՝ շատ ընդունելի չէ մանաւանդ Գաղղիոյ մէջ, ուր երեք անգամ արգելուած է սասնկ թղթեր անելն: Օսմ. Առեւտրական Դատարանը վերջին տարիներս բերողին մուրհակը այն ատեն առեւտրական թուղթ նկատել սկսաւ, երբ պատճառն առեւտրական ըլլայ, այսինքն, եթէ թուղթը ստորագրողը և անողը վաճառական ըլլան:

Մեր հրապարակին վրայ կը տեսնուի երբեմն Բերողին տոմսակներ, որոնց մէջ գրուած են Արժեքն 8..... և սպրակով ընդունած եւ կատարեալ հաճութեամբ. Valeur reçue en marchandises de M..... à mon entière satisfaction և դարձեալ բերողին վճարելի են: Այս տեսակ բերողին մուրհակներն, որք առեւտրական թղթի հանգամանք կ'առնեն, աւելի յարգի և զեղչելի են, քան այն բերողին վճարելի մուրհակները, որոնց մէջը արժէքն ո՛ւրիշ և ի՞նչ անուամբ ըլլալը չէ գրուած:

Ատեն մը Պոլսոյ հրապարակին վրայ բերողին մուրհակներ շատ կ'ըլլար. բայց անոր անպատեհութիւնները գիտուելով՝ հիմա շատ քիչ կը տեսնուին. անոնց տեղ հրամանի տոմսակները կը գործածուին. զի ատենք կորսուելու ալ ըլլան՝ օրինական ձեւակերպութեամբ կարելի է անոնց տէր ըլլալ. մինչդեռ բերողին տոմսակին համար այնպէս չէ. թուղթը կորսուած ատեն, գտնողը կրնայ վճարօրին զայն գանձել. եթէ հրամանի ըլլար, պէտք էր անոր հրամանին փոխանցուէր, որ անոր տէրը եղած ըլլալը հաստատուէր: Այս տեսակ տոմսակներուն զործի լեզուով Բաց մուրհակ (Աչքք Պօնօ) կ'ըսեն:

Ահաւասիկ բաց մուրհակի մը օրինակը:

Թուսակսեկս հարիւր քսան եւ մեկ օր շրակառու, այս քուղքս ներկայացնողին (կամ բերողին) պարսիւ վճարեց շարիւր քսան լիրա օսմանեան, արժեքն սպրակով ընդունած եւ:

Կ. Պօլիս, 8 Մարտ 1898 Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆ

Լ. 0. 120—

BILLET AU PORTEUR

A cent vingt et un jours de date, je payerai au porteur la somme de Livres turques cent vingt, valeur reçue en marchandises.

Constantinople, le 8 Mars 1898 K. GARABEDIAN

L. T. 120—

Հ Ր Ա Հ Ա Ն Պ

Ս. Պարսամեան 97 Փետր. 8 ին Ա. Գէորգեանէ 200 Լ. 0. փոխ առնելով՝ 31 / օր. բաց տոմսակ մը տուաւ:

Հ Ա Մ Ա Պ Ա Ր Տ Մ ՈՒ Ր Հ Ա Կ

Մէկէ աւելի անձանց ստորագրած հրամանի կամ բերողին մուրհակին կ'ըսուի Հաւնապարս մուրհակ, որով բոլոր ստորագրողք ալ յանձն կ'առնեն որոշեալ գումարը վճարել նշանակեալ անձին հրամանին կամ թուղթը ներկայացնողին:

Համապարտ մուրհակը ստորագրողք իրարու համերաշխ են. այսինքն, անոնցմէ մէկը եթէ չ'վճարէ՝ միւսները պարտական են վճարել ամբողջ գումարը, և իւրաքանչիւրը ամէնուն համար, այսինքն, եթէ ստորագրողները չորս ըլլան և երեքը բան մը չ'վճարեն՝ չորրորդը պարտաւոր է ամբողջ գումարը վճարելու. հետեւաբար այդ չորրորդը իրաւունք չ'ունենար պահանջելու որ պարտքը չորսի բաժնուի իւրաքանչիւր ստորագրողի վրայ, և ամէն մէկը իր բաժինը միայն վճարէ, կամ պարտքին շատը որո՛ւն որ է, մեծ մասը անոր վրայ ձգուի և մնացածը մէջերնին բաժնուի: Օրէնքը ասանկ բաժանում մը չի թոյլատրեր, երբ մուրհակը, որուն օրինակը վարը կ'երեւայ, համապարտ գրուած է:

Համապարտ մուրհակը ստորագրողներէն մէկը եթէ ամբողջ գումարը վճարէ՝ միւսները պարտքէ կ'ազատին տոմսակին տիրոջ հանդէպ: Համապարտ մուրհակին տէրն ազատ է ստորագրողներէն իր յարմար դատածին դիմելու, և թղթին ամբողջ գումարն անկէ պահանջելու: Համապարտ մուրհակը եթէ չ'վճարուի կամ վէճ ծագի՝ թղթին տէրն իրաւունք ունի բոլոր ստորագրողներուն դէմ միանգամայն դատ բանալ:

Հ Ա Մ Ա Պ Ա Ր Տ Տ Ո Մ Ս Ա Կ

Թուականես վաքսուն եւ մեկ օր շրանաշուն, պարտիմի հաներաշխաքար իրարու համար վճարեչ Տ. Գ. Մուրստեանի հրամանին Հարիւր քսուս յիսուս օսմանեան, արժեքն ապրակնով ընդունած եմք:
Կ. Պոլիս, 18 Ապրիլ 1897
Կ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
Գ. ԵԳԵՍՅԵԱՆ
Օ. ՍԱՐԳԻՍԵԱՆ
Լ. 0. 150—

BILLET SOLIDAIRE

A soixante et un jours de date, nous payerons solidairement l'un pour l'autre, la somme de livre turques Cent cinquante, à l'ordre de M. K. Mouradian, valeur reçue en marchandises.

Constantinople, le 18 Avril 1897
G. STÉPANIAN
K. EKNAYAN
O. SARKISSIAN
L. T. 150—

Հ Ր Ա Հ Ա Ն Պ

Թ. Սիմոնեան 97 Մարտ 2ին Ե. Յակոբեանէ 200 Լ. 0. առնելով՝ 91 / օր. տոմսակ մը կը տա, որուն վճարման երաշխաւոր կ'ըլլան Թ. Պօղոսեան և Յ. Պետրոսեան, այսինքն, երեքն ալ տոմսակը կ'ստորագրեն համերաշխաբար վճարելու համար:

Վ Հ Ա Ր Ա Գ Ի Ր Կ Ա Մ Ձ Ե Ք

Ձէքք՝ զոր անգլիացիք հնարած են, անգլիերէն բառ է և այս անունով կը գործածուի գրեթէ ամէն առեւտրական հրապարակի վրայ:

Ձի կամ Վճարագիրն այն է, որով վաճառականը կը հրամայէ իր սեղանաւորին՝ որուն քով ստիպուելու հաշուընթացով դրամ ունի, որ թուղթը ներկայացնողին կամ մէջը գրուած անձին և կամ անոր հրամանին տեսօրին վճարէ որոշեալ գումարը: Նոյնպէս վաճառականը իր դրամն անտոկոս սնտուկը չ'պահելու համար, ուրիշ դրամատուներէ գանձելի չէքերն ալ կը զրկէ իր սեղանաւորին, որ զանոնք գանձելով անոր պահանջքին կ'անցնէ, այնպէս որ չէքը դրամին գերը կը կատարէ կարծես: Երբ սեղանաւորք այսպէս մէկ կողմէն իրենց յաճախորդներէն ընդունին ուրիշ սեղանաւորէ գանձելի չէքեր, և միւս կողմէն անոնց իրենց վրայ քաշած չէքերը վճարեն, ըսել է թէ՛ այդ վճարող և գանձող սեղանաւորք չէքերու հաշուէն իրարու Պարտական և Պահանջող կ'ըլլան: Հետեւաբար իրենց վճարելիք և գանձելիք չէքերուն ընդհանուր գումարին վրայ համահաւթիւն մը կ'ըլլայ, այնպէս որ այդ սեղանաւորներն՝ հաշիւ տեսած ատեննին այդ երկու գումարներուն (Տաշիֆնիս և Առնելիֆնիս կամ Վճարելիֆնիս և Գանձելիֆնիս) տարբերութիւնը միայն պիտի կարգադրեն, որ ամէն իրիկուն Լօնտոնի մէջ այս գործին յատուկ Clearing House

կամ Հարեալը յարեան Սեկեակ ըստած տեղը կ'ըլլայ իրեն յատուկ ձեւակերպութեամբ: Ուրիշ քաղաքներ ալ կան նմանօրինակ հաստատութիւններ, Մանչէսթըր, Լիվըրուլ, Էլն: Նոյնպէս ուրիշ երկիրներ ալ կան. Միացեալ Նահանգաց մէջ 1853 ին սկսած է: Գաղղիոյ մէջ ալ կայ, ինչպէս կան Վիէննայի և ուրիշ քաղաքներու մէջ:

Չէքին միջոցաւ շատ մեծ գումարներ առնելու և սալու տաղտկալի և սխալմունքի տեղի տուող աւելորդ աշխատութիւններ կը խնայուին: Ըսել է թէ՛ սմէն մարդ՝ ըլլայ վաճառական կամ մասնաւոր անհատ, չէքին միջոցաւ մեծ գիւրութիւն պիտի ունենայ. փոխանակ դրամը իր քով անտոկոս պահելու, սեղանաւորին կը տայ և իր անձնականին և ուրիշ պէտքերուն աւթիւրնելիք վճարումներուն համար հետզհետէ Չեֆ կը քաջէ անոր վրայ: Այս գրութիւնը խիստ տարածուած է Անգղիա, ուր շատ փոքր գումարներու համար իսկ չէք կը քաշեն:

Չէքը, ինչպէս բացատրեցինք, մէկուն քով տրամադրելի գումարի ի հաշիւ կը քաշուի, և ո՛չ թէ փոխանակագրին պէս անոր փոխարէնը մինչեւ վճարօրին կը զրկուի. հետեւաբար չէքերը միշտ տեսօրին վճարելի կ'ըլլան և քաղաքէ մը ուրիշ քաղաքի վրայ, և նոյն իսկ միեւնոյն քաղաքին մէջ ալ վճարելի չէք շատ կը քաշուի:

Չէֆի գործնական ձեւը. — 1. Թուական եւ տեղոյ անուն. — Թղթին ճակատը գրելու է չէքին քաշուած օրը և տեղւոյն անունը. բայց չէքին ամսաթիւը փոխանակագրին պէս թուանշանով չի գրուիր՝ այլ ամբողջ գրով կը գրուի մեր չէքի օրինակին պէս:

2. Նոյն տողին վրայ և երբեմն չէքին տակը Գումարը թրւանշանով, վճարելի դրամին սկզբնատաւերոյն, ինչպէս բացատրեցինք փոխանակագրին և հրամանի տոմսակին աւթիւ:

3. Պայմանաւանը. — Չէքերն սովորաբար տեսօրին վճարելի ըլլալով պայմանաժամ չեն ունենար:

4. Վճարման հրամանը կամ Հրաւերը, որ չէքին խմբագրութեան սկզբնաւորութիւնն է և կը գրուի պարզապէս Վճարեցիք բառով:


5. Չէֆի ֆաներոյը. — Չէքը՝ որ տրամադրելի գումարի համար տեսօրին վճարելի է և շատ երկար տուն չի շրջաբերի, մէկ օրինակ կը քաշուի և հետեւաբար քաներորդ, այսինքն Ա. և Բ. ալ չ'ունենար:

6. Հրամանը. — Չէքը երեք տեսակ կը քաշուի. Ա՝ Մեկուն

հրամանին, որ կանոնաւոր կամ բաց փոխանցումով կը շրջաբերի. Բ՝ Բերողին, որ առանց փոխանցումի ձեռքէ ձեռք կ'անցնի. Գ՝ Մեկուն անունին, որ չի փոխանցուիր և միայն այն մարդը կրնայ գանձել:

7. Գումարը Թ. Չ ին մէջ բացատրուած վերնագրէն զատ՝ չէքին մարմնոյն մէջ ալ կը գրուի ամբողջ գրով:

8. Քաշողին usruագրութիւնը, որ փոխանակագրին պէս չէ-



ակ չէքերուն

ը կը գրուի:

Չէքը շատ

նար շինուած

ագիր բառը

քէն զատ

սինք, փո-

անակագիր

յմանածամ

չէ, քանի

րելի կ'ըլ-

րիշ քա-

ամ Բերո-

շատ մէկուն

նոց, իսկ

մասնաւորութեամբ

գրուածութեամբ կը փակուի:

Չէֆին եւ Տեսօրին վճարելի փոխանակագրին շարքերութիւնը գրողն ստորի առքիւ. — Տեսօրին վճարելի փոխանակագիրք պայմանաժամով փոխանակագրոց պէս համեմատական գրողնատուրքի ենթակայ են, իսկ չէքը միայն 20 փր.ի:

Իրամը հաշուընթացով սեղանաւորին կամ դրամատունը ձգողին դրամատունը երեք պատի տետրակ կը տայ: Առջինին մէջ՝ որ սեղանաւորին քով կը մնայ և որուն անգլիերէն Slip book

N^o 12875

à l'ordre

G. Melkonian

neuf Décembre

1897

F^{cs} 3500.-

- LYON
- PARIS
- MARSEILLE
- LONDRES
- GENÈVE
- BREITENBURG
- MADRID
- BARCELONE
- LISSBONNE
- PETERSBOURG
- MOSCOU
- ODESSA
- ALEXANDRIE
- LE CAIRE
- PORT SAÏD
- SMYRNE
- JERUSALEM

N^o 12875

Constantinople, le neuf Décembre 1897 P.P.F. 3500^{fr}

Credit Lyonnais

SOCIÉTÉ ANONYME, CAPITAL 200 MILLIONS

Payer à l'ordre de Monsieur G. Melkonian ou au porteur
la somme de trois mille cinq cents francs

CRÉDIT LYONNAIS
PARIS.

PAYABLE DE 9 À 4 HEURES.

CRÉDIT LYONNAIS
AGENCE DE CONSTANTINOPLE
LE DIRECTEUR



կամ Համակշռութեան Սենեակ ըստած տեղը կ'ըլլայ իրեն յա-
տուկ ձեւակերպութեամբ: Ուրիշ քաղաքներ ալ կան նմանօրինակ
Հաստատութիւններ, Մանչէսթըր, Լիվըրուլ, Էլն: Նոյնպէս ու-
րիշ երկիրներ ալ կան. Միացեալ Նահանգաց մէջ 1853 ին սկսած
է: Գաղղիոյ մէջ ալ կայ, ինչպէս կան Վիէնայի և ուրիշ քա-
ղաքներու մէջ.

Չէքին միջոցաւ շատ մեծ գումարներ առնելու և տարու-

տաղակալի
ներ կը խն
կամ մասնա
ունենայ. զ
նաւորին կը
ընելիք վն
Այս գրութ
գումարներ
Չէքը
գումարի ի
անոր փոխ
քերէ միւս
ըստի վրայ
շատ կը շո

Յիշե
Թղթին ն
նունը. բ
նով չի ու
նակին ու
2. ն
անշունտ
ընչինք թ
2. Պ
ընտրով զ

1. Վարձան նորմանը կամ Հրաւերը, որ չէքին խմբագրու-
թեան սկզբնաւորութիւնն է և կը գրուի պարզապէս Վճարեցիք
բառով:

2. Չէքին խմբագրող. — Չէքը՝ որ տրամադրելի գումարի
Համար անարթին վճարելի է և շատ երկար ատեն չի շրջարկի,
մէջ որման կը քաշուի և Հետեւաբար քաներորդ, այսինքն Ա.
և Բ. ալ չունենար:

3. Հրամանը. — Չէքը երեք տեսակ կը քաշուի. Ա.՝ Մեկուն

նրամանին, որ կանոնաւոր կամ բաց փոխանցումով կը շրջարկի.
Բ.՝ Բերողին, որ առանց փոխանցումի ձեռքէ ձեռք կ'անցնի.
Գ.՝ Մեկուն անունին, որ չի փոխանցուիր և միայն այն մարդը
կրնայ գանձել:

7. Գումարը Թ. Չին մէջ բացատրուած վերնագրէն զատ՝
չէքին մարմնոյն մէջ ալ կը գրուի ամբողջ գրով:

8. Քաշողին ստորագրութիւնը, որ փոխանակագրին պէս չէ-
քին տակը աջ կողմը կը գրուի:

9. Վճարողին անունը եւ հասցեն, որ առ Հասարակ չէքերուն
ճակատը կը գրուի:

10. Թիւր, որ նոյնպէս չէքին ճակատը կամ տակը կը գրուի:
Չէքը ընդհանրապէս քաշողը իր ձեռքով կը գրէ:

Չէքին եւ Փոխանակագրին սարքերութիւնը. — Չէքը շատ
կէտերով կը տարբերի փոխանակագրէն:

Ա. չէքը տրամադրելի գումարի մը վճարման համար շինուած
Թուղթ մ'է, և ճիշդ այդ պատճառով մենք ալ Վճարագիր բառը
գործածեցինք, իսկ փոխանակագիրը այդ Հանգամանքէն զատ՝
վարկի միջոց մ'է, որովհետեւ, ինչպէս Թ. 133 ի մէջ ըսինք, փո-
խանակագրին փոխարէնը չ'ըրկուած իսկ կարելի է փոխանակագիր
քաշել, քանի որ փոխանակագիրք քիչ կամ շատ պայմանաժամ
կունենան. իսկ չէքին համար նոյն բանը ընել կարելի չէ, քանի
որ առ Հասարակ Տեսութիւն վճարելի են:

Բ. Չէքին մէջ Արժեքը գրելու հարկ չ'կայ:

Գ. Չէքը նոյն իսկ քաշուած քաղաքին մէջ ալ վճարելի կ'ըլ-
լայ, իսկ փոխանակագիրը պէտք է որ ա'նպատճառ ուրիշ քա-
ղաքի մը վրայ քաշուի և հոն վճարելի ըլլայ:

Դ. Չէքը կը քաշուի կամ Մեկուն անունին կամ Բերո-
ղին և կամ Մեկուն նրամանին. իսկ փոխանակագիրը միշտ մէկուն
հրամանին կը քաշուի:

Ե. Չէքին՝ ինչ գումարի համար ալ ըլլայ, 20 փր.նոց, իսկ
փոխանակագրին՝ պարունակած գումարին համեմատութեամբ
գրողմանթուղթ կը փակցուի:

Չէքին եւ Տեսութիւն վճարելի փոխանակագրին սարքերութիւնը
որոշմաստորի առքիւ. — Տեսութիւն վճարելի փոխանակագիրք
պայմանաժամով փոխանակագրոց պէս համեմատական գրողմա-
տուրքի ենթակայ են, իսկ չէքը միայն 20 փր.ի:

Իրամը հաշուընթացով սեղանաւորին կամ գրամատունը ձգո-
ղին գրամատունը երեք պզտի տետրակ կը տայ: Առջինին մէջ՝
որ սեղանաւորին քով կը մնայ և որուն անդդիւրէն Slip book

(Ըսյիբ պուք) կ'ըսեն վաճառականը կամ դրամ տուողը կը գրէ իր ձեռքով և օրուան թուականովը սեղանաւորին տուած և անկէ առած գումարները: Երկրորդին մէջ՝ որ դրամ տուողին քով կը մնայ և որուն Pass book (Բաս պուք) կ'ըսեն, սեղանաւորը կամ դրամատան պաշտօնեան կը գրէ օրուան թուականովը տուած և առած գումարները. ըսել է թէ՛ այս երկու տետրակներ դրամ ձգողին և սեղանաւորին հաշու-ընթացը կը ներկայացնեն, և անոնցմով իւրաքանչիւրն ամէն վայրկեան իր վիճակը կը գիտնայ: Սեղանաւորը կը գիտնայ թէ՛ իր յաճախորդը տակաւին ո՞րչափ տրամադրելի դրամ ունի իր քով. դրամ ձգողն ալ կը գիտնայ նոյնպէս թէ՛ սեղանաւորին քով տակաւին ո՞րչափ դրամ ունի, որուն փոխարէն չէք կրնայ քաշել: Երրորդ տետրակը՝ որուն Chèque book (Չէք պուք) կ'ըսեն, Չէֆի տետրակն է, որ որոշեալ թը-ւով տպուած չէքի թղթեր կը պարունակէ երկու մասի բաժնուած. մէկ մասը՝ որ տետրակին մէջ կցուած կը մնայ՝ Բուև (Souche) կ'ըսուի, իսկ միւս մասը՝ քաշուելիք տպուած և թուաւոր չէքերը կը պարունակէ, թուականին, հրամանին և գումարին տեղերը բաց ձգուած, որք, ի հարկին կը գրուին: Չէքի տետրակին ամէն մէկ թերթը 20 փր.նոց դրոշմաթղթի կնքով կնքուած կ'ըլլայ:

Վաճառականը մէկուն դրամ տալու համար՝ չէքին տետրակը կ'առնէ և վերոյիշեալ պարագայ ձգուած մասին մէջ թուականը, հրամանը և գումարը անոր մէկ թերթին վրայ իր ձեռքով գրելէ ետքը՝ կ'ստորագրէ և բունին վրայ ալ, որ իր քով պիտի մնայ, քաշած չէքին թիւը, թուականը, առնողին անունը, գումարը նոյնպէս գրելէ ետքը՝ բունին որոշեալ տեղէն կը պատէ, բունէն կը դատէ և դրամն առնողին կը տոյ. ահա այդ թուղթն է Չէֆը:

Չէքն առնողը անոր մէջ գրուած սեղանաւորին կ'երթայ և դրամը կը գանձէ, կամ ինքն ալ իրր դրամ գայն ուրիշի կը տայ փոխանցումով՝ եթէ չէքը իր հրամանին է, կամ առանց փոխանցումի՝ եթէ բերողին վճարելի է:

Սրովհետեւ միշտ ուզած ենք մեր ուսանողներուն գործնական օրինակներ տալ, ուստի վիրոյիշեալ բացատրութեանց համեմատ՝ հոս կը գնենք Crédit Lyonnais Դրամատան վիմատիպ Չէքը՝ մէջը պարագայ և բունաւոր, գորս վերջէն ձեռքով գրած ենք:

Չէքը երեք տեսակ կը շինուի ըսինք. Մեկուն անունին, Բերողին կամ ներկայացնողին, և Մեկուն հրամանին:

Եթէ չէքը Մեկուն անունին քաշուի՝ անոր մէջ անունը կը գրուի և տպուած ի հրաման կամ Բերողին (A l'ordre ou au porteur) բառերը կը գծուին: Եթէ Բերողին շինուի՝ ի հրաման à l'ordre և կամ ou բառերը գծելով Բերողին (Au porteur) բառը


միայն կը թողուն. իսկ եթէ Մեկուն հրամանին քաշուի՝ դարձեալ անոր անունը կը գրուի տպուած ի հրաման բառին քով և կամ Բերողին (ou au porteur) բառերը կը գծուին: Մեր չէքի օրինակը հրամանի շինուած ըլլալով՝ կամ Բերողին (ou au porteur) բառերը գծուած են: Այս չէքն այնպէս մը պատրաստուած է որ երեք տեսակին ալ կը յարմարի:

Դրամատունք որոշեալ ժամեր ունին իրենց համար, որմէ առաջ կամ ետքը ո՛չ դրամ կ'առնեն և ո՛չ կը տան, ինչպէս մեր չէքի օրինակին մէջ եւս գրուած է:

Գծուած Չէֆը. — Clearing House ներուն գիրքը աւելի ազդեցիկ ընելու համար՝ Անգղիոյ մէջ սեղանաւորք որոշած են որ Գծաւոր չէֆեր շինուին և այդ չէքերը դրամով չ'վճարուին, այլ Clearing House ի մէջ պարտաւորիչ կերպով համակշռուին: Ժողովուրդն ալ գնահատեց այդ միջոցը, որ չէքերուն գողութիւնը կը դժուարացնէր այլեւս, զի չ'գծուած չէքը ներկայացնողին դրամով կը վճարուի, հրամանի չէքն ալ եթէ կորսուի՝ քանոզը հրամանատիրոջ ստորագրութիւնը կեղծելով կրնայ դրամը գանձել, և սեղանաւորը այդ պարագային անոր ստորագրութեանը համար պատասխանատու չ'ըլլար:

Ահա այս անպատեհութեանց և վտանգներուն համար Գծաւոր Չէֆը հնարուած է: Չէք քաշողը անոր վրայ խոտորնակի երկու գուգահեռական դիւ կը քաշէ, որոնց մէջ կը գրէ այն դրամատան կամ սեղանաւորին անունը, որ այդ չէքը պիտի համակշռէ Clearing House ի մէջ:

Ահաւաստիկ գծուած չէքին վրայի դիւերը



Արգարեւ այս տեսակ չէքը գողցողը չի կրնար գայն գանձել վճարող սեղանաւորէն, որովհետեւ գծուած ըլլալով՝ դրամով

չվճարուիր ըսինք, և եթէ երթայ դրամը ուզելու, իրեն՝ այդ գրութիւնը չգիտնալը անմիջապէս պիտի մատնէ զինքը սեղանաւորին գանձապետին, որ իրեն պիտի հասկցնէ թէ՛ այդ չէքը գրամով չվճարուիր, և եթէ շատ կասկածելի երեւնայ՝ մինչեւ անգամ իբր դող զայն ձերբակալել ալ կը տայ:

Երբեմն ալ սեղանաւորին անունին տեղ այդ երկու գիծին մէջ գաղղիերէն & Cie կը գրուի, որ ատեն դարձեալ չէքը ամէն ներկայացնողի չվճարուիր, այլ միայն ծանօթ սեղանաւորի կը վճարուի ինչպէս կ'երեւայ նախորդ երեսին վրայ:

Չէք քաշելը միեւնոյն քաղաքին մէջ կամ նոյն իսկ տարրեր քաղաքի վրայ, ըստինքեան վաճառականական գործողութիւն չի սեպուիր, և մեր Առեւտրական Օրէնքը այս մասին մասնաւոր տրամադրութիւն չունի. թէեւ եւրոպական շատ ազգեր, Անգլիա, Գաղղիա, Իտալիա, Չուիցերիա, ևլն, չէքի համար մասնաւոր օրէնքներ ունին, որք գրեթէ քիչ տարբերութեամբ իրարու կը նմանին: Մենք ալ եթէ ոչ ամենուն՝ գէթ Գաղղիոյ չէքի օրէնքին գլխաւոր տրամադրութիւնները կը դնենք հոս, որք գործի մարդոց համար մանաւանդ շատ կարեւոր են:

Գաղղիական օրէնքին համեմատ՝ չէքն ալ փոխանակագրին պէս ենթակայ է քաշողին և փոխանցողներուն համերաշխութեան, բողոքագրի, և երաշխաւորութեան տրամադրութեանց: Գաղղիական օրէնքը կ'ուզէ որ չէքին տէրը, եթէ քաշուած հրապարակին մէջ վճարելի է, առ առաւելն քաշուած օրէն 5 օրուան մէջ անոր վճարումը պահանջէ և 8 օրուան մէջ՝ (քաշուած օրն ալ մէջը ըլլալով) եթէ չէքը ուրիշ քաղաքի վրայ քաշուած է (1):

Չէքին տէրը եթէ որոշեալ ժամանակին մէջ չ'գանձէ՝ փոխանցողաց վրայ ունեցած իրաւունքը կը կորսնցնէ, նոյնպէս կը կորսնցնէ քաշողին վրայ ունեցած իրաւունքը, եթէ վճարողը չէքին փոխարէնը նոյն միջոցին իրօք փճացուցած ըլլայ, այսինքն, եթէ վճարողը սնանկանայ՝ չէքին տէ՛րը կը առժէ փնասը, քաշողէն և փոխանցողներէն չի կրնար պահանջել, Օրէնքին հակառակ վարուած ըլլալուն համար:

Ահա ասո՛ր համար է որ երբեմն չէքերուն վրայ կը գրուի՝ Ce chèque n'est valable que pour un (կամ deux) mois à partir de la date de son émission, որ ըսել է թէ՛ չէքը քաշողը քաշուած օրէն մէկ կամ երկու ամիս պայմանաժամ մը կը տայ, որպէս զի նոյն միջոցին գանձուի՝ որովհետեւ, չէքը՝ վճարողին քով

տրամադրելի գումարի փոխարէն քաշուելուն, քաշողը չ'ուզեր որ երկար ատեն անցնի, յորում կրնան ծագիլ շատ անպատեհութիւններ, որոց չուզեր ինքզինքը ենթարկել:

Չէքը եթէ ներկայացնողին իսկ վճարելի է՝ դրամը գանձուած ատեն գանձողը պէտք է իր ստացագիրը գրէ և թուական դնելով ստորագրէ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Գ. Պօղոսեան 97 Մարտ 2 ին կը գնէ Պօստյ Պանք Օթօմանէն ի | հ £ 250 ի չէք մը Լօնտրայի Պանք Օթօմանին վրայ:

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր

Վաճառականական հրամանագիրը թէև օրէնքին որոշած թըղթերէն չէ, սակայն փոխանակագրի պէս առեւտրական թուղթ մ'է, որով ստորագրողը կը հրամայէ ուրիշ քաղաք մը գտնուող իր պարտականին որոշեալ ժամանակէ մը ետքը գումար մը վճարել թղթին մէջ գրուած անձին հրամանին, որմէ ստացած է կամ պիտի ստանայ անոր արժէքը: Ուրեմն հրամանագիրն ալ փոխանակագրին գործը կը տեսնէ, զի անոր պէս փոխանցումով ձեռքէ ձեռք կ'անցնի. միայն թէ ընդունել տալու հարկ չ'իայ, և շատ անգամ հրամանագիրներուն մէջ այս պարտական կը գրուի Ոչ - ընդունելի:

Հրամանագիրն ալ փոխանակագրին պէս կը գրուի, միայն թէ՛ Վճարեցե՛ք այս հրամանագրովս կը գրուի, փոխանակ Վճարեցե՛ք այս փոխանակագրովս գրուելու:

Հրամանագիրը թէև առևտուրի մէջ շատ չի գործածուիր, բայց ան ալ իր օգտակարութիւնն ունի: Օրինակի համար, վաճառականը հեռու տեղ մը ապրանք կը զրկէ և օրէն առաջ դրամի պէտք կ'ունենայ. եթէ փոխանակագիր քաշէ անոր վրայ՝ ապրանքին հասնելուն սպասելու է որ թուղթը ընդունուի: Այս պարագային՝ ապրանք զրկողը միեւնոյն ատեն հրամանագիր կը քաշէ անոր վրայ, որ, ինչպէս ըսինք, ընդունել տալու հարկ չ'իայ, և զայն սեղանաւորին զեղչել տալով՝ դրամի պէտքը կը հոգայ:

[1] Այս մասին Եւրոպական Օրէնքներ կը արբերին իբրևէ. Չուիցերական Օրէնքի Գաղղիականին նման է. Պելճիականը այս 5 եւ 8 օրեր 3ի եւ 6ի կ'իջեցնէ, Իսպականը 8ի եւ 15ի կը բարձրացնէ:

Կ. Պոլիս, 30 Ապրիլ 1897 Հ. Վ. Լ. Օ. 200 —

Յառաջիկայ Յունիս 30ին, վճարեցե՛ք այս հրամանագրովս Տ. Գ. Չափարեանի հրամանին, Երկու հարիւր լիրա օսմանեան, արժեքը կանխիկ դրամ չունեա՛ծ եւ եւ անցուցե՛ք ի հաշիւ ըստ ծանուցման:

Առ Մեծապատիւ Գ. ՄԻՔԱԵԼԻԱՆ
Տ. Գ. ԲԱՐՍԵՂԻԱՆ Իգմիք

MANDAT

Constantinople, le 30 Avril 1897 M. P. L. T. 200 —

Au 30 Juin prochain, payez par le présent mandat, à l'ordre de M. K. Zakarian, la somme de livres turques Deux cents, valeur reçue comptant, que vous passerez en compte, suivant l'avis de.

A Monsieur K. MIKAEÏLIAN
K. PARSEGHIAN Smyrne

Հ Ր Ա Ն Ա Ն Գ

Թ. Մինասեան ի Կ. Պոլիս, 97 Մայիս 8 ին կը քաշէ Մ. Հաւաճեանի վրայ ի Կ. Պոլիս, Լ. Օ. 200 ի 1 / ամս. հրամանագիր մը Ա. Գէորգեանի հրամանին, որ արժէքը կանխիկ վճարած է:

Իրոշմարուղի Առեւտրական քղթերու. — Առեւտրական թղթերուն ալ դրոշմաթուղթ փակցնել հարկ է, որուն մէկ մասին գինը՝ թղթին գումարին համեմատութեամբ կ'ըլլայ և մէկ մասինը՝ որոշեալ. ցուցակները գրած ենք Իրոշմասուրճի Գլխուն մէջ, ուր կան նաև դրոշմի օրէնքին փոխանակագրին վերաբերեալ մէկ քանի գլխաւոր և կարեւոր արամագրութիւնները:

Առընթերագրութիւն Առեւտրական քղթերու. — Սեղանաւորք, որք առեւտրական թղթեր շատ կը գեղչեն, զանոնք թղթապանակէն օրն օրին և դիւրաւ հանելու համար՝ յիշեալ թղթոց ճակատը անոնց գումարը և վճարօրը կը գրեն կարմիր մեխնով կամ գունաւոր (կարմիր կամ կապոյտ) մատիտով: Իսկ դրամատունք, փոխանակագրին վրայ գրելու տեղ, տպուած պզտի թղթերու վրայ կը գրեն փոխանակագրին կամ ամսակին գումարը, վճարօրը, վըճարողին անունը և հասցէն և գնդասեղով կը կցեն:

Ժամանց Առեւտրական քղթերու (Միւրուրը գէման). — Թէ՛ փոխանակագրերու և թէ՛ վաճառականական գործողութեանց համար վաճառականներէ և սեղանաւորներէ ստորագրուած հրամանի մուրհակներու վերաբերեալ դատերը բողոքադրի թուականէն մինչև 5 տարի լսելի կ'ըլլան, և թէ՛ այդ ժամանակամիջոցին մէջ դատարանէն վճիռ տրուած չ'ըլլայ կամ թէ՛ պարտքը ուրիշ մուրհակով հաստատուած և որոշուած չ'ըլլայ՝ ամենէն վերջը եղած դատաւարութեան թուականէն դարձեալ 5 տարի անցնելէն ետքը լսելի չ'ըլլար: Միայն թէ՛ պարտական ճանչցուած անձերուն իրենց պարտքը խոտտովանել տալու մասին եթէ պնդուի՝ պարտք չ'ունենալնին անպատճառ երդումով հաստատելու են, և անոնց ժառանգորդք և ազգականք ալ մեծնողին պարտք չ'ունենալուն առանց նենգութեան հաւատացած ըլլալնին դարձեալ պէտք է որ երդումով ապացուցանեն:

Թէ՛ և ոչ — վաճառականական գործողութեանց համար տրուած պարզ մուրհակներուն (թէ՛ մէսիւք) ժամանցը 15 տարի է, բայց վաճառականութեան շահուն և յառաջագիմութեան համար կարելի չէր գանձելի թղթոց համար ալ այդչափ երկար միջոց տալ, անոր համար Օրէնքը 5 տարի որոշած է: Առեւտրական օրէնքը մասնաւոր արամագրութիւններով, զորս առաջ բացատրեցինք, փոխանակագրին կամ հրամանի ամսակին ախրջ համար իրաւունքի կորուստ որոշած է, երբ սա որոշեալ ժամանակին համեմալիս պարտականներուն չի դիմէ. բայց պարագաներ կար, ուր այդ իրաւունքի կորուստը տեղի չէր ունենար, ինչ որ առաջ բացատրեցինք: Ահա այդ տեսակ պարագաներուն համար է դատաւարութեան համար Օրէնքին որոշած 5 տարի պայմանաժամը:

Այդ պարագաներու առթիւ ծագելիք դատերը հետեւեալ անձերուն նկատմամբ կ'ըլլայ.

1. Քաշոյիլն դեմ, որ իր քաշած փոխանակագրին փոխարէնը ժամանակին չէ զրկած վճարողին (Տե՛ս փոխանակագրին տիրոջ պարտուց և իրաւանց վերաբերեալ մասին մէջ Թ. 158 երեսը Քաշոյիլն նշանակեալ մասը):

2. Ընդունողին դեմ, որ փոխանակագիրը ընդունած ըլլալով անոր փոխարէնը վճարելու պարտական է, քանի որ. ըստ օրինի, Ընդունելութիւնը անոր փոխարէնը ստացած ըլլալը կ'ենթադրէ. (Տէս այս մասին դարձեալ փոխանակագրին տիրոջ պարտուց և իրաւանց մասին մէջ Թ. 158 երեսը վճարողէն կամ Ընդունողին նշանակեալ մասը):

3. Երաշխարարին դեմ:

4. Ընդունողին դասը Քաշողէն, եթէ առանց փոխարէնի քաշած ըլլայ թուղթը:

5. Քաշողին դասը Ընդունողին դեմ, եթէ այս վերջինը փոխարէնը ստացած ըլլալով հանդերձ թուղթը վճարած չըլլայ:

6. Հրահանի տուճակին usnrագրողին դեմ:

Եթէ նշանակեալ 5 տարուան մէջ դատավարութիւն չըլլայ՝ վերայիշեալ անձինք իրենց պարտքէն կ'ազատին ըստ օրինի:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՇՈՒՆՆԵՐ

Միեւնոյն կամ տարբեր քաղաք գտնուող վաճառական կամ սեղանաւոր՝ երկու թղթակիցներու միջեւ շարունակեալ գործողութեանց ամբողջութիւնը ներկայացնող հաշուեթղթին կ'ըսուի Ընթացիկ-Հաշիւ կամ Հաշուրնքաց, և այդ հաշիւները պարունակող տետրակին ալ կ'ըսուի Հաշուրնքացի Տեսրակ կամ Մայր-Հաշիւ, որուն վրայ պիտի խօսինք Տոմարակալութեան մէջ: Այս տեսակ հաշիւը շարունակելի հաշիւ մ'է, երկու կողմէն ալ միշտ առնուելով և տրուելով. հաշիւ մը՝ որ ամէն մէկ գործողութեան ատեն չի գոցուիր և որուն Պարսֆն ու Պահանջֆը միշտ կ'ընթանան, և ճիշդ ատոր համար է որ Ընթացիկ - Հաշիւ կամ Հաշուրնքաց անունը տրուած է:

Հաշուրնքացները կ'ըլլան անտոկոս և տոկոսաւոր, և կ'ըսուին՝ Անտոկոս և Տոկոսաւոր Հաշուրնքաց:

Ա Ն Տ Ո Կ Ո Ս Հ Ա Շ Ո Ւ Ը Ն Թ Ա Ց

Անտոկոս հաշուրնքացը՝ երկու անձի միջեւ որոշեալ ժամանակի մէջ եղած գործողութեանց բովանդակութիւնը, և այդ գործողութիւններէն մնացած Պարսֆը կամ Պահանջֆը կը ցուցնէ, առանց տոկոս հաշուելու անոնց վրայ:

Օրինակ. Պօլսեցի Գ. Արսէնեանի և Մ. Գոչունեանի միջև տոկոս չի հաշուելու պայմանով, հետեւեալ գործողութիւններն եղած ըլլալով՝ Գ. Արսէնեան 1897 Դեկտ. 31 ին անոնց հաշուրնքացը պատրաստելով Մ. Գոչունեանի կը զրկէ:

Հոկ. 12 ին՝ Գ. Արսէնեան Մ. Գոչունեանի	1000	դ.ի ապրանք ծախեր է
Նոյ. 4 ին՝ » » Մ. Գոչունեանէ	4061	» չէք մ' առեր է
» 12 ին՝ Մ. Գոչունեան Գ. Արսէնեանի վրայ	1000	» » մը քաշեր է
Դեկ. 10 ին՝ Գ. Արսէնեան Մ. Գոչունեանի	4434	» ապրանք ծախեր է
» 24 ին՝ » » » հաշուոյն	2000	» վճարեր է Մ. Ս. ին
» 24 ին՝ » » » վրայ	2500	» չէք մը քաշեր է

Ասոնք՝ ինչպէս ըսինք, Հաշուրնքացի կամ Մայր-հաշուի տետրին մէջ օրն օրին գրուած ըլլալով՝ Գ. Արսէնեան Մ. Գոչունեանի Անտոկոս հաշուրնքացը պատրաստելու համար՝ զանոնք գատ թըղթի մը վրայ կ'օրինակէ քաղելով նոյն տետրակէն այսպէս,

Նախ թերթ մը թղթի վրայ՝ ձախ երեսին վերի ծայրը գըլխագրով գրելու է Պարսֆ կամ Պարսի և նոյն տողին վրայ՝ աջ երեսին վերի ծայրը Պահանջֆ կամ Պահանջե և ատոնց մէջակողմէ՝ Ընթացիկ-հաշիւ Տ. Մ. Գոչունեանի ընդ Տ. Գ. Արսէնեանի ի Կ. Պօլիս նոյնպէս գլխագիր, և ապա անոնց տակ պարզ գրով՝ Դեկտ. 31 Դեկտ. 1897. ետքը պէտք եղած սիւները թղթին երկու երեսին վրայ ալ գծելով, ձախ երեսին, այսինքն Պարսֆին կողմը գրելու է իրենց թուականներովը և նշանակեալ մանրամասնութեամբ մէկ տողի վրայ Մ. Գոչունեանի (քանի որ անոր հաշուրնքացը կը պատրաստենք) Պարսֆը կազմող գործողութիւնները:

1897 Հոկտ. 12 Իրեն ծախած ապրանքս	1000.	—
» Նոյեմ. 12 Իր քաշած չէքը	1000.	—
» Դեկտ. 10 Իրեն ծախած ապրանքս	4434.	—
» » 24 Մ. Սթավրօի վճարածս իր հաշուոյն	2000.	—
Եւ աջ երեսին, այսինքն՝ Պահանջֆին կողմը գրել իրենց թըլուականներովը՝ դարձեալ մէկ տողի վրայ նշանակեալ մանրամասնութեամբ՝ Մ. Գոչունեանի Պահանջֆը կազմող գործողութիւնները:		
1897 Նոյեմ. 4 Իր տուած չէքը	4061.	—
» Դեկտ. 24 Իր վրայ քաշած չէքս	2500.	—

Հաշուրնքացն այսպէս գրելէ ետքը, պզտի թղթի մը վրայ Պարսֆը և Պահանջֆը գումարելով՝ անոնց տարբերութիւնը կըլլայ հաշուրնքացին Կշիտը, այսինքն, մէկ կողմին Մնացորդ պարսֆը և հետեւաբար միւս կողմին Պահանջֆը և փոխադարձաբար:

Անաւանիկ Հարս

ԸՆԹԱՑԻԿ-ՀԱՇԻԻ Տ. Մ. ԳՈՉՈՒՆ ԸՆԴ Տ. Գ. ԱՐՍԷՆԵԱՆԻ

Պարտի

Դարած 31 Դեկտեմբեր 1897

Պահանջէ

1897			
Հոկտեմբեր	12	Իրեն ծախած ապրանքս	1000
Նոյեմբեր	12	Իր հաւած չեք	1000
Դեկտեմբեր	10	Իրեն ծախած ապրանքս	4434
"	24	Իր հաւելոյն Մ. Սրապիոսի վնասուածս	2000
			8434
1898			
Յունիսար	1	Հին հաւելոյն	1873

	4	Իր սուած չեք	4061
	24	Իր վրայ հաւած չեքս	2500
	31	Կեխ ի նոր հաւելու	1873
			8434

Բ. Ս. Ե. Մ.
Կ. Պոլիս, 1 Յունիսար 1898
Գ. ԱՐՍԷՆԵԱՆ

20 ՓՐ.Ի
ԳՐՈՇՄԱՅՈՒՂՅ

ՏՈԿՈՍԱԻՈՐ ՀԱՇՈՒԸՆԹԱՑ

Արդ՝ Պարսիք գումարելով գտանք 8434 և Պահանջիք՝ 6561, տարբերութիւնը 1873՝ հաշուընթացին կշիռն է, այսինքն Մ. Գոչունեան տակաւին կը պարտի Գ. Արսէնեանի 1873, որուն կ'ըսուի Մնացորդ պարտք: Եթէ ասոր հակառակը ըլլալով՝ կշիռը Պահանջիք ըլլար, կ'ըսուէր Մնացորդ պահանջիք: Հաշուընթացին կշիռը եթէ Պարսիք է՝ Պահանջիքն կողմը կը գրուի հաշիւը դադրած օրէն, որուն Հաշուընթացար կ'ըսուի, Կշիռ կամ Մնացորդ պարտք ի նոր հաշիւ ըսելով. կշիռը եթէ Պահանջիք է՝ Պարսիքն կողմը կը գրուի Կշիռ կամ Մնացորդ պահանջիք ի նոր հաշիւ ըսելով, որով հաշուընթացին Պարսիքն և Պահանջիքն գումարները կը հաւասարին: Այս օրինակին մէջ 1873ի կշիռը Պարսիք ըլլալով՝ Պահանջիքն տարինք: Յետոյ երկու կողմը գումարելով գոցելու է անոնց տակը զոյգ գիծեր քաշելով, որով հին հաշիւը դադրած և գոցուած կ'ըլլայ: Մնացորդ կշիռը իբր նոր հաշիւ կը փոխադրուի դարձեալ իրեն յատուկ սիւնին մէջ՝ հաշուեղադարի յաջորդ օրէն, այսինքն եթէ կշիռը Պարսիք է՝ Պարսիքն սիւնին մէջ, Մնացորդ հին հաշուոյն կամ միայն Հին հաշուոյն գրելով. եթէ կշիռը Պահանջիք է՝ Պահանջիքն սիւնին մէջ, Մնացորդ հին հաշուէն կամ միայն Հին հաշուէն գրելով:

Տոկոսաւոր մաշութեան պայմանները այն է՝ որուն Պարսիքն և Պահանջիքն գումարներուն վրայ տոկոս կը հաշուեն: Հաշուընթացին տոկոսը Պարսիքն և Պահանջիքն կողմը փոխադարձաբար թէ՛ նոյն տակով և թէ՛ տարբեր տակերով կ'ըլլայ. օրինակի համար, Պարսիքն 10% Թ և Պահանջիքն 12% կ'ըլլայ, անշուշտ երկուստեք համաձայնութեամբ:

Տոկոսով հաշուընթաց պատրաստելու երեք եղանակ կան, որոնց կ'ըսուի Ուղիղ, Հին կամ Յառաջացուական. Անուղիղ, Նոր. Յետախաղաց կամ Լափիք (1) և Հանկուրկ կամ Ասիականաւոր: Ուղիղը և Անուղիղը՝ տոկոսը երկու կողմն ալ նոյն տակով հաշուընթացները պատրաստելու համար է. իսկ Հանկուրկը՝ որ ամենէն հինը ու պարզն է, այն հաշուընթացները շինելու համար է, որոնց տոկոսի տակը երկու կողմն ալ հաւասար չ'է, այլ տարբեր է:

[1] Այս եղանակը ժամ Լափիք անուն համար սեղանաւոր հնարած ըլլալով՝ Լափիք ալ կ'ըսուի:

Տոկոսաւոր հաշուընթացը ընդհանրապէս որոշեալ ատեն մը կը դադարի, այսինքն՝ հին հաշիւներուն տոկոսը՝ մինչեւ հաշուե- դադարի օրը հաշուելով կը գոցեն և վերստին կը բանան. սովորաբար 6 ամիսը անգամ մը՝ Յունիս 30 ին, և Դեկտ. 31 ին, 3 ամիսը անգամ մը՝ Մարտ 31 ին, Յունիս 30 ին, Սեպտ. 30 ին, Դեկտ. 31 ին. կամ տարին անգամ մը՝ Դեկտ. 31 ին. այսու հանդերձ հաշուընթացը տարւոյն ս'ր և է մէկ օրը կրնայ գոցուիլ, երբ հարկը պահանջէ:

ՈՒՂԻՂ ԵՂԱՆԱԿ


Ուղիղ եղանակ հաշուընթացն այն է, որուն ամէն գումարին իրական տոկոսը կը հաշուեն, այսինքն՝ ճիշդ ա՛յն տոկոսները, զորս հաշուընթացին տէրը իրօք կը պարտի կամ կը պահանջէ, և որուն կշիւը Մայր-գումարին վրայ կ'աւելնայ կամ անկէ կը պակսի: Սակայն ամէն գումարի իրական տոկոսը հաշուելու համար ա՛նպատ- ճաւ հարկ է գիտնալ թէ՛ հաշիւը ե՛րբ պիտի դադարի, որովհետեւ Պարսֆին և Պանսնջիին գումարներուն տոկոսը նոյն գումարներուն վճարօրերէն մինչեւ հաշուեղադարի օրը կը բանի:

ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՇԻԻ Տ. ՅԱԿՈՒ ՍԻՄՈՆԻ ԸՆԴ Տ. ՊՕՂՈՍ ԳԵՈՐԳԵԱՆԻ

Տարեկան % 9 տոկոսով, սկսած 31 Դեկտ. 1897

Պարսի

Պանսնջի



Ահաւաստիկ այս է Ուղիղ եղանակին բացատրութիւնը: Հաշուընթացին երկու կողմի գումարները որչափ ալ շատ ըլլան՝ պատրաստութեան կերպը նոյնն է, ինչպէս պիտի տեսնուի հետզհետէ մեր պատրաստելիք օրինակներէն:

Ուղիղ եղանակին Ձեռք եւ Պատրաստութեան կերպը

Ուղիղ եղանակի հաշուընթաց շինելու համար թերթ մը թղթին երկու երեսն ալ մէկտեղ բանալով՝ ճակատը մէկ կամ երկու տողի վրայ գրելու է զլիսագրով՝ հաշուընթացին տիրոջ և զայն զրկողին անունը, մականունը, քաղաքը, տոկոսին սակը և հաշուեղադարի օրը, ամիսը և տարեթիւը, այսպէս.

Ընթացիկ-հաւիւ Տ.....եանի ի..... ընդ Տ.....եանի ի.....
Տոկոս տարեկան⁰/₁₀, դարձ.....189.

Դարձեալ նոյն տողին վրայ՝ ձախ երեսին ծայրը գրել զլիսագրով՝ Պարտի, և աջ երեսին ծայրը՝ Պահանջե. ասոնց տակէն թղթին լայնքին քաշելու է զոյգ գիծ մը, որով հաշուընթացը երկու մասի կը բաժնուի. վերնագրին մասը՝ որ քաշուած գիծին վրայ կը մնայ, և բուն իսկ հաշուընթացը՝ որ գիծէն վար կը մնայ: Պարտիին և Պահանջիին կողմը գծելու է 9 սիւներ (1), որոնց մէջ կը գրուին,

1. Սիւնին մէջ՝ գործողութեան թուականը, տարին և ամիսը.
2. » » » կատարուած օրը, ամսոյն օրը.
3. » » » գումարը.
4. » » Գումարին կոտորակը. եթէ գումարը 0. 1. է՝ կոտորակը՝ 12. 2. եթէ 12. է՝ փարան. եթէ ֆրանք՝ սանթիմը, և այլն. (2)
5. » » Գործողութեան համաձայն բացատրութիւնը մէկ տողի վրայ.
6. » » Թուականը այն ամսոյ, ուր կը պատահի նոյն գումարին վճարօրը (տարին և ամիսը).
7. » » Վճարօրին ամսաթիւը, ուրիչ պիտի բանի տոկոսը.
8. » » Օրերը, այսինքն՝ իւրաքանչիւր գումարին իր վճարօրէն մինչև հաշուեղադարի օրն եղած օրերը, որոնց վրայ կը հաշուի տոկոսը.
9. » » Ամէն մէկ գումարին թ. 8 սիւնին մէջ գրուած և իրենց համապատասխան օրերուն հետ բազմապատկութենէն արտագրեալ թիւերը, որոնց կշռին վրայ տոկոսը պիտի հաշուուի,

[1] Թղթալանառներուն քով հատուրեքացի համար յսկայպէս գծուած քրքեր կը ծախուին.
 [2] Եթէ գումար անգղ. իրայ է՝ այս սիւնին քով երկու սիւն եւս գծելու է, ուր կը գրուի անգղ. իրային կոտորակներ՝ շիլինգ եւ քենս:

կամ փոխանակ թիւերը գրելու՝ իւրաքանչիւր գումարին տոկոսները զատ զատ հաշուելով՝ այդ սիւնին մէջ կը գրուին թ. 1 հաշուընթացին պէս, զոր այս կերպով ալ շինած ենք (Տես թ. 206—207):

Վերոյիշեալ սիւները կ'երեւան յաջորդ երեսը թ. 1 հաշուընթացին կմախքին վրայ, ուր ամէն սիւնին տակ դրած ենք իրենց թիւերը, որոնցմով ուսանողը վերի բացատրութիւնները լաւ պիտի հասկնայ:

Հաշուընթաց զրկողը՝ անոր տակ այսպէս գրելով կը ստորագրէ, ինչէս կ'ըլլար հաշուեղիւրներուն վրայ:

Բ. Ս. եւ Մ.
 Կ. Պոլիս.....189.
 (Ստորագրութիւն)

S. E. & O.
 Constantinople, le.....189.
 (Signé)

Որ կը նշանակէ թէ՛ եթէ հաշիւի սխալ մը եղած է կամ գումար մը մոռցուած է, վերջէն պիտի կրնայ ուղղուիլ:

Հաշուընթացին ձեւը և պատրաստութեան կերպը ցուցնելէ ետքը՝ օրինակ մը կը դնենք հոս և զայն կը պատրաստենք յաջորդ երեսի հաշուընթացին կմախքին վրայ:

Պօլսեցի Պ. Սահակեան՝ Փարիզի Վ. Գէորգեանի հետ կը գործէ տարեկան ⁰/₆ փոխադարձ տոկոսով:

1897 Դեկտ. 31 ին հաշիւին կարգադրելով՝ Վ. Գէորգեան 4825 ֆր. պարտական էր Պ. Սահակեանի: Վ. Գէորգեան՝ 1898 Յունվար 31 ին դարձեալ Պ. Սահակեանի հաշուընթացը կը պատրաստէ:

Արդ՝ 1897 Դեկտ. 31էն ետքը Պ. Սահակեան զրկած է Վ. Գէորգեանի հետեւեալները, որք Պ. Սահակեանի Պահանջը կը կազմեն.

1898 Յունվ. 2 ին՝	3000 ֆր. ի փոխ. գիր մը,	վճարօր 8 Յունվ.
» » 6 ին՝	1500 » » »	» 20 »
Վ. Գէորգեան ալ՝	1897 Դեկտ. 31էն ետքը	վճարած է Պ. Սահակեանի իր վրայ քաշած հետեւեալ թղթերը, որք Պ. Սահակեանի Պարտի կը կազմեն,
1898 Յունվ. 1 ին՝	2500 ֆր. ի փոխ. գիր մը,	վճարօր 25 Յունվ.
» » » 3600 » » »	» » »	» 28 »
» » » 2500 » » »	» » »	» 31 »
» » 4 ին՝	2000 » չէք մը	» 4 »

Ըսել է թէ՛ երկու կողմէն ալ տրուած և առնուած գումարներուն վրայ տոկոս պիտի հաշուի 97 Դեկտ. 31էն, որ հաշույն սկիզբն է՝ մինչ 31 Յունվ. 1898, որ հաշուեղադարի օրն է:

ԿՄԱՆՔ ԹԻԻ 1 ՀԱՇՈՒՆՎՈՒՄ

ԸՆԹԱՅԻՆ - ՀԱՇԻԻ Տ. Պ. ՍԱՀԱԿԵԱՆԻ Ի Կ. ՊՈԼԻՍ ԸՆԴ Տ. Վ. ԳԵՈՐԳԵԱՆԻ Ի ՓՈԼՔԻՉ

Պարտի	Տեղա սարեկան 6 % , դարձ 31 Յունվար 1898	Պահանջ
1	2	3
2	3	4
3	4	5
4	5	6
5	6	7
6	7	8
7	8	9
8	9	1
9	1	2
	2	3
	3	4
	4	5
	5	6
	6	7
	7	8
	8	9

Վ. Գեորգեան նախ այս գործողութիւնները իր տետրակէն քաղելով՝ հաշուենթացի թղթին վրայ իրենց յատուկ սիւներուն մէջ կ'օրինակէ տրուած բացատրութեանց համեմատ: Հաշուենթացին կշիռը կամ Մեացորդը գտնելէ առաջ, պէտք է հաշուել թէ՛ Պ. Սահակեան, որուն հաշուենթացը կը պատրաստենք, ո՞րչափ տոկոս կը պարտի կամ կը պահանջէ:

Սկսինք պատրաստել այս հաշուենթացը, որուն Պարսֆին առաջին 2500 ի գումարը Յունվ. 25 ին վճարուած է: Արդ՝ Յունվ. 25 էն մինչ 31 Յունվ., որ հաշուեղադարի օրն է, 6 օր կայ. պատրաստուելիք հաշուենթացին վրայ Յունվ. 31էն տոկոս պիտի բանի նոր հաշույն մէջ. բսել է Պ. Սահակեան 2500 ին 6 օրուան տոկոսը Վ. Գեորգեանի տալու պարտական է. հետեւաբար՝ Օրի Թ. 8 սիւնին մէջ (Տե՛ս Հաշուենթացի կմախքին վրայ) 6 կը գրենք: Պարսֆին 3600 ի գումարը Յունվ. 28 ին վճարուած է: Արդ՝ Յունվ. 28 էն 31 Յունվ. 3 օր կայ, զոր կը գրենք օրի սիւնին մէջ, ա՛յն պատճառարանութեամբ՝ ինչ որ բսինք առջի գումարին համար: Գարձեալ Պարսֆին 2500 ի գումարը, Յունվ. 31ին վճարուած է, այսինքն ճիշդ հաշուեղադարի օրը, որուն համար Պ. Սահակեան տոկոս տալու պարտական չ'է, քանի որ հաշիւն ալ նոյն օրը կը գոցուի և նոր հաշիւին տոկոսն ալ նոյն օրէն պիտի բանի. հետեւաբար օր չըլլալուն՝ օրի սիւնին մէջ Չեթօ մը կը գրուի կամ ուղիղ գիծ մը կը քաշուի, թիւի սիւնին մէջ ալ Թռա-կան բառը կը գրուի: Պարսֆին վերջին 2000 ի գումարը Յունվ. 4 ին վճարելի ըլլալով, Յունվ. 4 էն 31 Յունվ.՝ 27 օր կայ, ուրեմն Պ. Սահակեան այս գումարին 27 օրուան տո՛կոսը տալու է Վ. Գեորգեանի, որպէս զի հաշուենթացին կշիւն վրայ Յունվ. 31էն տոկոս բանեցնել կարելի ըլլայ, ուստի օրի սիւնին մէջ կը գրենք 27:

Իսկ Պահանջֆին 4825 ի գումարը նախորդ հաշույն կշիւրը ըլլալով, տոկոսը կը բանի նոյն հաշույն գաղբած օրէն՝ 37 Գեկա. 31էն մինչ սոյն հաշուենթացին հաշուեղադարի օրը, որ 31 օր կ'ընէ, զոր կը գրենք օրի սիւնին մէջ: Այս գումարին 31 օրուան տոկոսը Պ. Սահակեան կը պահանջէ, քանի որ հաշուեղադարէն 31 օր առաջ վճարած է զայն. ուստի ինչպէս որ Պ. Սահակեան իր Պարսֆին գումարներուն վրայ իրենց վճարօրէն մինչ հաշուեղադարի օրը եղած օրերուն տոկոսը տուած եղաւ Վ. Գեորգեանի, բնական է որ իր Պահանջֆին գումարներուն վրայ ալ՝ անոնց վըճարօրէն մինչ հաշուեղադարի օրը եղած օրերուն տոկոսը առնէ Վ. Գեորգեանէ: Պահանջֆին 3000 ի գումարը Վ. Գեորգեան Յունվ. 8ին գանձած է. Յունվ. 8էն 31 Յունվ.՝ 23 օր կայ, զոր օրի սիւնին մէջ կը գրենք: Պահանջֆին 1500 ի գումարը Յունվ. 20ին գանձած է. Յունվ. 20էն 31 Յունվ. 11 օր կայ, զոր նոյնպէս օրի սիւնին մէջ կը գրենք:

Հաշուընթացին Պարսֆին և Պահանջֆին գումարներուն օրերն այսպէս գտնելէ և գտնոնք օրի սիւներուն մէջ գրելէ ետքը՝ մէն մի գումար իրեն համապատասխանող օրին հետ բազմապատկել և արտադրեալները թիւի Ծրդ սիւներուն մէջ գրելու է: Յետոյ պըզտի թղթի մը վրայ երկու կողմի թիւերը կը գումարենք, և անոնց տարբերութիւնը գտնելով՝ կշիռ քուոց ըսելով կը գրենք նուազ թիւ պարունակող թուոց սիւնին մէջ, որով Պարսֆին և Պահանջֆին թուոց գումարները կը հաւասարին կամ կը կշտուին:

Թ. 1 Հաշուընթացին Պահանջֆին թուոց սիւնին գումարն է 235075
 Պարսֆին » » » 79800
 Տարբերութիւնը կամ կշիւը կ'ըլլայ 155275

Թիւ 1 ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԱԿՈՎ

Ա. Ռ. Ա. Զ. Ի.

ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՇԻԻ Տ. Պ. ՍԱՀԱԿԵԱՆԻ Ի

Տոկոս ստրեկան 6 0/0, դաճում 31 Յունվար 1898

Պահանջէ

Պարսի

1898	Յունվար	1	2500	Քաւած փոխան. գիրք » » » չեք Կշիռ քուոց	1898	Յունվար	25	6	1500	
»	»	»	3600		»	»	»	28	3	1080
»	»	»	2500		»	»	»	31	0	15400
»	»	4	2000		»	»	»	4	27	5400
»	»	31	10600		»	»	»	—	—	155275
1898	Փետրվար	1	1249	15	1898	Յունվար	31	—	235075	

1	4825	Մնացորդ հին հաւուէն	1897	Փետրվար	31	31	149575
2	3000	Ղրկած փոխան. գիրք	98	Յունվ.	8	23	69000
6	1500	»	»	»	20	11	16500
31	25	85 Տկւ. 155275 քւց. կեց. վրջ	—	—	—	—	—
»	1249	15 Կշիռ ի նոր հաշիւ	—	—	—	—	—
—	10600	—	—	—	—	—	235075

Բ. Ս. Ե. Մ.
 Փարիզ, 31 Յնվ. 1898
 Վ. ԳԵՈՐԳԵԱՆ

զոր կը գրենք Պարսֆին թիւի սիւնին մէջ (որ Պահանջֆինէն նուազ թիւ կը պարունակէ) երկու կողմի թիւի գումարները հաւասարաւորու համար:

Թուոց այս կշիւը կը ցուցնէ թէ՛ Պ. Սահակեան կը պահանջէ 155275 թիւ, որուն վրայ պիտի հաշուենք տոկոսը: Այս 155275 թիւը բաժնելով 6000 ուլ, որ 0/10 6 տոկոսին հաստատ բաժանարարն է (1), կ'ունենանք ֆր. 25, 85 տոկոս, զոր Պ. Սահակեան կը պահանջէ:

[1] Հաստատ բաժանարարին վրայ խօսած եմք Հաշուական Գիտելոց գլխուն մէջ:

Ուստի սոյն գումարն ալ կը գրենք անոր Պահանջֆին դրամադրի սիւնը: Յետոյ պզտի թղթի մը վրայ Պարսֆը և Պահանջը գատ գատ գումարելով կ'ունենանք Պարսֆին կողմը ֆր. 10600, —
 Պահանջֆին կողմը » 9350, 85
 Կշիւը կամ Մնացորդ Պարսֆը կ'ըլլայ ֆր. 1249, 15
 որ է Յունվ. 31ին Պ. Սահակեանի պարտքը Վ. Գեորգեանի տոկոսով մէկտեղ: Այս գումարը կը տանինք կշիռ ի նոր հաշիւ կամ Մնացորդ Պարսֆ ի նոր հաշիւ ըսելով՝ նուազ գումար պարունակող դրամադրի սիւնին մէջ, այսինքն Պահանջֆին գումարներուն վըրայ կ'աւելցնենք, երկու կողմի դրամադրոց գումարները հաւասարաւորու համար: Այս գործողութիւններէն ետքը, երկու կողմի

թէ՛ դրամադրի և թէ՛ թիւի չորս սիւները, որք իրարու հաւասար գումարներ պիտի արտադրեն, այսինքն՝ երկու կողմի թուոց և դրամադրոց գումարները իրարու հաւասար պիտի գան, միեւնոյն ուղղութեամբ գումարելով և տակը զոյգ գիծեր քաշելով հին հաշիւը կը գոցենք, և կշիւը՝ ֆր. 1249, 15 հաշուեղադարի յաջորդ օրէն, Փետր. 1էն կը գրենք Պ. Սահակեանի նոր հաշույն Պարսֆին կողմը, Մնացորդ Պարսֆ հին հաշույն ըսելով, որով Պ. Սահակեանի հաշուընթացը պատրաստուած կ'ըլլայ Ուղիղ եղանակով, որուն պիտի ըսենք Առաջին կերպ այսինքն, Թուով:

Երկրորդ կերպ Ուղիղ եղանակ հաշուընթացի, փոխանակ թիւի՝

ԹԻ 1 ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՄԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ

ԵՐԿՐՈՐԳ (Տոկոսով)

ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՇԻԻ Տ. Պ. ՍԱՀԱԿԵԱՆԻ Ի ԿԱՐՏԻ ԸՆԴ Տ. Վ. ԳԷՈՐԳԵԱՆԻ Ի ՓԱՐԻՉ

Պարտի

Տոկոս սարեկան 6%, դարձ 31 Յունվար 1898

Պահանջէ

1898 Յունվար	1	2500	Քաւած փոխանակազիրը	1898 Յունվար	25	6	2	1	4825	Մնացորդ հին հաւուէն	1897 Գեկտեմբեր	31	31	24	90	
"	"	3600	"	"	28	3	1	2	3000	Գրկած փոխանակազիրը	98 Յունվ.	8	23	11	50	
"	"	2500	"	"	31	0	թկն.	6	1500	"	"	20	11	2	75	
"	4	2000	" չեք	"	4	27	9	31	25	Կեիւ տոկոսի ի նպաս. իրեն	---	---	---	---	---	
"	31	---	Կեիւ տոկոսի	---	---	---	25	"	1249	Կեիւ ի նոր հաւու	---	---	---	---	---	
		10600					39		10600						39	15
1898 Փետրվար	1	1249	15	Մնացորդ հին հաւուէն	1898 Յունվար	31										

տոկոսով. — Երբեմն հաշուենթաց շինելու համար, փոխանակ օրերն իրենց գումարներովը բազմապատկելով արտադրեալ թիւերը գրեւու՝ և ետքը այդ թուոց կշտին վրայ տոկոսը հաշուելու՝ դատ թղթի վրայ իւրաքանչիւր գումարին արտադրած թուոց տոկոսը անմիջապէս կը հաշուեն, և թիւին տեղ՝ այդ տոկոսները կը գրեն թուոց սիւնին մէջ. յետոյ երկու կողմի տոկոսներուն կշիւը կը գրեն նուազ տոկոս պարունակող սիւնին մէջ՝ գումարները հաւասարա- կշուելու համար:

Թիւ 1 հաշուենթացը այս երկրորդ կերպովն ալ հաշուելով՝ միւսնոյն արդիւնքը առած է, ինչպէս կ'երեւայ վերի օրինակին վրայ:

Կարմիր քուսնչաններ. — Հաշուենթացին մէջ երբ վճարո- րերին հաշուեղադարէն ետքը լրանալիք գումարներ գտնուին՝ անոնց համար Կարմիր քուսնչաններ կը գործածուին. օրինակ. Յունիս 30 ին մէկուն հաշուենթացը պիտի շինենք: Ի մէջ այլոց՝ Յունիս 16 ին այդ մարդուն 2000 դշ. ի սպրանք ծախուեր է՝ վը- ճարելի Յուլիս 31 ին: Արդ՝ հաշուենթացը շինելու համար 2000 ը անոր Պարսֆին տանելով և հաշիւը Յունիս 30 ին գոցելով, յորմէ պիտի բանի նոր հաշուենթացին տոկոսը, յայտնի է թէ՛ այդ մարդը 2000 ին (Յունիս 30 էն 31 Յրս.) 31 օրուան տոկոսը մեզմէ ուզե- լու իրաւունք ունի, քանի որ ինքը գայն Յուլիս 31 ին պիտի վը- ճարէ և ո՛չ առաջ, մինչդեռ հաշուենթացը Յունիս 30 ին կը գոցենք:

Ուստի 2000 էն պէտք է զեղչել 31 օրուան տոկոսը, որպէս զի հա- շիւը ուղիղ և արդար ըլլայ. բայց որովհետեւ կրնայ ըլլալ որ թէ՛ Պարսֆին և թէ՛ Պանանջիին կողմը վճարօրերին հաշուեղադարէն ետքը լրանալիք գումարներ չատ ըլլան, որոնց տոկոսները զեղ- չելով դուտ գումարները գրելը հաշուենթացին հարազատ վիճակը չի ներկայացներ՝ երկու կողմին ալ նախնական գումարները փոխ- տելով, ուստի՝ այդ տոկոսները փոխանակ հաշուենթացէն դուրս ընելով և գումարներէն զեղչելով գրելու՝ նոյն իսկ հաշուենթա- ցին վրայ կ'ըլլայ տարբեր կերպով, առանց գումարները փոխելու, որով այդ տեսակ հաշուենթացին կշտոյն վրայ հաշուեղադարէն տո- կոս բանեցուցած ատեննիս, հաշիւն ալ ուղիղ կ'ըլլայ: Ըսածնիս թէեւ մէկ գումարի վրայ է, բայց ամբողջ հաշուենթացին վրայ ալ նոյնը պէտք է իմանալ, ինչ որ պիտի բացատրենք հիմա Թ. 2 հաշուենթացին վրայ:

Առենք Թ. 2 հաշուենթացը, որուն Պանանջիին 10735, 85 ին վճարօրը Մայիս 15 ին է, յորմէ պիտի բանի տոկոսը, մինչդեռ հաշ- ուենթացը Մարտ 31 ին դադրած ըլլալով՝ Կշտիկ վրայ Մարտ 31 էն տոկոս պիտի բանի նոր հաշուենթացին մէջ: Այս գումարը կրնանք դուրս ձգել մեր շինելիք հաշուենթացէն, և գոցելէ ետքը նորին մէջ անցնել: Առանկ ընելով՝ միայն հաշուեղադարէն առաջ լրա- ցած գումարներուն հաշուենթացը շինած պիտի ըլլայինք և Կշտը

ի նոր հաշիւ փոխադրելէ ետքը՝ նոյնպէս ի նոր հաշիւ պիտի դրուէինք Պահանջքին 10735, 85ի գումարը, որուն վրայ Մայիս 15էն տոկոս պիտի բանէր նորին մէջ: Բայց որովհետեւ յաճախ կը պատահի որ երկու կողմն ալ հաշիւներն բոլորովին վերջացնելու պէն, և հաշուենթացին մէջ գտնուին շատ գումարներ, որոց վճարօրը հաշուեղադարէն ետքը լրանան, ուստի հարկ եղած է գտնել միջոց մը, որ ամէն պարագայի յարմարի և ուղիղ կշիռ տայ, որով կարելի ըլլայ նոր հաշուենթացը բանալ, առանց գոցուած հաշուենթացին մէկ քանի գումարներուն հետ կրկին գործ ունենալու: Ահա այս պարագաներուն համար հնարուած է Կարմիր քուակշաններու գործածութիւնը:

Բացատրենք.

Եթէ հաշուենթացին մէջ գումարի մը վճարօրը հաշուեղադարէն առաջ լրանայ՝ անոր վճարօրէն մինչեւ հաշուեղադարի օրը տոկոս կը բանի այն գումարին վրայ զայն զրկողին ի նպաստ, ինչպէս կ'երեւայ Թ. 1 և 2 հաշուենթացներուն վրայ: Երբ գումարի մը վճարօրը հաշուեղադարին իսկ լրանայ՝ նոյն գումարն ամենեւին տոկոս չբերեր, քանզի հաշիւը նոյն օրը գոցուած ըլլալով՝ օրի միջոց չկայ, հետեւաբար տոկոս ալ չըլլար: Թ. 1 հաշուենթացին (Տե՛ս Թ. 204-205) Պարսֆին՝ 3րդ գումարին 2500 ին վճարօրը Յունվ. 31ին ըլլալով՝ որ հաշուեղադարի օրն է, անոր վրայ տոկոս չի հաշուեցինք, որովհետեւ օրի միջոց չկար. ուստի օրի սիւնին մէջ 2կրօ մը դնելով և թիւի սիւնին մէջ՝ Թուակիս գրելով անցանք: Նոյնը ըրինք Թ. 2 հաշուենթացին վրայ (Տե՛ս Թ. 210-211), որուն Պարսֆին երկու գումարներուն (3000 և 4000) վճարօրը Մարտ 31ին ըլլալով, որ հաշուեղադարի օրն է, անոնց ալ տոկոս չի հաշուեցինք, որովհետեւ օրի միջոց չկար. ուստի օրերու սիւնին մէջ 2կրօ և թիւի սիւնին մէջ՝ Թուակիս գրեցինք: Բայց երբ գումարի մը վճարօրը հաշուեղադարէն ետքը լրանայ՝ հաշուեղադարէն մինչեւ անոր վճարօրը տոկոս կը բանի նոյն գումարին վրայ՝ զայն զրկողին ի վնաս. վասնզի՝ փոխանակ հաշուեղադարի օրը գանձուելու, աւելի ուշ պիտի գանձուի. հետեւաբար յսպաղման օրերուն համար տոկոս կը պարտի նոյն գումարը զրկողը:

Այս կերպով՝ պայմանաժամը հաշուեղադարէն ետքը լրանալիք գումարը զրկողին Պահանջքին կողմը երեւարու է, քանի որ կը գոցուի հաշիւը: Այդ պարագային՝ հաշուենթացը գոցուած օրը գտնուած տոկոսներուն կամ թուոց կշիւր կը փոխուի:

Արդ՝ հաշուենթացը գոցելու ատեն վճարօրը դեռ չի լրացած գումար մը եթէ գտնուի, հաշուեղադարէն մինչ անոր վճարօրը եղած օրերուն տոկոսը բնական է դեղչել այդ գումարէն և զուար հաշիւի անցնել: Սակայն գեղչելի տոկոսը, ինչպէս ըսինք, փո-

խանակ հաշուենթացէն դուրս ընելու, նոյն իսկ անոր մէջ կ'ընեն: Երկուսը կամ թիւը՝ այդ գումարը զրկողին Պարսֆին անցնելով, եթէ Պահանջքին կողմն է. եթէ Պարսֆին կողմն է՝ Պահանջքին անցնելով. որովհետեւ այդ գումարները հաշուենթացին կշիւր ըլլալով՝ որուն թուակիսը անոնց վճարօրէն առաջ է. ըսել է թէ՛ այդ գումարներուն ալ նոյն թուակիսէն տոկոս պիտի բանի: Աւտի այս տեսակ գումարներուն թիւը կամ տոկոսը գտնելով՝ անոնց օրը և թիւը կամ տոկոսը Կարմիր մեղանով գրելու է իրենց փններուն մէջ, որպէս զի շիտթելով՝ նոյն կողմի միւս թուոց կամ տոկոսներուն հետ չգումարուին, և կարելի ըլլայ գանձք յստակօրէն որոշել և հակառակ կողմի թուոց կամ տոկոսներուն վրայ աւելցնել՝ կշիւր գտնելէ առաջ:

Թ. 2 հաշուենթացին՝ Գ. Յակոբեանի Պահանջքին 10735,85 ին վճարօրը Մայիս 15 ին է, մինչդեռ հաշուեղադարը Մարտ 31ին է, այսինքն 45 օր ետքն է. նոյն հաշուենթացի կշիւր, որ Գ. Յակոբեանի Պահանջքին է, տոկոսը Մարտ 31էն պիտի բանի նոր հաշուենթացին մէջ, մինչդեռ 10735, 85ը Մայիս 15 ին գանձելի է. հետեւաբար այդ գումարին 45 օրուան տոկոսը Գ. Յակոբեանի Պարսֆին տանելու է. ուստի օրի սիւնին մէջ՝ 45ը և գումարին հետ բազմապատկութենէն արտադրեալ 483075 թիւը կարմիր մեղանով գրեցինք. ետքը՝ այդ թիւը դիմացի Պարսֆին կողմը սեւ մեղանով գրելով, թուոց բուն կշիւր վրայ հաշուեցինք տոկոսը:

Կարմիր քուակշաններ երկու կողմն ալ. — Թ. 2 հաշուենթացին միայն Պահանջքին կողմը կար 10735, 85, որոյ վճարօրը հաշուեղադարէն ետքն էր. սակայն կը պատահի որ՝ Պարսֆին և Պահանջքին կողմն ալ վճարօրերին հաշուեղադարէն ետքը լրանալիք գումարներ գտնուին, ինչպէս Թ. 3 հաշուենթացը:

Այդ հաշուենթացի Պարսֆին վերջին 2000ին վճարօրը 98 Յունվ. 25 ին է, հաշուեղադարէն (31 Դեկտ. 97) 25 օր ետքը. ուրեմն 2000 ին 25 օրուան տոկոսը Մ. Յովսէփեան Կը պահանջէ Ս. Պողոսեանէ, քանի որ հաշիւը Դեկտ. 31ին կը գոցուի և Մ. Յովսէփեան այդ գումարը 25 օր ետքը պիտի վճարէր, մինչդեռ հաշուենթացին կշիւր վրայ Դեկտ. 31էն տոկոս պիտի բանի նորին մէջ. ուստի 25 օրուան տոկոսը՝ Ս. Պողոսեան պէտք է տայ Մ. Յովսէփեանի. հետեւաբար 2000 ին 25 օրուան 50000 թիւը և 25 օրը Կարմիր մեղանով կը գրենք: Իսկ Պահանջքին 1776 ին վճարօրն ալ 98 Փետր. 15 ին է, հաշուեղադարէն (31 Դեկտ. 97) 46 օր ետքը. ուրեմն 1776 ին 46 օրուան տոկոսն ալ Մ. Յովսէփեան Կը պարսի Ս. Պողոսեանի, քանի որ հաշիւը Դեկտ. 31ին կը գոցուի և այդ գումարը 46 օր ետքը պիտի գանձէ Ս. Պողոսեան, մինչդեռ հաշուենթացին կշիւր վրայ Դեկտ. 31էն տոկոս պիտի բանի նորին մէջ.

Թի 2 ԸՆԹԱՑԻԿ - 2

ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՅԻ 8. Գ. ՅԱԿՈԲՅԱՆԻ Ի ՍԱՐՍԵՑԻ

Տոկոս սարեկան 5

Պարսի

1896	Յունվար	23	2000	Վճարում Մ. Կիլմեզին	1896	Յունվար	23	68	136
	Փետրվար	5	2000	Քառամ փոխանակագիրք		Փետրվար	29	31	62
	"	"	3000	"		Մարտ	16	15	45
	"	"	3000	"		"	31	0	0
	Մարտ	26	4000	"		"	"	0	0
	"	"	31	Կարմիր քիւֆ Պանանջի					483
	"	"	86	Տոկոս 621496 քուոց կռոին վրայ					
	"	"	3538	Կեիո ի նոր հաշիւ					
			17625	25					726075

ԵՂԱՆԱԿՈՎ

ԸՆԹԱՑԻԿ 8. Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ Ի ՍԱՐՍԵՑԻ

Մարտ 31 Մարտ 1896

Պանանջի

1896	Մայիս	15	45	483075
	Փետրվար	25	35	42000
	Մարտ	20	11	62579
				621496
				726075
	1896	Մարտ	31	

1	3538	95	Հին հաշուէն
	10735	85	Արժեք 2 հազ մեսախի
	1200	—	իմ հրամանագիրս
	5689	40	Արժեք 1 հազ մեսախի
	31	—	Կեիո քուոց

ուստի 46 օրուան 81696 թիւը և 46 օրը Կարմիր մեղանով կը գրենք:

Արդ՝ Պարսիին 50000 կարմիր թիւը Մ. Յովսէփեանի Պանանջին ըլլալով, անոր Պանանջին սեւ թուոց վրայ, և փոխադարձաբար Պանանջին 81696 կարմիր թիւը Մ. Յովսէփեանի Պարսիին ըլլալով՝ անոր Պարսիին սեւ թուոց վրայ աւելցնել հարկ էր, որ ըսել է թէ՛ Պարսիին կողմը Պանանջինին 31696 թիւ աւելի պիտի անցնէր, որ երկու կարմիր թուոց կշիռն է: Բայց որովհետեւ աւելորդ աշխատութիւն է Պարսիին տանիլ 81696 և Պանանջին՝ 50000 թիւեր, որք զիրար կշռելով միեւնոյն արդիւնքը կը տան, այլ բաւական է երկու կողմի կարմիր թուոց կշիռը գտնել և նուազ կարմիր թիւունցող կողմին սեւ թուոց վրայ աւելցնել սեւ մեղանով գրելով:

Թ. 3 Հաշուընթացին Պանանջին կողմը կայ կարմիր թիւ 81696 և Պարսիին » » » » 50000
Կշիռը կ'ըլլայ 31696

զոր Կշիռ կարմիր քուոց ըսելով կ'աւելցնենք Պարսիին սեւ թուոց վրայ, որով կ'ունենանք այն արդիւնքը, ինչ որ պիտի ունենայինք՝ եթէ 81696ը Պարսիին և 50000ը Պանանջին կողմը գրէինք. այսինքն՝ Պարսիին կողմը 31696 թիւ աւելի գրած պիտի ըլլայինք, ինչպէս կ'երեւայ Թ. 212—213 երեսներուն վրայ:

Յանձնառոյցի հաշուընթացներու մեջ. — Ըսինք արդէն թէ՛ սեղանաւորք իրենց յաճախորդաց հետ ըրած գործողութեանց վըրայ յանձնառոյցէք կ'առնեն: Արդ՝ երբ անոնց Յ/ամս. կամ Յ/ամս. հաշուընթացը շինեն, նոյն գումարներուն վրայ իրենց յանձնառոյցէքը կ'անցնեն, ինչպէս կ'երեւայ Թ. 3 Հաշուընթացին մէջ, որոյ Պանանջին երեք գումարներուն վրայ Ս. Պողոսեան յանձնառոյցէք անցուցած է: (Տե՛ս Թ. 212—213)

Ուղիղ եղանակին անպատեհութիւնները. — Ուղիղ եղանակով հաշուընթաց շինելու համար՝ հաշուեղադարի օրը առաջուց գիտնալ պէտք է, ինչ որ ամէն ատեն յայտնի չ'ըլլար: Ասկէ դատ՝ շատ թղթակիցներու հաշուընթացները շինող սեղանաւորք՝ գանձնք առաջուց պատրաստել անկարելի ըլլալուն՝ (երբ անոնց հաշուեղադարի օրը յայտնի չէ) պիտի ստիպուի ամէն Յ/ամսէին կամ Յ/ամսէին ամէնքը մէկ օր շինել, որ մեծ աշխատութեան պէտք ունի և սխալներ ալ կ'ըլլան անապարանօք պատրաստուելով: Ասոր համար՝ Ուղիղ եղանակը չ'յարմարիր և անոր տեղ Անուղիղ եղանակը հնարուած է, որ սա առաւելութիւնն ալ ունի որ՝ Կարմիր քուանչան գործածել պէտք չ'ըլլար, որ շատ անգամ հաշուընթաց շինողը կը շուարեցնէ:

ԹԻՒ 3 ԸՆԹԱՑԻԿ - 2
ԸՆԹԱՑԻԿ-ՀԱՇԻՒ Տ. Մ. ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ԿՈՎՈՐԻ
ՅՈՎ Ս. Ս. ՊՕՂՈՍԵԱՆԻ Ի ԼԻՕՆ

Տոկոս սարեկան 6

31 Դեկտեմբեր 1897

Պահանջէ

Պատրի

1897				1897			
Սեպտեմբ.	1	2000	Քաւած փոխանակազիրք	Նոյեմբ.	10	51	1020
»	»	1000	»	»	15	46	460
»	»	4000	»	Սեպտեմբ.	20	102	4080
»	»	3000	»	Դեկտեմբ.	10	21	630
»	»	5000	»	Հոկտեմբ.	25	67	3350
Նոյեմբ.	10	2000	»	98 Յնվր.	25	25	500
Դեկտեմբ.	31		Կեիռ կարմիր բուռց				310
»	»	107 85	Տոկոս 647248 բուռց կռոյն վրայ				
»	»	26 70	Յանձնառչ. 1/2% 5344.10ի վրայ				
»	»	17 75	» 1% 1776.—ի »				
		17152 30					98560
1898				1897			
Յունվար	1	8032 20	Մնացորդ հին հաւելոյն	Դեկտեմբ.	31		

6	2000	—	Գրկած փոխանակազիրք	1897			
»	4000	—	»	Նոյեմբ.	20	41	82000
»	1344	10	»	»	11	50	200000
»	1776	—	»	»	19	42	56448
14	—	—	»	98 Փետր.	15	46	81696
31	—	—	Կեիռ բուռց				647248
»	8032	20	Կեիռ ի նոր հաւել				
	17152	30					985696

Ա Ն Ո Ւ Ղ Ի Ղ Ե Ղ Ա Ն Ա Վ

Անուղիղ եղանակն այն է՝ որուն տոկոսները այնպէս մը կը հաշուեն, որ երկու կողմն ալ այդ տոկոսները իրապէս չեն պարտիր իրարու, այլ հաշուեգաղարի օրը կը գտնեն իրարու իրապէս պարտական եղած տոկոսները:

Այս եղանակին Անուղիղ կամ Յետխաղաց անո՛ր համար կ'ըսուի՝ որ փոխանակ ամէն գումարի տոկոսը՝ իր վճարօրէն մինչ հաշուեգաղարի օրը հաշուելու, ընդհակառակը հաշուընթացին սկիզբէն մինչ անոր վճարօրը կը հաշուեն, այսինքն՝ ետ երթալով:

Անուղիղ եղանակն ալ թէեւ Ուղիղին արդիւնքը կը տայ, բայց ուրիշ կերպ կը շինուի, որ հաշուընթացները առաջուց պատրաստելը կը դիւրացնէ:

Անուղիղ եղանակին քաջաստուքիւնը

98 Յունվ. 31 ին կը գոցենք մէկուն հաշուընթացը, որ երկու գումար ունի. մին՝ Պատրիին կողմը 2000 և միւսը՝ Պահանջիին կողմը 1000. տոկոսը կը բանի 97 Դեկտ. 31 էն, որ հաշուընթացին սկիզբնաւորութեան օրն է. տոկոսը 9% տարեկան:

Արդ՝ իբրեւ ընդհանուր կանոն Անուղիղ եղանակին՝ հաշուեգաղարի օրը երկու կողմի գումարներուն փոքրը (1000) մեծէն (2000) հանելու և կշիռն (1000) վրայ տոկոսը հաշուելու է այնքան օրուան, որքան օր որ տեւած է հաշիւը: Այս սկզբունքով՝ այն, որուն հաշիւը կը գոցենք, Դեկտ. 31 էն 31 Յունվ. 31 օրուան 2000 ին տոկոսը կը պատրի, և դարձեալ Դեկտ. 31 էն 31 Յունվ., 31 օրուան 1000 ին տոկոսը կը պահանջէ: Ըսել է թէ այդ մարդը իրապէս կը պարտի երկու գումարներուն կշիռն (1000ին) 31 օրուան տոկոսը, որ կ'ընէ 7,75, հետեւաբար հաշուընթացին կշիռն ալ կ'ըլլայ տոկոսով 1007,75:

Այս է ահաւաստիկ Անուղիղ եղանակին գաղտնիքը:

Անուղիղ եղանակն այնպէս կը շինուի որպէս թէ՛ երկու կողմն ալ առաջուց համաձայնին իրարու զրկած գումարներուն վրայ, հաշույն սկիզբէն մինչեւ իւրաքանչիւր գումարի վճարօրը փոխադարձ տոկոս հաշուելու, որպէս զի հաշուեգաղարի օրը միայն դրամագլխոց կշիւրը գտնելով՝ անոր վրայ տոկոս հաշուուի այնքան օրուան՝ որքան օր որ տեւած է հաշիւը և գանուած թիւը կամ տոկոսը տանիլ այն կողմը, ուր կը գանուի դրամագլխոց կշիւրը. ետքը երկու կողմի թուոց կշիւրը գտնելով՝ անոր վրայ իրական

տրուած ըլլային, բայց քանի որ իրօք այդ օրէն ետքը տրուած են, ուստի բնական է այդ գումարներէն զեզչել, կամ ընդունուած սովորութեան համեմատ՝ Պարսֆին կողմը գրել հաշւոյն սկիզբէն մինչ այդ գումարներուն իրապէս տրուած օրերն եղած ժամանակամիջոցին շափ սոկոսները կամ թիւերը, որք, ինչպէս թ. 219 երեսին մէջ բացատրուած է, թէեւ պարտականին Պարսֆին կողմը կը գրուին, բայց յայտնի է թէ այդ սոկոսները պարտականին Պահանջին են պահանջողէն, քանի որ պարտականը զանոնք իրօք առջի օրը առած չէ:

Ինչպէս կ'երեւայ, Պարսֆին կողմի 1000ը Յակոր թէեւ Դեկտ. 23ին առած է, բայց հաշւոյն սկիզբը (Դեկտ. 1ին) առած սեպտեմբ. 22 օրուան թիւը 22000՝ թէեւ Պարսֆին կողմը կ'երեւայ, բայց Յակորին Պահանջին է, քանի որ իրօք Դեկտ. 23ին առած է զայն և ո՛չ թէ Դեկտ. 1ին: Փոխադարձաբար Պահանջողին ստացած գումարներն ալ պէտք էր որ հաշւոյն սկիզբէն իրեն տրուած ըլլային, բայց քանի որ իրօք այդ օրէն ետքը տրուած են, ուստի նոյնպէս բնական է այդ գումարներէն զեզչել կամ ընդունուած սովորութեան համեմատ՝ Պահանջին կողմը գրել հաշւոյն սկիզբէն մինչ այդ գումարներուն իրապէս տրուած օրերն եղած ժամանակամիջոցին շափ սոկոսները կամ թիւերը, որք, ինչպէս թ. 219 երեսին մէջ բացատրուած է, թէեւ պարտականին Պահանջին կողմը կը գրուին, բայց յայտնի է թէ այդ սոկոսները հաշուերն Պարսֆին պարտականին Պարսֆին են առ պահանջողն, քանի որ պարտականը զանոնք իրօք առջի օրը տուած չէ:

Նոյնպէս Պահանջին 1500ը Յակոր թէեւ Դեկտ. 11ին առած է, բայց հաշւոյն սկիզբը (Դեկտ. 1ին) տուած սեպտեմբ. 10 օրուան թիւը 15000՝ թէեւ Պահանջին կողմը կ'երեւայ, բայց Յակորին Պարսֆին է, քանի որ իրօք Դեկտ. 11ին առած է զայն և ո՛չ թէ Դեկտ. 1ին:

Երկու կողմն ալ այսպէս հաշուելով, Պարսֆին և Պահանջին գումարները հաշւոյն սկիզբի թուականին տարուեցան ըսել է: Կը մնայ դրամագլխոց կշիռը, որուն վրայ ալ միեւնոյն պատճառաբանութեամբ սոկոս հաշուելու է հաշուերն Պարսֆին տեւողութեան ժամանակամիջոցին շափ, որովհետեւ հաշիւը բոլորովին վերջացած չէ. այլ կշիռ մը կայ, ուստի այդ կշիռէն ալ պէտք է զեզչել կամ ընդունուած սովորութեան համեմատ՝ կշիռն հակառակ կողմը գրել այդ ժամանակամիջոցին շափ սոկոսները կամ թիւերը, որք կշիռն տիրոջ Պարսֆին կամ Պահանջին են: Վերջը թուոց կամ սոկոսի սիւները գումարելու և կշիռելու և թուոց կամ սոկոսներուն կշիռը տանիլ ա՛յն կողմն, ուր կը գտնուի թուոց կշիռը: Նախորդ օրինակին սոկոսը 5,50 տարինք Պահանջին կողմը, ուր կը գտնուի թուոց 22000ի կշիռը:

Ուղիղ եղանակով շինուած թ. 1 հաշուերն Պարսֆին կողմն ալ շինելով, միեւնոյն արդիւնքը տուած է, ինչպէս կ'երեւայ թ. 218—219 երեսներուն վրայ:

Եթէ մէկ կողմէն Վ. Գէորգեան՝ Պ. Սահակեանի Պարսֆին մէն մի գումարին սոկոսը տայ հաշւոյն սկիզբէն (97 Դեկտ. 31) մինչ անոնց վճարօրը, և միւս կողմէն Պ. Սահակեան՝ Վ. Գէորգեանի Պարսֆին մէն մի գումարին սոկոսը տայ հաշւոյն սկիզբէն մինչ անոնց վճարօրը, յայտնի է թէ՛ Վ. Գէորգեան հաշուերն Պարսֆին գոցած ստեն երկու կողմի դրամագլխոց կշիռն առնելով, ո՛ր կողմն որ քիչ դրամագլուխ ունի՝ շատ դրամագլուխ ունեցողին պիտի վճարէ սոյն կշիռն 31 օրուան, այսինքն, հաշիւը քանի՛ օր որ տեւած է, ա՛յնքան օրուան սոկոսը. (Տե՛ս թ. 213):

Արդ՝ այս հաշիւները ընենք թ. 1 հաշուերն Պարսֆին վրայ Անուղիղ եղանակով շինելու համար:

Պ. Սահակեան պարտի Վ. Գէորգեանի 10600 Ֆր. զանազան պայմանաժամերով հետեւեալ շորս գումարներով:

1.	Ֆր. 2500.—	Վճարօր 25 Յունվ. 1898	
		Անուղիղ եղանակին սկզբունքով՝ որպէս զի Վ. Գէորգեան հաշուեղարի օրն այս գումարին հաշւոյն սկիզբէն մինչ 31 Յունվ. սոկոսը առած ըլլայ, առաջուց տալու է Պ. Սահակեանի 2500 ին հաշուերն Պարսֆին սկիզբէն (97 Դեկտ. 31էն) մինչեւ անոր վճարօրը (25 Յունվ.) 25 օրուան սոկոսը, որուն թիւը կ'ընէ	62500
2.	» 3600.—	Վճարօր 28 Յունվ. 1898	
		Միեւնոյն պատճառով, Վ. Գէորգեան տալու է Պ. Սահակեանի այս գումարին 28 օրուան սոկոսը, որ հաշւոյն սկիզբէն (Դեկտ. 31էն) մինչ գումարին վճարօրը (28 Յունվ.) եղած ժամանակամիջոցն է. 3600ը 28 ով բազմապատկելով կ'ունենանք թիւ	100800
3.	» 2500.—	Վճարօր 31 Յունվ. 1898	
		Նոյնպէս Վ. Գէորգեան տալու է Պ. Սահակեանի այս գումարին հաշւոյն սկիզբէն մինչ վճարօրը 31 օրուան սոկոսը, որուն թիւը կ'ընէ	77500
4.	» 2000.—	Վճարօր 4 Յունվ. 1898	
		Այս գումարին ալ 4 օրուան սոկոսը տալու է, որուն թիւը կ'ընէ	8000
	<u>Ֆր. 10600.—</u>		<u>248800</u>

Թի 1 ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՐԱՐԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՂԱՆՈՒԿՈՎ.

ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՇԻԻ Տ. Պ. ՍԱՀԱԿԵԱՆԻ Ի ՎԵՐՈՒՄԻ ԸՆԴ Տ. Վ. ԳԵՈՐԳԵԱՆԻ Ի ՓԱՐԻՋ

Պարտի

Տոկոս սարեկան 6% 31 Յունվար 1898

Պահանջէ

1898 Յունվար	1	2500	Քաւած փոխանակագիրք	1898 Յունվար	25	25	625	1	4825	Մնացորդ նին հաշուէն	1897 Գեղտ.	31	0	Թկն.
»	»	3600	»	»	28	28	1008	2	3000	Վրկած փոխանակագիրք	98	8	8	24000
»	»	2500	»	»	31	31	775	6	1500	»	»	20	20	30000
»	4	2000	»	»	4	4	80	31	—	Կեիւ դրամագլխոց 1275	—	—	31	39525
										» թուոց	—	—	—	155275
									25 85	Տոկոս » կեռին վրայ	—	—	—	—
									1249 15	Կեիւ ի նոր հաշիւ	—	—	—	—
		10600					2488		10600					248800
1898 Փետրվ.	1	1249 15		1898 Յունվար	31									

Ուրեմն Վ. Գեորգեան կը պահանջէ Պ. Սահակեանէ 10600 Ֆր. իսկ կը պարտի անոր 248800 թիւի տոկոս: Այս թիւերը թէև Պ. Սահակեանի Պարտիին կողմը կ'երեւան, բայց, ինչպէս ըսինք (Տե՛ս թ. 216) այդ թիւերը Պ. Սահակեանի Պահանջին են:

Վ. Գեորգեան ալ կը պարտի Պ. Սահակեանի 9325 Ֆր. գանազան պայմանաժամներով հետեւեալ երեք գումարներով:

1. Ֆր. 4825.— Վճարոր 31 Դեկտ. 1897
Դեկտ. 31ը հաշույն սկսած օրն է, յորմէ պիտի բանի փոխադարձ տոկոսը, ուրեմն օրի միջոց չըլլալուն, տոկոս ալ չկայ այս գումարին վրայ:
2. » 3000.— Վճարոր 8 Յունվ. 1898
Որպէս զի Պ. Սահակեան հաշուեղադարի օրն այս գումարին հաշույն սկիզբէն (97 Դեկտ. 31էն) մինչ զադրած օրը (31 Յունվ.), տոկոսը առած ըլլայ, առաջուց տալու է Վ. Գեորգեանի 3000ին հաշույն սկիզբէն (Դեկտ. 31էն) մինչ գումարին վճարորը (8 Յունվ.) 8 օրուան տոկոսը որուն թիւը կ'ընէ

Ֆր. 7825.— Փոխադրելի 24000
24000

- Ֆր. 7825.— Փոխադրեալ 24000
3. » 1500.— Վճարոր 20 Յունվ. 1898
Միեւնայն պատճառով Պ. Սահակեան տալու է Վ. Գեորգեանի այս գումարին 20 օրուան տոկոսը, որուն թիւը կ'ընէ 30000
54000

Ուրեմն Պ. Սահակեան կը պահանջէ Վ. Գեորգեանէ 9325 Ֆր. իսկ կը պարտի անոր 54000 թիւի տոկոս: Այս թիւերը, թէև Պ. Սահակեանի Պահանջին կողմը կ'երեւան, բայց, ինչպէս ըսինք, (Տե՛ս թ. 216) անոնք Պ. Սահակեանի Պարտիին են:

- Վ. Գեորգեանի դրամագլխոց գումարն է Ֆր. 10600
Պ. Սահակեանի » » » 9325
Կշիւ ի նպաստ Վ. Գեորգեանի Ֆր. 1275

Ուրեմն Պ. Սահակեան տակաւին պարտի տալ Վ. Գեորգեանի դրամագլխոց կռիւն՝ 1275ին 31 օրուան տոկոսը, որովհետև այս գումարն ալ հաշույն սկսած օրը տրուած սեպելով՝ (ինչ որ իրօք չէ տրուած) պէտք է որ այս գումարին 31 օրուան տոկոսը տայ Վ. Գեորգեանի, որուն թիւը կ'ընէ 39525
Պ. Սահակեանի արդէն Պարտական եղած թուոց գումարն էր 54000
Հետեւաբար Պ. Սահակեան պարտական է ընդամենը թիւ 93525

ԹԻԻ 2 ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՇԻԻ

ԸՆԹԱՑԻԿ - ԿԱՇԻԻ Յ. Գ. ՅԱԿՈՐԵԱՆԻ Ի Կ

Տոկոս սարեկան 5%, դր

Պարսի

Պահանջէ

1896	Յունվար	23	2000	Վնարուած Մ. Կիւլիկի	1896	Յունվար	23	3
	Փետրվար	5	2000	Քառած փոխանակագիրք Թ. 708		Փետրվար	29	40
	"	"	3000	" " » 709		Մարտ	16	56
	"	"	3000	" " » 710		"	31	71
	Մարտ	26	4000	" " » 711		"	"	"
	"	31		Կէրս գրամագլխոց				
	"	"	86	Տոկոս բուռց կտրին վրայ				
	"	"	3538	Կէրս ի նոր հաշիւ				
			95		3625,25			71
			17625					
			25					
								162

ԵՂԱՆԱԿՈՎ (4)
ՅՆԳ 8. Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ Ի ՍԱՐՍԻԼԻԱ

31 Մարտ 1896

30	10735	85	Արժէք 2 հալ մետաքս	1896	Մայիս	15	116	12453
29	1200	-	Իմ հրամանագիրս		Փետրվար	25	36	432
28	5689	40	Արժէք 1 հալ մետաքս		Մարտ	20	60	3414
	17625	25						16299
1	3538	95	Հին հաշուէն		1896	Մարտ	31	

Տրուած բացատրութիւններէն հասկցուեցաւ թէ՛ Պ. Սահակեանի հաշուընթացին Պարսիին թիւերը անոր Պահանջին են, և Պահանջին թիւերը անոր Պարսիին: Ահա ասոր համար է որ Անուղիղ եղանակ հաշուընթացին սովորները այն կողմը կը գրուին, ուր կը գտնուի թուոց կշիռը:

Արդ՝ որովհետեւ Պ. Սահակեանի Պարսիին թիւերը, որք իր Պահանջը կը կազմեն՝ են 248800 Թիւ և Պահանջին թիւերը, որք իր Պարսիին կը կազմեն՝ են 93525 Թիւ:

Աւերմն Պ. Սահակեանի կը պահանջէ տակաւին 155275 Թիւ զոր 1/6 ի հաստատ բաժանարարովը բաժնելով կ'ունենանք տակաւ Գր. 25,85, զոր տանելու է իր Պահանջին. յետոյ Պարսիին և Պահանջին կշիռը ընելով կը գտնանք Գր. 1249,15, որ հաստատ է նոյն հաշուընթացին Աղիղ եղանակով շինուածին կշիռն: (Տէ'ս Թ. 204—205)

Հետեւաբար հաշուընթաց մը, որուն սովոր տակը փոխադարձաբար միեւնոյն է, թէ՛ Աղիղ և թէ՛ Անուղիղ եղանակով պատրաստելով, միեւնոյն կշիռը պէտք է տայ, եթէ հաշիւները ճիշդ եղած են:

Թ. 1 Անուղիղ հաշուընթացին (Տէ'ս Թ. 218—219 երեսները) Պարսիին և Պահանջին ամէն մէկ գումարին դէմի օրերը՝ եթէ Աղիղ եղանակով պատրաստուած նոյն հաշուընթացին (Տէ'ս Թ. 204—205) Պարսիին և Պահանջին միեւնոյն գումարներուն դէմի օրերուն հետ գումարենք, ամէնուն ալ գումարը կ'ըլլայ 31, որ հաշուընթացին տեւողութիւնն է: Եւ անպատճառ այսպէս պիտի ըլլար, քանի որ հաշիւը 97 Դեկտ. 31ին բացուած և 98 Յունվ. 31ին գոցուած է: Թիւ 1 Անուղիղ եղանակին Պարսիին 3600ին վճարօրը Յունվ. 28ին ըլլալով՝ Անուղիղի մէջ՝ Դեկտ. 31ը հաշուին սկիզբը սեպտեմբ. այն գումարը 28 օր վերջը վճարուած համարելով դէմը 28 օր գրինք: Իսկ Աղիղ եղանակին մէջ՝ ուր հաշուին սկիզբը նոյնն (Դեկտ. 31) է, 3 օր առաջ վճարուած ըլլալով՝ (քանի որ հաշիւը Յունվ. 31ին կը գոցուի) 3 օր գրեցինք. ըսել է 28 և 3ը գումարելով կ'ըլլայ 31 օր. այսպէս պիտի ըլլայ միւս բոլոր գումարներուն օրերը՝ երբ գումարենք:

[1] Այս հաշուընթացին համար Յունվ. 20ը ընտրեցինք հաշուին սկզբնաւորութեան բուական:

Թ. 2 հաշուենթացը Ուղիղ եղանակով շինած ատեննիս (Տե՛ս Թ. 210—211) Կարմիր քուսնչան գործածեցինք, վասն զի Պահանջքին առաջին գումարին վճարորը հաշուեղադարէն (31 Մարտ) ետքը, Մայիս 15ին կը լրանար, մինչդեռ նոյն հաշուենթացը Անուղիղ եղանակով ալ շինելով (Տե՛ս Թ. 220—221) կարմիր թուանչան գործածել հարկ չեղաւ:

Թիւով պատրաստուած հաշուենթացներուն մէջ՝ գիւրու-թեան համար ամէն գումարի օրերուն հետ բազմապատկութենէն արտադրեալ թուոց աջ կողմէն բաժանարար 100ին համար 2 թուանչան ջնջել և մնացեալը թուոց սիւնին մէջ գրել սովորութիւն է: Միայն թէ՛ ջնջուած թիւերը եթէ 50 թիւէն աւելի ըլլան՝ գրուելիք հարիւրորդին վրայ միութիւն մը կ'աւելցնեն:

Թ. 2 հաշուենթացը նախորդ երեսներուն վրայ այս կերպով ալ շինեցինք, որ ուղիղ եղանակով շինուած և թիւերն ամբողջ գրուածին արդիւնքը սուլած է:

ՀԱՄԱՐՈՒՐԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Համպուրկեան (1) հաշուենթացն այսպէս կը շինուի. երբ մէկ կողմը միւսին գումար մը տայ՝ նախ պէտք է առջի գումարին կամ կշտին տոկոսը կամ տոկոսին թիւերը հաշուել՝ նոյն գումարին կամ կշտին վճարութեն մինչ յաջորդ գումարին վճարորը, որով երկու գումարները նոյն թուականին կը տարուին. յետոյ ետքի գումարը առջինէն հանել, եթէ մէկը Պարսֆ և միւսը՝ Պահանջք է, կամ առջինին վրայ աւելցնել, եթէ երկուքն ալ Պարսֆ կամ Պահանջք են, նոր կշտը ցուցնել և այսպէս շարունակել մինչեւ վերջը:

Այս եղանակին Ասիականաւոր ալ կ'ըսեն, որովհետեւ Պարսֆին և Պահանջքին գումարները՝ հաշուենթացի միւս երկու եղանակներուն պէս փոխանակ զէ՛մ առ զէ՛մ գրուելու՝ տակէ տակ կը գրուին:

Համպուրկեան եղանակը գլխաւորաբար երկու պարագայի մէջ կը գործածուի. առաջին՝ երբ երկու կողմի տոկոսի սակերը տարբեր ըլլան. երկրորդ՝ երբ տոկոսին տոկոսը հաշուել ուզուի: Համպուրկեան եղանակով հաշուենթաց շինելու երկու միջոց կայ:

Առաջին միջոցը՝ իւրաքանչիւր գումար իր վճարորին կարգովը շարելով կը շինուի, այսինքն ամենէն մօտ վճարութեն սկսելով կարգաւ ամենէն հեռու վճարութին կ'երթան:

Գ. Մանուկեան և Ս. Մինասեան հաշուենթաց ունին: Ս. Մինասեան՝ 96 Յունիս 30ին Գ. Մանուկեանի հաշուենթացը կը չինէ:

Գ. Մանուկեանի Պահանջքը ատոնք են.

Յունվ.	5	Փոխանակագիր մը	լ. 0.	400.—	վճարոր	31	Յունվ.	96
Փետր.	10	Ապրանքի արժէքը	»	100.—	»	10	Մարտ	96
Մարտ	25	Փոխանակագիր մը	»	150.—	»	30	Ապրիլ	96

Գ. Մանուկեանի Պարսֆը ատոնք են.

Յունվ.	27	Փոխանակագիր մը	լ. 0.	300.—	վճարոր	15	Փետր.	96
Մարտ	15	Գ. Սեղրոսեանի վճար. ծը	»	450.—	»	15	Մարտ	96
»	21	Փոխանակագիր մը	»	200.—	»	10	Մայիս	96
Մայիս	31	»	»	150.—	»	25	Յունիս	96

Գ. Մանուկեան առած գումարներուն տարեկան 12% տոկոս պիտի վճարէ, Ս. Մինասեան ալ իր առածներուն 10%:

Այս հաշուենթացը Համպուրկեան առաջին միջոցով շինելու համար, նախ գումարները իրենց վճարորին կարգովը գրելու է այսպէս,

Հաշիւ Գ. Մանուկեանի՝ վճարորի կարգաւ գրուած

ՎՃԱՐՈՐ	ՊԱՅՄԱՆՔԻ ԿԱՄ ԱՌՆԵԼԻՔ		ՊԱՐՏԻ ԿԱՄ ՏԱԼԻՔ	
1896				
Յունվար	31	400	—	—
Փետրվար	15	—	—	300
Մարտ	10	100	—	—
»	15	—	—	450
Ապրիլ	30	150	—	—
Մայիս	10	—	—	200
Յունիս	25	—	—	150
		650	—	1100
Կիսը		450	—	—
		1100	—	1100

Նախ հաշուենթացը շինելու կերպը պիտի բացատրենք, ետքը պիտի զննենք շինուած հաշուենթացը:

(1) Համպուրկեան եղանակն իր սնունք առած է Համպուրկ Բազալէն, ուր հնարուած ըլլալ կ'երեւի տոկոսաւոր հասարակացի այս երոզը եղանակը:

Պարտքի և Պահանջի գումարները	Պարտքի բյուջերը	Պահանջի բյուջերը
Առաջին գումարը վճարելի Յունվ. 31ին Պահանջին կողմն է	400	
Երկրորդը՝ վճարելի Փետր. 15ին, Պարսիին կողմն է	300	
Կշիռը գտնելու համար, երկրորդ գումարը առջինէն հանելէ առաջ՝ (որովհետեւ մէկը՝ Պարսի և միւսը՝ Պահանջ է) առջի գումարին՝ Յունվ. 31էն 15 Փետր. 15 օրուան տոկոսը հաշուելու է, որպէս զի կշիռին, այսինքն մնացորդ Պահանջին տոկոսը Փետր. 15էն բանի. ուստի 400ը 15ով (Յունվ. 31էն Փետր. 15 օրերուն թիւովը) բազմապատկելով՝ 6000ը կը գրենք Պահանջի թիւի սիւնը:		6000
Ետքը 300ը 400էն հանելով՝ նոր կշիռը կ'ըլլայ 100 Պահանջ, որուն տոկոսը պիտի բանի Փետր. 15էն:	100	
Երրորդը՝ վճարելի Մարտ 10ին Պահանջին կողմն է	100	
Ասի նախորդ կշիռն վրայ աւելցնելէ առաջ՝ (որովհետեւ երկուքն ալ Պահանջ են) նախորդ կշիռն՝ 100ին Փետր. 15էն 10 Մարտ, 24 օրուան տոկոսը հաշուելու է, որպէս զի նոր կշիռն տոկոսը Մարտ 10էն բանի. ուստի 100ը 24ով (Փետր. 15էն 10 Մարտ օրերուն թիւը) բազմապատկելով՝ 2400ը կը գրենք Պահանջի թիւի սիւնը: Ետքը 100ը նախորդ 100ին վրայ գումարելով՝ նոր կշիռը կ'ըլլայ 200 Պահանջ, որուն տոկոսը պիտի բանի Մարտ 10էն:		2400
Չորրորդը՝ վճարելի Մարտ 15ին Պարսիին կողմն է	200	
Նախորդ՝ կշիռը այս գումարէն հանելէ առաջ՝ (որովհետեւ առջինը Պահանջ էր, իսկ վերջինը Պարսի) 200ին Մարտ 10էն	450	
Փոխադրելի	250	8400

Փոխադրելի	Փոխադրելի	Փոխադրելի
250		8400
15 Մարտ, 5 օրուան տոկոսը հաշուելու է, որպէս զի նոր կշիռն տոկոսը Մարտ 15էն բանի. ուստի 200ը 5ով բազմապատկելով՝ 1000ը կը գրենք Պահանջին թիւի սիւնը: Ետքը հակառակ գործողութեամբ՝ 200ը 50էն հանելով՝ նոր կշիռը կ'ըլլայ 250 Պարսի, որուն տոկոսը պիտի բանի Մարտ 15էն: Հինգերորդը՝ վճարելի Ապրիլ 30ին Պահանջին կողմն է	1000	
150		
Ասի նախորդէն հանելէ առաջ՝ (որովհետեւ առջինը Պարսի է, իսկ վերջինը Պահանջ) 250ին Մարտ 15էն 30 Ապրիլ, 46 օրուան տոկոսը հաշուելու է, որպէս զի նոր կշիռն տոկոսը Ապրիլ 30էն բանի. ուստի 250ը 46ով կը բազմապատկենք և 11500ը կը գրենք Պարսիին թիւի սիւնը: Ետքը 150ը 250էն հանելով՝ նոր կշիռը կ'ըլլայ 100 Պարսի, որուն տոկոսը պիտի բանի Ապրիլ 30էն:	11500	
100		
200		
Վեցերորդը՝ վճարելի Մայիս 10ին, Պարսիին կողմն է		
100		
200		
Ասի նախորդ կշիռն վրայ աւելցնելէ առաջ՝ (որովհետեւ երկուքն ալ Պարսի են) 100ին Ապրիլ 30էն 10 Մայիս, 10 օրուան տոկոսը հաշուելու է, որպէս զի նոր կշիռն տոկոսը Մայիս 10էն բանի. ուստի 100ը 10ով բազմապատկելով՝ 1000ը կը գրենք Պարսիին թիւի սիւնը:	1000	
300		
70		
150		
Ետքը 200ը 100ին վրայ աւելցնելով՝ նոր կշիռը կ'ըլլայ 300 Պարսի, որուն տոկոսը պիտի բանի Մայիս 10էն:		
70		
150		
Եոթներորդ և վերջին գումարը՝ վճարելի Յունիս 25ին, Պարսիին կողմն է		
150		
Ասի նախորդ կշիռն վրայ աւելցնելէ առաջ՝ (որովհետեւ երկուքն ալ Պարսի են) 300ին Մայիս 10էն 25 Յունիս, 46 օրուան տոկոսը հաշուելու է, որպէս զի նոր կշիռն տոկոսը Յունիս 25էն բանի. ուստի 300ը 46ով բազմապատկելով՝ 13800ը կը գրենք Պարսիին թիւի սիւնը:	13800	
26300		9400

Փոխադրելի

Փոխադրեալ

... ետքը 150ը 300ին վրայ աւելցնելով՝ նոր կշիռը կ'ըլլայ 450 Պարսֆ, որուն առկուսը պիտի բանի Յունիս 25էն:

Որովհետեւ հաշուընթացը Յունիս 30ին պիտի գոցենք, ուստի 450ին Յունիս 25էն 30 Յունիս, 5 օրուան տոկոսը հաշուելու է, որպէս զի վերջնական կշիռն տոկոսը Յունիս 30էն բանի. ուստի 450ը 5ով բազմապատկելով 2250ը կը գրենք Պարսֆին թիւի սիւնը: Ետքը Պարսֆին և Պահանջֆին թիւերը գումարելով՝ Գ. Մանուկեանի Պահանջֆի թուոց գումարը կ'ըլլայ 9400 և Պարսֆինը՝ 28550: 9400ը 3600ով (որ % 10ին հաստատ բաժանարարն է, զի Գ. Մանուկեանի Պահանջֆին տոկոսը % 10ն է) կը բաժնենք և կը գտնանք 261 զշ. տոկոս, զոր Գ. Մանուկեան կը պահանջե. ետքը 28550ը 3000ով (որ % 12ին հաստատ բաժանարարն է, զի Գ. Մանուկեանի Պարսֆին տոկոսը % 12 է) կը բաժնենք և կը գտնանք 952 զշ. տոկոս, զոր Գ. Մանուկեան կը պահանջի, յորմէ հանելով իր 261ի պահանջը տոկոսը, Գ. Մանուկեան տակաւին կը պարտի 691 զշ. տոկոս, զոր աւելցնելով իր 450 Լ. պարտքին վրայ, ամբողջ Պարսֆը կ'ըլլայ:

		26300	9400
450			
		2250	
		6 91	
	456 91	28550	9400

Վերոյգրեալ հաշուընթացը շինուած կ'երեւայ յաջորդ երեսը:

Երկրորդ միջոցը՝ իւրաքանչիւր գումար իր թուականին կարգովը շարելով կը շինուի, այսինքն՝ ամենէն մօտ թուականէն ըսկըսելով կարգաւ ամենէն հետու թուականին կ'երթան:

Տոկոսի սակը փոխադարձ նոյն եղած հաշուընթացները Համպուրիկեան եղանակին երկու կերպովն ալ կրնայ շինուիլ:

Համպուրիկեան եղանակին երկու միջոցները կրնան գործածուիլ այն հաշուընթացներուն համար, որոնց իւրաքանչիւր գումարին տոկոսը անմիջապէս հաշուելով կշիռն վրայ աւելցնել կամ անկէ հանել ուղղի, ինչպէս ըսինք Համպուրիկեան եղանակի սահմանին վրայ խօսած ատենինս. և արդէն այս եղանակը աւելի

Ա. Բ. Ա. Ջ. Ի. Մ. Ի. Ջ. Ո. Ց.

ԱՐԵՅԻՎ - ՀՇՈՒՒ Տ. Գ. ՄԸՆՈՒԿԵԱՆԻ ԸՆԴ Տ. Ս. ՄԻՆՇՈՅԸՆԻ Ի Կ. ՊՈԼԻՍ

Պարտք % 12ով, Պահանջք % 10ով, զադրած 30 Յունիս 96

Վճարոք	Ցախի Թւանցիք	Գումար	Օր	Պարտքին բիւերը	Պահանջքին բիւերը	
1896 Յունվ. Փետր.	31 15	ա ս	400 300	15	---	6000
Մարտ	10	ա ա	100 100	24	---	2400
"	15	ա ս	200 450	5	---	1000
Ապրիլ	30	ս ա	250 150	16	11500	---
Մայիս	10	ս ս	100 200	10	1000	---
Յունիս	25	ս ս	300 150	46	13800	---
Կե.սկս.ի		ս	450 6 91	5	2250	---
			456 91		28550	9400
					Տոկոս 12% 9,52	Տոկոս 10% 2,61
						6,91
						9,52

առոր համար կը գործածուի, որով տոկոսին ալ տոկոսը բանած կ'ըլլայ: Ասկէ զատ՝ Համպուրիկեան եղանակին համար հաշուեղապարի օրը առաջուց գիտնալ հարկ չէ. այլ, ինչպէս կ'երեւի, ամէն նոր գործողութեան՝ առջի հաշիւը կը գոցուի և նոր կշիռը կ'երեւայ, որով ուզած օրդ կրնաս հաշուոյն վիճակը հասկնալ և հաշուընթացը գոցել:

Հակառակ այս սուսուելութեան՝ Համպուրիկեան եղանակը իր անպատեհութիւնները ունի, այսինքն թէ՛ երկու կողմի գումարները շարունակ իրարմէ հանել կամ իրարու վրայ գումարել հարկ է, որ ատեն շատ անգամ սխալմունք կ'ըլլան, օրինակի համար, գումարելու տեղ կը հանուի՝ և հանելու տեղ՝ կը գումարուի, անոր համար ուշադրութիւն ընելու է:

ԵՐԵՎԱՆԻ ՄԻՋՈՑ

ԸՆԹԱՅԻՎ-ՀԱՆԻ Ը. Թ. ՍԻՄՕՆԵԱՆԻ ԸՆԴ Ը. Խ. ԳԼՈՐԳԵԱՆԻ
Տոկոս Պարտի 6%, Պահանջի 4%, դադրած 31 Յունիս 1898

1898 Յունիվ.	1	1897 Փետր.	31	—	ա	4825	—	28	Հին հաշուեն Տոկոս
					—	22	50		
					—	4847	50		
"	1	08 86վր.	28	s	—	8600	—		Փոխանակագիր 3 կսո (1)
					s	—	3752	50	20
					—	12	50		Տոկոս
					s	—	3740	—	
"	2	"	8	—	ա	3000	—		
					s	—	740	—	4
					—	—	50		Տոկոս
					s	—	739	50	
"	4	"	4	s	—	2000	—		
					s	—	2739	50	16
					s	—	7	30	
					s	—	2746	80	
"	6	"	20	—	ա	1500	—		
					s	—	1246	80	11
					s	—	2	30	
						1249	10		Տոկոս Կեիւ ի նոր հաշիւ

Ուղիղ և Անուղիղ եղանակներով շինուած Թ. 1 Հաշուընթացը՝
Համագործակեան եղանակին երկրորդ կերպովը և իւրաքանչիւր
գումարի տոկոսները վրան բարդուելով շինուած կ'երեւայ վերը,
որուն կռին վրայ 5 Հարիւրորդի տարբերութիւն մը կը տեսնուի,
որ յառաջ եկած է տակաին տակոսը հաշուելէն:

Պարտի ու Պահանջի տարբեր տակոսով Հաշուընթացին երկու
կողմէն մին՝ երբ հաշույն սկիզբէն մինչեւ հաշուեզազարի օրը
Շարունակ մի՛այն Պահանջող կամ մի՛այն Պարտական կ'ըլլայ,
Համագործակեան եղանակը գործածել հարկ չ'ըլլար, այլ ամէն ե-
ղանակն ալ անխտիր կրնայ գործածուիլ. բայց Ուղիղ կամ Անու-
ղիղ եղանակը գործածուած տեսն. Պարտիև և Պահանջիև տո-

[1] Այս գումարը կը բաղկանայ 3 փոխանակագրէ, որոց միջին պայմանա-
ժամն է 28 Յունիվ.

ԸՆԹԱՅԻՎ - ՀԱՆԻ Ը. Թ. ՍԻՄՕՆԵԱՆԻ ԸՆԴ Ը. Խ. ԳԼՈՐԳԵԱՆԻ
Տոկոս Պարտի 6%, Պահանջի 4%, դադրած 30 Յունիս 98

Պարտի Պահանջի

1898 Մարտ.	31	10000	—	Առ.ձ.գումար	31	ս	Ապր.	30	5000	—	Տւ.ձ. գումար	30	ս	
Մայ.	31	10000	—	" "	31	ս								

Կանները իրենց տարբեր սակերովը հաշուելու չէ, այլ երկու կող-
մի թիւերը գտնելով՝ անոնց կռին վրայ տակոսը հաշուելու է այն
կողմի սակովն, որ կողմին որ կը վերաբերի տակոսը:

Երկու կողմի տակոսները տարբեր սակով հաշուընթացի օրի-
նակ մը կը դնենք վերը, զոր հաշուընթացի երեք եղանակներովն
ալ պիտի շինենք, տեսնելու համար թէ արգարևս միեւնոյն ար-
դիւնքը պիտի տա՞ն:

ՀԱՄՈՒՐԿԵԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

ԸՆԹԱՅԻՎ-ՀԱՆԻ Ը. Թ. ՍԻՄՕՆԵԱՆԻ ԸՆԴ Ը. Խ. ԳԼՈՐԳԵԱՆԻ
Տոկոս Պարտի 6%, Պահանջի 4%, դադրած 30 Յունիս 1898

1898 Մարտ	31	s	—	10000	—	30	3000	—	50	—		
Ապրիլ	30	—	ա	5000	—							
Մայիս	31	s	—	5000	—	31	1550	—	25	83		
Յունիս	30	s	—	10000	—							
1898 Յուլիս	1	s	—	15000	83		9050	9050	150	83	150	83

Գրոշմարուղը հաշուընթացներու. — Հաշուընթացներուն 20
փր.նոց դրոշմաթուղթ փակցնելէ ետքը կ'ստորագրուի:

Ո Ւ Դ Ա Բ Դ Ե Դ Ա Ն Ս Ա Կ Ե Պ Վ
ԸՆԹԱՑԻԿ - ՀԱՇԻԻ Տ. Թ. ՍԻՄՈՆԵԱՆԻ ԸՆԴ Տ. Խ. ԳԷՈՐԳԵԱՆԻ
 Տոկոս փարոսի 6%, Պահանջի 4%, դարձ 30 Յունիս 1898

Պարտի		1898		1898		Պահանջի	
Մարտի	31 10000	Առանց փարոսի	9100	Ապրիլի 30	5000	1898	30 Ապրիլի 61
Մայիսի	31 10000	»	3000	Յունիսի 30	—	»	»
Յունիսի	30 150 83	Տղա. 6% քուոնց կե.ն վր.	—	»	15150 83	»	»
	20150 83		12100		20150 83	»	»
1898		Տոկոս փարոսի	—		—	»	»
Յունիսի	1 15150 83	Հին հաշույն	—		—	1898	»
			—		—	308նս.	»

Ա Ն Ս Ո Ւ Դ Ա Բ Դ Ե Դ Ա Ն Ս Ա Կ Ե Պ Վ
ԸՆԹԱՑԻԿ-ՀԱՇԻԻ Տ. Թ. ՍԻՄՈՆԵԱՆԻ ԸՆԴ Տ. Խ. ԳԷՈՐԳԵԱՆԻ
 Տոկոս փարոսի 6%, Պահանջի 4%, դարձ 30 Յունիս 1898

Պարտի		1898		1898		Պահանջի	
Մարտի	31 10000	Առանց փարոսի	9100	Ապրիլի 30	5000	1898	30 Ապրիլի 61
Մայիսի	31 10000	»	3000	Յունիսի 30	—	»	»
Յունիսի	30 150 83	Տղա. 6% քուոնց կե.ն վր.	—	»	15150 83	»	»
	20150 83		12100		20150 83	»	»
1898		Տոկոս փարոսի	—		—	»	»
Յունիսի	1 15150 83	Հին հաշույն	—		—	1898	»
			—		—	308նս.	»

[1] Այս հաշվառման համար Մարտի 31ը բնորոշ է՜վ սկզբնաշուրթից բուժական:

Հաշուրնթացները փակելու առեն թիւի և գումարի սիննէ-
 լուն տակը քաշուելիք զոյգ գիծերը ընդհանրապէս կարմիր մե-
 շակով կը գծեն, որ լաւ կ'երեւայ, ինչպէս մեր օրինակներէն
 շատերուն վրայ կ'երեւայ:

Հաշուրնթացը իր թղթակցին զրկողը նամակ մ'ալ կը գրէ,
 ներփակելով անոր մէջ Հաշուրնթացը, նոր կ'ընդունի նշանակելով
 նամակին մէջ, և ծանուցանելով որ Հաշուրնթացը քննելէ ետքը
 եթէ ճիշդ գտնէ՝ կ'ընդունի ի նոր հաշիւ անցնէ:

Հաշուրնթացը ստացողն ալ՝ գայն քննելէ ետքը անոր ի պա-
 տասխան նամակով կ'իմացնէ ճշդութիւնը և կ'ընդունի ի նոր հաշիւ
 անցուցած ըլլալը:

Սեղանաւորք և դրամատունք, որք շատերու հետ Հաշուրն-
 թաց կ'ունենան, Հաշուրնթացին հետ տպուած նամակ մը կը դըր-
 կեն անոր պատասխանին համար. այդ նամակին մէջ՝ գումարին
 և թուականին տեղերը պարզապէս ձգուած են:

Հաշուրնթացը ստացողը գայն քննելէ և ճիշդ գտնելէ ետքը՝
 այդ նամակին պարզապէս տեղերը գրելով կ'ամբողջացնէ և ստորա-
 գրելով կը զրկէ Հաշուրնթացը զրկող սեղանաւորին, որով որո-
 շակ թուականին երկուստեք գործողութիւնները հաստատուած
 և վաւերացած կ'ըլլան:

Հաս կը դնենք *Crédit Lyonnais* ի Հաշուրնթացի տպուած
 նամակը և անոր պատասխանը մէջը պարզապէս ձգուած:

CRÉDIT LYONNAIS

Constantinople, le 189.

SOCIÉTÉ ANONYME
 CAPITAL : 200 MILLIONS

M

*Nous avons l'honneur de vous remettre ci-joint, un extrait de votre Compte courant chez-nous, arrêté au.... 189. et sol-
 dant en... faveur par*

L. T.
 dont nous vous créditions à nouveau.

*Veillez l'examiner et nous dire le plus tôt possible si nous
 marchons d'accord, en nous retournant remplie et signée la
 formule ci-jointe.*

Au cas où la vérification de ce compte donnerait lieu à un redressement, vous voudrez bien nous l'adresser dans un mois à partir de la date de la présente.

Passé ce délai, votre silence vaudra Approbation définitive du dit compte.

Agréés, M nos salutations empressées.

Պատասխանին օրինակը

Constantinople, le 189

Credit Lyonnais

E. V.

Messieurs,

Nous avons reçu votre lettre du renfermant l'extrait de notre Compte-courant chez-vous arrêté au..... 189. et soldant par

L. T. en faveur.

Nous nous empressons de vous faire savoir que nous marchons d'accord.

Veillez agréer, Messieurs, l'assurance de notre parfaite considération.

Հաշուրենթացին տէրը եթէ սեղանաւորին կամ դրամաւանքով իբր գրաւ արժէթուղթ ունենայ՝ նամակին տակ նոյն թուականին ունեցած այդ արժէթը զթոյց տեսակը, քանակութիւնը, թիւերը ելն. եւս կը գրէ սեղանաւորը:

Յ Բ Ա Տ Ո Ց Ց

Տեղաւոր հաշուրենթաց շինելու համար երկու թուականներու միջև եղած օրերուն գումարը միշտ հաշուել և գտնալ պէտք կ'ըլլայ, զոր շուտ և անխաղ գտնալու համար օրացոյցներ կամ աղիւսակներ հնարուած են, որոցմէ ամենէն զիւրիւնը և կատարելագործեալը հոս կը դնենք:

ԱՆԻԻՍԱԿ ԵՆԻՔԱՆ ՔՈՒԿԱՍՈՒՆԻՐՈՒՆ ՄԻՔԵՆ ՕՐԵՐՈՒՆ ՔԻՆԸ ԿՐ ԳՆՈՑՆԻՑ
Տարին 365 օր հաշուելով

Յաջորդ տարին

Ներկայ տարին

Table with multiple columns and rows containing numerical values and currency symbols (ֆ.ս., Փ.ս., Մ.ս., etc.) representing financial data or a calendar calculation.

Օրացոյցին գործածութեան կերպը

1. Ապրիլ 20էն Սեպտ. 20՝ քանի՜ օր ըլլալը գիտնալ կ'ուզենք, այսինքն երկու թուականներու միեւնոյներորդ օրը: Աղիւսակին Ապրիլի հարիզոնական ուղղութենէն յառաջանալու է մինչև Սեպտ. ի ուղղահայեաց սիւնը՝ ուր երկու ուղղութիւնք կը միանան. հոն պիտի կարդանք 153 թիւը, որ այդ երկու թուականներուն միջև եղած օրերն է:

2. Գտնալ միեւնոյն տարւոյ Մարտ 12էն Յուլիս 27 քանի՛ օր ըլլալը.— Անդին ըսուածին պէս, նախ աղիւսակին Մարտի հորիզոնական ուղղութեանէն սկսելով՝ յառաջանալու է մինչեւ Յուլիսի ուղղահայեաց սիւնը, հոն պիտի տեսնուի 122 թիւը, որ է Մարտ 12էն Յուլիս 12 եղած օրերը, անոր վրայ աւելցնելով 15 օր, այսինքն, Յուլիս 12էն 27 երթալու օրերը, կ'ըլլայ 137, որ այդ երկու թուականներուն միջեւ եղած օրերն է:

3. Քանի՛ օր կայ միեւնոյն տարւոյ Մայիս 27էն Սեպտ. 17.— Դարձեալ միեւնոյն կերպով Մայիսի և Սեպտ.ի ուղղութեանց մէջ պատահած 123 թիւէն, որ Մայիս 27էն Սեպտ. 27 եղած օրերն է, պէտք է հանել 10 օրը, այսինքն, Սեպտ. 27-17 պակասած օրերը, կը մնայ 113, որ այդ երկու թուականներուն միջեւ եղած օրերն են:

4. Քանի՞ օր կայ 97 Յունիս 9էն 18 Մարտ 98. — Յունիսի հորիզոնական ուղղութեամբ յառաջանալու է մինչեւ ուղղահայեաց Մարտի սիւնը (յաջորդ տարւոյն). այս երկու ուղղութեանց մէջ կը տեսնուի 273 թիւը, որ 97 Յունիս 9էն 9 Մարտ 98 եղած օրերն է, որուն վրայ պէտք է աւելցնել 9 օր եւս, Մարտ 9էն 18 երթալու օրերը, գումարը կ'ըլլայ 282, որ այդ երկու թուականներուն միջեւ եղած օրերուն ճիշդ գումարն է:

Այս աղիւսակին մէջ Փետրուարը 28 օր դրուած է. բայց երբ տարին նահանջ է և Փետրուարի վերջը փնտռուած երկու թուականներուն մէջ պատահի՛ Փետրուարը 29 օր հաշուելու է, զանուած օրի թիւին վրայ մէկ օր աւելցնելով. օրինակի համար, եթէ 96 Յունվ. 2էն Ապրիլ 8 քանի՛ օր ըլլալը գիտնալ ուզենք, Յունվ.ի և Ապրիլի սիւներուն մէջ կը կարդանք 90՝ որ Յունվ. 2էն 2 Ապրիլ եղած օրերն է, ատոր վրայ աւելցնելու է 6 թիւ, Ապրիլ 2էն 8 երթալու օրերը, որ կ'ըլլայ 96, անոր վրայ 1 թիւ մը եւս աւելցնելով կ'ըլլայ 97 օր. որովհետեւ 96 տարին նահանջ ըլլալուն՝ Փետր.ը 29 օր է, և Փետրուարի վերջն ալ փնտռուած թուականներուն մէջն է:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ք

1. Գ. Սահակեանի՛ Տրպալիօն և Յ. Մկրտչեանի ի Կ. Պոլիս՝ միջեւ հետեւեալ զործողութիւններն եղած ըլլալով, Յ. Մկրտչեան Ուղիղ եղանակով անոնց հաշուընթացը պիտի շինէ 97 Դեկտ. 31ին. տոկոս 9%₀ փոխադարձ. վարժութեան համար Ուղիղ եղանակին երկու կերպովն ալ շինէ՛, այսինքն, թէ՛ թուով և թէ՛ տոկոսով:

Գ. Սահակեանի Պարսֆը կը կազմեն հետեւեալները.
 97 Յունվ. 10՝ 250 Լ. 0.ի փոխանակազիր, վճարօր 8 Ապրիլ 97
 » » 15՝ 300 » ապրանք կանխիկ վճարելի
 » » 19՝ 50 » հրամանագիր, վճարօր 30 Յունվ.
 » » 30՝ 90 » փոխանակազիր մը, վճարօր 5 Փետր.
 » Փետր. 10՝ իր հաշւոյն Պ. Թիւրքեանի վճարուած 40

Լ. Փետր. 15ին.
 97 Փետր. 26՝ 3 կտոր փոխանակազիր՝ 50 տկան Լ. 0.ի վճարելի Մարտ 15, Մարտ 31, Ապրիլ 15.

97 Մարտ 10՝ 75 Լ. 0.ի ապրանք, վճարելի 10 Մայիս.
 Մարտ 30՝ 100 Լ. 0.ի փոխանակազիր մը, վճարօր 25 Ապրիլ.
 Ապրիլ 15՝ 55 Լ. 0.ի տեսօրին վճարելի փոխանակազիր մը.
 (վճարուած 21 Ապրիլ)

Գ. Սահակեանի Պահանջի կը կազմեն հետեւեալները.
 97 Մայիս 10՝ 300 Լ. 0.ի ապրանք, վճարելի կէսը Յունիս 10ին, և կէսը Օգոստ. 10ին.

Յունիս 15՝ 65 Լ. 0.ի փոխանակազիր մը վճարուած 30 Յնս.
 Յունիս 30՝ իր հաշւոյն Պ. Սիմօնեանի վճարածը 35 Լ. 0.
 Յուլիս 5ին.

Օգոստ. 15՝ 145 Լ. 0.ի հրամանագիր մը, վճարօր 25 Սեպ.
 2. Վերոյիշեալ հաշուընթացը Անուղիղ եղանակով ալ շինէ՛:

3. Հանկուրիկեան եղանակով պատրաստէ՛ հետեւեալ հաշուընթացը, որուն Պարսֆը կը կազմեն հետեւեալները. տոկոսը 9%₀:

97 Հոկտ. 12.	1000.	—	վճարօր 20 Հոկտ.
» Նոյեմ. 4.	1000.	—	» 25 Նոյեմ.
» Դեկտ. 23.	2000.	—	» 30 Դեկտ.
Պահանջի կը կազմեն հետեւեալները, տոկոսը 6% ₀ .			
97 Հոկտ. 13.	4061.	—	վճարօր 31 Հոկտ.
» Նոյեմ. 12.	1000.	—	» 29 Նոյեմ.
» Դեկտ. 10.	4400.	—	» 20 Դեկտ.
» » 24.	3189,50	»	» 28 »

Վարժութեան համար երկու կերպովն ալ պատրաստէ՛, այսինքն, թէ՛ թուով և թէ՛ իւրաքանչիւր գումարի տոկոսները վրան աւելցնելով. հաշուընթացը պէտք է դադրեցնել 97 Դեկտ. 31ին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵԻՄԷԿԵՐՐՈՐԴ

ԴՐՈՇՄԱՏՈՒՐՔ

Դրոշմասուրջը այն տուրքն է, որ ամէն քաղաքակիրթ երկրի մէջ կառավարութեան կը վճարուի որոշեալ գնով առեւտրական և անհատական զանազան թղթոց համար, զորս կարելի է դատարանին ներկայել օր մը ի հաստատութիւն որ և է գործողութեան: Դրոշմատուրքը երկու տեսակ է. մին՝ որոշեալ տուրքն է, որ թ. 1 ցուցակին մէջ նշանակուած թղթոց համար է. միւսը՝ համեմատականն է, որ առեւտրական թղթոց պարունակած գումարին համեմատութեամբ կ'ըլլայ. թ. 2 ցուցակին մէջ գրուած են համեմատական տուրքի ենթակայ թղթերը: Այսու հանդերձ Դրոշմանկիշը (փուլը) կրնայ գործածուիլ թէ՛ համեմատական և թէ՛ որոշեալ տուրքի ենթակայ թղթերու հաւասարապէս:

Դրոշմատուրքի հատուցումն ու գանձումը երկու կերպով կ'ըլլայ. առաջինը՝ թուղթը գրոշմուելու (կնքուիլ), երկրորդը՝ թղթին վրայ գրոշմաթուղթ (փուլ) փակցնելու կերպն է:

Դրոշմատուրքի կնիքը ձեւմակ կնիք մ'է որ սովորական թղթերու կը զարնուի պատկանեալ վարչութեան կողմէն. կնիքին մէջ գրուած է գրոշմագինը:

Դրոշմանկիշ կամ ընդունուած բառով՝ Դրոշմաքուրջ կ'ըսուի տպեալ մանր քառակուսի գունաւոր թղթերուն, որք թղթատարի նամակադրոշմներու կը նմանին, որոնց իւրաքանչիւրին վրայ ինչ գումարի յատուկ ըլլալը և գրոշմագինը գրուած է:

Առեւտրական թղթոց համար գրոշմատուրք վճարողը կը վայելեն անոր օրինական օգուտը, իսկ գրոշմաթուղթ չղնողները կը տուժեն, որոնց վրայ վերջէն պիտի խօսինք:

Դրոշմատուրքի Օրէնքը շատ խիստ արամադրութիւններ ունի անդրոշմ թուղթ ստորագրողներու, ընդունողներու և փոխանցողներու համար, որպէս զի այս տուրքի կիրառութիւնը պարտաւորիչ ըլլայ:

Վերջին տարիները գրոշմաթղթի մասին մեծ հոգ տարուելուն՝ մենք ալ օգտակար սեպեցինք Դրոշմասուրջի Օրէնքին (1)

[1] Դրոշմասուրջի ամբողջ յօդուածները պարունակող Օրինագիրքը մէկ կողմը քանկերէն եւ միւս կողմը գաղղիերէն արդէն հրատարակուած է Հանրային Պարտուց Վարչութեան կողմէն. վերջերս անոր հայերէնն ալ նայատառ քանկերէնով հրատարակուեցաւ, որոցմէ կրնան օգտուիլ նեատրուողները:

Քիչ քանի կարելոր յօդուածները մէջ բերել և երկու տեսակ՝ Դրոշմաք և Համեմատական գրոշմատուրքին ցուցակները ևս գնել: (թ. 1 և 2):

ՕՐԷՆՔ ԴՐՈՇՄԱՏՈՒՐՔԻ

Ընդհանուր արամադրութիւնք. — Հետեւեալ յօդուածին մէջ գրուած են գրոշմատուրքի ենթակայ եղող թղթերը:

Յօդ. 1. — «Փոխատուութեան և փոխառութեան գործողութեանց, ընկերութեանց և ուրիշ և է պայմանադրութեանց ու յանձնառութեանց վերաբերեալ ամէն տեսակ մուրհակներ, փոխանակագրեր, հրամանի կամ բերողին մուրհակներ, ստացագրեր և անդորրագրեր, սուանդագրեր, ընկերութեանց բաժնեթղթեր և պարտաթղթեր, չէքերն և բոլոր Առևտրական քղրերն և անհատներու միջեւ փոխանակուած բոլոր թղթերը, կառավարական սնտուկներու, դիւաններու, գանձային և կառավարական ուրիշ պաշտօնեաներու տրուած յանձնառագրերն, ստացագրերն, անհատական գործերու համար զանազան պաշտօնէութեանց ներկայանալի ծանուցագրեր, տեղեկագրեր և խնդրագրեր, Շէրիի դատարաններէ տրուած ամէն տեսակ Հեօճեքներ, վճռագրեր, Գասաւի Տեփքերներ (Inventaire) և ուրիշ օրինական Սենեքներ, արտօնագրեր, դատական հրամանագրեր, արձանագրութեան և այլ ծանուցագրեր, ամսականի, Սեհիւմի և ուրիշ թոշակներու ընկալագրեր, քաղաքական և առեւտրական դատարաններէ և ուրիշ ժողովներէ տրուած տեղեկագրեր և վճռագրեր, կառավարական պաշտօնատուներէ անհատներու տրուած թղթերու, մուրհակներու և արձանագրութեանց պատճէններու, կառավարութեան և մասնաւոր անհատներու միջեւ դաշնադրութիւն մը պարունակող մուրհակներ, ամէն տեսակ ծանուցումներ և ազդարարագրեր, անցագրեր, բեռնագրեր, փոխադրագրեր, ապահովագրեր և վերջապէս ի հարկին կառավարական դատարաններու և ժողովներու ներկայացուելիք և որ և է գործողութիւն մը հաստատող բոլոր գրութիւնք, ինչպէս և լրագիրք»:

Յօդ. 28. — «Պատիժ օրինագանցութեան գրոշմատուրքի. — Այն առեւտրական թղթերը (փոխանակագիր, հրամանի տոմսակ, չէք և շէ) որք անդրոշմ թղթի վրայ գրուած են, չեն կրնար վայելել այն համերաշխութեան առաւելութիւնը, զոր Օսմ. Առեւտրական Օրինագիրքը իր 76 և 78րդ յօդուածներով գծած է:

Անդրոյժ թղթին փոխանցողը կ'ազատին իրենց օրինական պատասխանատուութենէն . և երբ փոխանակագիրը չ'ընդունուի՝ թղթին տէրը անոր գումարը պահանջելու համար միմիայն քաջողին կրնայ դիմել և դատ բանալ . իսկ երբ ընդունուի՝ թէ՛ քաջողէն և թէ՛ ընդունողէն կը պահանջէ , և եթէ քաջողը հաստատէ վճարօրին փոխանակագրին փոխարէնը ընդունողին զբրկած ըլլալը՝ քաջողն ալ մէջէն կ'ելնէ , և թղթին տէրը ինքզինքը միմիայն ընդունողին դէմ կը գանայ . որմէ միայն կրնայ պահանջել անոր գումարը :

Ահաւասիկ ինչ որ քիչ առաջ ըսած էինք թէ՛ Դրոյժի Օրէնքը խիստ պատիժներ սրտած է գայն պարտաւորիչ ընելու համար : Փոխանակագիրը , իր վրայ գանուած դանդաւան ստորագրութեանց համար մեծ երաշխաւորութիւններ ունէր . (Տե՛ս Թ. 146) կը տեսնուի այժմ թէ՛ պզտի դանցառութիւն մը ո՛ր աստիճան շահեր վասնդի կ'ենթարկէ . ասոր համար վերոյգրեալ յօդուածը մասնաւորապէս կը յանձնարարենք մեր գաւառացի ազգայնոց ուշադրութեան , որք տակաւին երբեմն անգործ թղթեր կը գնեն և Պօլիս կամ այլուր կը զրկեն :

Դրոյժանիշի գործածութեան կերպը . — Դրոյժանիշը պէտք է փակցնել առեւտրական թղթերու վրայ՝ գանոնք ստորագրելէ , ընդունելէ , փոխանցելէ և ստորագրելէ առաջ , և վերջապէս անոր վրայ տակաւին գործողութիւն մը չ'կատարած : Մէկ դրոյժանիշը երկու անգամ չ'գործածելու և մուրհակի մը գրոյժը նոյն իսկ անոր ստորագրուած կամ կնքուած ատեն փակցուած ըլլալը յայտնի ըլլալու համար , պէտք է որ կնիքին կամ ստորագրութեան և կամ թուականին մէկ մասը դրոյժանիշին վրայ գրուի : Եթէ մէկ թղթի վրայ քանի մը դրոյժանիշ թղթի փակցուած է , ամէնուն ալ վրայէն՝ առանց գրերն եղծանելու . պէտք է անցնի ստորագրութիւնը , կնիքը կամ թուականը , որպէս զի ամէնքն ալ ջնջուին : Եթէ այսպէս չ'ըլլայ , այդ տեսակ թղթերն՝ ըստ օրինի իբր անգործ կը նկատուին :

Դրոյժանուած դրոյժանագիրը կրկին գործածելու պատիժը . — Անգամ մը գործածուած դրոյժանիշ թղթերու ուրիշ թղթի մը համար կրկին գործածողին 3 տարուան բանտարկութիւն սրտուած է :

Թուրքիայէն օտար երկիրներու վրայ քաջուած թղթերն ալ Թ. 2 ցուցակին համեմատական դրոյժանագրին ենթակայ են : Միայն թէ՛ անոնք որովհետեւ տարբեր դրամներու համար քաջուած կ'ըլլան , ուստի Օրէնքը սրտած է որ անգղ. ոսկին 25 Ֆր. և Օ. լիբան 23 Ֆր.էն հաշուուի , այսինքն , 25 Ֆր.ը մէկ անգղ. ոսկի և 23 Ֆր.ը մէկ Օ. Լ. հաշուելով փակցուի դրոյժան-

թղթեր : իսկ ուրիշ տեսակ օտար դրամներով թղթերու համար՝ քաջուած օրուան հրապարակին գինովը հաշուելով պիտի դրուի դրոյժանիշ թղթեր . իսկ այն թղթերը , որք թէեւ օտար երկիրներէ օտար երկրի վրայ քաջուած՝ բայց Թուրքիոյ մէջ կը շրջաբերին , միայն կէս տուրքի , այսինքն , փոխանակ 1000 ին 1/2 ի 1/4 դրոյժանագրի ենթակայ են , այսինքն , Թ. 2 ցուցակին մէջի դրոյժանագրին կէսին :

Անդրոյժ թուրքը կարելի է դրոյժանագրել . — Ներկայ օրէնքը գործադրուած անգերը շինուած առեւտրական թղթերն երբ անգործ ըլլան՝ կարելի է անոնց վրայ դրոյժանիշ թղթի փակցնել , անոնց վճարօրէն և առաջին փոխանցումէն առաջ . միայն թէ ըստ օրինի փակցուելիք դրոյժանիշ երեք պատիկը փակցնել հարկ է : Օրինակի համար , 100 Լ. ի փոխանակագրի մը , որ եթէ գրուած ատեն դրոյժանիշ թղթի փակցուէր՝ 5 դշ. ի դրոյժանիշ թղթ պիտի շնչէինք , վերոյիշեալ պարագային՝ 15 դշ. ի պիտի փակցուի : Օրինակ , Տրապիզօնէն իմ հրամանիս քաջուած անգրոյժ փոխանակագիր մը ստացայ , գայն ընդունողին ներկայացուցած ատեննիս պէտք է որ անոր վրայ երեք պատիկ դրոյժանիշ թղթի փակցնեմ և այնպէս ընդունել տամ :

Տուգանք անդրոյժ քրքերու վրայ . — Անգրոյժ թղթերը որ և է աթիւ երբ դատարաններու , ժողովներու և ուրիշ պաշտօնական տեղ մը ներկայացնել հարկ ըլլայ՝ անոր վերաբերեալ գործողութիւնը կատարելէ առաջ , այդ ներկայացած անգրոյժ թղթին գումարին վրայ 0/0 3 տուգանք կ'առնուի , եթէ թուրքը համեմատական տուրքի ենթակայ թղթերէն ըլլայ . օրինակի համար 200 Լ. ի անգրոյժ հրամանի տոմսակի մը 0/0 3էն 6 Լ. տուգանք տալ հարկ է , մինչդեռ եթէ թուրքը գրուած ատեն դրոյժանիշ թղթ դրուէր , 10 դշ. ի դրոյժանիշ թղթ պիտի փակցուէր . իսկ ներկայացուած թուրքը եթէ սրտեալ տուրքի ենթակայ եղածներէն է՝ կէս Լ. էն մինչեւ 3. Լ. Օ. տուգանք կ'առնուի թուրքը ներկայացուած ատեն :

1884ի վերջերը անգղ. դրամատունք՝ այն յայտարարութեան վրայ զոր Պօլսոյ Հանրային Պարտուց Վարչութիւնը յղած էր իրենց , սկսան չ'զեղչել այն փոխանակագրերը , որք Թուրքիայէն անգրոյժ քաջուած էին : Ասոր վրայ թէեւ պահ մը սկսան դրոյժանիշ թղթ զնել , բայց վերջէն թուրքու և նոյն մերժող դրամատունք սկսան դարձեալ առջի պէս անգրոյժ թղթեր գեղջել , մինչեւ 1894 Մարտ , յորում օտարահպատակք եւս ենթարկուելով Դրոյժի Օրէնքին , այդ թուականէն սկսեալ Թուրքիայէն օտար երկրի վրայ քաջուած թղթերուն ալ դրոյժանիշ թղթ զնելը պարտաւորիչ եղաւ :

Թ Ի Ի 1 Յ Ո Ւ Ց Ա Կ

Որոշեալ դրոշմասուրք

Դասարաններէ եւ ժողովներէ տրուած այն ամէն վճարներն ու տեղեկագրերը, որք որոշ գումար մը չեն պարունակեր: Եւ վարչական ժողովներէ՝ Պօլիս կամ այլու ղրկուելու համար, խնդրոյ տեսնուելու յանձնուած ամէն տեսակ տեղեկագրեր	10
Յատկապէս խմբագրուած եւ կամ ի ներկայութեան դատարանին արձանագրուած փոխանորդագրեր	10
Արձանագրութեանց օրինակներ	3
Ձեկուցագրեր, բեռնագրեր, նաւաշէքի դաշնագրեր եւ փոխադրագրեր	10
Անհատներու միջեւ փոխանցուած անդորրագրեր եւ ստացագրեր	20
Քրտասարական եւ հեռագրական ստացագրեր	10
Աւանդագրեր	3
Երաշխաւորութեան մուրհակներու, առեւտրական դաշնագրերու, Քօմքոմէտներու, վաճառականաց եւ անհատներու միջեւ փոխանակուած դաշնագրերու եւ առեւտրական ու քաղաքական խնդրոց վերաբերեալ ընկերական դաշնագրութեանց բոլորէն ամէն մէկ օրինակին	10
Յոսս կայտերական Գահոյից մատուցուելիք աղերսագրեր	2
Պարզ խնդրագրեր	1
Արձանագրութեան, անցագրի եւ այլնի վերաբերեալ ծանօթագրեր, վարձագրեր	1
Արտօնագրեր	10
Քրտակցութիւնի (Շերիի վերաբերեալ)	20
Լրագիրներ եւ անհատներու կողմէն եղած յայտարարութիւնի	2
Ձեքեր	20
Փոխանակագրի կամ արժեքորոց գնման եւ վաճառման վերաբերեալ հաշուեզրեր, եւ նօթաները (փոխանակագրի հաշուեցուցակ), հաշուեցուցակներ եւ հաշուեքննարկներ	20
Անձնական գործոց համար ի պատճօնէ գրուելիք յայտագրեր եւ տեղեկագրեր	3
Ամէն տեսակ բօթեքսօններու իւրաքանչիւր օրինակը	2
Երկաթուղոյ ընդունագրեր	20

Թ Ի Ի 2 Յ Ո Ւ Ց Ա Կ

Համեմատական դրոշմասուրք

1	Ղ.ե.էն	մինչեւ	100	Ղ.ե. —	Փրլ. 10
101	»	»	1000	»	— » 20
1001	»	»	2000	»	1 » —
2001	»	»	4000	»	2 » —
4001	»	»	6000	»	3 » —
6001	»	»	8000	»	4 » —
8001	»	»	10000	»	5 » —
10001	»	»	15000	»	7 » 20
15001	»	»	20000	»	10 » —
20001	»	»	25000	»	12 » 20
25001	»	»	30000	»	15 » —
30001	»	»	35000	»	17 » 20
35001	»	»	40000	»	20 » —
40001	»	»	45000	»	22 » 20
45001	»	»	50000	»	25 » —
50001	»	»	55000	»	27 » 20
55001	»	»	60000	»	30 » —
60001	»	»	65000	»	32 » 20
65001	»	»	70000	»	35 » —
70001	»	»	75000	»	37 » 20
75001	»	»	80000	»	40 » —
80001	»	»	85000	»	42 » 20
85001	»	»	90000	»	45 » —
90001	»	»	95000	»	47 » 20
95001	»	»	100000	»	50 » —
100001	»	»	110000	»	55 » —

Եւ ամէն մէկ 10000 ղշ.ի ե կտտորակներուն համար՝ 5 ական ղշ.:



ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՐՈՐԴ

ՓՈՒՍԱՆԱԿՈՒԹԻՒՆ (ԳԱՄՊԻՕ)

Գրդ Գլխուն մէջ՝ փոխանակագրին առթիւ համառօտիւ անցանք փոխանակութեան (Գամպիօ) վրայ և խոստացանք ընդարձակօրէն խօսիլ անոր վրայ, ինչ որ պիտի ընենք հիմա:

Փոխանակութիւնը (Գամպիօ)⁽¹⁾ երկու առումով կը գործածուի. Ա.՝ միեւնոյն քաղաքին և միեւնոյն հրապարակին վրայ այլասեռ գրամներ իրարու հետ փոխանակել կը նշանակէ, որուն Լոււնայափոխոթիւն կ'ըսուի: Բ.՝ իրարմէ հեռու երկու քաղաքներու մէջ գրամի փոխանակութիւն կը նշանակէ, յորմէ ծագում առած է Փոխանակագիւնը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ երկու տարբեր երկիրներու կամ քաղաքներու գրամները իրարու հետ փոխանակելու չափը ցուցնող կամ որոշող գինը, որուն գործի լեզուով Գամպիօին գիւնը կ'ըսեն:

Վաճառականութեան ընդարձակ և բազմազան գործառնութեանց պատճառաւ՝ զանազան քաղաքներու հրապարակներ իրարու պարտական կամ իրարմէ պահանջող կ'ըլլան: Պարտական հրապարակը պէտք է որ պահանջող հրապարակին զրկէ իր պարտքը, որ ընդհանրապէս Փոխանակագրի միջոցաւ կը կատարուի:

Փոխանակութիւնը՝ որուն գործի լեզուով Գամպիօ կ'ըսուի, ինչ որ մենք ալ ասկէ ետքը նոյն բառը պիտի գործածենք, այն գործողութիւնն է, որով քաղաքի մը մէջ առնուած տարբեր գրամ մը կամ գոյացած պարտք մը ուրիշ քաղաքի մէջ միեւնոյն կամ տարբեր գրամով կը վճարուի:

Գ. Գլխուն մէջ սորվեցանք զնման և վաճառման գործողութիւններն և անոնց ինչ պայմաններու մէջ կատարուիլը:

Արդ՝ երբ պարտականը և պահանջողը միեւնոյն քաղաքը գտնուին, դիւրին կ'ըլլայ անոնց համաձայնիլ այդ պարտքին վճարման եղանակին վրայ, որ շատ անգամ կը կարգադրուի՝ որոշեալ պայմանաժամէ մը ետքը և միեւնոյն քաղաքին գրամովը վճարելի պարտականին ստորագրութեամբ հրամանի տոմսակով:

[1] Cambium իսպիւրէն բառ է, որ կը նշանակէ փոխանակութիւն:

նոյն բանը չի կրնար ըլլալ սակայն՝ երբ պարտականն ու պահանջողը տարբեր երկիրներ կամ քաղաքներ ըլլան: Պահանջատէրը իր զրկած ապրանքին փոխարէնը կամ ուրիշ հաշուէ առնելը միշտ չ'սպասեր որ պարտականը ուղղակի իրեն զրկէ. ուղղորտաբար ապրանքին հաշուեցոյցին հետ անոր վրայ փոխանակագիր կը քաշէ, որ՝ որոշեալ պայմանին համեմատ՝ կամ ճեարին, բուսիսեկե կամ Տեսօրեկե այսպէս օր կամ Ամիս ետքը և կամ Որոշեալ օր մը վճարելի կ'ըլլայ: (Տե՛ս Թ. 138 փոխանակագրի Պայմանաժամին վրայ գրուածը): Երբ պարտականն ու պահանջողը իրենց գտնուած քաղաքներուն մէջ միեւնոյն գրամը կը գործածեն առեւտուրի մէջ՝ քաշուելիք փոխանակագիրը բնականաբար նոյն գրամով կ'ըլլայ. օրինակի համար, եթէ պարտականը Սերաստիա ըլլայ և պահանջատէրը Պօլիս՝ այս վերջինը կընայ Օ. Լ. ի փոխանակագիր քաշել Սերաստիա իր պարտականին վրայ, քանի որ հս՛ն ալ գրամին միութիւնը Օ. Լիւրան է:

Եայց երբ պարտականն ու պահանջողը գտնուին տարբեր երկիրներ, որոց գրամի միութիւնը նոյնը չէ, պարտականը իր երկրին գրամէն զատ ուրիշ գրամով իր պարտքը վճարել չկրնալով, պահանջատէրն ալ նմանապէս իր պահանջքը իր երկրին գրամէն զատ ուրիշ գրամով ընդունիլ չուզելով՝ այն ատեն այս երկուքին միջեւ երեւան կուգան ուրիշ անձեր, որք երկու կողմին ալ գործը կը տեսնեն, այսինքն յանձն կ'առնեն մէկուն պարտքը վճարել և միւսին պահանջքը գանձել Փոխանակութիւն (Գամպիօ) ըսուած գործողութեամբ, որ երկու տարբեր երկիրներու միջեւ գրամներու փոխանակութիւնն է:

Օրինակ. եթէ պարտականը Պօլիս և պահանջատէրը Մանչէսթըր ըլլան, բնականաբար պահանջատէրը՝ իր զրկած ապրանքին հաշուեցուցակը անգղ. լիւրայի վրայ շինած ըլլալով՝ իր պահանջքն ալ անգղ. կամ սթէռլին լիւրայով պիտի ստանայ: Հետեւաբար Պօլիս գտնուող պարտականը իր երկրին գրամը, այսինքն, Օ. Լ. ն պիտի փոխանակէ՝ նոյն օրուան գամպիօի գինովն անգղ. լիւրայի և Մանչէսթըրի մէջ վճարելի փոխանակագրով մը, զոր Մանչէսթըրը իր պահանջատիրոջ պիտի զրկէ:

Թէ՛ այս և թէ՛ նախորդ օրինակին մէջ յիշուած փոխանակագրերը կը ներկայացնեն ուրեմն տարբեր երկրի որոշեալ գրամներ, և հետեւաբար որոշեալ ծանրութեամբ արծէքաւոր մետաղներ, ոսկի, արծաթ, ևլն, որք հեռաւոր քաղաքի կամ երկրի մէջ տեսօրին կամ որոշեալ պայմանաժամէ մը ետքը պիտի գանձուին:

Այսպէս քաղաքէ մը ուրիշ քաղաքի և երկրէ մը ուրիշ երկրի վրայ քաշուած փոխանակագրերն և չէքերը, որոնցմով

պարտքեր կը վճարուին և պահանջքներ կը գանձուին, Գարնայի անունով կը ներկայանան առեւտրական և սեղանաւորական հրապարակներուն վրայ, ուր կը գնուին ու կը ծախուին ապրանքներու պէս որոշեալ գինով, որ կ'աժաննայ և կը սղի:

Գարնայի երկու տեսակի կը բաժնենք. ներքին կամ Ազգային և Արտաքին կամ Միջազգային. և ընդհանրապէս առեւտրական հրապարակին վրայ Գարնայի բաւը աւելի այս վերջին տեսակին համար կը գործածուի:

Ներքին կամ Ազգային փոխանակութիւն. — Միեւնոյն երկրին մէջ քաղաքէ մը ուրիշ քաղաքի վրայ քաշուած և միեւնոյն դրամով վճարելի փոխանակագրի գործողութեանց կ'ըսուի ներքին փոխանակութիւն, որով երկու քաղաքներու միջեւ դրամի փոխադրութեան անպատեհութիւնք կը վերնան. օրինակ, Յակոբ որ Պօլիս կը գտնուի, Սեբաստիա իր պահանջատիրոջ 100 Լ. Օ. Ղրկել կ'ուզէ: Գրիգոր՝ Սեբաստիա տրամադրելի 100 Լ. Օ. ունի, զորս Պօլիս բերել կ'ուզէ: Արդ՝ Յակոբ և Գրիգոր կը համաձայնին որ՝ փոխանակ մէկը 100 լիբան Սեբաստիա Ղրկելու և միւսը անկէ 100 լիբան Պօլիս բերելու, Յակոբ տայ Գրիգորին 100 Լ. Օ. և անկէ առնէ Սեբաստիա վճարելի 100 Լ. Օ. ի փոխանակագիր մը: Այս կերպով ներքին փոխանակութիւն մ'եղաւ ըսել է. մէկուն պարտքը միւսին անցաւ, և միւսին պահանջքը անոր: Բայց Յակոբ միայն 100 Լ. տալով չի կրնար Սեբաստիա 100 Լ. ստանալ, բան մ'աւելի տալու է Գրիգորին այն ծախքին համար, զոր պիտի ընէր դրամը Սեբաստիա Ղրկելու համար: Միեւնոյն ատեն Գրիգոր ալ ընելիք ծախքեր ունէր 100 լիբան Սեբաստիաէն Պօլիս բերելու համար (թղթատարի և ապահովագրութեան ծախքեր). ըսել է թէ՛ երկու կողմէն ալ հաւասար ծախքեր ունին, զորս իրարու հետ փոխանակելով կը համաձայնին որ Յակոբ միայն 100 Լ. տալով Պօլիս Գրիգորին, սա եւս Սեբաստիա անոր հրամանին 100 Լ. տալու պարտաւոր ըլլայ, առանց իրարու Փոխանակագին վճարելու: Բայց գործնականին մէջ ամէն ատեն ասանկ չի պատահիր. երկու հրապարակներ միշտ իրարու հաւասար գումարով պարտական և պահանջող չեն կրնար ըլլալ, այսինքն, խօսքերնիս վերի օրինակին վրայ բերելով՝ չի կրնար ըլլալ որ Յակոբ Սեբաստիա 100 Լ. Ղրկել ուզած ատեն, միշտ դէմը գտնէ մէկը, որ նոյնպէս Սեբաստիաէն 100 Լ. Պօլիս բերել տալու պէտք ունենայ: Ահա այն ատեն է որ փոխանակութեան (Գամպիօ) գինը մէջտեղ կ'ելնէ և կ'որոշուի. այսինքն, եթէ չկրնայ գտնել մէկը որ միեւնոյն ատեն Սեբաստիաէն Պօլիս դրամ բերելու պէտք ունենայ՝ այն ատեն պիտի ստիպուի $\frac{1}{10}$ այսչափ աւելի տալով ուրիշի մը (որ ընդհանրապէս սեղանաւոր կ'ըլլայ), որ յանձն կ'առնէ այդ

գումարը Սեբաստիա վճարել: Ահա այդ $\frac{1}{10}$ այսչափն է որ ներքին փոխանակագին կ'ըսուի, ըստ որում փոխանակութեան գործողութիւնն ալ միեւնոյն երկրին մէջ կ'ըլլայ:

Ուրեմն ներքին փոխանակագինն այն է, զոր սեղանաւորը կ'առնէ իր ծախած այն փոխանակագրոց վրայ, զորս միեւնոյն երկրին երկու քաղաքներուն միջեւ և միեւնոյն տեսակ դրամով կը փոխանակէ, այսինքն, Օ. Լ. կ'առնէ և փոխարէն Օ. Լ. ով վճարելի փոխանակագիր կը տայ: Ներքին փոխանակագինն ընդհանրապէս այսչափ $\frac{1}{10}$ կ'ըլլայ, և փոխանակագրին վճարելի տեղայն հեռաւորութեան, այսինքն, այն քաղաքէն դրամ փոխադրելու դժուարութեանց կամ դիւրութեանց և փոխադրութեան ծախքին համեմատութեամբ կը տարբերին, $\frac{1}{2}$, 1, 2 և մինչեւ իսկ $\frac{3}{10}$ ևլն. կ'ըլլայ: Վերի օրինակին մէջ՝ եթէ Յակոբ իր Ղրկելիք 100 Լ. ին $\frac{1}{10}$ Փոխանակագին տալ հարկ ըլլայ՝ 1 լիբայ պէտք է տայ Գրիգորին, այդ մէկ լիբան ներքին փոխանակագին կ'ըսուի: Պէտք է գիտնալ թէ՛ ներքին փոխանակագինն, այսինքն, միեւնոյն տեսակ դրամով փոխանակուած փոխանակագրոց համար առնուած շահը, որ, ինչպէս ըսինք, $\frac{1}{2}$ — $\frac{3}{10}$ կ'ըլլայ, ամբողջապէս սեղանաւորին սնուող չի մտներ. այդ փոխանակագրին վրայ ինքն ալ ունի ընելիք ծախքեր, դրամին փոխադրութեան, թղթատարի, ի հարկին, հեռադրի ծախքեր, և իր թղթակցին տալիք յանձնառողչէքը ևլն: Նոյնպէս ներքին փոխանակագին կ'ըսուի այն շահը, զոր սեղանաւորը կ'առնեն հեռաւոր քաղաքներու մէջ գանձելի իրենց ծախուած փոխանակագրոց վրայ: Զորօրինակ, Վառնայ գտնուող վաճառական մը թօգաթ վճարելի 200 Լ. նոց թուղթ մ'ունի, զոր գանձելու համար այդ քաղաքին մէջ ծանօթ մէկը չունենալուն՝ սեղանաւորին կը ծախէ $\frac{1}{10}$ 2 (աւելի կամ պակաս) շահ մը տալով անոր, և ինք (թուղթը ծախողը) $\frac{1}{10}$ 2 վնաս մ'ընելով: Ուրեմն վաճառականը փոխանակագրին 200 Լ. ի գումարը ստանալու համար 4 Լ. Փոխանակագին (Գամպիօ տարբերութիւն) վճարած եղաւ, և կամ 200 Լ. ին տեղ 196 Լ. առաւ, մնացած 4 լիբան սեղանաւորին թողլով իբր ներքին փոխանակագին:

Ներքին փոխանակագինը Խնդրակի և Մասուցման բնական օրէնքին ենթակայ ըլլալով՝ եթէ երկու տարբեր հրապարակներ իրարու հաւասար քանակութեամբ պարտական կամ պահանջող ըլլան, մեր առջի օրինակին դառնալով՝ եթէ Սեբաստիաէն Պօլիս բերուելիք և Պօլսէն Սեբաստիա Ղրկուելիք դրամներուն գումարները, այսինքն, Խնդրակի և Մասուցման իրարու հաւասար ըլլան, այն ատեն՝ ինչպէս ըսինք, Փոխանակագին չըլլար, որուն գործի լեզուով Գոլախ գլխի (Au pair) կ'ըսուի: Եթէ Պօլսէն

Սեբաստիա դրամ ղրկել ուզողները շատ՝ և Սեբաստիայէն Պօլիս դրամ բերել ուզողները քիչ ըլլան՝ փոխանակագինը Սուդէ կ'ըսուի։ Իսկ ասոր հակառակն ըլլալով, եթէ Սեբաստիայէն Պօլիս դրամ բերել ուզողները շատ, և Պօլսէն Սեբաստիա դրամ ղրկել ուզողները քիչ ըլլան՝ փոխանակագինը Աժան է կ'ըսուի։

Արսաֆին կամ Միջագագային փոխանակութիւնը. — Տարբեր երկիրներէ իրարու վրայ քաշուած և այլասեռ դրամներով վճարելի փոխանակագրի գործողութեանց կ'ըսուի Արսաֆին կամ Միջագագային փոխանակութիւնը, և այս գործողութեանց շարքը որոշող գնոյն ալ Արսաֆին փոխանակագրին կ'ըսուի։ Արսաֆին փոխանակագրինն այն է, զոր սեղանաւորը կ'առնէ օտար երկիր վճարելի իր ծախած փոխանակագրոց համար, զորս իր երկրին դրամին հետ կը փոխանակէ, այսինքն, իր երկրին դրամը կ'առնէ և փոխարէն օտար երկրի մէջ օտար դրամով վճարելի փոխանակագիր կը սայ. օրինակի համար, Պօլսեցի վաճառական մը, որ Մանչէսթըր 100 անգղ. լիբայ ղրկել կ'ուզէ, սեղանաւորին կը դիմէ և ամէն մէկ անգղ. լիբային օսմ. ոսկեդրամ 110 ղշ. և աւելի կամ պակաս վճարելով՝ 100 անգղ. լիբայի փոխանակագիր մը կ'առնէ։ Արսաֆին փոխանակագրինը տարբեր երկիրներու մէջ գործածուած դրամոց թէ՛ շարքի և թէ՛ տեսակի կողմէ ունեցած յարգէն կատարում ունի. զորօրինակ, անգղ. լիբան իր չափովն օսմ. լիբայէն 10 ղշ. ոսկեդրամ աւելի յարգի է, այսինքն, Օ. լիբան 100 ղշ. արժեքն ընդամենը անգղ. կամ սթէլլին լիբան 110 ղշ. ոսկեդրամ կ'արժէ, դադղ. ոսկին՝ օսմ. լիբան դարձեալ 100 ղշ. հաշուելով՝ 88 ղշ. կամ քիչ մ'աւելի կամ պակաս կ'արժէ։ Ահա այդ զանազան դրամոց արժէքին տարբերութիւնն է, որ հրապարակին վրայ խնդրանքի և մատուցման համեմատութեամբ ստէպ ելեւէջներ ընելով՝ փոխանակութեանց վրայ շահ մը յառաջ կը բերէ։ Ինչպէս կ'երեւայ, Արսաֆին փոխանակագրինն այսչափ 1/10 չէ ներֆին փոխանակագրինն պէս, այլ օտար դրամներու միութեան վրայ հիմնուած է, զորս վերջը պիտի բացատրենք։

Գաւազիոյ գինին միտրոնը. — Ամէն հրապարակ իր տեղական սովորութեան համաձայն գամպիօի գինի միութիւն մ'առնի, որուն համեմատ կը հաշուին փոխանակագրոց գնման և վաճառման գործողութիւնք։

Գաղղիոյ հրապարակին գամպիօի գինին միութիւնը 100ն է և ըստ այնմ կը հաշուուի հոն միւս երկիրներու վրայ գամպիօի գիները։ (Տե՛ս Բ. մասին 8րդ Գլուխը) Անգղիոյ հրապարակին գամպիօի գինին միութիւնը մէկ սթէլլին լիբան է։

Թուրքիոյ հրապարակին սովորութեան համեմատ՝ Անգղիոյ վրայ քաշուած փոխանակագրին կամ սթէլլին լիբայի գամպիօին

միութիւնը սթէլլին լիբան է և գինը ղշ. լիբայ կ'որոշուի, այսինքն, մէկ սթէլլին լիբայի գամպիօ առնելու համար այսչափ (110 ղշ. աւելի կամ պակաս) Օսմ. դրուշ տալ հարկ է։ Գաղղիոյ վրայ քաշուած փոխանակագրին կամ ֆրանքի գամպիօին միութիւնը մէկ Օ. լիբան է, և գինը ֆրանքով կ'որոշուի, այսինքն, 25 Օ. Լ. տալով այսչափ (23 ֆր. աւելի կամ պակաս) ֆր. կ'առնուի։ Աւստրիոյ վրայ քաշուած փոխանակագրին կամ ֆիօրին գամպիօին միութիւնը դարձեալ մէկ Օ. լիբան է, և գինը ֆիօրինով կ'որոշուի, այսինքն, մէկ Օ. Լ. տալով այսչափ (11 ֆիօրին աւելի կամ պակաս) ֆիօրին կ'առնուի։ Գերմանիոյ վրայ քաշուած փոխանակագրին կամ մարքի գամպիօին միութիւնը նոյնպէս մէկ Օ. լիբան է, և գինը մարքով կ'որոշուի, այսինքն, մէկ Օ. Լ. տալով այսչափ (19 մարք աւելի կամ պակաս) մարք կ'առնուի։ (Տե՛ս Բ. մասին 8րդ Գլուխը ուր նշանակուած են Պօլսոյ հրապարակին վրայ օտար երկիրներուն գամպիօի գիները)։

Գաւազիոյ գինը եւ անոր ելեւէջը. — Անկարելի է ենթադրել թէ՛ որ և է քաղաքի մը վաճառականութիւնը ո՛րչափ ապրանք որ ներածէ, ա՛յնչափ ալ արտածէ, և հետեւաբար ներածող և արտածող վաճառականք իրենց այդ պարտքը (ներածողին) և պահանջը (արտածողին) գիւրաւ վերջացնեն ներածման և արտածման գումարներուն հաւասարութեան պատճառաւ, ասի անկարելի է. բաց կրնայ ըլլալ ժամանակ մը որ Լօնտրա Պօլսոյ շատ պարտք ունենայ, կամ Վանի վաճառականները Պօլսոյ վաճառականներուն շատ պարտք ունենան և ժամանակ մ'ալ քիչ։ Հետեւաբար ըսել է թէ երկու պարագային ալ՝ շարունակ զանազան գումարներով Լօնտրայի և Վանի վրայ փոխանակագրերը քաշելու ծախելու, և այդ քաշուած թղթոց ալ գնողներ գտնալու պէտքը կայ, կամ աւելի պարզն ըսելով՝ Մասնացումի և Յնդրանիֆ օրէնքը կայ միշտ ապրանքի առեւտուրին պէս։ Լօնտրայի և Վանի վրայ փոխանակագիր քաշող և գանոնք ծախել ուզողները՝ Մասնացում ընողներն են. իսկ այդ թղթերը գնել ուզողները՝ Յնդրանիֆ ընողներն են։ Ահա այս երկու պարագաներուն համեմատական շարին է որ գամպիօին գինին ելեւէջին տեղի կը տայ. օրինակի համար, եթէ Լօնտրայի վրայ թուղթ քաշողները շատ և գնողները քիչ ըլլան՝ կամ որ նոյնն է, Մասնացումը ո՛ր և է պատճառաւ շատ, և Յնդրանիֆ քիչ ըլլայ՝ այն ատեն կ'ըսենք թէ՛ Լօնտրայի գամպիօին գինը Աժան է. այդ պարագային՝ ծախողին համար աննպաստ և գնողին համար նպաստաւոր կ'ըլլայ։

Օրինակ. Գնեցի £ 100ի Լօնտրայի վրայ փոխանակագիր մը գ. 110 ղշ. և վճարեցի 110 Լ. Օ.։

Ասոր հակառակը՝ եթէ Լօնտրայի վրայ փոխանակագիր քա-
չողները քիչ և գնողները շատ ըլլան, կամ որ նոյնն է՝ Սնդ-
րակիր ո՛ր և է պատճառաւ շատ և Մասուրցումը քիչ ըլլայ՝ այն
ատեն կ'ըսենք թէ Լօնտրայի գամպիօի գինը Սուղ է. այդ պա-
րագային՝ ծախողին համար նպաստաւոր և գնողին համար ան-
նպաստ կ'ըլլայ. վերի օրինակն առնելով,

Ծախեցի £ 100ի Լօնտրայի փոխանակագիրը 111 դ.ի և առի
111 Լ. 0: Ըսել է մէկ լիրա շահ մ'ըրի:

Գամպիօին գինը կ'ազդուի նաեւ երկրի մը քաղաքական կա-
ցութենէն և դրամական տագնապներէն:

Արդ՝ վաճառականութեան ներածութեան պատճառաւ երբ
մէկ կողմէն՝ այսպէս դանազան քաղաքներէ ուրիշ քաղաքներու
և դանազան երկիրներէ տարբեր երկիրներու վրայ միշտ փոխա-
նակագիր քաշելու և միւս կողմէն՝ արտածութեան պատճառաւ
նոյն քաղաքներուն մէջ պարտքեր վճարելու համար դրամ դըր-
կելու պէտք ըլլալով, ըսել է թէ հրապարակին վրայ պիտի գըտ-
նուին միշտ փոխանակագիր ծախելու և գնելու տրամադիր ան-
ձինք: Եւ քանի որ ասի շարունակելի գործ մ'է և, ինչպէս բա-
ցատրեցինք, ամէն ատեն խնդրանքը մատուցումին և փոխա-
դարձաբար միեւնոյն համեմատութեան մէջ չէ, ուրկից յառաջ
եկած է սեղանաւորութիւնը, որուն գործն է ամէն ատեն այս
տեսակ թղթեր գնել անոնցմէ, որք միշտ փոխանակագիր քաշել
ու ծախելու պէտք ունին, և զանոնք ատեն մը պահելէ ետքը
չաճովը ծախել անոնց, որք արտածութեան պատճառաւ զանա-
զան քաղաքներ ունեցած պարտքերնին վճարելու համար փոխա-
նակագիր գնելու և զրկելու պէտք ունին. ըսել է թէ իրաց այս
վիճակին մէջ՝ սեղանաւորները կամ դրամատունները կ'որոշեն
գամպիօին գինը, որ, ինչպէս բացատրուեցաւ, ապրանքներու
գինին պէս փոփոխական է:

Գամպիօի գործողութիւններն այսօր եւրոպական գլխաւոր և
վաճառաչահ քաղաքներու մէջ ընդարձակ և կարեւոր գործ մը
եղած են:

Գամպիօին դասակարգութիւնը. — Գամպիօն կը բաժնեն այլ
և այլ կարգերու և զանոնք կ'անուանեն զանազան անուններով.
Երբեմն նոյն երկրին կամ անոր մայրաքաղաքներուն կամ գլխա-
ւոր քաղաքներուն անունովը կը խօսուի այն փոխանակագրոց հա-
մար ուր վճարելի են: Զորօրինակ՝ Անգլիոյ, Գաղղիոյ, Աւստրիոյ,
Գերմանիոյ, Ռուսիոյ ևլն. վրայ քաշուած թղթերուն համար
Լօնտրան, Փարիզը, Վիեննան ևլն. Աժակ կամ Սուղ է կըսուի:
Երբեմն ալ վճարելի դրամին անունովը կը զանազանեն և Սքոթ-
լինը, Ֆրանսիը, Ֆիօրինը, Մարիը ևլն, Աժակ կամ Սուղ է

վրայ, որով Լօնտրայի, Փարիզի, Վիեննայի, Պէրլինի վրայ
քաշուած գամպիօները կամ փոխանակագրերը ըսել կ'ուզեն:

Արտաքին փոխանակութեան կամ գամպիօին ճեսակները. —
Ինչպէս թ. 244 երեսին մէջ ըսինք, առեւտուրի մէջ Գամպիօ ը-
մէջ աւելի եւրոպական քաղաքներու վրայ քաշուած և օտար
գրամներով վճարելի փոխանակագրեր կը հասկցուի, ուստի և
գամպիօին տեսակները ըսած ատեննիս ալ այդ կարգի փոխա-
նակագրերը հասկնալու է:

Արտաքին փոխանակութիւնը երկու տեսակ է:

1. Կարճ փոխանակագիր, որ տեսօրին կամ մէկ ամիսէն պա-
կաւ պայմանաժամով թղթ երու կ'ըսուի:


2. Յ/արեւեայ կամ երկայն փոխանակագիր, որք ընդհանրա-
պէս Յ/արեւ. և երբեմն ալ Չ/ամիս, 41, 31 ևլն. օր պայմանա-
ժամներով կը քաշուին:

Քանի որ գամպիօն այսպէս երկու տեսակի բաժնեցինք, հե-
տեւաբար գինն ալ երկուքի կը բաժնուի, Կարճ և Երկայն փո-
խանակագրի գին: Այս գինը իւրաքանչիւր եւրոպական մայրա-
քաղաքի կամ գլխաւոր քաղաքի սեղանաւորական հրապարակը
կ'որոշէ ամէն օր իրեն յատուկ սակարանին միջոցաւ, և այդ գի-
նը կը հրատարակուին նոյն քաղաքներուն տեղական թերթե-
րու սեղանաւորական բաժնին մէջ: Գալով Պօլսոյ հրապարակին
գամպիօի գիներուն՝ անոնք ալ գրեթէ ամէն օր կ'որոշուին գըլ-
խաւոր դրամատանց՝ Պանք Օթօմանի, Գուէտի Լիօնէի պահան-
ջած գիներուն վրայ:

Հայ և օտար լեզու թերթերուն սակարանի բաժնին մէջ կը
հրատարակուին ամէն օր Լօնտրայի, Փարիզի, Պէրլինի և Վիեն-
նայի վրայ քաշուած Յ/ամս. և կարճ փոխանակագրոց և չէքե-
րուն գիները: (Տե՛ս Բ. մասին 8րդ Գլուխը, ուր թուրքիոյ և
եւրոպական գլխաւոր տէրութեանց գամպիօի գնոց ցուցակները
գրած ենք):



ԳԼՈՒԻ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՐՈՐԴ



ՀԱՇՈՒԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Հաստատ բաժանարարներ. — Տոկոսաւոր հաշուընթացի և փո-
խանակագրի հաշուց վրայ (քիչ վերջը) խօսած ատեննիս ըսած
ենք թէ՛ դուժմարը օրին հետ բազմապատկելով արտադրեալ տո-
կոսարեր թիւը հաստատ բաժանարարով բաժնելու է: Հոս կը
գնենք երկու ցուցակ, որք տարեկան 1¹/₂ էն 12⁰/₁₀ տոկոսի սակե-

բուն հաստատ բաժանարարները կը ցուցնեն: Այս ցուցակներէն մին՝ տարին 365 և միւսը՝ 360 օրի վրայ շինուած է: Երբ հաստատ բաժանարարը երկու թիւէն աւելի ունենայ՝ աւելորդ է սոյն բաժանարարով բաժնել, այլ աւելի դիւրին է գտնուած թիւերը բազմապատկել նախ տակոսի սակոյն և ետքը բաժնել տարւոյն օրերովն, 365ով կամ 360ով:

Հաստատ բաժանարարը գտնելու համար, եթէ տարին 360 օր հաշուենք՝ 100 ով բազմապատկելով արտադրեալը տակոսի սակովը բաժնելու է: Այս կերպով մենք ալ կը շինենք երկու ցուցակները:

ՅՈՒՅԱԿ ՀԱՍՏԱՏ ԲԱԺԱՆԱՐԱՐՆԵՐՈՒ

1¹/₂ - 12⁰/₁₀ սարեկան սակի, սարին 365 օր հաշուուած

Սակ տակոսի	Հաստատ բաժանարար	Սակ տակոսի	Հաստատ բաժանարար
1 ¹ / ₂ ⁰ / ₁₀	24333	7 ⁰ / ₁₀	5214
2 »	18250	7 ¹ / ₂ »	4866
2 ¹ / ₂ »	14600	8 »	4562
3 »	12166	8 ¹ / ₂ »	4294
3 ¹ / ₂ »	10428	9 »	4055
4 »	9125	9 ¹ / ₂ »	3842
4 ¹ / ₂ »	8111	10 »	3650
5 »	7300	10 ¹ / ₂ »	3476
5 ¹ / ₂ »	6636	11 »	3318
6 »	6083	11 ¹ / ₂ »	3174
6 ¹ / ₂ »	5615	12 »	3042

ՅՈՒՅԱԿ ՀԱՍՏԱՏ ԲԱԺԱՆԱՐԱՐՆԵՐՈՒ

1¹/₂ - 12⁰/₁₀ սարեկան սակի, սարին 360 օր հաշուուած

Սակ տակոսի	Հաստատ բաժանարար	Սակ տակոսի	Հաստատ բաժանարար
1 ¹ / ₂ ⁰ / ₁₀	24000	7 ⁰ / ₁₀	5143
2 »	18000	7 ¹ / ₂ »	4800
2 ¹ / ₂ »	14400	8 »	4500
3 »	12000	8 ¹ / ₂ »	4235
3 ¹ / ₂ »	10286	9 »	4000
4 »	9000	9 ¹ / ₂ »	3790
4 ¹ / ₂ »	8000	10 »	3600
5 »	7200	10 ¹ / ₂ »	3428
5 ¹ / ₂ »	6545	11 »	3273
6 »	6000	11 ¹ / ₂ »	3130
6 ¹ / ₂ »	5538	12 »	3000

Ձեղչի ցուցակի հաշիւներ

97 Սեպտ. 8ին հետեւեալ տոմսակները ⁰/₁₀ Զով գեղչել տուի.
 քուս ս՞րչափ պիտի առնեմ.
 £-0. 150.— Վճօր. 28 Սեպ. × 20օր = 3000 20850ը ⁰/₁₀ Զին հաստատարա.
 » 200.— » 5 Հոկ. × 27 » = 5400 Ժանարարովը (360 օրի
 » 50.— » 31 » × 53 » = 2650 վրայ) 4000ով բաժնելով՝
 » 100.— » 15 Դեկ. × 98 » = 9800 գեղչը կ'ըլլայ £ 0. 5. 21¹/₄
 £-0. 500.— 20850 գոր հանելով մայր գու-
 » 5. 21¹/₄ մարէն գուտ գանձելի կը
 £-0. 494. 78³/₄ մնայ £. 0. 494. 78³/₄

Հետեւեալ թղթերը Լօնտրա ղրկելով Զի նոյեմ. 2ին ⁰/₁₀ 3 ով
 գեղչուեր է. գուտ ս՞րչափ բռներ է.
 £ 200.— Վճօր. 28 նոյմ. × 26 օր = 5200 24800ը ⁰/₁₀ 3ի հաստատ
 » 250.— » 15 Դեկ. × 43 » = 10750 բաժանարարովը (365օրի
 » 150.— » 31 » × 59 » = 8850 վրայ) 12166ով բաժնելով՝
 £ 600.— — 24800 գեղչը կ'ըլլայ £ 2-1, գոր
 » 2.— . 1 հանելով մայր գուտ մարէն
 £ 597. 19. 11 գուտ կ'մնայ £ 597. 19. 11

Հետեւեալ թղթերը Փարիզ ղրկելով 97 Դեկտ. Զին ⁰/₁₀ 2ով
 գեղչուեր է. գուտ ս՞րչափ բռներ է.
 Ֆր. 2000.— Վճօր. 25 Դեկ. × 16 օր = 32000 291500ը ⁰/₁₀ 2ի հաստատ
 » 3500.— » 15 Յնվ. × 37 » = 129500 բաժանարարովը (360օրի
 » 2500.— » 30 » × 52 » = 130000 վրայ) 18000ով բաժնելով՝
 Ֆր. 8000.— 291500 գեղչը եղած է ֆր. 16. 20
 » 16. 20 գոր հանելով մայր գուտ մար-
 Ֆր. 7983. 80 րէն գու. կ'մնայ Ֆր. 7983. 80

ԳՐԱՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎՆԵՐ

Լօնտրայի կամ Սրբոշիկի փոխանակագրեր

Անգղիայէն ապրանք ներածող թուրքիացի վաճառականք
 կամ Անգղիոյ վրայ սթէպլինի փոխանակագիր քաշող դրամա-
 տունք՝ անոնց փոխարէնները վճարելու համար իրենց հաշուոյն ծախ-
 սելու համար կամ Թուրքիոյ բերքերէն՝ թիֆթիկ, աֆիօն, գանա-
 զան մորթեր, գահրի, խէժ, գորգ ևլն. կը ղրկեն. կամ Անգղիոյ
 վրայ քաշուած սթէպլինի չէք կամ Յամա. փոխանակագրեր, որք
 ինչպէս ըսինք, 0. վրայի հետ փոխանակելով կ'առնուին և որուն

գամպիտին գինը 108-111 ղշ. և աւելի իսկ կ'ըլլայ: Սթէտլինի գամպիտի առուծախի մէջ 1/2 փր.ի իսկ սակարկութիւն կ'ըլլայ փոխանակազնոյն վրայ. օրինակի համար 109¹²1/2, 110 37¹2:

Նոյնպէս Գաղղիաէն և եւրոպական ուրիշ երկիրներէ ապրանք ներածողք եւս իւրաքանչիւր երկրին վրայ քաշուած փոխանակազրեր զրկելու պէտք ունին, որք ընդհանրապէս չէք կամ 3/ամս. և կամ 2/ամս. 1/ամս. 41.31.15.11 օրուան կ'ըլլան, վերջապէս քանի օրուան համար որ ուզուի, մինչեւ իսկ տեսօրէն 3 օր ետքը:

Նախ 3/ամս. թղթոց հաշիւներուն վրայ պիտի խօսինք, ետքը կարճ՝ այսինքն, 3 ամիսէն պակաս պայմանաժամով թղթոց վրայ:

3/ամս. Արեւոյի փոխանակագիրք

1. £ 350ի 3/ամս. Լօնտրայի թուղթ մը գնեցի գ. 109 7/8. քանի՞ 0. Լ. պիտի վճարեմ:

Լուծումն

350 x 109,875 = Լ. 0. 384.56¹4

Մէկ սթէտլին գամպիտին գինը 109⁷8 ղշ. է ուստի £ 350ը 109⁷8ով բազմապատկելով եղաւ Լ. 0. 384.56¹4, զոր պիտի վճարեմ այդ թուղթը գնելու համար:

2. Ետեցի £ 420.18.6ի 3/ամս. թուղթ մը գ. 109⁵1/2. քանի՞ 0. Լ. պիտի աւնեմ:

Լուծումն

420.925(*) x 109.625 = Լ. 0. 461.44

Մէկ սթէտլինի գինը 109⁵8 ղշ. է, ուստի £ 420.18.6ը 109⁵8ով բազմապատկելով՝ եղաւ Լ. 0. 461.44, զոր պիտի ստանամ այդ թուղթը ծախելու համար:

3/ամս. Փրանսի փոխանակագիրք

3. Գնեցի 4500 ֆր.ի 3/ամս. թուղթ մը Փարիզի վրայ գ. 22.97¹2. քանի՞ 0. Լ. պիտի վճարեմ:

Լուծումն

4500 / 22,97¹2 = Լ. 0. 195.86¹2

[1] 18 շիլին 6 բենին աստորականը:

Յրանքի գամպիտին գինը մէկ 0. Լ. ին 22.97¹2 ֆր. է, ուստի 4500 ֆր.ին մէջ որքան 22.97¹2 որ կայ՝ այնքան 0. Լ. պիտի վճարեմ:

4. Ետեցի ֆր. 2520.50ի 3/ամս. թուղթ մը Լիոնի վրայ գ. 23.10. քանի՞ Լ. պիտի աւնեմ:

Լուծումն

2520,50 / 23,10 = Լ. 0. 109.11

3/ամիսէն պակաս պայմանաժամով քղթոց հաշիւ

Կարճ, այսինքն, երեք ամիսէն պակաս պայմանաժամով գամպիտները 3/ամիսէն (90 օրէն) քանի՞ օր առաջ որ վճարելի են, այնքան օրուան տոկոսը եւս՝ այդ փոխանակագիրը եւրոպական երկրին վրայ որ քաշուած է, նոյն երկրին տոկոսին օրուան տոկովը (1) կը հաշուուի և թղթին արժէքին վրայ բարդուելով հաշուուին և կը ծախուին այդ տեսակ թղթերը:

Այս կարգէն են այն թղթերը, որք թուականէն 1-2 ամիս կամ այսքան օր ետքը կամ այսինչ ամսուն այնինչ օրը վճարելի են, չէքերը, տեսօրէն այսքան օր ետքը վճարելի փոխանակագրերը, հեռագրով ծախուած սթէտլինի, ֆրանքի, ֆիօրինի, մարքի և ուրիշ տեսակ դրամներու հրամաններն, և առ հասարակ այն փոխանակագրերը, որոնց պայմանաժամը 90 օրէն առաջ կը լրանայ:

Կը պատահի որ, զորօրինակ, Լօնտրայի վրայ 3/ամս. թղթերն իրենց վճարելի հրապարակին (Լօնտրայի) տոկոսի սակը թէեւ 0/0 3 է, զոր Անգղիոյ Պանքան կ'որոշէ, բայց ուրիշ պանքաներ մինչեւ 0/0 2ով և աւելի պակասով ալ կը զեղչեն. (2) այն տեսն Պօլսոյ կամ ուրիշ հրապարակներու վրայ 3/ամս. թղթերը չէքէն յարգի կ'ըլլան, և 5-10 փարա աւելի սուղի կը ծախուին: Որովհետեւ Պօլսէն Անգղիոյ վրայ 3/ամս. թուղթ մ'աւնենք և Լօնտրա զրկենք, հոն պիտի կրնանք 0/0 2ով զեղչել տալ, որ տարեկան 0/0 1 տարբերութիւն ընելով (օրուան սակը 0/0 3 ենթադրելով) 3/ամսեային վրայ 0/0¹4 այսինքն մէկ սթէտլին լիբային վրայ 10 փր.

[1] Գաղղիոյ, Անգղիոյ եւ եւրոպական ուրիշ երկրներու գամպիտի տոկոսի սակերը ասեմ ասեմ կը փոխուին եւ ամէն փոփոխութիւն նեւազրով կը ծանուցուի ամէն կարեւոր հրապարակներու, զոր մեք ալ հոս կը կարգանք տեղական լրագրաց նեւագրոց բաժնին մէջ բէ՝ «Անգղիոյ կամ Գաղղիոյ պանքան իր տոկոսի սակը 0/0 2 էն 3 ի բարձրացուց կամ 0/0 4 էն 3 ի իջեցուց»:

[2] Տե՛ս թ. 117 երեսի ծանօթութիւնը:

կը շահինք ըսել է. ահա այդ տարբերութիւնն է, զոր ծախողը գիտնալով ի Պոլիս, կ'ուզէ գնողէն առնել: Իսկ եթէ տոկոսի այդ տեսակ տարբերութիւն մը չըլլայ, այն ատեն յայտնի է թէ, Յամեսան և չէքը միեւնոյն գինով կը ծախուին: Ասոր հակառակը, եթէ Փարիզի տոկոսին սակը, զոր Գաղղիոյ Պանքան կ'որոշէ, $\frac{0}{100}$ Յ եղած ատեն, $\frac{0}{100}$ Կի բարձրանալու հաւանականութիւն ըլլայ, Փարիզի վրայ չէքը Յամես. թղթէն յարգի կ'ըլլայ և $\frac{5}{100}$ սանթիմ կամ աւելի սուղի կը ծախուի: Որովհետեւ փոխանակ չէքի եթէ նոյն օրը Յամես. առնենք և Փարիզ զրկենք՝ մինչեւ որ թուղթը հոն հասնի, տոկոսը ենթադրենք թէ $\frac{0}{100}$ Կի պիտի բարձրանայ, այն ատեն պիտի ստիպուինք $\frac{0}{100}$ Կով զեղչել տալ այդ թուղթը. յորմէ յառաջ պիտի գայ $\frac{0}{100}$ 1 ֆուս մը կամ տարբերութիւն մը, զոր Յամեսի վրայ հաշուելով $\frac{0}{100}$ կամ մէկ լիբային 10 փր. պիտի կորսնցնենք, որ 5 սանթիմի չափ կ'ընէ. ահա այդ տարբերութիւնն է որ այս տեսակ պարագայի մը մէջ՝ չէք ծախողը գիտնալով զնոյրին ձգել շուգեր և ինքը կ'ուզէ առնել:

Թուականէն 1-2 ամիս կամ այսֆան օր նսր վնասելի փոխանակագիրք

1. Գնեցի թուականէն 1ամիսէն վճարելի £ 150ի Լոնտոնի թուղթ մը գ. 108 $\frac{1}{2}$. Անգղիոյ տոկոսի սակն է 3 $\frac{1}{2}$ $\frac{0}{100}$. քանի՞ 0. Լ. պիտի վճարեմ այդ թղթին թէ՛ գրամագլխին և թէ՛ տոկոսին համար:

Լուծումն

Նախ պիտի հաշուենք թէ £ 150ը 108 $\frac{1}{2}$ էն քանի՞ 0. Լ. կ'ընէ:
 $150 \times 108,75 = Լ. 0. 163.12\frac{1}{2}$

Ետքը Լ. 0. 163.12 $\frac{1}{2}$ ին $\frac{0}{100}$ 3 $\frac{1}{2}$ էն 60 օրուան տոկոսը պիտի գտնանք, որովհետեւ 108 $\frac{1}{2}$ ը Յամես. փոխանակագրին գինն է, մինչդեռ մեր գնած թուղթը 1ամես. ըլլալով: Ըսել է (90 օրէն) 60 օր առաջ պիտի գանձենք, ուստի և այդչափ օրուան տոկոսը ծախողին տալու պարտական ենք:

Գիտենք արդէն թէ՛ դումարի մը այսչափ օրուան տոկոսը գտնալու համար օրերը դումարին հետ բազմապատկելով արտադրեալը տոկոսի սակին Հաստատ քաժանարարովը բաժնելու է: Ուստի Լ. 0. 163.12 $\frac{1}{2}$ ը 60ով բազմապատկելով՝ 3 $\frac{1}{2}$ ին հաստատ բաժանարարովը, որ է 10286, կը բաժնենք:

Այսպէս պիտի հաշուենք նաև յաջորդ և նմանօրինակ դամպիտի խնդիրները:

$$\frac{163,12\frac{1}{2} \times 60}{10286} = Լ. 0. — .95 \text{ Տոկոս}$$

Ուրեմն դրամագլխին համար պիտի վճարեմ Լ. 0. 163.12 $\frac{1}{2}$
 60 օրուան տոկոսին համար » — .95
 Ընդամէնը Լ. 0. 164.07 $\frac{1}{2}$

2. Գաշեցի այսօր Մանչեսթրի վրայ թուականէն 15 օրէն վճարելի £ 300ի թուղթ մը, և ծախեցի 109 $\frac{1}{2}$ ի, սակ տոկոսի 4 $\frac{0}{100}$. քանի՞ 0. Լ. պիտի առնեմ:

Լուծումն

$$300 \times 109,125 = Լ. 0. 327.37\frac{1}{2}$$

Մեր ծախած թուղթը 15 օրէն վճարելի ըլլալով՝ այսինքն, Յամիսէն (90 օրէն) 75 օր առաջ վճարելի, և 109 $\frac{1}{2}$ ը Յամես. գամպիտի գինն է, ուրեմն մեր իրաւունքն է նոյն թղթին 75 օրուան տոկոսն առնել զնոյրէն, զի ինքն ալ այնքան օր առաջ պիտի գանձէ:

$$\frac{327,37\frac{1}{2} \times 75}{9000} = Լ. 0. 2.73 \text{ Տոկոս}$$

Ուրեմն դրամագլխին համար պիտի առնեմ Լ. 0. 327.37 $\frac{1}{2}$
 75 օրուան տոկոսին համար » 2.73
 Ընդամէնը Լ. 0. 330.10 $\frac{1}{2}$

3. Գնեցի այսօր թուականէն 2ամես. 4000 ֆր.ի թուղթ մը Մարսիոյ վրայ գ. 23 ֆր. սակ տոկոսի 3 $\frac{1}{2}$ $\frac{0}{100}$. որչափ պիտի վճարեմ:

Լուծումն

$$\frac{4000}{23} = Լ. 0. 173.91$$

Գնած թղթերնիս 2 ամիսէն, այսինքն, 60 օրէն վճարելի ըլլալով՝ 30 օրուան տոկոսն ալ պիտի վճարենք ծախողին Գաղղիոյ տոկոսին նոյն օրուան սակովն, որ է 3 $\frac{1}{2}$ $\frac{0}{100}$:

$$\frac{173,91 \times 30}{10286} = Լ. 0. — .51 \text{ Տոկոս}$$

Ուրեմն դրամագլխին համար պիտի վճարեմ Լ. 0. 173.91
 30 օրուան տոկոսին համար » — .51
 Ընդամէնը Լ. 0. 174.42

4. Ծախեցի այսօրուրէն 21 օր ետքը վճարելի Լիօնի վրայ ֆր. 8725,30ի թուղթ մը գ. 22.97 $\frac{1}{2}$, սակ Գաղղիոյ տոկոսին 4 $\frac{0}{100}$. քանի՞ 0. Լ. պիտի առնեմ:

Լուծումն

$$\frac{8725,30}{22,97\frac{1}{2}} = Լ. 0. 379,77\frac{1}{4}$$

Մեր ծախած թուղթը 21 օրէն վճարելի ըլլալով՝ այսինքն, Յամիսէն (90 օրէն) 69 օր առաջ վճարելի, ուստի մեր իրաւունքն է գնողէն պահանջել նոյնքան օրուան տոկոսը, քանի որ ինքն ալ այնքան օր առաջ պիտի գանձէ:

$$\frac{379,77\frac{1}{4} \times 69}{9000} = 1.0.2.91 \text{ Տոկոս}$$

Ուրեմն դրամագլխին համար պիտի առնեմ	1. 0. 379,77 $\frac{1}{4}$
69 օրուան տոկոսին համար	» 2,91
Ընդամենը	1. 0. 382,68$\frac{1}{4}$

Տեսօրին վճարելի փոխանակագրոց եւ չեփերու հաշիւ

Պէտք է գիտնալ թէ՛ չէքերուն եւ տեսօրին փոխանակագրոց համար Յամն. (90 օրուան) տոկոս չվճարուիր, այլ 90 օրէն պակասեցնելով այնքան օր, որքան օր որ կը տեւէ այն տեսակ թղթի մը առնուած քաղաքէն մինչեւ վճարելի քաղաքը հասնելու օրն՝ մնացած օրերուն չափ տոկոս կը վճարուի:

Ըստ այնմ կ. Պօլսէն Լօնտրա թղթատարի ճամբով տեւողութիւնը 5 օր (1) ըլլալով այս 5 օրը 90էն իջնելով 85 օրուան տոկոս կ'առնուի եւ կը տրուի Լօնտրայի կամ անգղիական ուրիշ քաղաքներու վրայ քաշուած չէքերու համար:

Այս սկզբունքով՝ Փարիզի, Պէրլինի, Վիէննայի, Բեդերսպուրկի, եւ ուրիշ աւելի հեռու կամ աւելի մօտ քաղաքներու համար ալ աւելի կամ պակաս օր կ'իջնեն 90 օրէն ճամբուն տեւողութեանը համար:

1. Գնեցի £ 200ի Լօնտրայի վրայ չէք մը գ. 110 $\frac{3}{8}$. սակ տոկոսի 3 $\frac{1}{10}$, որքան պիտի վճարեմ:

Լուծումն

$$200 \times 110,375 = 1.0.220,75$$

Ետքը 1. 0. 220,75ին 85 օրուան $\frac{3}{10}$ (5 օր ճամբուն տեւողութիւնը 90 օրէն իջնելով) տոկոսը պիտի գտնենք, որ կ'ընէ.

$$\frac{220,75 \times 85}{12000} = 1.0.1,56\frac{1}{4} \text{ Տոկոս}$$

Ուրեմն դրամագլխին համար պիտի վճարեմ	1. 0. 220,75
85 օրուան տոկոսին համար	» 1,56 $\frac{1}{4}$
Ընդամենը	1. 0. 222,31$\frac{1}{4}$

2. Գնեցի 3520 ֆր.ի Փարիզի վրայ չէք մը գ. 22.85. սակ տոկոսի 3 $\frac{1}{10}$. քանի՞ 0. Լ. պիտի վճարեմ:

Լուծումն

$$\frac{3520}{22,85} = 1.0.154,05$$

[1] Թէեւ եւրոպական արդի նէպրնբաց կառախումբը 4 օրէն ալ կանուի Լօնտրա կը հասնի, բայց դարձեալ, ուս հին սովորութեան, չեփերուն 85 օրուան տոկոս կը հաշուեն ի Պօլիս:

Գնած թուղթս չէք ըլլալով՝ ճամբուն տեւողութեան համար ըստ սովորութեան 5 օրն (1) 90 օրէն իջնելով, 85 օրուան 1. 0. 154,05ին տոկոսն եւս պիտի տամ Փարիզի տոկոսի օրուան սահման, որ կ'ընէ

$$\frac{154,05 \times 85}{12000} = 1.0.1.09 \text{ Տոկոս}$$

Ուրեմն դրամագլխին համար պիտի վճարեմ	1. 0. 154,05
85 օրուան տոկոսին համար	» 1,09
Ընդամենը	1. 0. 155,14

Երբեմն ալ չէքերը կը ծախուին տոկոսն ալ գինին վրայ բարգելով, որուն կ'ըսուի Tel quel. գորօրինակ,

3. Գնեցի 6872,50 բուպլի Ս. Բեդերսպուրկի վրայ չէք մը գ. 8,60 թէքէլ տոկոսը վրան, որքան պիտի վճարեմ:

Լուծումն

$$\frac{6872,50}{8,60} = 1.0.799,13$$

Այս կարգէն են նաեւ մարքի չէքերն եւ ֆիօրինի հրամանագրերը (Wanisa), որոցմէ ալ մէկ օրինակ կը դնենք հստ:

Ֆիօրինի եւ մարքի փոխանակագրոց հաշիւ

1. Գնեցի 10000 ֆիօրինի մանտա (հրամանագիր) մը գ. 10,95. քանի՞ 0. Լ. պիտի վճարեմ:

Լուծումն

$$\frac{10000}{10,95} = 1.0.913,24\frac{1}{4}$$

2. Գնեցի 8500 մարքի չէք մը գ. 18,35. քանի՞ 0. Լ. պիտի վճարեմ:

Լուծումն

$$\frac{8500}{18,35} = 1.0.463,21\frac{1}{2}$$

Տեսօրին այսպէս օր ետքը վճարելի փոխանակագրոց հաշիւ

Այս տեսակ փոխանակագրոց հաշիւն ընելու համար՝ նախ փոխանակագիրը գնուած եւ վճարելի քաղաքին միջեւ եղած ճամբուն տեւողութիւնը 90 օրէն պակասեցնելով, մնացած օրերէն

[1] Ճեպրնբաց կառախումբը թէեւ 3 օրէն Փարիզ կը հասնի հիմա, բայց եւ այնպէս Պօլսոյ հրապարակին վրայ դարձեալ ուս առաջնոյն չեփերուն 85 օրուան տոկոս կը հաշուեն:

պէտք է զեղչել նաև տեսօրէն վերջն եղած պայմանաժամի օրերն, (այսինքն թուղթը տեսօրէն քանի օր վերջը վճարելի է) և մնացած օրերուն տոկոսը հաշուել: Զորօրինակ, տեսօրէն 3 օր ետքը վճարելի Լօնտրայի վրայ փոխանակագրի մը համար քանի՞ օրուան տոկոս վճարել հարկ է: Որովհետև փոխանակագիրը 5 օր ետքը (Պօլսէն Լօնտրայի ճամբուն տեւողութիւնը, որ չէքերուն համար ալ այնպէս հաշուեցինք) պիտի տեսնուի, ուրիմն 5ը 90էն իջնելով, կը մնայ 85 օր. և որովհետև թուղթը տեսնուելէն 3 օր ետքը, այսինքն, 8րդ օրը պիտի գանձուի, հետեւաբար 90 օրէն 8 օրը իջնելով՝ մնացած 82 օրուան տոկոսը վճարել պէտք է:

1. Գնեցի Մանչեսթրի վրայ տեսօրէն 3 օր ետքը վճարելի £ 400ի փոխանակագիր մը գ. 110 ¹/₄, սակ տոկոսի 2 ¹/₂ ⁰/₁₀. Ի՞նչ պիտի վճարեմ:

Լուծումն

$$400 \times 110 \frac{1}{4} = \text{լ. } 0. 441. -$$

Ետքը վերը բացատրուածին պէս Լ. 0. 441ին 82 օրուան տոկոսն ալ պիտի հաշուենք ⁰/₁₀ 2 ¹/₂ ով, որ կ'ընէ

$$\frac{441 \times 82}{14400} = \text{լ. } 0. 2.51 \text{ Տոկոս}$$

Ուրեմն գրամագլխին համար պիտի վճարեմ	Լ. 0. 441. —
82 օրուան տոկոսին համար	» 2.51
Ընդամենը	Լ. 0. 443.51

2. Ետեցի տեսօրէն 11 օր ետքը վճարելի ֆր. 2810.50ի Փարիզի վրայ թուղթ մը գ. 23,02 ¹/₂, սակ տոկոսի 5 ⁰/₁₀. քանի՞ 0. Լ. պիտի առնեմ:

Լուծումն

$$\frac{2810,50}{23,02 \frac{1}{2}} = \text{լ. } 0. 122,06 \frac{1}{4}$$

Ետքը ճամբուն տեւողութեան համար որոշեալ 5 օրն և փոխանակագրին 11 օր պայմանաժամը, ընդամենը 16 օրը 90էն իջնելով, կը մնայ 74 օր, ուստի Լ. 0. 122,06 ¹/₄ին ⁰/₁₀ 5էն 74 օրուան տոկոսը կը հաշուենք, որ կ'ընէ

$$\frac{122,06 \frac{1}{4} \times 74}{7200} = \text{լ. } 0. 1. 25 \frac{1}{2} \text{ Տոկոս}$$

Ուրեմն գրամագլխին համար պիտի առնեմ	Լ. 0. 122,06 ¹ / ₄
74 օրուան տոկոսին համար	» 1,25 ¹ / ₂
Ընդամենը	Լ. 0. 123,31 ³ / ₄

Անցած օրեր ունեցող փոխանակագրոց հաշիւ

Կան փոխանակագրեր ալ, որք օտար երկիրներէ կամ Թուրքիայէ թէև թուականէն 3ամս. քաշուած են, բայց հետզհետէ փոխանցուելով՝ բնականաբար անցած օրեր կ'ունենան. այդ անցած օրերուն տոկոսն ալ հաշուելով գրամագլխին վրայ կ'աւելնայ. օրինակ, Փետր. 17ին գնեցի Լօնտրայի փոխանակագիր մը Յնվր. 1էն 3ամս. այսինքն, Յնվր. 1էն 90 օր ետքը վճարելի: Արդ՝ փոխանակագրին թուականէն, այն է՝ Յնվր. 1էն Փետր. 17 (թուղթը գնած օրերնիս) արդէն 47 օր անցած ըլլալով՝ 47 օրուան տոկոսն ալ պարտաւոր եմ վճարել. որովհետև թուղթը վճարուելուն 3 օր մնացած է: Եւ արդարեւ՝ եթէ Փետր. 17ին՝ թուականէն 43 օրուան փոխանակագիր մը գնէինք, դարձեալ 47 օրուան տոկոս պիտի վճարէինք:

1. Գնեցի Մայիս 8ին՝ £ 715ի Ապրիլ 20ին իջմիբէն քաշուած 3ամս. թուղթ և Լօնտրա Ապրիլ 20ին վրայ գ. 108 ¹/₂, սակ տոկոսի 5 ⁰/₁₀. քանի՞ 0. Լ. պիտի վճարեմ:

Լուծումն

$$715 \times 108 \frac{1}{2} = \text{լ. } 0. 775,77 \frac{1}{2}$$

Թուղթը թէև Մայիս 8ին գնեցինք, սակայն Ապրիլ 20էն 3ամս. քաշուած է, այսինքն՝ Ապրիլ 20էն 90 օր ետքը վճարելի է. եւ որովհետև Ապրիլ 20էն 8 Մայիս՝ 18 օր անցած և վճարուելուն 72 օր միայն մնացած է, հետեւաբար՝ այդ 18 օրուան տոկոսն ալ պէտք է վճարել թուղթը ծախողին:

$$\frac{775,77 \frac{1}{2} \times 18}{7200} = \text{լ. } 0. 1.94 \text{ Տոկոս}$$

Ուրեմն գրամագլխին համար պիտի վճարեմ	Լ. 0. 775,77 ¹ / ₂
18 օրուան տոկոսին համար	» 1,94
Ընդամենը	Լ. 0. 777,71 ¹ / ₂

Այսպէս հաշուելու է այն փոխանակագրերը, որք թէև 3ամս. քաշուած, բայց անցած օրեր կ'ունենան:

Այս տեսակ փոխանակագրոց գնման և վաճառման ստեղծ 3-4 օրուան տոկոսը շատ անգամ չի վճարուիր:

2. Գնեցի 98 Յնվր. 18ին՝ ֆր. 10510,90ի Հայեպէն 97 Դեկտ. 13ին 3ամս. քաշուած թուղթ մը գ. 23,06 ¹/₄, սակ տոկոսի 4 ¹/₂ ⁰/₁₀. որչափ պիտի վճարեմ:

$$\frac{10510,90}{23,0625} = \text{լ. } 0. 455.76$$

Առնուած թուղթը թէև 3ամս. է, բայց քաշուած թուականէն, Դեկտ. 13էն Յնվ. 18 արդէն 36 օր անցած և վճարուելուն 54 օր միայն մնացած ըլլալով՝ այդ անցած 36 օրուան տոկոսն ալ պիտի վճարեմ թուղթը ծախողին:

$$\frac{455.76 \times 36}{8000} = \text{Լ. 0. 2.05 Տոկոս}$$

Ուրեմն գրամագլխին համար պիտի վճարեմ	Լ. 0. 455,76
36 օրուան տոկոսին համար	» 2,05
Ընդամենը	Լ. 0. 457,81

Հեռագրով դրամ դրկել կամ հեռագրով գանկի

Երբեմն վաճառականք և սեղանաւորք կ'ստիպուին հեռագրով գրամ հասցնել հեռու քաղաք մը:

Այն քաղաքներուն համար, ուր Պօլիսէն զարնուած հեռագիրը նոյն օրը հոն կը հասնի և գրամն ալ կը վճարուի, 90 օրուան տոկոս կը հաշուեն:

Այսպէս Կ. Պօլսէն Լօնտրա, Փարիզ, Վիէննա, Պէրլին և ին. հեռագրով գրամ վճարելու հրաման տուող սեղանաւորը 90 օրուան տոկոս կ'առնէ, նոյն քաղաքներուն տոկոսի օրուան տակովն: Գրամաւանք ոմանք 91 օրուան տոկոս և լիրային 10-20 փր. ալ յանձնառողչէք կ'առնեն: Գալով հեռագրի ծախքին՝ այդ ծախքն ալ գրամի պէտք ունեցողը կը վճարէ:

1. Մանչեսթըր անմիջական վճարում մ'ընելու պէտք ունենալով, գնեցի 8. Յակոբեան և Որդիէն £ 540 հեռագրով գ. 110, սակ տոկոսի 2⁰/₁₀. քանի՞ 0. Լ. պիտի վճարեմ:

Լուծումն

$$540 \times 110 = \text{Լ. 0. 594. —}$$

Ինչպէս ըսինք, այս գումարին 90 օրուան տոկոսն ալ պիտի հաշուենք և մայր գումարին վրայ աւելցնելով պիտի վճարենք:

$$\frac{594 \times 90}{18000} = \text{Լ. 0. 2.97 Տոկոս}$$

Ուրեմն գրամագլխին համար պիտի վճարեմ	Լ. 0. 594.—
90 օրուան տոկոսին համար	» 2,97
Ընդամենը	Լ. 0. 596,97

2. Գնեցի Գաւէրի Լիսնէէն Փարիզ հեռագրով վճարելի 5000 ֆր. գ. 22,76¹/₄. սակ տոկոսի 2⁰/₁₀. յանձնառողչէք ¹/₄ ⁰/₁₀. քանի՞ 0. Լ. պիտի վճարեմ:

Լուծումն

$$\frac{5000}{22,76\frac{1}{4}} = \text{Լ. 0. 219.66}$$

Եւքը 91 օրուան տոկոսն ալ կը հաշուենք, որ կ'ընէ:

$$\frac{219.66 \times 91}{18000} = \text{Լ. 0. 1.11 Տոկոս}$$

Ուրեմն գրամագլխին համար պիտի վճարեմ	Լ. 0. 219,66
91 օրուան տոկոսին համար	» 1,11
⁰ / ₁₀ ¹ / ₄ յանձնառողչէքին համար 220 Լ.ի վրայ	» —,55
Ընդամենը	Լ. 0. 221,32

3. Գնեցի Վլասթարիէն Լօնտրա հեռագրով վճարելի £ 400 գ. 109¹/₂. սակ տոկոսի 3⁰/₁₀. յանձնառողչէք ⁰/₁₀ ³/₈. քանի՞ 0. Լ. պիտի վճարեմ:

Լուծումն

$$400 \times 109\frac{1}{2} = \text{Լ. 0. 438. —}$$

Եւքը 91 օրուան տոկոսն ալ կը հաշուենք, որ կ'ընէ:

$$\frac{438 \times 91}{12000} = \text{Լ. 0. 3,32 Տոկոս}$$

Ուրեմն գրամագլխին համար պիտի վճարեմ	Լ. 0. 438.—
91 օրուան տոկոսին համար	» 3,32
⁰ / ₁₀ ³ / ₈ յանձնառողչէքին համար 411 Լ.ի վրայ	» 1,65
Ընդամենը	Լ. 0. 442,97

4. Գնեցի Պանք Օլոմոնէ Վիէննա հեռագրով վճարելի 4500 ֆիորին. գ. 91. յանձնառողչէք ¹/₄ ⁰/₁₀. քանի՞ 0. Լ. պիտի վճարեմ:

Լուծումն

$$\frac{4500}{10,91} = \text{Լ. 0. 412,46\frac{1}{2}}$$

Ուրեմն գրամագլխին համար պիտի վճարեմ	Լ. 0. 412,46 ¹ / ₂
⁰ / ₁₀ ¹ / ₄ յանձնառողչէքին համար 412 Լ.ի վրայ	» 1,03
Ընդամենը	Լ. 0. 413,49¹/₂

3 ամիսէն աւելի պայմանաւանով գանկիօններ

Թէեւ քիչ, բայց երբեմն 3 ամիսէն աւելի պայմանաւանով (4, 5-6 ամսուան) գանկիօններ ալ կ'ըլլան:

Քանի որ 3/ամիսէն պակաս պայմանաւան ունեցող թղթից պակաս օրերուն տոկոսը հաշուելով գրամագլխին վրայ աւելցնենք և այնպէս առինք ու ծախեցինք, անանկ ալ 3 ամիսէն աւելի պայմանաւանով թղթերուն, ծախուած կամ գնուած ատեն, վճարելի երկրին տոկոսի օրուան սակովը պէտք է զեղչել մայր գումարէն 3 ամիսէն աւելի պայմանաւանի օրերուն տոկոսը. զորօրինակ, 4/ամս. թուղթ մը գնած ատեննիս, գանկիօնի գինով հաշուուած գումարէն պէտք է զեղչել 1/ամսուան (30 օրուան) տոկոսը օրուան տոկոսի սակովն:

Երբեք Պաղատեն Լօնտրաի վրայ քաշուած £ 800ի 5/ամս. փոխանակ. գիր մը. գ. 109³/₄. սակ տոկոսի 3⁰/₁₀. քանի՞ 0. Լ. պիտի առնեն:

Լուծումն

800 x 109 5/8 = Լ. 0. 878. —

Նաքը 878 Լ. ին 60 օրուան տոկոսը հաշուելով պէտք է գեղ- շել այս գումարէն. թուղթը 5/ամբէն վճարելի է: մինչդեռ 109 5/8 ի գինը 3/ամս. փոխանակագրին գինն է.

878 x 60 / 12000 = Լ. 0. 4.39 Տոկոս

Ուրեմն մայր գումարն եղաւ	Լ. 0. 878. —
60 օրուան տոկոսը գեղջելով	» 4.39
Այս է առնելիք գումարնիս	<u>Լ. 0. 873.61</u>

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ք

- 3/ամս. ֆր. 8768.25 ի փոխանակագիր գ. 22.95
- 3/ամս. £ 645.16. 3 ի փոխանակագիր գ. 109 5/8
- Թուականէն 2/ամս. ֆր. 5516 ի թուղթ գ. 23.02 1/2. սակ տոկոսի 3 0/0.
- Թուականէն 41 օրուան £ 204.18 ի փոխանակագիր գ. 109 1/8 սակ տոկոսի 2 1/2 0/0.
- Չէք ֆր. 10000 ի գ. 22.87 1/2 սակ տոկոսի 2 0/0.
- Չէք £ 310 ի գ. 110 3/8 սակ տոկոսի 3 0/0.
- Չէք 8000 մարքի գ. 18.25.
- Մանտա 5500 ֆիօրինի գ. 10.92 1/2.
- Տեսօրէն 11 օր ետքը վճարելի £ 160 ի Լօնարայի թուղթ մը գ. 110 3/8 սակ տոկոսի 4 0/0.
- Տեսօրէն 21 օր ետքը վճարելի ֆր. 7500 ի փոխանակագիր գ. 23.02 1/2. սակ տոկոսի 3 0/0.
- 97 Օգոստ. 28 ին ծախուած £ 152.10 ի Օտեսայէն 97 Օգոստ. 2 ին Լօնարայի վրայ քաշուած 3/ամս. թուղթ մը գ. 108 1/8. սակ տոկոսի 3 0/0.
- 98 Յունիս 21 ին գնուած 12000 ֆր. ի Իզմիրէն 98 Ապրիլ 20 ին Մարսիլիոյ վրայ քաշուած 3/ամս. թուղթ մը գ. 22.87 1/2. սակ տոկոսի 2 0/0.
- Հեռագրով 8500 ֆր. Փարիզ վճարելի գ. 22.82 1/2. սակ տոկոսի 2 0/0. յանձնառողջէք 1/4 0/0.
- Հեռագրով 5000 մարքի Պէրլին վճարելի գ. 18.30 յանձնառողջէք 3/8 0/0.
- Հեռագրով 6000 ֆիօրին Վիեննա վճարելի գ. 10.93 1/2.
- Հեռագրով £ 500 Լօնարա վճարելի գ. 110 1/8. սակ տոկոսի 3 0/0. յանձնառողջէք 1/4 0/0.

- Վանս. £ 600 ի փոխանակագիր գ. 109 7/8 սակ տոկոսի 4 0/0.
- Յամս. ֆր. 8963.50 ի » գ. 22.95 » » 3 0/0:

Փոխանակագրի հաշուեցոյցի (նօթայի) հաշիւներ

Փոխանակագրի հաշուեցոյցին կամ նօթային վրայ թ. 110 ին 2/4 խօսած ըլլալով՝ հոս պիտի ցուցնենք թէ ի՞նչպէս հաշուելու է փոխանակի ծախուած գումարներուն ի հաշիւ տրուած վճարումներն տոկոսները:

Ապառիկ ծախուած փոխանակագրի մը արժէքը մէկէ աւելի մասնավճարներով կը վճարուի գնողին և ծախողին հաւանութեամբ:

97 Օգոստ. 20 ին ապառիկ գնեցինք £ 400 ի տեսօրէն 3 օր ետքը վճարելի փոխանակագիր մը գ. 110 1/4 Լօնարայի տոկոսը 2 1/2 0/0 (տեսօրէն այսքան օր վերջը վճարելի փոխանակագրոց մէջ 3 1/2 0/0): Սոյն փոխանակագրին արժէքն է դրամագլուխ և Լօնարայի տոկոս, ընդամէնը Լ. 0. 443.51 զոր վճարեցինք հետեւեալ կերպով, անցած օրերուն համար 0/0 12 տոկոս տարու պայմանով:

Վերոյիշեալ նօթային վճարումները		25 Օգոստ. 1897
Լ. 0. 100. —	Հարիւր լիրա օսմ.	» » »
» 120. —	Հարիւր քսան լիրա օսմ.	30 » »
» 150. —	Հարիւր յիսուն լիրա օսմ.	5 Սեպտ. »
» 73.51	Եօթանասուն երեք Լ. օսմ. 51 9	» »
<u>Լ. 0. 443.51</u>		

Վերոգրեալ գումարներն այսպէս իրենց թուականներովը նօթային ետին գրուած են արդէն, ինչպէս կ'երեւայ մեր նօթային վրայ: Սոյն վճարումներով յիշեալ նօթային գումարն ամբողջապէս վճարած ենք. սակայն կը մնայ տոկոսը հաշուել և վճարել:

Արդ՝ տոկոս հաշուելու կանոնին համեմատ՝ իւրաքանչիւր գումարին Օգոստ. 20էն մինչև վճարման օրը անցած օրերը գանձուով սոյն օրերն զատ զատ իրենց համապատասխանող գումարներուն հետ բազմապատկելու է, արտագրեալները կ'ըլլան տոկոսներ թիւեր, որոց ընդհանուր գումարը պէտք է բաժնել տոկոսի սակին հաստատ բաժանարարովը, կամ թուոց ընդհանուր գումարը տոկոսին սակովը բազմապատկելով՝ արտագրեալը 36000ով բաժնելու է, քանորդը կ'ըլլայ յիշեալ վճարմանց համար բանած և մեր վճարելիք տոկոսը:

Հոս կը չինենք վերոյիշեալ վճարմանց տոկոսի հաշիւք.

Լ. 0. 100. —	25 Օգոստ.	5 Օր	=	500 թիւ
» 120. —	30 »	10 »	=	1200 »
» 150. —	5 Սեպտ.	16 (1) »	=	2400 »
» 73.51	9 »	20 »	=	1470 »
<u>Լ. 0. 443.51</u>				<u>5570 թիւ</u>

[1] Տոկոսի հաշուց մէջ սկզբնաւոր ամիսներն իրենց օրերով կը հաշուեն, սակայն փոխանակ 365ի՝ 360ով կը բաժնեն:

Արդ ունեցանք 5570 թիւ, զոր բաժնելով 1/2 ասկին հաստատ բաժանարարովն, որ է 3000, կ'ունենանք

5570 / 3000 = 1. 0. 1.85 3/4 Տոկոս

Ըսել է թէ յիշեալ նոթային համար սոկոս պիտի վճարենք 1. 0. 1.85 3/4:

Այս կերպով ուսանողը պէտք է հաշուէ՝ առաջուց մեր տուած (Տէ՛ս Թ. 113) փոխանակագրի հաշուեցուցակին սոկոսը, որ նշանակուած է նոյնին ետին և համոզուիլ այսպէս հաշույն ճշգրութեանը:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ք

— 98 Ապրիլ 2ին զնուած ֆրանքի հաշուէն 1. 0. 1210.74 պարտական մնացած ենք, զոր վճարեցինք այսպէս.

1. 0. 300. —	Ապրիլ	9ին
» 200. —	»	18ին
» 50. —	»	25ին
» 100. —	Մայիս	10ին
» 250. —	»	13ին
» 145. —	»	21ին
» 165. 74	»	28ին

1. 0. 1210. 74 Տոկոսը 1/2 9էն քանի՞ օտմ. լիբա կ'ընէ:

— 98 Յուլիս 10ին ծախուած անդդ. լիբայի փոխանակագրի փոխարէն 1. 0. 448. 64 պարտական մնալով՝ վճարած ենք այսպէս.

1. 0. 200. —	Յուլիս	10ին
» 50. —	»	19ին
» 100. —	»	25ին
» 98. 64	Օգոստ.	11ին

1. 0. 448. 64 Տոկոսը 1/2 12էն քանի՞ օտմ. լիբա կ'ընէ:

ԱՌՆԵՒՏՐԱԿԱՆ ԹՂԹՈՑ ԶԵՂՁԻ ՀԱՇՒՆՆԵՐ

Արդէն խօսած ենք թուղթի գեղչելու և գեղչել տալու գործողութեանց վրայ:

Դրամի պէտք ունեցող վաճառականը՝ թղթապանակն ունեցած հրամանի տոմսակները կամ փոխանակագրերը սեղանաւորի մը 1/10 ին այսչափ սոկոսի հաշուով գեղչել կը տայ: Ինչպէս ըսինք, սեղանաւորներուն և դրամատուներուն գլխաւոր գործն է թուղթ գեղչելը, որով նոր գումարներ փոխ կը արուին վաճառականու-

թեան պէտքերուն համար: Բայց փոխ սուղին կամ թուղթ գեղչողին կողմէն մեծ արթնութիւն պէտք է: Զեղչողը պէտք է միշտ սեղանայ գեղչել սուղին պատուաւորութեան և ըրած գործին ոչ ստիճան հաստատ ըլլալուն վրայ: Ասկէ զատ՝ սեղանաւորը պէտք է քննէ նաեւ գեղչելի թղթերը. զի կան մարդիկ, որք շինութեան համար, զորս բացատրեցինք Հաճոյակստորութեան քցելու ըսելով, և երբեմն իսկ խարդախութեան համար իրարութեամբ կամ ստորագրութիւն կը տան: Ընդհանրապէս այն թղթերը գեղչելու յարմար և յարգի են, որք իրական առեւտուրէ նախաձեռնուած են. վասնզի սպրանքի փոխարէն արուած թղթերն ընդհանրապէս օրին դրամով կը վճարուին, մինչդեռ գլխութեան համար շինուած թղթերն, շատ անգամ օրին չեն վճարուիր և կը նարգուին: Ասկէ զատ՝ գեղչելի թղթերը պէտք է որ միշտ դրոշմաւոր ըլլան:

Թուղթ գեղչելը երկու տեսակ կ'ըլլայ.
1. Պատասխանատուութեամբ գեղչ.

2. Առանց պատասխանատուութեան գեղչ:
Հրամանի տոմսակին և փոխանակագրին վրայ խօսելով ըսինք թէ՛ վաճառականական թղթերը փոխանցմամբ ձեռքէ ձեռք կը քշարերին և փոխանցողք իրարու համերաշխ են. հետեւաբար թուղթ գեղչողը անոր վճարմանը համերաշխ է. անանկ որ, եթէ ստորագրողը չի վճարէ՝ ինքը իբր փոխանցող զայն վճարելու պարտական է:

Այսպէս՝ երբ մէկը հրամանի տոմսակ կամ փոխանակագիր գեղչել տայ՝ զայն փոխանցելով գեղչող սեղանաւորին կը յանձնէ. այս կերպ թուղթ գեղչելուն կ'ըսուի Պասսախանաստորութեանը գեղչ. իսկ Բ. տեսակն այն է՝ որ գեղչողը, ըստ պայմանի, պատասխանատուութիւնը իր վրայ չ'առնէր. եթէ ստորագրողը թուղթը զգին չի վճարէ՝ գեղչողը չի կրնար անկէ պահանջել անոր գումարը. այս տեսակ գեղչին ալ կ'ըսուի Առանց պասսախանաստորութեան գեղչ, որուն Փաղղիւրէն կ'ըսեն à forfait: Թուղթը առանց պատասխանատուութեան ծախողը զայն փոխանցած առեն՝ իր ստորագրութեան վրայ կը գրէ Sans recours, Առանց պասսախանաստորութեան կամ Sans aucune responsabilité de ma part, Առանց իմ կողմէ որ եւ է պասսախանաստորութեան և կամ պարզապէս Sans responsabilité, կամ Առանց պասսախանաստորութեան, որով կը հասկցուի թէ՛ այդ թուղթը եթէ օրին չը վճարուի, թղթին աւեր իրեն չի պիտի կրնայ գիմել:

Բնական է որ այս վերջին տեսակ գեղչի գինը առջինէն սուղ ըլլայ, քանի որ գեղչել սուղը ինքզինքը պատասխանատուութենէ ազատելով զնոզն է որ կ'ենթարկի վտանգին. ասոր համար քիչ

մ⁰ աւելի շահիլ կ'ուզէ պատահական միտաներու գիտագրելու համար: Զորորինակ, եթէ թուղթ մը Պատասխանատուութեանը $\frac{0}{10}$ Գող գեղչուի՝ Առանց պատասխանատուութեան $\frac{0}{10}$ 12 կամ քիչ մ⁰ աւելիով կը գեղչուի: Զեղչի սակը ժամանակին համեմատ կը փոխուի: կ'աւելնայ կամ կը պակսի դանազան պատճառներով, գրամին առատութեան կամ նուազութեան, գրամական տագնապներու և ընդհանուր քաղաքական լուրերու ազդեցութենէն, գեղչուելիք թղթոց առատութեան կամ նուազութեան համեմատութեամբ ևլն:

Ասեւարական թղթոց գեղչի հաշիւը դործի մէջ այսպէս կ'ընեն: Նախ պէտք է հաշուել և գտնալ գեղչելի թղթին գեղչուած օրէն մինչեւ անոր վճարօրը քանի օր ըլլալը: Գտնուած օրերը բազմապատկել թղթին անուանական գումարին հետ, արտագրեալ թիւը բաժնել գեղչի սակին հաստատ բաժանարարով:

Օրինակ Զեղչի նաշխներու

1. Առաքել Խաչեանի 200 Լ.ի տոմսակը, որուն վճարօրին 43 օր մնացած է, $\frac{0}{10}$ 12ով գեղչելու ար. գումարէն պիտի ստանամ:

Լուծումն

$$\frac{200 \times 43}{3000} = \text{Լ. 0. } 2.86\frac{1}{2} \text{ Զեղչ}$$

Աւրեմն $200 - 2.86\frac{1}{2} = \text{Լ. 0. } 197.13\frac{1}{2}$: (Տե՛ս մեր Զեռատեարին թ. 57 Յօդուածը):

2. Մարտ 8ին գեղչելու ար. $\frac{0}{10}$ Գող 150 Լ.ի և Յուլիս 15ին վճարելի թուղթ մը, զուտ ս⁰ ըջափ պիտի ստանամ:

Նախ պիտի հաշուենք թէ՛ Մարտ 8էն, որ գեղչի օրն է, մինչ Յուլիս 15, որ թղթին վճարօրն է, քանի՞ օր կայ:

Մարտ 8էն մինչեւ 31 Մարտ՝ կայ	23 օր
Ապրիլ ամիսն ունի	30 »
Մայիս » »	31 »
Յունիս » »	30 »
Յուլիս 15էն	15 »
	129 օր

$$\text{Արդ՝ } \frac{150 \times 129}{4000} = \text{Լ. 0. } 4.83\frac{3}{4} \text{ Զեղչ}$$

Աւրեմն $150 - 4.83\frac{3}{4} = \text{Լ. 0. } 145.16\frac{1}{4}$

Իսկ երբ գեղչելի թղթերը մէկ քանի հաս ըլլան, փոխանակ այսպէս ամէն մէկուն տակոսները գատ գատ հաշուելու, նախ՝ իւրաքանչիւր թղթին իրենց օրերը գտնելով գումարներուն հետ բազմապատկելու և թիւերը գտնալու է. յետոյ թուոց ընդհանուր գումարին վրայ հաշուելու է գեղչը:

3. Մայիս 15ին գեղչելու ար. $\frac{0}{10}$ 12ով հետեւեալ թղթերը. զուտ ս⁰ ըջափ պիտի ստանամ:

Լ. 0. 100. —	վճարօր	31 Մայիս
» » 200. —	»	12 Յունիս
» » 300. —	»	19 »

Նախ պիտի հաշուենք թէ՛ իւրաքանչիւր թղթին գեղչուած քիչ (15 Մայիս) մինչեւ իրենց վճարօրը քանի՞ օր մնացած է. յետոյ գտնուած օրերն իրենց յատուկ գումարներուն հետ բազմապատկել և այդ թուոց ընդհանուր գումարին վրայ գեղչը հաշուել, բաժնելով զայն գեղչելի սակին հաստատ բաժանարարովն այսպէս:

Լուծումն

	Օր	Թիւ
100	× 16 =	1600
200	× 28 =	5600
300	× 35 =	10500
600		17700

$$\frac{17700}{3000} = \text{Լ. 0. } 5.90 \text{ Զեղչ}$$

$$600 - 5.90 = \text{Լ. 0. } 594.10$$

Այս եղանակով հաշուած է նաեւ Գ. Յակոբի Զեղչի ցուցակը, (Տե՛ս թ. 118):

Միջին պայմանաժամ

Շատ անգամ տարբեր պայմանաժամներով դանազան գումարներու կամ թղթերու միջին պայմանաժամը գտնալ պէտք կ'ըլլայ: Երբ միջին պայմանաժամը գտնալ ուզուած թղթոց գումարներն իրարու հաւասար են, այն ատեն շատ դիւրին է հաշիւը. միայն այդ թղթոց պայմանաժամներուն միջինը կ'առնուի այսպէս: Հետեւեալ երեք թղթերուն միջին պայմանաժամը գտնալ կ'ուզենք.

100 Պայմանաժամ	15 օր
100 »	21 »
100 »	30 »
300	66 օր

Արդ՝ այս երեք թղթոց պայմանաժամներուն օրերը կը գումարենք, որ կ'ըլլայ 66, զոր 3ով (թղթերուն թիւը) բաժնելով կ'ուենանք 22 օր, որ է այդ երեք թղթոց Միջին պայմանաժամը:

Բայց որովհետեւ միջին պայմանաժամը գտնել ուղուած թըզ-
թերն ամէն անգամ այսպէս հաւասար գումարներով չեն ըլլար,
այլ տարբեր գումարներով ալ կ'ըլլան, այն ատեն միջին պայմա-
նաժամը գտնալու համար հարկ է թէ՛ օրերուն և թէ՛ գումար-
ներուն միջին հաշիւն ընել այսպէս: Իւրաքանչիւր գումար բազ-
մապատկելու է իրեն պայմանաժամի օրերուն հետ, որպէս զի
թէ՛ դրամագլխոց և թէ՛ օրերուն իրարու հետ ունեցած յարաբե-
րութիւնները հաւասարին, այնպէս որ այսպէս հաւասարած թըզթոց
ընդհանուր գումարին միջին պայմանաժամի օրովն յառաջ եկած
տոկոսը՝ պէտք է հաւասար ըլլայ նոյն թըզթոց գումարներուն
զատ զատ իրենց օրերուն հետ արտադրելի տոկոսներուն գու-
մարին. եթէ այսպէս չըլլայ՝ գործողութիւնը սխալ եղած է ըսել է:

Ըսածնիս նախորդ օրինակին վրայ փորձենք ատենելու համար
թէ իրօք այնպէ՞ս է:

Այդ օրինակին միջին պայմանաժամը գտանք, որ 22 օր էր.
ըսել է թէ այդ օրինակին 3 գումարներուն (300ին) 22 օրուան
տոկոսը կամ թիւը՝ պէտք է հաւասար ըլլայ նոյն երեք գումար-
ներուն զատ զատ իրենց օրերով արտադրելի տոկոսին կամ թիւին:

$$\begin{aligned} 100 \times 15 \text{ օր} &= \text{թիւ } 1500 \\ 100 \times 21 \text{ »} &= \text{» } 2100 \\ 100 \times 30 \text{ »} &= \text{» } 3000 \\ 300 & \quad \quad \quad 6600 \end{aligned}$$

Եթէ 300ը միջին պայմանաժամի օրերուն հետ, որ է 22,
բազմապատկենք՝ գումարը կ'ըլլայ վերինին պէս 6600. և հետեւա-
բար երկուքին ալ արտադրելի տոկոսը հաւասար կ'ըլլայ, քանի
որ թիւերն ալ հաւասար են:

Գարձեալ միջին պայմանաժամը հաշուել և գտնալ հարկ կ'ըլ-
լայ՝ երբ մէկէ մը որոշեալ պայմանաժամէ մը ետքը վճարելի պա-
հանջքնուս ի հաշիւ տարբեր պայմանաժամներով մէկ քանի թըզ-
թեր առնենք: Օրինակի համար, Յակոբէն 97 Մարտ 18ին վճա-
րելի 240 Լ. ի պահանջք մ'ունինք, որուն փոխարէն 97 Փետր.
10ին տուաւ 3 կտոր փոխանակագիր:

Այս պարագային պէտք է հաշուել և գտնալ այդ երեք թըզ-
թոց միջին պայմանաժամը, հասկնալու համար թէ անոնց միջին
պայմանաժամը մեր պահանջքին ճիշդ վճարօրին կը պատահի՞ թէ
ոչ: Եթէ ճիշդ նոյն օրուան պատահի՞ երկուստեք տոկոս ուղելու
կամ տալու ինչիւր չի մնար: Եթէ ճիշդ նոյն օրուան չպատահի՞
գորօրինակ, եթէ այդ թըզթոց միջին պայմանաժամը Մարտ 25ին
ըլլայ՝ այն ատեն Յակոբ պէտք է որ նոյն գումարին Մարտ 18էն 25,
7 օրուան տոկոսը տայ մեզի, քանի որ մեր պահանջքը Մարտ
18ին վճարելի էր. իսկ ասոր հակառակը ըլլալով՝ եթէ միջին պայ-

Գ. ԳՈՐԾ Ն. ՏՌԻԶԻՆՆԵԱՆՆԻ


Կ Ր Կ Ն Ա Տ Ո Մ Ա Ր Ը

ՈՒԹԸ ԴԱՍՈՎ

Ն ՈՐ Մ Է Թ Ո Ս Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Ն

Ուսանելի առանց դասատուի

ԱՌԵՒՏՈՒՐՈՎ ԶԲԱՂՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ



Գ Ա Ի Ա Ո Ւ Ս Ի Ն Դ Ա Ս Դ Ղ Ն Ն Ե Ր Ո Ւ Հ Ա Մ Ա Ր

Ջ Ո Ւ Ո Շ Կ Ս Ե Գ Ղ Ղ Ո Ղ Ն Ե Ր Ո Ւ Հ Ա Մ Ա Ր

Միմիայն կրկնաստուարը սորվիլ ուղողներու համար յատկա-
պէս պատրաստուած այս գիրքին մէջ, վերի կշիռի օրինակովն
այնքան պարզ և դիւրին բացատրուած է կրկնաստուարի սկզբ-
բունքը, որ ամենէն մասապ միտքերու անգամ դիւրահասկնալի
է. բաւական է անգամ մը աչքէ անցնել գրքին թ. 10 և 41
էջերը: Գին 5 դ:

Հանձնաժամբ Մարտ 13ին ըլլայ, այն ատեն պէտք է որ մենք Յակոբին տանք նոյն գումարին Մարտ 13էն 18, 5 օրուան առկառ, քանի որ վճարութէն 5 օր առաջ սուած կը սեպուի:

Նոյնպէս միջին պայմանաժամբ գտնալ հարկ կ'ըլլայ հաշուընթացներ պատրաստելու ատեն, աշխատութեան և գրութեան ինչպիսիքութեան համար, երբ միևնոյն օրը թղթակցէ մը տարբեր պայմանաժամերով մէկ քանի թղթեր տանանք, որոց համար գումարը անոր պահանջքին կը տանինք, անոնց միջին պայմանաժամի թուականովը: (Տե՛ս թ. 238ի հաշուընթացին վրայ):



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Տոմարակալութեան վրայ չի խօսած՝ կարելոր է համառօտիւ բացատրել այս երկու բառերուն նշանակութիւնը, որք շատ անգամ իրարու հետ կը շփոթին:

Հանարակալութիւն. — Եփօթելու չէ իրարու հետ այս երկու բառերը, զի նոյն իմաստը չ'ունին: Վաճառատան մը կամ որ եւ է գործի մը ամբողջ հաշիւները պատրաստելու գիտութեան, և գործողութիւնները տոմարներու մէջ գրելու արուեստին ընդհանրապէս կ'ըսուի Հանարակալութիւն կամ Հաշուակալութիւն, որուն մասը կը կազմէ Տոմարակալութիւնը, որ միայն վաճառականական գործողութիւնները տեսարակներու մէջ ի՛նչ կերպ գրել կամ անցընել արվեցնող արհեստն է: Ըսածնիս երկու բառով և որչ հասկըցնենք: Այս գրքին թէ՛ Առաջին մասը, որ վաճառականական գործողութեանց և գրութեանց, առևարական թղթերու և հաշիւներու վրայ մանրամասն և ընդարձակ տեղեկութիւններ կը տայ, և թէ՛ այս երկրորդ մասը, ուր լոկ Տոմարակալութեան վրայ պիտի խօսուի, երկուքը մէկտեղ Հանարակալութիւն կ'ըսուի. և ճիշդ ստո՛ր համար է որ մեր գրքին անունն ալ Հանարակալութիւն դրած ենք. և արդէն տոմարակալը Համարակալութիւն ալ գիտնալու է, ստանց որոյ լաւ գրագիր չի կրնար ըլլալ:

Թէ ի՛նչ է Տոմարակալութիւնը ընդհանրապէս

Տոմարակալութիւնը՝ վաճառականութեան, ո՛ր և է շահագործութեան և ճարտարարուեստի վերաբերեալ գործողութիւնները սովորութեամբ ընդունուած կանոններով ուղիղ և կանոնաւորապէս տոմարները և մասնաւորաբար Օրհաշիւը գրելու արհեստն է, որով գործին տէրը ամէն ատեն կը գիտնայ իր Գոյլը՝ այսինքն, սնտու-

նից գրամը, վաճառատանը պատրաստ սպրանքը, թղթապահին զանձեղի թղթերը, (տոմսակ, փոխանակագիր, և այլն), յանախորդներէն ունեցած առնելիքը, ուրիշներու ունեցած ստորագր. տան, սնձնական և վաճառատան ծախքերը, իր գուտ շահը կամ ֆիսարը, վերջապէս տարեգլխուն հաշիւ տեսած ատեն՝ իր գրամագլխին ո՛րչափ աւելցած կամ ո՛րչափ պակաս ըլլալը որչապէս հասկնալ:

Կանոնաւոր տոմարակալութեան մը միջոցա՛ւ միայն գործարանի կամ շահագործական ձեռնարկի մը անօրէնը կրնայ ամէն օր գիտնալ գործին վիճակը, այսինքն՝ պարտքն ու պահանջքը, գործարներուն աշխատութիւնը և անոնց արգիւնքը, պատրաստուած սպրանց, նախնական նիւթոց և պատրաստուածներուն արժէքը, ձախուելիք գինը, անոնց արտագրած շահը կամ ֆիսարը. մէկ խօսքով՝ գործարանին կամ շահագործութեան ընդհանուր արգիւնքը:

Ո՛չ միայն հարկը և գործին տիրոջ շահը կը պահանջեն որ վաճառականը իր բոլոր գործողութիւնները մեծ ճշգրութեամբ պահեալ տոմարներու մէջ գրէ, այլ Առևարական Օրէնքն ալ նաեւեալ յօդուածներով կը հրամայէ՝ որ վաճառականը տեսարակներ ունենայ և իր բոլոր գործողութիւնները անոնց մէջ գրէ:

Թէ ինչո՞ւ համար Առևարական Օրէնքը կը պահանջէ որ վաճառականը տեսարակներ ունենայ, և թէ՛ այդ տեսարակներն Օրէնքին սո՛ջեւ ո՛ր աստիճան կարեւորութիւն ունին, հետեւեալ յօդուածոց մէջ շատ յստակ կ'երևայ:

Յօդ. 3. «Է՛կէր պիր թաճիր կիւն պէ կիւն վէ մաստէ պէ մաստէ սուլուն վէ գիմէմ վէ մաթուպաթընը սէպթ վէ դայա էլլէմէք իշիւն ժուրնալ թապիր օլունան ևէվմիյէ տէֆթէրինի թաթմաղա մէճպուր օլուպ, թիճարէթէ տաիր քեաֆիթէլի մուսմէլթընը վէ միւպայիա իլլէտիկի բօլիշայր վէ եախօտ քէնտույէ շէքիլուպ դապուլ իլլէտիկինի վէ գահրիյէ վազը իլլէ նազըր հէվալէ իթտիկինի վէ ալէլ ըթլուգ ախպուիթասընը սէպթ վէ մէսարիթմէթթուպարը դայա իտէ վէ շէրիք վէ ստէմէրինէ իրսալ էլլէտիկի մէքթուպարը մահ պէ մահ պաղլայուպ հըֆիգ էլլէյէ»:

Յօդ. 4. «Թաճիր օլան քիմնէ իւշիւնճի մաստէտէ պէյան օլունան տէֆթէրլէրաէն պաշգա պէհէր սէնէ Պիչանջօ թապիր օլունուր տիկէր պիր տէֆթէր տախի թութմաղա մէճպուր օլուպ, էմվալ վէ էշեայի մէնգուլէսինի վէ սուլուն վէ գիմէմ վէ մաթուպաթընը պու տէֆթէրէ ևէկեան ևէկեան սէպթ ու թահրիլ էլլէյէ»:

Յօդ. 5. «Ստյոփիլոզդիբը իքի տէֆթէրտէ ախէր լաֆիզ թահրիրի միւմքին օրածազ մէրթէպէ խալը մահալի թէրքի վէ եազը պօղուգըլը վէ միյանէյի սիւթուրէ քէլիմէ իլավէսի վէ իշարէթլէ համիչի տէֆթէրէ գալիլ վէ քէսիբ իպարէ իխրած վէ իլավէսի ճարիզ օլմայա. վէ ժուրնալ տէֆթէրինէ հէր սէնէ թէմամընտա թիճարէթխանէտէն պու խուսուա մէմուր պիր գաթ պունը իպըազ խտէն թածիր միւվաճէհէսինտէ սահ քէշիտէ էյլէյէ. գալտը քի, մէմուրը միւմաիլէյհ հիշ պիր պէհանէ իլէ տէֆթէրի մէզքիւրըն քէլիմէի վահիտէսինի օզումազա մէզուն օլմատըլը մալիւմ օլա. վէ մէզքիւր տէֆթէրլէրէ պիր շէյ եազըլմազտան մուգատտէմ, եինէ թիճարէթխանէտէն պու իշէ մախսուս պիր մէմուր տէֆաթիրի մէրգուսէնին սահիթէլէրինէ նօմէրօ վազ իաուպ, օլ տէֆթէր քա՛շ սահիթէյի շամիլ իտէ, զիրը տէֆթէրէ պիրթ թահրիր վազը իմզա էյլէյէ» :

Յօդ. 6. «Թաիֆէի թիւճճար թութմազա մէճպուր օլտուգլարը տէֆաթիրտէ շերաիթի լազըմէի մուհարբէրէյէ իխայէթ իթմէյուպ, տէֆթէրլէրինի ույզունսըզ վէ նիգամսըզ թութտըզլարը հալտէ, հինի թէրաֆուտէ օ մագուլէ նիզամա մուվաֆրը օլմայան տէֆաթիրի իթիպար օլունմայա» :

Յօդ. 7. «Հինը թէրաֆուտէ թիւճճար տէֆաթիրինին իպրազը էմր օլունմայուպ, անճազ ումուրը շիրքէթ վէ վէրասէթ վէ գուսրանիա մուգատէմէսի վէ իֆլաս վուգուընտա տէֆաթիրի լազըմէ թիճարէթխանէտէն րէսմէն թալէպ օլունա» :

Յօդ. 8. «Գաիտէի մէզքիւրէյէ մութապըզ թանգիմ օլունան թիւճճար տէֆաթիրի պէյնէթ թիւճճար վուգու պուլան տաավիյէ տէլիլ վէ պիւրհան օլմազ իզրէ գապուլ օլունա» :

Յօդ. 9. «Պիր տավանըն րույէթի էնմարնտա միւնագաունիհ օլան մատտէնին գահիբէ իխրածը գըմընտա եալընըզ միւնագաունիհ օլան խուսուսըն րույէթի իշին թիճարէթ տէֆթէրլէրինին իպրազը թիճարէթխանէ թարաֆընտան րէսմէն թէնպիհ օլունա» :

Կարեւոր է քիշ մը բացատրել վերոյգրեալ յօդուածները :
Վաճառականը անհրաժեշտապէս ունենալու է Օրհաշիբը, որովհետեւ, ինչպէս որ կանոնաւոր և օրինաւոր գրուած Օրհաշիբ առեւտրական գործոց համար իբր ապացոյց կրնայ համարուի(1), անանկ ալ ամենեւին Օրհաշիբ չունեցող, ինչպէս նաեւ Օրհաշիբ անկանոն կերպով գրող վաճառականը Օրէնքին առջեւ իբր պարզ սնանկ, և նոյնիսկ իսարդախ սնանկ կը սեպուի :

[1] Տե՛ս Ա. մասին թ. 152 երեսի Գ. պարագան, ուր տեսակներուց դիմիկ հարկ կ'ըլլայ :

Տան ծախքը գրել պատուիրելով՝ Օրէնքը չուզեր որ այդ նախօրէից մանրամասնութիւնը գրուի, այլ միայն անոնց գումարը անէ ամիս Օրհաշիբը գրուելու է : Պատճառն այն է որ՝ վաճառականը սնանկացած ատեն, հասկցուի թէ տան ծախքերը չափաւոր են թէ չափազանց :

Տարին անգամ մը տետրակները թուագրել և արձանագրել ապա անո՛ր համար պատուիրած է որ՝ վաճառականները սնանկացաւ ատենին չըլլայ որ նոր տետրակներ չինեն, և ատանկով իրենց բուն տետրակներուն յայտնութիւններէն խուսափին :

Տետրակներուն թերթերը պաշտօնապէս համրել տալ անո՛ր համար կարեւոր է որ՝ տետրակին մէջ նոր թերթեր չդրուին կամ եզածներէն մաս մը չհանուին :

Որովհետեւ քիչեր իրենց գործին սկիզբէն մինչեւ վերջը տետրակներին կը պահեն, ուստի միջին ժամանակ մ'առնելով Օրէնքը 10 տարին որոշած է, պահուելիք տետրակին ամենէն վերջին գրութեան թուականէն սկսելով : Այսու հանդերձ, ամէն վաճառական իր տետրակները պահելու է մինչեւ վերջը, որպէս զի՝ ձախող վիճակի ենթարկուած ատեն, իր բազմամեայ ուղղափառ ընթացքը կարենայ ապացուցանել :

Օրէնքը կ'ուզէ որ բոլոր գործողութիւնները և վաճառականներու միջեւ կատարուած պայմանագրութիւններն ու յանձնարարութիւնները տետրակներուն մէջ գրուին և օրինակուին, որպէս զի եթէ վէճ մ'ունենան՝ տետրակին մէջտեղ բերուի և իրողութիւնը երեւան ելնէ : Նոյնպէս առեւտրական ընկերութիւն մը լուծուած ատեն՝ անոր հաշիւները տեսնուելու և վաճառականը մեռած ատեն՝ անոր ստացուածքն ու պարտքը, սնանկութեան ատեն սնանկին գոյքն ու պարտքը և սնանկութեան պատճառները հասկցուելու համար անոր տետրակներուն քննութիւնը պարտաւորիչ է. ուստի հոգ տանելու և ուշադրութիւն ընելու է տետրակներուն օրինաւոր և կանոնաւոր գրուելու մասին :

Տետրակները օրինաւոր և կանոնաւոր բռնուելու համար վաճառականը իր առեւտուրին վերաբերեալ բոլոր գործողութիւնները թուականներուն կարգովը գրելու է Օրհաշուին մէջ. և բաւերուն մէջտեղը ուրիշ բաւ մ'իսկ գրուիլ կարելի ըլլալու չափ պարսպ տեղ ձգելը, զիբ աւրելը և լուսանցքին մէջ իբր ծանօթութիւն բան գրելը և սողերուն մէջտեղը բաւ աւելցնելը Օրէնքով արգիլուած է :

Օրէնքը այս յօդուածներով միայն կը պատուիրէ որ վաճառականը կանոնաւոր տետրակներ ունենայ : Սակայն զանոնք ինչ եզանակով բռնելու մասին մասնաւոր հրահանգ չէ գծած : Հետեւաբար վաճառականը ազատ է իր ընտրած եղանակովը (Պարզ

կամ Կրկնասումար) գրելու. բաւական է որ քիչ մ'առաջ բացատրուածին պէս, այդ տետրակներուն մէջ յստակ և կանոնաւոր կերպով գրուին օրն օրին բոլոր գործողութիւնները:

Օրէնքին Յրդ և 4րդ յօդուածոց համեմատ՝ վաճառականը թէեւ անպատճառ երեք տետրակ ունենալու է, (Օրհաշիւ, Խանակի ընդօրինակութիւն և Հաշիւեկշիւի տետրակ). սակայն իր բոլոր գործողութիւնները և ուրիշներու հետ (Պարսակակներու և Պահանջողներու) իր յարաբերութիւններն աւելի յստակ և սրտէրեւնալու համար, զանազան անուններով ուրիշ տետրակներ ալ հնարած է, որոնց վրայ իրենց կարգին պիտի խօսինք:

Տոմարակալութիւնը երկու եղանակ ունի. Պարզ-տոմար և Կրկնակ-տոմար: Վաճառականը այդ երկու եղանակէն ո՛րն որ ուզէ, ազատ է ըստ այնմ՝ բռնելու իր տետրակները, վասն զի Օրէնքը ասոր համար մասնաւոր եղանակ մը որոշած չէ:

Տոմարակալութեան երկու եղանակները (Պարզ-տոմար և Կրկնակ-տոմար) իրենց անունը առած են այն կերպերէն, որով իւրաքանչիւր գործողութիւն կամ Տոմարակալութեան լեզուով՝ իւրաքանչիւր յօդուած Օրհաշիւր կ'անցնի: Առեւտրական ամէն գործողութեան մէջ անպատճառ Առնող մը (Պարսակակ մը) և Տուող մը (Պահանջող մը) կայ:

Արդ՝ Պարզ-տոմարն այն է, որայ Օրհաշուին մէն մի յօդուածին մէջ այդ երկուքէն մէկուն, այն է՝ Առնողին կամ Տուողին այսինքն Պարսակակին կամ Պահանջողին անունը միայն կը գրուի. իսկ Կրկնասումարն այն է, որայ Օրհաշուին մէն մի յօդուածին մէջ այդ երկուքին, այն է՝ թէ՛ Առնողին և թէ՛ Տուողին՝ այսինքն, թէ՛ Պարսակակին և թէ՛ Պահանջողին անուններն ալ միանգամայն կը գրուին. և ճիշդ ասոր համար է որ Կրկնասումար կամ Կրկնակ-տոմար անունը տրուած է Տոմարակալութեան այս երկրորդ եղանակին:

Հ Ա Շ Ի Ի

Մեկու մը հաշիւ քանալ կամ բռնել. — Մոտք եւ ելք. — Հաշիւի մը պարտքին անցնել կամ սակից կամ հաշիւ մը պարտքին անցնել կամ սակից կամ հաշիւ մը պարտքի ընել. — Մեկուն հաշիւը հանել. — Հաշիւը կարգադրել. — Հաշիւը կշռել, Կշիւ կամ Մեացորդ հաշիւ. — Հաշիւը գոցել:

Տոմարակալութեան չ'սկսած՝ առաջուց ընտելանալու է Տոմարակալութեան մէջ շատ գործածուած քանի մը կարեւոր բառերու

Տոմարակալութեան և անոնց գործածութեանը: Ուստի մենք ալ նոյն բանը պիտի ընենք հիմա՝ Հաշիւ բառին և անոր վերաբերեալ տոմարան մանրամասնութեանց վրայ խօսելով առաջուց:

Տոմարակալութեան մէջ՝ Հաշիւ ըսելով պէտք է հասկնալ անձի մը (կամ իր գործողութիւն ընող համարուած իրի մը) առած և առած արժէքներուն (ապրանք, գրամ, գանձելի և վճարելի քղթեր, ելն.) մանրամասն վիճակը՝ այնպէս մը պատրաստուած. որ Առնուած արժէքներուն գումարները ամէնքը մէկ կողմը կամ մէկ սիւնի մէջ երեւան, և Տրուած արժէքներուն գումարները ամէնքը միւս կողմը կամ ուրիշ սիւնի մէջ:

Մեկու մը հաշիւ քանալ կամ բռնել կ'ըսուի՝ երբ այդ մարդուն անունին բացուած հաշուին մէջ կը գրուին անոր հետ եղած բոլոր գործողութիւնները: Հաշիւը կը բացուի ընդհանրապէս տետրակին դէմ առ դէմ երկու երեսին վրայ, ուր պէտք եղած դիւնքը կամ սիւները, եթէ չեն գծուած, քաշելէ ետքը, ինչպէս պիտի երեսին վրայ կ'երևայ, տետրակին կամ հաշուեթղթին ծախ կողմի երեսին ծայրը՝ Պարտի կամ Պարտք, և ալ կողմի երեսին ծայրը՝ Պահանջե կամ Պահանջք կը գրուի գլխազրով և ասոնց մէջտեղի պարագ մասին մէջ՝ դարձեալ գլխազրով կը գրուի այն մարդուն կամ իրին անունը, որուն համար հաշիւ կը բացուի:

Աւելին Անձի մը կամ Իրի մը համար հաշիւ քանալ կը նշանակէ գրել (Մայր-հաշիւ) տետրակին դէմ առ դէմ երկու երեսին վրայ միանգամայն անոր անունը, որուն հետ կը գործէ հաշիւ բացողը կամ այն իրին անունը, որուն Մոտքն ու ելքը մասնաւորապէս գիտնալ ուզենք. օրինակ, Անտոյ անունով հաշիւ մը կը բանանք և զանազաններէ առած զբամբիս Մոտքին (Պարտքին) կողմը, և զանազաններու առած զբամբիս ելքին (Պահանջքին) կողմը գրելով՝ դրամին Մոտքն ու ելքը և հետեւաբար Մտուելքը՝ Ըջափ Իրան ըլլալը կը գիտնանք:

Հաշիւի մը Պարտքին անցնել կամ սակից կամ հաշիւ մը Պարտքին անցնել կամ սակից կամ հաշիւ մը Պահանջող ընել: — Այսպէս բացուած հաշուին Պարտքին սիւնին մէջ կը գրուին բոլոր այն արժէքները, զորս կ'առնէ նոյն հաշիւը, այսինքն, այն անձը կամ իրը, որուն համար բացուած է այդ հաշիւը: Նոյնպէս Պահանջքին սիւնին մէջ կը գրուին բոլոր այն արժէքները, զորս կը տայ նոյն հաշիւը: Արժէք մը կամ որ այն է՝ գումար մը հաշիւին Պարտքին կողմը գրուելուն կ'ըսուի՝ Պարտքին անցնել կամ սակից կամ Պարսակակ ընել նոյն հաշիւը. իսկ Պահանջքին կողմը գրուելուն կ'ըսուի՝ Պահանջքին անցնել կամ սակից կամ Պահանջող ընել նոյն հաշիւը:

Առաջին պարագային մէջ՝ հաշիւը Պարսակակ է, երկրորդին մէջ՝ Պահանջող է կ'ըսուի:

Կը մնայ գիտնալ թէ՛ հաշիւ մը Ե՞րբ Պարսական կամ Ե՞րբ Պահանջող է. կամ ուրիշ կերպով ըսելով՝ Պարսականը կամ Պահանջողը ի՞նչպէս գտնալու է:

Հետեւեալ ընդհանուր սկզբունքին հետեւելու է միշտ:

Պարսական ընկերու է այն անձը՝ որ ինքն անձամբ արժեկէիք մը կ'առնէ կամ անոր հաշիւն ուրիշին արժեկէիք մը կը տրուի. իսկ Պահանջող ընկերու է այն անձը՝ որ ինքն անձամբ արժեկէիք մը կը տայ կամ ուրիշը անոր հաշիւն արժեկէիք մը կը տայ:

Մեկուկ հաշիւը հասնել կ'ըսուի, երբ տեսարակէն բազմելով մէկուն հաշիւին օրինակը կը գրենք զատ թղթի մը վրայ հասկընալու համար թէ՛ այդ հաշիւը ո՞րքան Պարս կամ Պահանջուի:

Հաշիւը կարգադրել կ'ըսուի՝ երբ Պարսական ըսուած անձը Պահանջող ըսուած անձին ո՞րչափ պարտք ունենալը հասկնալէ ետքը՝ զայն կերպով մը վճարէ:

Պարսի

ՏԱՐԻՆ ԵՒ ԱՄԻՍԸ	ՕՐԸ	ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ	ԳՈՒՄԱՐԸ

Հաշիւը կշռել կ'ըսուի՝ հաշիւի մը Պարսիկն և Պահանջիկն գումարներուն տարբերութիւնը կամ մնացորդը գտնելու գործողութեան, որ կը ցուցնէ նոյն հաշիւին մնացորդ Պարսի կամ Պահանջիկը, որուն կշիռ կամ Մնացորդ հաշիւն կ'ըսուի, որ նուազագոյն սիւնը գրուելով՝ երկու կողմի (Պարսիկն և Պահանջիկն) գումարները կը հաւասարին:

Կշիռ կամ Մնացորդ հաշիւ.— Երբ հաշիւի մը Պարսիկն և Պահանջիկն գումարները հաւասար են, այդ հաշիւը ինքնին Գոցուած կամ Կշռուած է կ'ըսուի: Իսկ երբ երկու գումարները հաւասար չեն՝ այդ երկու գումարներուն տարբերութեանը կշիռ

կամ Մնացորդ հաշիւն կ'ըսուի: Օրինակ, Գրիգորին հաշիւին Պարսիքը 2500 է և Պահանջիքը՝ 1500. Կշիռը կամ Մնացորդը կ'ըսուի 1000 Պարսի. այսինքն, Գրիգորին հաշիւը դեռ 1000 Պարսիկն ասոր հակառակը ըլլալով՝ եթէ Գրիգորին Պարսիքը 2500 է, իսկ և Պահանջիքը՝ 3500, Կշիռը կամ Մնացորդը կ'ըսուի 1000 Պահանջիք. այսինքն, Գրիգորին հաշիւը դեռ 1000 Պահանջող է:

Հաշիւը զոցել կ'ըսուի՝ երբ մէկուն հետ շարունակեալ հաշիւէ մնացած պարտքերնիս վճարելով կամ պահանջքնիս գանձելով կը փոխանցենք հաշիւը:

Այս բացատրութիւններէն ետքը՝ կ'ուզենք օրինակով մը ցուցնել ուսանողին թէ՛ հաշիւը ի՞նչպէս բանալ ու գործելու է:

Հաշիւը հանել կ'ուզենք Յակոբ Պօղոսեանի, որուն հետ ստորագրութիւնները բրած ենք:

Պահանջի

1898 Մարտ 10ին ծախեցինք իրեն տպրանք	2000
» Ապրիլ 2ին » » »	3500
» Մայիս 15ին » » »	1500
	7000
Որք իր Պարսիքը կը կազմեն:	1500
1898 Ապրիլ 15ին վճարեք է մեզի	2000
» » 30ին » » »	1500
» Մայիս 15ին » » »	5000
Որք իր Պահանջիքը կը կազմեն:	
Արդ՝ թերթի մը թղթի վրայ վերինին պէս գիծեր քաշելով՝ աջ կողմը Պահանջի և ձախ կողմը Պարսի և ստոնց մէջտեղը	

Յակոբ Պօղոսեանի անունը գրելով, կ'սկսինք այդ գործողութիւնները իրենց թուականներուն կարգովը իւրաքանչիւրն իրեն յատուկ սիւնին մէջ գրել, այսինքն, Պարսփին գումարները՝ Պարսփին սիւնին մէջ, և Պահանջփին գումարները՝ Պահանջփին սիւնին մէջ, ինչպէս վարը կ'երեւայ:

Ինչպէս օրինակին վրայ կ'երեւայ, նախ Յակոբ Պօղոսեանի հաշիւին Պարսփին կողմը կը գրենք առած ապրանայ գումարները զատ զատ իրենց թուականներուն կարգովը. ետքը՝ Պահանջփին կողմը կը գրենք առած դրամները նոյնպէս զատ զատ իրենց թուականներուն կարգովը:

Արդ՝ հիմա կ'ուզենք դիտնալ թէ՛ Յակոբ Պօղոսեան մեզի սըշափ պարտք ունի:

Նախ Պարսփին սիւնը կը գումարենք որ կ'ըլլայ	7000
Ետքը Պահանջփին սիւնը	5000
»	»
»	»
	<u>2000</u>


Ետքը այս երկու գումարները իրարմէ հանելով՝ տարբերութիւնը կը գտնամ 2000, որ է Յակոբին հաշիւին Կշիռը կամ Մեացորդ պարսփը, զոր փոխադրելով նուազ գումար պարունակող իր Պահանջփին կողմը՝ Կշիռ ի նոր հաշիւ ըսելով՝ երկու կողմի գումարները կը հաւասարին, այսինքն, հաշիւը կը գոցուի ըսել է: Յետայ այդ Մեացորդը կամ Կշիռը, որ Յակոբին Պարսփն է, դարձեալ իր հաշույն Պարսփին կողմը կը տանիմ Հին հաշուոյն ըսելով, որով հին հաշիւը գոցուած և նորին մէջ դարձեալ 2000դ. Պարսփ ունենալը կ'երեւայ որոշակի: Եթէ հաշուոյն մնացորդը փոխանակ Պարսփի՝ Պահանջփ ըլլար, մնացորդը Պարսփին կողմը գրելով հաշիւը պիտի գոցէինք, և կշիւը նոր հաշուոյն Պահանջփին կողմը պիտի գրէինք Հին հաշուէն ըսելով:



Պարսփ

ՅԱԿՈԲՆՈՍԵԱՆ

Պահանջփ



Գ Լ ՈՒ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՊԱՐՁ - ՏՈՄԱՐ

Պարզ-տուարն այն է՝ որով գործողութեան մը մէջ գտնուող կողմին, այն է՝ Պարսականին և Պահանջողին մէկուն առանց կամ հաշիւը միայն կը գրուի Օրհաշուին և Մայր-հաշուին մէջ: Աւելի որոշ ըսելով՝ Պարզ-տուարի եղանակով տեսրակ կողմը հետեւեալ կերպին վրայ հիմնուած է:

Երբ մէկը պատճառով մը մէկէն Պահանջփ ունենայ կամ Պահանջող ըլլայ՝ Օրհաշիւ տեսրակին մէջ կը գրուի յօղուած մը որ իմաստով,

«Այսինչ օրը, Պարսի այնինչ անձը, այնինչ բանին համար այսչափ գումար մը»:

Նոյնպէս երբ մէկը պատճառով մը մէկուն Պարսփ ունենայ կամ Պարսական ըլլայ՝ դարձեալ Օրհաշուին մէջ կը գրուի ուրիշ յօղուած մը այս իմաստով,

«Այսինչ օրը, Պահանջի այնինչ անձը, այնինչ բանին համար այսչափ գումար մը»:

Մայր-հաշիւ տեսրակին մէջ ալ վերի օրինակներուն մէջ յօղուած Պարսական և Պահանջող անձանց համար հաշիւներ բացուելով, Օրհաշուին նոյն յօղուածներն այդ հաշիւներուն կը տարուին, այսինքն, բացուած հաշուոյ Զախ կողմը կը գրուին

բոլոր Պարսֆի կամ Պարսիով սկսուած յօդուածները, և աջ կողմը բոլոր Պահանջֆի կամ Պահանջեով սկսուած յօդուածները իրենց գումարներովը. այնպէս որ Օրհաշիւը գրուած բոլոր հաշուոց վիճակը յստակօրէն կ'երեւայ Մայր-հաշուին մէջ:

Աւրեմն Պարզ-տոմարը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ կարգ մը Պարսական եւ Պահանջող հաշիւներ կամ հաշուընթացներ բունել անոնց համար, որոնց ապառիկ ապրանք ծախսեր և գներ ենք, կամ գրամ տուեր և աւեր ենք ելն: Թէև այս եղանակով վաճառահանք հետերնին գործած զանազան անձերու հետ իր վիճակը կը գիտնայ, բայց նոյն իսկ իր ներքին վիճակը չի կրնար գիտնալ:

Արդարեւ յայտնի է թէ՛ այս վերջին նպատակին հասնելու համար կարելոր է հաշիւներ բանալ ո՛չ միայն այն անձերուն, որոնց հետ կը գործենք, այլ նաև ամէն իրերու համար, որք գործին հետ վերաբերութիւն ունին: Այդ եղանակը կամ մէթոտը կրկնատոմարն է, որ երկու նպատակին ալ կը ծառայէ, գործնագարձակօրէն պիտի բացատրենք կրկնատոմարին վրայ խօսած տեսնես:

Պարզ-տոմարն իր այս անպատեհութեան համար թէև ազահովազոյն եղանակ մը չէ, սակայն այս կերպ տետրակներ ունենալն ալ զոնէ ամենեւին չունենալէն միշտ բաւ է:

ՊԱՐԶ - ՏՈՄԱՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԻՆՆԱԿԱՆ ՏԵՏՐԱԿՆԵՐ

Գործողութիւնները Պարզ-տոմարով գրողը երկու կարգ տետրակներ ունենալու է, որոնց կ'ըսուի, Գլխաւոր եւ Երկրորդական տետրակներ:

ՊԱՐԶ - ՏՈՄԱՐԻՆ ԳԼՔԱԿՈՐ ՏԵՏՐԱԿՆԵՐ

Պարզ - տոմարին համար գործածուած գլխաւոր տետրակներն են.

1. Օրհաշիւ
2. Մայր-հաշիւ

ՊԱՐԶ - ՏՈՄԱՐԻՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՏԵՏՐԱԿՆԵՐ

Երկրորդական տետրակներուն թիւը՝ թէ՛ Պարզ-տոմարին եւ թէ՛ կրկնատոմարին մէջ գործին տեսակին համեմատ կ'աւելնայ կամ կը պակսի. բայց ընդհանրապէս ամենէն շատ գործածականները ասոնք են.

1. Չեռասէտ
2. Տէտ Դրամարկի կամ Սննուկի
3. » արձանագրութեան զանազան տեսակներու
4. » » վնարեղի »
5. Մքերագիր կամ Մքերասէտ
6. Տէտ Ընամակի ընթորիւնակութեան
7. » Իրամանի կամ Ապսպրանֆի, եւլն:

Երկրորդական տետրակներէն միայն Չեռաստարին ձեւը պիտի չենք հա. մնացածներուն, ինչպէս նաև ուրիշներու վրայ կրկնատոմարին առիթը պիտի խօսինք, ամէն մէկուն վրայ զատուած և մանրամասն ծանօթութիւններ տալով. որովհետեւ այս տետրակներուն ձեւերը թէ՛ Պարզ-տոմարին և թէ՛ կրկնատոմարին մէջ նոյն են:

Չ Ե Ր Ա Ս Տ Ե Տ Ր

Չեռասէտը պարզ տետրակ մ'է, ուր կը գրուին մանրամասնաբար վաճառատան մը օրական ամէն գործողութիւնները զատուած և իրարմէ բաժնուած գրութիւններով, որոնց Տոմարակալութեան լեզուով՝ Յօդուած կ'ըսուի: Այս տետրակը թէև երկրորդական՝ սակայն ամենէն առաջինը և կարեւորն է. զի գործողութիւն մը կատարուած ատեն նախ այս տետրակը կը գրուի, ետքը վաճառչի միւս տետրակները: Աստի պէտք է ուշագրութիւն ընել և գործողութիւնը կատարուած պահուն իսկ, առանց ժամանակ անցնելու, անմիջապէս գրել, զնուած և ծախուած ապրանքները, գանձուած և վճարուած դրամները, աւճուած և տրուած տոմակները, վաճառատան և տան ծախքերը, եւլն. եւլն:

Չեռաստարին մէջ գործողութիւն մը գրելու համար մասնաւոր ուսում մը պէտք չէ. բաւական է որ ճիշդ և որոշ գրուին ամէն գործողութեան մանրամասնութիւնները, վասն զի պզտի գանձուածութիւն մը, մոռացմունք մը կամ սխալմունք մը միւս տետրակներն ալ (Օրհաշիւ եւ Մայր-հաշիւ) անցնելով, վերջէն մեծ գիտարութեանց և աւելորդ աշխատութեանց տեղի կուտան:

Չեռասէտին ձեւը և կազմութիւնը

Չեռաստարը միտալ թղթոց մեծութեամբ կ'ըլլայ, որուն ամէն մէկ երեսին վրայ երկայնքին՝ վերէն վար պէտք է գծուին կամ գծուած են հինգ սիւներ. մին՝ ձախ եզերքը և չորսն աջ եզերքը, այսպէս.

Ձախ կողմի սիւնին մէջ՝ իւրաքանչիւր յօդուածին քով կը գրուի Օրհնական երեսի թիւը, ուր փոխադրուած է այդ յօդուածը. աջ կողմի առջի լայն սիւնին մէջ՝ գործողութեան մասնական գումարը, և նեղին մէջ՝ կտորակը, լիբա և դշ. եթէ տեւրակները լիբայի վրայ բռնուած են. դշ. և փրյ. Ֆրանք և սանթիմ' և լին. երկրորդ լայն սիւնին մէջ՝ մասնական գումարներուն հաւաքական գումարը և նեղին մէջ՝ կտորակը, լիբա և դշ., դշ. և փրյ. Ֆրանք և սանթիմ', և լին.:

Ձեռատետրին ապրանքի վաճառման կամ գնման ամէն յօդուածը պէտք է պարունակէ հետեւեալ վեց կէտերը կամ մասերը:

1. Գործողութեան թուականը՝ ամսոյն օրը, ամիսը և տարին որ կը գրուի ամէն յօդուածին ճակատը վերի օրինակին վրայի երկու հաւասար ուղիղ գիծերուն մէջտեղի պարապ մասին մէջ:
2. Գործողութեան տեսակը՝ գնումն, վաճառումն, դանձումն վճարումն, և լին.:
3. Անունը, մականունը և ո՛ր անդամի ըլլալը անոր, որուն հետ եղած է գործողութիւնը:
4. Գործողութեան պայմանները, այսինքն, կանխիկ թէ ապառիկ, մուրհակո՞վ թէ փոխանակազրով:
5. Ապրանքին տեսակը, որակը, քանակը, գինը, և լին.:
6. Մասնական գումարները (եթէ կան) և անոնց հաւաքական գումարները իրենց յատուկ սիւններուն մէջ:

Այս վեց կէտերն աւելի որոշ հասկնելու համար՝ Ձեռատետրի հետեւեալ յօդուածին վեց մասերը թուանշաններով կը նշանակենք: (Տե՛ս յաջորդ երեսը):

Ծանօթ.— Զաջորդ երեսի Ձեռատետրի օրինակին վրայի 1—6 թիւերը բացառելի վեց կէտեր մասնաճիւղը ընելու համար միայն գրած ենք. յայտնի է, որ զործի մէջ այդ թիւերը չեն գրուիր Ձեռատետրին վրայ:

Օրինակ Ձեռատետրի

(1) 3 Յունվար 1898

(2) Մախեցի (4) Վճարելի կանխիկ (5) 50 ժր. ամերիկաց 5 լիպ. գ. 20 50 » » 7 » » 30	(3) Կարնեցի Պ. Գեորգեանի նեսեւեակները	Պ. Գեորգեանի	1000 — 1500 —	(6) 2500 —
---	---------------------------------------	--------------	------------------	------------

ՕՐՀԱՆԱԿ

Օրհնական մէջ կը գրուին Ձեռատետրէն քաղելով բոլոր գործողութիւնները դաս դաս յօդուածներով: Այս տետրակը մտքը, կանոնադր և յստակ գրելու է:

Օրհնաչիւրը գրելէ Ձեռատետրին ընդօրինակութիւնն է, սաւորներութեամբ միայն որ՝ Օրհնական յօդուածները կ'սկսին Պարտի և Պանակցիով, որք կը գրուին Պարտական և Պանակցող Հաշուոց առջեւ, որով մէկ նայուածքով կը հասկցուի նոյն հաշիւին կամ յօդուածին Պարտական կամ Պանակցող ըլլալը:

Օրհնաչիւրի անիւր և կազմութիւնը

Օրհնաչիւրը հաստատ կազմով մեծագիր գրքի մը ձեւն ունի, որ ասակապէս պատրաստ կը ծախուի թղթավաճառներուն քով: Օրհնական ամէն երեսին վրայ երկայնքին՝ վերէն վար պէտք է գծուին կամ գծուած են Ձեռատետրին պէս հինգ սիւներ. մին՝ ձախ կողմը և չորսն աջ կողմը: Ձախ կողմի սիւնին մէջ կը գրուի իւրաքանչիւր յօդուածին Մայր-հաշուին քաներո՞րդ երեսը անցած ըլլալը. աջ կողմի առջի երկու սիւններուն մէջ՝ գործողութեան մասնական գումարները, եթէ կան, լիբա և դշ. եթէ տեւրակները լիբայի վրայ բռնուած են. Ֆրանք և սանթիմ' եթէ Ֆրանքի վրայ բռնուած են և լին. իսկ միւս երկու սիւններուն մէջ՝ հաւաքական գումարները:

Օրհնական յօդուածները պարունակելու են սա վեց կէտերը կամ մասերը:

1. Գործողութեան թուականը, այսինքն, ամսոյն օրը, ամիսը և տարին, որք կը գրուին ամէն յօդուածի ճակատը երկու հաւասար ուղիղ գիծերուն մէջտեղը:

2. Պարտականի անունը, մականունը և տեղը Պարտիով, և Պահանջողին անունը, մականունը և տեղը Պահանջեով սկսելով: ամէնքն ալ գլխագիր:

3. Գործողութեան տեսակը, գնում, վաճառում, գանձում, վճարում, ևլն:

4. Գործողութեան պայմանները, այսինքն, կանխիկ թէ ապառիկ, ևլն:

5. Ապրանքին տեսակը, որակը, քանակը, գինը, ևլն:

6. Մասնական գումարները (եթէ կան) և հաւաքական գումարները իրենց յատուկ սիւներուն մէջ:

Ըստ ամենքէն պէտք չէ հետեւցնել թէ՛ Օրհանոցին ամէն յօդուածը անպատճառ այս կէտերը ունենալու է. կան յօդուածներ, որոնց մէջ այն մասերէն մին կամ աւելին գոյութիւն չունենար, ինչպէս պիտի տեսնուի իր կարգին:

Օրհանոցին ամէն էջին վրայ լէն սկսելով շարունակեալ թիւ գնելու է, որ պատրաստ ծախուած տետրակներուն մէջ տպուած կըլլայ սովորաբար: Օրհանոցին մէկ երեսը լեցած ատեն՝ հաւաքական գումարները գումարելով. նոյն սիւնին տակը գրելու է քովը Փոխադրելի գրելով. ետքը նոյն գումարը յաջորդ երեսի հաւաքական սիւնը փոխադրելու է գումարին առջև Փոխադրեալ գրելով: Քանի մը մասնական գումարով յօդուած մը եթէ միեւնոյն երեսին վրայ գրուելու տեղ չմնայ՝ և մէկ մասը յաջորդ երեսը

Օրինակ Օրհանոցի

(1) 3 Յունվար 1898

(2) ՊԱՐՏԻ Պ. ԳԵՈՐԳԵԱՆ ԿԱՐՆԵՅԻ	
(3) Հետեւեալ վաճառման համար	
(4) Վաւերի կանխիկ	
(5) 50 ծր. ամերիկան 5 լիպ. գ. 20	1000
50 " " 7 " " 30	1500
	(6) 2500

Ծանօթ. — Օրհանոցի օրինակին վրայի 1-6 բիւերը բացատրելի վեց կէտեր մտահանիչ ընելու համար միայն դրած են. յայտնի է թէ՛ գործի մէջ այդ բիւերը չեն գրուի Օրհանոցին վրայ:

անցնել հարկ ըլլայ՝ նոյն յօդուածին գրուած մասնական գումարներն ալ իրենց սիւնին մէջ գումարելու, և ապա թէ՛ մասնական և թէ՛ հաւաքական գումարներուն ընդհանուր գումարները փոխադրելու է իրենց յատուկ սիւներուն մէջ, զարձեալ Փոխադրելի և Փոխադրեալ գրելով անոնց առջև:

Ձեռատետրին յօդուածները

Պարզ-տոմարի Օրհանոցը անցնելու կերպը

Ձեռատետրին յօդուածները Պարզ-տոմարի Օրհանոցը անցնելու համար՝ յօդուածին Պարտականը կամ Պահանջողը գտնալու է այն կերպով, ինչպէս բացատրեցինք Հաշիւին վրայ խօսած ատենինս (Տէ՛ս Թ. 276):

Արդ՝ Պարզ-տոմարի Օրհանոցը անցնելիք ապառիկ գործողութեանց յօդուածները այսպէս պիտի գրուին. այն անձը կամ հաշիւը, որ արժէնիւթ մը կ'առնէ, Պարտական է. հետեւաբար պէտք է գրել Պարտի այսինչ. իսկ այն անձը կամ հաշիւը, որ արժէնիւթ մը կը տայ, Պահանջող է, հետեւաբար պէտք է գրել Պահանջի այսինչ, ևլն:

Այս սկզբունքով Ձեռատետրի հետեւեալ յօդուածները Պարզ-տոմարի Օրհանոցի յօդուածի պիտի վերածենք այսպէս:

1. Գնեցի ապառիկ Մ. Գէորգեանէ 8000 դր.ի ապրանք:

Նախ պիտի գտնանք այս յօդուածին Պարտականը կամ Պահանջողը, որպէս զի ըստ այնմ Օրհանոցը անցնենք:

Մ. Գէորգեան ապառիկ ապրանք տուեր է մեզի, հետեւաբար Պահանջող է. ուրեմն կը գրենք Օրհանոցը այսպէս գլխագրով.

Պահանջէ Մ. Գէորգեան

Ինձ ձախած 8000 դր.ի ապրանքին համար

(Հոս գրելու է առնուած ապրանքին մանրամասնութիւնը)

2. Ծախեցի ապառիկ Յ. Պողոսեանի 6000 դր.ի ապրանք:

Յ. Պողոսեան ապառիկ ապրանք տուեր է մեզմէ. հետեւաբար Պարտական է. ուրեմն կը գրենք Օրհանոցը.

Պարտի Յ. Պողոսեան

Իրեն ձախած 6000 դր.ի ապրանքին համար

(Հոս գրելու է ծախուած ապրանքին մանրամասնութիւնը)

3. Գանձեցի Յ. Պողոսեանէ 2000 դր.:

Յ. Պողոսեան գրամ տուեր է մեզի, հետեւաբար Պահանջող է. ուրեմն կը գրենք Օրհանոցը.

Պահանջէ Յ. Պողոսեան

Իրև գանձած 2000 դե.իս համար

4. Վճարեցի Մ. Գէորգեանի 2000 դշ:

Մ. Գէորգեան գրամ առեր է մեզմէ, հետեւաբար Պարսա- կան է. ուրեմն կը գրենք Օրհաշիւը.

Պարսի Մ. Գէորգեան

Իրեն վճարած 2000 դե.իս համար

5. Տուի Մ. Գէորգեանի 4000 դշ.ի 61|օր. ի/հ. իմ տոմսակս:

Մ. Գէորգեան առեր է մեզմէ այդ տոմսակը. հետեւաբար Պարսական է. ուրեմն կը գրենք Օրհաշիւը.

Պարսի Մ. Գէորգեան

Տուի իրեն 4000 դե.ի 61|օր. ի/հ. իմ տոմսակս

6. Առի Յ. Պողոսեանէ 3000 դշ.ի 31|օր. իմ/հ. իր տոմսակը:

Յ. Պողոսեան առեր է մեզի այդ տոմսակը. հետեւաբար Պահանջող է. ուրեմն կը գրենք Օրհաշիւը.

Պահանջէ Յ. Պողոսեան

Իր տուած 3000 դե.ի 31|օր. իմ/հ. իր տոմսակին համար

Այս օրինակները պիտի անցնենք Օրհաշիւը, որուն ձեւն ու կարեւոր բացատրութիւնները արդէն տուինք:

Օ Ր Հ Ա Շ Ի Ի

1

1 Մարտ 1898		
1	Պահանջէ Մ. Գէորգեան Ինձ ծախած ապրանքին համար	8000
2	Պարսի Յ. Պողոսեան Իրեն ծախած ապրանքիս համար	6000
2	Պահանջէ Յ. Պողոսեան Գանձեցի իրմէ քերհաշիւ	2000
1	Պարսի Մ. Գէորգեան Վճարեցի իրեն քերհաշիւ	2000
1	Պարսի Մ. Գէորգեան Իրեն տուած 61 օր. տոմսակիս համար	4000
2	Պահանջէ Յ. Պողոսեան Իրմէ առած 31 օր. տոմսակիս համար	3000
		25000

Մ Ա Յ Ր - Հ Ա Շ Ի Ի

Մայր-հաշիւը՝ որուն Հաշուրեքացի սեւրակ ալ կ'ըսուի, այն է ուր հաշիւներ կը բացուին անոնց համար՝ որոնցմէ պահանջք կամ պարտք պարտք ունինք, և որք Օրհաշուին մէջ կը գանուին իբր Պարսական կամ իբր Պահանջող, ինչպէս կ'երեւայ Օրհաշուի օրինակին վրայ:

Մայր-հաշիւը Օրհաշուին ընդօրինակութիւնն է տարբեր կերպով գրուած, այսինքն, Օրհաշուին մէջ Պարսական, այսինքն, Պարսի այսինչ նշանակուած յողուածին գումարը՝ Մայր-հաշուին մէջ նշան անձին անունով բացուած հաշիւին Պարսիին կողմը կ'անցնի. իսկ Պահանջող, այսինքն, Պահանջի այսինչ նշանակուած յողուածին գումարն ալ՝ Մայր-հաշուին մէջ նոյն անձին անունով բացուած հաշիւին Պահանջիին կողմը կ'անցնի:

Այս գործողութեամբ, որուն Օրհաշուին յողուածները Մայր-հաշիւ անցնել կ'ըսուի, ուզած ատեննիս Մայր-հաշիւը բանալով կրնանք գիտնալ թէ՛ Մ. Գէորգեան ո՞րչափ կը պահանջէ մեզմէ, կամ Յ. Պողոսեան ո՞րչափ կը պարտի մեզի, ինչպէս պիտի տեսնուի քիչ վերջը մեր շինելիք Մայր-հաշուին վրայ:

Մայր-հաշուին ձեւը և կազմութիւնը

Մայր-հաշիւը մեծազիւր գրքի մը կը նմանի, Օրհաշուին մեծութեան և ստուարութեան համեմատութեամբ: Մայր-հաշիւն ալ պատրաստ կը ծախուի և վաճառականի մ'ալ տամարները, մանաւանդ Օրհաշիւը, Մայր-հաշիւը և Սնտուկի սեւրակը չնորհօք և վայելուչ ըլլալու համար պէտք է որ պատրաստ ծախուածնէրէն ըլլան:

Մայր-հաշուին երեսներուն ձեւն այսպէս է: Մայր-հաշուին մէջ հաշիւ բանալու համար, ինչպէս ցուցուցինք թ. 276 երեսին մէջ՝ Հաշիւին վրայ խօսած ատեննիս, տեսարակին երկու երեսը միանգամայն կը բացուին. ձախ երեսին վերի ծայրը Պարսի, և աջ երեսին վերի ծայրը Պահանջի կը գրուի գլխադիր. հետեւաբար տեսարակին դէմ առ դէմ բացուած երկու երեսներուն վրայ ալ շարունակութեան միենոյն թիւը կը գրուի թիւ 1էն սկսելով, որք պատրաստ ծախուած տեսարակներուն մէջ արդէն տպուած են: Պարսի և Պահանջիին և տեսարակին մէջտեղն ու ձակատը կը գրուի գլխադիր անունը մականունը ու տեղն անոր, որուն համար հաշիւ կը բացուի: Այս բառերուն տակ՝ տեսարակին մէկ ծայրէն միւսը՝ լայնքին հաստ զոյգ կամ մէկ զիմ մը կը քաշուի (եթէ

1 Պարտի (Տեսակին ձախ կողմը) Պահանջէ 1 Պահանջէ (Տեսակին աջ կողմը) Պահանջէ 1

1898	Յունվար 3	Յստիւմաւ ապրանք	1	2500					
1	2		4	5	6	1	2		
Ք. 286 երեսի Օրհաուի օրհնակներ վերոյգրեալ երանկով Մայր-հաշիւր կ'անցնեն:									

Մ. Փեղպեան

1898	Մարտի 4	Քերհաշիւ վհարուած	1	2000		1898	Մարտի 1	Տուած ապրանքին համար	1	8000
»	6	Տուած մուրհակս 61/or	»	4000						
				6000						

Յ. Պոլսեան

1898	Մարտի 2	Իրեն ձախած ապրանքիս համար	1	6000		1898	Մարտի 3	Վհարած գրամը	1	2000
						»	7	Տուած մուրհակը	»	3000
										5000

Պահանջէ 1

Պահանջէ 2

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿՐԿԱՏՈՍԱՐ . - ԱՆՈՐ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

պարտէն չէ քաշուած) և այս գիծին տակի անմիջապէս առաջին տո-
նէն հաշիւը կը գրուի, որուն համար տեսարակին երկայնքին, վե-
րին վար վեց սիւներ գծուած կ'ըլլան Պարսիին և Պահանջիին
կրկններուն վրայ: Այս վեց սիւները հաշիւին վերաբերեալ հե-
տեալ ժամերը կը պարունակեն:

Չախ կողմի թիւ 1 սիւնին մէջ կը գրուի, ինչպէս կ'երեւայ
արեւակին վրայ, Օրհաշուէն փոխադրելի յօդուածին թուականը,
այդին (թուանշանով) և ամիսը. թ. 2 սիւնին մէջ՝ ամսոյն օրը.
թ. 3ին մէջ՝ որ միւսներէն լայն է, գործողութեան տեսակը որոշ
և համառօտ մէկ տողի վրայ. թ. 4ին մէջ՝ Օրհաշուին երեսի թիւը,
այդէ փոխադրուած է այդ յօդուածը. թ. 5ին մէջ՝ յօդուածին
գումարը, իրան (եթէ տեսարակները լիբայի վրայ բռնուած են)
կամ Ֆրանքը, (եթէ Ֆրանքի վրայ բռնուած են, եւլն.) թ. 6ին
մէջ՝ կատարակները, ղշ.ը, հարիւրորդը, եւլն:

Տրուած բացատրութիւնները ուսանողին դիւրահասկնալի ը-
նդուն համար՝ թ. 286 երեսին Օրհաշուի յօդուածները Մայր-հաշիւ
անցած կը դնենք թ. 288 երեսը:

Ահաւասիկ Օրհաշուին յօդուածները Մայր-հաշիւ անցընելով
չեն մէկ նայուածքով յայտնի կ'երեւայ թէ՛ Մ. Գէորգեան իր 8000
գումանջքին փոխարէն 6000 գանձած է և դեռ 20 10 կը պահանջէ
մեզմէ: Յ. Պոլսեան ալ իր 6000ի պարտքին փոխարէն 5000
գումարած է, և դեռ 1000 կը պարտի մեզի:

Կանոնաւորութիւնը ամէն գործի մէջ անոր յաջողութեան
արդմաններէն մէկն է, և այդ կանոնաւորութիւնը միայն օրինա-
ւոր բռնուած տեսարակներով կ'ըլլայ: Այո՛, կանոնաւոր և օրի-
նաւոր տեսարակները նոյն վաճառատան գործերը լաւ ուղղու-
թեան մը մէջ դնելով՝ անոր զարգացմանը մեծապէս կը նպաս-
տեն. այս ճշմարտութեան հակառակիլը կը նշանակէ թէ՛ Տոմա-
րակալութիւնը երրորդական է և անմիջական կարեւորութիւն չունի
վաճառականութեան համար:

Նամօր. — Աւելորդ չենք համարի կրկնել թէ՛ նախորդ երեսի Մայր-հաշուի
օրհնակին վրայի 1—6 թիւեր սիւներուն ի՛նչ բանի յատկ ըլլար ուսանողին
հասկանիլի բնէլու. համար միայն որո՞ւմ ենք. գործի մէջ անօրակոյս այդ թիւերը
ինչպէս նաեւ Տեսակին ձախ եւ Աջ կողմը բառերը չեն գրուիլ Մայր-հաշուինմէջ:

Կանոնաւոր տետրակները վաճառականին համար փայլուն ճրագներ են, որք իր գործին վրայ օգտակար լոյս մը կը տան մինչդեռ ասոր հակառակին ամէն օր փորձով ականատես կ'ըլլանք: Շատ վաճառականներ կը տեսնենք սնանկացած, ասոնց պատճառը կամ բոլորովին տետրակ չունենալնին կամ անկանոն տետրակներ ունենալնին է, որք ուզած ատեննին իրենց ճշմարիտ վիճակը չեն ներկայացներ, այդ կերպ բռնուած տետրակները գիրենք, առանց իրենց գիտութեանը՝ կործանման յառաջացուցած են. մինչդեռ շատ անգամ իրենք կը կարծեն թէ կը հարստանան: Այդ խեղճերը եթէ կանոնաւոր տետրակ ունենային, իրենց վնասը աչքի առջեւ ունենալով՝ գէթ ժամանակին կանգ կ'առնէին և բոլորովին ողբալի և անդամամեղի վիճակէ մը ինքզինքնին կ'ազատէին:

Իրաց այս վիճակին իբր դարման՝ մենք կ'առաջարկենք որ գործի մարդիկ քիչ մը հոգ տանին տետրակներ ունենալու և զանոնք գրելու են այնպիսի եղանակով մը, որով կարելի ըլլայ թէ իրենց գործին վիճակին վրայ որոշ գաղափար մը կազմել, և թէ՛ թուաբանական ճշդութեան մը արդիւնքները ներկայել, այդ եղանակը կամ մէթոսը Կրկնասոմարն է, որուն բազմակողմանի և անժխտելի առաւելութեանց վրայ ընդարձակօրէն պիտի խօսինք այս գլխուն մէջ:

Վաճառականին բոլոր գործողութիւնները կանոնաւորապէս և օրինաւորապէս՝ գործողութիւնը կատարող երկու կողմին (Առևտրի և Տոռողի կամ Պարսակակի և Պահանջողի) անուններն ալ միանգամայն Օրհաչիւր և Մայր-հաչիւր գրելու եղանակին կ'ըսուի Կրկնասոմար կամ Կրկնակ-սոմար: Կրկնատոմարին առաւելութիւնները լաւագոյնս ապացուցանելու և Պարզ-տոմարին վրայ ունեցած գերազանցութիւնը ի վեր հանելու համար՝ երկու եղանակներն ալ բազմաթիւ ան պիտի դնենք:

Պարզ-տոմարի Օրհաչիւրն մէջ միայն ապառիկ գնումները և վաճառումները գրուեցան, և Մայր-հաչիւրն մէջ հաչիւրներ բացուեցան միայն անոնց համար, որոնց հետ եղած էր այդ գործողութիւնները:

Պարզ-տոմարի Մայր-հաչիւր միայն դանազաններու հաչիւրները կը ներկայացնէ, որ գործին արտաքին մասը կը կազմէ, այսինքն, վաճառականին յաճախորդներու հետ ունեցած վիճակը կը ցուցնէ. իսկ անոր բուն իսկ գործին վիճակին վրայ, որուն ներքին մասը պիտի ըսենք, ամենեւին տեղեկութիւն մը կարելի չէ քաղել Պարզ-տոմարով գրուած տետրակներէն: Կրկնատոմարը այդ երկու պայմաններն ալ կը գոհացնէ կատարելապէս, զոր իր կարգին պիտի բացատրենք:

Կրկնատոմարի եղանակը հետեւեալ երկու սկզբունքին վրայ է հիմնուած.

1. Կրկնատոմարի Օրհաչիւրն ամէն յօդուածին Պարսակակ նշանը կամ հաչիւրները՝ պէտք է որ իրեն համապատասխան Պահանջող հաչիւ մը կամ հաչիւներ ունենան և փոխադարձաբար:

2. Կրկնատոմարի Մայր-հաչիւրն բոլոր հաչուց գումարները մէջ ճիշդ կշիռ մը արտադրելու են. այսինքն, այդ հաչիւներն Պարսիկ և Պահանջիկ ընդհանուր գումարը իրարու և Օրհաչիւրն գումարին հաստար ըլլալու են:

Պարզ-տոմարի Օրհաչիւրն ամէն յօդուածին մէջ՝ գործողութիւնը կատարող մէկ կողմին միայն անունը կար, այսինքն, միայն Պահանջողը կամ միայն Պարսակակը. մինչդեռ Կրկնատոմարի Օրհաչիւրն ամէն յօդուածին մէջ՝ այդ երկուքն ալ միանգամայն կը գրուին: Օրինակ, Գրիգորը, որուն Օրհաչիւրը պիտի գրենք, Յակոբին ապառիկ ծախսը 2000 դր. ի ապրանք. այս գործողութիւնը Պարզ-տոմարով գրելու համար կ'ըսենք

Պարսի Յակոբ Ելն. 2000

Կրկնատոմարի եղանակով գրելու համար կ'ըսենք

Յակոբ Պարսի Գրիգորի Ելն. 2000

Այս օրինակէն յայտնի կ'երեւայ թէ՛ Պարզ-տոմարին մէջ միայն Պարսակակին անունը կը գրուի, Պահանջողին անունը գործութեամբ կ'իմացուի և փոխադարձաբար, մինչդեռ Կրկնատոմարին մէջ՝ թէ՛ Պարսակակին և թէ՛ Պահանջողին անունները միանգամայն յայտնի կը գրուին: Ուրեմն ըսել է թէ՛ միեւնոյն գործողութեան կամ յօդուածին գումարը Կրկնատոմարի Մայր-հաչիւր երկու անգամ կ'անցնի. մին՝ Պարսակակ հաչիւին Պարսիկ և միւսը Պահանջող հաչիւին Պահանջիկ կողմը. ահա այս կրկին անգամ անցնելուն համար է որ Տոմարակալութեան այս եղանակը Կրկնասոմար կամ Կրկնակ-սոմար անունը առած է:

Կրկնասոմարին Պարզ-սոմարին վրայ ունեցած առաւելութիւնները. — Յօդուածներուն գումարը երկու անգամ Մայր-հաչիւ անցընելով, մին՝ Պարսիկ և միւսը՝ Պահանջիկ կողմը, կըրնանք գիտնալ թէ՛ Մայր-հաչիւրն մէջ սխալ սպրդած է թէ ոչ. զի եթէ Օրհաչիւն Մայր-հաչիւ անցնելու ատեն սխալ ըլլայ, Մայր-հաչիւրն հաչուց Պարսիկ և Պահանջիկ գումարները իրարու չեն համաձայնիր, ուսկից սխալը անմիջապէս յայտնի կ'ըլլայ: Ասկէ զատ՝ Կրկնատոմարի մէջ վաճառականին ներքին վիճակը իրեն ներկայացնելու համար հնարուած այլեւայլ հաչիւները (զորս իրենց կարգին պիտի թուենք) իրեն կարեւոր տեղեկութիւններ կը տան հաստատութեամբ գործելու համար. զոր օրինակ, գործի սկսած ատեն ո՞րչափ և ի՞նչ գումարալուծ ունէր,

ասկէ զատ՝ ուղած ատեն կը գիտնայ թէ՛ Մնտուկը որչա՞փ գրամ ունի, վաճառատունը որքա՞ն ապրանք, թղթապանակը ի՞նչ գումարի գանձելի թղթեր, չըջարեբութեան մէջ որչա՞փ վճարելի թղթեր, զանազաններու ս՞րչափ պարտք և զանազաններէ որքա՞ն պահանջք, որչա՞փ է իր գուտ շահը ապրանքներէն, որքա՞ն է իր անձնական, վաճառատան և տան ծախքերը զատ զատ-տարեգլխուն կամ ուրիշ ատեն հաշիւ տեսած ժամանակ առաջուց դրած դրամագլուխը ի՞նչ վիճակ ստացած է՝ այսինքն, որչա՞փ աւելցած ըլլալը՝ եթէ շահած է, կամ որչափ պակասած ըլլալը՝ եթէ վնասած է. մէկ խօսքով՝ վաճառականին Գոյ՛ջ ու Պարս՛բ յստակօր՛ն կը ցուցնէ:

Վերջապէս կրկնատոմարի եզանակը ապէս կրնանք սահմանել. որ և է գործի մը դրամագլուխը զայն վարող տան վստահուած է. և այդ տունը պարտաւոր է ամէն ատեն հաշիւ տալու և ապացուցանելու դրամագլխին ի՞նչ վիճակի մէջ ըլլալը. այսինքն, թէ՛ որքա՞նը ապրանք է, որչա՞փը դրամ, ի՞նչ գումարի գանձելի թղթեր, որչա՞փը պահանջք, և ինչ. և դրամագլխին այդ ձեւափոխութիւնները ¹⁾ թուականներով և ի՞նչ պատճառներով տեղի ունեցեր են. դրամագլուխը որչա՞փ աւելցեր կամ որչա՞փ պակսեր է: Վաճառականը իբր օտար մէկը ամէն ատեն այս բաներուն հաշիւը պիտի տայ նոյն իսկ իրեն, և այս միմիայն իր վիճակը հասկնալու համար:

Նաև աւելի մանրամասնութեան մտնելով՝ վաճառականը եթէ քանի մը տեսակ ապրանքի վրայ գործէ, անոնց իւրաքանչիւրին համար զատ հաշիւներ բանալով ամէն ատեն կը գիտնայ թէ՛ ¹⁾ քանի՞ շահեր է կերպասէն, բամբակէն և լւն. ատնք գիտնալով և հասկնալով, ո՞ր տեսակէն որ աւելի շահի՝ այն ճիւղը աւելի կը մշակէ և առաջ կը տանի. իսկ ընդհակառակը, ո՞ր տեսակէն որ վնասէ՝ այլեւս կը դադարի այն տեսակին վրայ գործելէ:

Կրկնատոմարի առաւելութեանց կարգէն է նաև այն պարագան թէ՛ Պարզ-տոմարի մէջ շատ սխալներ կրնան ըլլալ, նոյնպէս դիւրին է որ և է արժէնիւթ մը պահել կամ գողնալ, առանց անոր հետքը տեսարակներուն մէջ երեւալու. օրինակի համար, կրնայ ըլլալ որ՝ գիտութեամբ կամ անգիտութեամբ մեզմէ պահանջք ունեցող Յակոբին Պարս՛իև տարած չըլլանք իրեն տրուած մէկ գումարը. այս մտայնութեամբ Պարզ-տոմարի տեսարակներուն մէջ

[1] Որովհետև գործի մէջ վաճառականին դրամագլուխը միշտ կը փոխուի, մէկ մասը դրամ կ'ըլլայ, մէկ մասը տպրակ, մաս մը գանձելի քարեր, զանազաններու վրայ պահանջք, եւ լւն. եւ լւն.

տեսարակը միջոցը չկայ. այդ պարագային՝ պէտք է սպասել Յակոբին պարկեշտութենէն. որ իրեն համար նպաստաւոր սխալ-անջը մեղի իմացնէ: Կրնայ ըլլալ նաև որ անհաւատարիմ պաշտօնայ մը իրեն իւրացնէ մեզի պարտք ունեցող Մինասին տուած գումարը, անոր Պահանջիև տանելով նոյն գումարը: Այս անհատարմութեան հետքը անմիջապէս զանալ կարելի չէ Պարզ-տոմարի մէջ: Մինչդեռ կրկնատոմարի միջոցաւ այս կարգի սխալ-անջը և գողութիւններն ուշ կամ կանուխ երեւան կ'ընեն: Առջի պահանջն առնելով՝ եթէ մտացած ըլլանք Յակոբին Պարս՛իև տանիլը առած գումարը, սխալը կրկնուած պիտի ըլլայ թէ՛ Յակոբին և թէ՛ Մնտուկի հաշուց մէջ, այսինքն, թէ՛ Յակոբին Պարս՛իև և թէ՛ Մնտուկին Պահանջիև տարած չպիտի ըլլանք. որովհետև, կրկնատոմարի սկզբունքով՝ յօդուածի մը մէջ պէտք է գրել թէ՛ Յակոբը և թէ՛ Տուրոյը, այսինքն, թէ՛ Պարսակաւը և թէ՛ Պահանջոյը: Այս օրինակին մէջ՝ Պարսակաւը Յակոբն է, որ դրամն առած է մեզմէ և Պահանջոյը Մնտուկը որ այդ դրամը տուած է:

Երկրորդ օրինակին մէջ՝ այսինքն, եթէ պաշտօնեան ուղէ Մինասին տուած դրամը իւրացնել, իր անհաւատարմութիւնը յայտնի կ'ըլլայ, որովհետև, կրկնատոմարի սկզբունքով՝ եթէ Մինասին հաշիւը Պահանջոյը ընէ տուած դրամին համար, պէտք է որ միեւնոյն յօդուածին մէջ Պարսակաւն ընէ նաև Մնտուկը, որ միեւնոյն յօդուածին մէջ Պարսակաւն պէս սխալ-անջը կամ գողութիւններ ծածկել:

Այս օրինակներէն յայտնի կ'երեւայ թէ՛ սխալները երեւան գնչենն ուրիշ հաշիւներու միջոցաւ, (որոց Գլխաւոր հաշիւներ կըլտի) որք իրենց մէջ փորձի կամ հակադռութեան (Contrôle) միջոց մ'են. յորմէ կը հետեւի թէ՛ այդ հաշիւները ճիշդ են, քանի որ իրենց առած և տուած արժէքներուն համար Պարսակաւն և Պահանջոյը եզան, ուստի և Յակոբին ու Մինասին անձնական հաշիւներն ալ, որք փոխադարձաբար Պարսակաւն և Պահանջոյը եզան, նմանապէս ճիշդ են:

Հետեւաբար Գլխաւոր հաշիւները, որք վաճառականը կը ներկայացնեն, անձնական հաշիւները կը հակադռեն և անձնական հաշիւներն ալ զլրատու հաշիւները կը հակադռեն. այնպէս որ բոլոր այս հաշիւները՝ իրար հակադռելու (Contrôler) համար հնարուած, սխալմունքները կամ մտացումներն անմիջապէս նշան-բերի և ուղղելի կ'ընեն, եթէ երբեք սխալմունք եղած է:

Սեղանաւոր կամ *Banque* բառին ծագումը եւ նշանակու-
րիւնը. — Տոմարակալութեան ծագումը. — Կրկնատմարի
նեղիմակներուն կամ նմարիչներուն վրայ պատմական
ծանօթութիւն: (1)

Միջին դարուն մէջ՝ վաճառականութեան զարգացած տե-
ղերը, մանաւանդ Իտալիոյ մէջ 12րդ դարէն ի վեր և գուցէ անկէ
ալ առաջ, վաճառականք ժողովասրահ մ'ունէին, ուր իւրաքան-
չիւրն ունէր իրեն յատուկ անօթուն ու սեղանը (Banco), որուն
վրայ որոշեալ ժամեր կը գային իրարու հետ ունեցած հաշիւներ
կարգադրելու համար: Երբ անոնցմէ մին իր այս պարտականու-
թեան մէջ թերանար՝ անոր սեղանը (Banco) կը խորտակուէր
(Banco rotto), որ Banqueroute Սնանկ բառին ստուգարանութիւնն
է: Եւ ո՞չ ապաքէն այսօր իսկ Առեւտրական Օրէնքով սնանկ կը
սեպուի այն վաճառականը, որ իր հաշիւը կամ պարտքը օրին
չվճարեր կամ չի կրնար վճարել:

Այդ սեղանը (Banco) պահողին բնականաբար կ'ըսուէր Ban-
chiere (Banquier) Սեղանաւոր, որ այդ ժողովասրահին սպասա-
ւորն էր: Այն վաճառականը՝ որ ստիպեալ ժողովքի որոշեալ ժա-
մուն չէր կրնար ներկայ ըլլալ, սեղանի պահապանին կը յանձնէր
որ իր տեղը կարգադրէ իր հաշիւները. այսինքն, անոր կը
յանձնէր իր պարտքը վճարել և պահանջքը գանձել: Այդ պա-
հապանը, որուն Պանկեռ անունը տուինք, իր ուղղամիտ և
պարկեշտ ընթացքով հեռոգհեռէ յաջողելով վաճառականներուն
փաստաւորութիւնը գրաւել, քիչ ատենէն շատ մը (վաճառական)
յաճախորդներ ունեցաւ, որոց հաշւոյն դրամ գանձեց և վճարեց,
ա՛յ այնուհետեւ անհրաժեշտ և ստիպողական պէտք մ'եղաւ իրեն
համար ունենալ Մետուկ մը, պահարան մը, աւանդատուն մը,
որուն մէջ կը դնէր վաճառականներուն արժէնիւթերը՝ դրամ,
գանձելի թղթեր և ին. նոյնպէս պէտք ունեցաւ տեսրակի մը,
ուր կը գրէր իր յաճախորդներուն հաշւոյն առած և տուած
դրամները:

Ժողովասրահի, սեղաններու և անօթաներու այս համեմատ պա-
հապանը հեռոգհեռէ վաճառականներուն փաստաւորութիւնը կը շահի
և այնուհետեւ անոնց համարակալը, դրամապահը մէկ խօսքով՝
անոնց Սեղանաւորը (Banquier) Պանկեռը կ'ըլլայ: Ահաւաստիկ հա-
մառօտ պատմութիւնը սեղանաւորութեան և Պանկեռ (Սեղանաւոր)
բառին ծագման և նշանակութեան:

[1] Կրկնատմարի սկզբունքի լուսագոյն բացատրած ըլլալու համար՝ օգտակար
համարեցինք մէջ բերել այս պատմական տեղեկութիւնը, որ ուսանողին համար
յոյժ ցանկեղան և կարեւոր է:

Արդ՝ հասարակաց դրամապահները կամ սեղանաւորներն ե-
ղան հնարիչ գործողութիւնները գրելու արհեստին կամ Տոմար-
ակալութեան: Սեղանաւորք՝ իրենց գործին բնութեամբ, որ
շատ վաճառականներու համար գանձումներ և վճարումներ ընել է,
որուն համար անոնց համարակալը կը համարուին, իրենց ձեռքն
ունեցած դրամին ի՞նչ բանի դորձածած ըլլալնին արդարացնելու
համար, պէտք էր որ իրենց վճարումներն ու գանձումները ան-
միջապէս տեղ մը գրէին, առոր համար իրաւամբ ըսուեցան իբր
գործը պահապաններ և տոմարակալներ Մետուկի մը, որ միշտ
դրամ կ'առնէ և կը տայ:

Մետուկը Պարսկաստան է առած դրամին համար, և Պանկեռը՝
վճարածին համար. հետեւաբար երբ սեղանաւորը Մետուկը դրամ
էր կը դնէ, որ երրորդ մը, օրինակի համար, Յակոբ իրեն վը-
տահած է, բնականաբար պիտի գրէ իր Օրհաշիւ տեսրակին մէջ
այսպէս,

15 Mars 1898

Դրամապահը կամ Սնուկը (Պարսի) Յակոբին

Վերած դրամին համար 5000

Եթէ նոյն օրը ուրիշներէ ալ դրամ առնէ՝ սեղանաւորը պիտի
գրէ իր Օրհաշիւին մէջ յօդուածով մը այսպէս.

15 Mars 1898

Սնուկ Զանազանաց

Հետեւեալներէն առած դրամներս

Յակոբին 5000

Գրիգորին 4000

Միւսային 3000

12000

Մարտ 17ին վերը դրամ յանձնողներէն Յակոբ 1000ի չէք մը
բռնէց սեղանաւորին վրայ, որ անոր հրամանին համեմատ վճա-
րեց. հետեւաբար Օրհաշիւը պիտի գրէ

17 Mars 1898

Յակոբ (Պարսի) Սնուկին

Քաւած չեքին համար 1000

Եթէ նոյն օրը ուրիշ յաճախորդներու հաշւոյն համար ալ
դրամ վճարէ, պիտի գրէ Օրհաշիւը հետեւեալ յօդուածով.

17 Mars 1898

Զանազանի Սնուկին

Հետեւեալներու հաշւոյն վերածածս

Գրիգոր 500

Յակոբ 1000

Միւսային 1500

3000

Բայց որչափ յաճախորդները և հետեւարար գործողութիւնները շատնան՝ ա՛յնչափ անհրաժեշտ կ'ըլլայ անոնց հաշիւները բաժնել, որպէս զի գրամատակարար կամ սեղանաւորը ամէն վայրկեան կարենայ գիտնալ թէ՛ իր յաճախորդներուն ամէն մէկուն որչա՞փ Պարսական է: Հաշիւներու այս բաժանումը Մայր-հաշիւ ըսուած տետրակին միջոցաւ կ'ըլլայ:

Այս օրինակներէն յայտնի կ'երեւայ թէ՛ վճարման և գանձման ամէն գործողութեան համար Օրհաշուին մէջ Պարսականի և Պահանջողի յիշատակութիւնը պիտի ըլլայ հետեւեալ համառօտ ձեւով

Սնուկ (Պարսի) Յակորբին 5000

Երբ Մնտուկը գրամ մտնայ

կամ Յակոր (Պարսի) Սնուկին 1000

Երբ Մնտուկէն գրամ ելնէ:

Հետեւարար Մայր-հաշիւին մէջ պիտի բացուի հաշիւ մը Սընտուկին և ուրիշ հաշիւներ Գրիգորին և սեղանաւորին միւս յաճախորդաց համար: Ըսել է թէ՛ Օրհաշուին իւրաքանչիւր յօդուածը և անոր գումարը անհրաժեշտապէս երկու անգամ պիտի անցնի Մայր-հաշիւը. մէկը՝ Պարսիին և միւսը՝ Պահանջիին կողմը. ուստի նախընթաց երկու յօդուածները Մայր-հաշուին մէջ կ'երեւան այսպէս.


1 Պարսի			Ս Ն Ս Ո Ւ Կ			Պահանջել 1					
1898	Մարտ 15	Յակորբին	1	5000	—	1898	Մարտ 17	Յակորբին	1	1000	—

2 Պարսի			Յ Ա Կ Ո Ր			Պահանջել 2					
1898	Մարտ 17	Սնուկին	1	1000	—	1898	Մարտ 15	Սնուկին	1	5000	—

Ահա այսպէս հաշիւներ բացուելով սեղանաւորին բոլոր յաճախորդաց համար, Յակոր՝ ինչպէս իր հաշիւին վրայ կ'երեւայ, 5000 յանձներ է սեղանաւորին և 1000ը 2 օրէն ետ առնելէ ետքը՝ դեռ

5000 կը Պահանջի սեղանաւորէն: Նոյնպէս այդ հաշուց վրայ յայտնի կ'երեւայ թէ՛ Օրհաշուին իւրաքանչիւր յօդուածը երկու անգամ փոխադրուած է Մայր-հաշիւը, օրինակի համար՝ Յակորին առած 5000ը, ինչպէս անդին կը տեսնուի, մէկ մը Մնտուկին Պարսիին կամ Մորսիին, մէկ մ'ալ Յակորին Պահանջիին անցած է. իսկ Յակորին առած 1000ը՝ մէկ մը Մնտուկին Պահանջիին կամ Եջիին անցած է և մէկ մ'ալ Յակորին Պարսիին. ասկէ կը հետեւի թէ՛ կանոնաւոր Տոմարակալութեան մէջ՝ Մայր-հաշուին բոլոր հաշուոց Պարսիին գումարը հաւասար կ'ըլլայ Պահանջի գումարին, և թէ՛ այդ երկու գումարները զատ զատ (Պարսիին և Պահանջիին) հաւասար են Օրհաշուին ընդհանուր գումարին: Երբ այս երկու պայճանները կատարուած են, այն ատեն կ'ըսենք թէ հաւանականաբար հաշիւները լաւ բանուած են: Բայց միայն հաւանականութիւն է. որպէս զի ճիշդ ըլլալուն համոզուինք, ուրիշ պայմաններ ալ պէտք են: Ուստի ուրիշ օրինակներով աւելի բացայայտ ապացոյցանենք կրկնատոմարի սկզբունքը՝ գործոց բնական ընթացքին հետեւելով:

Դրամատան մէջ գրամի տուրեւտն երկու դոնակի (Guichet) միջոցաւ կ'ըլլայ, որոց մին՝ Սնուկի և միւսը՝ Հաշուընթացի կամ Հակաշուրտքեան դոնակ կ'ըսուի, որուն պատկերը հոս կ'երեւայ:



Օրինակ՝ Յակոր 5000 յանձնեց գրամատան: Այս գումարը նախ թ. 1 դոնակին՝ Մնտուկին կը յանձնէ, որ առած գրամին համար ընկալագիր կը տայ կամ ընդհանրապէս հաշուընթացի տետրին մէջ կը գրէ: Այդ ընկալագիրը կ'երթայ թ. 2 դոնակը, որուն պաշտօնեան իր վաւերագիրը (Visa կամ Vue) դնելով կը

յանձնէ ընկալագիրը Յակոբին՝ անոր տուած դրամին փոխարէն : Երբ քանի մ'օրէն Յակոբ դրամատունէն 1000ը առնել ուզէ՝ ընկալագիր մը պիտի տայ կամ ընդհանրապէս չէք պիտի քաշէ և յանձնէ. այդ չէքը նախ կ'երթայ Թ. 2 դռնակը, որ քննելէ ետքը թէ՛ Յակոբ այդչափ պահանջք մ'ունի՞, ապա իր վաւերագիրը կը դնէ չէքին վրայ, որուն նայելով միայն Թ. 1 Սնտուկի դռնակը կրնայ վճարել այդ դրամը :

Կը տեսնուի որ երկու առանձին դռնակները կամ գրասենեակները (Bureau) հոս կը միջամտեն իրարու : Լսել է թէ՛ կանոնաւոր Համարակալութիւնը կը բաղկանայ երկու պաշտօնեայէ, որոց մին՝ արժէնխութեքը (դրամ) կ'առնէ և անոնց համարակալն է, որուն Դրամապահ (Caissier) կ'ըսուի. իսկ միւսը՝ առջինին գործողութիւնները կը հակակշռէ, որուն Հակակշռող (Contrôleur) կ'ըսուի :

Դրամապահը մէկ առաւելութիւն մը միայն կը տայ. այսինքն, նենգութեան կամ սխալմունքի համար, մինչդեռ դրամապահը և հակակշռողը միացեալ՝ երկու ապահովութիւն կը տան և ահա հո՛տ է Կրկնատոմարի ամբողջ սկզբունքը. որովհետեւ գործողութիւնն այսպէս երկու պաշտօնեաներու կամ հաշիւներու միջոցաւ գրելու վիճակին համար է բնականաբար՝ որ Կրկնատոմար անունը արքունած է : Հիմա տեսնենք թէ՛ այդ երկու պաշտօնեաներ իրենց գործողութիւնները ի՞նչպէս պիտի գրեն. որպէսզի անդին բաժնիս հաստատենք, այսինքն թէ՛ երկուքն իրարու գործողութիւնները կը հակակշռեն :

Թ. 1 Դռնակի պաշտօնեան՝ դրամապահը, իր տետրակը երկու մասի կը բաժնէ. մէկ կողմը՝ առած դրամներուն և միւս կողմը՝ տուածներուն յատկացնելով. և որովհետեւ ստանց դրամ առնելու չի կրնար դրամ տալ, բնականաբար առած դրամները նախ տետրակին ձախ երեսը կը գրէ, և տուածները աջ երեսը իրենց թուականներովը, դրամն առնողին և տուողին անուններովը՝ կարելի եղածին չափ պարզ և մէկին : Թ. 295 երեսին մէջ յիշուած երկրորդ օրինակն առնելով, դիցուք թէ՛ դրամապահը հետեւեալ գումարները առաւ.

15 Մարտ 1898	
Յակոբէն	5000
Գրիգորէն	4000
Մինասէն	3000

Այս դրամները յայտնի է որ դրամապահինը չեն, զանոնք առողներուն կը պարտի. հետեւաբար տետրակին ձախ կողմը՝ որուն Պարտի կամ Մոտսի երես կ'ըսուի, պիտի գրէ զանազան-

ներէ առած դրամները, և աջ կողմը՝ որուն Պահանջի կամ Ելլի երես կ'ըսուի, պիտի գրէ զանազաններու տուած դրամները : Երեսն Սնտուկի տետրակը կամ Հաշիւը այսպէս պիտի ներկայանայ

Պարտի կամ Մոտս **Ս Ն Տ Ո Ւ Կ** Պահանջի կամ Ելլ

1898	15	Յակոբին	5000	—				
»	»	Գրիգորին	4000	—				
»	»	Մինասին	3000	—				

Արդ՝ ո՞վ պիտի հակակշռէ Սնտուկին վերի գործողութիւնները : Եթէ միայն Սնտուկին վիճակը հակակշռել հարկ ըլլար՝ հիշք ասոր պէս տետրակ մ'ալ Թ. 2 դռնակին մէջ կը բռնուէր, որ երկու Սնտուկի տետրակ գրել ըսել է : Բայց Թ. 2 դռնակին պաշտօնը միայն այդ չէ. անոր գործն է բոլոր յաճախորդաց հաշիւը բռնել, իբր թէ յաճախորդներն իրենք բռնած ըլլային իրենց հաշիւը :

Այսպէս երբ Սնտուկը Պարտական կ'ըլլայ Յակոբին տուած 5000ին համար, Յակոբ ալ պէտք է Պահանջող ըլլայ Սնտուկին յանձնած դրամին համար. հետեւաբար Թ. 2 դռնակին համարակալը այնպէս պիտի վարուի, ինչպէս պիտի ընէր նոյնիսկ Յակոբ իրեն համար, այսինքն, դրամապահին տետրակին ձեւովը տետրակի մը մէջ հակառակ Յակոբին անունը գրելով, աջ երեսին վրայ՝ Պահանջի կողմը Սնտուկին 5000 յանձնած ըլլալը պիտի գրէ այսպէս

1 Գանձում կամ Պարտի **Յ Ա Կ Ո Ւ** Վնարում կամ Պահանջի 1

			1898					
			Մարտ	15	Սնտուկին		5000	—

Գրիգորին և Մինասին համար ալ հաշիւներ պիտի բանայ, և անոնցմէ առած դրամները անոնց Պահանջի պիտի տանի հետեւեալ կերպով.

2 Պարսի Գ Ր Ի Գ Ո Ր Պահանջէ 2

				1898			
				Մարտ	15	Սնուկին	4000

3 Պարսի Մ Ի Ն Ա Ս Պահանջէ 3

				1898			
				Մարտ	15	Սնուկին	3000

Դիցուք թէ՛ այդ յաճախորդքը դրամատունէն ստած ըլլան հետեւեալները .

1898 Մարտ	20	ին Յակոբ աւեր է	3000
»	»	22 ին Գրիգոր »	2000
»	»	25 ին Մինաս »	1000

Արդ՝ դրամապահը այս վճարածները բնականաբար պիտի գրէ իր Մնասկի տետրին Պահանջին կամ Ելքին կողմը : Իսկ թ. 2 հաշուընթացի դռնակի պաշտօնեան ալ՝ զանոնք կը տանի նոյն յաճախորդաց հաշիւներուն Պարսիին զառ զառ . այնպէս որ երկու դռնակներուն (Սնուկիի և Հաշուընթացի) հաշիւներն այսպէս գրուած պիտի երևան :

Թ. 1 Դռնակ
կամ
Դրասնեակի Սնուկի

1 Պարսի Ս Ն Տ Ո Ւ Կ Պահանջէ 1

1898				1898			
Մարտ	15	Յակոբին	5000	Մարտ	20	Յակոբին	3000
»	»	Գրիգորին	4000	»	22	Գրիգորին	2000
»	»	Մինասին	3000	»	25	Մինասին	1000

Թ. 2 Դռնակ
կամ
Դրասնեակի Հաշուընթացի կամ Հակակշուրեան

1 Պարսի 3 Ա Կ Ո Ր Պահանջէ 1

1898				1898			
Մարտ	20	Սնուկին	3000	Մարտ	15	Սնուկին	5000

2 Պարսի Գ Ր Ի Գ Ո Ր Պահանջէ 2

1898				1898			
Մարտ	22	Սնուկին	2000	Մարտ	15	Սնուկին	4000

3 Պարսի Մ Ի Ն Ա Ս Պահանջէ 3

1898				1898			
Մարտ	25	Սնուկին	1000	Մարտ	15	Սնուկին	3000

Այս հաշուոց վրայ նայելով յայտնի կ'երեւայ թէ՛ Մնասկին Պարսիին ամէն մէկ գումարը հաշուընթացի դռնակի հաշուոց Պահանջին անցած է . և թէ՛ փոխադարձաբար Մնասկին Պահանջին ամէն մէկ գումարը հաշուընթացի կամ հակակշուրեան դռնակի հաշուոց Պարսիին անցած է : Այնպէս որ՝ Մնասկին և Հակակշուրեան դռնակներուն հաշուոց գումարները միացնելով, անոնց բոլոր Պարսիի ընդհանուր գումարը հաւասար է բոլոր Պահանջի ընդհանուր գումարին (Երկուքն ալ 18,000 է) :

Ահաւասիկ Տոմարակալութեան տեսական մասը և կրկնատոմարի հակակշուրեան (contrôle) նախապատմական տարերքը :

Կրկնատմարի Սկզբունք

Առեւտրական ամէն գործողութեան մէջ, ըսինք, երկու անձ կամ հաշիւ կան կատարող. մին՝ արժէք մը կ'առնէ և միւսը՝ զայն կը տայ: Արդ՝ արժէքն առնող հաշիւը Պարսական է տուողին, ուսկից կը հետեւի Կրկնատմարի սա հիմնական և անփոփոխելի սկզբունքը թէ՛ « Առնող անձը կամ հաշիւը ՊԱՐՏԱԿԱՆ ընկրու է եւ միեւնոյն ասեկ տուող անձը կամ հաշիւը ՊԱՀԱՆՋՈՂ:

Կրկնատմարը նոր հնարուած առեն՝ ամէն գործողութիւն Օրհաշուին մէջ երկու յօդուածով կը գրուէր. մէկուն մէջ՝ արժէքն առնող հաշիւը Պարսական կ'ըլլար, միւսին մէջ՝ արժէքը տուող հաշիւը Պահանջող: Բայց ետքը՝ դիտուելով որ յարաբերութիւն մը կայ այդ երկու հաշուոց մէջ, որոց մին կ'առնէր և միւսը կը տար, ուստի այդ յարաբերութիւնը Օրհաշուին մէջ միայն մէկ յօդուածով գրել սկսան այսպէս

Այսինց Պարսի Այնինցին

որ ետքէն դարձեալ բարեփոխուելով, այսինքն՝ Պարսին մէջտեղէն վերցուելով, մնաց

Այսինց առ Այնինց

կամ

Այսինց Այնինցին

Այս Պարսի... ին, կամ՝ պարզապէս ին մասնիկով դիւրաւ կը հասկցուի երկու հաշուոց յարաբերութիւնը, որոնց մէկը միւսին ընդդիմակողմը կ'ըլլուի, այսինքն՝ Պարսական հաշիւը Պահանջող հաշիւին ընդդիմակողմը և փոխադարձաբար:

Վաճառականական ամէն գործողութեան մէջ առնող մը և տուող մը կայ, և վաճառականը այդ գործողութեանց մէջ անպատճառ երկուքէն մին ըլլալով, այսինքն՝ Առնող կամ Պարսական, Տուող կամ Պահանջող. ասկէ կը հետեւի թէ՛ Կրկնատմարի Օրհաշուին իւրաքանչիւր յօդուածին մէջ վաճառականին անունը երեւալու է իբր Պահանջող կամ իբր Պարսական:

Ասի անտարանալի ճշմարտութիւն մ'է: Բայց կան գործողութիւններ, որոց մէջ՝ եթէ այս տեսակէտով ըմբռնենք, ո՛չ Պարսական կայ և ո՛չ Պահանջող: Օրինակի համար՝ եթէ վաճառականը կանխիկ ապրանք ծախէ, ինքն է ապրանքը տուողը, ուրեմն Պահանջող է. նոյնպէս ինքն է դրամն առնողը, ուրեմն Պարսական է. բայց եթէ այդ գործողութեան մէջ Պահանջող և Պարսական է, ուրեմն ըսել է թէ՛ ինքն իրեն Պարսական և Պահանջող է. հետեւաբար, այս երկու վիճակները իրարու հակասական են և չեն կրնար միասին ըլլալ:

Ասկէ զատ, եթէ բոլոր գործողութիւնները այսպէս գրենք, այսինքն՝ ամէն յօդուածի մէջ վաճառականին անունը Պարսական կամ Պահանջող ընենք, (որովհետեւ ամէն գործողութեան մէջ վաճառականը գործօն դեր մ'ունի) և զանոնք վերջէն Մայր — Հաշուին մէջ վաճառականին անունին բացուած հաշիւին տանինք, այդ հաշիւը զանազան գործողութեանց խառնակ և շփոթ հաւաքածոյ մը պիտի ըլլայ, անանկ որ՝ ամէն տեսակ գործողութեան գումար այդ հաշուին տարուելով՝ ատոր վրայ նայած ատեննիս չգիտի կրնանք գիտնալ թէ՛ վաճառատունը ո՞րչափ ապրանք, Մատուցը ո՞րչափ դրամ, թղթապանակը ի՞նչ գումարի գանձելի թղթեր, շրջաբերութեան մէջ ո՞րչափ վճարելի թղթեր ունինք, և ի՞նչ է մեր շահը կամ վնասը. մինչդեռ թ. 292 երեսին մէջ ըսինք թէ՛ այս բաները Կրկնատմարի միջոցաւ պիտի գիտնանք:

Կրկնատմարի տեսակներուն մեջ վաճառականին անունը ինչո՞ւ չի գրուիր. — Հոս մէջ կը բերենք թ. 285-286 երեսի Պարզատմարին վեց օրինակները, զորս Կրկնատմարի յօդուածի կը վերածենք վերի ենթադրութեամբ. այսինքն, ամէն գործողութեան կամ յօդուածի մէջ վաճառականին անունը Պարսական կամ Պահանջող ընելով, շոշափելի կերպով հատկելու համար ուսանողը այս կերպ գրուելուն անպատեհութեանը:

1. Կնեցի ապառիկ Մ. Գէորգեանէ 8000 դ2.ի ապրանք:

Ամէն գործողութեան մէջ առնող մը և տուող մը ըլլալով, Կրկնատմարի սկզբունքին համեմատ՝ առնողը Պարսական և տուողը Պահանջող է:

Վերի գործողութեան մէջ՝ ապրանք տուողը Մ. Գէորգեանն է, որ Պահանջող պիտի ըլլայ, և ապրանքն առնողը՝ ես կամ վաճառականն է, որուն անունը Ք. (իբր անձանօթ) ենթադրելով, Ք. Պարսական պիտի ըլլայ. ուրեմն կը գրենք Օրհաշիւը

Ք. Մ. Գէորգեանին 8000

2. Ծախեցի ապառիկ Յ. Պողոսեանի 6000 դ2.ի ապրանք:

Ապրանքն առնողը Յ. Պողոսեանն է, որ Պարսական ըլլալու է. իսկ տուողը՝ վաճառականն է Ք., որ Պահանջող ըլլալու է. ուրեմն կը գրենք Օրհաշիւը

Յ. Պողոսեանի Ք.ին 6000

3. Գանձեցի Յ. Պողոսեանէ 2000 դ2:

Դրամն առնողը վաճառականն է, Ք., որ Պարսական ըլլալու է. իսկ տուողը Յ. Պողոսեանն է, որ Պահանջող ըլլալու է. ուրեմն կը գրենք Օրհաշիւը

Ք. Յ. Պողոսեանին 2000

4. Վճարեցի Մ. Գէորգեանի 2000 դ2:

Դրամն աւնողը Մ. Գէորգեանն է, որ Պարսկական ըլլալու է-
իսկ առւողը վաճառականն է, Բ., որ Պահանջող ըլլալու է-
ուրեմն կը գրենք Օրհաշիւը

Մ. Գէորգեանի Ք. ին 2000

5. Տուի Մ. Գէորգեանի 4000 դշ.ի 61|օր. ի/ի իմ տոմսակս:

Տոմսակն աւնողը Մ. Գէորգեանն է, որ Պարսկական ըլլալու է-
իսկ առւողը վաճառականն է, Բ. ըլլալով, Պահանջող ըլլալու է-
ուրեմն կը գրենք Օրհաշիւը

Մ. Գէորգեանի Ք. ին 4000

6. Անի Յ. Պողոսեանէ 3000 դշ.ի 31|օր. իմ/ի, իր տոմսակը:

Տոմսակն աւնողը վաճառականն է, Բ., որ Պարսկական ըլլա-
լու է. իսկ առւողը Յ. Պողոսեանն ըլլալով, Պահանջող ըլլալու է-
ուրեմն կը գրենք Օրհաշիւը

Ք. Յ. Պողոսեանի 3000

Այս օրինակները այսպէս Օրհաշուի յօդուածի վերածելէ
եաքը՝ զանոնք Մայր-հաշիւն ալ կ'անցնենք ապացուցանելու
համար թէ՛ արդարեւ վաճառականին անունը ամէն յօդուածի մէջ
Պարսկական և Պահանջող ընելով և զանոնք Մայր-հաշիւը միայն
Բ. հաշիւին տանելով ի՞նչ արդիւնք պիտի ցուցնէ ատանկ հաշիւ մը:

Արդ՝ Մայր-հաշուին այս երեք հաշիւները (Տե՛ս թ. 305) զատ
զատ աչքէ կ'անցնենք տեսնելու համար թէ՛ ասոնք ի՞նչ կը ներկա-
յացնեն: Մ. Գէորգեանի Պահանջի կողմը կայ 8000, որ իր առւած
ապրանքին փոխարժէքն է. Պարսի կողմը՝ 6000, որ իր առւած-
ներուն գումարն է. ասոնք իրարմէ հանելով, յայտնի կ'երեւայ թէ՛
Մ. Գէորգեանն դեռ 2000 կը Պահանջէ մեղմէ. ըսել է այս հաշիւը
իր նպատակին ծառայեց. այսինքն, Մ. Գէորգեանի ունեցած
Պարսի կողմին կ'երեւայ այդ հաշուին վրայ: Յ. Պողոսեանի Պարսի
կողմը կայ 6000, որ իր առւած ապրանքին փոխարժէքն է. Պա-
հանջի կողմը՝ 5000, որ իր առւածներուն գումարն է. ասոնք
իրարմէ հանելով, յայտնի կ'երեւայ թէ՛ Յ. Պողոսեանն դեռ 1000
կը Պարսի մեղի. ըսել է այս հաշիւն ալ իր նպատակին ծառայեց.
այսինքն, Յ. Պողոսեանէ ունեցած Պահանջի կողմին կ'երեւայ այդ
հաշուին վրայ:

Գանք վաճառականին համար բացուած Բ. հաշիւին՝ որուն
Պարսի և Պահանջի անցած գումարները տարբեր արժէքի թեր
կը ներկայացնեն, այսինքն՝ ապրանք, դրամ, գանձելի և վճա-
րելի թղթեր, զորս ամէնքն ալ այդ հաշուին տարինք: Պարսի
կողմը կայ 13000 և Պահանջի կողմը՝ 12000, զորս իրարմէ
հանելով 1000 կը մնայ. այս 1000ը ի՞նչ կը ներկայացնէ. վաճա-

1 Պարսի		2 Պահանջ		3 Պահանջ	
1898 Մարտ	1	1898 Մարտ	1	1898 Մարտ	1
»	3	»	4	»	»
»	7	»	6	»	7
Մ. Գէորգեանի առւած ապրանք	8000	Մ. Գէորգեանի առւած ապրանք	8000	Մ. Գէորգեանի առւած ապրանք	8000
»	2000	»	2000	»	2000
»	3000	»	4000	»	3000
»	13000	»	6000	»	5000
Յ. Պողոսեանի առւած ապրանք	6000	Յ. Պողոսեանի առւած ապրանք	6000	Յ. Պողոսեանի առւած ապրանք	6000
»	5000	»	5000	»	5000
»	1000	»	1000	»	1000
Պահանջի առւած ապրանք	5000	Պահանջի առւած ապրանք	5000	Պահանջի առւած ապրանք	5000
»	6000	»	6000	»	6000
»	12000	»	12000	»	12000
Մ. Գէորգեանի առւած ապրանք	8000	Մ. Գէորգեանի առւած ապրանք	8000	Մ. Գէորգեանի առւած ապրանք	8000
»	2000	»	2000	»	2000
»	3000	»	4000	»	3000
»	13000	»	6000	»	5000

ուականին՝ որուն համար բացինք այս հաշիւը, ո՞ր վիճակը կը ցուցնէ. ապրանքը, գրամը, գանձելի թժուղթը, վճարելի տոմսը կը, ո՞րը. Ահաւասիկ հոս բացայայտ կ'երեւայ թէ՛ այս տեսակ հաշիւը, որ ստուար և երկար պիտի ըլլայ, քանի որ ամէն գործողութեան մէջ վաճառականը առնող է կամ տուող, կրկնատոմարի նպատակին չի ծառայելէ զատ՝ խառն և շփոթ գումարներ պարունակելով վաճառականին և ո՛չ մէկ վիճակը կը ներկայացնէ. ահա ստոր համար կ'ըսուի թէ՛ Կրկնատոմարի տեսակներուն մէջ վաճառականին անունը չի գրուիր կամ անոր անունով հաշիւ չի բացուիր: Այս անպատեհութեան իբր դարման ուրիշ հաշիւներ հնարուած են և վաճառականին անունին տեղ՝ այդ հաշիւները Պարտական և Պանակչող կ'ըլլան՝ իւրաքանչիւրն իր տեսակի գործողութեան համեմատ:

ԿՐԿՆԱՏՈՄԱՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԱՇՎՆԵՐ

Բացատրեցինք թէ՛ կրկնատոմարի տեսակներուն մէջ վաճառականին անունը չ'պիտի գրուի, այլ անոր տեղ երկու տեսակ հաշիւներ կը գործածուին, որք կ'ըսուին Գլխաւոր և Մասնաւոր հաշիւներ:

Այս հաշիւները, որոց մէկ մասը վաճառականը կը ներկայացնեն, իբր առանձին անձեր նկատուելով, իրենց մէջ կ'առնեն ու կը տան և վաճառականը՝ այդ անձնաւորեալ հաշուոց միջոցաւ միայն ուղած ասան իւրաքանչիւրէն զատ զատ տեղեկութիւններ քաղելով՝ իր գործին վրայ ճիշդ և որոշ գաղափար մը կը կազմէ:

Վաճառականին անունին տեղ գործածուած հաշիւներ կամ Գլխաւոր հաշիւներ

Տրուած վեց օրինակներէն և վաճառականին համար բացուած Բ. անունով հաշիւէն փորձով տեսանք թէ՛ ի՞նչ անպատեհութիւն առաջ եկաւ, և առկէ սա եզրակացութիւնը հանեցինք թէ՛ այլեւս կրկնատոմարի տեսակներուն մէջ վաճառականին (Բ.) անունին տեղ ուրիշ հաշիւներ բանալով միայն մեր նպատակին պիտի կրնանք հասնիլ. և առոնք Գլխաւոր հաշիւներն են: Արդարեւ գլխաւոր են այդ հաշիւները, որովհետեւ, ինչպէս ըսինք, վաճառականին հարստութիւնը կամ դրամագլուխը միշտ ձեւափոխութեան ենթակայ է, և այդ դրամագլուխը ընդհանրապէս բաղկացած ըլլալով 1. Կանխիկ գրամէ, 2. Ապրանքէ, 3. Գանձելի թղթերէ, որոց ընդհա-

ւոր գումարէն հանելով իր 4. Վճարելի թղթերը կամ պարտքերը, Գործողը կ'ըլլայ իր զուտ դրամագլուխը. հետեւաբար կրկնատոմարի մէթոսը վերոյիշեալ վաճառականական չորս տարերքներուն համար, որք վաճառականական գործողութեանց փոխանակելի թղթերը կը ներկայացնեն, մէկ մէկ հաշիւ հնարած է, որք կ'ըսուին, 1. Սննուկ, 2. Ընդհանուր ապրանք, 3. Գանձելի քրքեր կամ Տոմսակներ, 4. Վճարելի քրքեր կամ Տոմսակներ: Ասոնցմէ շոք մ'ալ հնարուած է Ծահ եւ Վնաս անունով, ուր կը գրուին Ծառհեւտէ այն փոխանակելի թղթոց առթիւ ըլլալիք գործողութիւններէն յառաջ եկած շահն ու վնասը, որք, գործին կարեւորութեան համեմատ՝ վաճառականին դրամագլխին վրայ քիչ կամ շատ յաւելում կամ նուազում մը յառաջ կը բերեն, և այս հինգ հաշիւներն ալ վաճառականին անձին կը վերաբերին. ուստի՝ ահա որք նիւթոց համար բացուելիք հաշիւներն են, որ վաճառականը պիտի ներկայացնեն հետեւեալ անուններով,

1. Գրաւարկը կամ Սննուկ
2. Ընդհանուր ապրանք
3. Գանձելի տոմսակ (1)
4. Վճարելի տոմսակ (2)
5. Ծահ եւ վնաս կամ Ծահ եւ զիւն

Վաճառականը այս հաշիւները բանալով, գործին մէջ ինքզինքը իբր օտար մէկը կը սեպէ և իր ստացուածքը կամ դրամագլուխը այդ հինգ հաշուց կամ բարոյական անձերուն կը յանձնէ իւր առ մաս. մէկուն՝ (Սննուկին) կը յանձնէ իր դրամը, միւսին՝ Ընդհ. ապրանքին) ապրանքները, ուրիշ մը՝ (Գանձ. տոմսակներուն) թղթապանակի գանձելի թղթերը, չորրորդի մը (Վճարելի տոմսակներուն) իր վճարելի թղթոց վճարման հոգը, վերջապէս ուրիշ մ'ալ (Ծահ եւ վնաս) իր վրայ կ'առնէ որոշեալ վնասը և շահը:

Վաճառականին անունին տեղ այս հաշիւները Պարտական և Պանակչող պիտի ըլլան ըստ տեսակի գործողութեան. ապրանքի գործողութեանց համար՝ Ընդհ. ապրանքի հաշիւը Պարտական կամ Պանակչող կ'ըլլայ, դրամական գործողութեանց համար՝ Սննուկի հաշիւը, գանձելի թղթերու գործողութեանց համար՝ Գանձ.

[1] ֆոխանակագիր, տոմսակ կամ մուրհակ, հրամանագիր, չէֆ, եւլն, որք մեր նրամանին շինուած կամ ֆոխանցուած են եւ որոց ֆոխաւէններ մեկ պիտի գանձենք, ասոնց ամէնքն ալ Գանձելի տոմսակի հաշուին կ'անցնին:

[2] Մեր ընդունած ֆոխանակագրեր, չէֆեր եւ մեր ստացուած տոմսակներ, որոց ֆոխաւէններ մեկ պիտի վերենք, ասոնց ամէնքն ալ Վճարելի տոմսակի հաշուին կ'անցնին:

ՏՈՒՆԱԿԻ ՀԱՇԻՐ, ՎՃԱՐԵԼԻ ԹՂԹԵՐՈՒ զՈՐԾՈՂՈՒԹԵԱՆԵՅ ՀԱՄԱՐ՝ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՒՆԱԿԻ ՀԱՇԻՐ, ԻՍԿ ՀԱՏ ԿԱՄ ՊԵՍՈ ԱԿԱՏՃԱՌՈՂ զՈՐԾՈՂՈՒԹԵԱՆԵՅ ՀԱՄԱՐ ԱՅ՝ ԾԱՆ ԵՆ ՎՆԱՍԻ ԽԱՇԻՐ:

ԱՆՏԱ ԱՅՍԱԿԵՍ ՎՃԱՌՈՒԿԱՆԻՆ ՀԱՄԱՐ մէկի տեղ՝ Հինգ Հաշիւներ հնարուելով և անոնց զատ զատ անուններ տրուելով՝ բոլոր զործողութիւնք իրենց տեսակին համեմատ կը դասակարգուին: ապրանքի զործողութիւնները կամ յօդուածները՝ Ընդհ. ապրանքի հաշիւին մէջ, գրամական զործողութիւնները՝ Սնտուկի հաշիւին մէջ, գանձելի թղթոց վերաբերեալները՝ Գանձ. տոմսակի հաշիւին մէջ, վճարելի թղթոց վերաբերեալները՝ Վճարելի տոմսակի հաշիւին մէջ, Ծառ և փաստի վերաբերեալները՝ Ծառ և վնասի հաշիւին մէջ, որով վճառականը այդ հաշուց վրայ նայելով՝ պիտի կրնայ իւրաքանչիւրէն զատ զատ տեղեկութիւններ առնել և այս կերպով վճառականին անունին համար միայն մէկ հաշիւ բանալէն յառաջ եկած անպատեհութեան և շփոթութեան առաջքը կ'առնուի:

Հասնիս փորձով պիտի ապացուցանենք, վեց օրինակները (Տե՛ս Թ. 305) զորս վճառականին Ք. անուն հաշիւ մը բանալով Օրհաշիւը և Մայր-հաշիւը անցուցինք, հիմա կրկնատոմարի Օրհաշիւը և Մայր-հաշիւը պիտի անցընենք, բայց Ք.ին տեղ Գլխաւոր հաշիւները զործածելով, տեսնելու համար թէ՛ արդարեւ այդ հնարուած հաշիւները իրօք իրենց նպատակին պիտի ծառայեն:

1. Գնեցի ապառիկ Մ. Գէորգեանէ 8000 դշ.ի ապրանք:

Ասի ապրանքի զործողութիւն մ'է. ուստի վճառականին անունին տեղ՝ Ընդհ. ապրանքը Պարտական պիտի ըլլայ, որովհետեւ ապրանքն առնողը այդ հաշիւն է. իսկ Մ. Գէորգեան Պահանջող պիտի ըլլայ, որովհետեւ ապրանքը տուողը ինքն է. ուրեմն Օրհաշիւը կը գրենք:

Ընդհ. ապրանք Մ. Գէորգեանի 8000

(Հոս գրելու է առնուած ապրանքին մանրամասնութիւնը):

2. Ծախեցի ապառիկ Յ. Պողոսեանի 6000 դշ.ի ապրանք:

Այս ալ ապրանքի զործողութիւն մ'է. ուստի վճառականին անունին տեղ՝ Ընդհ. ապրանքը Պահանջող պիտի ըլլայ, որովհետեւ ապրանքը տուողն այդ հաշիւն է. իսկ Յ. Պողոսեան Պարտական պիտի ըլլայ, որովհետեւ ապրանքը առնողն ինքն է. ուրեմն Օրհաշիւը կը գրենք:

Յ. Պողոսեան Ընդհ. ապրանքի 6000

3. Գանձեցի Յ. Պողոսեանէ 2000 դշ.

Ասի գրամական զործողութիւն մ'է. ուստի վճառականին անունին տեղ՝ Սնտուկը Պարտական պիտի ըլլայ, որովհետեւ

առնողը այդ հաշիւն է. իսկ Յ. Պողոսեան Պահանջող պիտի ըլլայ, որովհետեւ գրամը տուողը ինքն է. ուրեմն Օրհաշիւը կը գրենք:

Սնտուկ Յ. Պողոսեանի 2000

4. Վճարեցի Մ. Գէորգեանի 2000 դշ:

Ասի ալ գրամական զործողութիւն մ'է. ուստի վճառականին անունին տեղ՝ Սնտուկը Պահանջող պիտի ըլլայ, որովհետեւ գրամը տուողը այդ հաշիւն է. իսկ Մ. Գէորգեան Պարտական պիտի ըլլայ, որովհետեւ գրամն առնողը ինքն է. ուրեմն Օրհաշիւը կը գրենք:

Մ. Գէորգեան Սնտուկի 2000

5. Տուի Մ. Գէորգեանի 4000 դշ.ի 61օր. իմ 5 տոմսակ:

Ասի վճարելի տոմսակի զործողութիւն մ'ըլլալով՝ վճառականին անունին տեղ՝ Վճարելի տոմսակը Պարտական պիտի ըլլայ, որովհետեւ տոմսակը տուողն այդ հաշիւն է. իսկ Մ. Գէորգեան Պարտական պիտի ըլլայ, որովհետեւ տոմսակն առնողը ինքն է. ուրեմն Օրհաշիւը կը գրենք:

Մ. Գէորգեան Վճարելի տոմսակաց 4000

6. Ասի Յ. Պողոսեանէ 3000 դշ.ի 31օր. իմ 5 իր տոմսակը:

Ասի ալ գանձելի տոմսակի զործողութիւն մ'ըլլալով՝ վճառականին անունին տեղ՝ Գանձելի տոմսակը Պարտական պիտի ըլլայ, որովհետեւ տոմսակն առնողը այդ հաշիւն է. իսկ Յ. Պողոսեան Պահանջող պիտի ըլլայ, որովհետեւ տոմսակը տուողը ինքն է. ուրեմն Օրհաշիւը կը գրենք:

Գանձելի տոմսակ Յ. Պողոսեանի 3000

Այս օրինակները Գլխաւոր հաշուոց միջոցաւ Օրհաշիւն անցընելէ ետքը (Տե՛ս յաջորդ երեսը), Մայր-հաշիւն ալ պիտի անցընենք, փորձով տեսնելու համար թէ՛ Գլխաւոր հաշիւները վճառականին Ք. անուն հաշուին վրայ ի՞նչ առաւելութիւն պիտի ցուցնեն: (Տե՛ս Թ. 311—312):

Արդ՝ ինչպէս Թ. 305ին մէջ տեսանք, վճառականին Ք. հաշիւը ոչինչ կը ներկայացնէր. ատոր վրայ կարգ մը հաշիւներ հնարելով անոնց համար ալ վերի հաշիւները բացինք: Ուրեմն հիմա ալ այդ հաշիւները աչքէ անցնենք տեսնելու համար թէ՛ արդարեւ մեր նպատակին հասա՞նք:

Ընդհանուր ապրանքի հաշուին (Տե՛ս Թ. 311) Պարտիկ կողմը Մ. Գէորգեանէ 8000ի ապրանք առնուած, իսկ Պահանջիկ կողմը՝ Յ. Պողոսեանի 6000ի ապրանք ծախուած ըլլալը կ'երեւայ. ըսել է թէ՛ ապրանքի համար զատ հաշիւ բանալով և վճառականին Ք. անուն հաշիւին տեղ՝ առնուած ապրանքներուն համար այդ հաշիւը Պար-

սոնակի հաշիւը, վճարելի թղթերու գործողութեանց համար՝ վճարելի սոնակի հաշիւը, իսկ շահ կամ փաստ պատճառով գործողութեանց համար ալ՝ Շահ եւ վնասի հաշիւը:

Ահա այսպէս վաճառականին համար մէկի տեղ՝ հինգ հաշիւներ հնարուելով եւ անոնց զատ զատ անուններ տրուելով՝ բոլոր գործողութիւնք իրենց տեսակին համեմատ կը դասակարգուին: ապրանքի գործողութիւնները կամ յողուածները՝ Ընդհ. ապրանքի հաշիւին մէջ, դրամական գործողութիւնները՝ Սնտուկի հաշիւին մէջ, գանձելի թղթոց վերաբերեալները՝ Գանձ. սոնակի հաշիւին մէջ, վճարելի թղթոց վերաբերեալները՝ վճարելի սոնակի հաշիւին մէջ, Շահ եւ փաստ վերաբերեալները՝ Շահ եւ վնասի հաշիւին մէջ, որով վաճառականը այդ հաշուց վրայ նայելով՝ պիտի կրնայ իւրաքանչիւրէն զատ զատ տեղեկութիւններ առնել եւ այս կերպով վաճառականին անունին համար միայն մէկ հաշիւ բանալէն յառաջ եկած անպատեհութեան եւ չփոթութեան առաջքը կ'առնուի:

Հասանիս փորձով պիտի սպացուցանենք, վեց օրինակները (Տե՛ս Թ. 305) զորս վաճառականին Ք. անուն հաշիւ մը բանալով Օրհաշիւը եւ Մայր-հաշիւը անցուցինք, հիմա կրկնատուարի Օրհաշիւը եւ Մայր-հաշիւը պիտի անցընենք, բայց Ք.ին տեղ Գլխաւոր հաշիւները գործածելով, տեսնելու համար թէ՛ արդարեւ այդ հնարուած հաշիւները իրօք իրենց նպատակին պիտի ծառայեն:

1. Գնեցի ապառիկ Մ. Գէորգեանէ 8000 դշ.ի ապրանք:

Ասի ապրանքի գործողութիւն մ'է. ուստի վաճառականին անունին տեղ՝ Ընդհ. ապրանքի Պարտական պիտի ըլլայ, որովհետեւ ապրանքն առնողը այդ հաշիւն է. իսկ Մ. Գէորգեան Պահանջող պիտի ըլլայ, որովհետեւ ապրանքը սուտղը ինքն է. ուրեմն Օրհաշիւը կը գրենք:

Ընդհ. ապրանքի Մ. Գէորգեանի 8000

(Հոս գրելու է առնուած ապրանքին մանրամասնութիւնը):

2. Ծախեցի ապառիկ Յ. Պողոսեանի 6000 դշ.ի ապրանք:

Այս ալ ապրանքի գործողութիւն մ'է. ուստի վաճառականին անունին տեղ՝ Ընդհ. ապրանքի Պահանջող պիտի ըլլայ, որովհետեւ ապրանքը սուտղն այդ հաշիւն է. իսկ Յ. Պողոսեան Պարտական պիտի ըլլայ, որովհետեւ ապրանքը առնողն ինքն է. ուրեմն Օրհաշիւը կը գրենք:

Յ. Պողոսեան Ընդհ. ապրանքի 6000

3. Գանձեցի Յ. Պողոսեանէ 2000 դշ.

Ասի դրամական գործողութիւն մ'է. ուստի վաճառականին անունին տեղ՝ Սնտուկի Պարտական պիտի ըլլայ. որովհետեւ

առնողը այդ հաշիւն է. իսկ Յ. Պողոսեան Պահանջող պիտի ըլլայ, որովհետեւ դրամը սուտղը ինքն է. ուրեմն Օրհաշիւը կը գրենք:

Սնտուկ Յ. Պողոսեանի 2000

4. Վճարեցի Մ. Գէորգեանի 2000 դշ.

Ասի ալ դրամական գործողութիւն մ'է. ուստի վաճառականին անունին տեղ՝ Սնտուկի Պահանջող պիտի ըլլայ, որովհետեւ դրամը սուտղը այդ հաշիւն է. իսկ Մ. Գէորգեան Պարտական պիտի ըլլայ, որովհետեւ դրամն առնողը ինքն է. ուրեմն Օրհաշիւը կը գրենք:

Մ. Գէորգեան Սնտուկի 2000

5. Տուի Մ. Գէորգեանի 4000 դշ.ի 61օր. ի/ճ տոմսակ:

Ասի վճարելի տոմսակի գործողութիւն մ'ըլլալով՝ վաճառականին անունին տեղ՝ վճարելի սոնակի Պահանջող պիտի ըլլայ. որովհետեւ տոմսակը սուտղն այդ հաշիւն է. իսկ Մ. Գէորգեան Պարտական պիտի ըլլայ, որովհետեւ տոմսակն առնողը ինքն է. ուրեմն Օրհաշիւը կը գրենք:

Մ. Գէորգեան վճարելի սոնակի 4000

6. Ասի Յ. Պողոսեանէ 3000 դշ.ի 31օր. իմ/ճ իր տոմսակը:

Ասի ալ գանձելի տոմսակի գործողութիւն մ'ըլլալով՝ վաճառականին անունին տեղ՝ Գանձելի սոնակի Պարտական պիտի ըլլայ. որովհետեւ տոմսակն առնողը այդ հաշիւն է. իսկ Յ. Պողոսեան Պահանջող պիտի ըլլայ, որովհետեւ տոմսակը սուտղը ինքն է. ուրեմն Օրհաշիւը կը գրենք:

Գանձելի սոնակի Յ. Պողոսեանի 3000

Այս օրինակները Գլխաւոր հաշուոց միջոցաւ Օրհաշիւն անցընելէ ետքը (Տե՛ս յաջորդ երեսը), Մայր-հաշիւն ալ պիտի անցընենք. փորձով տեսնելու համար թէ՛ Գլխաւոր հաշիւները վաճառականին Ք. անուն հաշուին վրայ ի՞նչ առաւելութիւն պիտի ցուցնեն: (Տե՛ս Թ. 311—312):

Արդ՝ ինչպէս Թ. 305ին մէջ տեսանք, վաճառականին Ք. հաշիւը յինչ կը ներկայացնէր. ստոր վրայ կարգ մը հաշիւներ հնարելով անոնց համար ալ վերի հաշիւները բացինք: Ուրեմն հիմա ալ այդ հաշիւները աչքէ անցնենք տեսնելու համար թէ՛ արդարեւ մեր նպատակին հասնենք:

Ընդհանուր ապրանքի հաշուին (Տե՛ս Թ. 311) Պարտական կողմը Մ. Գէորգեանէ 8000ի ապրանք առնուած, իսկ Պահանջի կողմը՝ Յ. Պողոսեանի 6000ի ապրանք ծախուած ըլլալը կ'երեւայ. ըսել է թէ՛ Յ. Պողոսեանի 6000ի ապրանք ծախուած ըլլալով եւ վաճառականին Ք. անուն ապրանքի համար զատ հաշիւ բանալով եւ վաճառականին Ք. անուն հաշիւին տեղ՝ առնուած ապրանքներուն համար այդ հաշիւը Պար-

Նախորդ երեսին մէջ յիշուած օրինակները Օրհաչիւ կ'անցնենք

Օ Ր Հ Ա Շ Ի Ի

1

1 Մարտ 1898		
1 5	Ընդհ. ապրանքի Մ. Գէորգեանին ինձ ծախած ապրանքին համար	8000
6 1	Յ. Պողոսեան Ընդհ. ապրանքին Իրեն ծախած ապրանքիս համար	6000
2 6	Սնուկ Յ. Պողոսեանին Իրմէ քերհաւի գանձածիս համար	2000
5 2	Մ. Գէորգեան Սնուկին Իրեն քերհաւի վնարածիս համար	2000
5 4	Մ. Գէորգեան Վնարեղի տնտեսակաց Իրեն տուած 61/օր. տնտեսակիս համար	4000
3 6	Գանձեղի տնտեսակ Յ. Պողոսեանին Իրմէ առած 31/օր. տնտեսակիս համար	3000
		25000

սական՝ և ծախուածներուն համար Պահանջող ընելով, պիտի կրնանք հասկնալ թէ՛ ո՞րքան գումարի ապրանք առեր և ո՞րքանի ապրանք ծախեր ենք. այսինքն, վաճառատունը մտած և ելած ապրանքին Մուսք ու Ելքը (արժէքի տեսակէտով, ո՛չ թէ քանակութեան) ինչպէս և ապրանքներէն եղած շահը կամ վնասը:

Սնուկին Պարսիին կողմը (Տե՛ս Թ. 311) Յ. Պողոսեանէ 2000 դ. դրամ առնուած, իսկ Պահանջիին կողմը՝ Մ. Գէորգեանի 2000 դ. դրամ արուած ըլլալը կ'երեւայ: Ըսել է թէ՛ դրամի համար ալ գատ հաշիւ բանալով և վաճառականին Բ. անուն հաշիւին տեղ՝ առնուած դրամներուն համար Սնուկը Պարսական և արուածներուն համար Պահանջող ընելով՝ պիտի կրնանք ուզած առեննիս դիւրաւ հասկնալ թէ՛ ո՞րքան դրամ առեր և ո՞րքանը տուեր ենք. այսինքն, Սնուկը մտած և ելած դրամներուն Մուսքն ու Ելքը և հետեւաբար Սնուկը ո՞րչափ պատրաստ դրամ ըլլալը:

Գանձեղի տնտեսակին Պարսիին կողմը՝ (Տե՛ս Թ. 311) Յ. Պողոսեանէ 3000 դ. ի տնտեսակ մ'առնուած ըլլալը կ'երեւայ: իսկ Պահանջիին կողմը գումար չ'կայ. ուրեմն թ'զի ապանակնիս 3000 դ. ի տնտեսակ մ'ունինք:

1 Պարսի	1 Պողոսեան	2 Պողոսեան	3 Պողոսեան
1898 Մարտ	1898 Մարտ	1898 Մարտ	1898 Մարտ
1 Մ. Գէորգեանի. առնուած ապ.բ	2 Յ. Պողոսեանի. ծախուած ապ.բ	4 Մ. Գէորգեանի. տնտ. գրամ	7 Յ. Պողոսեանի. առնուած տնտ. գր.
8000	6000	2000	3000
1	1	1	1
1 Մ. Գէորգեանի. առնուած ապ.բ	2 Յ. Պողոսեանի. ծախուած ապ.բ	4 Մ. Գէորգեանի. տնտ. գրամ	7 Յ. Պողոսեանի. առնուած տնտ. գր.
8000	6000	2000	3000
1	1	1	1

Վ Ճ Ա Ր Ե Ն Ի Տ Ո Մ Ս Ա Կ Բ

4 Պարտք	1898 Մարտ	6 Մ. Գեորգեան. տ. ան սոսնակը	1	4000	Պահանջ
---------	-----------	------------------------------	---	------	--------

Մ. Գ Է Ո Ր Գ Ե Ա Ն

5 Պարտք	1898 Մարտ	4 Սնուկին. առ. ան դրամը	1	2000	Պահանջ
		6 Վ. Ե. սոսնակ. առ. ան սոսնակը	»	4000	

6 Պարտք	1898 Մարտ	2 Ընդհ. ապրանքին. առ. ան ապր. բ.	1	6000	Պահանջ
---------	-----------	----------------------------------	---	------	--------

Յ. Պ Օ Ղ Ո Ս Ե Ա Ն

1898 Մարտ	3 Սնուկին. տ. ան դրամը	1	2000	Պահանջ
	7 Փանձ. սոսնակին. տ. ան սոսնակը	»	3000	

որ վճարորին պիտի գանձենք: Ըսել է թէ՛ Գանձուղիք տունակներու համար ալ զատ հաշիւ բանալով և վաճառականին Ք. անուն հաշիւին տեղ՝ անունամ տոմսակներուն համար Գանձուղի տունակը Պարտական և ուրիշի տրուած կամ ծախուած և կամ վճարորին գանձուածներուն համար Պահանջող ընելով, պիտի կրնանք ուզած առեննիս զիւրաւ հասկնալ թէ՛ ո՞րչափ գանձելի թղթեր տուեր և ո՞րքանը ուրիշի տուեր կամ վճարորին գանձեր ենք. այսինքն, թղթապանակնիս մտած և ելած տոմսակներուն Մուսսի և Ելիք և հետեւաբար թղթապանակնիս ո՞րչափ գանձելի թղթեր գատարաստ գանուիրը:

Վճարելի տունակին Պահանջին (Տե՛ս Թ. 312) կողմը Մ. Գեորգեանի 4000 դր. ի տոմսակ մը տրուած ըլլալը կ'երևայ. իսկ Պարտքին կողմը գումար չկայ. ուրեմն չըջարեբութեան մէջ 4000 դր. ի տոմսակ մը ունինք, զոր վճարորին պիտի վճարենք: Ըսել է թէ՛ Վճարուղիք տունակներու համար ալ զատ հաշիւ բանալով և վաճառականին Ք. անուն հաշիւին տեղ՝ ստորագրուած և դուրս տրուած տոմսակներուն համար Վճարելի տունակը Պահանջող և վճարուած տոմսակներուն համար Պարտական ընելով, պիտի կրնանք ուզած առեննիս զիւրաւ հասկնալ թէ՛ ո՞րքան վճարելի տոմսակներ չըջարեբութեան հաներ, և անոնցմէ՛ ո՞րքանը վճարեր ենք և ո՞րքան ունինք գեա վճարելի:

Ահաւաստիկ փորձով և շօշափելի օրինակներով հաստատեցինք թէ՛ ինչո՞ւ համար Կրկնատոմարի տեսակներուն մէջ վաճառականին անունին հաշիւ չի բացուիր, և անոր տեղ ուրիշ հաշիւներ ձարուելով անոնք Պարտական և Պահանջող կ'ըլլան, և թէ՛ այդ հաշուց միջոցաւ միայն կրնանք հասնիլ Կրկնատոմարի գլխաւոր նպատակին, զոր բացատրեցինք Թ. 292 երեսին մէջ:

Նոյնպէս այդ հաշուց միջոցաւ կը հասկցուի Կրկնատոմարին փորձը, Մայր-հաշուին մէջ բացուած հաշուց Պարտքին և Պահանջին գումարներն իրարու հաւասար ըլլալով: Թ. 311-312 երեսի վեց հաշուց Պարտքին և Պահանջին գումարներն առնելով


	Պարտք	Պահանջ
Ընդհ. ապրանք	8000	6000
Սնուկ	2000	2000
Գանձուղի տունակ	3000	—
Վճարելի	—	4000
Մ. Գեորգեան	6000	8000
Յ. Պողոսեան	6000	5000
	<u>25000</u>	<u>25000</u>

Երկուքին ալ գումարը կը գանանք 25000, որ հաւասար է Օրհաշուին գումարին (Տե՛ս Թ. 310). ըսել է թէ՛ Օրհաշուին յօդուածները կանոնաւորապէս Մայր-հաշիւ անցած են և ճիշդ կշիւ մը կը տան: Այս մասին աւելի ընդարձակ խօսած ենք Փորձակշիւն առթիւ:

Գլխաւոր հաւելոց ծագումը եւ դերը Կրկնատմարի մէջ՝ բացատրուած համոզիչ կերպով եւ իրական օրինակներով

Թ. 294-301 երեսներուն մէջ Կրկնատմարի ծագման եւ սեղանաւորութեան սկզբնական թուականներուն վրայ խօսելով բացատրեցինք թէ՛ ի՞նչպէս կը կատարուին սեղանաւորութեան գործողութիւնները երկու դռնակներու (Guichet) կամ գրասենեակներու միջոցաւ, Սննուկի եւ Հաշուընրացի դռնակ կամ Գրասենեակ, որոնց մէկը միւսին գործողութիւնները կը հակակշռէր եւ այսպէս երկուքը միացած սեղանաւորին վիճակը կը ցուցնէին: Նոյն երկու դռնակներով կարելի չէ դռնացնել վաճառականին Համարակալութիւնը, որուն մէջ ապրանքի գործողութիւններ ալ կան, որոնց գինը փոխուելու ենթակայ ըլլալով՝ վաճառականին համար հարկ է ունենալ հետեւեալ հինգ դռնակները կամ գրասենեակները, որոց պատկերը վարը կ'երեւայ.

1. Սննուկի դռնակ, գրամական գործողութեանց համար
2. Ապրանքի դռնակ, ապրանքի " "
3. Գանձեղի տոնակի կամ Թղրապանակի դռնակ, գանձելի թղթերու գործողութեանց համար
4. Վճարեղի տոնակի դռնակ, վճարելի թղթերու գործողութեանց համար
5. Շահ եւ վնասի դռնակ, շահ եւ վնասի գործողութեանց համար:



Արդ՝ այս դռնակները կամ գրասենեակները հաստատուելով՝ անոնց իւրաքանչիւրին գործողութիւնները առանձին պաշտօնականներու յանձնուած նկատելու ենք. եւ արդէն կանոնադրութեան համար մեծ վաճառատուններու մէջ աշխատութեան բանաւոր միայն կարելի կ'ըլլայ լաւագոյն արդիւնք ձեռք բերել: Թէն գործնականին մէջ այս բանը ընել, ծախքի պատճառաւ, չտեսնու կարելի չէ, այսու հանդերձ՝ մեր այս կերպ նկատելը Կրկնատմարի Գլխաւոր հաշուց ծագումը եւ անոնց կիրառութիւնը ուսանողին լաւագոյն եւ համոզիչ կերպով բացատրելու համար է միայն. գործին տէրը՝ անշուշտ իր նիւթական վիճակին եւ գործին ընթացքին համեմատ վարուելու է:

Ուրեմն այս հինգ դռնակներուն համար մէկ մէկ համարակալութեան է, եւ այդ համարակալներուն ձեռքը մէկ տեսակ արժէքներ միայն պիտի ըլլայ, որպէս զի շփոթութիւն չըլլայ. հետեւաբար

1. Սննուկի հաւնարակալը միայն գրամական գործողութիւնները պիտի գրէ:
2. Ապրանքի կամ Վաճառատան հաւնարակալը միայն ապրանքի առձախի գործողութիւնները պիտի գրէ:
3. Թղրապանակի կամ Գանձեղի տոնակի հաւնարակալը միայն գանձելի թղթոց Մոտսի ու Նլի գործողութիւնները պիտի գրէ:
4. Վճարեղի տոնակի հաւնարակալը դուրս տրուած վճարելի թղթոց եւ անոնց վճարման գործողութիւնները պիտի գրէ:
5. Շահ եւ վնասի հաւնարակալին գործը պիտի ըլլայ գրել շահ եւ վնասի վերաբերեալ գործողութիւնները:

Կրկնատմարին մէկ առաւելութիւնն ալ, ըսինք, սա է որ, իւրաքանչիւրին ընելը եթէ ոչ անկարելի՛ գէթ շատ զթուար կ'ըլլայ. որովհետեւ շուտով կը գտնուի անոր հետքը. քանի որ ամէն գործողութեան մէջ Առնող մը եւ Տրող մը կայ. հետեւաբար ամէն գործողութեան մէջ այդ երկու համարակալները կամ հաշիւները իրար կը հակակշռեն եւ կը հաստատեն միեւնոյն գործողութիւնը Տամարակալութեան այն մասնաւոր մեւովը, զոր բացատրեցինք արդէն:

Արդ՝ դիտենք թէ կանոնաւոր վաճառատան մը գործերը ինչպէս կը կատարուին: Քանի մը պարզ օրինակներով պիտի կրնանք շուտով ըմբռնել վերոյգրեալ հինգ համարակալներուն կամ հաշուց կարեւոր դերը Կրկնատմարի մէջ:

98 Մայիս 15ին 4000 զշ.ի ապրանք ծախքի կանխիկ անձանոթ յաճախորդի մը: Գործողութիւնը կանխիկ ըլլալուն, անշուշտ սալիք կամ առնելիք մը շնորհակցանք:

Այս գործողութիւնը կրկնատումարի եզանակով գրելու համար նախ Ապրանիի համարակալը՝ որ այդչափի ապրանքը տուաւ, իր Պահանջիին կողմը կը գրէ այդ գումարը Սնտուկին ըսելով, որով կը հասկցուի թէ նոյն գումարը կանխիկ գանձուեր և Սնտուկը մտեր է:

Ուրեմն Ապրանիի կամ Ընդհ. ապրանիի հաշիւը Մայր-հաշիւը պիտի գրուի այսպէս.

1 Մուսք կամ Պարսի ԸՆԴՀ. ԱՊՐԱՆՔ Ելք կամ Պահանջէ 1

			1898							
			Մայս.	15	Սնտուկին	1	4000			

Ետքը Սնտուկիին համարակալը՝ որ այդ գումարն առաւ, գայն կը պարտի Ընդհ. ապրանիին, որ այդչափի ապրանքը տուաւ. հետեւաբար իր Պարսիին կողմը կը գրէ այդ գումարը Ընդհ. ապրանիին ըսելով, որով կը հասկցուի թէ նոյն գումարը Ընդհ. ապրանիի հաշիւէն առեր է և անոր կը պարտի:

Ուրեմն Սնտուկիի հաշիւը Մայր-հաշիւը պիտի գրուի այսպէս.

2 Մուսք կամ Պարսի ՍՆՏՈՒԿ Ելք կամ Պահանջէ 2

			1898							
			Մայս.	15	Ընդհ. ապ.ին	1	4000			

Եթէ փոխանակ վաճառուով՝ ապրանքի կանխիկ գնում ըլլար, վերինին հակառակը պիտի գրուէր, այսինքն, Ընդհ. ապրանիին Պարսիին և Սնտուկիին Պահանջիին պիտի անցնէր գնուած ապրանքին գումարը:

Ահաւասիկ այս մէկ օրինակով շատ յստակ կ'երեւայ այն պարագան թէ՛ կրկնատումարի եզանակով տետրակներ գրելու համար իւրաքանչիւր գործողութեան գումարը մէկ դռնակի համարակալին կամ հաշիւին Պարսիին անցած ատեն, ուրիշ դռնակի համարակալին կամ հաշիւին այ Պահանջիին կ'անցնի: Ուրիշ օրինակ մը 98 Յունիս 10ին ծախեցի Յակոբին 2000 դշ.ի ապրանք շխմա. իր ստմանկովը:

Ընդհանուր ապրանիի Համարակալը, որ այդ ապրանքը տուաւ, իր Պահանջիին կողմը կը գրէ այդ գումարը Գանձեղի սոմաակներէն ըսելով, որով կը հասկցուի թէ ծախուած ապրանքին փոխարէն Գանձ. սոմաակ մ'առնուեր է: Իսկ Գանձ. սոմաակի Համարակալը որ ծախուած ապրանքին փոխարէն սոմաակ առաւ, իր Պարսիին կողմը կը գրէ այդ գումարը Ընդհանուր ապրանիին ըսելով, որով կը հասկցուի թէ ծախուած ապրանքին փոխարէն առնուած է այդ սոմաակը. հետեւաբար և Մայր-հաշուին մէջ այդ երկու համարակալները կամ հաշիւները կ'երեւան այսպէս.

1 Պարսի ԸՆԴՀ. ԱՊՐԱՆՔ Պահանջէ 1

			1898							
			Յնիս.	10	Գ.ձ. սոմակ.ին	1	2000			

2 Պարսի ԳԱՆՁ. ՏՈՄՍԱԿՔ Պահանջէ 2

			1898							
			Յնիս.	10	Ըդ.ապր.ին	1	2000			

98 Յունիս 15ին գնեցի Մինասէն 3500 դշ.ի ապրանք ի/հ. 41/օր. իմ ստմանկովս:

Ընդհ. ապրանիի Համարակալը, որ այդ ապրանքն առաւ, իր Պարսիին կողմը կը գրէ այդ գումարը Վճարեղի սոմաակիին ըսելով, որով կը հասկցուի թէ՛ այդ սոմաակ ապրանքին փոխարէն վճարեղի սոմաակ մը տրուեր է. Իսկ Վճարեղի սոմաակի Համարակալը, որ այդ սոմաակը տուաւ, կը գրէ իր Պահանջիին կողմը Ընդհ. ապրանիին ըսելով, որով կը հասկցուի թէ այդ սոմաակը գնուած ապրանքի փոխարէն տրուեր է. հետեւաբար և Մայր-հաշուին մէջ այդ երկու համարակալները կամ հաշիւները կ'երեւան այսպէս.

1 Պարսի ԸՆԴՀ. ԱՊՐԱՆՔ Պահանջէ 1

			1898							
			Յուլ.	15	Վ.ձ. սոմակ.ին	1	3500			

2 Պարտի վճարելի ՏՈՄՍԱԿՔ Պահանջէ 2

				1898				
				Յուլ. 15	Ընդ. սպ. կն	1	3500	

98 Յուլիս 31ին Մնտուկի հաշիւնիս ընելով 200 դշ. դրամ պակաս գտանք, զոր որ եւ է հաշիւի համար վճարած ըլլալնիս չի կրնալով գտնալ, պէտք է այդ պակասածը շտկենք, որպէս զի Սնտուկի համարակալին կամ հաշիւին ցուցուցած գումարը եւ մեր Մնտուկին դրամը իրարու համաձայն ըլլան:

Այս 200ը մեզի համար փնաս մ'է եւ այդ փնասին համար ալ Շահ եւ Վնաս անուն Հարևարակալ մը կամ հաշիւ մ'ունենալով, անոր Պարտի կողմը կը գրուի այդ գումարը Սնտուկին ըսելով, իբր թէ Մնտուկէն առած ըլլայ զայն: Իսկ Մնտուկը այդ գումարը տուած սեպելով՝ անոր Պահանջին կողմը կը գրուի Շահ եւ Վնասէն ըսելով, որով Մայր-հաշուին մէջ այդ երկու հաշիւները կ'երեւան այսպէս:

4 Պարտի Ս Ն Տ Ո Ւ Կ Պահանջէ 4

				1898				
				Յուլ. 31	Շահելվա. կն	1	200	

2 Պարտի ՇԱՀ ԵՒ ՎՆԱՍ Պահանջէ 2

1898								
Յուլ. 31	Սնտուկին	1	200					

Լրացուցիչ տեղեկութիւն

Գլխաւոր հաւուց եւ անոնց ստորաբաժանմանց վրայ

ԳՐԱՄԱՐԿՂԻ ԿԱՄ ՍՆՏՈՒԿԻ ՀԱՇԻԻ

Իրանարկղի կամ գործածական բառովը՝ Սնտուկի հաշիւը Պարտակալն ընելու է Մնտուկը մտած բոլոր դրամներուն համար, եւ Պահանջող՝ Մնտուկէն ելածներուն համար, սակի եւ արծաթ դրամ-

ներ եւ արժէթղթեր, որք իբր դրամ կը շրջաբերին, առանց որ եւ է զիջի, ինչպէս կառավարական թղթադրամք եւ դրամատուններու ընտանայադիրք:

Սնտուկի հաշիւին Պարտի կողմը՝ Մնտուկին Մոռսքը կը ցուցնէ, Պահանջի կողմը՝ Ելքը: Իսկ այս հաշուին կը շրջուի, այսինքն, Պարտիին կամ Մոռսքին գումարին՝ Պահանջիին կամ Ելքին գումարն վրայ ունեցած առաւելութիւնը՝ Մնտուկը գտնուած պատրաստ դրամը կը ցուցնէ:

Ոմանք տեսօրին վճարելի թղթերը եւ շէքերն ալ կանխիկ դրամի պէս այս հաշիւին կ'անցնեն. բայց աւելի լաւ է այդ տեսակ թղթոց դրամը գանձելէ ետքը անցնել. վասնզի կրնայ ըլլալ որ թղթ մը նոյն օրը չի վճարուի, որ ատեն կրկին գրութիւն ընել հարկ է:

Մնտուկի հաշիւը ստորաբաժանմանը չ'ունի. բայց այն երկրներու մէջ, ուր հնչուն դրամէ գատ թղթադրամ եւ օտար դրամներ շատ կը շրջաբերին, անոնց համար, եթէ ուզուի, առանձին հաշիւներ կը բացուի. Թղթադրամի, Գաղղ. ոսկիի, Անգղ. ոսկիի եւ ուրիշ դրամներու անունովը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԻ ՀԱՇԻԻ

Ապրանքի գնման եւ վաճառման բոլոր գործողութիւնները այս հաշիւին կ'անցնին: Վաճառականը Ընդհանուր ապրանքի հաշիւը Պարտակալն կ'ընէ՝ գնած, փոխանակած, փոխ առած, ծառանդած կամ ձրի առած, վերջապէս ո՛ր եւ է կերպով իր վաճառատունը մտած ապրանքներուն համար, իրենց արժէքին եւ եղած ծախուց գումարին չափ. ծախք ըսելով փոխադրողչէք, բեռնակրողչէք, հակողչէք, նաւողչէք, յանձնառողչէք, ապահովողչէք, մաքսատուրք, եւլն. հասկնալու է: Իսկ Պահանջող կ'ընէ զայն՝ ծախած, փոխանակած, փոխ կամ ձրի տուած, գողցուած, այրած կամ փնասուած, վերջապէս ո՛ր եւ է կերպով վաճառատունէն ելած ապրանքներուն համար, անոնց արժէքէն զեղչելով եղած ծախքերը, զորօրինակ, փոխադրողչէք, միջնորդչէք, մաքսատուրք, զեղչ եւլն: Այս հաշիւին Պարտի կողմը՝ ապրանքներուն Մոռսքը, այսինքն, գնուած ապրանքները կը ցուցնէ, եւ Պահանջի կողմը՝ ապրանքներուն Ելքը, այսինքն, ծախուած ապրանքները: Այս հաշիւին ա՛նոր համար Ընդհանուր ապրանք ըսուած է, որովհետեւ վաճառականին բոլոր ապրանքները կը ներկայացնէ. իսկ երբ ապրանքին տեսակներուն վրայ գատ գատ գաղափար առնել ուզուի՝ ամէն մէկ ապրանքին իր անունովը հաշիւներ կը բացուի, որոնց վրայ պիտի խօսինք Ընդհանուր ապրանքին ստորաբաժանմանց աւթիւ:

Ընդհանուր ապրանքի հաշիւին Պահանջքի՛ն՝ Պարտքի՛ն գումարքն վրայ ունեցած առաւելութիւնը՝ (եթէ հաշիւ տեսնուած առանձին ապրանքներն ամբողջ ծախուած են) ապրանքներէն եղած շահէ կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասը Պահանջող և Ընդհ. ապրանքը Պարտական ընելու է: Իսկ ընդհանուակը Պարտքի՛ն Պահանջքի՛ն գումարքն վրայ ունեցած առաւելութիւնը՝ (հաշիւ տեսնուած առանձին դարձեալ ապրանքներն ամբողջ ծախուած սեպելով) ապրանքներէն եղած փասար կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասը Պարտական և Ընդհ. ապրանքը Պահանջող ընելու է:

Հաշիւ տեսնուած առանձին՝ եթէ դեռ չի ծախուած ապրանքը վրայ, անոնց գին մը կը դրուի և ծախուածի պէս համարելով բաւայնով շահը կամ փասար կը գտնուի վերը բացատրուածին պէս:

Այս մասին աւելի ընդարձակօրէն խօսած ենք Ընդհ. կշռի՛ն առթիւ:

ՍՏՈՐԱՐԱԺԱՆՄԱՌՆԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԻ ՀԱՇՈՒՆ

Վաճառականական գործողութիւնները կրկնատմարի եղանակով գրելու համար թէեւ հինգ Գլխաւոր հաշիւները բաւական են, սակայն, ինչպէս ըսինք, շատ անգամ այդ հաշիւներէն դատուրիչներ ալ բանալ հարկ կ'ըլլայ, որք այդ հաշուոյ Ստորաբաժանւումները կ'ըսուին:

Ընդհանուր ապրանքի իր ստորաբաժանումը ուրիշ հաշիւներ բանալ հարկ կ'ըլլայ, երբ վաճառականը քանի մը տեսակ ապրանքի վրայ գործելով, ուզէ առանձինն գիտնալ ամէն տեսակ ապրանքէ գոյացած շահը կամ փասար: Օրինակ, եթէ վաճառականը թիֆթիկի և տպածոյի վրայ գործէ, և այդ երկու գործին զատ զատ շահը գիտնալ ուզէ՝ անոնց համար Մայր-հաշուին մէջ զատ հաշիւներ կը բանայ Թիֆթիկի հաշիւ, Տպածոյի գործ ըսելով, և թիֆթիկ գնած առանձին Օրհաշուին մէջ Ընդհանուր ապրանքի տեղ՝ Թիֆթիկի հաշիւը Պարտական կ'ընէ. իսկ թիֆթիկ ծախած առանձին նոյնպէս այդ հաշիւը Պահանջող կ'ընէ: Նոյնը հասկնալու է նաեւ Տպածոյի, Չուխայի, Աւերիֆաւի և ուրիշ տեսակ ապրանքներու համար բացուած հաշուց համար:

Ուրեմն զիստուր հաշուց իր ստորաբաժանումը բացուելիք հաշիւներուն կիրառութեան մասին շուարելու չէ, որովհետեւ անոնք այդ հաշիւներուն մէկ մասը կը կազմեն. հետեւաբար ինչ սկզբունքով և ինչ կերպով որ պիտի գրուին այդ հինգ հաշիւները, անոնց ստորաբաժանումնքն ալ նոյն կերպով կը գրուին: Ուստի Ընդհ. ապրանքի ստորաբաժանումնքն ալ բուն իսկ Ընդհ. ապրանքի պէս Պարտական և Պահանջող ընելու է անշարժի

ապրանք, որչափի որ գնուին և վաճառուին իրենց ծախքերովը: Այսինքն է որ՝ ապրանքի հաշիւին այս ստորաբաժանումնքներն անշարժ կարելու և գործածական են մեծ վաճառատուներու մէջ, որ շատ տեսակ ապրանքներու վրայ մեծաքանակ գործեր կ'ըլլան և ամէն տեսակ ապրանքի համար զատ տեղեր և յատուկ ստանդարտներ յատկացած է, ինչպէս են Բերայի Պօկ մարշէն և Պոլսոյ կողմը Օնոզի Պաֆի (Էօմէր էֆէնաֆ) մեծ վաճառատուները:

Ընդհ. ապրանքի ստորաբաժանմանց համար որոշ թիւ և որոշ անուններ չենք կրնար գնել հոս. վասն զի գործին և պարագային համեմատ կ'աւելնան, կը պակսին կամ կը փոխուին: Օրինակ, տպագրիչը՝ որ այլոց հաշուոյ գիրք կը տպէ, ապրանքի հաշիւ չունենար, այլ անոր տեղ կը բանայ Տպագրութեան հաշիւ, որ զիստուր և միակ աղբիւրն է իր շահուն. իսկ ջաղացական, որ ուրիշներու հաշուոյն ցորեն կ'աղայ, Ընդհ. ապրանքի տեղ ջաղացական հաշիւը կը բանայ, այսպէս ամէն գործ իր տեսակին համեմատ հաշիւներ կ'ունենայ. հետեւաբար մենք հոս պիտի գնենք անոնց ամենէն սովորականներն ու գործածականները:

1. Հաշիւ տպածոյի, թիֆթիկի, բամպակի, և ուրիշ տեսակ ապրանքներու.
2. Հաշիւ Փօնսուլիտէի, Բումէլիի Երկաթուղիի, Թրամվէյի, Շիրքէթը Սայրիյէի, Տէրքօսի ջրի և Բարաֆի Ընկերութեանց բաժնեթղթերու և ուրիշ արժէթղթերու.
3. Հաշիւ ապրանքի ընկերակցութեամբ $\frac{1}{2}$ ի, $\frac{1}{3}$ ի, $\frac{1}{4}$ ի կամ $\frac{1}{10}$ 50 ի, 30 ի և ըն. հաշուով.
4. Հաշիւ ապրանքի իմ հաշուոյս յանձնառուութեամբ կամ աւանդ այսինչին քով.
5. Հաշիւ այսինչին ապրանքին իմ քով յանձնառուութեամբ կամ աւանդ.
6. Հաշիւ գործարանի, տարազագործարանի, նախնական և պատրաստուած նիւթերու.
7. Հաշիւ անշարժ ստացուածքի կամ կալուածի, խրաքանչիւրն իր անունովը, այսինքն, տուն, խանութ, ագարակ, հող, պանդոկ, և ըն.
8. Հաշիւ կարասիքի
9. » նաուու
10. » ստանալվաճառի
11. » ճամբորդութեան
12. » մասնաձեւի, կամ Իզմիրի, Տրապիզօնի, Լօնսոնոյի, Փարիզի Տունը և ըն:

Հաշիւ սպաճողի, բամբակի, բիճերիկի եւ ուրիշ ապրանքներու — Ինչ որ ըսինք Ընդհ. ապրանքին համար, նոյնը հասկնալու է գանազան տեսակ ապրանքներու հաշւոց համար, այսինքն, ամէն տեսակ ապրանքի համար Մայր-նաշուին մէջ գատ հաշիւներ բացած ատեննիս, վաճառատունը մտած նոյն ապրանքներուն համար այդ հաշիւները իրենց անուններովը Պարսական, և վաճառատունէն ելածներուն համար Պահանջող ընելու է:

Հաշիւ արժեքդրերու. — Երբ վաճառականը կամ սեղանաւորը գանազան արժէթղթեր գնէ, ամէն մէկուն անունովը հաշիւներ կը բանայ Քօնսոլիստէի, Բուսթիսի երկարուղիի, Տերսուի Ջրի Ընկ. բաժնիք, և ինչ. ըսելով, և գանոնք Պարսական կ'ընէ գնած գնոյն և վճարած ծախքերուն (միջնորդէք, թղթատարի և ապահովագրութեան ծախք, եթէ գնած թղթերը հեռու քաղաքէ մը բերել տայ) շափ և Պահանջող՝ այդ արժէթղթերէն առած տարեկան կամ 6ամս. տոկոսին, չահարածնին, վիճակահանութենէն ելած գումարին և ծախած ատեն բանած զուտ գումարին համար: Եթէ արժէթուղթ ժառանգէ՝ դարձեալ ժառանգած արժէթղթին անունովը հաշիւ մը բանալով գայն Պարսական ընելու է՝ նոյն արժէթղթին օրուան հրապարակի գինովը:

Ամէն տեսակ արժէթղթի համար բացուած հաշւոց Պահանջֆիլե գումարին՝ Պարսիկին վրայ ունեցած առաւելութիւնը՝ այդ հաշիւներէն եղած շահը կը ցուցնէ, որուն համար Շահ և Վեաւը Պահանջող և արժէթղթի հաշիւները Պարսական ընելու է: Իսկ այդ հաշւոց Պարսիկ գումարին Պահանջֆիլե վրայ ունեցած առաւելութիւնը՝ այդ հաշիւներէն եղած վնասը կը ցուցնէ, որուն համար Շահ եւ Վեաւը Պարսական և արժէթղթի հաշիւները Պահանջող ընելու է: (Տե՛ս մեր Ձեռաստարին Թ. 29.38 յօդուածները):

Արժէթղթոց համար Մայր-հաշուին մէջ բացուած հաշւոց Պարսիկ և Պահանջֆիլե կողմը երկերկու սիւներ եւս գծելով, գրելու է անոնց առջինին մէջ՝ արժէթղթոց ոմանց անուանական արժէքը, իսկ երկրորդին մէջ՝ գինը. օրինակ, Օսմ. Քօնսոլիստէն անուանական արժէքին վրայ կ'առնուի և կը ծախուի և գինը 0/100 20-25 դշ. է այժմ (աւելի կամ պակաս ալ կ'ըլլայ). ուրեմն եթէ 2000 անուանական ոսկիի օսմ. Քօնսոլիստէ գնենք 25 դշ.էն՝ 50000 դշ. կամ 500 Լ. Օ. պիտի վճարենք: Արդ՝ Քօնսոլիստէի նաշիւին Պարսիկ կողմի վերոյիշեալ երկու սիւներէն առջինին մէջ կը գրենք անուանական արժէքը՝ 2000ը. և Բ.ին մէջ՝ 25 դշ.ի գինը.

Իսկ անոր իրական արժէքը 50000ը գումարի սովորական սիւնին մէջ: Երբ Քօնսոլիստէները 30 դշ.ի ծախենք, Պահանջֆիլե առջի գինին մէջ դարձեալ 2000ը և Բ.ին մէջ՝ 30 դշ.ի գինը. իսկ բանած իրական արժէքին 60000 դշ.ի գումարը՝ դարձեալ գումարի սովորական սիւնին մէջ կը գրենք: Երբ արժէթղթերը հատով ըլլան, գորօրինակ, Երկաթուղիի, Թրամվէյի, Շիրքէթի և այլ բաժնեթղթեր, արժէթղթոց հատին և գինին համար դարձեալ Պարսիկ և Պահանջֆիլե կողմը երկերկու սիւն գծելու է, որոնց առջինին մէջ՝ արժէթղթոց հատը և Բ.ին մէջ՝ գինը կը գրուի. իսկ ծախուածներն ալ Պահանջֆիլե կողմը միեւնոյն սիւններուն մէջ կը գրուին, որով ուղած ատեննիս կրնանք գիտնալ թէ՛ ո՞րչափ քօնսոլիստէ, քանի՞ հատ թրամվէյի բաժնեթուղթ եւլն. ունինք: Ինչպէն որ մենք ալ մեր Մայր-հաշուին մէջ Օսմ. քօնսոլիստէի, Թրամվէյի, Տէրքօսի և այլ արժէթղթոց համար նոյն սիւները գծած ենք, ուր յստակ կ'երեւան թէ՛ այդ արժէթղթերէն ո՞րքան ատեր, ո՞րքանը ծախեր ենք և սնտուկը ո՞րքան պատրաստ կայ:

Հաշիւ ընկերակցութեամբ ապրանքի 1/2ի, 1/3ի, 1/4ի. 0/10 60ի եւ 40ի, ելն. նաշով. — Վաճառականը երբեմն իր սովորական գործէն գատ՝ մէկ կամ մէկ քանի վաճառականի հետ որոշեալ գործուրթեան մը համար միայն ընկերովի ապրանք կամ արժէթուղթ կը գնէ շահադիտութեան նպատակով, անոնց վաճառումէն գոյանալիք շահուն բնականաբար մէկ մասը միայն իրեն կը պատկանի, նոյնպէս ըլլալիք վնասին ալ իր բաժնին շափ կը մասնակցի:

Այս տեսակ ընկերակցութիւնները առժամանակեայ ըլլալով՝ չեն կրնար բազմատուի բուն իսկ վաճառականական ընկերութեանց հետ. զի սասնկ գործի համար ընկերակցողք անկախ և ազատ են վարելու իրենց անձնական գործերը, զորս շփոթելու չէ այս ընկերովի գործողութեանց հետ: Հետեւաբար այս տեսակ գործողութեանց արդիւնքը ամէն ընկերակցողի համար առանձին գիտնալ կարեւոր ըլլալով՝ գատ հաշիւ մը բանալ հարկ է Ապրանք ընկերակցութեամբ կամ Ապրանք 1/2ի, կամ 0/10 50ի նաշուով՝ եթէ գործողութիւնը միայն երկու ընկերի միջեւ կատարուի՝ և շահն ու վնասը կէս առ կէսի հաշւով բաժանելի է: 1/2ի նաշուով՝ եթէ գործը երեք ընկերի միջեւ կատարուի. 2/3ի նաշուով՝ եթէ ընկերներն երկուք ըլլան՝ բայց մին՝ երկու և մըսը՝ մէկ բաժին ունենայ. 0/10 60ի և 40ի նաշուով՝ եթէ գործը երկու ընկերի միջեւ և շահն ու վնասը նոյն համեմատութեամբ բաժանելի է, և ինչ:

Այս տեսակ ընկերակցութեամբ գործողութիւնները հետեւեալ չորս պարագաներու մէջ կ'ըլլան, հետեւաբար և անոնց գրութիւնն ալ տարբեր կ'ըլլայ:

Վաճառականը՝ որուն տետրակները պիտի գրենք, յանձն կ'առնէ.

1. Ընկերակցութեամբ գործողութեան ապրանքները ինքը թէ՛ գնել և թէ՛ ծախել.
2. Ասոր հակառակը ըլլալով՝ վաճառականը ո՛չ ապրանքը գնելը և ո՛չ ծախելը յանձն կ'առնէ.
3. Ապրանքներուն միայն գնումը յանձն կ'առնէ և ո՛չ վաճառումը.
4. Ապրանքներուն միայն վաճառումը յանձն կ'առնէ և ո՛չ գնումը.

1. Պարագայ. — Երբ վաճառականը յանձն առնէ ապրանքները թէ՛ գնել և թէ՛ ծախել: Ամէն անգամ որ ընկերակցութեան հաշիւոյն ապրանք գնուի և դրամը վճարուի՝ շահակից ընկերները քանի՛ հատ որ են՝ անոնց համար զատ հաշիւներ բանալ և գանոնք Պարտական ընելու է գնման գումարին վրայ իրենց ինկած բաժնին չափ. իսկ ապրանքը գնող և դրամը վճարող վաճառականին կամ ընկերոջ բաժնին համար ալ Ընկերակցութեանը ապրանքի հաշիւը Պարտական ընելու է: Յետոյ Պարտական ընելու է դարձեալ Ընկերակցութեանը ապրանքի հաշիւը գնուած ապրանքի համար վճարուած ծախուց (միջնորդէք, փոխադրողէք, թղթատարի, հեռագրի ևլն.) և այդ գործողութեան վրայ (ապրանքը գնել և ծախելը ստանձնող) ընկերոջ առնելիք յանձնառողջէքին համար: Ապրանքները մաս առ մաս կամ ամբողջ ծախուած ատեն՝ Ընկերակցութեանը ապրանքի հաշիւը Պահանջող ընելու է այնչափի համար, որչափի որ ծախուին: Յետոյ վաճառման գուտ գումարին վրայ (ծախքերը իջնելէ ետքը) իւրաքանչիւր ընկերի բաժնին համար Պահանջող ընելու է. անոնց հաշիւները, միևնոյն ատեն Ընկերակցութեանը ապրանքի հաշիւը Պարտական ընելով:

Այն ատեն Ընկերակցութեանը ապրանքի հաշիւը Պահանջիլն Պարտիկ գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ այդ գործին շահէն վաճառականին ինկած բաժինը կը ցուցնէ, եթէ շահ եղած է այդ գործէն: Այդ հաշիւը կը գոցուի Շահ և Վեասը Պահանջող և Ընկերակցութեանը ապրանքի հաշիւը Պարտական ընելով անոր կշտին համար, որ վաճառականին շահարածինն է: Կը մնայ շահակից ընկերներուն հաշիւները, որոց կշիւներն ալ այդ գործէն իրենց՝ վաճառականէն ունեցած պահանջքը կը ցուցնէ, եթէ նոյն գործէն շահ եղած է: Իսկ ընդհակառակը Ընկերակցութեանը ապրանքի հաշիւը Պարտական Պահանջիլն գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ այդ գործէն եղած փասէն վաճառականին ինկած բաժինը կը ցուցնէ, եթէ փաս եղած է այդ գործէն: Այն ատեն դարձեալ այդ հաշիւը կը գոցուի Շահ և Վեասը Պարտական և Ընկե-

ակցութեանը ապրանքի հաշիւը Պահանջող ընելով անոր կշտին համար, որ վաճառականին փաստ բաժինն է: Կը մնայ շահակից ընկերներուն հաշիւները՝ որոց կշիւներն ալ այդ գործողութեանէն իրենց՝ վաճառականին ունեցած պարտքը կը ցուցնէ, եթէ փաս եղած է այդ գործէն:

2. Պարագայ. — Երբ վաճառականը, որուն տետրակները այս տեսակ պարագաներու մէջ ի՛նչ կերպ գրուելու եղանակը կը ցուցնենք, ո՛չ ապրանքին գնումը և ո՛չ վաճառումը յանձն առած է: Ար պարագային՝ հաշիւ մը բանալու է Ընկերակցութեանը ապրանքի համար և Պարտական ընել գայն գնման գումարին և եղած ծախուց վրայ վաճառականին բաժնին ինկած գումարին չափ, միևնոյն ատեն Պահանջող ընելով ապրանքը գնող ընկերին: Երբ ապրանքը ծախող ընկերէն վաճառման հաշիւը առնուի, այն ատեն Պահանջող ընելու է Ընկերակցութեանը ապրանքի հաշիւը վաճառման գուտ գումարին վրայ վաճառականին բաժնին ինկած գումարին չափ, միևնոյն ատեն Պարտական ընելով ապրանքը ծախող ընկերին: Այն ատեն Ընկերակցութեանը ապրանքի հաշիւը կշիւը, այսինքն, Պահանջիլն Պարտիկ գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ այդ գործին շահէն վաճառականին ինկած բաժինը կը ցուցնէ, եթէ շահ եղած է այդ գործէն: Այդ հաշիւն ալ կը գոցուի Շահ և Վեասը Պահանջող և Ընկերակցութեանը ապրանքի հաշիւը Պարտական ընելով անոր կշտին համար, որ վաճառականին շահարածինն է: Իսկ ապրանքը գնող և ծախող ընկերին հաշիւին կշիւն ալ նոյն գործէն վաճառականին այդ ընկերոջ վրայ մնացած Պահանջիլը կը ցուցնէ, եթէ շահ եղած է այդ գործէն:

Իսկ ընդհակառակը Ընկերակցութեանը ապրանքի հաշիւին Պարտիկ Պահանջիլն գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ այդ գործէն եղած փասէն վաճառականին ինկած բաժինը կը ցուցնէ, եթէ փաս եղած է այդ գործէն: Այն ատեն այդ հաշիւն ալ կը գոցուի Շահ և Վեասը Պարտական և Ընկերակցութեանը ապրանքի հաշիւը Պահանջող ընելով անոր կշտին համար, որ վաճառականին փաստ բաժինն է: Իսկ ապրանքը գնող և ծախող ընկերին հաշիւին կշիւն ալ այն ատեն վաճառականին այդ ընկերոջ ո՞րքան Պարտական մնացած ըլլալը կը ցուցնէ, եթէ, ինչպէս ըսինք, գործէն փաս եղած է:

3. Պարագայ. — Վաճառականը ապրանքին միայն գնումը յանձն առած է և ո՛չ վաճառումը: Ապրանքը գնուած ատեն Պարտական ընելու է շահակից ընկերներուն հաշիւները գնման գումարին և եղած ծախուց համար (միջնորդէք և իր առնելիք յանձնառողջէքը և ապրանքները ծախել ստանձնող ընկերոջ վր-

կելու համար ըրած ծախքերը իրենց ինկած բաժնին չափ և վաճառականին բաժնին համար ալ Բնկերակցութեանը ապրանքի հաշիւը Ապրանքները ծախել ստանձնող ընկերը երբ վաճառման հաշիւը զրկէ՝ Պահանջող ընկեր է Բնկերակցութեանը ապրանքի հաշիւը վաճառման գուտ գումարին վրայ վաճառականին ինկած բաժնին չափ, միեւնոյն ատեն ապրանքը ծախող ընկերով հաշիւն ալ Պարսական ընկերով: Այն ատեն Բնկերակցութեանը ապրանքի հաշիւին Պահանջիին՝ Պարսիկ գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ այդ գործէն եղած շահէն վաճառականին ինկած բաժնիւր կը ցուցնէ, եթէ շահ եղած է այդ գործէն: Այդ հաշիւն ալ կը գոցուի Շահ և Վնասը Պահանջող և Բնկերակցութեանը ապրանքի հաշիւը Պարսական ընկերով անոր կշիւն համար, որ վաճառականին շահարժինն է: Իսկ ընդհակառակը Բնկերակցութեանը ապրանքի հաշիւին Պարսիկ Պահանջիին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ այդ գործէն եղած վնասէն վաճառականին ինկած բաժնիւր կը ցուցնէ, եթէ վնաս եղած է այդ գործէն: Այն ատեն դարձեալ այդ հաշիւը կը գոցուի Շահ և Վնասը Պարսական և Բնկերակցութեանը ապրանքի հաշիւը Պահանջող ընկերով անոր կշիւն համար, որ վաճառականին վնասու բաժնինն է: Իսկ երկու պարագային մէջ ալ, այսինքն. շահ ըլլայ կամ վնաս՝ շահակից ընկերներուն հաշիւը կշիւր՝ անոնց վաճառականին ունեցած Պարսիկ կը ցուցնէ:

4. Պարագայ. — Վաճառականը ապրանքին միայն վաճառումը յանձն առած է և ո՛չ գնումը: Նախ գնման գործողութեան համար Պարսական ընկեր է Բնկերակցութեանը ապրանքի հաշիւը՝ Պահանջող ընկերով միեւնոյն ատեն ապրանքը գնող ընկերով հաշիւը՝ գնման գումարին և եղած ծախուց վրայ վաճառականին ինկած բաժնին չափ: Երբ ապրանքները մաս առ մաս կամ ամբողջ ծախուին՝ Բնկերակցութեանը ապրանքի հաշիւը Պահանջող ընկերով է վաճառման գումարին չափ: Եւրբ վաճառման գուտ գումարը (ծախքերը իջնալէ վերջը) պէտք է բաժնել իւրաքանչիւր ընկերի իրենց բաժնին չափ, անոնց հաշիւները Պահանջող և միեւնոյն ատեն Բնկերակցութեանը ապրանքի հաշիւը Պարսական ընկերով: Այն ատեն Բնկերակցութեանը ապրանքի հաշիւին Պահանջիին՝ Պարսիկ գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ այդ գործին շահէն վաճառականին ինկած բաժնիւր կը ցուցնէ, եթէ շահ եղած է այդ գործէն: Այդ հաշիւն ալ կը գոցուի Շահ և Վնասը Պահանջող՝ և Բնկերակցութեանը ապրանքի հաշիւը Պարսական ընկերով անոր կշիւն համար, որ վաճառականին շահարժինն է: Իսկ ընդհակառակը Բնկերակցութեանը ապրանքի հաշիւին Պարսիկ Պահանջիին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ այդ գործէն եղած վնասէն վաճառականին ինկած բաժնիւր կը ցուցնէ:

նքէ վնաս եղած է այդ գործէն: Այն ատեն դարձեալ այդ հաշիւը կը գոցուի Շահ և Վնասը Պարսական և Բնկերակցութեանը ապրանքի հաշիւը Պահանջող ընկերով անոր կշիւն համար, որ վաճառականին վնասու բաժնինն է: Իսկ երկու պարագային մէջ ալ, այսինքն. շահ ըլլայ կամ վնաս, շահակից ընկերներուն հաշիւը կշիւր անոնց՝ ապրանքը ծախող վաճառականէն ունեցած Պահանջիւր կը ցուցնէ: (Այս շորս պարագայէն ալ մէկ մէկ օրինակ ըրած ենք Օրհաշիւով և Մայր-հաշիւով «Լուծումն Ձեռատարի յղաւածոց» մասին մէջ):

Հաշիւ ապրանքի իմ նաշուոյ յանձնառուէն կամ աւանդ ստանալէն ետ. — Երբ վաճառականը՝ ուրիշ քաղաք մը գտնուող էր թղթակցին աւանդ կամ իր հաշուին ծախուելու համար ապրանքը զրկէ, ըստ որում աւանդառուն կամ յանձնառուն ապրանքը չծախուած՝ անոր արժէքին համար պարտական չի կրնար ըլլալ անոր, որովհետեւ ինքը գնած չէ գայն. բայց և այնպէս բաժնի որ վաճառատունէն ապրանք դուրս կ'ելնէ և ուրիշին քով կ'ընթաց, պէտք է որ այս իրողութիւնը տեսարակներուն մէջ զրուի և երեւայ: Ասանկ պարագաներու մէջ՝ Ապրանք յանձնառուէն կամ Աւանդ այսինչիս ինչ, կամ եթէ զրկուած ապրանքը մէկ տեսակ է՝ ապրանքին անունովը հաշիւ մը կը բացուի Մեքսիկոյն այսինչիս ինչ կամ Կերպասներու այսինչիս ինչ:

Այդ հաշիւը Պարսական ընկեր է (1) զրկուած ապրանքին բուն արժէքին և ճամբու ծախուց գումարին չափ, գործիքնակ, հարկչէք, փոխադրողչէք, նաւողչէք, ապահովողչէք եւայլն: Եւ այնպէս Պարսական ընկեր է գայն՝ ապրանքին վաճառման գումարին վրայ յանձնառուին արուելիք յանձնառողչէքին համար: Երբ ապրանքը ծախուի և զրամն աւանդառուն քով մնայ, այն ատեն միայն Պարսական ընկեր է աւանդառուն և Պահանջող՝ Այսինչիս ինչ յանձնառողչիս ինչ ապրանքի հաշիւը այնչափի համար, որչափի որ ծախուի ապրանքը: Այն ատեն Յանձնառողչիս ինչ ապրանքի հաշիւին Պահանջիին՝ Պարսիկ գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ եղած շահը կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասի հաշիւը Պահանջող և Յանձնառողչիս ինչ ապրանքի հաշիւը Պարսական ընկերով այս հաշիւը կը գոցուի: Իսկ հակառակ պարագային՝ այդ հաշիւին Պարսիկ Պահանջիին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ եղած վնասը կը ցուցնէ, որուն համար

[1] Այսուհետեւ Պահանջողներ չպիտի բուհնէ, որովհետեւ, յայտնի է թէ, Կիսնասուտի սկզբունքով գործողութեան մը Պարսականը գրուած ատեն Պահանջողն ալ գրել նարկ է:

Շահ և վնասը Պարսկաստան և Յաննապոլիսի մարտի հաշիւը Պահանջող ընելով այս հաշիւը դարձեալ կը գոցուի:

Գալով աւանդաւորին կամ յանձնաւորին հաշուին՝ անոր Պարսիկ գումարը ծախուած ապրանքին զուտ արժէքը կը ցուցնէ, և Պահանջիկը՝ այդ ապրանքներուն փոխարէն անոր վրայ քաշուած փոխանակագրոց կամ եղած կանխավճարներուն գումարը կը ցուցնէ. իսկ այս հաշիւին կշիւը՝ յանձնաւորին այս հաշիւէն ապրանքը զրկող վաճառականին մնացած Պարսիկ կամ Պահանջիկ կը ցուցնէ:

Որովհետեւ սովորութիւն է որ ապրանքը զրկողը՝ զայն բեռնելէ և բեռնազիրը զրկելէ ետքը՝ ընդհանրապէս Յ/ամս. փոխանակագիր կը քաշէ անոր վրայ, որուն կը զրկէ ապրանքը, անոր օրուան արժէքին վրայ 9/10 70 կամ 80ի հաշուով (1) ըստ պայմանի, այսինքն, եթէ 1000 Լ.ի ապրանք բեռնէ, 700 կամ 800 Լ.ի Յ/ամս. թուղթ կրնայ քաշել: Այս պարագային՝ քաշած թղթին գումարին համար Պահանջող ընելու է յանձնաւորին հաշիւը, որ այդ փոխանակագիրը ընդունելով պիտի վճարէ:

Եթէ զրկուածը արժէթուղթ և կամ զանձեղի թղթեր են, գրուելու եղանակը դարձեալ նոյնն է, միայն հաշիւին անունը կը փոխուի և կ'ըսուի Այսիկէն ինչ երկարողիներս կամ Գոնսօղիսկներս և կամ Գանձեղի քղերս այսիկէն ինչ, ևլն. (Տե՛ս մեր Զեռատեարին Թ. 160, 174 յօդուածները):

Այսիկէն յանձնաւորչէքով կամ աւանդ ապրանքի իմ եով. — նախորդին հակառակն է այս հաշիւը. առջինին մէջ մենք ապրանք զրկեցինք ուրիշին մեր հաշույն ծախուելու համար. իսկ հոս ուրիշը մեզի ապրանք կը զրկէ իր հաշույն յանձնաւորչէքով ծախուելու համար:

Երբ մէկուն հաշույն ծախուելու համար ապրանք ստանանք, մինչև որ ապրանքը չծախուի և դրամը մեզի չանցնի՝ բնականաբար անոր արժէքին համար զրկողին պարտական չենք կրնար ըլլար. բայց և այնպէս քանի որ մեր վաճառատունը ապրանք կը մանէ, այս իրողութիւնը պէտք է որ մեր տետրակներուն մէջ երեւայ, այսինքն, մէկէ մը այս տեսակ ապրանք ստացած ըլլալնիս պէտք է որ գրուի:

Այս տեսակ գործողութեանց համար երկու պարագայ կրնայ ըլլալ.

1. Պարագայ. — Ապրանքը զրկողը անոր ծախուելու գինն ալ ինք կ'որոշէ. այն ատեն Այսիկէն յանձնաւորչէքով ապրանքը

[1] Տե՛ս Թ. 34 Աւանդաւորին վրայ ցրուածը:

անուն հաշիւ մը բանալու և զայն Պարսկաստան ընելու է անոր ուրիշալ արժէքին չափ, Պահանջող ընելով ապրանքը զրկողը: Իսկ այդ ապրանքները ստացած ատեննիս անոնց համար եթէ ծախք վճարենք՝ գումարը ապրանքը զրկողին Պարսիկ կ'անցնենք, այնպէս այդ հաշիւին Պարսիկ կ'անցնենք ապրանքին վաճառման գումարին վրայ մեր առնելիք յանձնաւորչէքը և ուրիշ ծախքեր, եթէ ըլլան, միջնորդչէք, մթերավարձք, ապահովողչէք ևլն:

Երբ ապրանքները ծախուին՝ Այսիկէն յանձնաւորչէքով ապրանքի հաշիւը Պահանջող կ'ընենք բռնած գումարին չափ, (այսինքն նշանակեալ և որոշեալ գինով): Այն ատեն ապրանքին հաշիւը կը գոցուի ինքնին, եթէ, ինչպէս ըսինք, ապրանքները զրկողին նշանակած և որոշած գինով ծախուին. կը մնայ միայն ապրանքը զրկողին հաշիւը, որուն կշիւը՝ ծախքերը և մեր յանձնաւորչէքը գեղջելէ ետքը, կը ցուցնէ այս հաշիւէն իր պահանջքը, (Տե՛ս մեր Զեռատեարին Թ. 75, 76, 100, 105, 107 յօդուածները):

2. Պարագայ. — Եթէ ապրանքը զրկողը անոր ծախուելու գինը որոշած չէ, այլ մեզի թողած է զանոնք օրուան գինով ծախել: Այն ատեն՝ ապրանքները ստացած ատեննիս անոնց համար ծախք վճարենք կամ ոչ, երկու պարագային մէջ ալ պէտք է որ ստացած ապրանքնիս մեր տետրակներուն մէջ երեւայ. ուստի իբր պարզ ծանօթութիւն և տեղեկութիւն օրուան թուականովը Յրհաշիւը պէտք է արձանագրել այսինչ անձէն այսչափ հակ, տակառ, ծրար կամ մէթր ևլն. ապրանք՝ իր հաշույն ծախուելու համար ստացած ըլլալնիս, առանց արժէքի գումար նշանակելու և առանց կրկնատոմարի եղանակաւ հաշիւներ Պարսկաստան և Պահանջող ընելու, որովհետեւ դեռ որոշուած չէ: Իսկ Մայր-հաշուին մէջ՝ այդ ապրանքին հետքը չի կորսուելու համար՝ Այսիկէն յանձնաւորչէքով ապրանքը ըսելով հաշիւ մը բանալու և անոր Պարսիկ կողմը գրելու է մասնաւոր սիւնի մէջ եկած ապրանքին քանակը, հակ, տակառ, ծրար, կանգուն, մէթր ևլն. գումարի սիւնին մէջ կէտեր կողմը գնելով: Իսկ ապրանքը ստացած ատեննիս եթէ անոնց համար ծախք (նաւորչէք, մաքսատուք, փոխադրողչէք ևլն.) վճարենք՝ մեր տետրակներուն մէջ գրուելու առաջին գործողութիւնը պէտք է ըլլայ Այսիկէն յանձնաւորչէքով ապրանքը անուն հաշիւ մը բանալ և զայն Պարսկաստան ընել վճարած ծախքերնուս և այդ ապրանքին վաճառման գումարին վրայ տուած միջնորդչէքներնուս և մեր առնելիք յանձնաւորչէքին համար: Երբ ապրանքները ծախուին՝ բռնած զուտ գումարին չափ Պահանջող կ'ընենք Այսիկէն յանձնաւորչէքով ապրանքի հաշիւը: Այդ հաշիւին կշիւը, այսինքն Պահանջիկ Պարսիկ գումարին վրայ առնեցած առաւելութիւնը՝

(ծախքերը զեղչելէ ետքը) կը ցուցնէ ապրանքին վաճառումէն մերքով մնացած զուտ գումարը, որ ապրանքը զրկողին Պահանջին է: Ինչպէս որ նախորդ հաշիւին (Այսինչին ինչ յանձնառողչիւնով ապրանքին) առթիւ ըսինք, կրնայ ըլլալ նոյնպէս որ ապրանքը զրկողը մեր վրայ Յ/ամն, կամ կարձ փոխանակողը քաշէ ապրանքին օրուան արժէքին վրայ 0/0 70-80 էլն. ի հաշուով ըստ պայմանի, այն ատեն ապրանքը զրկողին անունին հաշիւ մը բանալով Պարտական ընելու է զայն քաշած թղթին գումարին համար, քանի որ մեր վրայ քաշած փոխանակողը ընդունելով օրին պիտի վճարենք: Այս պարագային՝ ապրանքին վաճառումէն ետքը՝ Այսինչին ապրանքի հաշիւին կշիւը, որ, ինչպէս ըսինք, ապրանքը զրկողին Պահանջի կը կազմէ, կը տանինք այս նոր բացուած իր անձնական հաշիւին Պահանջին, որուն կշիւը կը ցուցնէ այս գործողութենէն մնացած իր Պահանջը. կամ Պարտքը՝ եթէ ապրանքին գումարը իր քաշածէն պակաս բռնէ: (Տե՛ս մեր Ձեռնառարին Թ. 66, 72, 83, 84, 85 յօդուածները:

Հաշիւ գործարանի. — Երբ վաճառականը իր սովորական գործէն զատ գործարան մ'ալ ունենայ՝ անոր համար զատ հաշիւ կը բանայ և զայն Պարտական կ'ընէ գործարանին զման արժէքին և անոր մէջի շինութեանց համար, գործընթակ, ծխնելոյզ, դարբնոց ևլն. գնած մեքենաներուն, գործիքներուն և նախնական նիւթոց արժէքին, գործաւորներուն վճարած ամսականներուն, վերջապէս յիշեալ գործարանին համար ըրած բոլոր ծախուց համարիակ Պահանջող կ'ընէ Գործարանին հաշիւը՝ գործուած և ծախուած ապրանք արժէքին համար:

Երբ այս հաշիւը գոցել ուզենք՝ շահը կամ փաստը հասկնալու համար, գեա չծախուած ապրանքներուն գին մը դնելով, ինչ որ բռնէ՝ անոր վրայ աւելցնելու է գործիքներուն, մեքենաներուն, պատրաստ նախնական նիւթոց, գործարանին շէնքին օրուան արժէքը և այդ ամբողջին համար Գործարանին հաշիւը Պահանջող ընելու է. այն ատեն այս հաշիւին Պահանջին Պարտքին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ եղած շահը կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասը Պահանջող և Գործարանին հաշիւը Պարտական կ'ընենք: Իսկ ստոր հակառակն ըլլալով՝ Պարտքին Պահանջին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ եղած փաստը կը ցուցնէ, որուն համար՝ Շահ և Վնասը Պարտական և Գործարանին հաշիւը Պահանջող կ'ընենք:

Իսկ միայն գործարանատէր եզրը գործարանին բոլոր մասնաձեւութեանց տեղեկանալու համար պէտք է որ զատ զատ հաշիւներ բանայ, նախնական նիւթոց, Գործիքներու, Մեքենաներու, Ածուխի, Գործաւորաց ամսականի ևլն. անուններով:

Հաշիւ անշարժ ստացումի (1). — Երբ վաճառականը անշարժ կալուածներ գնէ կամ մէկէ մը ժառանգէ, Անշարժ ստացումի անուն հաշիւ մը կը բանայ. իսկ եթէ անոնց վրայ անբաժանան տեղեկութիւն առնել ուզէ՝ ամէն մէկ կալուածին իր անունովը զատ հաշիւ կը բանայ. գործընթակ, Տուն ի Բերա... Փողոց Թ... , Վանաստառն Պոլիս... Փողոց Թ... , Ազարակ ի Եայովա, ևլն:

Անշարժ ստացումի հաշիւը Պարտական ընելու է կալուածին արժէքին և եղած ծախքերուն համար՝ նորոգութիւն, կալուածաւորք, Թեւալիէի ինքիզայի ծախք՝ (կալուածը միւլք ընելու համար) ապահովողչէք, պահապանի կամ դռնապանի ամսական, առաւելութեան ծախք ևլն. իսկ Պահանջող ընելու է բերքերուն հասոյթին համար՝ եթէ կալուածը այգի, ագարակ, պարտէզ ևլն. է, և վարձքին համար՝ եթէ տուն, վաճառատուն, ևլն է. ծախուած ատեն՝ բռնած գումարին շափ և Ընդհանուր կշիւի ատեն օրուան արժէքին համար: Այս հաշիւին Պահանջին՝ Պարտքին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ շահը, այտինքն, զուտ հասոյթը կամ եկամուտը կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասը Պահանջող և Անշարժ ստացումի հաշիւը Պարտական ընելու է: Իսկ Պարտքին Պահանջին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ եղած փաստը կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասը Պարտական և Անշարժ ստացումի հաշիւը Պահանջող ընելու է:

Օրինակ. Բերա տուն մը գնեցի 700 Լ. ի և նորոգութեան համար ալ 30 Լ. ծախք ըրի և մէկ տարուան 60 Լ. ի վարձու առի: Ընդհանուր կշիւ ընելով, տունը 600 Լ. արժեցուցի: Արդ՝ որովհետեւ տունը 700 Լ. ի առի, Տուն ի Բերա... Փողոց Թ... ըսելով հաշիւ մը կը բանամ և զայն Պարտական կ'ընեմ անոր 700 Լ. արժէքին և ըրած 30ը ծախքիս համար ընդամէնը 730 Լ. Թ. իսկ Պահանջող կ'ընեմ բերած 60 Լ. վարձքին համար: Ընդհանուր կշիւի ատեն (2) տանը նոր գնահատած (3) գինս 600 լիրան

[1] Անշարժ կալուած կամ ստացումի բնելով պէտք է հասկնալ հող, այգի, ագարակ, ելն. եւ ամէն տեսակ շէնք եւ հաստատութիւն, որ հողի վրայ շինուած են եւ տեղէ մը ուրիշ տեղ չեն կրնար փոխադրուիլ:

[2] Հոս միայն գլխաւոր հաւուց ստորաթմամմանց վրայ կը խօսինք, բէն. ֆեւեռայն ատեն Ընդհանուր կշիւ ալ խօսի կ'ընենք. բայց ասի այս հաշիւներուն նէս յարաբերութիւն ունենալուն համար է որ կը խօսինք. իսկ Ընդհանուր կշիւի վրայ տրանսպորտէն եւ քաղաքացիութեան խօսած ենք 7րդ գլխուն մէջ:

[3] Ընդհանուր կշիւի ատեն, ինչպէս արտահայտուած, տեսնել ալ անշարժ կալուածներուն բոս կարի օրուան գինը գնել սովորութիւն է, որովհետեւ շատ անգամ կալուած մը առնուած գինէն պակաս կ'արժէ հիմնալով կամ հրապարակին գինը իջնալով:

անոր Պահանջքին տանելով՝ կշիւը կը գտնամ 70ը, որ է աջ հաշուէն վնասը, զոր կը տանիմ Շահ և Վնասին, որով Անշարժ կաշտուածի նոր կշիւը կ'ըլլայ 600 Լ. որ տանը օրուան արժէքն է: (Տե՛ս այս մասին Ընդհ. կշիւին վրայ գրածնիս. Տե՛ս նաև մեր Զեռատեարին Թ. 136. 147 և 148 յօդուածները):

Հաշիւ կարասիի. — Երբ վաճառականը քանի մը աժան կարասիներ միայն, օրինակի համար, պարզ ախոս, գրասեղան մը և ընդօրինակութեան մամուլ մը գնէ, անոնց արժէքին համար Ընդհ. ծախքը Պարսկական կ'ընէ: Բայց երբ սուղ կարասիներ, զորօրինակ, երկաթէ գրամարկղ, թաշապատ բաղնիցներ և աթոռներ և ուրիշ արժէքաւոր կարասիներ գնէ, Կարասիի հաշիւ մը բանալով զայն Պարսկական կ'ընէ կարասեաց արժէքին և ետքէն անոնց նորոգութեան համար եղած ծախուց համար. իսկ ծախուած առեն բռնած գումարին համար Պահանջող կ'ընէ: Ընդհանուր կշիւի առեն, կարասեաց օրուան արժէքը գնելով, Կարասիի հաշիւին Պարսիկն Պահանջքին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ վնասը կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասը Պարսկական և Կարասիի հաշիւը Պահանջող ընելու է: Օրուան արժէքը ըսինք, վասն զի կարասիները և գործիքները կը հիննան զործածուելով և ամէն տարի անոնց արժէքը կը պակսի, արդէն սովորութիւն է որ այս կարգի կարասիներու և գործիքներուն արժէքին վայ ¹⁰/₁₀₋₂₀ զեղչ մը կ'ընեն մէկ քանի տարին անգամ մը:

Հաշիւ նաւու. — Երբ վաճառականը նաւ գնէ Հաշիւ... նաւու ըսելով հաշիւ մը բանալով Պարսկական կ'ընէ նաւուն արժէքին, մէջի կարասեաց, նաւապետներուն ամսականին, անոնց ուսեստին ածուխի, սպառնողչէքի և ուրիշ ծախքերուն համար. իսկ Պահանջող կ'ընէ նաւողչէքներուն համար: Երբ նաւը ծախուի՝ Պահանջող կ'ընէ բռնած գումարին համար, որ առեն այս հաշուին կշիւը, այսինքն, Պահանջքին Պարսիկն գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ եղած շահը կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասը Պահանջող և նաւուն հաշիւը Պարսկական ընելով այս հաշիւը կը գոցուի: Իսկ ընդհակառակը Պարսիկն Պահանջքին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ վնասը կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասը Պարսկական և նաւուն հաշիւը Պահանջող ընելով գարձեալ կը գոցուի այս հաշիւը:

Հաշիւ տօնավաճառի. — Երբ վաճառականը տօնավաճառները զրկէ, Հաշիւ... տօնավաճառի անուն հաշիւ մը բանալով Պարսկական կ'ընէ իր վաճառատունէն զրկած կամ տօնավաճառը գնած ապրանց արժէքին, փոխադրողչէքին և տօնավաճառը գացող պաշտօնէից բնակութեան և ուսեստի ծախքերուն համար: Իսկ Պահանջող կ'ընէ ծախուած և չծախուելով ետ բերուած ապրանց արժէքին համար: Այս հաշիւին Պահանջքին Պարսիկն առաւելութիւնը՝ վնասը կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասը Պահանջող և Տօնավաճառի հաշիւը Պարսկական ընելով այս հաշիւը կը գոցուի: Ընդհակառակը Պարսիկն Պահանջքին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ վնասը կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասը Պարսկական և Տօնավաճառի հաշիւը Պահանջող ընելով կը գոցուի այս հաշիւը:

Ասկէ զատ տօնավաճառ գացող պաշտօնեան առժամանակեայ Զեռատեար մը, Օրհաշիւ մը և Մայր-Հաշիւ մը բռնելով ըրած գործողութիւնները կանոնաւորապէս զրկու է անոնց մէջ: (Տե՛ս մեր Զեռատեարին Թ. 143. 168. 176 և 181 յօդուածները):

Հաշիւ ճամբորդութեան. — Վաճառականը երբ իր պաշտօնեաներէն մէկը ուրիշ քաղաք մը զրկէ, պահանջքը գանձելու, ապրանք գնել կամ ծախելու, յաճախորդներուն հաշիւները կարգադրել տալու, և անոնց գործին մօտէն տեղեկանալու համար, և այլն, Հաշիւ ճամբորդութեան անուն հաշիւ մը բանալով Պարսկական կ'ընէ ճամբորդին տրուած գումարին, գանձելի թղթոց և յանձնուած ապրանց արժէքին համար: Այդ հաշիւը Պարսկական կ'ընէ նաև ճամբորդին գացած տեղը ապառիկ գնած ապրանց և ներկայացուցած տանը յաճախորդներէն ստացած գումարներուն համար. իսկ Պահանջող կ'ընէ անկէ ստացած գումարներուն, ապրանքներուն և ին.ի համար: Երբ ճամբորդը գառնայ՝ այդ հաշիւը գարձեալ Պահանջող ընելու է յանձնած զրամներուն, ետ բերած ապրանց արժէքին, գանձելի թղթոց և ըրած ծախուցը, և վաճառատանը հաշույն գանադաններու առած զրամներուն համար: Գալով ճամբորդին՝ անուշա սա եւս ունենալու է իր մասնաւոր տետրակը, ուր պէտք է գրէ օրն օրին իր վաճառատունէն՝ և նոյն տանը հաշույն գանադաններէ ստացածները, գնած ապրանքները, վճարածները, իր զրկած զրամները, և ին: Միեւնոյն տետրակին մէջ կրնայ գրել նաև, մեկնելէ առաջ գառնազան Պարսկականներու և Պահանջողներու հաշիւները, զորս կարգադրելու պաշտօնն եւս իրեն կը տրուի: Ուրիշ տետրակի մը մէջ օրինակելու է յաճախորդներէն ստացած ապապրանքները և ուրիշի մը մէջ ալ իր զրամ նամակները:

Հաշիւ մասնակցի, Գարինի, Տրսպիգոսի, Լօնարայի եւ Գ. Տուկերի.— Մեծ վաճառատունք և դրամատունք ուրիշ քաղաքներ ալ իրենց Տան անունով մասնաձեռներ կ'ունենան, որոց համար՝ իրենց գործի կեդրոնի տեարակներուն մէջ զատ հաշիւներ կը բանան. Գարինի, Տրսպիգոսի, Լօնարայի, Մակչիսարի, Փարիզի Տուկեր անունով:

Այդ հաշիւները Պարսական կ'ընեն նոյն մասնաձեռներուն զրկուած արժէքներով, իսկ Պահանջող՝ անոնցմէ ստեղծածներուն համար, դրամ, ապրանք, գանձելի թղթեր ևլն:

Այդ մասնաձեռներու հաշուց արտադրած Շահը կամ Վնասը կեդրոնի տեարակներուն մէջ Շահ և Վնասին կը տարուի, այնպէս ինչպէս բացատրեցինք նախորդ հաշուց աւթիւ:

ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ ՀԱՇԻԻ

Այս հաշիւին կ'անցնին այն թղթերը, որոց փոխարէնը պիտի գանձենք, որք են, վաճառականին իր պարտական յաճախորդներուն վրայ քաշած և ընդունուած փոխանակագրերը, ապրանքի փոխարէն առած հրամանի կամ բաց տոմսակները, և ուրիշէ դրամով գնած (զեղչած) և իր հրամանին փոխանցուած փոխանակագրերը, հրամանագրերը և հրամանի տոմսակները:

Գանձելի տոմսակի հաշիւը Պարսական ընելու է ուրիշներէ իր հրամանին փոխանցուած և նոյն իսկ վաճառականին իր քաշած թղթոց համար, և Պահանջող՝ իր պարտքին փոխարէն ուրիշներու տուած կամ ծախած և կամ վճարօրին իր գանձած թղթոց համար:

Գանձելի տոմսակի հաշիւն ալ կ'ստորաբաժանուի, Փոխանակագրի հաշիւ, Տոմսակի հաշիւ անունով, երբ փոխանակագրոց և տոմսակներուն հաշիւները գատել և անոնց Մոտսին ու Ելիլ առանձինն գիտնալ ուղենք. բայց այսչափ մանրամասնելն աւելորդ է: Արդէն Պօլսոյ հրապարակին վրայ շատ վաճառականներ՝ ապրանքի փոխարէն առած հրամանի տոմսակներին զանոնք տուողին Պահանջին չեն անցներ մինչև որ չի գանձուին. (որովհետեւ ապրանքի փոխարէն արուած այդ կարգի տոմսակները վճարօրին կանոնաւորապէս չեն գանձուիր). միայն եւրոպական գամպիօներուն համար Փոխանակագրի հաշիւ անուն հաշիւը կը բանան: Եւրոպական զանազան տեսակի դրամով փոխանակագրերու և այլեւայլ տոմսակներու վրայ զեղչի շատ գործ ընող սեղանաւորք, անոնց իւրաքանչիւր տեսակէն թէ՛ ըրած շահերնին առանձինն հասկնալու, և թէ՛ անոնց Մոտսին ու Ելիլ մասնաւորապէս գիտնալու համար, ամէն տեսակ փոխանակագրի համար զատ հաշիւ կը բանան. օրինակի հա-

մար, անգղ. լիրայով վճարելի փոխանակագրոց համար՝ Սթեռլինի փոխանակագիր, Ֆրանքով վճարելիներու համար՝ Ֆրանկի փոխանակագիր, մարքով վճարելիներու համար՝ Մարի փոխանակագիր, Ֆիօրինով վճարելիներու համար՝ Ֆիօրինի փոխանակագիր, եւլն. կամ, Փոխանակագիր Լօնարայի, Փարիզի, Վիեննայի, Ամերիկայի, եւլն. ի վրայ, որով ուղուած ատեն կը գիտնանք թղթապանակնիս ո՞րչափ անգղ. լիրայի, Ֆրանքի, մարքի և ուրիշ դրամով վճարելի թուղթ ունենալինս:

Այս պարագային՝ օտար դրամով փոխանակագրոց համար Մայր-Հաշուին մէջ բացուելիք հաշուց Պարսիկն եւ Պահանջին կողմը արտական սիւներէն զատ, նոր սիւներ ալ գծելու է, ուր կը գրուին իւրաքանչիւր տեսակ փոխանակագրի իր վճարելի դրամին գումարը և կոտորակը, գորօրինակ, Ֆրանկի փոխանակագրին Պարսիկն և Պահանջին կողմը երկու սիւն գծելու է. մին՝ Ֆրանքին և միւսը՝ կոտորակին, սանթիմին համար: Սթեռլինի փոխանակագրին համար՝ երեքական սիւն. առջինին մէջ՝ սթէռլին կամ անգղիական լիրան, երկրորդին մէջ՝ շիլլինը, Գ.ին մէջ՝ բէնան: Այսպէս ամէն մէկ դրամին և կոտորակին համար սիւներ գծելու է, ինչպէս մեք ալ մեր Մայր-Հաշուին մէջ օտար դրամով փոխանակագրի հաշուց համար զատ սիւներ գծած ենք:

Գանձ. տոմսակի հաշիւին ստորաբաժանմանց կարգը կրնայ զատուիլ նաեւ կառավարական տոմսակներու, Սենիւն ըսուած թղթերու և ուրիշ պաշտօնատանց ամսականներու թղթերը, որոցմէ կ'ունենան այս տեսակ թղթերու վրայ գործող սեղանաւորք:

Նոյնպէս այն սեղանաւորք, որք տեղական տոմսակներ և փոխանակագրեր շատ կը զեղչեն և իւրաքանչիւր թղթի զեղչը նոյն պահուն Շահ և Վնասին չեն ասնիր, այլ միայն զեղչուած թղթոց թէ՛ զուտ և թէ՛ անզուտ գումարները գրելով կը շատանան, տարեգլխուն թողլով ամբողջին վրայ ըրած շահերնին գիտնալ, Մայր-Հաշուին մէջ Գանձելի տոմսակի հաշիւին Պարսիկն և Պահանջին կողմը կը գծեն մէկմէկ սիւն եւս, ուր կը գրուի զեղչուած թղթոց անզուտ գումարները, որով թէ՛ զեղչուած թղթոց Մոտսին ու Ելիլ, հետեւաբար և թղթապանակը ո՞րչափ թուղթ ունենալինս և թէ՛ զեղչուած թղթերէն ո՞րչափ շահած ըլլալինս կը գիտնանք: (Տե՛ս Վրուժուժի Ձեռատետրի գործողութեանց» մէջ, ուր այս մասին օրինակներով խօսած և Գանձելի տոմսակին համար այս տեսակ սիւներով հաշիւ մ'ալ ցուցուցած ենք:)

Գանձելի տոմսակին իրր ստորաբաժանմանք կրնայ համարուիլ Ռըլիզի հաշիւը (դրամ՝ զրկել)՝ որ օտար դրամով վճարելի գամպիօներու համար կը գործածուի, երբ անոնցմէ զրկենք օտար երկիր մեր թղթակցին, զոր զեղչելով զուտը մեր պահանջքին

կ'անցնէ. այդ պարագային՝ փոխանակագիրը զրկած ատեննիս, որք ընդհանրապէս Յիսմս կ'ըլլան, առաջուց չենք կրնար գիտնալ թէ՛ զուտ ի՞նչ պիտի բռնէ, որպէս զի թղթակցին հաշիւը Պարսակսն ընենք, ուստի զրկուած թուղթը եթէ սթէպլինի փոխանակագիր է՝ Սքեռլիկի Ռըմիզ, եթէ ֆրանքի է՝ Յրակֆի Ռըմիզ կ'ըսենք և այդ հաշիւները Պարսակսն կ'ընենք: Երբ զեզչի ցուցակը ստանանք, զուտ գումարին համար՝ թղթակցին հաշիւը և զեզչին համար՝ Տոկոս և Ձեղջը Պարսակսն և Ռըմիզի հաշիւը Պահանջող կ'ընենք: Ինչպէս որ մենք ալ մեր Ձեռնատարի այդ տեսակ յողուածները ա՛յնպէս Օրհաշիւ անցուցած ենք: (Տե՛ս մեր Ձեռնատարին Թ. 56, 81 ևլն. յողուածները):

Թէեւ կրնայ ըլլալ որ զրկած ատեննիս ուղղակի թղթակիցը Պարսակսն ընենք անզուտ գումարին համար, և Ձեղջի ցուցակը ստացած ատեննիս զեզչը անոր Պահանջիկն տանինք, սակայն այդ կերպը թէ՛ երկար կ'ըլլայ և թէ՛ մեր հաշիւը անոր զրկելիք հաշուընթացին ճիշդ չհամապատասխաներ, քանի որ մեր թղթակիցը մեր զրկածներուն միայն զուտ գումարները մեր Պահանջիկն տարած է, զեզչերը չեն երեւար անոր մէջ:

ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ ՀԱՇԻԻ

Այս հաշիւին կ'անցնին վաճառականին՝ ապրանքի, դրամի կամ ուրիշ հաշույ մը համար մեկուն հրամանին ստորագրած տոմսակները, և իր վրայ քաշուած և ընդունած փոխանակագրերը, որք մինչեւ անոնց վճարօրը հրապարակին վրայ կը շրջաբերին:

Վաճառականը այդ կարգի թղթեր ուրիշ տուած ատեն վճարելի տուակը Պահանջող, իսկ պայմանաժամին զանոնք վճարած ատեն՝ Պարսակսն կ'ընէ:

Ուսանողը առաջին նայուածքով վճարելի տուակի հաշիւն անցնելու մէջ կը շուարի: Կը կարծէ թէ՛ երբ մեկուն տոմսակ տանք, վճարելի տուակը Պարսակսն ընելու է. ենթադրելով թէ՛ անոր գումարը վճարելու պարտաւոր ենք. իսկ Պահանջող ընելու է, կը կարծէ. երբ այդ տոմսակը վճարենք, մինչդեռ ասոր հակառակն է: Չի շուարելու համար թէ՛ վճարելի տուակը ե՛րբ Պարսակսն և ե՛րբ Պահանջող ընելու է, լաւ կ'ըլլայ գիտել որ վճարելի տոմսակներն, ինչպէս առաջ ալ ըսինք, վաճառականութեան մէկ տարերքն ըլլալով, զանոնք համարելու է տեսակ մը Ապրակֆ կամ Արժեկիւք, զորս կը տանք մեր գնած ապրանքին փոխարէն: Հետեւաբար, այն վաճառականը՝ որ գնած ապրանքին փոխարէն այս տեսակ թղթեր կը տայ, արդարեւ անպարտ կը

համարուի այլեւս անոր նկատմամբ, որուն հրամանին ստորագրած է թուղթը: Օրինակ. Յակօր՝ Գրիգորէն 200 Լ.ի ապրանք զնելով անոր հրամանին վճարելի տոմսակ մը տուաւ: Այս առեւտրին մէջ արդարեւ փոխանակութիւն մը կայ, զի Գրիգոր 200 Լ.ի ապրանք տուաւ և Յակօրէն նոյնչափի տոմսակ մ'առաւ: Այս կերպով՝ Յակօր իր պարտքը վճարած եղաւ. երկու կողմն ալ անպարտ են: Ուստի Յակօր այս գործողութիւնը իր տեսրակը գրելու համար Բեղի. ապրակֆը Պարսակսն և վճարելի տուակը Պահանջող պիտի գրէ, որովհետեւ տոմսակ մը ելաւ իրմէ: Իսկ երբ Յակօր վճարօրին այդ տոմսակը վճարէ՝ Պարսակսն ընելու է վճարելի տուակը և Սեռուկը՝ Պահանջող որ այդ դրամը վճարեց, Ահա այս օրինակով բացատրուեցաւ թէ՛ ինչո՞ւ համար վճարելի տոմսակը արուած ատեն Պահանջող՝ և վճարուած ատեն Պարսակսն ընելու է:

Այս հաշիւն ալ Գանձելի տուակի հաշիւին պէս կրնայ ստորագրածանիլ, վճարելի տուակներ. վճարելի փոխանակագիրք, Այսինչիկն ինչ վճարելի քրքերս անուններով, նոյնպէս երբ օտար գրամով վճարելի փոխանակագրերը տեղական դրամով վճարելի թղթերէն զատել ուզենք, ամէն տեսակ դրամով վճարելի փոխանակագրոց համար գատ հաշիւներ կը բանանք իրենց դրամին անունովը, Մարֆով վճարելի տուակի կամ փոխանակագիրք, Սքեռլիկով, Յրակֆով, ևլն. ուրիշ դրամով վճարելի փոխանակագիրք, ևլն:

ՇԱՀ ԵՒ ՎՃԱՍԻ ՀԱՇԻԻ

Այս հաշիւով վաճառականը կը գիտնայ որոշեալ ժամանակի մէջ ըրած շահն ու վնասը, զի քանի եղած վնասին համար Պարսակսն ընելու է Շահ և վնասը և Պահանջող շահուն համար:

Մասնակի շահերը, որք դրամագլուխը կ'աւելցնեն և մասնակի վնասները, որք զայն կը պակսեցնեն, փոխանակ շարունակ վաճառականին Դրամագլխի հաշիւին Պահանջիկն և Պարսիկն տանելու, անոր տեղ Շահ և վնասի հաշիւը հնարուած է, որ Դրամագլխի հաշիւին ստորագրածանունքը կը համարուի, որով գործի մը սկիզբէն մինչեւ տարւոյն վերջը կամ ուրիշ ատեն եղած մասնակի շահերն ու վնասները Շահ և վնասի հաշիւին կը տարուին. և Բնդհանուր կշիռ ատեն (տարեգլխուն կամ ուրիշ ատեն) միայն անոնց կշիւը Դրամագլխի հաշիւին կ'անցնեն այսպէս:

Շահ և վնասի հաշիւին Պարսիկն գումարը՝ վնասը կը ցուցնէ և Պահանջիկը շահը՝ հետեւաբար այս հաշիւին կշիւը զուտ շահը կը ցուցնէ, և թէ Պահանջիկն գումարը Պարսիկնէն շատ է. օրինակ.

եթէ Պահանջքին գումարը 800 և Պարսքինը 300 է՝ կշիւը, որ 500 կ'ըլլայ, շահը կը ցուցնէ. որուն համար Շահ և Վնասը Պարսական և Իրանագրոյի Պահանջող ընելով՝ Շահ և Վնասի հաշիւը կը գոցուի և շահը Իրամագլխին վրայ աւելցած կ'ըլլայ: Կշիւը գուտ փաստը կը ցուցնէ. եթէ Պարսքին գումարը Պահանջքինէն շատ է. օրինակ. եթէ Պարսքին գումարը 1000 և Պահանջքինը 600 է, կշիւը, որ 400 կ'ըլլայ, փաստը կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասը Պահանջող և Իրամագլխու Պարսական ընելով Շահ և Վնասի հաշիւը կը գոցուի դարձեալ և փաստը Իրամագլխէն պակասձ կ'ըլլայ:

Բայց երբ վաճառականը գլխաւոր շահ մ'ընէ, գորօրինակ, ժառանգութիւն մը, կամ վիճակահանութենէ մեծ գումար մը շահի՝ գանձոք փոխանակ Շահ և Վնասին տանելու՝ ուղղակի Իրանագլխին տանելու է, Պահանջող ընելով Իրանագլխի հաշիւը: Նոյնպէս երբ գլխաւոր փաստ մ'ընէ, գորօրինակ, հրդեհէ կամ գողութենէ մեծ գումար մը կորսնցնէ՝ փոխանակ Շահ և Վնասին տանելու, դարձեալ ուղղակի Իրանագլխին տանելու է Պարսական ընելով Իրանագլխի հաշիւը:

Շահ և Վնասի հաշիւն ի՞նչպէս գրելը լաւ հասկնալու համար, այդ հաշիւը համարելու է արդար և խիստ մէկը, որ մեր յաջողութեանց համար զմեզ կը վարձատրէ և մեր անյաջողութեանց համար կը պատժէ, ինչ որ ալ ըլլան անոնց պատճառները: Ուրեմն յաջողութեան առէն մեզի շահ կը տայ, որուն համար Պահանջող ընելու է զինքը. իսկ անյաջողութեան առնէն եղած փաստին գումարը կ'առնէ մեզմէ, որուն համար ալ Պարսական ընելու է զինքը:

ՍՈՏՈՐԵՐԻ ԿՐԻՍՏՈՒՄ ԵՎ ԵՆԻ ՎՆԱՍՈՒՆ

Շահ և փաստի հաշիւը կրնայ ստորաբաժանիլ այնչափ հաշիւներու, որչափ տեսակ շահու կամ փաստի հաշիւներ ըլլան: Թէեւ ընդհանուր կշիւի առնէն բոլոր ծախքի հաշուց կշիւը, որք վաճառականին համար փաստներ են, Շահ և Վնասի հաշիւին կ'անցնին, սակայն թէ՛ վաճառականական Օրէնքին պահանջմանը համակերպիլ և թէ՛ իր ծախուց մանրամասնութեան վրայ որոշ և ճիշդ գաղափար մ'առնենալ ուղղ վաճառականին համար կարելոր է Շահ և Վնասի հաշիւը ստորաբաժանել՝ Մայր-հաշուին մէջ բանալով ուրիշ հաշիւներ, որոցմով կարող կ'ըլլայ որոշեալ ժամանակի մը մէջ գիտնալ թէ՛ ս՞րչափ ծախք ըրեր է իր վաճառատանը, անձնականին և տանը, ս՞րչափ սոկոս տուեր և ս՞րչափ աւեր է, մաքսին համար ս՞րչափ դրամ տուեր է, ելն, ելն:

Հոս կը դնենք Շահ և Վնասի ստորաբաժանմանց գլխաւորները:

1. Հաշիւ ընդհանուր ծախքի
2. » անձնական »
3. » տան ծախքի
4. » սոկոսի կամ սոկոս և գեղշի
5. » յանձնատողշէքի
6. » ժառանգութեան
7. » մաքսի
8. » պահեստի
9. » ապահովագրութեան
10. » դատական կամ փաստարանական ծախքերու
11. » ստակի փաստի
12. » միջնորդութեան

Ընդհանուր կշիւի առնէն այս ստորաբաժանմանքները Շահ և Վնասի հաշուով կը գոցուին, այսինքն, այս հաշիւները Պահանջող ըլլան և Շահ և Վնասը Պարսական:

Հաշիւ բնօրինակ ծախքի. — Այս հաշիւը Պարսական ընելու է այն ծախուց համար, որք ամէն ամիս և ամէն տարի կ'ըլլան, որք են, վաճառատան և գրասենեկի վարձք, պաշտօնէից ամսական, պաշտօնէի մը ճամբորդութեան, պաշտօնէից տրուած ասքեկան պարգեւ, վառելու փայտ, ածուխ, ճրագ, թղթատարի, սուրճի, ջրի ևլն, ծախքեր:

Հաշիւ ռեճնական ծախքի. — Այս հաշիւը Պարսական ընելու է վաճառականին անձնական ծախուցը համար, որք են, հագուստի, կերակուրի, կառքի, ձիու, թատրոնի, զանազաններու տուած զորմութեանց և նուէրներուն համար:

Գործի մէջ չեղող անձինք կրնան այս հաշիւն ալ ստորաբաժանել, Կերակուրի, Հագուստի, Զբօսակի ևլն. անուն հաշիւներ բանալով, երբ այդ ծախուց մանրամասնութիւնը դատ գատ գիտնալ ուղեն:

Շատեր այս անձնական ծախքի հաշիւը գործին տիրոջ առնուողը կը բանան Այսինչիկն անձնական ծախքի հաշիւը ըսելով:

Հաշիւ տան ծախքի. — Այս այն հաշիւն է՝ որ Առեւտրական Օրինագրքին 3րդ յօդուածին (1) տրամագրութեան մէկ մասին կը

[1] Տե՛ս թ. 271 երես վաճառականին տեսակներուն սոքիս: 43

Համապատասխանէ, այսինքն, ասով վաճառականը կը գիտնայ իր տանը ամական ծախուց գումարը, որք են, ուտելիքի, սպասաւորներու ամական, տան վարձք, կարասիք եւլն. որոց ամական գումարին համար այս հաշիւը Պարտական ընելու է:

Հաշի Տոկոսի կամ Տոկոս եւ Ջեղչի. — Այս հաշիւը կարեւոր է անոնց համար, որք տոկոսի եւ զեղչի գործողութիւններ շատ ունին, այսինքն, զանազաններու հետ տոկոսաւոր հաշուքնթացներ կ'ունենան եւ զանազաններէ թղթեր կը զեղչեն կամ զեղչել կը տան:

Այս հաշիւը Պարտական ընելու է վաճառականին տուած տոկոսներուն եւ զեղչել տուած թղթոց համար տուած զեղչերուն համար. իսկ Պահանջող ընելու է՝ վաճառականին առած տոկոսներուն եւ զեղչաց թղթոց համար վար դրած զեղչերուն համար: Ասոր համար է որ այս հաշիւին Տոկոս եւ Ջեղչ ըսուած է:

Հաշի յանձնառուի. — Այս հաշիւը կարեւոր է յանձնառուին համար, որ առած յանձնառուչէքներուն համար այս հաշիւը Պահանջող կ'ընէ եւ այդ առթիւ ըրած ծախուց համար ալ Պարտական. այս հաշիւին կշիւը, այսինքն, Պահանջիկն՝ Պարտին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ յանձնառուչէքներէ եղած գումար շահը կը ցուցնէ, որուն համար Շահ եւ Վնասը Պահանջող եւ Յանձնառուչէքի հաշիւը Պարտական ընելով կը գոցուի այս հաշիւը:

Հաշի Ժառանգութեան. — Այս հաշիւն ա՛յն ատեն կը բացուի, երբ ժառանգութեան մը գործը կամաց կամաց եւ մաս առ մաս կարգադրուի: Այս պարագային՝ Պահանջող ընելու է ժառանգորքեան հաշիւը՝ ժառանգութենէն հետզհետէ առնուած արժէնիւթոց համար. գործընակ, կանխիկ դրամ, կալուած, կարասիք եւ գանձելի պահանջներ ելն. իսկ Պարտական ընելու է՝ ժառանգութիւնը ձեռք բերելու համար վճարուած օրինական եւ դատական ծախուց, կտակեալ պարգեւներուն, բարեգործական հաստատութեանց կտակուած գումարներուն եւ մեռնողին վճարելի պարտքերուն համար (եթէ ունի): Երբ ժառանգութեան պահանջքը գանձուին եւ պարտքերը վճարուին, այս հաշիւին կշիւը, այսինքն, Պահանջիկն՝ Պարտին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ ժառանգութեան գումարը կը ցուցնէ, որուն համար ժառանգորքեան հաշիւը Պարտական եւ Իրաւագրի հաշիւը Պահանջող ընելով ժառանգութեան հաշիւը ինքնին կը գոցուի:

Եթէ ժառանգորդք քանի մը հոգի են, ժառանգութեան գումարը իւրաքանչիւր ժառանգորդի հաշույն Պահանջիկն անջընելու է իրենց օրինական բաժնին շափ. իսկ վաճառականին բաժնին ալ ըստ առաջնոյն իր Իրաւագրի հաշիւին կ'անցնի: (Տե՛ս մեր Ջեռատեարին Թ. 136.149-152 եւ 196 յօդուածները):

Հաշի մասի. — Մասի հաշիւը կարեւոր է օտար երկրէ ապրանք բերողներուն, որով կը գիտնան որքան մաքս վճարած ըլլալնին: Այս հաշիւը Պարտական ընելու է հետզհետէ վճարուած մաքսին եւ հակերուն փոխադրողէքին համար. իսկ տարեգլխուն՝ տարւոյն մէջ քանի՞ լիբայի ապրանք որ եկած է՝ նոյն գումարին վրայ մաքսատուրքի որոշեալ սակովը (որ հիմա 0% 8 է) ընդհանուր մաքսատուրքը հաշուելու եւ այդ գումարին համար Ընդհ. ապրանքի Պարտական եւ Մասի հաշիւը Պահանջող ընելու է, որով մաքսի հաշիւին կշիւը կը ցուցնէ թէ տրուած գումարները ճիշդ 0% 8 կը բռնեն թէ աւելի կամ պակաս:

Օրինակ. տարւոյն մէջ բերուած 2000 լ.ի ապրանքի համար 14000 ղշ. մաքս վճարել ենք. ըսել է մաքսը 0% 7ի եկել է: 2000 լ.ին 0% 8էն մաքսը հաշուելով 16000 ղշ.ին համար Ընդհ. ապրանքի Պարտական եւ Մասի հաշիւը Պահանջող կ'ընենք:

Մաքսի հաշիւին կշիւը շահը կը ցուցնէ, եթէ Պահանջիկն գումարը Պարտական շատ է, այն ատեն այդ շահուն համար Մասի հաշիւը Պարտական եւ Շահ եւ Վնասը Պահանջող կ'ընենք. երբ Պարտին գումարը Պահանջիկեկն շատ է, կշիւը փաստ կը ցուցնէ, այսինքն, մաքսը 0% 8էն աւելի եկած կ'ըլլայ. այն ատեն այդ փաստին համար Մասի հաշիւը Պահանջող եւ Շահ եւ Վնասը Պարտական կ'ընենք. որով երկու պարագային մէջ ալ Մասի հաշիւը կը գոցուի:

Պահեսի հաշի. — Այս անունով հաշիւ մը կը բանայ վաճառականը երբ իր տարեկան շահը կամ անոր մէկ մասը դրամագլխին վրայ շարդելով առանձինն բռնել ուզէ, եւ զայն յաջորդ տարուան փոխադրելով՝ նոյն տարւոյն մէջ ալ, եթէ փաստը ընէ, այդ փաստը Պահեսի հաշուէն կը զեղչէ եւ այսպէս իր Իրաւագրի հաշիւը անփոփոխ կը պահէ:

Պահեսի հաշիւը ընդհանրապէս մեծ վաճառատուններու եւ մեծ ընկերութեանց տնտեսականներուն մէջ կը բացուի, ուր ընկերութեան կանոնադրին համեմատ՝ ամէն տարուան շահէն մաս մը կը հանուի ապագայ փաստերու դէմ զնելու համար. այդ հանուած շահուն համար Պահեսի հաշիւը Պահանջող եւ եղած փաստին համար Պարտական ընելու է:

Հաշի ապահովագրութեան. — Այս հաշիւը կարեւոր է ապահովագրական գործով զբաղողներու համար: Այս հաշիւը Պահանջող ընելու է առնուած ապահովագրիչներուն համար, իսկ Պարսական՝ վճարուած ֆնաններուն և եղած ծախուց համարայս հաշիւին կշիւը, այսինքն, Պահանջիկ՝ Պարսիկն գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ ապահովագրութեան գործին գուտ շահը կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասը Պահանջող և Ապահովագրութեան հաշիւը Պարսական ընելու է: Իսկ Պարսիկն Պահանջիկն գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ փաստ կը ցուցնէ, որուն համար Շահ և Վնասը Պարսական և Ապահովագրութեան հաշիւը Պահանջող ընելու է, որով երկու պարագային մէջ ալ՝ Ապահովագրութեան հաշիւը ինքնին կը գոցուի:

Հաշի դատական կամ փաստաբանական ծախսերու. — Երբ վաճառականը դատական շատ ծախքեր ունի, անոնց համար գառ հաշիւ բանալու է, հասկնալու համար թէ՛ տարւոյն մէջ դատական և փաստաբանի (1) որչափ ծախք ըրեր է. և հետզհետէ վճարած գումարներուն համար այդ հաշիւը Պարսական, և եթէ այդ ծախուց մէկ մասը դատավարութեամբ ձեռք բերէ՝ Պահանջող ընելու է:

Տարեգլխուն այդ հաշիւը՝ որուն կշիւը դատական գուտ ծախքը կը ցուցնէ, կը գոցուի Շահ և Վնասը Պարսական և Դասական ծախքի հաշիւը Պահանջող ընելով:

Հաշի ստակի վնասի. — Թէեւ Պոլսոյ հրատարակին վրայ վաճառականական գործողութեանց շատը 1. 100 զէն կ'ըլլան, սակայն կան գործեր ալ, որ լիրան 100էն աւելիի հաշուով կը կատարուին. շատ քաղաքներ, գործրինակ, մանիֆաթուրսոյի առեւտուրները այսօր 0. 1. ն 112-115 զէն կ'ըլլան, հետեւաբար անոնք որ իրենց գործողութիւնները լիրան 100ի վերածելով կը գրեն՝ լաւ, իսկ անոնք որ ընթացիկ դրամով կը գրեն, Ստակի վնաս անուն հաշիւ մը կը բանան և ըրած թէ՛ կանխիկ առեւտուրներուն և թէ՛ ապառիկներէ գանձած դրամներուն ստակի տարբերութիւններուն համար այս հաշիւը Պարսական կ'ընեն և տարեգլխուն Շահ և Վնասի հաշիւը Պարսական և Ստակի վնասի հաշիւը Պահանջող ընելով այս հաշիւը կը գոցեն:

[1] Շահ վաճառական իր որոշեալ փաստաբան ունի, որուն կը յանձնէ իր դատական բար գործեր և դատական սովորական և օրինական ծախքերէ գառ՝ սարեկան որոշեալ վարձ մը կը սայ անոր:

Հաշի միջնորդութեան. — Միջնորդ վաճառականին համար կարեւոր է այս հաշիւը, որ Պահանջող կ'ընէ առած միջնորդչէքներուն համար, իսկ իր վճարածներուն համար Պարսական. կշիւը կը ցուցնէ առնուած գուտ միջնորդչէքը, որուն համար Շահ և Վնասը Պահանջող և Միջնորդութեան հաշիւը Պարսական ընելով այս հաշիւը կը գոցուի:

Նոյնպէս կարեւոր է այս հաշիւը անոր համար, որ միջնորդչէքը կը վճարէ, վճարած միջնորդչէքներուն համար այս հաշիւը Պարսական ընելով, ուղած առեւտր կը գիտնայ թէ ո՞րչափ միջնորդչէք վճարած է:

Տարեգլխուն Շահ և Վնասի հաշիւը Պարսական և Միջնորդչէքի հաշիւը Պահանջող ընելով կը գոցուի այս հաշիւը:

ՄԱՍՆԱԻՈՐԱՅ ՀԱՇԻՒՆԵՐ

Պարզ - տոմարին պէս կրկնատոմարին մէջ ալ վաճառականը հետեւին շարունակ ապառիկ գործ ըրած մարդոց համար ապրանք առնող կամ ծախող, տոկոսով կամ առանց տոկոսի դրամ առնող կամ առնող, և ըն.) հաշիւներ կը բանայ, զորս Պահանջող կ'ընէ անոնցմէ առած արժէնքիսթոյ համար. իսկ Պարսական՝ անոնց տուածներուն համար:

Գլխաւոր հաշուց պէս՝ Մասնաւոր հաշիւներն ալ կ'ստորաբաժանին, երբ մէկ քանի անձի հետ երկու տեսակ՝ թէ՛ դրամական և թէ՛ ապրանքի գործ ընելով, այդ գործերը իրար շխառնելով, ամէն տեսակ գործի արդիւնքը առանձինն գիտնալու պէնք՝ այն տեսն այդ անձերուն համար երկու տեսակ հաշիւ կը բացուի. մէկուն՝ Այսինչին դրամական հաշիւը և միւրին՝ Այսինչին ապրանքի հաշիւը ընելով: Նոյնպէս առեւտրական ընկերութեանց մէջ՝ իւրաքանչիւր ընկերի քանի մը տեսակ հաշիւ բանալու է, Այսինչ ընկերին դրամագլխի, Անձնական, Տոկոսաւոր դրամիկ հաշիւը և ըն: Վերջապէս տոմարակալը ազատ է գործին պահանջման համեմատ հաշիւներ բանալ թէ՛ Գլխաւոր և թէ՛ Մասնաւոր հաշուց համար:

Հոս կը դնենք Մասնաւոր հաշուց գլխաւոր ստորաբաժանմունքը.

1. Հաշիւ զանազան պարտականներու
2. » » պահանջատէրներու
3. » մեր Պ. այսինչին
4. » » » » դրամագլխին
5. » » » » տոկոսաւոր դրամին
6. » » » » ընթացիկ-հաշիւը
7. » » » » ճամբորդութեան
8. » այսինչ անձին, ապրանքի կամ դրամական հաշիւը
9. » » անանկացող և կասկածելիներու

Հաշի Զ. պարտականներու. — Վաճառականը զանազաններէ կետ առաջին անգամ քիչ կամ շատ գործ կ'ընէ, բայց անոնց հետ շարունակ պիտի գործէ՞ թէ ոչ՝ առաջուց չգիտնալով, անոնց համար փոխանակ զատ հաշիներ բանալով Մայր-հաշիւը լեցընելու ամէնուն համար Զանազան Պարտականի անուն հաշի մը բանալով զայն Պարտական կ'ընէ այդ կարգի անձերու ծախած ապրանայ արժէքին համար. իսկ անոնցմէ գանձած դրամներուն համար ալ Պահանջող:

Գալով Զ. Պարտականի հաշիին մանրամասնութեանց՝ այսինքն իւրաքանչիւր պարտականի հաշիին, անոնց համար ալ Զ. Պարտականի անուն տետրակ մը կը բանէ, ուր ամէն մէկ պարտականի զատ հաշի կը բանայ: (Տե՛ս Երկրորդական Տետրակներուն մէջ, ուր խօսուած է այդ տետրին վրայ):

Հաշի զանազան պահանջատերներու. — Վաճառականը զանազաններէ քիչ կամ շատ ապրանք կը գնէ, բայց առաջուց չգիտնալով թէ ատոնց հետ շարունակ պիտի գործէ՞ թէ ոչ, անոնց համար փոխանակ զատ հաշիներ բանալով Մայր-հաշիւը լեցնելու, ամէնուն համար Զանազան Պահանջատերի անուն հաշի մը բանալով զայն Պահանջող կ'ընէ այդ կարգի անձերէ զնած ապրանայ արժէքին համար. իսկ անոնց վճարուած դրամներուն համար ալ Պարտական:

Նոյնպէս գալով Զ. Պահանջատերի հաշիին մանրամասնութեանց՝ այսինքն, իւրաքանչիւր պահանջատերի հաշիին, անոնց համար ալ Զ. Պահանջատերի անուն տետրակ մը կը բանէ, ուր ամէն մէկ պահանջողի համար զատ հաշի կը բանայ: (Տե՛ս Երկրորդական Տետրակներուն մէջ, ուր խօսուած է այս տետրին վրայ):

Հաշի մեր Պ. այսինչին. — Երբ վաճառականը ընկեր ունենայ, բոլոր գործողութեանց համար վաճառատունը դարձեալ իր մէկ անձի կը համարուի. սակայն ընկերներուն անձնական հաշիին դալով՝ անոնց իւրաքանչիւրին համար զատ հաշի կը բացուի, զորս Պահանջող ընելու է ընկերներուն դրած դրամագլխին և ընկերութեան բացէն բերած դրամներուն և այլ արժէքներու, ինչպէս նաեւ իրենց տուած գուժարներուն տոկոսներուն համար. իսկ այդ հաշիները Պարտական ընելու է ընկերութենէն քաշած դրամներուն և այդ գուժարներուն պարտական եղած տոկոսներուն համար:

Տարեգլխուն կամ հաշի տեսնուած տան՝ գոյացած չափէն իւրաքանչիւր ընկերի բաժնին համար իրենց այս հաշիւը Պահանջող և Ֆասին համար (եթէ ըլլայ) Պարտական ընելու է:

Մեր Պ. այսինչին դրամագլխի հաշիւ. — Երկու կամ աւելի ընկերք երբ վաճառականական ընկերութիւն մը կազմեն և իւրաքանչիւրին զնելիք դրամագլխին որոշուելով՝ ընկերութեան պայմանագրին համեմատ ընկերք իրենց որոշեալ դրամագլխի անմիջապէս չ'ընելով՝ աղաս ըլլան մաս առ մաս ընկեր (1), այն տան իւրաքանչիւր ընկերի համար Այսինչին դրամագլխի հաշիւը բանալով հաշի մը կը բացուի:

Այս հաշիւը նախ Պարտական ընելու է ընկերներուն զնելիք դրամագլխին շափ և ընկերութեան բուն Դրամագլխի հաշիւը Պահանջող:

Երբ ընկերք իրենց որոշեալ դրամագլխի մաս առ մաս բերած, Այսինչին դրամագլխի հաշիւը Պահանջող ընելու է բերած դրամներուն շափ:

Յայտնի է թէ երբ ամէն ընկեր իր դրամագլխին ամբողջընէ, այս հաշիւը ինքնին կը գոցուի:

Հաշի մեր Պ. այսինչին տոկոսուոր դրամին. — Երբեմն ընկերք իրենց զնելիք դրամագլխէն զատ, ընկերութեան բացէն դրամ ալ տալու համար մէջերնին կը պայմանագրեն, այդ դրամը ընկերին տոկոս մը կը տրուի ընկերութեան Անտուկէն:

Այդ պարագային՝ տոկոսով դրամ տուող ընկերին զատ հաշի մը կը բացուի Մեր Պ. այսինչին տոկոսուոր դրամին հաշիւը բանալով, զոր Պահանջող ընելու է հետզհետէ տուած դրամներուն և առածներուն համար ալ Պարտական:

Ընդհանրապէս տարին կամ Յամիսը անգամ մը տոկոսով դրամ տուողին տոկոսի հաշիւը կ'ըլլայ, և ո՛րչափ տոկոս որ պահանջը ելնէ՝ նոյն տոկոսին համար այդ հաշիւը Պահանջող կ'ըլլայ, որով տոկոսը մայրին վրայ կ'աւելնայ:

Պէտք է զիտել սակայն թէ՛ երբ ընկերութիւնը լուծուի, որ տան իւրաքանչիւր ընկերի իր դրամագլխի բաժինը տալ հարկ կ'ըլլայ, նախ և առաջ դրամ փոխ տուող ընկերին պահանջը տոկոսովը վճարելու է, այնպէս որ՝ եթէ ընկերութիւնը վնասած տոկոսովը վճարելու է, այնպէս որ՝ բաժնին շափ պիտի կրէ այդ վնասը է, փոխ տուող ընկերը իր բաժնին շափ պիտի կրէ Տոկոսուոր դրամին իր Դրամագլխի հաշիւը, իսկ իր Տոկոսուոր դրամին հաշիւը առաջուց վճարուելու է իրեն. վերջապէս եթէ ընկերութեան զորս ա՛յնքան ձախող ըլլայ, որ փոխատու ընկերին դրամը վճարելու անկարող գտնուի՝ միւս ընկերն անոր անձնապէս պար-

[1] Ընկերութեան պայմանագրին համեմատ ընկերք իրենց զնելիք դրամագլխի մաս առ մաս բերած, Այսինչին դրամագլխի հաշիւը Պահանջող ընելու է բերած դրամներուն շափ:

տական կը մնայ անվճար գումարին կիսուն չափ. վասն զի փոխատու ընկերն իրը բացէն մէկը տուած է այդ դրամը. հետեւաբար ատոր համար իր ամբողջ դրամագլուխը կամ մէկ մասը թերեւս կորսնցնէ: Բայց փոխ տուած դրամը իր դրամագլխէն նախամեծար կը համարուի, որովհետեւ դրամագլուխը մասնաւոր առանձնաշնորհում մ'ունէր, այն է՝ եղած շահէն բաժին առնել. մինչդեռ փոխատուն՝ տարեկան 10% այսչափ տոկոսէն զատ ուրիշ առաւելութիւն մը չունի:

Մեր Պ. այսինչին Ընթացիկ-հաշիւը. — Այս անունով հաշիւ մը կը բացուի իւրաքանչիւր ընկերի համար, որ իր անձնականին համար ընկերութենէն դրամ կ'առնէ կամ կը տայ առանց տոկոսի: Այս հաշիւը Պարսական ընելու է ընկերներուն առած գումարներուն և Պահանջող տուածներուն համար:

Մեր Գ. այսինչին ճամբորդութեան հաշիւը. — Ընկերութեան անդամներէն կամ անոր պաշտօնեաներէն մէկը՝ գործի համար ճամբորդած ատեն, այս անունով հաշիւ մը կը բացուի, զոր Պարսական ընելու է ճամբայ ելած ատեն անոր տրուած գումարին, ետքը իրեն զրկուած դրամին, թղթակիցներէն առածներուն և ընկերութեան վրայ քաշած փոխանակագրոց կամ հրամանագրոց համար:

Պահանջող ընելու է այդ հաշիւը՝ ճամբորդողին զրկած դրամներուն, կանխիկ գնած ապրանքաց, զանազաններու քով ձգած կամ վճարած գումարներուն, ընկերութեան իր վրայ քաշած վճարելի թղթոց, վերջապէս ճամբորդութեան առթիւ ըրած բոլոր ծախքերուն համար:

Վերադարձին՝ այս հաշիւը կը գոցուի այն մնացորդ գումարով, զոր ճամբորդողը ետ կը տայ կամ կ'առնէ ընկերութենէն: Եթէ ճամբորդողն ընկեր է և աւելցած դրամն իր անձնականին ծախսած կամ վար դրած է, այդ գումարը իր մասնաւոր հաշիւին կ'անցնի:

Այսինչին գրամակտն կամ ապրանքի հաշիւը. — Երբ վաճառականը իր յաճախորդներէն ոմանց հետ թէ՛ ապրանքի և թէ՛ դրամական գործ ընելով, այդ երկու տեսակ գործերուն արգիւնքը առանձինն գիտնալ ուզէ, Այսինչին ապրանքի կամ Գրամակտն հաշիւը ըսելով զատ հաշիւներ կը բանայ: Ապրանքի հաշիւը Պարսական ընելու է երրորդի մը մեզ զրկած ապրանքներուն համար մեր ըրած ծախուց, մեր տուած կանխավճարին, վճարած փոխանակագիրներնու կամ հրամանագիրներնու, իրեն զրկած

գրամներնու կամ անոր հաշույն առնուած ապրանքներուն և վերջապէս այդ անձին հաշույն այդ ապրանքին առթիւ վճարած բոլոր գումարներնու համար: Իսկ Պահանջող ընելու է ծախուած ապրանքին արժէքին, յիշեալին մեզ զրկած գումարներուն, մեր իր վրայ քաշած թղթոց համար, վերջապէս այդ ապրանքին առթիւ բոլոր առնուած արժէքներուն և գանձուած դրամներուն համար:

Երբ գործողութիւնը վերջանայ՝ այդ հաշիւը Պարսական ընելու է մեր կանխավճարներուն տոկոսներուն, թղթատարի և ուրիշ ծախուց և մեր յանձնառուողէքին համար:

Այս հաշիւը կը գոցուի յիշեալին բուն իսկ հաշուընթացովն, այսինքն, կշիւը այս վերջին հաշիւին կ'անցնի:

Եթէ գործողութիւնը դրամական է, Ապրանքի հաշիւին տեղ՝ Այսինչին դրամակտն հաշիւը ըսելով հաշիւ մը կը բացուի:

Հաշիւ սնանկացող եւ կասկածելիներու. — Վաճառականը տարեգլխուն կամ ուրիշ առթիւ հաշիւ տեսած ատեն՝ երբ իր յաճախորդներուն մէջ գտնուին անանկներ, որոցմէ դրամ առնելը կասկածելի կամ անյուսալի է և կամ անոնց մէջ սնանկացողներ ըլլան, իր տարեկան ճիշդ շահը հասկնալու համար այդ կասկածելի և սնանկացող աննկիքները ողջերէն զատելու է. ատոր համար թէ՛ անյուսալի յաճախորդաց հաշիւները գոցել և թէ՛ սնանկացողներէն եղած փաստները անոնց Պահանջիին տանիլ հարկ է:

Դիցուք թէ ի մէջ այլոց՝ երեք յաճախորդի վրայ 9000 դր. առնելիք ունինք. առաջինը՝ որ 2000 կը պարտի, բոլորովին անգանձելի է, իսկ վերջի երկուքը՝ որք 3500ականէն 7000 կը պարտին, սնանկացած են և ըստ Գօնգօրսարօյի (1) 50% 3500 միայն պիտի վճարեն: Արդ՝ Մայր-հաշուին մէջ փոխանակ այս երեքին վրայ անուանական 9000ի խարուսիկ պահանջք մը ցուցնելու, իրապէս գանձելի 3500ը պահելով՝ մնացած 5500ի փաստը Շահ և Վնասի հաշուով կը գոցենք, այդ երեքին հաշիւները (առաջինը՝ 2000ի և միւս երկուքը՝ 1750ականի համար 3500՝ ընդամէնը 5500) Պահանջող և Շահ և Վնասը 5500ի համար Պարսական ընելով. իսկ երկուքին հաշիւները, որոնցմէ իրապէս 1750ականէն 3500 գանձելի կը մնայ, և որոց հետ այլեւս գործ ընելիք չ'ունինք, կը գոցենք և Սնանկացողի և Կասկածելիի անուն հաշիւը բանալով զայն Պարսական կ'ընենք 3500ին համար, և այդ երկուքին հաշիւն ալ 1750ականէն Պահանջող ընելով, որով առաջուց իշուած երեք

[1] Տե՛ս Թ. 76, ուր խօսուած է Սնանկութեան եւ Գօնգօրսարօին վրայ: 44

յաճախորդաց հաշիւները կը գորուին և կը մնայ միայն Սնանկացողի և Կասկածելի հաշիւին վրայ 3500 ղշ. գանձելի պահանջք, յորմէ հետզհետէ գանձուածներուն համար այդ հաշիւը Պահանջող կ'ընենք:

Յիշուած հաշիւներէն զատ՝ սեղանաւորական մեծ գործերու մէջ, որք զանազան քաղաքներ մասնաճիւղեր կ'ունենան, և այլեւայլներու հետ հաշուընթացներ կը բանան, զորս հետեւեալ կերպով կ'ստորաբաժանեն.

- Հաշուընթացներ կանխիկ դրամի կամ շէքի
- » զեղջի գործի (թուղթ զեղջելու)
- » կանխավճարի(ապրանքի կամ արժէթ զթի վրայ)
- » Փարիզի
- » Վիէնայի
- » Լոնտրայի
- » Թուրքիոյ
- » Ամերիկայի ևլն. ևլն

Որով գործին տէրը կամ տնօրէնը միշտ աչքին առջեւ ունենալով՝ որ և է տեսակ գործի վրայ և իւրաքանչիւր երկրի հետ ինչ գումարի գործի մտած ըլլալը կը հասկնայ:

Մէկ քանի հաշիւներ, որք Գլխաւոր հաւուց ստորաբաժանումներ չեն համարուիր

Կրկնաամսորի տետրակները գրելու գործը կատարեալ ըլլալու համար՝ Գլխաւոր և Մասնաւոր հաշիւներէն զատ՝ անհրաժեշտ է նաեւ բանալ հետեւեալ երեք հաշիւները:

1. Հաշիւ Դրամագլխի
2. » Ելից կշռի
3. » Մտից կշռի

ՀԱՄԱՐԱԿԱՅԻՆ ԳՐԱՄԱԳԼԻՒԹ

Տոմարակալութեան մէջ Դրամագլխի բնույթ կը հասկցուի վաճառականին բացարձակ կամ գուտ ստացուածքը դրամով հաշուուած: Այս ստացուածքը կ'որոշուի վաճառականին Գոյքն ու Պարսքը թղթի մը կամ յատուկ տետրակին մէջ⁽¹⁾, աջ կողմը՝ Գոյքը կազմող արժէքներէրը և ձախ կողմը՝ Պարսքը կազմողները դէմ առ դէմ գրելով:

[1] Տե՛ս թ. 271 Տես հաշուեկշռի.

Այսպէս գրուելէ ետքը՝ վաճառականին Պարսքին գումարը Գոյքին գումարէն հանելով՝ մնացորդը կ'ըլլայ իր գուտ Դրամագլխի կամ իրական հարստութիւնը. որինակ. Սիմօնին Գոյքին գումարն է

	Լ. 0.	10,000.—
Պարսքին գումարն է, զոր Գոյքին գում.էն հանելով » »		3,000.—
» »		7,000.—

Կը մնայ

Ուրեմն ունեցած հարստութիւնը կամ ստացուածքը 7,000 Լ. է, հետեւաբար այս է Սիմօնին Դրամագլխի:

Եթէ վաճառականին Գոյքին ու Պարսքին գումարներն իրարու հաւասար են, յայտնի է թէ անոր հարստութիւնը զէրօ է, իսկ եթէ Պարսքին գումարը Գոյքին գումարէն շատ է՝ կշիւը կ'ըլլայ վաճառականին բաց Պարսքը. այն ատեն կ'ըսուի թէ՛ վաճառականը Այսչափ բաց պարսք կամ բաց ունի:

Յակորին Պարսքը 13,000 և Գոյքը 10,000 կ'ըլլայ, ըսել է թէ Յակոր իր դրամագլուխը կորսնցնելէ ետքը, 3000 Լ. ալ բաց մը ունի. այն ատեն Յակոր Սնանկ է կ'ըսուի:

Ամէն գործ իր յատուկ դրամագլուխն ունի: Վաճառականը միմիայն իր անձնական միջոցներով սահմանափակուած չէ. վարկը իրեն կը հայթայթէ նոր դրամագլուխ մը, որ թէեւ ժամանակաւոր, բայց կրնայ միշտ նորոգուիլ և, այսպէս ըսենք, յարատեւ և մնալուն ըլլալ: Այն վաճառականները, որք լաւ վարկ ունին, իրենց դրամագլխին քանի մը պատիկ ընդարձակութեամբ գործի կը մտնեն, զոր, հարկ է ըսել, թէ լաւ կառավարելու է թէ՛ իր անձնական դրամագլուխը և թէ՛ իր վարկը չվտանգելու համար. որովհետեւ անխոհեմ ձեռնարկներով մարդ իր դրամագլուխը կորսնցնելէ ետքը՝ իրեն վարկ ընող պահանջատէրներուն ալ շահը կը վտանգէ: Դրամագլուխը՝ վարկէն օգտուելով, վաճառականութեան հողին է. առանց դրամագլխի առեւտրական ամէն գործողութիւնը գրեթէ անկարելի կ'ըլլայ: Դրամագլուխը աշխատողին միջոցն ու կէտ նպատակին է. Տոմարակալութեան վերջաբանն է ան: Տոմարակալին համար Դրամագլխի հաշիւը արժէքի հաշիւն է: Տոմարակալին համար Դրամագլխի հաշիւը արժէքի հաշիւն է, որ, ինչպէս բխիք, վաճառականին գործի սկսած ատեն անոր հարստութիւնը կը ցուցնէ, և ամէն տարեգլուխ ըրած շահը այս հաշույն Պահանջիին կը տարուի, որով իր դրամագլուխը կ'աւելնայ. եթէ մնասէ, մնասն այ այս հաշույն Պարսքին կը տարուի, որով իր դրամագլուխը կը պակսի: Դրամագլխի հաշույն մէջ կը բովանդակին միւս բոլոր հաշիւներէն եղած շահերն և մնասները, և վաճառականին տան և անձնական ծախքերը:

Հոս տեղն է կրկնել ինչ որ ըսինք թ. 337 երեսին մէջ թէ՛ Շահն և վնասը Դրամագլխի հաշիւին մէկ ստորա-

բաժանմունքն է. որովհետեւ տարւոյն մէջ գանազան գործողութիւններէ գոյացած շահերը փոխանակ ամէն անգամ Դրամագլխին տանելով զայն աւելցնելու՝ և եղած փաստները դարձեալ նոյն հաշւոյն փոխադրելով անկէ պակսեցնելու, այդ շահերն ու փաստները Շահ և Վնասին մէջ կը մնան և անոնց վերջնական արդիւնքը, այսինքն, այդ հաշւոյն կշիւրը միայն կ'անցնի Դրամագլխի հաշւոյն Պահանջին, եթէ տարւոյն մէջ շահ եղած է. իսկ Պարտքին կ'անցնի՝ եթէ փաստ եղած է, որով կրնանք որոշապէս գիտնալ թէ՛ տարւոյն մէջ կամ մէկ հաշուէկշուէն միւսը՝ ո՞րչափ շահեր կամ փաստեր ենք:

Վաճառականը՝ գործի սկսած ատեն իր տեսարակներուն մէջ նախ Դրամագլխի հաշիւը Պահանջող կ'ընէ, գործին մէջ իբր դրամագլուխ բերած բոլոր արժէնիւթոց համար, կանխիկ դրամին, սպրանքին, գանձելի թղթոց, արժէթղթոց, գանազաններէ ունեցած պահանջներուն, ազգականներէն իրեն ինկած ժառանգութեան, առած դրամօժիտին, բախտի դիպուածով շահած մեծ գումարին, վերջապէս բոլոր այն գումարներուն համար, որք իր դրամագլուխը կ'աւելցնեն, ինչպէս նաեւ տարեգլխուն եղած շահուն համար: Իսկ Պարտական կ'ընէ այդ հաշիւը, գործի սկսած ատեն այլեւայլներու ունեցած պարտքերուն, գործէն քաշած մեծ գումարներուն, բրած մեծ փաստներուն, առած մեծագումար պարգեւներուն, իր աղջիկներուն առած դրամօժիտներուն, ինչպէս նաեւ տարեգլխուն եղած փաստին համար. վերջապէս բոլոր այն գումարներուն համար, որք իր դրամագլուխը կը պակսեցնեն:

Կրկնատոմարի տեսարակները (Օրհաշիւ և Մայր-հաշիւ) նախ Դրամագլխի հաշուով կ'սկսին. այս հաշիւը բնդհանուր կշռի ատեն կը գոցուի և նորէն կը բացուի, կշիւրը՝ ի նոր հաշիւ փոխադրուելով:


Վաճառականական և սեղանաւորական մեծ գործերու մէջ՝ սովորութիւն է դրամագլխին վրայ տարեկան տոկոս մը հաշուել, և եղած շահէն դրամագլխին այդ տոկոսը հանելէ ետքը, մնացածը իբր զուտ շահ նկատել: Զորօրինակ, մէկը 100000 Լ. դրամագլխով գործի մը ձեռնարկելով՝ առջի տարին 10000 Լ. շահեցաւ. բայց դրամագլխին վրայ տարեկան 1/10 տոկոս հաշուել որոշուած ըլլալով, որ կ'ընէ 6000 Լ., զոր 10000 Լ. շահէն հանելով, մնացած 4000 Լ. ն զուտ շահ կը համարուի. որովհետեւ դրամին տէրը եթէ այդ գործը չընէր, անշուշտ կերպով մը պիտի կրնար իր դրամը շահագործել և տոկոս մ'աւանել:

Այսպէս դրամագլխին վրայ տոկոս հաշուելով, երբ կը տեսնէ թէ՛ բրած գործը դրամ դրամագլխին տոկոսն ալ չբերեր, այն ատեն բնականաբար կը քաշուի այդ գործէն:


ՀԱՇԻՒՔ ՄՏԻՑ ԵՒ ԵԼԻՑ ԿՇՈՒ

Այս հաշիւներուն վրայ հիմա չպիտի խօսինք, զի ուսանողը գրեթէ բան մը չպիտի հասկնայ անոնցմէ, վասն զի այս երկու հաշիւները տարեգլխուն կամ ուրիշ ատեն տեսարակները գոցել և բանալու համար միայն կը գործածուին:

Մենք որովհետեւ տակաւին տեսարակները գրել չսկսանք, ուստի անոնց վրայ հոս խօսիլ առայժմ գանց ընելով, յարմարագոյն դատեցինք անոնց վերաբերեալ անզեկութիւնները այն ատեն տալ՝ երբ մեր պատրաստելիք Զեռատեարը, Օրհաշիւն և Մայր-հաշիւը գրենք և վերջացնենք:



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ



ԴՐԱՄԻ ՄԻՈՒՔԻՒՆԸ ՏՈՍԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ.— ԿՐԿՆԱՏՈՄԱՐԻ ՏԵՏՐԱԿՆԵՐԸ

Դրամի միութիւնը Տոմարակալութեան մեջ. — Կրկնատոմարի տեսարակներուն վրայ չխօսած, ուսանողը գիտնալու է թէ՛ կրկնատոմարի տեսարակները ի՞նչ տեսակ դրամի վրայ հաշուելով գրելու է, մանաւանդ երբ օտար դրամով գործողութիւններ ըլլան:

Կրկնատոմարի սահմանին վրայ խօսած ատեննիս ըսինք թէ՛ բոլոր հաշուց Պարտքին և Պահանջին գումարները հաւասար կշիւ մը տալու են: Այդ հաւասարութիւնը ունենալու համար Տոմարակալութեան՝ մանաւանդ Կրկնատոմարի մէջ, պէտք է որ տեսարակները ընդհանրապէս միօրինակ դրամի մը վրայ գրուին, և այդ դրամը բնական է որ ըլլայ այն երկրին կամ քաղաքին դրամի միութիւնը, ուր կը գտնուի նոյն գործը կամ գործին կեդրոնը:

Որովհետեւ ո՞ր երկրի և ի՞նչ գործի մէջ ալ ըլլայ՝ երբ մէկը օրինաւոր համարակալութիւն մ'ունենալ կ'ուզէ, իր տեսարակները որոշ և միօրինակ դրամի մը վրայ բռնելու է: Ասոր համար է որ Տոմարակալութեան մէջ սովորութիւն եղած է երկրին դրամին միութիւնը հիմ բռնել և կատարուած գործողութիւնները այդ դրամով գրել, Օրինակ. եթէ Պօլսոյ մէջ է գրուելիք Տոմարակալութիւնը, Պօլսոյ սեղանաւորութեան և վաճառականութեան սովորութիւնը ընդհանրապէս 0. Լ. ն 100 դշ. ի հաշուով աւանել և սովորութիւնը գործողութիւններն ալ տեսարակներուն մէջ լիտալ ըլլալով՝ գործողութիւններն ալ տեսարակներուն մէջ լիտալ բան 100 դշ. ի հաշուով կը գրուին: Նոյն իսկ օտար դրամով գոր-

ճողութիւնները՝ նոյն դրամներուն որոշ գին մը գնելով երկրին գրամին կը վերածուին և այնպէս կը գրուին. զորօրինակ, Օ. Լ. ն 100 զշ. ի հաշուով անգղ. լիբան՝ 110 զշ. էն, գաղղիականը՝ 88 էն, ռուսականը՝ 90 էն կը հաշուեն: Իսկ Ֆրանքով, սթէռլին լիբայով, մարքով, Ֆիօրինով ապրանքի կամ փոխանակագրի (Գամպիօ) գործողութիւնները գամպիօին օրուան գինովը կամ իւրաքանչիւր օտար գրամին որոշ գին մը գնելով կը հաշուեն և կը գրեն. օրինակի համար, Ֆրանքին համար՝ 23 ֆր. մէկ Օ. Լ., սթէռլինին համար՝ 110 զշ., մարքը 5 1/2 զշ. և Ֆիօրինը՝ 9-10 զշ. էն կը հաշուեն: Ինչպէս որ մենք այ մեր Զեռատարին սթէռլինի և Ֆրանքի յօդուածները սթէռլինը 110 զշ. էն և Ֆրանքը 23 էն հաշուած ենք: Թէեւ կան առեւտուրներ, որոց մէջ Օ. Լ. ն 100 զշ. էն աւելիի ալ կ'աւանուի և կը արուի. օրինակ, գաղթաբերքի (գանթարիչէ) առեւտուրի մէջ Օ. Լ. ն 100 զշ. ի և մանիֆաթուրայի մէջ 116 զշ. ի կ'աւանուի այժմ. այս տեսակ գործողութիւններն ալ դիւրին է տեսակը անցընել, այդ գումարները իւրաքանչիւրը իր ոսկիին գինովը 100 զշ. ոսկիի վերածելով:

Իսկ Թուրքիոյ մէջ մէկը երբ օտար երկիր, օրինակի համար, Անգղիա դառնուող մէկուն պարտք ունենայ, բնականաբար անկէ գալիք հաշուեցուցակը կամ հաշուընթացը անգղ. լիբայի վրայ կը շինուի, վասն զի այն մարդուն առնելիքը անգղ. լիբայ ըլլալով՝ մեր երկրին գրամին հետ գործ չունի: Ուստի օտար երկիր գրտնուող անձերու ո՞րչափ պարտք կամ անոնցմէ ո՞րչափ պահանջք ունենալնիս գիտնալու, և ամէն ատեն աչքի առջեւ ունենալու համար, Մայր-հաշուին մէջ ատոնց համար բացուած հաշիւներուն Պարսիին և Պահլանջիին կողմը գումարի սովորական սիւներէն գառ, նոյն երկրին գրամին միութեան և անոր կոտորակներուն համար ալ սիւներ գծել հարկ է: Զորօրինակ, անգղ. լիբային և կոտորակներուն համար՝ երեք սիւն. Ֆրանքին, Ֆիօրինին և անոնց կոտորակներուն համար՝ երկերկու սիւն գծելով, այդ տեսակ օտար գրամներով յօդուածներուն այդ գումարները Օ. Լ. ի վերածուած իրենց գումարի յատուկ սովորական սիւններուն մէջ կը գրուին: Ինչպէս որ մենք մեր Մայր-հաշուին մէջ Մանչէսթըրի Յ. Յակորեան և Որդիին և Փարիզի Գուէտի Լիօնէի հաշուց վրայ անգղ. լիբային, Ֆրանքին և անոնց կոտորակներուն համար գառ սիւներ գծած ենք:

Կրկեսոսմաւի սեսրակները. — Տոմարակալութեան մէջ գործածուած տեսակները երկուքի կը բաժնուին, Գլխաւոր և Երկրորդական սեսրակներ:

Կրկնատոմարի համար գործածուած գլխաւոր տեսակներն են.
 1. Օրնաշիւ
 2. Մայր-նաշիւ

Գլխաւոր տեսակներէն դատ՝ վաճառականը ուրիշ տեսակներ ալ ունենալու է, ուր կը գրէ իրեն յատուկ գործողութեանց ամէն մանրամասնութիւնները, որոց ստէպ պէտք կ'ունենայ և զորս շատ անգամ Օրնաշիւր և Մայր-հաշիւր չի գրելը զանոնք չի խճողելու համար. այս տեսակներուն Երկրորդական կամ Օժանդակ սեսրակներ կ'ըսուի Գործարաններու, առեւտրական, և սեղանաւորական մեծ ընկերութեանց և մեծ վաճառատանց համարակալութեան մէջ երկրորդական տեսակները մեծ դեր կ'ունենան. զի գործին ամէն մանրամասնութիւնը ուզուած ատեն անոնց մէջ շուտով կ'երեւայ:

Երկրորդական տեսակներուն ձեւը գործին տեսակին համեմատ փոքր ինչ կը փոխուի և այս՝ գործին տիրոջ, անոր տնօրէնին կամ համարակալին ճաշակէն, կամքէն և գլխաւորաբար գրուելիք գործողութեանց տեսակէն կախում ունի. բայց որովհետեւ այդ տեսակները ուրիշ բան չեն, եթէ ոչ՝ զանազան գործողութիւններու ծանօթագրութեանց հաւաքածոյ մը, որք միշտ պարզ լեզուով կը գրուին. հետեւաբար և ինքնին շատ դժուար չէ զանոնք գրելը. բաւական է ուշադրութեամբ անգամ մ'աչքէ անցնել զանոնք:

Երկրորդական տեսակները Պարզ-տոմարի եղանակով կը գրուին. հետեւաբար և կրկնատոմարին մէջ ալ նոյն են. գալով անոնց թիւին և ձեւին, ինչպէս ըսինք, գործին տեսակին և վաճառականին պէտքին ֆամեմատ կը փոխուին. մենք հոս պիտի դնենք անոնց ամենէն գործածականները:

1. Աեստեստ
2. Գնեսնեստ
3. Վաճառման »
4. Տեստ Դրանարկի կամ Սեսուկի
5. Մքերագիր կամ Մքեստեստ
6. Տեստ արձանագրութեան Գանձեշի տոմարակներու
7. » » վճարեշի »
8. » փոխանակագրի (գամպիօ) արձանագրութեան
9. » հաշուընթացի
10. » նամակի ընդօրինակութեան

- 11. Տեսր Զ. Պարսականներու
- 12. » » Պահանջատերներու
- 13. » կանխիկ ծախքի
- 14. » հաշուեկշռի
- 15. » ասպարակքի կամ հրամանի (օրտինոյի)
- 16. » սան ծախքի
- 17. » ընդհ. »
- 18. » անասկան կշռի Զ. պարսականներու և Զ. պահանջատերներու
- 19. » փորձակշռի

Ինչպէս վերի դասակարգութենէն կերելայ, վաճառականական տեսրակներուն երկու տեսակի՝ Գրխաւոր և Երկրորդական անունով բաժանուածը համաձայն չէ Առեւտրական Օրինագրքին 3րդ և 4րդ յօդուածոց արամադրութեան, որք Օրհաշիւ, Հաշուեկշռի և նամակի ընդօրինակութեան տեսրակները միայն կը պահանջեն վաճառականէն: Սակայն Օրէնքը այդպէս ընելով՝ միայն արգարութիւնը և ճմարտութիւնը երեւան հանելու միջոցները խորհելով այդ երեք տեսրակները որոշած է. մինչդեռ լաւ համարակալը՝ Օրէնքին պահանջման համակերպելով հանդերձ՝ ուզած է վաճառականին Ընդհանուր հաշուակաշռքին և մը պատրաստել, որ միշտ կարենայ տեղեկացնել զինքը իր վիճակին վրայ և Օժանդակ հաշուակաշռքին մը (Երկրորդական տեսրակները) Պարսի և Պահանջի և Մոսք ու Ելիի ձեւով գրուած, այսինքն, տեսրակներուն ձախ կողմը՝ Պարսի կամ Մոսքի և աջ կողմը՝ Պահանջի կամ Ելիի յատկացնելով, որով կարող կ'ըլլայ գիտնալ վաճառատունը մտած և ելած և պատրաստ ասպարանքին որքանութիւնը: Մտուկը մտած և ելած և պատրաստ դրամին քանակութիւնը, թղթապանակը մտած ու ելած և պատրաստ գանձելի թղթերը և գամպիտները, ինչպէս նաեւ այդ թղթոց վճարօրերը, թղթակիցներուն հետ ունեցած տոկոսաւոր հաշուոց վիճակը և անոնց հաշուընթացները պատրաստել, զանազաններու ծախած և զանազաններէ գնած ասպարանքները, հետեւաբար և զանազաններէ ունեցած պահանջքը և զանազաններու ունեցած պարտքը, ևլն. ևլն: Ահա լաւագոյն և զօրաւոր պատճառներ, որոց համար Երկրորդական տեսրակներ ունենալը վաճառականին համար խիստ կարեւոր է:

Կրկնատուարի տեսրակներուն վրայ չի տած՝ կարեւոր է քանի մը խօսք ըսել թէ՛ տեսրակները կանոնաւոր և օրինաւոր գրելու համար տոմարակալէ մը ինչե՞ր կը պահանջուին:

Ա. մասին մէջ ցոյց տրուած վաճառականական գրութեանց և առեւտրական թղթոց շատերը զանազան գործողութեանց ար-

ձանագրութեան իրը հիմ կը բռնուին և ի հարկին, իրրեւ ասպարայ մէջտեղ կը բերուին. օրինակ, ասպարանքի գնման և վաճառման գործողութեանց համար՝ հաշուեցոյցները, փոխանակագրի գնման և վաճառման գործողութեանց համար՝ նօթաները, բեւցուած ասպարանքի համար՝ բեւնագիրն ու փոխադրագիրը, թերհաշիւ վճարմանց համար՝ ընկալագիրը, հաշուընթացները, զեղչի ցուցակները, նոյնպէս դրամական գործողութեանց համար՝ մուրհակները, փոխանակագիրը, չէքը ևլն. ինչպէս նաեւ նամակները: Այս վաճառականական գրութեանց և թղթոց Տոմարակալութեան լեզուով՝ Արդարացուցիչ քղրեր (Pièces d'appui կամ Pièces justificatives) կ'ըսեն:

Արդ՝ գործողութիւն մը տեսրակը անցընելէ առաջ, լաւ քննելու է արդարացուցիչ թղթոց պարունակութիւնը. ստուգել և հակակշռել անոնց հաշիւը. օրինակի համար, մէկէ մը գնուած և մէկու մը ծախուած ասպարանաց հաշուեցուցակներուն հաշիւները ազէկ քննելու և ետքը անցնելու է. լաւ կ'ըլլայ որ հաշիւները տարբեր անձեր քննեն: Հաշիւները քննելէ ետքը՝ տեսրակը անցնել և քննուած ըլլալը յայտնող նշան մը դնել անոնց վրայ, ինչպէս նաեւ տեսրակը անցած ըլլալը հաստատելու համար անոնց վրայ դնել տեսրակի երեսին թիւը, ուր անցած է այդ հաշիւը յետոյ այդ հաշուեցուցակները և վերոյիշեալ միւս թղթերը կարգով և խնամքով դասաւորել և պահելու է, որպէս զի, ի հարկին, շուտով գտնուին և մէջ բերուին. զի շատ դատերու առթիւ այդ թղթոց նոյնութեամբ դատարան ներկայացնելուն մէջ մեծ շահ կայ:

Լաւ տոմարակալէ կը պահանջուի մաքուր գիր. և տեսրակները յատակ կերպով բռնելու համար պէտք է մաքուր և դիւրաւ կարգացուելիք գրով գրել և հաշիւները լաւ ճշդել: Մասնաւորապէս գիտնալու է քանի մը տեսակ գլխագիր, շեղագիր, ոճնա, ևլն: Մեծ խնամք տանելու է գործողութեանց արձանագրութեան և խմբագրութեան, որ յատակ և որոշ ըլլալու է: Ուշագրութիւն ընել թուանշանները մաքուր և որոշ գրելու մասին: Ասին տեսրակի գումարին սխեւերուն մէջ և թուանշաններուն տակէ տակ՝ միւսորը միւսորին և տասնաւորը տասնաւորին տակ գրուելուն ուշագիր ըլլալ, որպէս զի դիւրաւ գու՛տրուին և սխալ չ'ըլլայ: Գիծերը ուղիղ և առանց արատի գծել: Ուշագրութեամբ ընտրելու է որ տեսրակները ո՛չ շատ մեծ ըլլան և ո՛չ շատ ստուար, որպէս զի դիւրաւ տեղափոխուին: Տեսրակներուն վրայ իրենց անունները կրող մէկ մէկ պիտակ (Etiquette) դնելու է: Արդէն պատրաստ ծախուած Օրհաշուի, Մայր-հաշուի, և Մտուկի տեսրակներուն վրայ պիտակներ փակցուած կ'ըլլան:

Ձեռատեարը թղթակազմ կամ հաստատ կազմով տեարակ մ'է՞լ, որուն ամէն անգամ գիտել հարկ կ'ըլլայ, երբ Օրհաշուին յօղումներէն մէկուն մանրամասնութեանը մէջ սխալ ըլլայ: Ասոր համար ըսինք որ վաճառականը իր տեարակները երկար ատեն պահելու է:

Գործողութիւնները կատարուած ատեն իսկ անմիջապէս Օրհաշու անցընելն եթէ ոչ անկարելի՝ գէթ շատ դժուար է զի սխալներ կ'ըլլան, զորս ուղղել հարկ է. և որովհետեւ Աստուածային Օրէնքը՝ Օրհաշուին մէջ սխալ շտկելու համար քերթուածքը արգելած է, ուստի նախապատրաստական աշխատութեան մը պէտքը զգալի է և այդ աշխատութիւնը՝ ուրիշ տեարակ մը այսինքն, Ձեռատեարը գրելն է: Ուրեմն Ձեռատեարը սահմանուած է հաւաքել այն նախնական իրերն, որոնցմով Օրհաշուը կը խմբագրուի:

Ձեռատեարը երկրորդական տեարակներուն ամենէն կարելւորն է, քանի որ ամէն գործողութեան մանրամասնութիւն առաջին անգամ անոր մէջ կը գրուի, և անկէ կ'երթայ միւս տեարակները: Ուստի մենք ալ առաջ Ձեռատեարին վրայ պիտի խօսինք:

Ձեռատեարին մէջ կը գրուին պարզ և որոշ կերպով՝ կատարուած պահուն իսկ, վաճառականին ամէն տեսակ գործողութիւնները առանց բացառութեան, կանխիկ և ապառիկ գնած ու ծախած ապրանքները, վճարած տոմսակները, ընդունած և վճարած փոխանակաբերքը, մէկու մը զրկած և մէկէ մը ստացած ապրանքները, եթէ տոկոսի վերաբերեալ է՝ գումարը, տոկոսին սակը և օրերը, եթէ զեղջի վերաբերեալ է՝ գումարը և զեղջի սակը, ևլն:

Ձեռատեարին մէջ ամէն անձի անունը որոշ գրելու է իր յատուկ անունովը և քաղաքին անունովը. այս մասին խիստ ուշադրութիւն ընելու է, վասն զի կը պատահի որ վաճառականը միեւնոյն անունով, այսինքն, Պօղոս Յակոբեան անունով երկու անձի հետ (բայց մէկը Պօլսեցի, միւսը Տրապիզոնցի) գործէ և մէկուն հաշուը սխալմամբ միւսին անցնի, որով սխալ գրութիւններ կ'ըլլան, զորս ուղղելը չփոթութիւն և ժամանակի կորուստ կը պատճառէ: Այս տեարին մէջ ամէն գործողութիւն իր կարեւոր պարագաներովը գրելու է. եթէ ապրանքի վերաբերեալ է՝ կշիռը, հակին թիւն ու նշանագիրը ևլն. եթէ տոմսակ կամ փոխանակագիր է՝ վճարողին անունը, որուն հրամանին ըլլալը, թիւը և

[1] Հաստատ կազմովը նախապատի նամակելու է, զի քրքակազմ սեռակին բոլորը շատ գործածուելով՝ շուտով իրարմէ կը բաժնուին, կը պատռին եւ կը կորուստին:

Ձեռարուն ալ եթէ գրուի՝ աւելի լաւ: Մէկ խօսքով՝ Ձեռատեարը վաճառատան մը գործողութեանց պատմութիւնը կը համարուի, որ մանրամասն ըլլալու է:

Ձեռատեարը մէկ հոգի գրելու է. որպէս զի բան գրուի վնասուի կամ միեւնոյն բանը երկու անգամ չգրուի: Որովհետեւ մեծ վաճառատուններու մէջ Ձեռատեարը մէկ քանի հոգի կը գրեն, որով կրնայ ըլլալ որ մէկուն գրածը միւսն ալ գրէ անուշադրութեամբ:

Գնման և վաճառման տեարակ ունեցողը այլեւս Ձեռատեարին մէջ չի գրելը գնած ու ծախած ապրանքի հաշուեցուցակները, այլ միայն անոնց զուտ գումարը կը գրէ նշանակելով վերոյիշեալ տեարակներուն երեսի թիւերը, ուր անցած են այդ հաշուեցուցակները, որպէս զի, ի հարկին, անոնց մանրամասնութեան նայուի:

Ձեռատեարը և միւս տեարակները սկսուած ատեն, տեարակին ճակատը գրելու է վաճառականին անունը, գործին տեղը և տեարակը գրուելու սկսուած թուականը:

Գործողութիւնները Ձեռատեարին մէջ գրելու համար մասնաւոր ուսումն կամ շարադրութեան ձեւ մը չկայ. Տոմարակալութիւն չգիտցող մէկն ալ կրնայ գրել, միայն թէ գործողութեան կարեւոր մանրամասնութիւնները գրել մոռնալու չէ, որպէս զի Ձեռատեարին յօղումները Օրհաշու փոխադրող տոմարակալը միւս սկզբնական թղթերուն դիմելու պէտք չունենայ. (հաշուեցոյց, նամակ, ևլն.): Գործի մէջ ժամանակը սուղ է, շուտ և ուղիղ գրելու է Ձեռատեարը և եթէ անուշադրութեամբ սխալ մ'ալ սպրդի՝ այս տեարին մէջ կրնայ քերթուիլ, իսկ Օրհաշուին մէջ ընտ:

Ձեռատեարին Ձեռք և կազմութիւնը

Պատրաստ ծախուած Ձեռատեարին իւրաքանչիւր երեսին վրայ կարմիր, մոխրագոյն և կապոյտ գոյներով զանազան գիծեր կան: Այդ գիծեր թիւն են և ինչո՞ւ քաշուած են. գայն աւելի որոշ հասկնելու համար յաջորդ երեսը կը ներկայացնենք Ձեռատեարին երեսի գիծերը սեւ մերանով:

Թ. 1-2 սիւնին մէջ կը գրուի Ձեռատեարին յօղումներուն Օրհաշուին քաներո՞րդ երեսը անցած ըլլալուն թիւը, կամ փոխանակ թիւը գրելու՝ Անցար բառը. սակայն թիւը գրելը լուսաբոյն է, զի այդ թիւով անմիջապէս Օրհաշուին նոյն երեսը կը բացուի Թ. 2-3 լայն միջոցին մէջ կը գրուի իւրաքանչիւր գործողութիւն, որ գիծերով և ամսաթիւերով իրարմէ կը զատուի (որոնց Տոմարակալութեան լեզուով Յօդուած կ'ըսուի). գծելով նախ տեար

Ձեռասեւերին երեսի գիծերը

1	2	8	9	3	4	5	6	7
1 նոյեմբեր 1897								

րակին ճակատը 2-3 երկու ուղիղ գիծեր՝ մէջտեղը թ. 8-9 պարագայ թողլով, ուր կը գրուի գործողութեան թուականը, այսինքն, ամսոյն օրը, ամիսը և տարին. տարեթիւը ամէն երեսին սկիզբը կրկնելու է. որովհետեւ եթէ տարեթիւը չգրուի, մէկ քանի տարուան գործողութիւն պարունակող Ձեռասեւերին մէկ երեսը նայուած ատեն՝ նոյն թուականին ո՛ր տարւոյն վերաբերիլը գիտնալու համար նոյն տարւոյն մինչև Յունվար ամիսը երթալու է, տետրակը թղթաւորով: Թ. 3-4 սիւնին մէջ՝ գործողութեան մասնական գումարը (եթէ ունի) լիբր, դշ., ֆրանք, և լին: Թ. 4-5 նեղ սիւնին մէջ՝ գումարին կոտորակը դշ., փր., սանթիմ, և լին: Թ. 5-6 սիւնին մէջ՝ գործողութեան հաւաքական գումարը և Թ. 6-7ին մէջ՝ գումարին կոտորակը:

Երբ Ձեռասեւերին միեւնոյն երեսին մէջ յօդուածի մը յաջորդող յօդուածն իր նախորդին ամսաթիւն ունենայ՝ վերջնոյն համար կրկին թուական գրել հարկ չէ, այլ (թուականի յատուկ տեղը) նոյն բառը գրելու է կամ չակերտ մը (») դնելու է, որ միեւնոյն թուականը կը նշանակէ:

Հստակները որոշ հասկցնելու և Ձեռասեւերին ձեւը և գրութեան կերպը ցուցնելու համար օրինակով բացատրենք:

Օրիակ

98 Մարտ 10 ին ծախեցի կանխիկ Գ. Մինասեանի 100 կպ. կապոյտ մանած թ. $\frac{6}{8}$ գ. 60 դշ.	6000
նոյն օրը գնեցի կանխիկ Ա. Մանուկեանէ 500 կպ. ճերմակ վաթէր (մանած) թ. $\frac{12}{14}$ գ. 40 դշ.	20000
98 Մարտ 12 ին ծախեցի 31 օր պայմանաժամով Կարնեցի Յ. Մրապեանի 50 կպ. ճերմակ վաթէր թ. $\frac{12}{14}$ գ. 43 դշ.	2150
100 » կապոյտ մանած » $\frac{6}{8}$ » 66 »	6600
	<u>8750</u>

Հ Ա Մ Ա Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Ի Ն

10 Մարտ 1898

1	Ծախեցի կանխիկ Գ. Մինասեանի 100 կպ. կապոյտ մանած թ. $\frac{6}{8}$ գ. 60 դշ.	6000
1	Գնեցի կանխիկ Ա. Մանուկեանէ 500 կպ. ճրմկ. վաթեր (մանծ.) թ. $\frac{12}{14}$ գ. 40 դշ.	20000
1	Ծախեցի Կարնեցի Յ. Մրապեանի 31 օրեկ վճարելի 50 կպ. ճրմկ. վաթեր թ. $\frac{12}{14}$ գ. 43 100 » կպոյտ մանած » $\frac{6}{8}$ » 66	2150 6600
		<u>8750</u>
		<u>34750</u>

Այս գործողութիւնները Ձեռասեւերը պիտի անցնենք, անուշտ անոր վրայ պէտք եղած գիծերը քաշելէ ետքը, եթէ Ձեռասեւերը սովորական անգիծ թղթերէ շինուած է: (Տե՛ս վերը):

Շատեր Ձեռասեւերին ամէն յօդուածին սկիզբը ձախ կողմը կարգի թիւ մը կը դնեն, որպէս զի Օրհաշուին մէկ յօդուածին մանրամասնութեան մասին ակնարկութիւն մ'ընել հարկ ըլլայ, նոյն յօդուածին թիւովը Ձեռասեւերին մէջ շուտով գտնուի:

Ձեռասեւերին սահմանը, ձեւը և գրուելու կերպը ցուցնելէ ետքը, կարեւոր է այժմ ուսանողին գիտնալ թէ՛ գործողութիւն մը որ Ձեռասեւերը անցած է, ի՞նչպէս Օրհաշուը կ'անցնի և թէ ի՞նչ է Օրհաշուին ձեւը և ուրիշ մանրամասնութիւնները:

Գ Լ Ի Ա Ի Ո Ր Տ Ե Տ Բ Ա Կ Ն Ե Ր

Օրհաշուի

Օրէնքին պահանջած տետրակներէն մէկն է Օրհաշուը, ուր կ'օրինակուին որոշ, յստակ, բայց քիչ մը համառօտ, Ձեռասեւերին յօդուածները իրենց կարեւոր մանրամասնութեամբ, այսինքն, դնուած և ծախուած ապրանքայ քանակը, տեսակը, գինը, գնողին ու ծախողին անունը, և լին. այնպէս որ, եթէ պատճառով մը Օրհաշուը դատարան ներկայացնել հարկ ըլլայ՝ գործողութիւնը իր բոլոր պարագաներովը հոն գրուած ըլլալով՝ երկրորդական տեսակներուն դիմելու պէտք չ'ըլլայ:

Արդէն գիտենք թէ՛ Օրէնքը չ'ընդունիր Օրհաշուին մէջ քերթուածք կամ արատ, ուստի տոմարակալը Օրհաշուը գրած ատեն ուշադիր ըլլալու է որ սխալ չ'ըլլայ և տեսարակը մաքուր մնայ: Աւելորդ կը համարենք հոս կրկնել Օրէնքին արամադրութիւնները Օրհաշուի մասին:

Այս տեսարին անո՛ր համար Օրհաշուը ըսուած է որ՝ վաճառականին բոլոր գործողութիւնները օրն օրին իրենց թուականի կարգովն իր մէջ կը պարունակէ: Օրհաշուը Ձեռատետրին գրեթէ մաքուր ընդօրինակութիւնն է: Արդարեւ Ձեռատետրին բոլոր յօդուածները Օրհաշու կ'անցնին Այսինչ Այնինչին ձեւի սկզբնաւորութեամբ, զոր բացատրեցինք արդէն Կրկնատոմարի սահմանին աւթիւ:

Բ. Գլխուն մէջ բռինք որ՝ Կրկնատոմարի Օրհաշուին ամէն յօդուածին մէջ Պարտական մը և Պահանջող մը կ'ըլլայ. այդ Պարտական և Պահանջող հաշուց անունները որ, քիչ մ'առաջ ըսուած Այսինչ Այնինչին ձեւով կ'ըլլայ, գլխադրով (չեղագիր կամ բոլորագիր, ոճն) գրելու է յօդուածին միւս մասերէն զատուելու և շուտով աչքի զարնելու համար. Պարտական և Պահանջող անձերու բնակած քաղաքին անունն ալ անոնց քով գրել կարեւոր է, մանաւանդ երբ միեւնոյն անունով և մականունով երկու հաշուներ ըլլան:

Օրհաշուին Ձեւը և Կազմութիւնը

Կրկնատոմարի Օրհաշուին ձեւը նոյնն է, ինչ որ էր Պարգատոմարին մէջ: Օրհաշուին ամէն երեսին վրայ երեսի թիւ դնելու է, որ տեսակ մը վաւերականութիւն կը տա. վասն զի եթէ թիւ գրուած չ'ըլլայ՝ կրնայ ըլլալ որ մէկը գէշ նպատակով այդ տեսարակէն թերթեր հանէ:

Օրհաշուին ամէն երեսին վրայ հետեւեալ գիծերը քաշուած են:

Օրհաշուին երեսի գիծերը

1	(առաջին գիծ)	Փոխադրեալ			7850	10
	15 Հոկտեմբեր 1897					
2		Փոխադրելի			18620	30
			3	3	4	4

Ինչպէս կ'երեւայ, Օրհաշուին իւրաքանչիւր երեսին սկիզբը և ճակատը յօդուածներն իրարմէ զատող և զըջով դժուած երկու

— զիդ գիծերուն մէջտեղը կը գրուի յօդուածին թուականը, այսինքն, ամոյն օրը, ամիսը և տարին: Ամէն երեսին ճակատը գրելու է տարեթիւը, վասն զի քանի մը տարուան գործողութիւն պարունակող Օրհաշուին մէջ, երբ ամէն երեսին վրայ տարեթիւը չէ գրուած, և յօդուածի մը ո՛ր տարւոյն վերաբերիլը գիտնալ ուզենք, նոյն տարւոյն մինչեւ Յունվար ամիսը երթալու է, որպէս չի հոն տեսնուի տարեթիւը: Երբ Օրհաշուին միեւնոյն երեսին մէջ յօդուած մը իր նախորդին ամսաթիւն ունենայ՝ վերջինին մէջ յօդուած կրկին թուական գրելն աւելորդ է, այլ գրելու է նոյն համար կրկին թուական գրելն աւելորդ է, այլ գրելու է նոյն քառը կամ աւելի գործնականը չակերտ մը (») դնելու է, որ միեւնոյն բանը կը նշանակէ: Թ. 1 նեղ սիւնին մէջ՝ յօդուածին Պարտական և Պահանջող հաշուց Մայր-հաշուին քաներո՞րդ երեսը անցած ըլլալը կը գրուի հասարակ կտորակի ձեւով այսպէս $\frac{1}{3}$, եթէ յօդուածին Պարտականն ու Պահանջողը մէկ հաս և մէկ սողի վրայ գրուած են. կամ իւրաքանչիւր հաշուի ճիշդ դիմացը դարձեալ նոյն սիւնին մէջ կը գրուի Մայր-հաշուին երեսի թիւերը, եթէ Պարտականն ու Պահանջողը փոխանակ մէկի՝ երկու սողի վրայ և տակէ տակ գրուած են: Թ. 2 ընդարձակ սիւնին մէջ՝ յօդուածը կը գրուի այնպէս՝ ինչպէս վերջը պիտի ցուցնենք: Թ. 3 լայն սիւնին մէջ՝ գործողութեան մասնական գումարները, լիբա, Ֆրանք, ՂԸ., ևլն., եթէ նոյն յօդուածը քանի մը գումար ունենայ, այս սիւնին մէջ կը գրուի և գումարուելով՝ հաւաքական գումարը կ'անցնի յաջորդ Թ. 4 լայն սիւնին մէջ: Իսկ Թ. 3 նեղ սիւնին մէջ՝ մասնական գումարներուն կտորակները, եթէ ունենան, ինչպէս, ՂԸ. սանթիմ, փր. ևլն., Թ. 4 լայն սիւնին մէջ՝ գործողութեան հաւաքական գումարը կամ առանց մասնակի գումարի՝ մէկ գումարը, եթէ յօդուածը մէկ գումարով է. իսկ Թ. 4 նեղ սիւնին մէջ՝ գումարին կտորակները:

Վերոյիշեալ Թ. 4-4 սիւնեւուն գումարները ամէն երեսին տակը գիծ մը քաշելով գումարելու և գումարին քով Փոխադրելի բառը գրելով յաջորդ երեսը փոխադրելու է. ամէն նոր երեսին վրայ սող մը պարտաւ ձգելով, ուր գրելու է նախորդ երեսին գումարը առջեւը Փոխադրեալ գրելով, ինչպէս կ'երեւայ նախորդ երեսի օրինակին վրայ: Իսկ երբ ամիսը լմննայ և փորձակչիւն ընենք, Օրհաշուին գումարն ընելու է դարձեալ, նոյն իսկ եթէ երեսին սկիզբը կամ մէջտեղն ալ ըլլայ, որպէս զի փորձակչիւն գումարին հետ բազդատուի:

Օրհաշուը խիստ ուշադրութեամբ գումարելու է որ սխալ չ'ըլլայ, զի մէկ երեսին սխալը յաջորդ երեսներուն վրայ ալ երկու անգամ կրկնուելով, մին՝ երեսին վրայի և միւսը՝ երեսին տակի հաւաքական գումարներուն մէջ և սխալը շարունակուելով,

ուղղելու համար քերթել հարկ է, որ, ինչպէս գիտենք, հակառակ է Օրէնքին: Ուստի լաւ կ'ըլլայ որ մինչեւ որ ամսական փորձակչիուն ըլլայ՝ գումարները ամէն երեսին տակը և վրան մատիտով գրուի, կամ ամէն երեսին գումարները զատ թղթի մը վրայ ըլլայ (1) և երբ փորձակչիոք ճիշդ ելնէ՝ ա՛յն ատեն միայն մեղանով ամէն երեսի գումարները իրեն տեղը գրելու և վերջնապէս գումարելու է:

Օրհաշուին այն Պարսական և Պահանջող հաշուոց քով, որք օտար դրամներ կը ներկայացնեն և որոց համար Մայր-հաշուին մէջ այդ դրամներուն համար զատ սիւներ ալ կը բացուին, ինչպէս ըսած ենք ասկէ առաջ, օտար դրամները գրել սովորութիւն է, զորօրինակ, սթէպլինը, ֆրանքը, մարքը, ևլն. յայտնի գիտանք Մայր-հաշու անցընելու ատեն իրենց հաշիւներուն օտար դրամներու սիւներուն մէջ գրուի այդ գումարները, առանց Օրհաշուին մէջ երկարօրէն զանոնք փնտաել պէտք ըլլալու: Ինչպէս որ մենք ալ նոյնը ըրած ենք մեր Օրհաշուին մէջ, սթէպլինի, ֆրանքի, մարքի և ֆիօրինի փոխանակազրոց և Փարիզի Գոէտի Լիօնէի և Մանչէսթըրի Յ. Յակոբեան և Որդիի հաշուոց քով գրելով իրենց յատուկ օտար դրամները:

Ձեռասեղին յօդուածներուն լուծումը

կամ

Ձեռասեղին յօդուածները Կրկնասումարի Օրհաշուի անցնելուն կերպը

Օրհաշուը Ձեռասեղին ընդօրինակութիւնն է ըսինք. ուրիշ կերպով գրուած. հիմա պիտի բացատրենք թէ Ձեռասեղին յօդուածներն ինչպէս Օրհաշու կ'անցնին կամ կ'օրինակուին:

Ասի լաւ ըմբռնելու համար պէտք է յիշել Կրկնասումարի սահմանին վրայ ըսածնիս թէ՛

1. Կրկնասումարի Օրհաշուին ամէն յօդուածին մէջ անպատճառ Պարսական մը և Պահանջող մ'ըլլալու է:
2. Կրկնասումարի տեարակներուն մէջ վաճառականին անունը չի գրուիր (վաճառականին անունովը հաշիւ չի բացուիր), այլ անոր տեղ կը գործածուին ուրիշ հաշիւներ:

[1] Ինչպէս որ մենք ալ այնպէս ըրած ենք փորձակչիոց բացատրութեան ստի՛ւ, ուր նախաձեռն ենք գրի վրայ Օրհաշուին չորս երեսին գումարները գրելու:

Աւրեմն Ձեռասեղին յօդուած մը Օրհաշու անցնելը՝ նոյն յօդուածին Պարսական և Պահանջող հաշիւները գտնալ և գրել ըսել է-բայց թէ ինչպէս գտնալու և գրելու է, պիտի ջանանք մանրամասնօրէն և յստակօրէն բացատրել, պարզելով միանգամայն Կրկնասումարի զանազան դժուար և կնճռոտ մասերը, օրինակներով և զանոնք Օրհաշուին անցընելով:

Ձեռասեղին յօդուածները Օրհաշուի յօդուածի կը փոխարկուին՝ անոնց Պարսական և Պահանջող հաշուոց անունները գրելով: Յայտնի է թէ հաշիւներ ըսածնիս անոնք են, զորս ասկէ առաջ Յոլանդ և Մասնաւոր անուններով թուեցինք և բացատրեցինք:

Ձեռասեղին յօդուածներն երկու տեսակ են. Պարզ յօդուած և Բաղադրեալ յօդուած:

Պարզ յօդուածն այն է, որուն մէջ Պարսականը և Պահանջողը մէկ հատ է. իսկ Բաղադրեալ յօդուածն այն է, որուն մէջ Պարսականը և Պահանջողը և կամ երկուքն ալ միանգամայն մէկէ ասելի են:

Յօդուածի մը Պարսական և Պահանջող հաշիւները զիւրու գտնալու և Օրհաշու անցընելու համար, նախ յօդուածը լաւ կարգով և գործողութիւնը հասկնալէ ետքը՝ հետեւեալ երկու հարցումները ընելու է. որք Կրկնասումարի Օրէնքն են:

1. Հարցումն. Ո՞ր հաշիւը առաւ
2. Հարցումն. Ո՞ր հաշիւը տուաւ

Առաջին հարցման պատասխանն է Պարսական հաշիւը, և երկրորդին պատասխանը՝ Պահանջող հաշիւը: Այս կէտերը լաւ ըմբռնելէ ետքը՝ դժուար չէ այլեւս Ձեռասեղին յօդուածները Օրհաշու անցընելը:

Կրկնասումարի սեղանները սկսիլ

վաճառականին տեարակները բանալ կամ սկսիլը Տանարա-կալութեան առաջին գործողութիւնը ըլլալով՝ մենք ալ բնականաբար առաջին անգամ անոր վրայ պիտի խօսինք:

վաճառականութեան սկսելով իրրեւ դրամագլուխ գրինք 2000 Լ. Օ. կանխիկ գրամ և տեարակներնիս Կրկնասումարով գրել կ'ուզենք:

Ձեռասեղին առաջին յօդուածը մեր դրամ 2000 Լ. դրամագլուխը կը յայտնէ, զոր Օրհաշու անցընելու համար կ'ըսենք.

1. Հարցումն. Ո՞ր հաշիւը առաւ Պասասխան. Սննուկ. (որովհետեւ Սնտուկը գրամ մտաւ)
2. Հարցումն. Ո՞ր հաշիւը տուաւ Պասասխան. Գրամագլուխ (1). (վաճառականին անունին տեղ) Հետեւաբար Օրհաշուը կ'սկսինք հետեւեալ առաջին յօդուածով

[1] Տե՛ս թ. 348 Գրամագլուխի նաւու ին բացատրութիւնը: 46

Սնունկ Գրամագլխին

Գրած գրամագլուխս 2000 Լ. 0. 200000

Կրնայ ըլլալ որ մէկը վաճառականութեան սկսելով իրրեւ գրամագլուխ կանխիկ գրամէ զաս, ապրանք, գանձելի թղթեր և զանազաններէ պահանջք ունենայ. օրինակի համար, ունենայ

Պատրաստ գրամ	100000
Չանագան ապրանքներ	80000
Գանձելի ստմաններ Յիկտոր ընդամէնը	70000
	<u>250000</u>

Այս պարագային՝ Օրհաշիւը սկսելու համար կ'ըսենք

1. Հարցումն. Ո՞ր հաշիւը առաւ

Պատասխան. Սնունկ (որովհետեւ Մնտուկը 100000 զշ. մտաւ) Ընդհանուր ապրանք (որովհետեւ վաճառատունը 80000 զշ. ի ապրանք մտաւ) և Գանձելի Տոմսակի (որովհետեւ թղթապանակը 70000 զշ. ի ստմանակ մտաւ):

2. Հարցումն. Ո՞ր հաշիւը տուաւ

Պատասխան. Գրամագլուխ

Հետեւաբար Օրհաշիւնիս կ'սկսինք հետեւեալ առաջին յօդուածով

Չանագանք (*) Գրամագլխին

Վաճառականութեան սկսելու համար գրած գրամագլուխս

Սնունկ	100000
Կանխիկ գրամ	
Ընդհ. ապրանք	80000
(Հոս գրելու է ապրանքներուն մանրամասնութիւնը)	
Գանձելի տոմսակի	70000
(Հոս գրելու է տոմսակներուն մանրամասնութիւնը)	
	<u>250000</u>

Չեռաստեղծին պարզ յօդուածները

1. Գնեցի Յակոբ Նշանեանէ 1000 զշ ի ապրանք, վճարելի 21 օրէն:

Լուծումն

1. Հարցումն. Ո՞ր հաշիւը առաւ

Պատասխան. Ընդհ. ապրանքի հաշիւը (որովհետեւ վաճառատունն ապրանք մտաւ):

2. Հարցումն. Ո՞ր հաշիւը տուաւ

Պատասխան. Յակոբ Նշանեան (որովհետեւ ապրանք տուաւ, բայց փոխարէն բան մը չառաւ):

[1] Այս յօդուածը Բաղարեայ է, զի Պարսկական հաշիւները մէկէ աւելի են, որոց վրայ վերջը պիտի խօսինք:

Ուրեմն Օրհաշիւը կը գրենք

Ընդհ. ապրանք Յակոբ Նշանեանի (*)

Յիւլիանի գնած ապրանքս, վճարելի 21 օրէն 1000

2. Երեսօրեայ Գրիգոր Սիմօնեանի 1000 զշ ի ապրանք, վճարելի 31 օրէն:

Լուծումն

1. Հարցումն. Ո՞ր հաշիւը առաւ

Պատասխան. Գրիգոր Սիմօնեան. (որովհետեւ ապրանքն առաւ և փոխարէն բան մը չտուաւ):

2. Հարցումն. Ո՞ր հաշիւը տուաւ

Պատասխան. Ընդհ. ապրանք, (որովհետեւ վաճառատունն ապրանք ելաւ):

Ուրեմն Օրհաշիւը կը գրենք

Գրիգոր Սիմօնեան Ընդհ. ապրանքին

Իրեն ձախած ապրանքս, վճարելի 31 օրէն 1000

3. Գնեցի կանխիկ Մ. Թօգաբեանէ 2000 զշ. ի ապրանք:

Լուծումն

1. Հարցումն. Ո՞ր հաշիւը առաւ

Պատասխան. Ընդհ. ապրանք (որովհետեւ վաճառատունն ապրանք մտաւ):

2. Հարցումն. Ո՞ր հաշիւը տուաւ

Պատասխան. Սնունկ. (որովհետեւ Մնտուկէն գրամ ելաւ)

Ուրեմն Օրհաշիւը կը գրենք

Ընդհ. ապրանք Սնունկին

Մ. Թօգաբեանէ գնած ապրանքս 2000

Նորավարժը առաջին անգամ այս տեսակ յօդուածի պատահած տան կը սխալի, և վերի յօդուածին համար Ընդհ. ապրանքը Մ. Թօգաբեանի Պարսկական կ'ընէ, վասն զի, կ'ըսէ, ապրանքը անկէ առինք. սակայն գրամն ալ միեւնոյն տանն առինք. ըսել է կանխիկ առինք. այսինքն, վաճառատունը թէեւ ապրանք մտաւ, բայց Մնտուկէն ալ գրամ ելաւ. հետեւաբար ուղիղ ըլլալու համար պիտի ըսենք

Ընդհ. ապրանք Սնունկին

Այսպէս Օրհաշիւ անցընելու է կանխիկ գրամով գնման գործադրութիւնները, առանց Պահանջող ընելու այն անձը, որով գնուած է ապրանքը:

[1] Պարսկական եւ Պահանջող հաշիւները Օրհաշիւին մէջ սմանք այսպէս լոյս տալիս եւ սմանք մէկ սովին վրայ Պարսկական եւ միւսին վրայ Պահանջողը կը գրենք:

1. Ծախեցի կանխիկ ն. Սեպուհեանի 5000 դ2-ի ապրանք:

Լուծումն

1. Հարցումն. Ո՞ր հաշիւը առաւ

Պատասխան. Սնունկ (որովհետեւ Սնունկը գրամ մտաւ)

2. Հարցումն. Ո՞ր հաշիւը սուաւ

Պատասխան. Ընդհ. ապրանք (որովհետեւ վաճառատունէն ապրանք ելաւ)

Ուրեմն Օրհաշիւը կը գրենք

Սնունկ Ընդհ. ապրանքին

ն. Սեպուհեանի կանխիկ ծախած ապրանքն 5000

Նախորդ օրինակին պէս՝ հոս ալ նորաժարժք սխալելով ն. Սեպուհեանը Ընդհ. ապրանքին Պարտական կ'ընէ. վասն զի, կ'ըսէ, ապրանքը անոր սուինք, սակայն գրամն ալ միեւնոյն առեն առինք. բսել է կանխիկ ծախեցինք. այսինքն, վաճառատունէն թէեւ ապրանք ելաւ, բայց Սնունկը գրամ մտաւ, հետեւաբար ուղիղ ըլլալու համար պիտի ըսենք

Սնունկ Ընդհ. ապրանքին

Այսպէս Օրհաշիւ անցընելու է կանխիկ վաճառման գործողութիւնները, առանց Պարտական ընելու այն անձը, որուն ծախուած է ապրանքը:

Վերջի երկու օրինակներէն կը հետեւեցնենք հետեւեալ ընդհանուր կանոնը.

« Գնման և վաճառման գործողութեանց մէջ՝ երբ վճարումը « և գանձումը միեւնոյն առեն կ'ըլլայ, Պահանջող ընելու չէ ապրանքը ծախողը և ո՛չ ալ Պարտական ընել ապրանքը գնողը, « որովհետեւ միեւնոյն առեն գրամները արուած և առնուած են՝ « այլ Պահանջող և Պարտական ընելու է այն գլխաւոր հաշիւները, որք այդ գործողութեանց մէջ բան մը տուած և աւած վիճակն » . ինչպէս ըրինք վերի օրինակներուն մէջ (1) :

Ձեռասեռին բաղադրեալ յոյուածները

Ծախեցի եօրկի Պալիին 8000 դ2-ի ապրանք. 3000ը կանխիկ վճարեց եւ 5000 ին համար 31|օր իմ|ս իր սոմսակը սուաւ .

Լուծումն

Նախ Ընդհ. ապրանքը Պահանջող կ'ընենք 8000ին համար. զի այդչափի ապրանքն սխալեցաւ, ետքը եօրկի Պալիի տուած-

[1] Թ. 369 եւ յաջորդ երեսներուն մէջ առանձինն օրինակներով խօսած ենք ապրանքի կանխիկ եւ ապառիկ գնման եւ վաճառման գործողութեանց ինչ կերպով Օրհաշիւն անցնելու մասին:

ներուն համար Պարտական կ'ընենք Սնունկը՝ առնուած 3000ի դրամին համար և Գանձ. տոմսակը առնուած 5000ի տոմսակին համար. բսել է երկու Պարտական ունինք, որոց համար Օրհաշուին մէջ նախ կը գրուի հաւաքապէս Չանագանք և ետքը Չանագանքերը կարգաւ կը գրուին այսպէս.

Չանագանք Ընդհանուր ապրանքին
Եօրկի Պալիի ծախած ապրանքն եւ իր վճարումը
(Հոս գրելու է ծախուած ապրանքին մանրամասնութիւնը)

Սնունկ

Առած կանխիկ գրամն	3000
Գանձելի տոմսակի	5000
Իմ/հ. իր տոմսակը 31/օր	8000

Գնեցի Բարսեղ Սամազօլլուեանէ 250 Լ.ի ամերիբան. 100ը կանխիկ վճարեցի եւ 150ին համար ի|ս. 41|օր իմ տոմսակ սուի:

Լուծումն

Ասի նախորդին հակառակն է. հոս Ընդհանուր ապրանքը Պարտական պիտի ընենք 250 Լ.ին համար, զի այդչափի ապրանքն սուաւ. փոխարէն սուինք. 1. 100 Լ. կանխիկ գրամ, որուն համար Սնունկը Պահանջող կ'ընենք. 2. Հրամանի տոմսակ մը, որուն համար ալ վճարելի տոմսակը Պահանջող կ'ընենք. բսել է երկու Պահանջող ունինք, որոց համար Օրհաշուին մէջ նախ կը գրուի հաւաքապէս Չանագանք և ետքը Չանագանքերը կարգաւ կը գրուին այսպէս.

Ընդհ. ապրանքի Չանագանք

Բարսեղ Սամազօլլուեանէ գնած 250 Լ.ի ամերիբանիս համար գոր վճարեցի այսպէս

Սնունկին

Վճարած կանխիկ գրամն	10000
Վճարելի տոմսակաց	15000
Ի/հ. իմ տոմսակն 41/օր	25000

Հետեւեալներուն սուի հետեւեալները

Պօղոս Սահակեանի, կանխիկ գրամ	2500
Յակօր Մինասեանի, փոխանակագիր մը 11/օր	4500
Գրիգոր Թորիկեանի. ի/հ. իմ տոմսակն 61/օր.	3000
	10000

Լուծումն

Այս յօդուածին Պարտականները և Պահանջողները մէկէ աւելի,

այսինքն երեք հատ են, զորս Օրհաշիւ անցընելու համար կը- սենք Չանագանի Չանագանաց և ետքը նախ Պարսականները և ետքը Պահանջողները կարգաւ կը գրենք:

Չանագաններու տուեր ենք կանխիկ դրամ, գանձելի տու- սակ մը և վճարելի տոմսակ մը. ուրեմն Պահանջող կընենք 1. Սնուկը. 2. Գանձելի տոմսակը. 3. Վճարելի տոմսակը. զի այս երեք հաշիւները տուեր են. իսկ Պողոս, Յակոբ և Գրիգոր, որք այդ արժէնիւթերն տուեր են, Պարսական կընենք և կը գրենք Օրհաշիւը այսպէս,

Չանագանի և Չանագանաց

Հետեւեալներուն տուածներս

Պողոս Սահակեան	
Տուած կանխիկ դրամս	2500
Յակոբ Միմասեան	
Տուած փոխանակագիրս 11/օր	4500
Գրիգոր Թորիկեան	
Տուած տոմսակս ի/հ. 61/օր.	3000
	<u>10000</u>

Սնուկին

Պողոսին տուած դրամս	2500
Գանձելի տոմսակաց	
Յակոբին տուած փոխանակագիրս 11/օր	4500
Վճարելի տոմսակաց	
Գրիգորին տուած տոմսակս 61/օր.	3000
	<u>10000</u>

Պէտք է գիտնալ թէ՛ 10000ը միայն մէկ անգամ պիտի անցնի Օրհաշուին հաւաքական գումարի սիւնը:

Ուսանողք քիչ վերջը մեր պատրաստելիք Չեռատեարին յօդուածները Օրհաշիւն անցընելու մէջ շատ դժուարութիւն չկրելու համար, կարելոր համարեցինք գործնականի մէջ պատա- հած գործողութիւններու օրինակներ մէջ բերել և դանտք լու- ծելով Օրհաշիւը անցընել: Հետեւաբար ուշադիր ուսանողք երբ այդ օրինակներուն լուծումը լու ուսումնասիրէ, այլեւս դիւրին կըլայ իրեն լուծել նմանօրինակ ուրիշ խնդիրներ կամ յօդ- ուածներ:

Կանխիկ դրամով ապրանք գնել. — Երբ կանխիկ դրամով ապրանք գնենք, առնուած ապրանքին արժէքին համար Ընդհ. ապրանքը Պարսական և վճարուած դրամին համար Սնուկը Պահանջող ընելու է:

Հետեւաբար կանխիկ դրամով ապրանք գնած ատեննիս Օր- հաշիւը գրելու է

Ընդհ. ապրանքի Սնուկին

(Հոս գրելու է գնուած ապրանքին մանրամասնութիւնը)

Ապառիկ ապրանք գնել. — Երբ Ապառիկ ապրանք գնենք և փոխարէն բան մը շառնք, առնուած ապրանքին արժէքին համար Ընդհ. ապրանքը Պարսական. իսկ ապրանքը ծախողը, օրինակի համար, Մ. Սիմօնեան, որ դեռ բան մը առած չէ, Պահանջող ընելու է:

Հետեւաբար ապառիկ ապրանք գնած ատեննիս Օրհաշիւը գրելու է

Ընդհ. ապրանքի Մ. Սիմօնեանի

(Հոս գրելու է գնուած ապրանքին մանրամասնութիւնը)

Կանխիկ դրամով ապրանք ծախել. — Երբ կանխիկ դրամով ապրանք ծախենք, ծախուած ապրանքին արժէքին համար Ընդհ. ապրանքը Պահանջող, և առնուած դրամին համար Սնուկը Պար- սական ընելու է:

Հետեւաբար կանխիկ դրամով ապրանք ծախած ատեննիս Օրհաշիւը գրելու է

Սնուկ և Ընդհ. ապրանքին

(Հոս գրելու է ծախուած ապրանքին մանրամասնութիւնը)

Ապառիկ ապրանք ծախել. — Երբ Ապառիկ ապրանք ծա- փենք և փոխարէն բան մը շառնենք, ծախուած ապրանքին հա- մար Ընդհ. ապրանքը Պահանջող. իսկ ապրանքը առնողը, օրի- նակի համար, Գ. Յակոբեանը, որ բան մը տուած չէ, Պարսա- կան ընելու է:

Հետեւաբար ապառիկ ապրանք ծախած ատեննիս Օրհա- շիւը գրելու է

Գ. Յակոբեան և Ընդհ. ապրանքին

(Հոս գրելու է ծախուած ապրանքին մանրամասնութիւնը)

Գանձումն. — Գանձումը երկու կերպ կ'ըլլայ .

1. Արտուած պայմանաժամին (31.61.91.121 ևլն. օրէն) կը գանձէ հաշուեցոյցին գումարը .

2. Ապրանք առնողը կամ վաճառականին հրամանին՝ 31.61.91 ևլն. օրէն վճարելի իր տոմսակը կը տայ, կամ ուրիշներու ստորագրութեամբ իր թղթապանակի գանձելի թղթերէն կը տայ, զանոնք վաճառականին հրամանին փոխանցելով :

1. Երբ մէկը որոշեալ պայմանաժամին իր հաշուեցոյցին գումարը կանխիկ դրամով գանձէ, առած դրամին համար Սնտուկը Պարտական և դրամը վճարողին հաշիւը, օրինակի համար, Յալոյ Սրապեանը Պահանջող կ'ընէ :

Հետեւաբար կանխիկ դրամով գանձումներու համար Օրհաշիւը գրելու է

Սնտուկ Յալոյ Սրապեանի

Գանձում յիշեալին քուական հաշուեցոյցին գումարը

2. Երբ մէկը իր պահանջքը գանձելի տոմսակով ստանայ՝ առած տոմսակին համար Գանձելի տոմսակը Պարտական և տոմսակը տուող յաճախողին հաշիւն ալ, օրինակի համար, Միևաս Եղիազարեանը Պահանջող կ'ընէ :

Հետեւաբար տոմսակով գանձումներու համար Օրհաշիւը գրելու է

Գանձելի տոմսակի Միևաս Եղիազարեանի

Յիշեալին առած իմ/ն. իր տոմսակը 61/or.

Վճարումն. — Գանձումին պէս վճարումն ալ քանի մը կերպ կ'ըլլայ, որոց վրայ ընդարձակօրէն խօսած ենք Ա. Մասին մէջ : (Տե՛ս թ. 42) :

- 1. Վճարումն կանխիկ դրամով
- 2. " " վաճառականին ստորագրութեամբ թղթով
- 3. " " " փոխանցումովը ուրիշին տոմսակովը կամ փոխանակագրովը .

1. Երբ մէկը կանխիկ դրամով վճարում ընէ, Պարտական ընելու է այն անձը, օրինակի համար, Կ. Սահակեանը, որ այդ դրամը կ'առնէ և Պահանջող Սնտուկը՝ որ այդ դրամը կը տայ :

Հետեւաբար կանխիկ դրամով վճարումներու համար Օրհաշիւը գրելու է

Կ. Սահակեան Սնտուկին

Վճարում յիշեալին պահանջի

2. Երբ մէկը իր պարտքին համար իր ստորագրութեամբն և իր պահանջատիրոջ հրամանին տոմսակ տայ, Պարտական ընելու է

այն անձը, օրինակի համար, Ա. Սիմոնեանը, որ այդ տոմսակը կ'առնէ և Վճարելի տոմսակը, որ այդ տոմսակը տուաւ, Պահանջող :
Հետեւաբար վճարելի տոմսակով վճարումներու համար Օրհաշիւը գրելու է

Ա. Սիմոնեան Վճարելի տոմսակաց

Յիշեալին տուած տոմսակ ի/ն. 91/or.

3. Երբ մէկը իր պարտքին համար երրորդի մը ստորագրութեամբ և իր փոխանցումովը ուրիշին տոմսակը կամ փոխանակագիրը տայ, քարձեալ Պարտական ընելու է այն անձը, օրինակի համար, Մ. Գեորգեանը, որ այդ տոմսակը կ'առնէ և Գանձելի տոմսակը, որ այդ տոմսակը կը տայ՝ Պահանջող ընէ :

Հետեւաբար գանձելի տոմսակով վճարումներու համար Օրհաշիւը գրելու է

Մ. Գեորգեան Գանձելի տոմսակաց

Յիշեալին տուի պարտիս փոխարէն Յ. Մրավեանի 41/or. տոմսակը

Գանձումն Գանձելի տոմսակաց եւ Վճարումն Վճարելի տոմսակաց. — Երբ մէկէն գանձելի տոմսակ մը գանձենք, Պահանջող ընելու չէ դրամը վճարողը, որովհետեւ այդ մարդուն տուինք համարժէք թուղթ մը, որուն գումարը ստացանք իրմէ . Հետեւաբար Գանձելի տոմսակը՝ որ այդ թուղթը տուաւ, Պահանջող ընելու է և Սնտուկը՝ որ այդ դրամն առաւ, Պարտական :

Գանձելի Յ. Տիսիգեանի 220 Լ.ի փոխանակագիրը

(Տե՛ս մեր Ձեռատետրին թ. 191 յօդուածը)

Աւրեմն Օրհաշիւը կը գրենք

Սնտուկ Գանձելի տոմսակաց

Գանձելի Յ. Տիսիգեանի 220 Լ.ի փոխանակագիրը 22000

Նոյնպէս երբ մէկուն վճարելի տոմսակ մը վճարենք, Պարտական ընելու չէ դրամն առնողը, որովհետեւ այդ մարդը մեզի տուաւ համարժէք թուղթ մը, որուն գումարն առաւ մեզմէ . Հետեւաբար Վճարելի տոմսակը՝ որ այդ թուղթն առաւ, Պարտական ընելու է և Սնտուկը՝ որ այդ դրամը տուաւ, Պահանջող :

Վճարելի Ֆօթիատի Ֆրէրի հրամանին 100 Լ.ի տոմսակ

(Տե՛ս մեր Ձեռատետրին թ. 193 յօդուածը)

Աւրեմն Օրհաշիւը կը գրենք

Վճարելի տոմսակի Սնտուկին

Վճարելի Ֆօթիատի Ֆրէրի հրամանին 100 Լ.ի տոմսակ 10000

Ապրանքի գեղջի օրինակ. — Չեղչին ի՛նչ ըլլալը բացատրած ենք Ա. մասին մէջ. հիմա պիտի խօսինք Տոմարակալութեան մէջ գեղջի վերաբերեալ յօդուածներուն վրայ:

Մէկէ մը ունեցած առնելիքնիս ըստ պայմանի 0/0 այսչափ գեղչով կը գանձենք, որուն Չեղչով գանձումն կ'ըսուի. կամ մէկուն ունեցած պարտքերնիս 0/0 այսչափ գեղչով կը վճարենք, որուն Չեղչով վճարումն կ'ըսուի:

Չեղչով գանձման օրինակ

Կիւմիւշճեան Եղբարք 0/0 2 գեղչով վճարեցին իրենց	19000 ի պարտքը
Վճարածնին	18620
Ըրած 0/0 2 գեղչերնին	380
	<u>19000</u>

Այս յօդուածը Օրհաշիւ անցընելու համար Պահանջող ընելու է Կիւմիւշճեան Եղբարց հաշիւը 19000 ի համար. զի ապրանքը առած առեւնին արդէն նոյնչափի համար Պարտական եղած էին, որով իրենց պարտքը ամբողջ վճարած եղան. Պարտական ընելու է Սնտուկը՝ առնուած 18620 ին համար, իսկ 380 ի գեղչին համար՝ որ մեզի համար վաս մ'է, և որով Կիւմիւշճեան Եղբարց հաշիւը պիտի գոցուի, Պարտական ընելու է Շահ և Վնասը: (1)

Հետեւաբար Օրհաշիւը կը գրենք

Զանազան Կիւմիւշճեան Եղբարց

Պարտքերնին վճարեցին հետեւեալ կերպով

Սնտուկ

Կանխիկ վճարածնին

18620

Շահ եւ Վնաս

380

Ըրած 0/0 2 գեղչերնին

19000

Զեղչով վնարման օրինակ. — Վճարեցի 0/0 5 գեղչելով Բարսեղ Ստամպոլուեանի ունեցած 16000 ի պարտքս.

Կանխիկ վճարածս

15200

Վար գրած գեղչս 0/0 5

800

16000

[1] Կամ Տոկոս եւ Չեղչի հաշիւը, եթէ, իբր ստորաբաժանումն Շահ եւ Վնասի, այդ առումով հաշիւ բացում ըլլայ. թէ՛ս թ. 337 Շահ եւ Վնասի եւ իբր ստորաբաժանմանց վրայ գրուածը:

Այս յօդուածը Օրհաշիւ անցընելու համար Պարտական ընելու է Բարսեղ Ստամպոլուեանի հաշիւը 16000 ի համար. թէ՛եւ նոյնչափ գումար չ'առաւ, բայց ըրած գեղչս այ հաշուելով՝ պէտք է գոցել իր հաշիւը, որ նոյնչափ գումարի համար արդէն Պահանջող կ'երեւայ մեր տեսարակին մէջ. իսկ Պահանջող ընելու է Սնտուկը՝ վճարուած 15200 ին համար, և Շահ և Վնասը 800 ի գեղչին համար, որ շահ է մեզ համար:

Հետեւաբար Օրհաշիւը կը գրենք

Բարսեղ Ստամպոլուեանի Զանազանաց

վճարեցի յիշեալին ունեցած պարտս

Սնտուկին

15200

Կանխիկ վճարածս

Շահ եւ Վնասին

800

Վար գրած գեղչս 0/0 5

16000

Վաճառումն վաճառելի կամ գանձելի բոլոր կամ Թուրք գեղջի սալ. — Ա. մասին մէջ խօսած ենք Թուրք գեղջելու և Թուրք գեղջելի տարբեր վրայ. հստակ խօսինք այդ տեսակ գործողութիւնները ի՛նչ կերպով կ'ընդհատուի Օրհաշիւն անցընելուն վրայ:

Զեղչել սուի 0/0 12 ով Բըրբըճեան Զրուանձաւանցին Առաքել Խոշեանի 150 Լ. ի ստմակը, առի կանխիկ դրամ 220

14780

Զեղչ 12 0/0 44 օրուան համար

15000

(Տե՛ս մեր Զեռատարին թ. 57 յօդուածը)

Այս յօդուածը Օրհաշիւ անցընելու համար Պարտական ընելու է Ստամպոլուեանի 14780 ի կանխիկ դրամնու համար, և Շահ և Վնասը կամ Տոկոս և Չեղչը՝ 220 ի գեղչին համար, որ վաս մ'է մեզի համար. իսկ Պահանջող Գանձելի տեսակը՝ թղթապանակէն ելած 150 Լ. ի ստմակին համար:

Հետեւաբար Օրհաշիւը կը գրենք

Զանազան Գանձելի տեսակաց

Զեղչել սուի Առաքել Խոշեանի 150 իրալի տեսակը

Սնտուկ

14780

Առած կանխիկ դրամս

Շահ եւ Վնաս

220

Տուած գեղչս 44 օրուան 0/0 12

15000

Գնումն վանաւելի կամ գանձելի բոլոր կամ Թուրք զեղչել . —
 Զեղչեցի Յակոբ Գաղաղեանէ Պէնպաստի բրէզէնթէի Ապրիլ
 21ին վճարելի 50 լիբայի փոխանակագիրը
 Կանխիկ վճարածս 4898
 Վար դրած զեղչս 61 օրուան % 12 102
 5000

(Տե՛ս մեր Զեռաստորին թ. 106 յօդուածը)

Այս յօդուածը Օրհաշիւ անցընելու համար Պարտական ընելու է
 Գանձելի տոնակիր՝ թղթապանակը մտած 5000ի տոնակիրն համար :
 Իսկ Պահանջող ընելու է Սեռուկը՝ վճարուած 4898 զչ.ին համար
 և Շահ և Վնասը կամ Տոկոս և Զեղչը՝ վար գրուած 102 զեղչին
 համար , որ մեզի համար շահ մ'է :

Հեռուարար Օրհաշիւը կը գրենք

Գանձելի տոնակի Զանազանագ
 Զեղչեցի Պենպաստ բրէզէնթի 50 լ.ի փոխանակագիրը

Սնուկին 4898
 Կանխիկ վճարածս
 Շահ և Վնասին
 Վար դրած զեղչս % 2 102
 5000

Թուղթ զեղչելու և զեղչել տալու գործողութիւնք ընդհան-
 րապէս այսպէս կ'անցընեն Օրհաշիւ անոնք . որք թուղթ շատ չեն
 զեղչեր կամ զեղչել չեն տար :

Այս կերպը՝ այսինքն . ամէն գործողութեան շահուն (առնուած
 զեղչին) կամ մնասին (տրուած զեղչին) համար Շահ և Վնասը
 Պարտական և Պահանջող ընելը շատ երկար ըլլալուն, չի յարմարիր
 անոնց , որք թուղթ շատ կը զեղչեն կամ զեղչել կը տան : Ուստի
 զեղչի այս գործողութիւնները Օրհաշիւ անցընելու աւելի կարճ
 կերպ մը կայ : Այն է՝ վաճառականին ուրիշներէ զեղչած թղթերուն
 զուտ գումարին համար Գանձելի տոնակիր Պարտական, և օրին
 գանձուածներուն ինչպէս նաև ուրիշներու զեղչել տուած թղթե-
 րուն զուտ գումարին համար Պահանջող կ'ընեն , առանց հաշուի
 անցընելու առած և տուած զեղչերին . ճիշդ այնպէս՝ ինչպէս
 կ'ըլլայ Ընդհ. ապրանքին համար, այսինքն , առնուած գնոյն չափ
 Պարտական և ծախուած գնոյն չափ Պահանջող ընել :

Տարեգլխուն հաշիւ տեսնուած առեն , երբ թղթապանակի
 բոլոր թղթերը գանձուած կամ ծախուած են , Գանձ. տոնակիր
 հաշիւին Պահանջին գումարը (ուր տարուած են զեղչել արուած և
 օրին գանձուած թղթոց գումարը) Պարտին գումարին (ուր տար-
 ուած զեղչուած թղթոց գումարը) վրայ ունեցած առաւե
 լութիւնը՝ տարուոյն մէջ այս հաշիւէն եղած զուտ շահը կը ցու-
 ցընէ , ինչպէս կ'երեւայ յաջորդ երեսի օրինակին վրայ :

Պարտի

ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿԷ

Պահանջէ

1897	9	Զեղչ. քրքեր	4800	1897	15	Զղչ.սրժ.քրքեր	4750
Զկսմ.	26	" "	19200	"	30	" " "	19000
Նոյմ.	5	" "	24000	Նոյմ.	2	Գանձուած	26000
			48000				
		Կեիւ . շահ	1750				
			49750				49750

Այս հաշիւին Պարտին 48000ը՝ մեր այլեւայլներէ զեղչած
 թղթոց համար վճարած զուտ գումարնիս է . իսկ Պահանջին
 49750ը՝ օրին գանձուած և մեր ուրիշներու զեղչել տուած թղթ-
 օց զուտ գումարն է . ենթադրելով որ հաշիւ տեսած առենինս
 թղթապանակին գանձելի թուղթ չկար . Հեռուարար , ինչպէս
 վերը ըսինք , այս հաշիւին Պահանջին 49750ի գումարին՝ Պարտ-
 ին 48000ի գումարին վրայ ունեցած 1750ի առաւելութիւնը՝ այս
 հաշիւին զուտ շահը կը ցուցնէ , զոր կը տանք Շահ և Վնասին ,
 գրելով Օրհաշիւը

Գանձելի տոնակի Գանձելի 1750

որով Գանձելի տոնակի հաշիւը կը գոցուի , քանի որ թղթա-
 պանակինս ալ թուղթ չունինք ըսինք :

Իսկ ընդհանրապէս , Գանձելի տոնակին Պարտին գումարին՝
 Պահանջին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ այդ
 հաշուէն եղած մնասը կը ցուցնէ . օրինակի համար Գանձելի տո-
 նակի հաշիւին Պարտին գումարն է 50000 և Պահանջինը՝ 49000 .
 (դարձեալ ենթադրելով որ հաշիւ տեսած առենինս թղթապա-
 նակինս գանձելի թուղթ չկար) ըսել է որ մեզի 50000 արժած
 թղթերը 49000ի ծախսը կամ գանձեր ենք , ուրիշ 1000ի մնաս
 մ'եղեր է , զոր պէտք է առժէ Շահ և Վնասը , որուն համար
 Օրհաշիւը կը գրենք այսպէս

Շահ և Վնաս Գանձելի տոնակաց 1000

որով դարձեալ կը գոցուի Գանձելի տոնակի հաշիւը , քանի որ
 թղթապանակինս ալ թուղթ չունինք ենթադրեցինք :

Կարելոր կէտ մը կայ , զոր բացատրել անհրաժեշտ է , այսինքն ,
 թէ՛ եթէ Գանձելի տոնակի հաշիւը վերը ցոյց տրուած եղանա-
 կով գրուի , այդ հաշիւին վրայ նայած առենինս չենք կրնար
 գիտնալ թէ՛ թղթապանակինս ո՞րչափ գանձելի թուղթ ունինք .
 որովհետեւ Պարտին և Պահանջին գումարները զեղչուած և զեղ-

չել արուած թղթոց Անգղոս գումարները չեն ներկայացներ, որ իրարմէ հանելով թղթապանակին պատրաստը գտնանք, այլ զուս գումարները կը ցուցնեն (այսինքն, իւրաքանչիւր թղթին գումարէն՝ առնուած և արուած զեղչերը վար իջնալով գրուած են) հետեւարար երբ զեղչի գործողութիւնները այս երկրորդ կերպով

Պարսի ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄԱԱԿԲ Պահանջէ

Պարսի	Պահանջէ	Պարսի	Պահանջէ	Պարսի	Պահանջէ	Պարսի	Պահանջէ
1897 Սեպտ. 5	Զեղչուած քրքեր	Չուս գումար	Չուս գումար	1897 Հիւսիս. 2	Չուս գումար	Չուս գումար	Չուս գումար
" " 12	"	5000	10000	" " 10	4800	10000	9800
" " 28	"	20000	20000	" " 20	19500	20000	19500
	"	45000	5000	Նոյմբ. 15	43700	5000	5000
			15000			15000	15000
Նոյմբ. 30	Չուս ամի	70000	50000	Նոյմբ. 30	68000	49300	49300
			20000		1300	20000	20000
1897 Փետր. 1	Պարսուս քրքեր	70000	70000		69300	70000	69300
			20000				

անցնել և վերի անպատեհութիւնը բառնալ ուղենք, (այսինքն, կաբնանք ամէն ատեն գիտնալ թղթապանակին պատրաստ թղթոց քանակութիւնը) . այն ատեն Մայր-հաշուին մէջ Գանձեղի տունակի հաշիւին գումարի սովորական սիւներէն զատ, Պարսիին և Պահանջիին կողմը մէկմէկ սիւն եւս գծելու է . ուր պէտք է գրել զեղչուած և զեղչել արուած և վճարորին գանձուած թղթոց անուանական կամ Անգղոս գումարները, այսինքն, բուն իսկ թղթին մէջ գրուած գումարները, որոց միջոցաւ ուզած ատեննիս կը գիտնանք թէ՛ թղթապանակին ս՞րչափ գանձելի թուղթ ունինք:

Ահաւաստի օրինակ մը (Տե՛ս թ. 376):
 Թ. 376 երեսի օրինակին Պարսիին 70000ը՝ զեղչուած, այսինքն, թղթապանակը մտած թղթոց Անգղոս գումարն է. և Պահանջիին 50000ը՝ զեղչել արուած և վճարորին գանձուած, այսինքն, թըղթապանակէն ելած թղթոց անզուս գումարն է. իսկ այդ երկու գումարներուն 20000ի կշիւը՝ նոյն թուականին (Նոյմբ. 30ին) թըղթապանակը գտնուած պատրաստ թղթոց քանակութիւնը կը ցուցընէ. Մայր-հաշուին մէջ Գանձեղի տունակի հաշիւին Պարսիին և Պահանջիին կողմը այս սիւները գծելով և անոնց մէջ վերոյիշեալ եղանակով թղթերուն Մարսիին և Նիլիին անզուս գումարները գրելով՝ ուզած ատեննիս կրնանք այսպէս գիտնալ թէ՛ թղթապանակը ս՞րչափ գանձելի թուղթ ունինք: Գարով Պարսիին և Պահանջիին զուս գումարի սիւներուն՝ ենթադրելով որ հաշիւ տեսած ատեննիս թղթապանակը պատրաստ թուղթ չկար, ըսել է թէ՛ Պարսիին և Պահանջիին անզուս գումարի սիւնոց գումարներն իրարու հաւասար պէտք է ըլլան և այն ատեն զուս գումարներուն կշիւը՝ ինչպէս թ. 375 երեսի օրինակին վրայ բացատրեցինք, եղած շահը կը ցուցընէ, եթէ Պահանջիին գումարը Պարսիին գումարէն շատ է. իսկ ընդհակառակը մնասը կը ցուցընէ, եթէ Պարսիին գումարը Պահանջիինէն շատ է: Շահ և մնասը ինչպէս անցընելու մասին պէտք եղածը թ. 375 երեսի օրինակին առթիւ խօսուած ըլլալով՝ հոս կրկնել աւելորդ է:

Իսկ հաշիւ տեսած ատեննիս եթէ թղթապանակը պատրաստ թուղթ ունենանք, այդ պարագային՝ Գանձեղի տունակի հաշիւին շահը կամ մնասը հասկնալու համար, պատրաստ թղթոց գումարը զօրութեամբ աւելցնելու է Պահանջիին զուս գումարին վրայ՝ զանոնք պահ մը գանձուած կամ ծախուած համարելով, այն ատեն՝ Պահանջիին Պարսիին գումարին վրայ ունեցած առաւելութիւնը՝ եւզած շահը կը ցուցնէ. ինչպէս թ. 376 երեսի օրինակին վրայ թղթապանակին պատրաստ 20000ի թղթոց գումարը Պահանջիին 49300ի զուս գումարին վրայ աւելցնելով՝ եղած է 69300, յորմէ հանելով Պարսիին 68000ի զուս գումարը, կշիւը կ'ըլլայ 1300, որ է այս հաշիւէն եղած շահը, զոր կը տանք Շահ և վնասին գրելով Օրհաշիւը:

Գանձելի տոմսակի Շահ եւ Վնասին 1300

Իսկ ընդհակառակը եթէ Պահանջին զուտ գումարը 47000 ըլլար (Թղթապանակի պատրաստ թղթերը գարձեալ 20000 ենթադրելով), այն ատեն Պահանջին ընդհանուր գումարը կ'ըլլար 67000, զոր հանելով Պարսիին 68000ի գումարէն, կշիւը կ'ըլլար 1000, որ է այս հաշուէն եղած վնասը, զոր պէտք է տուի Շահ եւ Վնասը, որուն համար Օրհաշիւը կը գրենք

Շահ եւ Վնաս Գանձելի տոմսակաց 1000

Մէկուն վրայ փոխանակագիր Բաշի. — Բաշեցի Ա. Մախոսեանի վրայ Ի Տրապիզոն 200 Լ. փոխանակագիր մը թուականէն 31 օրէն վճարելի, զոր գրի թղթապանակս.

Այս փոխանակագիրը մեզի համար Գանձելի տոմսակ է, որովհետեւ կամ օրին մենք պիտի գանձենք, կամ օրէն առաջ մէկուն գեղչել տալով՝ դրամը պիտի ստանանք:

Երբ մէկուն վրայ փոխանակագիր կը քաշենք՝ կամ անկէ առնելիք մը եւ կամ վարկ մ'ունինք անոր քով, երկու պարագային մէջ ալ՝ փոխանակագիրն ընդունող եւ վճարողը Պահանջող ընելու է. իսկ Գանձելի տոմսակը, որ այդ փոխանակագիրն առաւ, Պարսական ընելու է: Հետեւաբար վերի օրինակը Օրհաշիւ անցընելու համար կը գրենք

Գանձելի տոմսակի Ա. Մախոսեանի

Բաւեցի յիշեալին վրայ 31/օր. փոխանակագիր մը 20000

Մէկուն մեր վրայ Բաշած փոխանակագիրը ընդունիլ. — Ընդունեցի Մարթինիի Գ. Խոսրովեանի վրաս քաշած 79638 դշ. արժէքով Գր. 15316 80ի փոխանակագրերը:

(Տե՛ս մեր Զեռատեարին Թ. 94 յօդուածը)

Ասի նախորդին հակառակն է. այս ատեակ փոխանակագրերը մեզի համար Վճարելի տոմսակ են. որովհետեւ մենք գանձենք ընդունելով օրին պիտի վճարենք: Երբ մէկը մեր վրայ փոխանակագիր կը քաշէ՝ կամ մեզմէ առնելիք մը կամ մեր քով վարկ մը ունի. երկու պարագային մէջ ալ՝ փոխանակագիրը քաշողը Պարսական ընելու է եւ Վճարելի տոմսակը Պահանջող: Հետեւաբար վերի օրինակը Օրհաշիւ անցընելու համար կը գրենք

Գ. Խոսրովեան Վնասելի տոմսակաց

Յիշեալին վրաս Բաւած փոխանակագրերը ընդունեցի 79638

Փոխանակագիրը կամ գանձելի տոմսակը օրին չվճարուելով եւ կը գայ. — Այս ատեակ գործողութեանց մէջ քանի մը պարագայներ կան, զորս որոշել հարկ է:

1. Զվճարուած թուղթը մէկուն ծախուած կ'ըլլայ.
2. » » իբրեւ դրամ մէկուն զրկուած կ'ըլլայ.
3. » » օրին վաճառականին թղթապանակը կ'ըլլայ.

1. Եթէ անվճար թուղթը սեղանաւորի ծախուած է եւ վաճառականը այդ սեղանաւորին հետ հաշուընթաց ունի՝ փոխանակագրին գումարին, բողոքի եւ ուրիշ ծախքերուն համար Պահանջող ընելու է սեղանաւորին հաշիւը, Պարսական ընելով Գանձ. տոմսակի կամ Արքեռչիին, Ֆրանսի, Մարսի եւ ինչ. փոխանակագրի հաշիւները թղթին մայր գումարին շափ, եթէ թուղթը այդ ատեակ դրամներով վճարելի է. իսկ բողոքի եւ ուրիշ ծախքերուն համար՝ Շահ եւ Վնասը Պարսական ընելու է:

2. Եթէ անվճար թուղթը իբր դրամ մէկուն զրկուած է, այդ անձը Պահանջող. իսկ Պարսական ընելու է Գանձ. տոմսակի կամ Արքեռչիին, Ֆրանսի եւ ինչ. փոխանակագրի հաշիւները թղթին գումարին, եւ ծախքերուն (բողոքի եւ ինչ.) համար ալ Շահ եւ Վնասը:

3. Եթէ անվճար թուղթը վաճառականին թղթապանակը կը գանձուի՝ փոխանակագիրը ընդունող եւ Զվճարող անձը Պարսական եւ Գանձ. տոմսակը Պահանջող ընելու է, եթէ թուղթը ուղղակի վաճառականին հրամանին շինուած է. իսկ եթէ մէկէ մը առնուած է, թուղթը տուողին հաշիւը Պարսական եւ Գանձ. տոմսակը դարձեալ Պահանջող ընելու է:

Ուրիշ հաշույն դրամ գանձել. — Երբ ուրիշի հաշույն մէկէն դրամ գանձենք, Պահանջող ընելու չէ դրամը վճարողը, որուն հետ գործ չունինք մենք, այլ այդ դրամը որո՛ւ հաշույն որ գանձենք, այն մարդը Պահանջող ընելու է:

Գանձեցի Կարնեցի Գ. Սիմօնեանի հրամանին համեմատ եւ անոր հաշույն համար Ն. Հանէսեանէ 500 Լ. 0:

Սննուկ Կարնեցի Գ. Սիմօնեանի 50000

Ինչպէս կ'երեւայ, Պահանջող չըրինք Ն. Հանէսեանը, որ այդ դրամը մեզի վճարեց. որովհետեւ մենք անոր հետ ո՛չ հաշիւ ունինք եւ ո՛չ չարաբերութիւն, այլ Գ. Սիմօնեանը Պահանջող ըրինք, որովհետեւ մենք անոր հետ գործ ունինք եւ անոր հրամանին համեմատ եւ անոր հաշույն համար միայն ատինք այդ դրամը:

Ուրիշի հաշույն գրամ վնասել . — Երբ ուրիշի հաշույն մէկուս
գրամ վճարենք, Պարսական ընելու չէ գրամն աւանդը, որուն
հետ գործ չունինք մենք, այլ այդ գրամը որու հաշույն որ վճար
ենք, այն մարդը Պարսական ընելու է:

Վճարեցի Պրուսացի Յակոբ Պոլոսեանի հրամանին համեմատ եւ անոր
հաշույն համար Ս. Մարտիկեանի 80 Լ. 0:

(Տե՛ս մեր Չեռատեարին Թ. 72 յօդուածը)

Յակոբ Պոլոսեան Սևուկին 8000

Ինչպէս կ'երեւայ, Պարսական չըրինք Ս. Մարտիկեանը, որ
այդ գրամն առաւ մեզմ', որովհետեւ մենք անոր հետ ո՛չ
հաշիւ ունինք և ո՛չ յարաբերութիւն, այլ Պրուսացի Յակոբ Պո-
լոսեանը Պարսական ըրինք, որովհետեւ մենք անոր հետ գործ
ունինք և անոր հրամանին համեմատ և անոր հաշույն համար
միայն վճարեցինք այդ գումարը:

Տոկոսաւոր հաշիւներ եւ հաշարերացներ. — Երբ վաճառականը
կամ սեղանաւորը զանազաններու հետ տոկոսաւոր հաշուրնթացներ
ունի, կամ զանազաններու տոկոսաւոր փոխառութիւններ և փոխա-
ռութիւններ ըրած է, 3 կամ 6 ամիսն անգամ մը անոնց տոկոսները
հաշուելով տոկոսը այդ հաշուրնթացի տէրերուն և փոխառութիւն
ու փոխառութիւն ընողներուն Պարսֆին կամ Պահանջֆին կը
տանի, այսինքն, որչափ տոկոս որ բաներ է, անոր համար այդ
հաշիւները Պարսական կամ Պահանջող կ'ընէ և Տոկոս և Զեղչի
հաշիւն ալ Պահանջող կամ Պարսական ընելով:

Այս գործողութիւնը՝ որ դրամատուններու մէջ և սեղանա-
ւորներու քով շատ կը պատահի, ընդհանրապէս ամէն վեց ամիսը
անգամ մը, Յունիս 30ին և Դեկտ. 31ին կ'ըլլայ, և տոկոսաւոր
հաշուց մինչեւ այդ թուականներ բանած տոկոսները հաշուելով
իրենց Պարսֆին մայր գումարին վրայ կը բարդուի, եթէ տոկոսին
կշիռը հաշուրնթացին տիրոջ Պարսֆն է, իսկ անոնց Պահանջֆին
կ'անցնի, եթէ տոկոսին կշիռը հաշուին տիրոջ Պահանջֆն է:

Տոկոսը հաշիւի մը Պարսֆին տանելու համար Օրհաշուին մէջ
կը գործածուի հետեւեալ ձեւը

Փ. Սիւֆոնեան Տոկոս և Զեղչին

Իր հաշուրնթացին 3/ամս. տոկոսը 9% 31 ց Մարտ 98 3869

Ինչպէս կ'երեւայ հոս վաճառականն է որ տոկոս կ'առնէ:

Իսկ տոկոսը հաշիւի մը Պահանջֆին տանելու համար Օրհաշուին
մէջ կը գործածուի հետեւեալ ձեւը

Տոկոս և Զեղչ Մ. Մրապեանի

Իր պահանջֆին 6/ամս. տոկոսը 7% ց 30 Յունիս 98 4852½

Ինչպէս կ'երեւայ, հոս վաճառականն է որ տոկոս կը տայ:
Իսկ երբ հաշուրնթացին մէջ ծախքեր ըլլան, Օրինակի հա-
մար, յանձնառողչէք, թղթատարի ծախք և յն.՝ անոնց գումարին
համար Պարսական ընելու է Ընդհ. ծախքը և հաշուրնթացը զրկո-
ղին հաշիւը Պահանջող, եթէ այդ ծախքերն անոր առնելիքն են:
Հօնտրայի Օ. և Մ. Էսայեաններուն ց 31 Դեկտ. 97 6/ամս.
հաշուրնթացին հետեւեալ ծախքերը անոնց պահանջֆին անցնելու է

£ 10. 8. 5 յանձնառողչէք

» —. 7. 7 թղթատարի ծախք

£ 10. 16. — գ. 110 1188

Այս յօդուածը Օրհաշիւ անցընելու համար կ'ըսենք

Ընդհանուր ծախք Օ. և Մ. Էսայեանին

£ս 6/ամս. հաշուրնթացի ծախքը £ 10. 16. — իրենց պահանջֆին
կ'անցնեմ 1188

Իսկ ասոր հակառակը, այսինքն, Ընդհ. ծախքը Պահանջող
և նոյն անձը Պարսական ընելու է, եթէ այդ ծախքերը մեր առ-
նելիքն են:

Կարնեցի Ս. Սէֆէրեանի պարտքին անցընելու է իր 6/ամս.
հաշիւց ին յանձնառողչէքի և թղթատարի ծախքերը Լ. Օ. 8.67 867

Այս յօդուածը Օրհաշիւ անցընելու համար կ'ըսենք

Ս. Սէֆէրեան Ընդհ. ծախքին

£ս 6/ամս. հաշուրնթացի յանձնառողչէքի եւ բղբասարի
ծախքը իր պարսֆին կը անցնի 867

Ընկերակցութեամբ սպրանճ 1/2ի, 1/3ի, 1/4ի, եւլն.ի հաշուով . —
Թ. 323-327 երեսներուն մէջ այդ տեսակ ընկերակցութեամբ
սպրանճի հաշուց չորս պարագաներուն վրայ պէտք եղած տեսա-
կան տեղեկութիւնները տուինք:

Հոս այդ չորս պարագաները գործնականորէն և օրինակներով
պիտի բացատրենք: Ուսանողին լաւ հասկնալի ըլլալու համար,
զանոնք Մայր-հաշիւն ալ պիտի անցընենք, որպէս զի սակէ առաջ
ըտուածները հոս բացորոշ տեսնուին:

1. Պարագայ. — Վաճառականը, որուն տեսարակները պիտի
դրենք, ինքը յանձն առած է ընկերակցութեամբ սպրանճները
թէ՛ դնել և թէ՛ ծախել: (Տե՛ս Թ. 324):

8 Մայիս 1898		
1	Գնեցի կանխիկ ընկերակցութեամբ Յակոբ Գեորգեանի եւ Պողոս Սահակեանի հետ 1/3ի հաւելով 60000 դե.ի այլը	60000
1	Վճարեցի այլըներուն համար հետեւեալ ծախքերը Միջնորդչեք 0% 1 600 Փոխադրողչեք 100	700
1	Ծախեցի կանխիկ 1/3ի հաւելով այլըները	67000
1	1/3ի հաւելով այլըներուն զնման եւ վաճառման գումարներուն վրայ 0% 1 յանձնառողչեքս Մանր ծախքեր 1270 Մանր ծախքեր 20	1290
1	1/3 հաւելով այլըները ծախուած ըլլալով՝ գոցելու է այդ հաշիւը եւ իւրաքանչիւր ընկերի հաշիւին պահանջին սանելու է վաճառման զուտ գումարին վրայ իրենց բաժինը Վաճառման գումարը 67000 Ելած ծախքերը զեղչելով 1990 Զուտ գումար վաճառման, զոր ետեփ բաժնելու է, յորմէ շահակից երկու ընկերներուն բաժինները կ'ըլլան 21670ական դե.	43340
1	1/3ի հաւելով ապրանքին կէտը Շահ եւ վնասին կը սանիմ, իմ շահաբաժնիս համար, որ է	1670

8 Մայիս 1898		
4	Զանազանք Սնտուկին	
2	1/3ի հաւելով զնուած այլըին արժեքը կանխիկ վերեցի. Յակոբ Գրիգորեան	
3	Իր 1/3 բաժինը յիշեալ այլըին արժեքին վրայ 20000	
1	Պողոս Սահակեան	
3	Իր 1/3 բաժինը յիշեալ » » » 20000	
1	1/3ի հաւելով ապրանք	
1	Իմ 1/3 բաժնիս յիշեալ » » » 20000	60000

9 Մայիս 1898		
1/4	1/3ի հաւելով ապրանք Սնտուկին	
4	Վճարուած յիշեալ այլըներուն համար 1 0% միջնորդչեք 600 Փոխադրողչեք 100	700
4	Սնտուկ 1/3ի հաւելով ապրանքին Ծախեցի կանխիկ 1/3ի հաւելով այլըները	67000
1/5	1/3ի հաւելով ապրանք Շահ եւ վնասին Յիշեալ այլըներուն զնման եւ վաճառման գումարին վրայ 0% 1 յանձնառողչեքս Մանր ծախք 1270 Մանր ծախք 20	1290
1	1/3ի հաւելով ապրանք Զանազանք Այլըներուն վաճառումէն շահակից ընկերներու բաժինը իրենց պահանջին կը սանիմ	
2	Յակոբ Գրիգորեանի 21670	
3	Պողոս Սահակեանի 21670	43340
1/5	1/3ի հաւելով ապրանք Շահ եւ վնասին Այս գործողութենէն իմ 1/3 բաժնիս ինկած շահը	1670

Մ Ա Յ Ր - Հ Ա Շ Ի Ի

1 Պարտի 1/3ի հաշուով ապրանք Պահանջէ 4

1898	1898	
8 Սեկին. իմ բաժինս	1 20000	1 67000
9 » մջլ. եւ ծխք.	» 700	
13 Շ. եւ վն. յնձնառ.	» 1290	
15 Զանազանք	» 43340	
	65330	
» Շ. եւ վն. իմ շահս	1670	
	67000	67000

Պարտի	ՅԱԿՈՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ	Պահանջել	Պահանջել
2	1898 Մյիս. 8 Սնտուկին	1 20000	1898 Մյիս. 15 1/2ի հաւելով ապրանքին
3	1898 Մյիս. 8 Սնտուկին	1 20000	1898 Մյիս. 15 1/3ի հաւելով ապրանքին
4	1898 Մյիս. 12 1/2ի հաւելով ապրանքին	1 67000	1898 Մյիս. 8 2ամազաններէ 1 60000 9 1/3ի հաւելով ապրանքին » 700
5			1898 Մյիս. 13 1/3ի հաւելով ապրանքին 1 1290 15 » » » » » 1670

Ինչպէս կ'երեւայ, 1/5ի հաշով ապրանքի հաշիւը գոցուած է. կշիւը՝ 1670, որ վաճառականին շահարած ինն է, Շան և Վնասին տարուելով: Իսկ շահակից երկու ընկերներուն հաշուց Պարտիին գումարն է 20000 և Պահանջիինը՝ 21670, կշիւը՝ որ է 1670, իւրաքանչիւր ընկերի շահարած ինն է, որ ապրանքը ծախող վաճառականին քովն է անոնց արամադրութեան տակ:

2. Պարագայ. — վաճառականը ապրանքը ո՛չ գնել և ո՛չ ծախել անձն կ'առնէ: (Տե՛ս Թ. 325):

Չ Ե Թ Ա Տ Ե Տ Բ

18 Յուլիս 1898		
1	Իզմիրցի Մինաս Յակոբեանի հետ ընկերակցութեամբ՝ շահն ու վնասը 60ր իրեն և 40ր ինն ըլլալու պայմանով, աֆիսն գնել ու ծախել որոշուած ըլլալով՝ այսօր յիշեալէն կ'իմանամ որ 2000 Լ. Օ.ի աֆիսն գներ է, որուն 40ի հաւելով 800 լիւրն իմ պարտքս ըլլալով, բայց այնմ հաւելի անցրելու է	80000
1	Մինաս Յակոբեան աֆիսները ծախել է 2280 Լ. Օ.ի, որուն 40են 912 լիւրն իմ պահանջքս է, զոր բայց այնմ հաւելի անցրելու է	91200
1	Ընկերակցութեամբ ապրանքին կշիւը Շան և Վնասին կը սանխմ իմ բաժնիս համար	11200

Օ Ր Զ Ա Տ Ե Ի Ի

18 Յուլիս 1898		
1	1/2 40ի հաւելով ապրանք Մ. Յակոբեանի Շանն ու վնասը 60ր իրեն և 40ր ինն ըլլալու պայմանով Իզմիրցի Մինաս Յակոբեանի հետ գնուած 2000 Լ. Օ.ի աֆիսներուն 40ի իմ բաժնիս համար գինը պահանջող կ'ընեն	80000
2	Մ. Յակոբեան 40ի հաւելով ապրանքին աֆիսներուն 2280 Լ.ի վաճառման գումարին վրայ 40 իմ բաժնիս համար գինը պարտական կ'ընեն	91200
3	40ի հաւելով ապրանք Շան և Վնասին Այս գործէն զուտ շահն, զոր կը սանխմ Շան և Վնասին	11200

ՄԱՅՐ-ՆԱԶԵՐԻ

1 Պարտի		2 Պարտի		3 Պարտի	
1898 թիս.	1898 թիս.	1898 թիս.	1898 թիս.	1898 թիս.	1898 թիս.
18	30	30	30	30	30
Մինաս Յակոբեանի	Մինաս Յակոբեանի	Մինաս Յակոբեանի	Մինաս Յակոբեանի	Մինաս Յակոբեանի	Մինաս Յակոբեանի
80000	80000	80000	80000	80000	80000
11200	11200	11200	11200	11200	11200
91200	91200	91200	91200	91200	91200
Շան և վնասին	Շան և վնասին	Շան և վնասին	Շան և վնասին	Շան և վնասին	Շան և վնասին
1	1	1	1	1	1
Պահանջի	Պահանջի	Պահանջի	Պահանջի	Պահանջի	Պահանջի
1	1	1	1	1	1
Պահանջի	Պահանջի	Պահանջի	Պահանջի	Պահանջի	Պահանջի
91200	91200	91200	91200	91200	91200
Պահանջի	Պահանջի	Պահանջի	Պահանջի	Պահանջի	Պահանջի
1	1	1	1	1	1
Պահանջի	Պահանջի	Պահանջի	Պահանջի	Պահանջի	Պահանջի
91200	91200	91200	91200	91200	91200

Ինչպես կերելայ, 1/40ի հաշուով ապրանքին հաշիւը գոցուած է, վաճառականին 11200ի շահարածինը Շան և վնասին տարուելով: Իսկ շահակից ընկերոջ՝ Մինաս Յակոբեանի հաշիւին Պարտիին գումարն է 91200 և Պահանջիինը 80000: Կշիւը՝ 11200, այս գործէն վաճառականին շահարածինն է, որ ափիւնները ծախող ընկերոջ քոֆն է վաճառականին տրամադրութեան տակ:

3. Պարտայ. — վաճառականը միայն ապրանքը գնելը յանձնառնէ, իսկ ծախելը ո՛չ: (Տե՛ս Թ. 325):

2 Ե Ռ Ա Ս Յ Ս Բ

3 Սեպտեմբեր 1898	
1	Գնեցի ընկերակցութեամբ 1/3ի հաւելով Յակոբ Ներսեսեանի և Գրիգոր Սարգիսեանի հետ 165000 դե.ի գորեկ 165000
	Չանազան ծախս ապրանքները զրկելու համար Յակոբ Ներսեսեանի, որ գանունի ծախել յանձն առած է
	600
	165600
1	Ստացայ Յակոբ Ներսեսեանի՝ ընկերակցութեամբ գորեկներուն վանառման հաշիւը, զուս գումարը եղած է 150000, որս իմ բաժինն է 50000
	50000
1	Ընկերակցութեամբ գորեկները ծախուած բլլալով՝ գոցելու է այդ հաշիւը, կշիւը Շան և վնասին սանկլով
	5200

Օ Ր Հ Ա Շ Ի Ի

3 Սեպտեմբեր 1898	
5	Չանազանի Սնուկին
2	վհարեցի կանխիկ 1/3ի հաւելով հետեւեալներուն հետ գնած գորեկներուն համար
2	Յակոբ Ներսեսեան
	Իր 1/3 բաժինը վերոյիշեալ գորեկներուն արժեքին վրայ
	55200
3	Գրիգոր Սարգիսեան
	Իր 1/3 բաժինը վերոյիշեալ գորեկներուն վրայ
	55200
1	1/3ի հաւելով գորեկ
	Իմ 1/3 բաժինն վերոյիշեալ
	55200
	165600
2	30
1	Յակոբ Ներսեսեանի 1/3ի հաւելով գորեկին վաճառման հաշիւին համեմատ՝ ծախուած գորեկներուն 150000ի արժեքին վրայ իմ բաժինն համար զինք պարտական կ'ընեմ
	50000
4	1
1	Շան և վնաս 1/3ի հաւելով գորեկին
	Ցորեկներուն զինք ինկած բլլալով՝ անուց վաճառուսէն եղած վնասէն իմ 1/3 բաժինն
	5200
	49

1 Պարտի		1898 Մեպ.		3 Սնուկին	1	55200	1898 Մեպ.	30 Յակոբ Ներսիսյանի վնաս	1	50000	Պահանջել
2 Պարտի		1898 Մեպ.		3 Սնուկին	1	55200	»	»	»	52000	Պահանջել
3 Պարտի		1898 Մեպ.		30 1/2ի հաւելով ցորենին	»	50000	»	»	»	55200	Պահանջել
4 Պարտի		1898 Մեպ.		3 Սնուկին	1	55200	»	»	»	»	Պահանջել
5 Պարտի		1898 Մեպ.		3 1/2 հաւելով ցորենին	1	5200	»	»	»	»	Պահանջել
ՅԱԿՈԲ ՆԵՐՍԻՍԻԱՆ											
ԳՐԻՔՈՐ ՍԱՐԳԻՍԻԱՆ											
ՇԱՀ ԵՒ ՎՆԱՍ											
ՍՆՏՈՒԿ											
1898 Մեպ. 3 Չանազաններէ											
1 165600											

Ինչպէս կ'երեւայ, 1/2ի հաւելով ցորենի հաշիւը գոցուած է, այդ գործէն եղած վնասէն վաճառականին բաժնին ինկած 5200ի գումարը Շահ եւ Վնասին տարուելով: Իսկ շահակից երկու ընկերներէն Գրիգոր Սարգիսեան կը պարտի ցորենները զնոյ վաճառականին 55200 զ. գնման գումարին համար . ե Յակոբ Ներսիսեան կը պարտի 55200 ցորենին գնման եւ 50000 ալ վաճառման գումարէն ընդամէնը 105200, որ իր քով կը մնայ վաճառականին արամադրութեան տակ:

4. Պարագայ. — Վաճառականը ապրանքին միայն ծախելը յանձն կ'առնէ եւ ո'չ գնելը: (Տե՛ս թ. 326):

2 Ե Բ Ե Ս Ե Տ Բ

1		4 Մայիս 1898		1/2ի հաւելով ընկերակցութեամբ 70000 զե.ի երկար գնած ըլլալով իմ կէս բաժնիս համար պահանջող ընելու է զինքը. զի ըստ պայմանի ինքը յանձն առած է երկարները գնել եւ ես հոս զանոնք ծախել	35000
1		8		Վնարեցի երկարներուն մասնատուէր եւ ծախք	6200
1		20		Ծախեցի կանխիկ երկարները Արեւոյն Նաւարանին	80000
1		31		Երկարներուն վաճառման գումարին վրայ 1/2 յանձնառուչէքս	800
1		»		1/2ի հաւելով երկարները ծախուած ըլլալով՝ այդ հաշիւը գոցելու է շահակից ընկերոջս բաժինը իմ պահանջին սանելով երկարներուն վաճառման գումարն է Այս գումարէն զեղչելու է հետեւեալ ծախքերը Մասն եւ ծախք Յանձնառուչէքս	80000 6200 800 7000
1		»		1/2ի հաւելով երկարներուն հաշիւին կէտը 1500. Շահ եւ Վնասին կը սանիւ իմ շահաբաժնիս համար	1500

Օ Ր Հ Ա Շ Ի Ի

1		4 Մայիս 1898		1/2ի հաւելով ապրանքի Բրսեղ Պետրոսեանի միջնակին հետ ընկերութեամբ գնուած 70000 զե.ի երկարներուն իմ կէս բաժնիս	35000
1		8		1/2ի հաւելով ապրանքի Սնուկին	6200
3		20		Վնարեցի երկարներուն մասք եւ ծախք	80000
3		»		Սնուկ 1/2ի հաւելով ապրանքին	80000
1		»		Ծախեցի կանխիկ երկարները Արեւոյն Նաւարանին	80000
1		31		1/2ի հաւելով ապրանքի Շահ եւ Վնասին	800
1		»		1/8 1 Յանձնառուչէքս երկարներուն գումարին վրայ	800

1	31 Մայիս 1898	1/2ի հաշվով ապրանքի Բարսեղ Պետրոսեանի Երկարներուն վնասն. 73000ի գումարէն իր կէտ բաժինը	36500
2			
1		1/2ի հաշվով ապրանքի Շահ եւ Վնասին	
4		1/2ի հաշվով երկարներուն վանառուսէն իմ շիբիցն.	1500

ՄԱՅՐԻ-ՀԱՇԻԻ

1/2ի հաշվով ապրանքի

1898 Միս. 4	Բարսեղ Պետրոսեանի	1	35000							
8	Մնացուկին. մասն եւ ծախս		6200							
31	Շահ եւ վնասին. վնասուղիս.		803							
	Բարսեղ Պետրոսեանի		36500							
	Շահ եւ վնասին. իմ շահն.		1500							
										80000

Պահանջէ

180000

80000

4 Պարտի

2 Պարտի	1898 Միս. 4	1/2ի հաշվով ապրանքէն	1	35000						
		»		36500						
		»		71500						

Պահանջէ

ԲԱՐՍԵՂ ՊԵՏՐՈՍԵԱՆ ԼՈՍԻՏՐԱՅ

3 Պարտի	1898 Միս. 8	1/2ի հաշվով ապրանքէն	1	6200						
		1/2ի հաշվով ապրանքին	1	80000						

Պահանջէ

ՍՆՏՈՒԿ

4 Պարտի	1898 Միս. 31	1/2ի հաշվով ապրանքէն	1	800						
		»		1500						

Պահանջէ

ՇԱՀ ԵՒ ՎՆԱՍ

Ինչպէս կ'երեւայ, 1/2ի հաշվով ապրանքի հաշիւը գոցուած է, վաճառականին այս գործէն բրած 1500ի շահը Շահ եւ վնասին տարուելով: Իսկ շահակից ընկերը Բարսեղ Պետրոսեան կը պահանջէ 35000 դ.: երկաթներուն գնման եւ 36500 սը վաճառման գումարէն ընդամենը 71500, որ կը մնայ վաճառականին քով Բարսեղ Պետրոսեանի տրամադրութեան տակ:

Ձեռատետրին յօդուածները Օրհաշիւ անցընելու ատեն Տարակալը կրնայ համառօտութիւններ ընել, զորօրինակ. եթէ միեւնոյն օրուան թուականով և չորս յօդուածով զանազաններու ապառիկ ապրանք ծախուած է՝ ատոնց համար Օրհաշիւը փոխանակ չորս յօդուածի՝ մէկ յօդուած կը գրուի այսպէս

Չանագանի Ընդհանուր ապրանքին

(եւքը Պարսականները կարգաւ և տակէ տակ շարելով, իւրաքանչիւրին տակ կը գրուի անոնց ծախուած ապրանաց մանրամասնութիւնը):

Նոյնպէս եթէ միեւնոյն օրը երեք անձէ դրամ գանձուեր է՝ այս ալ մէկ յօդուածով կը գրուի, այսպէս

Սնուկ Չանագանաց

(եւքը Պահանջողները կարգաւ և տակէ տակ շարելով, իւրաքանչիւրին տակ կը գրուի տուած գումարներին):

Կարևոր է յիշել թէ՛ այս Չանագանի և Չանագանաց ըստածները մասնաւոր հաշիւներ չեն և անոնց համար Մայր-Հաշուին մէջ հաշիւ չի բացուիր. այլ ատոնք ածականներ են, որոցմէ վերջը զօրութեամբ կ'իմացուի հաշիւներ բառը, այսինքն, Չանագանի ըսելով հասկնալու է Չանագան հաշիւներ, որոց անունները վերջէն կը գրուին յօդուածին մէջ:

Ձեռատետրին մէջ երբեմն անանկ բաղադրեալ յօդուածներ կ'ըլլան, զորս վարժ տոմարակալը կրնայ պարզելով անցընել կամ կարելի եղածին չափ հանել աւելորդ հաշիւները, առանց յօդուածին ողոյն փնտսելու: Մեր ուսանողներուն այս տեսակ յօդուածներու վրայ ալ գաղափար մը տալու համար օրինակ մը կը դնենք:

Գնեցի Պօղոս Գասպարեանէ 230 երտ. Թաւիշ գ. 75 դ2. եւ վճարեցի այսպէս		17250
Փոխանակագիր մը Թօլէտօի վրայ 70օր.	18000	
Զեղչ 70 օրուան 12%	420	
	17580	
Պօղոս Գասպարեանէ ետ առի	330	17250

Լուծումն

Վերոյգրեալ յօդուածը չորս գործողութիւն կը պարունակէ

1. Պօղոսէն թաւիշ առնուած
2. Պօղոսին գանձելի տոմսակ մը տրուած
3. Տոմսակին զեղչը անցընել
4. Պօղոսէն վրայ դրամ առնուած

Այս տեսակ օղուածները պարզելով՝ նախ թղթի մը վրայ ամէն մէկ գործողութիւնը զատ զատ լուծելու է այսպէս,

1. Գործողութեան համար կ'ըսենք

Ընդհ. ապրանքի Պօղոս Գասպարեանի	17250
2. Գործողութեան համար՝	
Պ. Գասպարեան Գանձելի տոմսակաց	17580
3. Գործողութեան համար՝	
Շահ եւ վնաս (!) Գանձելի տոմսակաց	420
4. Գործողութեան համար՝	
Սնուկ Պօղոս Գասպարեանի	330

Արդ՝ այս չորս գործողութիւնները, որք չորս յօդուած արտադրեցին, մէկ յօդուածով անցընելու համար կը դիտենք որ նախ՝ Պօղոս Պահանջող եղաւ Ընդհ. ապրանքին ծախուած ապրանքին համար 17250

Եւքը նոյնպէս Պահանջող եղաւ Սնուկին մեզի ետ տուած դրամին համար 330

Ընդամէնը

Պօղոս 17580ի համար ալ Պարսական եղաւ Գանձ. տոմսակին, ըսել է թէ՛ Պօղոս այլեւս բան մը չի պահանջեր, Հեռեւաբար վերոյգրեալ չորս յօդուածներուն մէջ երեւցած Պօղոսին հաշիւները ջնջելով, ինչպէս վերը ջնջած ենք, կը մնայ Հեռեւեալ Պարսական հաշիւները,

Ընդհանուր ապրանքի	17250	
Շահ եւ վնաս	420	
Սնուկ	330	18000
Իսկ Պահանջող հաշիւ կը մնայ միայն		
Գանձելի տոմսակի	17580	
420		Ընդամէնը 18000

Եւ որովհետեւ գիտենք թէ՛ յօդուածի մը Պարսականը մէկէ աւելի եղած ատեն Չանագանի գրելու է, ուստի այն յօդուածը Օրհաշիւ կ'անցնենք ըսելով,

Չանագանի Գանձելի տոմսակաց

Գնեցի Պօղոս Գասպարեանէ 230 երտ. Թաւիշ գ. 75 դ2. եւ տուի Թօլէտօի 180 Լ.ի 70օր. փոխանակագիրը 12 12 ով:

Ընդհ. ապրանքի	17250
Փաւ օին արժէքը	
Շահ եւ վնաս	330
Փոխանակագրին զեղչը	
Սնուկ	
Փոխանակագրին մնացորդը ետ առի	420
	18000

[1] Կամ Տոկոս եւ Զեղչը եթէ այս ամուսնով հաշիւ բացած ըլլանք Մայր-հաշուին մէջ:

Արդ՝ մինչեւ հիմա ըստածներն ամփոփելով՝ Գլխաւոր և Մասնաւոր հաշուց կիրառութեան մասին հետեւեալ ընդհանուր կանոնները կ'որոշենք:

Ամեն անգամ որ մեկը արժեկիւք մը կ'առնէ, Պարտական ընկերու և գայն, իսկ ընդհակառակը Պահանջող՝ երբ արժեկիւք մը կը տայ:

Ամեն անգամ որ Սննուկը դրամ կը մտնայ, Պարտական ընկերու և Սննուկը, իսկ ընդհակառակը Պահանջող՝ երբ Սննուկէն դրամ կ'ելնէ:

Ամեն անգամ որ վաճառատունը սպրակ կը մտնայ, Պարտական ընկերու և Ընդհ. սպրակը, իսկ ընդհակառակը Պահանջող՝ երբ վաճառատունէն սպրակ կ'ելնէ:

Ամեն անգամ որ քրքապանակը տոմսակ կը մտնայ, Պարտական ընկերու և Գանձ. տոմսակը, իսկ ընդհակառակը Պահանջող՝ երբ քրքապանակէն տոմսակ կ'ելնէ:

Ամեն անգամ որ մեկուն հրամանին տոմսակ կ'ստորագրուի և կը տրուի, Պահանջող ընկերու և Վճարելի տոմսակը. իսկ ընդհակառակը երբ այդ տոմսակը կը մտնայ, այսինքն, մեկը իր դրամ գայն մեզի վերադարձնէ կամ օրին անոր փոխարէնը վճարենք, այն ատեն Պարտական ընկերու և Վճարելի տոմսակը:

Ամեն անգամ որ շահ մ'ըջայ, Պահանջող ընկերու և Ծանձն. Վճար. իսկ ընդհակառակը Պարտական՝ երբ վնաս մ'ըջայ:

Յօդուածներուն Օրհնաշունի մեկ երեսին

միւսը փոխադրելու կերպը

Երբեմն Օրհնաշունի մէկ երեսին վրայ յօդուածը ամբողջ գրուելու տեղ չի մնար. ի՞նչ ընելու է այդ պարագային:

Եթէ յօդուածին Պարտականը և Պահանջողը մէկ հաս է, Օրհնաշունի մինչեւ գումարին գիծը գրելու չէ, այլ տող մը պարագայ ձգելու է. ուր կը գրուի նոյն յօդուածին մասնակի գումարը (եթէ ունի), անոր առջեւ Փոխադրելի բառն աւելցնելով, ինչպէս կ'երեւայ յաջորդ երեսի օրինակին վրայ:

Օրհնաշունի երեսին վերջաւորութիւնը, ուր կարելի չէ եղած ամբողջ յօդուածը գրել

18 Ապրիլ 1898			
Յ. Մինասեան Ընդհ. սպրակին			
Մախեցի հետեւեալներ, վճարելի 91 օրէն		10520	
100 ծր. սպառող 5260 երս. գ. 2		6350	
50 » » 2540 » » 2 1/2			
	Փոխադրելի	16870	
	Փոխադրելի		28675 20

Օրհնաշունի յաջորդ երեսը բանալով և ճակատը փոխադրելի հաւաքական գումարին համար տող մը պարագայ ձգելով, թուականին յատուկ գիծերը քաշելու և նախորդ երեսէն կիսատ մնացած յօդուածին թուականը դնելով՝ նոյն յօդուածին կիսատ գումարն ալ նոր յօդուածին վրան տող մը պարագայ թողնով հոն մասնակի գումարի սիւնին մէջ գրելու է՝ քովը Փոխադրեալ ըսելով, ետքը յօդուածին մնացածը ամբողջացնելու է, ինչպէս կ'երեւայ վարի օրինակին վրայ:

Նոր երես Օրհնաշունի, ուր փոխադրուած է նախորդէն կիսատ մնացած յօդուածը

18 Ապրիլ 1898		Փոխադրեալ	28675 20
		Փոխադրեալ	16870
200 ծր. սավաւալուր 6/րպ. գ. 18		3600	
100 » աներիսան 5/րպ. » 22		2200	22670
19			

Եթէ փոխադրելի յօդուածին Պարտականը և Պահանջողը մէկէ աւելի է՝ մէկ մասը նախորդ և մնացածը յաջորդ երեսին վրայ կը գրուի. նոյնպէս թէ՛ մասնական և թէ՛ հաւաքական գումարները նախորդ երեսին վրայ գումարելով՝ յաջորդ երեսը փոխադրելու է, ինչպէս կ'երեւայ յաջորդ երեսի օրինակին վրայ:

Օրհնաշունի երեսի վերջաւորութիւնը, ուր կարելի չէ եղած գրել ամբողջ յօդուածը

26 Փետր. 1898				
Չանագանի Զանագանաց Ծախեցի հետեւեալներուն հետեւեալ փոխանակագրերը				
Փոխանակագրի Զ. Պարսականի				
Գ. Սիմօնեանի ապառիկ ծախուած Աճուկ	12344			
Սեւերեան եղբարց կանխիկ ծախուած	13158			
	25502			
Փոխադրելի		168210	20	

Նոր երես Օրհնաշունի, ուր փոխադրուած է նախորդին կիսա մնացած յօդուածը

2

26 Փետր. 1898		Փոխադրեալ	168210	20
Ֆրանսի փոխանակագրին ճր. 5798.85				
Սեւերեանի կնիսկ. Ֆր. 3000.— գ. 22.80	13158			
Գ. Սիմօնեանի ապառիկ. » 2798.85 » 22.75	12303			
Ֆր. 5798.85	25461			
Տոկոս եւ Զեղչին				
Գ. Սիմօնեանի տոկոս	41	25502		
27				

Մ Ա Յ Ր - Հ Ա Շ Ի Ի

Պարզ-տոմարին աստիճան ըսինք թէ՛ Մայր-հաշիւը Օրհնաշունի ընդօրինակութիւնն է տարբեր կերպով գրուած, ուր հաշիւներ կը բացուին Օրհնաշունի մէջ Պարսական եւ Պահանջող անձերու համար, մինչդեռ Կրկնատոմարի Մայր հաշուին մէջ՝ իր սկզբունքին եւ նպատակին համեմատ՝ զոր ուսանք արդէն, ո՛չ միայն ան-

ձերու, այլ վաճառականութեան տարերց համար եւս, որք են, Ընդհ. ապրանքի, Սնունքի, Պահանջի տոմսակի, վճարելի տոմսակի, եւ Շահ եւ վնաս, հաշիւներ կը բացուին: Այս տետրին անոր համար Մայր-հաշիւը բաժնուած է, որովհետեւ բազմապատմամբ փրկու տետրակներուն ամենէն խոշորն ու ստուարն է:

Մայր-հաշուին մէջ այսպէս թէ՛ անձերու եւ թէ՛ իրերու համար հաշիւներ բացուելով՝ Օրհնաշունի մէջ Պարսական գրուած հաշիւին գումարը՝ Մայր-հաշուին մէջ նոյն հաշիւին Պարսիկ կողմը եւ Պահանջող գրուած հաշիւին գումարը՝ նոյն հաշիւին Պահանջի կողմը կ'անցնի, որով վաճառականը Մայր-հաշուին մէջ պատկերացած կը տեսնէ իր վիճակը թէ՛ իր թղթակիցներուն կամ յաճախորդաց եւ թէ՛ նոյն իսկ իրեն հետ. բացատրենք:

Մայր-հաշիւը՝ իր գրուելու կերպովը Օրհնաշունի ամէն գործողութիւնները, որք հոն իրենց թուականի կարգովը եւ խառն գրուած են, գաւ դաւ իր տեսակովը կը գտնուէ եւ կը դասաւորէ այլեւայլ հաշիւներու միջոցաւ, այսինքն,

Չանագան արժէնքի թղթի հաշիւը կը ներկայացնէ Մարսի եւ Ելիի ձեւով:

Չանագան անձերու հաշուց Պարսիկ եւ Պահանջի վիճակը կը ներկայացնէ,

Օրինակի համար, գրամական գործողութիւնները, որք Օրհնաշունի մէջ ուրիշ գործողութեանց հետ խառն գրուած են, Մայր-հաշուին մէջ Սնունքի հաշիւին կը տարուին, այսինքն, Պարսիկ Մարսի եւ Մարսի Սնունքի Պահանջի կողմը գրուելով, ուզուած ատեն կը գիտնանք թէ՛ Սնունքը ո՞ր-չափ պատրաստ գրամ ունինք:

Ապրանքի գործողութիւններն ալ Մայր-հաշուին մէջ Ընդհ. ապրանքի հաշիւին կը տարուին, այսինքն, գնուած ապրանքները Ընդհ. ապրանքի Պարսիկ եւ ծախուածները Պահանջի կողմը գրուելով, ուզուած ատեն կը գիտնանք թէ՛ ապրանքներէն ո՞ր-չափ շահ կամ ֆրաս եղեր է: (Տե՛ս այս մասին Ընդհ. կշռի մէջ):

Պահանջի տոմսակի գործողութիւնները Մայր-հաշուին մէջ այս անունով հաշիւին կը տարուին, այսինքն, անունած գանձելի թղթի Մարսի այս հաշիւին Պարսիկ եւ Ելիերը, այսինքն, օրին գանձուած կամ ուրիշ արուածները՝ Պահանջի կողմը գրուելով, ուզուած ատեն կը գիտնանք թէ՛ թղթապանակը ո՞րչափ գանձելի թուով ունինք:

Վճարելի տոմսակի գործողութիւններն ալ Մայր-հաշուին մէջ այս անունով հաշիւին կը տարուին, վճարելի տոմսակներու Ելիերը, այսինքն, վաճառականին իր ստորագրութեամբ տուած տոմսակները այս հաշիւին Պահանջի եւ օրին վճարուածները

Մայր-հաշուին (երկու կողմին) երեսներուն Թ. 1 սրենքուն մէջ կը գրուի՝ Օրհաշուէն փոխադրուած յօդուածին թուականը, տարին և ամիսը՝ տարին թուանշանով. երբ յաջորդ յօդուածը նախորդին թուականն ունի, վերջնոյն համար կրկին թուական գրելու չէ, չափերս մը (») դնել կը բաւէ: Թ. 2ին մէջ՝ ամսոյն օրը թուանշանով, որ նոյնպէս չափերսով կը նշանակուի, եթէ նոր գրուելիք յօդուածը նախորդին ամսաթիւն ունի: Թ. 3ին մէջ՝ որ միւսներէն լայն է, Պարսկական կամ Պահանջող հաշիւին անունը և քովը գործողութեան բացատրութիւնը համառօտ և մէկ տողի վրայ: Շատեր Մայր-հաշուին այս բացատրութիւնը չեն գրեր, այլ միայն Պարսկական և Պահանջող հաշիւները կը գրեն: Թ. 4ին մէջ՝ փոխադրուած յօդուածին Օրհաշուին քաներո՞րդ երեսի թիւը: Ոմանք այս սրենին քով ուրիշ մ'ալ գծելով հոն կը գրեն՝ փոխադրուած հաշուին Մայր-հաշուին քաներո՞րդ երեսի թիւը. սակայն գործի մէջ այս սրեն չի գործածուիր. մենք մեր Մայր-հաշուին մէջ դրինք, աւելի նորավարժներու տեղեկութեան և դիւրութեան համար: Թ. 5ին մէջ՝ գումարները լիրայ, դր., ֆր. և յիւ: Թ. 6ին մէջ՝ կոտորակները, այսինքն, դր. փրջ. տանթիմ և ին., եթէ ըլլայ: Մայր-հաշուի պատրաստ տետրակներուն վրայ 7րդ սրեն մ'ալ կ'ըլլայ, ուր կը գրուին հաշուի ամսական գումարներն, երբ փորձակչիւն ընել հարկ ըլլայ կամ մէկ երեսը լեցած տուն գումարելով, գումարը նոյն սրենը կը փոխադրուի: Վերոյիշեալ վեց սրեներէն զատ՝ Գանձեղի և Վճարեղի տնտեսի հաշուց Պարսֆին և Պահանջֆին կողմը ուրիշ սրեն մ'ալ կը գծուի. ուր այդ տնտեսիներուն կարգի թիւերը կը գրուին: Բայց այդ սրենը շատ կարեւոր չէ. վասնզի այդ թղթոց թիւը Օրհաշուին մէջ գրելն ալ կը բաւէ, եթէ ուզուի: Մայր-հաշուին մէջ օտար դրամներու գումարներ պարունակող հաշուց համար, վերոյիշեալ սրեներէն զատ Պարսֆին և Պահանջֆին կողմը ուրիշ սրեներ ալ գծելու է օտար դրամոց և անոնց կատարակներուն համար: Այս մասին Գանձեղի և Վճարեղի տնտեսի հաշուց (Տե՛ս Թ. 335) և Կրկնատոմարի տետրակներուն մէջ Դրամի միւրքեան աւթիւ (Տե՛ս Թ. 351) խօսուած ըլլալով, հոս կրկնել աւելորդ է:

Մայր-հաշուին մէջ երբ հաշիւ մը ուրիշ երես փոխադրել հարկ ըլլայ, այդ հաշիւին Պարսֆին և Պահանջֆին գումարներն ընելով անոնց առջեւ գրելու է Փոխադրեղի ի թիւ..... (փոխադրելի երեսին թիւը դնելով). իսկ նոր փոխադրուած երեսին վրայ ալ գրելու է նոյն գումարները և անոնց առջեւ Փոխադրեալ Թ... ևն (փոխադրուած երեսին թիւը դնելով):

Կրկնատոմարի Մայր-հաշուին մէջ ամենէն աւելի Ընդհ. ապ-

րենիւն, Անտուիլի, Գանձեղի և Վճարեղի տնտեսներու հաշուց վրայ գրուելիք շատ ըլլալուն, լաւ կ'ըլլայ որ այդ հաշիւները Մայր-հաշուին մէջտեղի երեսներուն վրայ բացուին, վասնզի եթէ տետրակին սկիզբի կամ վերջի երեսներուն վրայ բացուին՝ դժուար կ'ըլլայ տետրակին երեսները թղթատել, մանաւանդ երբ տետրակը ստուար և խոշոր է. իսկ տետրակին սկիզբի և վերջի երեսները յատկացնելու է այն հաշուց, որոց հետ այնչափ գործ և հետեւարար շատ գրուելիք բան ալ չ'ըլլար:

Օրհաշուին յօդուածները Մայր-հաշիւ անցնելու կերպը

Մայր-հաշուին ձեւը և երեսի սրեններուն բացատրութիւնը առէ կտքը՝ կը մնայ ըսել թէ՛ Օրհաշուին յօդուածները ի՞նչպէս Մայր-հաշիւ կ'անցնին: Ասոր համար սակէ առաջ մէջ բերուած Օրհաշուի յօդուածները Մայր-հաշիւ պիտի անցընենք: Եւ որով Օրհաշուի յօդուածները Մայր-հաշիւ պիտի անցընենք, հետեւ գիտենք թէ՛ Օրհաշուին յօդուածները երկու տեսակ են, հետեւ գիտենք թէ՛ Օրհաշուին յօդուածները երկու տեսակէն ալ օրինակներ յարգ և Բարդարեալ, ուստի երկու տեսակէն ալ օրինակներ յարգ և Բարդարեալ պիտի բերենք, զորս զատ զատ Մայր-հաշիւ պիտի անցընենք, որպէսզի ուսանողը կատարեալ տեղեկութիւն առնելով՝ վերջէն դժուարութիւն չկրէ մեր բուն իսկ Մայր-հաշիւը գրելու մէջ:

ԳՈՐԸ ՅՕԴՈՒՄՆԵՐ

Գրողարան
ՊԵՐՃ ՍՍ.ՊՊԱՂԵԱՆԻ
Հայէջ

Օրինակ Ա. Օրհաշուի (Տե՛ս Թ. 364)

10 Mars 1898

1 2	Ընդհ. ապրանք Զակոր Նեանեանիին Իրիւ առած ապրանքս վճարելի 21 օրէն (Հոս գրելու է առնուած ապրանքին մանրամասնութիւնը)	1000
--------	--	------

Այս յօդուածը Մայր-հաշիւ անցընելու համար նախ Պարսկական առնելով՝ որ Ընդհ. ապրանքն է, Մայր-հաշուին մէջ ասոր համար հաշիւ մը կը բանանք (1) և անոր Պարսֆին կողմը յօդուածին թուականը, տարին, ամիսը և ամսոյն օրը իրենց սրեններուն մէջ նշանակելէ ետքը՝ փոխադրով (2) կը գրենք Պահանջողին (Զակոր Նեանեանի) անունը ծայրը ին մասնիկն աւելցնելով այսպէս,

[1] Թ. 274ին մէջ խօսած ենք թէ Հաշիւը ինչպէս կը բացուի:
[2] Օրհաշուին պէս Մայր հաշուին մէջ ալ Պարսկական եւ Պահանջողները ցլխագրով [ըլլորագիր կամ շեղագիր] կը գրուին:

1 Պարտի

ԸՆԴՀ. ԱՊՐԱՆՔ

1898	10	Յակոբ Նճանեանին. Գնած ապրանքս	1	1000
------	----	-------------------------------	---	------

որով ըսել կ'ըլլայ թէ՛ Ընդհ. ապրանքը պարտի Յակոբ Նճանեանին. յետոյ ասոր քով կը գրուի գործողութեան բացատրութիւնը համառօտ մէկ տողի վրայ: Ասի անցընելէ ետքը Օրհաշուին վրայ իրեն յատուկ սիւնին մէջ գրելու է Ընդհ. ապրանքին Մայր-հաշուին քաներո՞րդ երեսը բացուած ըլլալուն թիւը (Թ. 1) (Տե՛ս Թ. 401 երեսը Օրհաշուի օրինակին վրայ), որպէսզի թէ՛ Պարտական հաշիւին Մայր-հաշիւ անցած ըլլալը յայտնի ըլլայ և թէ՛ այդ կերպով կարելի ըլլայ այդ հաշիւը շուտով գտնալ Մայր-հաշուին մէջ: Յետոյ Պահանջողը առնելով՝ որ Յակոբ Նճանեանն է, Մայր-հաշուին յաջորդ երեսին վրայ (ենթադրելով որ մէկ երեսին վրայ մէկ հաշիւ պիտի բանանք. թէեւ ինչնայն երեսին վրայ քանի մը հաշիւներ ալ կրնայ բացուիլ) ասոր համար ալ հաշիւ մը կը բանանք, և անոր Պահանջին կողմը դարձեալ յօդուածին թուականը, տարին, ամիսն և ամսոյն օրը իրենց սիւներուն մէջ նշանակելէ ետքը՝ կը գրենք Պարտականին (Ընդհ. ապրանքին) անունը ծայրը էն մասնիկն աւելցնելով այսպէս,

ՅԱԿՈՒ ՆՇԱՆԵԱՆ

Պահանջէ 2

1898	10	Ընդհ. ապրանքէն. Տուած ապրանք	1	1000
------	----	------------------------------	---	------

որով ըսել կ'ըլլայ թէ՛ Յակոբ Նճանեան կը պահանջէ Ընդհ. ապրանքին. յետոյ ասոր քով ալ գործողութեան համառօտ բացատրութիւնը մէկ տողի վրայ: Ասի ալ անցընելէ ետքը Օրհաշուին վրայ իրեն յատուկ սիւնին մէջ գրելու է Յակոբ Նճանեանի հաշիւին Մայր-հաշուին քաներո՞րդ երեսը բացուած ըլլալուն թիւը (Թ. 2), որպէսզի Պահանջող հաշիւին ալ Մայր-հաշիւ անցած ըլլալը յայտնի ըլլայ: (Տե՛ս Թ. 401 երեսը Օրհաշուի օրինակին վրայ):

Ահաւասիկ հոս բացատրուեցաւ կրկնատոմարի սահմանին վրայ ըսածնիս թէ՛ միեւնոյն գործողութիւնը կամ յօդուածը կրկնատոմարի Մայր-հաշուին մէջ երկու անգամ կ'անցնի. մին՝ Պարտական հաշիւին Պարտին և միւսը՝ Պահանջող հաշիւին Պահանջին կողմը:

Այսպէս Մայր-հաշիւ կ'անցնին Օրհաշուին Պարզ-յօդուածները, որոց մէջ Պարտական և Պահանջող հաշիւները միայն մէկ հատ կ'ըլլան, ինչպէս կ'երեւայ յաջորդ երեսներուն վրայ: Յօդուածները Օրհաշուէն Մայր-հաշիւ անցնելու ատեն ուշադրութիւն ընելու է որ փոխադրուած յօդուածին հաշուց Մայր-հաշուի երեսի թիւերը Օրհաշուին մէջ գրել չմոռցուի, որովհետեւ եթէ թիւերը չգրուին՝ չանցած կարծուելով՝ երկրորդ անգամ Մայր-հաշիւ կ'անցնի, որով սխալմունք կ'ըլլայ: Նոյնպէս ուշադիր ըլլալու է որ հաշուց երեսի թիւերը՝ յօդուածը Մայր-հաշիւ անցընելէ ետքը գրուի և ո՛չ անցընելէ առաջ, որովհետեւ եթէ անցընելէ առաջ գրուի՝ փոխադրուած կարծուելով կը մոռցուի այդ յօդուածը Մայր-հաշիւ անցընել, որ նոյնպէս սխալմունք և շփոթութիւն կը պատճառէ: Ձանալու է միշտ Օրհաշուին յօդուածները, եթէ կարելի է, օրը օրին Մայր-հաշիւ անցընել, որպէս զի մէկուն հաշիւը հանած ատեննիս՝ չանցած յօդուածի մը գումարը մէկտեղ առնել չմոռցուի, որ նոյնպէս սխալմունքի և անպատեհութեանց տեղի կը տայ:

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՕԴՈՒԱԾՆԵՐ

2 Օրինակ Ա. Օրհաշուի (Տե՛ս Թ. 367)

		15 Մարտ 1898		
5	1	Ձանազանի Ընդհ. ապրանքին Եօրկի Պալիին ծախած ապրանքս եւ առածներս (Հոս գրելու է ծախսուած ապրանքին մանրամասնութիւնը)		
3		Սննուկ	3000	—
4		Առած կանխիկ գումարանձեղի տոմարի տոմարի 31/օր.	5000	— 8000

Այս տեսակ բազադրեալ յօդուած մը, որուն Պարտականները մէկէ աւելի են, Մայր-հաշիւ անցընելու համար Ձանազանի համար, ինչպէս առաջ ալ ըսինք, հաշիւ չի բացուիր Մայր-հաշուին մէջ. այլ նախ Պարտականները, այսինքն, Սննուկը և Գանձեղի տոմարը իրենց գումարներուն չափ զատ զատ Պարտական ընելու է Ընդհանուր ապրանքին. ետքը Ընդհ. ապրանքն ալ Պահանջող ընելու է ամբողջ գումարին համար Ձանազաններէ ըսելով այսպէս,

[1] Ձանազանի առջեի 5 թիւը՝ Ընդհ. ապրանքին Մայր-հաշուին երեսի թիւն է, զի, ինչպէս ըսինք, Ձանազանի եւ Ձանազանի համար նաեւ չի բացուիր Մայր-հաշուին մէջ:

1 Պարտի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ

Պահանջէ 1

1898 Mrs	10	Յակոբ Նճանեանիւն. Առած ապրանքս	1	
-------------	----	--------------------------------	---	--

2 Պարտի

ՅԱԿՈՒԲ ՆՃԱՆԵԱՆ

Պահանջէ 2

--	--	--	--	--

10	Ընդհ. ապրանքէն. Տուած ապրանք	1	1000	
----	------------------------------	---	------	--

3 Պարտի

Ս Ն Տ Ո Ւ Կ

Պահանջէ 3

1898 Mrs.	15	Ը. ապրանքին	2	3000	
--------------	----	-------------	---	------	--

4 Պարտի

ԳԱՆՁԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ

Պահանջէ 4

1898 Mrs.	15	Ը. ապրանքին	2	5000	
--------------	----	-------------	---	------	--

5 Պարտի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ

Պահանջէ 5

1898 Mrs.	15	Զանազ. ններէ	2	8000	

ՕՐԻՆԱԿ Ք. ՕՐՀԱՇՈՒՒՄ (ՏԵ՛՛՛՛՛՛ 367)

3

20 Mrs 1898

6	Ընդհ. ապրանք Զանազանաց Բարսեղ Ստամբուլուեանէ գնած 200 Լ.ի ամերիկանիս համար, զոր վճարեցի այսպէս			
7	Սնունկին Կանխիկ վճարածս	10000		
8	Վճարելի տոմսակաց Ի/հ իմ տոմսակս 41/օր.	15000	25000	

Այս տեսակ բազադրեալ յօդուած մը, որուն Պահանջողները մէկէ աւելի են, Մայր-հաշիւ անցընելու համար Զանազանացի համար ալ հաշիւ չի բացուիր Մայր-հաշուին մէջ. այլ նախ Պահանջողները, այսինքն, Սնունկը և Վճարելի տոմսակը իրենց գումարներուն չափ զատ զատ Ընդհ. ապրանքէն Պահանջող, ետքը Ընդհ. ապրանքն ալ Պարտական ընելու է ամբողջ գումարին համար Զանազանաց ըսելով, այսպէս

			1898		
			Ապր.	2	Պ.Փորկեանիկ 43000

Փ Ո Ր Զ Ա Կ Ե Ի Ռ

Բաւական չէ միայն գիտնալ թէ՛ Զեռատեարին յօդուածները ի՞նչպէս Օրհաշիւ և թէ՛ Օրհաշուին յօդուածներն ի՞նչպէս Մայր-հաշիւ կ'անցնին. վասն զի, թէեւ ամէն Տոմարակալի պարաքն է դանոնք ուշադրութեամբ անցընել, սակայն սխալմունք գրեթէ միշտ կը պատահին թէ՛ Օրհաշուին և թէ՛ Մայր-հաշուին մէջ: Ուրեմն տոմարակալը համոզուելու է թէ՛ արդեօք Օրհաշուին յօդուածները տեղն ի տեղը Մայր-հաշիւ անցած են. ասի գիտնալու համար՝ Կրկնատոմարի մէջ Փորձակշիռ ըսուած գործողութիւնը կ'ընեն:

Կրկնատոմարի սահմանին վրայ խօսած ատեն ըսինք թէ՛ Մայր-հաշուին մէջ բացուած հաշւոց Պարտիին և Պահանջիին գումարներն ի՞նչպէս հաշուար ըզբարտ են. վասն զի, ինչպէս Մայր-հաշուի նախընթաց օրինակներուն վրայ երեւաց, Օրհաշուին ամէն յօդուածին գումարը երկու անգամ Մայր-հաշիւ անցածին՝ Պարտական հաշիւին Պարտիին, և միւսը՝ Պահանջող հաշիւին Պահանջի սիւնոց, և որովհետեւ այդ գումարը Օրհաշուէն փոխադրեցինք, ըսել է թէ՛ Մայր-հաշուին բոլոր հաշւոց Պարտի և Պահանջի սիւնոց, ինչպէս և Օրհաշուին գումարը (որովեալ ժամանակի մը մէջ) իրարու հաւասար ըլլալու են, զոր գիտնալու համար ալ Փորձակշիռը ընելու է. և արդէն ո՞չ ապաքէն Կրկնատոմարի մեծ առաւելութիւնն ալ հաշիւներու այս Փորձը կամ հակադրութիւնն է, զոր բացատրեցինք առաջ:

Փորձակշիռն ընդհանրապէս ամիսը անգամ մը կ'ըլլայ, այսինքն, երբ մէկ ամսուան գործողութիւնները Օրհաշուէն Մայր-հաշիւ անցնին, յաջորդ ամիսը չսկսած, Փորձակշիռը ընելու է. բայց մեծ վաճառատուններու, մանաւանդ գրամատուներու մէջ՝ շարաթիւն անգամ մը կ'ըլլայ, որպէս զի եթէ սխալմունք եղած է, չուտով ուղղուի: Որովհետեւ յօդուածներն Օրհաշուէն Մայր-հաշիւ անցընելու ատեն կրնայ ըլլալ որ մոռցուի Պարտական ընել Պարտական հաշիւ և Պահանջող ընել Պահանջող հաշիւը, ամբողջ յօդուած մը Մայր-հաշիւ անցընել, յօդուած մը երկու անգամ Մայր-հաշիւն անցած, գումարի մը տեղ՝ ուրիշ գումար մը ան-

քան կ'ըլլայ ևլն. ահա՛ բոլոր այդ սխալները կամ մոռացումները եթէ եղած են՝ ուղղելու կամ սխալմունք եղած չըլլալուն համոզուելու համար հնարուած է Փորձակշիռը (1): Ասոնցմէ զատ՝ տարեկան Ընդհանուր կշռի ատեն հաշիւները գոցել և նորէն բանալու համար մեծ դիւրութիւն կը տայ Փորձակշիռը, եթէ ամէն ամիս ըլլայ:

Փորձակշիռը այսպէս կը շինուի: Նախ՝ Օրհաշուին երեսները գումարելու է մինչեւ ամսոյն վերջը կամ մինչեւ այն թուականը՝ ուր Փորձակշիռն ընել կ'ուզուի. վերջը Մայր-հաշուին հաշւոց սկիզբէն սկսելով Պարտիին և Պահանջիին գումարներն ընելու և գիծ մը քաշելով գումարները տակը կամ Մայր-հաշուին գումարի երկրորդ սիւնին մէջ գրելու է, և կամ եթէ այսպէս ընել չուզուի՝ գտնուած գումարները մատիտով վերջին սողին քով գրելու է. ետքը զատ թղթի մը վրայ, որուն ձեւը յաջորդ երեսը կ'երեւայ, հաշւոց անունները գրելով՝ ամէն մէկուն Պարտիին գումարները տակէ տակ գրելու է Պարտի սիւնին մէջ և Պահանջիին գումարները նոյնպէս Պահանջիին սիւնին մէջ, ետքը երկու սիւնները գումարելու է զատ զատ: Երբ Փորձակշիռն Պարտի և Պահանջի սիւներուն գումարներն իրարու հաւասար և Օրհաշուին գումարին համաձայն են՝ ըսել է թէ՛ նոյն ամսոյ կամ մինչեւ նոյն թուականը Օրհաշուին յօդուածները Մայր-հաշիւ անցընելու մէջ սխալ եղած չէ:

Պէտք է գիտնալ թէ՛ Մայր-հաշուին հաշւոց նախորդ ամիսներուն գումարներն ալ միշտ մէկտեղ առնելով գումարելու է, երբ յաջորդ ամիսին փորձակշիռն ընել ուզենք. օրինակի համար, երբ Դեկտեմբ. փորձակշիռն ընենք, Մայր-հաշուին բոլոր հաշւոց նոյն տարւոյ Յունվարէն մինչեւ Դեկտեմբ. վերջը գումարները մէկտեղ առնելով գումարելու է, որպէս զի փորձակշիռն գումարները համաձայն ըլլան Օրհաշուին ընդհանուր գումարին, որ նոյնպէս Յունվարէն մինչեւ Դեկտեմբ. վերջը շարունակ գումարուած է:

Փորձակշիռի թղթին թ. 1 նեղ սիւնին մէջ կը գրուի հաշւոց Մայր-հաշուին քաներո՞րդ երեսը բացուած ըլլալը. թ. 2 լայն սիւնին մէջ՝ հաշւոց անունները. թ. 3-4 սիւններուն մէջ՝ հաշւոց Պարտիին գումարները կոտորակով մէկտեղ. թ. 5-6 սիւններուն մէջ՝ Պահանջիին գումարները կոտորակով մէկտեղ. իսկ փորձակշիռի թղթին կամ տետրակին ճակատը գրելու է ո՞ր ամսոյ փորձակշիռն ըլլալը:

[1] Այս մասին տես՝ մեր Կրկնատոմարը ուրք զատով զիւրք, ուր կ'իշխի օրինակով մը ցուց պարզ կերպով բացատրուած է Փորձակշիռը:

Փորձակշռի քղրին ձևը

Փ Ո Ր Զ Ա Վ Շ Ի Ռ ախոյ 189 .

ՀԱՅԿԱՆԵՐՈՒՆԻ ՄԱՍԻՆ ԿՐԵՐԻ ԿՐԵՐԻ	Հաշիւներուն անունը	Պարտի	Պահանջէ
1	2	3	4
		5	6

Ծանօթ.— Յուցակին վրայի անունները եւ սիւններն ճակի քիւերը ուսանողին դիւրութեան համար դրած ենք. գործի մէջ ասոնք չեն գրուիր փորձակշռի քղրին վրայ :

Փ Ո Ր Զ Ա Վ Շ Ի Ռ

	Պարտի	Պահանջէ
1 Ընդհ. ապրանք	1000	
2 Յակոբ Նճանեան		1000
3 Սնտուկ	3000	
4 Գանձելի տոմսակ	5000	
5 Ընդհ. ապրանք		8000
6 » »	25000	
7 Սնտուկ		10000
8 Վճարելի տոմսակ		15000
9 Պօղոս Սահակեան	2500	
10 Յակոբ Միսասեան	4500	
11 Իրիգոր Թորիկեան	3000	
12 Սնտուկ		2500
13 Գանձելի տոմսակ		4500
14 Վճարելի »		3000
	44000	44000

Ըսածներնիս ուսանողը լաւ ըմբռնելու համար, քիչ առաջ արեւած Մայր-հաշուի տասնեւչորս հաշուց փորձակշռը կը շինենք :

Նախ կ'առնենք Մայր-հաշուին առջի երկու հաշիւները (Տե՛ս թ. 404-405). ետքը երկրորդ օրինակին երեք հաշիւները (Տե՛ս թ. 404). վերջը երրորդ օրինակին երեք հաշիւները (Տե՛ս թ. 406) մենէն վերջը չորրորդ օրինակին վեց հաշիւները (Տե՛ս 407-408), որք թ. 410 երեսի արդիւնքը կը տան :

Յետոյ հասկնալու համար թէ այս գումարները ճիշդ են կամ ոչ, գատ թղթի մը վրայ կը ժողվենք Օրհաշուի օրինակներուն գումարները, որոց ընդհանուր գումարը հաւասար ըլլալու է թ. 410 երեսի գումարներուն :

Նախ Օրհաշուի Ա. օրինակին, թ. 1 երեսի գումարը կ'առնենք, 1000 (Տե՛ս թ. 401)
 Յետոյ » թ. » 2 » » » 8000 (» » 403)
 » » թ. » 3 » » » 25000 (» » 405)
 » » թ. » 4 » » » 10000 (» » 406)
 Հաւարական գումար 44000, որ հաւասար է փորձակշռին գումարներուն. հետեւաբար ըսել է թէ փորձակշռն ալ ճիշդ է :

Եթէ փորձակշռին արդիւնքը սխալ ըլլայ՝ Օրհաշուին յօդուածներուն ի Մայր-հաշիւ փոխադրութիւնը վերաքննելու է կէտադրելով. այսինքն, նայիլ գատ գատ թէ՛ Օրհաշուին նոյն ամսոյ յօդուածները ամբողջապէս և ճիշդ Մայր-հաշիւ անցած են : Լաւ կ'ըլլայ որ այս վերաքննութիւն երկու հոգի ընեն. մին՝ Օրհաշուէն բարձրաձայն կը կարդայ Պարտական և Պահանջող հաշիւները, գումարները և Մայր-հաշուին երեսի թիւերը. իսկ միւսը՝ անոր կարդացածները Մայր-հաշուին մէջ փնտտելով, ինքը եւս բարձրաձայն կը կարդայ հոն գտած հաշիւները, գումարները և թիւերը, որք երբ ճիշդ ըլլան, երկուքն ալ իրենց ձեռքը գտնուած տետրակներուն (մէկը՝ Օրհաշուը և միւսը՝ Մայր-հաշիւը) քննուած և ճիշդ գտնուած գումարներուն առջեւ մատիտով կը կէտադրեն, որով ըսել կ'ըլլայ թէ՛ նոյն գումարները քննուած և երկու տետրակին մէջ ալ ճիշդ գտնուած են : Եթէ փորձակշռին մէկ գումարը միայն, օրինակի համար, Պարտիինը միւսէն (Պահանջիինէն) տարբերի՝ դիւրութեան և ժամանակի կորուստ չըլլալու համար, միայն Պարտի փոխադրութիւնները, այսինքն, միայն Պարտական հաշիւները և անոնց գումարները քննել և կէտադրելու է. իսկ եթէ Պահանջիինը միւսէն (Պարտիինէն) տարբերի՝ միայն Պահանջի փոխադրութիւնները, այսինքն, Պահանջող հաշիւները և անոնց գումարները քննել և կէտադրելու է. իսկ ա՛յն ատեն միայն ամբողջ Օրհաշուին յօդուածները :

րուն փոխադրութիւնը քննել և կէտադրելու է, երբ երեք գումարներն ալ (երկուքը փորձակչոին Պարսֆին և Պահանջֆինը և երրորդը Օրհաշուին գումարը) իրարմէ տարբեր են :


Փորձակչոի ասեն՝ Մայր-հաշուին գոցուած հաշիւներուն (այսինքն, Պարսֆին և Պահանջֆին գումարները հաւասարած) գումարներն ալ մէկտեղ գումարելու է, որպէս զի փորձակչոին գումարներն Օրհաշուին գումարին համաձայնին :

Փորձակչոուը փոխանակ զատ թղթերու վրայ շինելու, որք կրնան կորսուիլ, գործի մէջ մասնաւոր տեսարակ մը կը յատկացնեն, որպէս զի մէկ կամ մէկ քանի տարուանն ամիրոփ տեղ մը երեւայ :

Փորձակչոին վրայ երբեմն երկու սիւն եւս կը դնեն, ուր կը գրուի փորձակչոին Պարսական և Պահանջոյ հաշուոց կշիռները. այդ սիւներուն կշռի կամ Մնացորդի սիւն կ'ըսուի : Այդ սիւները սա օգտակարութիւնը կ'ունենան որ իւրաքանչիւր հաշիւին կշիւրը, որ կ'ըլլայ Պարսֆ կամ Պահանջֆ, մէկ ակնարկով կը տեսնուի հոն :



Գ Լ ՈՒ Խ Զ ՈՐ Ր ՈՐ Դ



ՍԽԱՆԵՐԸ ԿՐԿՆԱՏՈՍԱՐԻ ՏԵՏՐԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Օրէնքին պահանջած երեք տեսարակներէն զատ՝ միւսներուն մէջ եղած սխալները կրնան քերթուիլ, կամ սխալը գծելով վրան ճիշդը գրուիլ, հետեւաբար այդ մասին խօսելու պէտք չկայ : Ասկայն այս թոյլտուութենէն առանց օգտուելու, տոմարակալը ջանալու է Օժանդակ տեսարակներն ալ մաքուր բռնել :



Սխալները Օրհաշուին և Մայր-հաշուին մէջ եւ գտնուի ուղղելու կերպը. — Իսկ Օրհաշուին և Մայր-հաշուին մէջ, ուր կ'ամփոփուին վաճառականին բոլոր գործողութիւնները, հակառակ ամէն ուշադրութեան, երբեմն կ'ըլլան սխալներ, որոց առջեւ նորաժարժը կը շուարի. ուստի հոս պիտի բացատրենք թէ ա. դ երկու տեսարակներուն մէջ ի՞նչ տեսակ սխալներ կ'ըլլան և թէ ի՞նչպէս կ'ուղղուին անոնք :



Սխալները Օրհաշուին մէջ. — Օրհաշուին մէջ կ'ըլլան հետեւեալ սխալները կամ մոռացմունքը. և որովհետեւ զիտենք թէ՛ այս տեսարին մէջ քերթուածքը Օրէնքին հակառակ է, ուստի սխալները կրկնատոմարի մէջ ուրիշ կերպով կ'ուղղուին :

1. Ամբողջ յօդուած մը Օրհաշիւ անցնել կը մոռցուի .
2. Յօդուած մը երկու անգամ Օրհաշիւ անցած կ'ըլլայ .
3. Հաշիւ մը փոխանակ Պարսական ընելու՝ Պահանջոյ ըրած կամ փոխանակ Պահանջոյ ընելու՝ Պարսական ըրած կ'ըլլանք .
4. Հաշիւի մը տեղ սխալմամբ ուրիշ հաշիւ մը Պարսական կամ Պահանջոյ ըրած կ'ըլլանք .
5. Մասնական կամ հաւաքական գումարի սխալ, աւելի կամ պակաս գրուած :

Ուղղելու կերպը

1. Եթէ ամբողջ յօդուած մը Օրհաշիւ անցնել մոռցուած է, պարզապէս Օրհաշուին շարունակութեան մէջ անցնելու է այդ մոռցուած յօդուածը իր թուականովը. միայն թէ՛ նոյն յօդուածին մէջ յիշելու է իր կարգին անցնել մոռցուած ըլլալը :

2. Եթէ միեւնոյն յօդուածը երկու անգամ Օրհաշիւ անցած է. նոյն երկու յօդուածներուն հակառակ երրորդ յօդուած մը անցնելու է, որպէս զի կրկին գրուած յօդուածը ջնջուի :

Օրինակ. հետեւեալ յօդուածը երկու անգամ Օրհաշիւ անցած է

Ընդհ. ապրանք ն. Գրիգորեանին 10000

Ասի ուղղելու համար երրորդ յօդուած մը գրելու է այսպէս

ն. Գրիգորեան Ընդհ. ապրանքին 10000

... թուական յօդուածն երկու անգամ անցած ըլլալով՝ մին ջնջելու համար :

Այսպէս գրուելով՝ Մայր-հաշուին մէջ ն. Գրիգորեանի հաշիւը, որ կրկին անցած յօդուածով 20000 Պահանջոյ եղած էր, այս երրորդ յօդուածով 10000 ալ Պարսական եղաւ, որով կը մնայ իր Պահանջֆը միայն 10000, որ իր ճիշդ առնելիքն է :

3. Պողոսին 2000 զշ.ի ապրանք ծախուեր է կանխիկ, բայց Օրհաշիւը փոխանակ

Սնուկ Ընդհ. ապրանքին 2000

գրելու, սխալմամբ

Ընդհ. ապրանք Սնուկին 2000

գրեր ենք :

Այս տեսակ սխալներն ուղղելու համար երկու յօդուած գրելու է Օրհաշիւը. առջինով՝ սխալ գրուած յօդուածը ջնջելու, երկրորդով՝ որ ուղիղն է, միւսներուն տեղը բռնելու համար :

Արդ՝ մենք ալ վերոյիշեալ սխալն ուղղելու համար կը գրենք Օրհաշիւը նախ առաջին յօդուած մը այսպէս ,

Սնուկ Ընդհ. ապրանքին 2000

...Թուական յօդուածը սխալ գրուած ըլլալով՝ ջնջելու համար Ետքը ուղիղը գրելու համար երկրորդ յօդուած մը կը գրենք այսպէս ,

Սնուկ Ընդհ. ապրանքին 2000

Վերոյգրեալ յօդուածին ուղիղը :

4. Գրիգոր անունով երկու յաճախորդ ունինք , մէկը՝ Յակոբեան , միւսը՝ Սերովբեան : Գրիգոր Յակոբեանի 5000 դշ.ի ապրանք ծախեցինք ապառիկ , բայց Օրհաշիւը սխալմամբ Գրիգոր Սերովբեանը Պարսական ըրեր ենք , այսինքն , գրեր ենք

Գրիգոր Սերովբեան Ընդհ. ապրանքին 5000

Այս տեսակ սխալներն ալ ուղղելու համար , Օրհաշիւը դարձեալ երկու յօդուած գրելու է . առջինով՝ Գրիգոր Սերովբեանը , զոր ի զուր Պարսական ըրած ենք : (որովհետեւ ապրանքը անոր չենք ծախած) Պահանջող ընելու և այսպէս սխալը ուղղելու համար : Երկրորդով՝ որ ուղիղն է , միւս երկուքին տեղը բռնելու համար : Արդ՝ մենք ալ վերոյիշեալ սխալն ուղղելու համար պիտի գրենք Օրհաշիւը նախ առաջին յօդուած մը այսպէս ,

Ընդհ. ապրանք Գրիգոր Սերովբեանի 5000

... Թուական յօդուածը սխալ գրուած ըլլալով՝ ջնջելու համար :

Ետքը ուղիղը գրելու համար երկրորդ յօդուած մը կ'անցընենք այսպէս ,

Գրիգոր Յակոբեան Ընդհ. ապրանքին 5000

Վերոյգրեալ յօդուածին ուղիղը :

5. Հետեւեալ յօդուածին 5000 դշ.ի գումարը սխալմամբ 3000 անցեր է Օրհաշուի սիւնին մէջ .

Յակոբ Սիմօնեան Սնուկին 3000

Այս տեսակ սխալներն ուղղելու համար , պակաս գրուած գումարին , այն է՝ 2000ին համար ուրիշ յօդուած մը գրելու է այսպէս ,

Յակոբ Սիմօնեան Սնուկին 2000

... Թուական յօդուածին 5000ի գումարը սխալմամբ գումարի սիւնին մէջ 3000 անցած ըլլալով՝ 2000ի պակասը կ'ամբողջացնեն :

Իսկ եթէ փոխանակ պակասի՝ աւելի անցած է , օրինակի համար , հետեւեալ յօդուածին 6000ի գումարը սխալմամբ 9000 անցեր է Օրհաշուի սիւնին մէջ .

Կ. Աքրահամեան Ընդհ. ապրանքին 9000

Այս տեսակ սխալներն ուղղելու համար , աւելի գրուած գումարին , այն է՝ 3000ին համար վերինին հակառակ ուրիշ յօդուած մը գրելու է այսպէս ,

Ընդհ. ապրանք Կ. Աքրահամեանի 3000

... Թուական յօդուածին 6000ի գումարը սխալմամբ գումարի սիւնին մէջ 9000 անցած ըլլալով՝ 3000 աւելին այսու կ'ուղղեմ : Բոլոր այս սխալները Օրհաշուին մէջ ուղղելէ ետքը , բնականաբար դանձնք Մայր-հաշիւ ալ անցընելու է :

Սխալները Մայր-հաշուին մէջ . — Օրհաշուին յօդուածները Մայր-հաշիւ անցընելու ատեն հետեւեալ սխալները կ'ըլլան .

1. Ամբողջ յօդուած մը կամ յօդուածի մը Պարսականը կամ Պահանջողը Մայր-հաշիւ անցընել կը մոռցուի :
2. Յօդուած մը երկու անգամ կ'անցնի :
3. Հաշիւ մը փոխանակ Պահանջին՝ Պարսիկն կողմը և փոխանակ Պարսիկն՝ Պահանջին կողմը անցած կ'ըլլայ :
4. Գումարի մը տեղ ուրիշ գումար մը կ'անցնի :
5. Հաշիւի մը գումարը ուրիշ հաշիւի մը կ'անցնի :

Ուղղելու կերպը

1. Եթէ յօդուած մը կամ անոր մէկ մասը անցընել մոռցուած է , նշմարուած պահուն իսկ՝ այդ յօդուածն անմիջապէս անցընելու է իր թուականովը :
2. Եթէ յօդուած մը երկու անգամ անցած է՝ առանց Օրհաշիւը յօդուած մը գրելու , հակառակ կերպով կը ջնջուի , այսինքն թէ՛ հաշիւի մը Պարսիկն միեւնոյն գումարը , օրինակի համար , 4000ը երկու անգամ անցած է , (որ կ'ընէ 8000) զայն ուղղելու համար , նոյն հաշիւին Պահանջին տանելու է երկու անգամ Պարսիկն անցած 8000ին միոյն չափ գումար մը , այսինքն , 4000 . Իսկ ընդհակառակը . եթէ հաշիւի մը Պահանջին միեւնոյն գումարը երկու անգամ անցած է՝ զայն եւս ուղղելու համար , նոյն հաշիւին Պարսիկն տանելու է երկու անգամ Պահանջին անցած գումարին միոյն չափ գումար մը :

Այդ տեսակ սխալներն ուրիշ կերպով ալ կ'ուզողին, այսինքն, Օրհաշիւը յօդուածներ գրելով նախ սխալը ուզողի և ետքը ուղիղը գրելով, սակայն այս կերպը երկար կ'ըլլայ:

3. Եթէ հաշիւ մը փոխանակ Պարսֆին՝ Պահանջֆին կողմը և փոխանակ Պահանջֆին՝ Պարսֆին կողմը անցած է, առանց Օրհաշիւը յօդուած գրելու, միայն Մայր-հաշուին մէջ հաշիւ մ'անցընելով կ'ուզողուի: Առաջին պարագային՝ Պարսֆին կողմը գրելու է սխալմամբ Պահանջֆին անցած գումարին կրկինը. իսկ երկրորդ պարագային՝ Պահանջֆին կողմը գրելու է սխալմամբ Պարսֆին անցած գումարին կրկինը:

Պէտք է գիտել սակայն թէ՛ այս կերպով ինչպէս նաեւ թ. 2 պարագային մէջ՝ Մայր-հաշուին հաշուց գումարները կ'աւելնան, առանց միանգամայն Օրհաշուին գումարն ալ աւելնալու, որով Փորձակշոխ ատեն՝ Մայր-հաշուին հաշուց ընդհանուր գումարները Օրհաշուին գումարին չեն համապատասխաներ, այսինքն, Մայր-հաշուին գումարները աւելի կ'ըլլան: Ատոր առաջքն առնելու համար, Մայր-հաշուին մէջ կրկին գումարած այդ գումարներուն առջեւ կարմիր մելանով աստղանիշ մը դնելու է. որպէս զի Փորձակշոխ ատեն այդ գումարները մէկտեղ չգումարուին:

4. Գումարի մը տեղ ուրիշ գումար մը կ'անցնի:

5. Հաշիւի մը գումարը ուրիշ հաշիւի կ'անցնի:

Այս երկու տեսակ սխալներն ալ, որք միայն գումարի վրայ են, կրնան քերթուելով ուղիղը գրուիլ:

Գ Լ ՈՒ Խ Ն Հ Ի Ն Գ Ե Ր ՈՐ Դ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՏԵՏՐՈՎՆԵՐ

Երրորդ Գլխուն մէջ երկրորդական տետրակներէն միայն Չեռատետրին վրայ խօսեցանք, հիմա մնացածներուն վրայ պիտի խօսինք անոնց ձեւերն ալ ցուցընելով:

Կ Ն Մ Ա Ն Տ Ե Տ Ր

Գնման տետրին մէջ կ'օրինակուին գնուած ապրանքաց հաշուեցոյցները, որուն համար Գնման ՏԵՏՐ կ'ըսուի. որ գրեթէ Չեռա-

տետրին նման է և անոր պէս ամէն երեսին վրայ կարգի թիւ կը գրուի թ. 1էն սկսելով: Երբ գնուած ապրանքին հաշուեցոյցը բազմանիւթ է, զոր Օրհաշիւ անցընել երկար կ'ըլլայ, այդ տեսակ հաշուեցոյցները և առ հասարակ զանազաններէ գնուած ապրանք բոլոր հաշուեցոյցները այս տետրին մէջ կ'օրինակուին:

Օտար և հեռուոր երկիրներէ գնուած ապրանքաց հաշուեցոյցներուն մէջ՝ ապրանքի վերաբերեալ շատ մը ծախքեր կ'ըլլան, օրինակի համար. հակողչէք, փոխադրողչէք, նաւողչէք, ապահովողչէք, միջնորդչէք, յանձնառողչէք ևլն. ևլն. զորս նոյնպէս գնման տետրին մէջ օրինակել և ապրանքին գումարին վրայ աւելցնելու է, որպէս զի ապրանքը իր ծախքերովը քանի՞ր՝ արժած ըլլալը հասկցուի:

Այս կարգի հաշուեցոյցներուն գումարները, որք օտար գերամներով, այսինքն, սթէռլինով, ֆրանքով, մարքով, ֆիօրինով ևլն. կ'ըլլան, իրենց որոշեալ գիններովն Օ. Լ. ի վերածելու և այնպէս գրելու է գումարի սխնին մէջ:

Աւելորդ է ըսել թէ՛ հաշուեցոյց մը այս տետրին մէջ օրինակելէ առաջ, քննելու է անոր հաշուց ճշդութիւնը և օրինակելէ ետքը, հաշուեցոյցին վրայ նշանակելու է Գնման ՏԵՏՐԻՆ ԵՐԵՍԻ ԹԻՎԸ, ուր անցած է այդ հաշուեցոյցը, որպէս զի ատով տետրակը անցած ըլլալը հասկցուի:

Երբ ապառիկ գնուած ապրանք բոլոր հաշուեցոյցները Գնման տետրին մէջ կը գրենք, տարակոյս չկայ թէ այս տետրին ամէն ամսոյ գումարը (կանխիկ գնուածներն ալ վրան աւելցնելով) հաշուար ըլլալու է՝ Մայր-հաշուին մէջ բացուած Ընդհ. ապրանքի հաշիւին Պարսֆին նոյն ամսոյ գումարին, քանի որ գիտենք թէ՛ գնուած ապրանքաց համար Ընդհ. ապրանքի Պարսակսն կ'ըլլայ, այսինքն, գնուած ապրանքաց գումարը այս հաշիւին Պարսֆին կ'անցնի:

Գնման տետրին մէջ՝ ապրանքը ծախողին անունը գլխադրով և Պահանջի սկզբնաւորութեամբ կը գրուի:

Պոյսոյ վաճառականները այս տետրակը գրեթէ չեն բռնէր, այլ կը շատանան ստացած հաշուեցուցակներին մասնաւոր տետրակի մէջ պահել և ամէն տարուանը զատ կապոց ընել. բայց և այնպէս մենք կը դնենք յաջորդ երեսը Գնման ՏԵՏՐԻՆ ձեւը և գրութեան կերպը:

2 Մարտ 1898			
Պահանջէ Ա. Պետրոսեան			
իր հաշուեցոյցին համար, վճարելի 41 օրէն			
2 հակ վաթէր մանած թ. 12 14 զ. 800 ղ2.	1600	-	
3 » » » » 20 24 » 1000 »	3000	-	
5 » » » » » » 1425 »	7125	-	11725
6			
Պահանջէ Բ. Նեանեան			
իր հաշուեցոյցին համար, վճարելի 61 օրէն			
100 ծրար ամերիքան 5 ¹ / ₂ լիպրա զ. 30 ղ2.	3000	-	
200 » » 6 ¹ / ₂ » » 35 »	7000	-	10000
11			
Պահանջէ Կ. Համամեան			
իր հաշուեցոյցին համար, վճարելի 31 օրէն			
100 ծրար սովաշպուր 6 րուպնոց զ. 18 ¹ / ₂ ղ2.	1850	-	
20 » մատամբոլ թ. 300 » 75 »	1500	-	3350
			25075

Այս տետրը նախորդին հակառակն է, զի ինչպէս ըսինք, Գնման ճեսրին մէջ կ'օրինակուին գնուած ապրանայ հաշուեցոյցները, իսկ Վաճառման ճեսրին մէջ՝ ծախուածներուն հաշուեցոյցները, որուն համար Վաճառման ճեսր կ'ըսուի: Ատոր ալ երեսի գրիծերը և թիւը միւսին նման է:

Այս տետրը կարեւոր է, զի ասով վաճառականը առաջքը կ'առնէ ծախած ապրանայ քանակին, չափին, գինին, և ինչ առթիւ ծագելիք վէճերուն, մանաւանդ երբ Օրհաշուին մէջ չգրուի հաշուեցոյցներուն մանրամասնութիւնը:

Յայտնի է թէ հաշուեցոյց մը այս տետրին մէջ օրինակել է և գնողին յանձնելէ առաջ, քննելու է անոր հաշուոց ճշդութիւնը և օրինակել է ետքը հաշուեցոյցին վրայ նշանակել Վաճառման ճեսրին երեսի թիւը, ուր անցած է այդ հաշուեցոյցը:

Երբ ապառիկ ծախուած ապրանայ բոլոր հաշուեցոյցները Վաճառման տետրին մէջ կը գրենք, տարակոյս չկայ թէ՛ այս տետրին ամէն ամսոյ գումարը (կանխիկ ծախուածներն ալ վրան աւելցնելով) հաւասար ըլլալու է՝ Մայր հաշուին մէջ բացուած Ընդհանուր ապրանքի հաշիւին Պահանջիին նոյն ամսոյ գումարին, քանի որ գիտենք թէ ծախուած ապրանայ համար Ընդհանուր ապրանքը Պահանջող կ'ըլլայ. այսինքն, ծախուած ապրանայ գումարը այս հաշիւին Պահանջիին կ'անցնի:

Վաճառման տետրին մէջ՝ ապրանքը գնողին անունը գլխադրով և Պարտի սկզբնաւորութեամբ կը գրուի:

Պօլոյ վաճառականները այս տետրին մէջ կը գրեն միայն քանազաններու ապառիկ ծախուած ապրանքները իրենց կարեւոր մանրամասնութեամբը, յետոյ անոնց գումարը կ'անցնեն Զանազան պարտականի տետրին մէջ՝ հաշիւներ բանալով ամէն գնողի համար, երբ չ'ուզեն իրենց Մայր-հաշուին մէջ բանալ այդ հաշիւները: Շատեր այդ հաշուեցոյցները իրենց նամակի ընդօրինակութեան տետրին մէջ կ'օրինակեն մամուլի միջոցաւ: Իսկ անոնք, օրինակի համար, յանձնառուները, որք շատերու ապրանք կը զրկեն, այդ հաշուեցոյցները ընդօրինակութեան մասնաւոր տետրակի մը մէջ կ'օրինակեն, նամակի ընդօրինակութեան տետրին նման, որուն վրայ վերջէն պիտի խօսինք:

5 Մայիս 1898			
Պարտի Բ. Գեորգեան Մարզրվանցի			
վճարելի 41 օրէն			
1 հակ վաթէր մանած թ. 2 ⁰ / ₂₁ զ. 1020	1020	-	
2 » կապոյտ » » » 1425	2850	-	
1 » վաթէր » » 12 ¹ / ₁₄ » 810	810	-	4680
7			
Պարտի Կ. Սահակեան Սիվերիխարցի			
վճարելի 61 օրէն			
20 ծր. կարմիր տպածոյ 800 երտ. զ. 2 ղ2.	1600	-	
30 » բուէթօն » 1200 » » 3 »	3600	-	5200
»			
Պարտի Մ. Գրիգորեան Կարնեցի			
վճարելի 91 օրէն			
20 ծր. ֆանէլա բառակուտի 805 երտ. զ. 8 ղ2.	6440	-	
5 » » ճերմակ 200 » » 7 »	1400	-	7840
			17720

Ինչպէս քիչ վերջը պիտի խօսինք, վաճառականը Մքերտեսիին միջոցաւ ուզած առեւեր կը գիտնայ վաճառատունը գանուած ապրանքին քանակը. անանկ ալ գիտնալու է իր առձեռն գրամոց հաշիւը, այսինքն թէ՛ ո՞ւրիկ է և ո՞րչափ գրամ կ'առնէ և թէ՛ որո՞ւ և ո՞րչափ գրամ կը տայ, և թէ՛ Մնտուկը ո՞րչափ պատրաստ գրամ

կայ. այս մանրամասնութեանց պատկերը ներկայացնող տետրակին կ'ըսուի Դրանաւարկոյի կամ գործածական բառովը՝ Սնտուկի տետրակ. որ շատ կարեւոր է վաճառականին համար:

Սնտուկի տետրին ձեւը՝ Մայր-հաշուին մէջ բացուած Սնտուկի հաշիւին նման է: Եւ արդէն մասնաւոր Սնտուկի տետրակ պէտք չըլլար, եթէ ամէն գործողութիւն օրն օրին Օրհաշիւը և Մայր-հաշիւը անցնի. այն ատեն Մայր-հաշուին Սնտուկի հաշիւը Սնտուկի տետրակին տեղը կը բռնէ: Իսկ երբ տետրակները օրն օրին գրել անկարելի ըլլայ, ինչ որ շատ կը պատահի մեծ վաճառատուններու և դրամատուններու մէջ, և ուր ամէն օր դրամական գործողութիւններ շատ կ'ըլլան, այն ատեն Սնտուկի մասնաւոր տետրակը անհրաժեշտ է, ուր օրն օրին և անմիջապէս կը գրուի Սնտուկը մտած և ելած դրամները և ատով կը գիտնանք Սնտուկին պատրաստ դրամին որքանութիւնը:

Սնտուկի տետրին երկու երեսները մէկտեղ կը բացուին, որոց վրայ միեւնոյն երեսի թիւերը կը գրուին: Չախ երեսին վերի ծայրը կը գրուի գլխադրով ՄՈՒՏՔ, և աջ երեսին վերի ծայրը ԵԼՔ. մէջտեղը 189. ՍՆՏՈՒԿ... ԱՄՍՈՅ բառերը, զոր ամէն նոր երեսի վրայ կրկնելու է:

Ինչպէս թ. 422-423 երեսներուն վրայ կ'երեւայ, Սնտուկի տետրին երկու երեսին վրայ ալ երեք սիւն գծուած է կամ կը գծուի առջինը՝ թուականի, երկրորդը՝ գումարի և երրորդը՝ կոտորակին համար (եթէ ունի): Սնտուկի տետրին ձախ երեսին վրայ, այսինքն, Մոսքիին կողմն անմիջապէս կը գրուի Սնտուկը մտած դրամը իր թուականովը, սուտղին անունը և կամ ի՞նչ հաշուէ առնուած ըլլալը, համաձայն և մէկ սողի վրայ. իսկ աջ երեսին վրայ, այսինքն, Ելիին կողմը Սնտուկէն ելած դրամը իր թուականովը, սուտղին անունը և կամ ի՞նչ հաշուի համար տրուած ըլլալը մէկ սողի վրայ:

Սնտուկի պատրաստ տետրակներուն վրայ գումարի և կոտորակի համար երրորդ սիւն մ'ալ կ'ըլլայ, ուր կը գրուին մասնակի գումարներուն հաւաքական գումարները, երբ տետրակին երեսը լեճալով գումարել և գումարը յաջորդ երեսը փոխադրել, կամ ամիսը լրանալուն՝ Սնտուկի տետրակը դոցելու համար գումարները հոն փոխադրել հարկ ըլլայ:

Արդ՝ երբ Սնտուկի տետրին մէկ կողմը առնուած կամ Սնտուկը մտած դրամները, և միւս կողմը տրուած կամ Սնտուկէն ելածները գրենք, ըսել է թէ երկու կողմի գումարներուն կշիռը՝ Սնտուկին վիճակը պիտի ցուցնէ, այսինքն, Սնտուկը գտնուած դրամին որքանութիւնը: Արոշեալ ժամանակներ, զորօրինակ, ամէն օր, շաբթէ շաբաթ կամ ամսէ ամիս Սնտուկին հաշիւը նայելու է, որուն Սնտուկին փորձն ընել կ'ըսուի:

Սնտուկին փորձը այն գործողութիւնն է, որով Սնտուկը գրած պատրաստ դրամին որքանութիւնը՝ Սնտուկի տետրին ցուցած գումարին հետ կը բազդատուի և ճիշդ կամ սխալ ըլլալը կը հասկցուի: Սնտուկին փորձը ընելու համար՝ տետրակին Մոսքիին և Ելիին գումարները թղթի մը վրայ ընելով, անոնց միասորդը կամ կշիւը գտնալու է, որ կը ցուցնէ Սնտուկին պատրաստ դրամն, եթէ Մոսքիին գումարը Ելիինէն շատ է. իսկ եթէ երկու գումարները հաւասար են, ըսել է թէ Սնտուկը պատրաստ դրամ ըլլալու չէ. իսկ Ելիին գումարը Մոսքիինէն շատ չի կշնար ըլլար. վասնզի յայտնի է թէ դրամ մը առանց մուտք ըլլալու է՞ չի կրնար ըլլալ, եթէ ոչ՝ սխալ գրուած բան մը կայ ըսել է, այսինքն, կամ մուտք մը դրել մոռցուած է և կամ ելք մը աւելի գրուած է, զորս զատ զատ աչքէ անցընելու է:

Սնտուկին սխալները. — Կրնայ ըլլալ որ, Ա. Սնտուկին պատրաստ դրամը՝ Սնտուկի տետրին ցուցուած գումարէն Աւելի ըլլայ:

Բ. Պատրաստ դրամը՝ Սնտուկի տետրին ցուցուածէն Պակաս ըլլայ:

Առաջին պարագային՝ հարձափորձելու է հասկնալու համար թէ՛ չըլլայ որ գործին տէրը կամ գանձապետը իր անձնական դրամը Սնտուկը գրած ըլլայ, առանց գրելու կամ գրել տալու. կամ կանխիկ ծախքի մը դրամը ըլլայ, որ նոյնպէս Սնտուկը գրուած չըլլայ. այն ատեն հարկ է քննել կանխիկ ծախքի տետրակը, հարցնել վաճառատան պաշտօնեաներուն թէ մի գուցէ մէկուն հաշուոյն ծախուած սպրանքին դրամը ըլլայ ան և տետրակը գրուած չըլլայ. կամ յաճախորդ մը դրամ վճարած ըլլայ. վերջապէս Սնտուկին հաշիւը նայուած օրը, որ ընդհանրապէս իրիկունը կամ առտուն կանուխ կ'ըլլայ, պէտք է յիշել այն անձերը, որք նոյն օրը վաճառատան հետ գործ ունեցած են:

Եթէ սխալը չգտնուի՝ աւելցած գումարը չահ ըսելով Սնտուկը գրելու է. և եթէ օրեր անցնելէ հետք սխալը գտնուի՝ աւելցած գումարը ի՞նչ հաշուէ որ առնուած է, նոյն հաշիւին անցընելու է:

Երկրորդ պարագային՝ հարցափորձելու է գարձեալ հասկնալու համար թէ՛ չըլլայ որ գործին տէրը կամ գանձապետը իր անձնականին համար դրամ առած ըլլայ, և Սնտուկը գրել սուած չըլլայ, կամ մէկուն դրամ առած ըլլայ և Սնտուկը գրուած չըլլայ. վերջապէս Ա. պարագային մէջ բացատրուածին պէս, պէտք է յիշել նոյն օրուան գործողութիւնները:

Եթէ սխալը չգտնուի՝ պակաս գումարը վաստ ըսելով Սնտուկը գրելու է, ինչպէս որ մենք ալ մեր Չեռատետրին թ. 13 յօդուածին մէջ նոյն բանը ըրած ենք, Սնտուկի հաշիւին ժամանակ պակասած մէկ Լին համար:

1 Մուսխ

1898

ՍՆՏՈՒԿ ԱՄՍՈՅ

1898

Ելք 1

1898	1	Գրած դրամագլուխս 1000 Լ. 0.	1000	1	Գնած զանազան կարասիներու համար	3000
»	8	Կանխիկ ծախս	1000	16	Ա. Ե. Մ. Գարակեղոզեանի հաշուեցոյցը վճարուած	53500
»	27	»	1000	20	Պանք Օթովանի սրուած	20000
»	30	Հօրեղբորդէս Գ. Սահակեանի փոխ առած $\frac{1}{4}$ տոկոսով	1000	28	Մեհմէտ Ապուս է. Ֆ. ի հաշուեցոյցը վճարուած	3200
					Գ. Պօղոսեանի վճարուած իր պահանջք	19503
					Մարգար Տասրեանի վճարուած	9800
					Վանառասան պաշտօնէից Յնկը. ամսականը վճարուած	1300
					Պասրասն ի յաջորդ ամիս	31342 20
			14180			141645 20

2 Մուսխ

1898

ՍՆՏՈՒԿ ՓԵՇԱԿ ԱՄՍՈՅ

1898

Ելք 2

1898	1	Պասրաս նախորդ ամիսէն	317	1	Վճարուած p.1 տոմսակս	4320
»	»	Պանք Օթովանէ առնուած	500	16	Հօրեղբորդուցոյցու նուէր	1000
»	9	Ն. Մանիսարեանի տոմսակը գանձուած	174	20	Պանք Օթովանի սրուած	30000
»	10	Գ. Մարտեանի վրայ տուած վարկագիրս	500	28	Վանառասան պաշտօնէից Փեշ. ամսականը վճարուած	1300
»	12	Ք. Գարսեանի փոխանակագիրը գանձուած	500		Պասրասն ի յաջորդ ամիս	30522 20
»	»	Պանք Օթովանէ առնուած	300			
			671			67142 20

Օրեր անցնելէ ետքը սխալը եթէ երեւան ելնէ, պակասած գումարը ինչ հաշուի համար որ տրուած է, նոյն հաշիւին անցընելու է:

Մնաւորին հաշիւը ճիշդ գտնուած ատեն, կշիւը փոխադրելու է Ելքին կողմը գրելով Սնտուկը պասրասս որում կամ Պասրասն ի յաջորդ ամիս (եթէ Մնաւոր ամսէ ամիս գոցուի) և երկու կողմի գումարներն բնկրով, անոնց տակը գոյգ գիծեր քաշելու է, որուն Սնտուկը գոցել կ'ըսուի. ետքը նոյն կշիւը փոխադրելու է Մուսխին կողմը յաջորդ օրուան թուականով գրելով Սնտուկը պասրասս որում կամ պարզապէս Պասրաս նախորդ ամիսէն (եթէ Մնաւոր ամսէ ամիս գոցուի) ինչպէս կ'երեւայ մեր վերի օրինակին վրայ:

Մնաւորին փորձը փոխանակ շարաթը կամ ամիսը անգամ մը բնկրու, լաւ կ'ըլլայ ամէն օր իրիկունը ուշ ատեն կամ առաւոյն կանուխ բնկել, մանաւանդ այն վաճառատուններու և դրամատուններու համար, ուր ամէն օր դրամի տուր և առ շատ կ'ըլլան. վասն զի օրուան սխալը գտնել աւելի դիւրին է, քան շարաթէ կամ ամիսէ մը ետքը, որ ատեն սխալը գտնել եթէ ոչ անկարելի՛ գէթ շատ տաղտկալի կ'ըլլայ:

Մեծ վաճառատուններու մէջ՝ Մնաւորը, այսինքն, դրամի տուրեառի գործողութիւնը մասնաւոր մէկուն յանձնուած է, որ միայն դրամ կ'առնէ և կը տայ և առածն ու տուածը Մնաւորի տետրակը կը գրէ. այդ անձին կ'ըսուի Գանձապէտ (!) (Caissier):

[1] Որպէս զի սխալումք չըլլայ, գանձապէտը, իր բնիցմուտ կանոն, դրամ մը չառած Սնտուկը գրելու չէ. նոյնպէս դրամ մը չտուած Սնտուկը գրելու չէ:

Իսկ մեծ գրամատուցներու մէջ դրամի տուրեաւոր երկու տեղ բաժնուած է. մէկ տեղ մը դրամ կը արուի և ուրիշ տեղէ մը դրամ կ'առնուի. այդ երկու տեղն ալ մասնաւոր մէկ մէկ պաշտօնէի յանձնուած է:

Մնտուկի տետրին ամէն ամսոյ Մուսսիին և Ելլին գումարները և անոնց կշիւր հաւատար ըլլալու են՝ Մայր-հաշուին մէջ բացուած Սնտուկի հաշիւին Պարսիին և Պահանջիին գումարներուն և կշիւր. քանի որ գիտենք թէ՛ Մնտուկի հաշիւը Պարսիական կ'ըլլայ Արնտուկը մտած դրամներուն համար, և Պահանջող՝ երածներուն համար:

Պզտի Սնտուկի սեռակիր. — Մնտուկի տետրակը պզտի և աննշան գումարներով չի խճողելու համար, ամսոյն մէջ եղած վաճառատան և մանր ծախքերը Պզտի Սնտուկի սեռակ անունով տետրակի մը մէջ կը գրուի, և ամսոյն վերջը այդ ծախուց գումարը բուն Մնտուկի տետրակը կ'անցնի Այս ամսոյ մանր ծախքերը բերով:

Մնտուկի տետրակը փոխանակ երկուքի՝ մէկ երեսի վրայ ալ կը գրուի: Տետրակին աջ կողմը գումարներուն համար քով քովի երկուքական սիւն գծելով. որոց մէկուն մէջ՝ Մուսսիին և միւսին մէջ՝ Ելլին գումարները կը գրուին այսպէս:

1898 ՅԵՏՈՒԿ ՄԱՐՏ ԱՄՈՍ

		Մուտք	Ելք
1898			
Մարտ	1 Պարսուս նախորդ ամիսէն	30522	20
»	5 Պանի Օբուսնէ առնուած	20000	
»	10 Գնուած փոխակ. գիր £ 400 գ. 110 5/8		44150
»	12 Կանխիկ ծախք	6750	10
»	18 »	4506	30
»	20 Պանի Օբուսնէ առնուած	20000	
»	23 Վնարուած բերհաւի Մ. Սիսոնեանի		35000
»	25 Գանձու. Ասարնեանի փոխակ. գիրը	15000	
»	27 Կանխիկ ծախք	3267	20
»	28 Գնու. փոխակ. գիր Ֆր. 2500 գ. 23, 10		10822
»	31 Վնուսան. պատճենէից Մրս. ամսկեր.		1300
»	» Պարսուսն ի յաջորդ ամիս		8774
		100047	100047
Ապրիլ	1 Պարսուս նախորդ ամիսէն	8774	20

Ինչպէս քիչ առաջ ըսինք, Սնտուկի սեռակը վաճառականին Մնտուկին պատրաստ դրամը կը ցուցնէ, Մթերատետրն ալ վաճառատանը պատրաստ ապրանքին քանակը կը ցուցնէ: Բայց Մնտուկի տետրակը ընդհանրապէս միայն մէկ տեսակ դրամի միութիւններ կայացնելուն, զայն գրելն ալ դիւրին է, մինչդեռ Մթերատետրը՝ շատ տեսակ ապրանքներ ներկայացնելուն, զայն բռնելը քիչ մը դժուար է:

Մթերատետրը կարելոր է մեծաքանակ-վաճառականներու համար, որք հոն կը գրեն զնամ և ծախած ապրանքներնին, որով ազած ատեննին դիւրաւ և շուտով կը գիտնան թէ՛ վաճառատունը քնշ տեսակէ և ո՞րչափ պատրաստ ապրանք կայ, և ատով շուտով կը հասկնան իրենց պաշտօնէից հաւատարմութիւնը կամ խարդախութիւնը: Զորօրինակ, մեր Մթերատետրի օրինակին վրայ Մուսսիին կողմը 16 հակ վաթէր մանած առնուած, իսկ Ելլին կողմը երկու անգամէն 6 հակին ծախուած ըլլալը կ'երեւայ. ըսել է թէ վաճառատունը պատրաստ 10 հակ մանած ըլլալու է. եթէ 10 հակէն պակաս գտնուի՝ կամ ծախուած և Մթերատետրը չէ գրուած և կամ գողցուած է:

Մնտուկի տետրակին պէս, ուղուած ատեն, կարելի է վաճառատունը գտնուած ապրանքին որքանութիւնը քննել նոյնպէս և Մթերատետրին հետ հակակշռել: Այս տետրին միջոցաւ վաճառականը կը գիտնայ նաեւ ամէն տեսակ ապրանքի ո՞ւր կ'իջ գին առած և որ ո՞ւր և ի՞նչ գին ծախած ըլլալը:

Մթերատետրին, որուն ձեւը յաջորդ երեսներուն վրայ կ'երեւայ, երկու երեսը միանգամայն բանալով՝ պէտք եղած գիծերը քաշելէ ետքը՝ ծախ երեսին վերի ծայրը Մուսսի, և աջ երեսին վերի ծայրը Ելլ գրելու է զխազրով:

Երբ Մթերատետրը այսպէս կը պատրաստուի՝ զնուած կամ ո՞ւր է պատճառով վաճառատունը մտած ապրանքները ծախ երեսին վրայ, այսինքն, Մուսսիին կողմը. իսկ ծախուած կամ ո՞ւր է պատճառով վաճառատունէն երածներն ալ աջ երեսին վրայ, այսինքն, Ելլին կողմը կը գրուին իրենց Մուտքի և Ելքի թուականներովն, այնպէս որ իւրաքանչիւր ապրանքին Մուսսիին և Ելլին կշիւր՝ վաճառատունը պատրաստ գտնուած ապրանքները կը ցուցնէ, ինչպէս Մնտուկին Մուսսիին և Ելլին կշիւր՝ Մնտուկին պատրաստ դրամը: Բայց որովհետեւ չըլլար որ ապրանք մը միշտ մէկ անգամէն ծախուի, անոր համար Մթերատետրին Ելլին կողմը պարագայ տողեր շատ ձգելու է ապրանքին ծախուելուն համեմատութեամբ, որպէս զի բոլոր ծախուածները Ելլին կողմը գրել կարելի ըլլայ:

Ասկէ կը հետեւի թէ՛ Մթերատեարը չի յարմարիր փոքրաքանակ-վաճառականներու, օրինակի համար, դեղագործներուն, մանրավաճառներուն (խուրտավաթճի), ևլն., որք զանազան տեսակ ապրանքներէ միշտ մաս առ մաս և փոքր քանակութեամբ ծախելնուն համար, միմիայն անոնց ամէնը Մթերատեարը գրելու համար մասնաւոր գրադիր մը պէտք է:

Բայց և այնպէս, եթէ գործը ներէ, ջանալու է միշտ Մթերատեարը ունենալ, օրինակի համար, եթէ փոքրաքանակ (ծրարով) տպածոյի գործ է, առանց տեսակները գատելու, որ շատ երկար կ'ըլլայ, գոնէ միայն ծրարներու Մոսսին ու Ելջը բռնելու է. իսկ եթէ փոքրաքանակ (կապոցով, բաքէթ) բաժնակի գործ է, նոյնպէս առանց տեսակի տարբերութեան, միայն կապոցներու Մոսսին ու Ելջը գրելու է:

Մթերատեարին հիմնական ձեւը թէեւ չի փոխուիր, այսինքն, մէկ կողմը վաճառատունը մտած ապրանքները կը գրուին, և միւս կողմը Էլաճները, սակայն գործին տեսակին համեմատ այս տեսորին երեսի գիծերը կ'աւելնան կամ կը պակսին:

Քանի մը տեսակ ապրանքի վրայ գործող վաճառականը՝ երբ անոնց իւրաքանչիւրին Մոսսին ու Ելջը առանձինն գիտնալ ուզէ, Մթերատեարին վրայ, Մայր-հաշուին պէս, ամէն տեսակ ապրանքի համար զատ երեսներ կը բանայ, գործօրինակ. մէկ երեսին վրայ սուրճին Մուսքն ու Ելքը կը գրէ, և միւսին վրայ՝ աճառինը, ևլն., ինչպէս որ այդ ապրանքներն ալ վաճառատան մէջ զատ զատ տեղեր կը գրուին:

Մեր Մթերատեարի օրինակը կէս-մեծաքանակ վաճառականներու կը յարմարի. սակայն այդ ձեւին վրայ համառօտութիւններ կրնայ ըլլալ. օրինակի համար, Մոսսին կողմի ծախողներուն և Ելջին կողմի գնողներուն անունին, տեղին և գիծին սիւնները կրնայ վերցուիլ, եթէ վաճառականը ապրանքներուն միայն Մոսսին ու Ելջը գիտնալ ուզէ:

Մթերատեար արժեքդրերու. — Ինչ որ են ապրանքները վաճառականին համար, նոյն են արժէթղթերը (քօսսօլիտէ, երկաթ-ուղի, թրամլէյ, ևլն) դրամատուններու համար, ուր ամէն օր զանազան արժէթղթեր կ'առնուին և կը արուին, որուն համար կարելոր է Մթերատեար մ'ունենալ: Այդ արժէթղթոց առաւ և առնելու գործը մասնաւոր մէկուն յանձնուած է, որուն Արժէթղթոց գանձապահ կ'ըսուի:

Ինչպէս ապրանքի Մթերատեարին մէջ ամէն ապրանքի համար զատ երեսներ կը բացուին, ըսինք, անանկ ալ ամէն տեսակ արժէթղթի համար զատ երեսներ յատկացնելու է Արժեքդրերու Մթերատեարին մէջ:

Որովհետեւ արժէթղթերն ընդհանրապէս թուաւոր կ'ըլլան, որպէս զի միեւնոյն տեսակ արժէթղթերն իրար չի խառնուին, քրամատուններու մէջ խառաքարտէ պահարաններ կան, որոնց մէջ կը դնեն զատ զատ իւրաքանչիւր յաճախորդի արժէթղթերը և պահարանին վրայ կը գրեն յաճախորդին անունը, և արժէթղթին տեսակը, որով ուզուած ատեն Մասուկէն ալ դիւրին կ'ըլլան: Յէ՛ս թ. 428-429 Մթերատեարին օրինակը):

ՏԵՏՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԵԼԻ ՏՅՄԱՅՆՆԵՐՈՒ

Այս տեսորին մէջ վաճառականն ու սեղանաւորը կ'ընդօրինակէն ուրիշներէ ուղղակի իրենց հրամանին առած տոմսակներնին, իրենց ուրիշներու վրայ քաշած փոխանակագրերը, հրամանագրերը, չէքերը և այն տոմսակները, զորս իրենց յաճախորդներէն իբր գրամ կ'ստանան իրենց հրամանին փոխանցուելով: Ինչպէս գիտենք, այս տեսակ թղթոց Գանձելի տոմսակ կ'ըսուի. (Տէ՛ս թ. 334 Գանձելի տոմսակին վրայ գրուածները):

Այս տեսորին մէջ կրնան օրինակուիլ նաեւ որոշեալ օր մը գանձելի հաշուեցոյցներն, այսինքն, հաշուեցոյցը վճարողին անունը, գումարը և վճարօրը միայն և ոչ ուրիշ մանրամասնութիւն, որք, ինչպէս ըսինք, վաճառման տեսիլն մէջ կը գրուին:

Այս տեսորին միջոցաւ գործին տէրը ամէն օր աշքին առջեւ կը տեսնէ թղթապանակի գանձելի թղթոց վճարօրը, և ըստ այնմ գանձեք օրը օրին կը գանձէ, որպէս զի չըլլայ որ օրը անցնելով թուղթը բողբելու և փոխանցողներուն զիմելու իրաւունքէն զրկուի և չ'այդ կերպով վնասուի: Ասկէ զատ՝ գանձելի թղթերն իրենց մանրամասնութեամբ այսպէս մասնաւոր տեսորակի մէջ ընդօրինակելով, օր մը եթէ թուղթ մը կորսուի, կորսնցնողը տեսորակին մէջ նշանակեալ մանրամասնութեամբ՝ կրնայ կորսուած թղթին ճշմարիտ տէրն ըլլալը հաստատել և ի հարկին, գանձել, եթէ արդէն օրը լրացած է, և եթէ չէ լրացած՝ անոր օրինակը կամ երկրորդը պահանջել, եթէ կորսուածը փոխանակագիր է:

Այս տեսորակը 12 մասի կամ երեսի կը բաժնուի, իւրաքանչիւրը սարւոյն մէկ ամիսին համար: Թուղթ շատ զեղչող սեղաչիւրը սարւոյն մէկ ամիսին համար, ամէն ամսոյ համար երկու կամ աւելի երես նաւորներու համար, ամէն ամսոյ համար երկու կամ աւելի երես յատկացնելու է. մինչեւ իսկ ամէն օրուան համար զատ երես բանալ հարկ է, եթէ զեղչուած թղթերը շատ են:

Այս տեսորին ամէն ամսոյ երեսին ճակատը գրելու է զվնասգրով 189. Գանձելի տոմսակ . . . ամսոյ և տակը քաշելու է զիծեր, որք կը կազմեն 12 սիւներ, որոց առջինին մէջ կը գրուի թղթին (տոմսակ, փոխանակագիր ևլն.) կարգի թիւը, 1 էն սիսելով.

Մոսկ

Մ Ք Յ Ե Տ Ր

Թուական	Թիւ	Վաճակատ	Ս. պրոսիցիանացի	Գիւմ	Ծախս	Թիւ	Վաճակատ	Ս. պրոսիցիանացի	Գիւմ	Գնոյ	Տեղ					
1898																
Յուլիս	10	20-35	16	Հակ	Վարէր մանած ք. 8/14	800	Զ. Հանօբուլօ	12 14	20-22 23-25	3 3	Հակ " " " "	Վարէր մանած ք. 8/14 " " " "	820 822	Իբրանու. ցեղբ. Կոստիկեան	Պոլիս "	
Օգոստոս	1	60-69	10	Պրկ.	Խանուէ	8	Մ. Նիֆոլայիսկա									
"	18	---	400	Ծր.	Մասամբօլ 40 ես. ք. 750	70	Յ. Մուրաշեան	20 " 25	--- --- ---	100 50 150	Ծր. " " " " " " " "	Մասամբօլ 40 ես. ք. 750 " " " " " " " "	80 82 81	Նարան Կանի Ծիրա Յ. Ղուկասեան	Պոլիս " "	

2րդին մէջ՝ թղթին թուականը, տարին, ամիսը և ամսոյն օրը, եթէ թուղթը թուականէն այսքան օր կամ ամիս ետքը գանձելի է. 2րդու ընդունելութեան թուականը կը գրուի, եթէ փոխանակագիրը տեսօրէն այսքան օր կամ ամիս ետքը գանձելի է. 3րդին մէջ՝ տոմսակը ստորագրողին կամ փոխանակագիրը քաշողին անունը, (եթէ օրինակուածը փոխանակագիր է). 4րդին մէջ՝ որո՞ւ հրամանին ըլլալը. 5րդին մէջ՝ վճարողին անունը, եթէ փոխանակագիր է. 6րդին մէջ՝ վճարուելիք տեղը. 7րդին մէջ՝ թղթին տեսակը, այսինքն, տոմսակ, փոխանակագիր, ևլն. ըլլալը. 8րդին մէջ՝ վերջին փոխանցողին անունը, ուրիշ առնուած է այդ թուղթը. 9րդին մէջ՝ պայմանաժամը, այսինքն, թղթին քանի՞ օրուան կամ ամսուան ըլլալը. 10րդին մէջ՝ վճարօրը. 11րդին մէջ՝ գումարը կատարակով մէկտեղ. 12րդին մէջ՝ Ելի, այսինքն, ծանօթութիւն մը թէ՛ թուղթը օրին մե՞նք գանձեցինք, թէ օրէն առաջ մէկուսն տուինք կամ զեղջեղ տուինք, որպէս զի ասով կարելի ըլլայ թղթապանակին պարունակութիւնը հակակշռել: Ամէն թուղթ այսպէս մէկ տողի վրայ կ'օրինակուի:

Այս տեսարին մէջ թուղթ մ'օրինակելու համար նախ անոր պայմանաժամը հաշուելով գտնալու է թէ՛ վճարօրը ո՞ր ամսոյ մէջ կը պատահի. ետքը նոյն ամսոյ երեսին վրայ արձանագրելու է զայն: Օրինակ, Յակոբէն տոմսակ մ'առինք 98 Յունվար 1էն 91 օր-

Ելի

ուան. զոր Գանձելի տունակի տեսակը պիտի արձանագրենք. նախ թղթին վճարօրը կը գտնանք այսպէս. թուղթը Յունվար 1էն ըլլալով.

- Յունվարէն կը մնայ 30 օր
- Փետրվարը ունի 28 »
- Մարտը » 31 »
- Ապրիլէն առնելով 2 »
- Կ'ըլլայ 91 օր, որ է թղթին պայմանաժամը, հե-

տեւաբար և վճարօրը կ'ըլլայ Ապրիլ 2ին. ուստի և տեսակին Ապրիլի երեսը բանալով հոն կ'օրինակենք:

Թուղթ մը այս տեսարին մէջ արձանագրելէ ետքը, կարգի թիւը թղթին վրայ եւս կը գրուի. Շատ վաճառականներ իրենց անունով կ'նիք կ'ունենան, զոր սեւ կամ գունաւոր մելանով կը զարնեն տոմսակին կամ փոխանակագրին վրայ, և այդ կ'նիքին պարագայ մասին մէջ կը գրեն նոյն թղթին կարգի թիւը:

Այն վաճառատուններու մէջ ուր թուղթ շատ չի զեղչուիր, ամանք կարգի թիւը 101էն 501էն կամ 1001էն սկսելով կը դնեն, որով կ'ուզեն այսպէս իրենց գործին իրականէն աւելի կարեւորութիւն տալ:

Շատ թուղթ զեղչողները ամէն ամսոյ համար զատ թղթապանակներ կ'ունենան, ամսոյն անունները վրանին գրուած և

1898

ԳՆԱԿԱԿՆՆԵՐ ԱՄՍՈՅ

Թ. հարկի	Մուտքի Թուական	Քաշող կամ Պարտական	Որո՞ւ հրամանին	Ընդունող կամ Վճարող	Թղթին Տեսակը	Փ. խանցող	Պայմանագրի Թվականը	Գումար		Ելի կամ Ծանօթություն Գանձման	
								Լ. 0.	Ս. 0.		
	1898										
1	Յուլիս	10	Ք. Սիմոնեան	Մ. Սիմոնեան	Փոխանկցիր.	Գ. Մարեան	91	9	115	50	Գանձուած
2	Օգոստոս	15	Յ. Նեանեան	Պ. Գաբրիելեան	Տոմսակ	Կ. Համամեան	61	15	150	—	
3	Սեպտեմբ.	30	Գ. Ներսիսեան	Ն. Հանեսեան	Փոխանկցիր.	Ն. Հանեսեան	31	31	250	—	Զեղչել տրուծ.
4	"	20	Մ. Սահակեան	Յ. Ասրեան	"	Ս. Իճեկ Յակոբեան	41	"	100	—	

Հետզհետէ գեղջած թղթերնին՝ վճարօրերնին որ ամսոյ մէջ որ պատահի՝ նոյն ամսոյ թղթապանակը կը դնեն, որպէս զի թուղթ մը հանելը գիւրին և շուտով ըլլայ:

Նոյնպէս սեղանաւորը և դրամատունը գանձելի թղթոց վրայ ճակատը գունաւոր մելանով կամ գունաւոր մատիտով կը գրեն անոնց վճարօրերը. կամ ապուած պզտի թղթեր կը փակցնեն, գրելով անոնց վրայ վճարողին անունը, տեղը, գումարը, վճարօրը, որպէս զի ամէն օրուան թղթերը թղթապանակէն դիւրաւ հանուի:

ՏԵՏԵ ԱՐՁԱՆԳՐՈՒԹԵԱՆ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՆԵՐՈՒ

Այս տետրին մէջ վաճառականն ու սեղանաւորը կ'ընդօրինակեն ուրիշներու հրամանին իրենց ստորագրած եւ տուած ստանակներնին, և ուրիշներու իրենց վրայ քաշած փոխանակագրերը, հրամանագրերը և շէքերը, զորս կ'ընդունին վճարելու համար: Ինչպէս գիտենք, այս տեսակ թղթերուն վճարելի տունակ կ'ըսուի: (Տես թ. 336 վճարելի տունակի հաշիւին վրայ գրուածները):

Այս տետրին մէջ կրնան օրինակուիլ նաեւ որոշեալ օր մը վճարելի հաշուեցոյցները, այսինքն, հաշուեցոյցը վճարողին անունը, գումարը և վճարօրը և ոչ ուրիշ մանրամասնութիւն, որք ինչպէս ըսինք, Գնման ճեղքին մէջ կը գրուին:

Այս տետրին միջոցաւ գործին տէրը ամէն օր աչքին տալել կը տեսնէ իր վճարելիք թղթոց վճարօրը, և ըստ այնմ օր առաջ կը հոգայ զանոնք վճարելու գործը, որպէս զի չ'ըլլայ թէ՛ յանպատրաստից անկարող ըլլալով վճարել, իր թուղթը բողբուի, որ մեծ անպատուութիւն է:

Այս տետրն ալ 12 մասի կամ երեսի կը բաժնուի, իւրաքանչիւրը տարւոյն մէկ ամիսին յատկացնելով: Վճարելի թղթեր շատ ենցող վաճառատուններու և սեղանաւորներու համար, ամէն ամսոյ համար երկու կամ աւելի երես յատկացնելու է. մինչեւ իսկ ամէն օրուան համար զատ երես բանալ հարկ է, եթէ վճարելի թղթերը շատ են:

Այս տետրին ամէն ամսոյ երեսին ճակատը գրելու է գլխագրով /89. վճարելի տունակի. . . ամսոյ և տակը քաշելու է գիծեր, որք կը կազմեն 11 սիւներ, որոց առջինին մէջ կը գրուի թղթին (տունակ, փոխանակագիր ևլն.) կարգի թիւը թ. 1էն սկսելով.

Ծանօթ.—Ինչպէս կ'երեւայ, վեր Հոկտեմբեր երեսին վրայ չորս բուրք օրինակած ենք, որոց մէկը գանձուած եւ միւսը գեղջել տրուած ըլլալով՝ երկու բուրք կը մնայ, որ պէտք է գանձուի նոյն ամսոյ բոլորապանակին մէջ. եթէ տեղի գանձուի, քսել է թէ բուրք մը չէ անցած տեսակը. եթէ պակաս գանձուի, քսել է թէ գանձուած եւ ելին սիւնը չէ գրուած, զոր լինելու եւ ուղղելու հարկ է:

Չրդին մէջ՝ թղթին թուականը, տարին, ամիսը և ամսոյն օրը, եթէ թուղթը թուականէն այսքան օր կամ ամիս ետքը վճարելի է, ընդունելութեան թուականը կը գրուի, եթէ փոխանակագիրը սեւօրէն այսքան օր կամ ամիս ետքը վճարելի է. Յրդին մէջ՝ թուղթը ստորագրողին անունը, եթէ տոմսակ է. քաչողին անունը, եթէ փոխանակագիր է. Կրդին մէջ՝ որո՞ւ հրամանին ըլլալը. Տրդին մէջ՝ վճարողին անունը, եթէ փոխանակագիր է. Յրդին մէջ՝ վճարուելիք տեղը. Դրդին մէջ՝ թղթին տեսակը, այսինքն, տոմսակ, փոխանակագիր, շէք ևլն. ըլլալը. Տրդին մէջ՝ պայմանաժամը, այսինքն, թուղթը քանի՞ օրուան կամ ամսուան ըլլալը. Թրդին մէջ՝ վճարօրը. 10րդին մէջ՝ գումարը կոտորակով մէկտեղ. 11րդին մէջ՝ Մուտք, այսինքն, ծանօթութիւն մը թղթին օրին վճարուած ըլլալուն մասին, որպէս զի, ատով կարելի ըլլայ գիտնալ թէ շրջաբերութեան մէջ դեռ ո՞րչափ վճարելի թղթեր կան. Ամէն թուղթ այսպէս մէկ տողի վրայ կ'օրինակուի:

Այս տեսարին մէջ թուղթ մ'օրինակելու համար, նախ անոր պայմանաժամը հաշուելով գտնալու է թէ վճարօրը ո՞ր ամսոյ մէջ կը պատահի. ետքը նոյն ամսոյ երեսին վրայ արձանագրելու է զայն:

Օրինակ, 98 Ապրիլ 10էն 71 օրուան տոմսակ մը տուինք Գրիգորի հրամանին, զոր վճարելի տոմսակի տեսակը պիտի արձանագրենք: Նախ թղթին վճարօրը կը գտնանք այսպէս.

- թուղթը կը մնայ 20 օր
- Մայիսն ունի 31 »
- Յունիսէն առնելով 20 »

Կ'ըլլայ 71 օր, որ է թղթին պայմանաժամը, հետեւաբար և վճարօրը կ'ըլլայ Յունիս 20ին: Ուստի և տեսակին Յունիսի երեսը բանալով հոն կ'օրինակենք մանրամասնութեամբ:

Թուղթ մը այս տեսարին մէջ արձանագրելէ ետքը, կարգի թիւը թղթին վրայ եւս կը գրուի, և ինչպէս Գանձելի տոմսակի տեսարին առթիւ ըսինք, վաճառականը իրեն կնիքը թղթին վրայ դարնելով, այդ թիւը կնիքին պարագ մասին մէջ կը գրէ:

(Տե՛ս թ. 433 վճարելի Տոմսակներու տեսարին օրինակը):

ՏԵՏԲ ՓՈՒԱՆԱԿԱՎՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Այս տեսարակը կարեւոր է անոնց, որք Գամպիօ կը գնեն ու կը ծախեն: Ասոր մէջ կ'օրինակուին ուրիշներէ գնուած և սեղանաւորին եւրոպական քաղաքներու վրայ քաշած փոխանակագրերը:

1898 ՎՃԱՐԵԼԻ 80ՄԱՐԿԻ 0 ԳՈՍՏՈՍ ԱՄՍՈՅ

Մասնակցի կամ օգտագործի անունը	
Գումար	L. 0. 268 50
Ժամանակ	10 22
յարբերակ	91 61
Թղթի տեսակը	Տոմսակ ֆինկը.
Վճարման տեղը	Պոլիս »
Վճարող	Յ. Բարսեղեան
Հրաման	Օ. Միմանեան Ե. Պօղոսեան
Քաշող կամ զարտական	Գ. Սեպուհեան »
Թուական	11 22
Վճ	1898 Մայիս Յունիս
	1 2

Այս տետրին ձեւը, ինչպէս դրուած օրինակէն կ'երեւայ, եթէ ոչ ամէն կերպով, գէթ հիմնապէս նման է Մթերատետրին, այսինքն, թղթերը Մուսֆի և Ելֆի ձեւով կ'արձանագրուին հոն, որով ամէն ատեն կը գիտնանք թղթապանակի փոխանակագրերը, որք, դրամի պէս արժէք ունին:

Այս տետրակին, որ մեծ վաճառատուններու և դրամատուններու համար վերնագիրները և գիծերը յատկապէս տպել կը տրուի, երկու երեսը մէկտեղ կը բացուին, որուն ձախ՝ այսինքն, Մուսֆին կողմը կ'օրինակուին սեղանաւորին ուրիշներէ գնած և իր՝ ուրիշներու վրայ քաշած փոխանակագրերը և չէքերը, վերջապէս թղթապանակը մտած բոլոր Գանկիօները, իսկ աջ՝ այսինքն, Ելֆին կողմը, ուրիշի ծախած և իր թղթակիցներուն իբր դրամ զրկած փոխանակագրերը և չէքերը, վերջապէս թղթապանակէն ելած բոլոր Գանկիօները:

Գանձելի և վճարելի տոմսակի տետրակներուն նման, այս տետրին մէջ ալ իւրաքանչիւր փոխանակագիր մէկ տողի վրայ կը գրուի:

Այս տետրին Մուսֆին կողմը կան 11 սիւներ, որոց առջինին մէջ կը գրուի կարգի թիւը 1էն սկսելով, 2րդին մէջ՝ փոխանակագրին թուականը, տարին, ամիսը և ամսոյն օրը, 3րդին մէջ՝ քաշողին անունը, 4րդին մէջ՝ ո՞ր քաղաքէն քաշուած ըլլալը, 5րդին մէջ՝ որո՞ւ վրայ քաշուած ըլլալը, 6րդին մէջ՝ ընդունողին բնակած քաղաքը, 7րդին մէջ՝ որո՞ւ հրամանին քաշուած ըլլալը, 8րդին մէջ՝ տեսակը, այսինքն, Յ/ամս, կամ կարճ ըլլալը, 9րդին մէջ՝ վճարօրը, 10րդին մէջ՝ գումարը, եթէ թուղթը անզգ լիբայի է, 11րդին մէջ՝ դարձեալ գումարը, եթէ Ֆրանքի է, ևլն:

Մեր օրինակին Մուսֆին և Ելֆին կողմը գումարի երկու սիւն կայ, մին՝ անզգ լիբայի և միւսը՝ Ֆրանքի համար, սակայն միայն անզգ լիբայի թղթերու վրայ գործողին համար Ֆրանքի սիւնն աւելորդ է, նոյնպէս անզգ լիբայի սիւնն աւելորդ է միայն Ֆրանքի թղթերու վրայ գործողին համար:

Ելֆին կողմը կան 10 սիւներ, որոց առջինին մէջ կը գրուի՝ թղթապանակէն ելած, այսինքն, ծախուած կամ ուրիշի զրկուած Ֆրանքի փոխանակագրերու գումարները, եթէ ծախուած կամ զրկուածները Ֆրանքի փոխանակագիր են, իսկ 2րդին մէջ՝ անզգ լիբայի գումարները, եթէ ելածները անզգ լիբայի փոխանակագրեր են, 3րդին մէջ՝ թղթին որո՞ւ ծախուած կամ զրկուած ըլլալը, 4րդին մէջ՝ ծախուած կամ զրկուած թուականը, 5րդին մէջ՝ գլխաւոր փոխանցողները կամ անոնցմէ վերջինը, եթէ ըլլայ, 6րդին մէջ՝ ի հարկին նշանակուած անձին անունը (եթէ փոխանակագրին վրայ այդ յիշատակութիւնը կայ), 7րդին մէջ՝

այն անձին անունը, որուն զրկուած է փոխանակագրին մէկ օրինակը ընդունելութեան համար, (եթէ փոխանակագրին վրայ այդ յիշատակութիւնը գրուած է), 8րդին մէջ՝ փոխանակագրին բուն թիւը, 9րդին մէջ՝ աւանուած և ծախուած գիները, 10րդին մէջ՝ ֆրանքի անունը, որուն ձեւքով գնուած կամ ծախուած է թուղթը, եթէ գործողութիւնը միջնորդի ձեւքով կատարուած է:

Փոխանակագրի տետրին Մուսֆի և Ելֆի գումարի երկու սիւներէն զատ, կարելի է ուրիշներ ալ աւելցնել տարբեր դրամով, Ֆիօրինով, մարքով, բուպլիով, ևլն, փոխանակագրերու համար, եթէ նոյն տեսակ դրամով թղթերու վրայ եւս գործող ըլլայ:

Գանձելի և վճարելի տոմսակներու տետրին պէս, փոխանակաւոր տետրին մէջ ալ թուղթը օրինակելէ ետքը, տետրակին



Ժամանակին անոնց տոկոսն ալ հաշուելով հոն կ'արձանագրեն:

Այս տետրակին ձեւը, ինչպէս անունէն ալ յայտնի է, հաշուընթացի նման է, տետրակին երկու երեսը մէկտեղ բացուելով կը գրուի այնպէս, ինչպէս հաշուընթացը կը գրուի: Ասոր համար աւելորդ է կրկին ցուցնել հոս ձեւն այս տետրին, որուն իւրաքանչիւր երկու երեսն (Պարսի և Պահանջե) ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ ընդօրինակութիւն ամէն մէկ անձի հաշուընթացին: Իսկ սովորաւոր հաշուընթաց շատ չունեցողները այս տետրին ալ պէտք չեն ունենար, միայն հաշուընթաց պատրաստուած ատեն, իրենց նամակի ընդօրինակութեան տետրին մէջ կ'օրինակեն:

No.	Date	Tireur	Ville	Qui	Ville	Ordre	Nature	Echéance	ENTRÉE			
									£	Stg.	...	
	1897											
2842	Mai 9	Banque Imp. Ottomane	Constople	p. Ottomane	Londres	S. Nalbanian	5/m. date	Août 12	750	—	—	
2843	" 19	T. et E. Karagheusian	"	rian Bank	"	B. Kaprielian	" "	" 22	1000	—	—	
2844	Juin 8	Tékéian Frères	"	ères	Marseille	S. Minassian	2/m. "	" 8	—	—	—	
2845	" 12	Gumushguerdan & Cie	"	rdan Frères	Manchester	K. Torikian	5/m. "	Sept. 15	500	—	—	
2846	" 18	O. & M. Essayan	"	O. sayan	Londres	A. Duzendjian	" "	" 21	1000	—	—	

այն անձի
 նախք ընդ
 թիւաւակ
 թիւը 9
 Գրեւորակ
 թուղթը
 Փոխ
 ներքն զ
 Գիտորնակ
 էթէ նայ
 Գան
 Կարտ
 Կարգի թ
 կամ սեզ
 Այս
 բաժնու
 նակուքն
 Գերեւ
 թղթի ճ
 Կէ ցուցն
 նուած թ
 Խանակ
 Եւստիան
 Փոխ
 Հան որին
 Կէսան

Այս
 ստորագր
 թիւնն

Այս տետրին ձեւը, ինչպէս դրուած օրինակէն կ'երևայ, եթէ ոչ ամէն կերպով, գէթ հիմնապէս նման է Մթերատետրին, այսինքն, թղթերը Մուսֆի և Ելֆի ձեւով կ'արձանագրուին հոն, որով ամէն ատեն կը գիտնանք թղթապանակի փոխանակագրերը, որք, գրամի պէս արժէք ունին:

Այս տետրակին, որ մեծ վաճառատուներու և դրամատուներու համար վերնագիրները և գիծերը յատկապէս տպել կը տրուի, երկու երեսը մէկտեղ կը բացուին, որուն ձախ՝ այսինքն, Մուսֆին կողմը կ'օրինակուին սեղանաւորին ուրիշներէ գնած և իր՝ ուրիշներու վրայ քաշած փոխանակագրերը և չէքերը, վերջապէս թղթապանակը մտած բոլոր Գանկիօները. իսկ աջ՝ այսինքն, Ելֆին կողմը, ուրիշի ծախսած և իր թղթակիցներուն

ԿԵՄ
ԲԻՆ
000

Մյրն կողմը կան 10 սիւներ, որոց առջինին մէջ կը գրուի՝ թղթապանակէն ելած, այսինքն, ծախուած կամ ուրիշի զրկուած ֆրանքի փոխանակագրերու գումարները, եթէ ծախուած կամ զրկուածները ֆրանքի փոխանակագիր են. իսկ 2րդին մէջ՝ անգղ. լիբայի գումարները, եթէ ելածները անգղ. լիբայի փոխանակագրեր են. 3րդին մէջ՝ թղթին որո՞ւ ծախուած կամ զրկուած ըլլալը. 4րդին մէջ՝ ծախուած կամ զրկուած թուականը. 5րդին մէջ՝ գլխաւոր փոխանցողները կամ անոնցմէ վերջինը, եթէ ըլլայ. 6րդին մէջ՝ Ի հատկին նշանակուած անձին անունը (եթէ փոխանակագրին վրայ այդ յիշատակութիւնը կայ). 7րդին մէջ՝

այն անձին անունը, որուն զրկուած է փոխանակագրին մէկ օրինակը ընդունելութեան համար, (եթէ փոխանակագրին վրայ այդ յիշատակութիւնը դրուած է). 8րդին մէջ՝ փոխանակագրին բուն թիւը. 9րդին մէջ՝ առնուած և ծախուած գիները. 10րդին մէջ՝ միջնորդին անունը, որուն ձեռքով գնուած կամ ծախուած է թուղթը, եթէ գործողութիւնը միջնորդի ձեռքով կատարուած է:

Փոխանակագրի տետրին Մուսֆի և Ելֆի գումարի երկու սիւներէն զատ, կարելի է ուրիշներ ալ աւելցնել տարբեր դրամով, ֆիօրինով, մարքով, բուպիով, ևլն. փոխանակագրերու համար, եթէ նոյն տեսակ դրամով թղթերու վրայ եւս գործող ըլլայ:

Գանձելի և վճարելի տոմսակներու տետրին պէս, փոխանակագրի տետրին մէջ ալ թուղթը օրինակելէ ետքը, տետրակին կարգի թիւը փոխանակագրին վրայ ալ կը գրուի, վաճառականին կամ սեղանաւորին յատուկ կնիքին պարագ մասին մէջ:

Այս տետրակը տոմսակի միւս տետրակներուն պէս 12 մասի բաժնուած չէ. այլ փոխանակագրերը հետզհետէ խառն կ'օրինակուին հոն. միայն թէ՛ Մնտուկի տետրակին պէս ամէն ամսոյ վերջը այս տետրին ալ Մուտքին ու Ելքին գումարները զատ թղթի մը վրայ ընկելով, կշիւր, որ պատրաստ փոխանակագրերը կը ցուցնէ, պէտք է քննել և հակակշուել թղթապանակը գումարուած թղթոց հետ: Եթէ ճիշդ ըլլայ, իբր կշիռ մնացած փոխանակագրերը նոյն ամսոյ ելքին կողմը և յաջորդ ամսոյ սկիզբը՝ մուտքին կողմը կարմիր մելանով գրելու է:

Փոխանակագրի տետրակը գազդիւերէն կը գրուի, քանի որ հոն օրինակուած թղթերն ալ մեծ մասամբ գազդ. կամ անգղ. կ'ըլլան:

ՏՅՏԲ ՀԱՇՈՒՆՆԹԱՏԻ

Այս տետրակը կարելոր է անոնց համար, որքշատերու հետ տոկոսաւոր հաշուընթաց ունենալով, անոնց հետ բրած գործողութիւններնին անմիջապէս իրենց հաշիւին կ'անցնեն և ետքը որոշեալ ժամանակին անոնց տոկոսն ալ հաշուելով հոն կ'արձանագրեն:

Այս տետրակին ձեւը, ինչպէս անունէն ալ յայտնի է, հաշուընթացի նման է. տետրակին երկու երեսը մէկտեղ բացուելով կը գրուի այնպէս, ինչպէս հաշուընթացը կը գրուի: Ասոր համար աւելորդ է կրիին ցուցնել հոն ձեւն այս տետրին, որուն իւրաքանչիւր երկու երեսն (Պարսի և Պահանջե) ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ ընդօրինակութիւն ամէն մէկ անձի հաշուընթացին: Իսկ տոկոսաւոր հաշուընթաց շատ շունեցողները այս տետրին ալ պէտք չեն ունենար, միայն հաշուընթացը պատրաստուած ատեն, իրենց նամակի ընդօրինակութեան տետրին մէջ կ'օրինակեն:

ՏԵՏՐ ՆԱՄՈՒԿ ԸՆԴՈՐԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Այս տետրակը առեւտրական Օրինագրքին պահանջածներէն մին ըլլալով՝ վաճառականին համար շատ կարեւոր է:

Վաճառականը ասոր մէջ կ'օրինակէ թղթակիցներու գրուած նամակները, հաշուեցոյցները, վաճառման հաշիւները, հաշուընթացները, հեռագիրները, և իր առեւտուրին վերաբերեալ գանազան գրութիւններն ու պայմանագրութիւնները եւլն: Նամակներն այս տետրին մէջ ընդօրինակուելով, վաճառականը կարող կ'ըլլայ ասպազային գիտնալ թէ՛ գործողութիւններն ի՞նչ կերպով առաջարկուած, ընդունուած և կատարուած են: Օրէնքն անոր համար պահանջած է այս տետրակը որ՝ վաճառականը եթէ մէկուն հետ վէճ ունենայ, և իր հակառակորդը ստացած նամակները երեւան չհանէ, վաճառականին ընդօրինակութեան տետրակը նայուի. վասն զի, տարբեր քաղաքներ գտնուող երկու վաճառականի միջեւ գործողութիւնները փոխադարձ գրուած նամակներով կը կատարուին, և այդ գործողութեանց վերաբերեալ գրութիւնք նամակի ձեւով և ստորագրութեամբ ըլլալով՝ հետեւարար և այս տետրին մէջ օրինակուելով, վաճառականին շատ մը գործողութեանց պատմագիրը կը համարուի:

Հին ատենը նամակները տետրակի մը մէջ գրուելով կ'ընդօրինակուէին. յայտնի է թէ մասնաւոր մէկը հազիւ պիտի բաւէր ընդօրինակելու շատ թղթակիցներ ունեցող մէկուն նամակները, սակայն այսօր այդ ընդօրինակութիւնը այս գործին յատուկ տետրակի և պզտի մամուլի միջոցաւ կ'ըլլայ շատ շուտ և դիւրին:

Նամակի ընդօրինակութեան տետրակը երեսները թուագրեալ և մամուլը թղթավաճառաց քով պատրաստ կը ծախուին: Տետրակը սիկարի թղթի նման բարակ և թափանցիկ թղթերէ շինուած է, որպէս զի գրուած նամակին մեղանը շուտով անցնի անոր և գրերն երեւան: Ամէն մեղանով գրուած նամակներուն ընդօրինակութիւնը չառնուիր (մանաւանդ երբ վրայէն օր անցնի), այլ ընդօրինակութեան յատուկ մեղան կայ. այդ մեղանով գրուած նամակները միայն կրնան մամուլով ընդօրինակուիլ:

Մամուլով ընդօրինակելու համար, տետրակին մէկ թղթին աջ կողմը ետին ծծուն թուղթ մը դնելով վրձինով և պարզ ջրով թրջելու է, ետքը նոյն երեսին վրայ ալ ծծուն թուղթ դնելով՝ տետրակը գոցել և վերջը նորէն բանալով առջի ծծուն թուղթը հանելու և քիչ մը ծծունով չորցնելէ ետքը՝ տեղը նամակը դնելու է. յետոյ տետրակը գոցելով մամուլին տակ սեղմելու է. և ահա երկու վայրկեանի մէջ նամակին ճիշդ օրինակը կը կարգաս տետրակին մէջ:

Չանազան երկիրներու և քաղաքներու հետ շատ թղթակցութիւն ունեցողները ընդհանրապէս ամէն երկրի կամ քաղաքի համար առանձինն ընդօրինակութեան տետրակ կը յատկացնեն, և այդ երկիրներուն համար գրած նամակներն իրեն յատուկ տետրին մէջ կ'օրինակեն: Օրինակի համար, Յրանսայի, Անգլիոյ, Ֆերմանիոյ, Ռուսիոյ եւլն. երկիրներու կամ անոնց քաղաքներուն, Փարիզի, Լօնտրայի, Պէրլինի, Բեռլինի ևլն. ի համար մասնաւոր տետրակներ կը յատկացնեն, տետրակներուն վրայ գրելով որ տեղին յատուկ ըլլալը:

Ընդօրինակութեան տետրին հետին A. B. C. ի կամ Ա. յուրբէնի տառերով իւրաքանչիւր գիրի համար մէկմէկ պարզ թերթ կ'ըլլան, ուր կը գրուի իւրաքանչիւր թղթակցի անունը՝ անուան սկզբնատառերուն համեմատ, և տեղերնին. անոնց քովը կը գրուին հետզհետէ տետրակին երեսի թիւերը, ուր այդ մարդոց գրուած նամակները կ'ընդօրինակուին:

Օրինակի համար

	Յ	
Յ. Մինասեան, Մարսիլիա	Երես	12.19.25
Յակոբ Գրիգորեան, Թօգաթ	»	7.13.22
	Ն	
Ներսէս Կարապետեան, Փարիզ	Երես	4.10.11
Նազարէթ Ասլանեան, Կարին	»	3.5.17

Այս ցանկով՝ գրուած նամակին օրինակը շուտով կը գտնուի տետրակին մէջ, որուն երեսներուն վրայ ալ, ինչպէս ըսինք, տպուած թիւեր կան, որք այդ տետրին մասնաւոր վաւերականութիւն մը կը տան:

ՏԵՏՐ Զ. ՊԱՐՏԱԿԱՆՆԵՐՈՒ

Մասնաւոր հաշւոց վրայ խօսելով ըսինք թէ՛ զանազան տեղացի շատ մարդոց հետ ապագիլ գործ ընող վաճառականը, փոխանակ Մայր-հաշուին մէջ անոնց իւրաքանչիւրին համար զատ հաշիւներ բանալով հաշիւները շացնելու, անոնց ամէնուն մէկէն Չանազան Պարտակալի անունով հաշիւ մը կը բանայ և բրած գործողութիւնները այդ հաշիւին կը տանի: (Տե՛ս Թ. 344):

Սակայն այդ հաշիւին վրայ նայուած ատեն չենք կրնար գիտնալ թէ՛ Պօղոս կամ Յակոբ ո՞րչափ կը պարտի, քանի որ երկուքին ալ բրած գործողութիւնները միեւնոյն հաշիւին անցած են. ուստի Մայր-հաշուին ձեւով ուրիշ տետրակ մը կը գործածուի, այսինքն, տետրակին երկու երեսը մէկտեղ բանալով՝ ձախ կողմը Պարտի և

աջ կողմը Պահանջի մէջտեղը մարդուն անունը, երկու երեսներուն վրայ ալ միեւնոյն ելեալ թիւը կը գրուի. յետոյ եղած գործողութիւնները Օրհաշուէն կամ Ձեռնաւարէն առնելով այդ տետրին մէջ կ'անցնի, այսինքն, զանազաններու ծախուած ապրանց գումարը իւրաքանչիւրին հաշիւին Պարսֆին, իսկ անոնցմէ առնուած դրամներն ալ անոնց Պահանջիին կ'անցնի: Այս տետրին կ'ըսուի Չանագան Պարսականներու տետրակ:

Այս տետրին բոլոր հաշուց կշիւը հաւասար ըլլալու է՝ Մայր-հաշուին Զ. Պարսականի հաշիւին կշիւին, որ, ինչպէս ըսինք, այդ հաշուց բովանդակութիւնն է:

ՏԵՏՐ Զ. ՊԱՐՏԱԿԱՆՆԵՐՈՒ

1 Պարսի ՅԱԿՈՒ ՄԻՆԱՍԵԱՆ, Ե. Գարանիսարցի Պահանջէ 1

1898	Յնվ.	1 Առած ապրանք	1000	1898	Մրս.	8 Տուած դրամը	1000
»	25	»	1500	»	31	»	500
Մրս.	2	»	500	»	»	Կռ. ի նոր հաշիւ	1500
			3000				3000
1898	Ապլ.	1 Հին հաւուոյն	1500				

2 Պարսի ՄԿՐՏԻՉ ՖԷՐՄԱՆԵԱՆ, Կարենցի Պահանջէ 2

1898	Յնվ.	15 Առած ապրանք	3050	1898	Ապլ.	10 Տուած դրամը	1000
»	30	»	1000	»	30	»	1050
			4050	»	»	Կռ. ի նոր հաշիւ	2000
							4050
1898	Մյս.	1 Հին հաւուոյն	2000				

ՏԵՏՐ Զ. ՊԱՆԱՆՉԱՏԵՐՆԵՐՈՒ

Մասնաւոր հաշուց առթիւ խօսեցանք նաեւ Զ. Պահանջատարի հաշիւին վրայ, որ բովանդակութիւնն է շատ մը պահանջող հաշիւներու, զորս չենք ուզեր Մայր-հաշուին մէջ բանալ, Սակայն այս տետրակ հաշիւէ մը չենք կրնար գիտնալ թէ՛ Գրիգոր կամ

Մինա մեզմէ ո՞րչափ կը պահանջէ, քանի որ երկուքին ալ ըրած գործողութիւնները միեւնոյն հաշիւին անցած են: Ուստի ճիշդ Զ. Պարսականներու տետրին նման տետրակ մը կը գործածուի, եւ անոր մէջ հաշիւներ կը բացուին ամէն Պահանջատարի համար, այնպէս ինչպէս բացատրեցինք Զ. Պարսականներու տետրին առթիւ: Յետոյ եղած գործողութիւնները Օրհաշուէն կամ Ձեռնաւարէն առնելով այդ տետրին մէջ կ'անցնեն, այսինքն, զանազաններէ առնուած ապրանց գումարը իւրաքանչիւրին հաշիւին Պահանջիին. իսկ անոնց վճարուած դրամներն ալ անոնց Պարսֆին կ'անցնի: Այս տետրին կ'ըսուի Զ. Պահանջատարի տետրակ:

Այս տետրին բոլոր հաշուց կշիւը հաւասար ըլլալու է Մայր-հաշուին Զ. Պահանջատարի անուն հաշիւին կշիւին:

Այս բացատրութիւններէն ետքը, հարկ չենք տեսներ օրինակ այլ Զ. Պահանջատարի տետրին, որուն ձեւը նման է, ըսինք, Զ. Պարսականներու տետրին:

ՏԵՏՐ ԿԱՆԻԹԻԿ ՄԱԽԻ

Այն վաճառատուններու մէջ, ուր ապրանքները փոքրաքանակ եւ մաս առ մաս կը ծախուին, կանխիկ ծախուածներուն կարելոր մանրամասնութիւնները գրուելու համար կանխիկ ծախք անունով տետրակ մը կը գործածուի:

Ամէն օրուան կամ ամսուան կանխիկ ծախքերու գումարը հաւաքուելով Մնտուկը եւ Օրհաշիւը կ'անցնի:

ՏԵՏՐ ԿԱՆԻԹԻԿ ՄԱԽԻ

1 Յունվար 1898					
10 ծր. սպառոյ	302 երս.	գ. 3 դո.	906		
2 » մատմբոյ	150	» 95 »	190		
10 մեքր. սեւ սաքեն		» 8 »	80		1176
2					
20 երս. սեւ Լահորափ		գ. 13 դո.	260		
5 գոյգ բուրդ գուլպայ		» 10 »	50		
100 մեքր. Տամատո սպառոյ		» 5 »	500		810
3					
5 ծր. սպառոյ	145 մեքր.	գ. 4 դո.	580		
105 երս. Ֆանկլա		» 8 »	840		
3 տուգինալ բաւկիմակ		» 20 »	60		1480
					3466

ՏԵՏՐ ՀԱՇՈՒՆԿԵՐԻ

Վաճառականական Օրէնքին պահանջած տետրակներէն մէկն է այս, որուն մէջ վաճառականը կ'օրինակէ տարւոյն վերջը կամ ուրիշ տան պատրաստած հաշուեկշիւը իր բոլոր մանրամասնութեամբը, այսինքն, վաճառատան պատրաստ ապրանքին քանակը, տեսակը, գինը, թղթապանակի գանձելի թըղթերը, անոնց վճարօրերը և վճարողներուն անունները, վճարելի թղթերը, գանազաններու պարաքը և գանազաններէ պահանջը, արժէթղթերը և անշարժ կալուածները, եթէ ունի, ևլն:

Հաշուեկշիւ տետրակը մասնաւոր ձեւ մը չ'ունի, այլ, ինչպէս ըսինք, պատրաստուած հաշուեկշիւը անոր մէջ կ'օրինակուի բառ առ բառ:

ՏԵՏՐ ԱՊՍՊՐԱՆՔԻ ԿՈՄ ԶՐԱՄԱՆ

[Օրհնոյի Տեսակ]

Այս տետրակը կարեւոր է անոնց համարորք գաւառներէն մայրաքաղաքները կամ մայրաքաղաքներէն օտար երկիրներու յանձնառուներու կամ գործարանատէրներու ապրանք կ'ապսպրեն միշտ:

Վաճառականը այս տետրին մէջ կ'օրինակէ իր հաշւոյն ապրանք գնելու համար տուած հրամանները կամ ապսպրանքները: Այս տետրակով վաճառականը ամէն տան աշքին առջեւ կը տեսնէ իր ապսպրած ապրանքները իրենց բոլոր մանրամասնութեամբը, այսինքն, տեսակը, քանակը, գինը, ապրանքին համեմատ՝ դոյները, կտաւին որակը, պայմանները ևլն. որոց համաձայն եղած տան միայն կ'ընդունի ապրանքը, հակառակ պարագային, չ'ընդունիր: Այս տետրին մէջ ամէն ապսպրանք իր թուականը և կարգի թիւը ունենալու է, որ կը համապատասխանէ ապսպրանքի ցուցակին և թիւին, որ կը զրկուի ապրանքն ապսպրուած անձին:

Այս տետրին մէջ և ապսպրանքի ցուցակին վրայ փակցնելու է ապսպրուած ապրանքին օրինակները, եթէ ապսպրուածը մանրֆիթուրայ ապրանք է. գորօրինակ, չուխա, տպածոյ, տօքուժա, ֆանէլա, ևլն. իսկ եթէ այն տեսակ ապրանքներ են, որոց օրինակը տետրակին մէջ պահել կարելի չէ. անոնց ալ, ապրանքին համեմատ, օրինակները վրան ապսպրանքին թիւը գնելով մասնաւոր պահարանի մը մէջ (տօլապ) պահելու է, որպէսզի ապրանքը հասած տան ապսպրուած օրինակին հետ բազդատուի:

Այս տետրը մասնաւոր ձեւ մը չ'ունի, պարզ տետրակ մ'է:

Ամէն անգամ որ ապսպրանք մը դայ հասնի, տետրակին մէջ նոյն ապսպրանքին մասին մէջ կը գրուի եկաւ կամ Հասաւ բառը գլխապէր և կարմիր մեկանով, որպէս զի շուտով աշքի զարնէ:

ՏԵՏՐ ՏԱՆ ԾԱԽՔԻ

Վաճառականը պարտաւոր է ըստ օրինի իր տան ծախուց գումարը ամսէ ամիս Օրհաշիւը անցընել, ուստի ամսոյն մէջ ըրած այդ ծախքերը զատ տետրակի մէջ գրելու է, որուն Տան ծախքի տեսակ կ'ըսուի:

Քանի որ այդ ծախուց միայն հաւաքական գումարը Օրհաշիւ հանցնի, ուստի Տան ծախքի տետրակին մէջ գրելու է այդ ծախուց մանրամասնութիւնը, ինչպէս են, ուտելիքի, հագուստի, վառելիքի, սպասաւորներու ամսական, ևլն. և ամսոյն վերջը գումարելով՝ ընդհանուր գումարը Օրհաշիւը անցընելու է գումարին առջեւ նշանակելով Օրհաշիւին երեսի թիւը, ուր անցած է այդ գումարը, ինչպէս կ'երեւայ վարի օրինակին վրայ:

ՏԵՏՐ ՏԱՆ ԾԱԽՔԻ 1898 Մարտ ամսոյ

1898			
Մրս.	2	Հացագործին բերհաւի վնարուած	240
»	»	Մսավաճառին	392
»	7	Գերձակին հաւիւր	1200
»	10	Աձուխի համար	295 20
»	18	Մանր ծախքերու համար	63
»	31	Սպասաւորաց Մարտ ամսականը	450
»	»	Խոնարարին ծախքեր վնարուած	155 10
		Տե՛ս Օրհաւի թ. 9 երես	2795 30

ՏԵՏՐ ԸՆԳՂԱՆՈՒՐ ԾԱԽՔԻ

Նոյնպէս վաճառատան գանազան ծախուց համար, որք գրեթէ ամէն ամիս կ'ըլլան, կարելի է զատ տետրակ մը յատկացընել և այդ ծախքերը, որք են, պաշտօնէից ամսական, թըղթատարի, սուրճի, շուրի, վառելիքի, ևլն. անոր մէջ գրելով, ամսոյն վերջը գումարել և ընդհանուր գումարը միայն Օրհաշիւ անցընել: Այս տետրին կ'ըսուի Ընդհանուր ծախքի կամ Վաճառատան ծախքի տետրակ, որուն ձեւը, ինչպէս յաջորդ երեսը կ'երեւայ, նման է Տան ծախքի տեսակին:

ՏԵՏԸ ԸՆԿՆԱՆՈՒՄ ԵՄԵՔԻ 1898 Յունուար ամսոյ

1898			
Յնվ.	2	Թղթասարի ծախք	6 20
»	7	Փայտ 2 չէփ վառարանին համար եւ ծախք	60 —
»	10	Թղթասարի	8 10
»	15	Վառարանը շինողին հաշիւը վնասուած	185 —
»	20	Խօրասաններին 1897ի հաշիւը վնասուած	562 —
»	22	Վանառասանի ն/ամս. չեփի ստակը	60 —
»	25	Թղթասարի	4 30
»	31	Պատկանից Յունվար ամսականը	3500 —
»	»	» պարգև տարեկան	2500 —
»	»	Սուրճի եւ շրի ծախք այս ամսոյ մէջ	42 10
		Տե՛ս Յունուարի 18 երես	6928 30

ՏԵՏԸ ԱՄՍԱԿԱՆ ԿՏՈՒ 2. ՊԱՐՏԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ 2. ՊԱՆՈՆՅԱՆՏԵՐՆԵՐՈՒ

2. Պարտականներու եւ 2. Պահանջատէրներու տեսարաններուն մէջ շատ հաշիւներ կը բացուին, ըսինք, մեզի պարտք եւ մեզմէ պահանջք ունեցողներուն համար:

Շատ գործառնութիւն ունեցող վաճառատներու մէջ գոնէ ամիսը անգամ մը այդ հաշիւներուն մէկ ցուցակը կը հանեն, ուր կ'երեւայ իւրաքանչիւր հաշիւի որչ՞ափ պարտք կամ որչ՞ափ պահանջք ունենալին, որ կ'ըլլայ, ամսոյն մէջ առածներուն եւ տուածներուն գումարները իրարմէ հանելով եւ կշիւրը գտնելով:

Այս ցուցակը փոխանակ դատ թղթերու վրայ գրելու, որք կրնան կորսուիլ, մասնաւոր տեսարակի մէջ կ'օրինակուին. յաջորդ երեսը գրուածին նման:

Այսպէս ամէն ամսագրուիս հաշիւներուն կշիւրը հանելով եւ այս տեսակ տեսարակի մէջ գրելով՝ գործին տէրը կը գիտնայ իւրաքանչիւր յաճախորդէ որչ՞ափ պահանջք ունենալը, եւ ըստ այնմ կը շարունակէ իր գործը անոնց հետ:

2. Պահանջատէրներուն ամսական կշիւ տեսարակն ալ այս տեսարին նման է. սա տարբերութեամբ միայն որ առջինին մէջ գտնուածները պարտական հաշիւներ են. իսկ վերջինին մէջինները պահանջող հաշիւներ:

Այս բացատրութիւններէն ետքը, հարկ չի մնար այլեւս 2. Պահանջատէրներու ամսական կշիւ տեսարակին ձեւը ցուցնելու:

ՏԵՏԸ ՊՈՐՏԱԿԱՆ

Փորձակշռին առթիւ ըսինք թէ՛ փոխանակ ամէն ամսոյ Փորձակշիւրը դատ թղթերու վրայ ընելու, որք կորսուելու են թակայ են, մասնաւոր տեսարակ մը յատկացնելու եւ ամէն ամսուան Փորձակշիւրը հոն գրելու է. այդ տեսարին կ'ըսուի Փորձակշռի ձեւակ:

Փորձակշռին ձեւը եւ գրուելու կերպը արդէն ցուցուցած ըլլալով՝ այդ տեսարին ձեւն ալ ուրիշ բան չէ, եթէ ոչ. Փորձակշռին ընդօրինակութիւնը այդ տեսարին մէջ:

ՋԱՆԱՋԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՔ Ի 1 Յունիս 1898

1	Կարապետ Սահակեան	12618	20
2	Մինաս Սիրունեան	7395	10
3	Իբրանոսեան Եղբարք	5273	—
4	Յանգո Սեւասի	2127	30
5	Մեսրոպ Յակոբեան	4260	20
6	Սեպուհ Նազարեան	3750	—
7	Գրիգոր Ղազարոսեան	22092	10
9	Մովսէս Պօղոսեան	9275	—
10	Յովնանեկ Միխայիլեան	6500	—
11	Նրանոս Յովսէփեան	3000	—
12	Բարսեղ Մինասեան	2062	10
		78354	20

Ծանօթ.— Յուցակին ձախ կողմի նեղ սիւնին քիւերք՝ նոյն հաւուց 2. Պարտականներու տեսարին ո՛ր երեսը բացուած ըլլալը կը ցուցնէ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՏՈՍԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍԸ

Ձեռատետր. — Օրհաւի. — Մայր-հաւի

Վերջապէս հասանք այն տեղ, ուր պէտք է որ գործնականապէս ի կիր արկանենք այն տեղեկութիւններն ու ծանօթութիւնները, զորս նախընթաց գլխոց մէջ ուսանք:

Հիմա որ գիտենք թէ ի՞նչ է Տոմարակալութիւնը, կրկնատոմարի մէջ գործածուած հաշիւներն և անոնց դերը, Ձեռատետարին, Օրհաւուն և Մայր-հաւուն մէջ գործողութիւնները գրելու եղանակը և ինչ. ասոնք ամենքը տեսականապէս սորվելէ ետքը, այլևս ուսանողը պէտք է որ զանոնք գործնականապէս ի կիր արկանէ, որպէս զի իր ուսածը աղէկ ըմբռնած ըլլայ, ահա այս նպատակով այժմ կը պատրաստենք ընդարձակ Ձեռատետր մը, որ կը պարունակէ այլազան գործողութիւններ, որք ամէն օր կը պատահին գործի մէջ: Ուսանողաց դիւրութեան համար՝ մասնաւորապէս խնամք տարած ենք նախ պարզ յօդուածները դնել և հետզհետէ բաղադրեալները: Երբ մէկը այս Ձեռատետրին յօդուածները ուշադրութեամբ ուսումնասիրէ և լուծելով Օրհաւուն և Մայր-հաւուն անցընէ, կրնանք ըսել թէ կրկնատոմարի սկզբունքը աղէկ ըմբռնած կը համարուի, և գործի մէջ տետրակ գրելու սկսած ատեն ալ բաւական վարժ և պատրաստուած կ'ըլլայ:

Այս Ձեռատետրին միայն Օրհաւուն և Մայր-հաւուն պատրաստեցինք. երկրորդական տետրակները գրել աւելորդ համարեցինք, ուսանողին թողլով որ ինքը մի առ մի պատրաստէ զանոնք, հետեւելով մեր օրինակներուն: Մեր պատրաստելիք Ձեռատետրը կը վերաբերի Ադամ-Նորայրին, որ իր հօրմէն 10000 ոսկի ժառանգած ըլլալով՝ վաճառականութեան ձեռնարկած է 1897 Յունվար 1ին: Իր վաճառատունը հաստատած է Պօլիս Մեծ-Նոր-Սանը միջնայարկ թ. 9-10 սենեակները: Ադամ-Նորայր իրեն գործ որոշած է կէս-մեծաքանակ վաճառականութիւն զանազան ապրանքներու վրայ, և քիչ մ'ալ դրամական գործողութիւններ. իրեն թղթակիցներ ընտրած է Փարիզ և Մանչէսթըր, որոց հետ պիտի գործէ:



Ձեռատետր

Ա Պ Ա Մ - Ն Ո Ր Ա Յ Ր Ծ

Կ. Պօլիս, 1 Յունվար 1897

Լ. 0. 100 Ղ. ԷԿ

1	1 Յունվար 1897	
	Գրամագլուխ դրի 10000 Լ. 0. գործի սկսելու համար	1000000
2	»	
	Վճարեցի վարձած սենեակներու 6/ամս. վարձքը	3000
3	»	
	Վճարեցի գնած հետեւեալ կարասիներու համար	
	Մէկ դրամարկդ	2000
	Երկու գրասեղան, վեց աթոռ	600
	Մէկ քանարէ և մէկ վառարան	900
		3500
4	»	
	Վճարեցի Ա. և Ս. Սօրասանճեանի հաշուեցոյցը՝ տետրակներու և գրասենեկի ուրիշ պէտքերու համար	850
5	2	
	Գնեցի Մարտիրոս Թօղաթեանէ վճարելի 31 օրէն	
	թ. 8061.200 ծր. տպածոյ 8010 Էրա. դ. 2 Ղ. 16020	
	» 8072.150 » » 4500 » » 2 1/4 10125	
	» 8078.240 » » 7252 » » 2 2/10 18492 1/2	
	Լ. 0. 116 Ղ. Էն = Լ. 0. 384.80 1/2 44637 1/2	38480 20
6	»	
	Գնեցի կնիկ. Գ. Ալեանաքեան և Ընկ. Էն Լ. 0. 100 Ղ. Էն	
	թ. 4620/22.60 կպ. վթր. մեծ. թ. 20/24 դ. 37 Ղ. 2220	
	» 4710.12 40 » » » » 4 » 26 » 1040	
	» 4738/39.40 » » » » 6 » 27 » 1080	
	» 4758.60 40 » կարմիր » » 20 » 52 » 2080	6420
7	3	
	Մայրեցի կանխիկ կարնեցի Գ. Մըսեանի	
	100 ծր. տպածոյ 4003 Էրա. դ. 2 5/8 9507	
	50 » » 1500 » » 2 5/8 3937 1/2	
	Լ. 0. 115 Ղ. Էն 13444 1/2 11691	
	թ. 4758.20 կպ. կրմիր. մեծ. թ. 20 դ. 55 Ղ. կպը	12791

8 ————— 3 Յունվար 1897 —————		
<i>Մախեցի Պրուսացի Յակոբ Պալապանօղլուին, վճարելի ամսոյս մէջ</i>		
50 ծր. տպածոյ	2000 երա. գ. $2\frac{18}{10}$	4800
40 » »	1210 » » $2\frac{7}{8}$	$3478\frac{3}{4}$
	Լ. Օ. 115 ՂԸ. ԷՆ	$8278\frac{3}{4}$ 7199
Թ. 4760.20 կպ. կրմր.	մնծ. Թ. 20 գ. 56	1120
» 4738.20 » վաթէր	» » 6 » 30	600
	Լ. Օ. 100 ՂԸ. ԷՆ	1720 1720
9 ————— 4 —————		8919
<i>Հաշուընթաց բացի Գոէտի Լիօնէի տեղւոյս մասնաճիւղին հետ տարեկան $\frac{1}{10}$ 6 փոխադարձ տոկոսով և զրկեցի 8000 Լ. Օ.</i>		
10 ————— » —————		800000
<i>Գնեցի Յ. Ստամպօղլուեանէ, ի/հ 91/օր իմ տոմսակովս</i>		
200 ծր. ամերիքան	31 ինչ. 24 երա. գ. 34	6800
150 » »	36 » 24 » » 38	5700
1500 » սվչպուր.	54 » 18 » » 30	45000
	Լ. Օ. 110 ՂԸ. ԷՆ = Լ. Օ. 522.73	57500
11 ————— 5 —————		52273
<i>Մախեցի Ամասեացի Իբրանտեան Եղբարց, իմ/հ 91/օր իրենց տոմսակովը</i>		
50 ծր. տպածոյ	2007 երա. գ. $2\frac{1}{4}$	$4515\frac{3}{4}$
100 » »	3000 » » $2\frac{1}{2}$	7500
200 » »	6042 » » $2\frac{3}{4}$	$16615\frac{1}{2}$
	Լ. Օ. 115 ՂԸ. ԷՆ = Լ. Օ. 248.965/4	286311/4
12 ————— » —————		2489630
<i>Մախեցի հետեւեալներուն, վճարելի ամսոյս մէջ</i>		
<i>Մարզըվանցի Գրիգոր Պողոսեանի Լ. Օ. 100 ՂԸ. ԷՆ</i>		
Թ. 4620/21	40 կպ. վթր. մնծ. Թ. 20/24 գ. 40	1600
» 4710.20	» » » » 4 » 30	600 2200
<i>Կարնեցի Սարգիս Աէֆէրեանի Լ. Օ. 110 ՂԸ. ԷՆ</i>		
50 ծր. ամերիքան	31 ինչ. 24 երա. գ. 37	1850
50 » »	36 » » » » 40	2000
200 » սավաչպուր	54 » 18 » » 32	6400 9318
13 ————— » —————		11518
<i>Սնտուկիս փորձն ընելով մէկ Լ. պակաս գտայ, հաշիւները քննելէ ետքը՝ չգտայ պակասը, զոր կ'ուզղեմ</i>		
		100

14 ————— 8 Յունվար 1897 —————		
<i>Այս առաւօտ վաճառատանս բեռնակիրն ինձ տուաւ մէկ լիբայ, զոր աւրած ատեն գտած էր. ասի առջի օրուան պակասը լիբան է, զոր կ'ուզղեմ</i>		
15 ————— » —————		100
<i>Մախեցի իմ/հ 61/օր իրենց տոմսակովը</i>		
<i>Արարիկերցի Միրաք Մալխասեանին Լ. Օ. 100 ՂԸ. ԷՆ</i>		
Թ. 4622.20 կպ. վթր. մնծ. Թ. 20/24	գ. 40	800
» 4712.20 » » » »	4 » 30	600
» 4739.20 » » » »	6 » 30	600 2000
<i>Տրապիզօնցի Պ. Արապեանին Լ. Օ. 110 ՂԸ. ԷՆ</i>		
100 ծր. ամեր.	31 ինչ. 24 երա. գ. $36\frac{1}{2}$	3650
50 » »	36 » 24 » » 40	2000
300 » սվչպուր.	54 » 18 » » 33	9900 14136
16 ————— 9 —————		16136
<i>Ղրկեցի Գոէտի Լիօնէին Հաշուընթացիս համար</i>		
17 ————— » —————		150000
<i>Գնեցի կանխիկ Պանք Օթօմանէ £ 300ի 3/ամս. փոխանակագիր Լօնտրայի իր տանը վրայ գ. $109\frac{1}{2}$</i>		
<i>Այս սեսակ փոխանակագրերը Դաննիի տոմսակի հաշույն շնտանելու համար, զոս հոսիս պիտի բանամք Սրեոյիկի կամ Անգղ. լիբայի փոխանակագիր անունով եւ զայն Պարսական եւ Սնտուկր Պահանջող պիտի բնենք: [Տե՛ս Թ. 334]</i>		
18 ————— » —————		32850
<i>Յ. Յակոբեան և Որդիի Մանչէսթըրի տանը հետ համաձայնեցայ $\frac{1}{10}$ 2 յանձնառուչէքով և տարեկան $\frac{1}{10}$ 6 տոկոսի 6/ամս. Հաշուընթացով ապրանք ապսպրել, և այսօր տուած ապսպրանքներուս հաշույն զրկեցի £ 300 Պանք Օթօմանի փոխանակագիրը</i>		
<i>Յ. Յակոբեան եւ Որդի ի Մանչեսթըր Պարսական եւ Սրեոյիկի փոխանակագիրը Պահանջող բնելու է:</i>		
<i>Թէև մեր պարսքը Յ. Յակոբեանին անգղ. լիբայ է եւ Մայրհաշուին մէջ անոր հոսիսին վրայ անգղ. լիբայի գումարին համար զոս սիւներ պիտի գծենք, այսու հանդերձ թէ՛ անկէ՛ գայի՛ք ապրանք անգղ. լիբայի գումարներուն եւ թէ՛ մեր զրկելի՛ք սրէո լիբի փոխանակագրոց Օ. Լ. ով որոշ գին մը դնելու է, այսինքն 110 դո. (Տե՛ս Թ. 351 Դրաւի միտրիսը Տոմարակալութեան մէջ):</i>		
		33000

19 ————— 10 Յունվար 1897 —————		
Գնեցի Պարսիկ Դեպարտմենտի Մէհմէտ Հիւսէյինէն Հե- տեւեալ գորգերը . վճարելի 5 ամիսէն կամ 0/0 5 զեղչով .		
412 մէթ. ֆէրհն. ստն. գ. 11 ֆ. մթր. ն ֆ. 4532		
208 1/2 » » ծանր » 17 » » » 3544 1/2		
315 » հէրիզ » 12 1/2 » » » 3937 1/2		
163 » համէտան » 15 » » » 2445		
137 1/2 » խորասան » 21 1/2 » » » 2956 1/4		
100 հատ սէտճ. ֆրհն. » 25 » հատը » 2500		
100 » ճիճիմ » 15 » » » 1500		
23 ֆր. ը մէկ լիբրայի հաշով ֆր. 21415 1/4	93110	—
20 ————— » —————		
վճարեց Պրուսացի Յակոբ Պալապանօղլու իր պարտքը		8919
21 ————— » —————		
Մասնեցի Տրապիզոնցի Առաքել Ստշեանի Լ. Օ. 110 Ղ. էն.		
50 ծր. ամերիքան 31 ինչ. 24 երտ. գ. 37	1850	
50 » » 36 » 24 » » 41	2050	
500 » սավաշպուռ. 54 » 18 » » 33	16500	
	20400	
կարգադրեց հետեւեալ կերպով		
կանխիկ դրամ	3545 1/2	
Իմ/հ 61/օր իր տոմսակը	15000	
22 ————— 12 —————		
Առի Գոէտի Լիօնէէն 2000 Լ. Օ.		200000
23 ————— » —————		
Գնեցի կանխիկ Ս. Ֆնտզլեանի ձեռօք հետեւեալ թղթերը		
£ 500.— 3/ամս. Կիւմրուչկրտն. եղ. ց վրայ. Ի Մնչսթըր		
» 1000.— » Յ. Յկրեն և որդ. ին » »		
» 500.— » Օ. և Մ. Էսայեանի » Ի Լօնտրա		
£ 2000.— գ. 109	218000	
Տոկոս Լօնտրայի 3 1/2 անցած օրերուն հմր.	240	
£ 2000 ին 218,000ի արժէքին համար Սրեոչիճի փոխանակա- գիրը եւ 240 զե. Լօնտրայի տոկոսին համար՝ որ 3 ամիսէն պակասած օրերուն համար տրուած է, Տոկոս եւ Չեղլը Պարսական ընելու է եւ Սնտկը Պահանջող 218240 ին համար :	218240	—

24 ————— 12 Յունվար 1897 —————		
Ապահովագրել տուի վաճառատանս ապրանքները «Իւնիօն աը Բառի» ընկերութեան 5000 Լ. Օ. Ի համար, և տարեկան ապահովողչէքը վճարեցի 0/0 1/4 էն.		1250
Ասի բէն ծախս մէ, բայց ապրանքի համար ըլլալուն՝ Ընդ- ճանուր Ապրանքը Պարսական եւ Սնտկը Պահանջող ընելու է. որպէս զի ապրանքին զուտ շահը հասկցուի :		
25 ————— 13 —————		
Ղրկեցի Մանչէսթըր Յ. Յակոբեան և Որդիին £ 500 Էսայեանի թուղթը		55000
26 ————— » —————		
Հօրեղբայրս Գրիգոր Նշանեան փոխ տուաւ տա- րեկան 0/0 4 ով 2000 Լ. Օ. ուզած ատենը վճարելի		200000
27 ————— » —————		
Ղրկեցի Գ. Լիօնէին հաշուընթացիս համար		200000
28 ————— » —————		
Գոէտի Լիօնէին հետ համաձայնեցայ որ Փարիզի իր Տան վրայ մինչեւ 100000 ֆր. Ի 3/ամս. փոխանա- կազիր քաշեմ, փոխարէնը իրենց վճարօրին մօտ ուրիշ 3/ամս. թղթեր ղրկելու և տարեկան 0/0 3 փոխադարձ տոկոսով. ղրկած 3/ամս. թղթերս օր- ուան տոկոսի սակովը զեղչուելով՝ զուտը պահանջ- քիս պիտի անցնի : Գաշած թղթերուս և իմ հաշույս իրենց ընելիքը վճարմանց վրայ 0/0 1/4 յանձնառող- չէք պիտի վճարեմ		
Այսօր քաշեցի 5000 ֆր. Ի 3/ամս. թուղթ մը իմ/հ գ. 23		
Ինչպէս որ անգղ. իրայի փոխանակագրերը Գանձ. տոմսակի հաշույն չի առնելու համար Սրեոչիճի փոխանակագիր հաշիւը բացինք . անանկ ալ ժր. փոխանակագրերուն համար Ֆրանքի փոխանակագիր հաշիւը բացալով զայն Պարսական պիտի ընենք, Պահանջող ընելով Փարիզի Գոէտի Լիօնէին :		
29 ————— 15 —————		
Գնեցի կանխիկ հետեւեալ արժէթղթերը		
£ 10000 անուակ. ն Օ. Բօն. Ս. Գ. գ. 20 1/2 զը.	205000	
50 հատ Թրմիլ. Ի Ընկ. ն բաժ. գ. Լ. Օ. 7. 20	36000	
20 » Տէրքօսի » » գ. ֆ. 340. 23 էն	29565	
100 » Բուժ. Երկաթ. գ. ֆր. 90	39130 1/2	
5 » Շիրքէթի Սայրիէ գ. Լ. Օ. 32	16000	
	325695 20	
[Տե՛ս թ. 322 հաշիւ Արժեքորոց]		

30	15 Յունվար 1897	Առի Գուէտի Լիօնէէն	320000
31	»	Մախեցի ապառիկ $\frac{1}{10}$ 9 տոկոսով Պ. Ժամակոչեանի £ 300 Յ. Յակոբեան և Որդիի թուղթը գ. 109 $\frac{2}{4}$ 32925 Տոկոս Լօնարայի անցած օրերուն համար 30	32955
<p>Չանգաններու ապառիկ ծախուած ապրանց համար զանազան բանալով զանոնք Պարսկան բրինձ. հիմա սկսանք ապառիկ փոխանակագիր ալ ծախել, ուստի բէ՛ փոխանակագրի պարսկանները ապրանքի պարսկաններէն զանախ, և բէ՛ Մայր-հաւուրին մէջ շահ հաշիւներ չբանալու համար, Փոխանակագրի 2. Պարսկանի հաշիւ մը պիտի բանանք և զանազաններու ապառիկ ծախուած փոխանակագրոց համար այդ հաշիւը Պարսկան, և անոնցմէ զանոնուած դրամներուն համար ալ Պահանջող պիտի ընենք :</p> <p>Չեսեւար վերի յօդուածը Օրհաշիւ անցրնելու համար փոխանակագրին 32955ի արժէքին համար Փոխանակագրի 2. Պարսկանը Պարսկան. իսկ Սրեռչիկի փոխանակագիրը՝ 32925ի և Տոկոս և Զեղը՝ 30 դե. տոկոսին համար Պահանջող պիտի ընենք : [Տե՛ս թ. 344].</p>			
32	»	Վճարեց Մարգրովանցի Գրիգոր Պողոսեան իր պարտքը	2200
33	16	Կարնեցի Սարգիս Սէֆէրեան իր պարտքը կանխիկ չկրնալով վճարել, 100 Լ. ի ն. Հանէսեանի ամսոյս 30ին վճարելի փոխանակագիրը առաւ, յորմէ իր Լ. Օ. 93.18 ի պարտքը վար իջնելով, մնացորդ Լ. Օ. 6.82ը իրեն ետ տուի	10000
<p>Գանձ. տոմսակը 10000 ի համար Պարսկան, իսկ Սարգիս Սէֆէրեանի 9318 ի և Սնուկը 682ի համար Պահանջող ընելու է.</p>			
34	»	Մախեցի կանխիկ Գուէտի Լիօնէի վրայ քաշած 5000 Քր. ի փոխանակագիրս գ. 22.75 21978 Տոկոս Փարիզի $\frac{20}{10}$ անցած 3 օրերուն հմբ. $\frac{3}{2}$	21981 20
<p>Սնուկը՝ 21981 $\frac{1}{2}$ ի մմբ. Պարսկան. իսկ Պահանջող ընելու է Ժրանի ֓ոխանակագիրը՝ 21978ի և Տոկոս և Զեղը՝ 3 $\frac{1}{2}$ ի տոկոսին համար :</p>			

35	16 Յունվար 1897	Ամսոյս 2 ին Մարտիտոս Թօգաթեանէ զնած ապա- ծոյներէս մէկ մասին գոյները աւրուած ըլլալով՝ 10 Լ. Օ. ի աժգինի զեղչ առի, զոր իր պարտքին կանցնեմ	1000
<p>Այս 10 իբրև շահ մ՛է, որուն համար Շահ և Վեսար Պահանջող և Մարտիտոս Թօգաթեանը Պարսկան ընելու է :</p>			
36	17	Վճարեց թերհաշիւ Պ. Ժամակոչեան փոխանակագրի պարտքին համար Ինչպէս բ. 31 յօդուածին առբիւ բրինձ, Պ. Ժամակոչեանին համար հաշիւ բացուած չըլլալով՝ անոր սեղ ֓ոխանակագրի 2. Պարսկանիը Պահանջող և Սնուկը Պարսկան ընելու է :	15000
37	»	Մախեցի Մաքսուտ Նաւարեանի Լ. Օ. 109էն, վճարելի 2 ամիսէն կամ կանխիկ $\frac{1}{10}$ 2 զեղչով, 500 ձր. սափաշարուր 54 ինչ. 18 երա. գ. 34	15596
38	19	Մախեցի 20 հատ Թրամկէյի բաժնեթուղթ գ. Լ. Օ. 8.10էն	16200
39	»	Ղրկեցի Գուէտի Լիօնէին	50000
40	»	Մախեցի ապառիկ Կ. Համամճեանի £ 500 Կիւմիւչկէրտանի թուղթը գ. 110 55000 Տոկոս Լօնարայի 10 օրուան $\frac{1}{10}$ 3 46	55046
<p>Այս յօդուածը թ. 31ին նման է և անոր պէս պիտի լուծուի :</p>			
41	»	Մաքսուտ Նաւարեան զեղչելով վճարեց իր պարտքը կանխիկ վճարածը 15284 Ըրած զեղչը $\frac{20}{10}$ 15596ի վրայ 312	15596
<p>Պահանջող ընելու է Մաքսուտ Նաւարեանը 15596ին համար, զի թ. 37 յօդուածով ա՛յնչպիսի Պարսկան եղած է. իսկ Պարսկան ընելու է Սնուկը՝ առնուած 15284ին, և Տոկոս և Զեղը՝ 312ի զեղչին համար, Մեր Մայր-հաւուրին մէջ երէ Տոկոս և Զեղի հաշիւը բացած չըլլայինք, 312ի զեղչը, որ վնաս մ՛է, Շահ և Վեսարին պիտի սանելինք, այսինքն, Տոկոս և Զեղիին սեղ՝ Շահ և Վեսար Պարսկան պիտի ընելինք. (Տե՛ս թ. 340 Շահ և վնասի ստորագրածանուցքը).</p>			

42 ————— 20 Յունվար 1897 —————		
Գնեցի կանխիկ Արմենակ Մանուկեանէ		
500 կպ. ճերմակ թիբէ 5 լիպ. թ. 6/16 գ. 30	15000	
500 » էսմէր » » » » 24	12000	27000
43 ————— » —————		
Մախեցի Հ. Ճանիկեանի 2 ամիս պայմանաժամով		
200 կպ. ճերմակ թիբէ 5 լիպ. թ. 6/16 գ. 34	6800	
200 » էսմէր » » » » 28	5600	
	12400	
Սահայն ինքը 1/2 զեղչով վճարել նախամեծար սեպեց		
Կանխիկ վճարածը	12152	
Վար դրած զեղչը 2 1/2 12400ի վրայ	248	12152
Ասի թ. 41 յօդուածին պէս կ'երեւայ, բայց այնպէս չէ. սուր մէջ զեղչը Յոսեփ անցրեմէ հարկ չէ. զի ապրանքը թէև 12400ի ծախեցիմք, բայց 248ը անմիջապէս զեղչուելուն, զուս 12152ի ծախած եղանք. հետեւաբար նոյնչափի համար Պարսա- սական ընելու է Սնուկը եւ Պահանջող Ընդհանուր Ապրանքը փոխանակ թ. 41 յօդուածին պէս՝ Պարսական ընելու Սնուկը՝ 12152ի եւ Տոկոս եւ Ձեղչը 248ի զեղչին համար, որ աւելորդ գումարներ են այս սեսակ պարագաներու մէջ:		
44 ————— 21 —————		
Գնեցի Ս. և Ք. Տամատեանէ վճարելի 4 ամիսէն կամ 1/4 զեղչով		
200 ծր. քարլը. մամրլ. 35 ինչ. 40 երա. գ. 62	12400	
500 » մէրմէր շահի 38 » 12 » » 12 1/2	6250	
1000 » » » 42 » 18 » » 26	26000	
500 » թիւլպէնա 34 » 19 1/2 » » 14	7000	
	51650	46116
45 ————— » —————		
Ստացայ իրենց փոխանակագրի պարտքին համար		
Պ. Ժամակոչեանէ	15000	
Կ. Համամեանէ	20000	35000
Թ. 36 յօդուածին պէս պիտ լուծուի այս եւ սուր նմանները:		
46 ————— 22 —————		
Վճարեցի 1/4 զեղչով Ս. և Ք. Տամատեանի 46116 ի պարտքս		
Կանխիկ վճարածս	44271	
Վար դրած 1/4 զեղչս 46116ի վրայ	1845	46116

Այս յօդուածը թ. 41ին հակառակն է. հոն զեղչ տւիմք, որ վնաս մ'ըլլալուն, Տոկոս եւ Ձեղչը Պարսական ըրիմք. հոս 1845ի զեղչ առիմք, որ ան մ'ըլլալուն՝ Տոկոս եւ Ձեղչը Պահանջող պիտ ընենք: [Շահ եւ վնասը Պահանջող պիտ ընենք, եթէ Տոկոս եւ Ձեղչը հաշիւ բացած չըլլալիմք] վնասուած 44271ին համար ալ Սնուկը Պահանջող. իսկ 46116ի համար Ս. և Ք. Տամատեանը Պարսական պիտ ընենք, զի թ. 44 յօդուածով այնչափի համար Պահանջող եղած են:		
47 ————— 22 Յունվար 1897 —————		
Ասի Գաէաի Լիօնէէն		20000
48 ————— 23 —————		
Մանչէսթըրի Յ. Յակոբեան և Որդի պատրաստէն գներ և ճամբայ հաներ են ապարած 645 ծր. ապածոյներս, և հաշուեցոյցին դուժարը £ 362.10.9 Յունվար 16էն Պարսիս անցուցեր են. ես ալ անոնց Պահանջիմք տանելու եմ նոյն գումարը		39879
Պահանջող ընելու է Յ. Յակոբեան եւ Որդի £ 362.10.9ին համար 110 դո.էն [39879] եւ Ընդհ. ապրանքը Պարսական: Թէև ապրանքը դեռ հասած չէ, բայց համբայ ելած եւ արժէքին համար իմ հաշիւս հոն Պարսական եղած ըլլալով, ես ալ նոյնը հոս ընելու եմ, այսպէս անցրելով այս եւ սուր նման յօդուածները:		
49 ————— 24 —————		
Մախեցի Նիքօլի Էմմանուէլիտիին		
300 կպ. էսմէր թիբէ 5 լիպ. թ. 6/16 գ. 27 1/2	8250	
300 » ճերմակ » » » » » 33 1/2	10050	
	18300	
Կարգադրեց այսպէս		
Իմ/հ 31/օր իր տոմսակը	8000	
» 61/օր » »	8000	
Ուայիմ Միթրանիի 5/օր փոխանակագիրը	2300	18300
Խայիմ Միքրանիի փոխանակագիրն ալ Պահանջի տոմսակի հաշույն վերաբերելուն՝ 18300ին հմր. Պահանջի տոմսակը Պարսական եւ Ընդհանուր ապրանքը Պահանջող ընելու է:		
50 ————— » —————		
Գնեցի Գասթէլլիէն 100 ծր. սեւ սաթէն բրդեայ		
4768 երա. գ. 6 1/4 Լ. Օ. 100էն	29800	
Կարգադրեցի այսպէս		
Ի/հ 31/օր իմ տոմսակս	15000	
Չէք մը հոս Գաէաի Լիօնէին վրայ	10000	
Կանխիկ դրամ	4800	29800

<p>Գոէի Լիօնէի վրայ Բաւուած չէր վնասելի տմաակ համա- րելու չէ, այլ Գոէի Լիօնէն դամ առնուած սեպելու է. զի զիտեմ արդէն քէ՛ Պանեան հաւուրնրացով սրուած դամները առնելու համար անպահաւա չէր Բաւելու է. նետեարար Պար- սական ընելու է Ընդհանուր ապրանքը 29800ի համար, եւ Պա- նանցոյ Վճարելի տմաակը՝ 15000ի, Գոէի Լիօնէն՝ 10000ի եւ Սնուկը՝ 4800ի համար.</p>	
<p>51 ————— 25 Յունվար 1897 ————— Քաշեցի Փարիզի Գոէարի Լիօնէին վրայ Կ. Համամ- ճեանի հրամանին 4500 Ֆր. Ի չէք մը Գ. 23</p>	19565
<p>Պանեի փոխանակագիրը Պարսական եւ Փարիզի Գոէի Լիօնէն Պանանցոյ ընելու է. Բաւուած Յիմա.ներ եւ չէքեր լիւան 23 ճր.էն պիտի հաւուենք, աւանց հաւուի առնելու զինքն տար- բերութիւնը եւ տկոսը, որք վերջէն մեր շահը պիտի ըլլան, երբ զանոնք ծախենք.</p>	
<p>52 ————— » ————— Մախեցի ապառիկ Կ. Համամճեանի՝ իր հրամանին քաշած չէքս 4500 Ֆր. Գ. 22.82¹/₂ 19715¹/₄ Տոկոս 20⁰/₁₀ 85 օրուան 93</p>	19808 10
<p>53 ————— » ————— Նիքոլի Էմմանուէլիտի՝ իրեն ծախած թիւքներու տեսակին վրայ առարկութիւն հանելով, 3 Լ. Ի տըք- զին մը առի</p>	300
<p>Այս 3 լիւան վնաս մէ. Նիքոլի Էմմանուէլիտի հաւուը զոցուած ըլլալով՝ այս 3 Լ. ին համար Շահ եւ Վնասը Պարսական եւ Սնուկը Պանանցոյ ընելու է.</p>	
<p>54 ————— 26 ————— Գնեցի կանխիկ Խորասանճեան եւ Արզրեանէ 10000 Ֆրանքի 3/1 անս. Թուղթ Փարիզի վրայ Գ. 22.97¹/₂</p>	43525 20
<p>55 ————— » —————</p>	
<p>56 ————— » ————— Առի Գոէարի Լիօնէին 10000 Ֆր. Ի 3/1 անս. փոխանակագրերը, որոնց զուար պահանջ- քիս պիտի անցնի</p>	50000
<p>Ղրկեցի Փարիզ Գոէարի Լիօնէին 10000 Ֆր. Ի 3/1 անս. փոխանակագրերը, որոնց զուար պահանջ- քիս պիտի անցնի</p>	43478
<p>Տե՛ս Թ. 335 Ռըմիզի հաշուին վրայ գրուածը եւ ըստ այնմ լուծէ. 57 ————— 27 ————— Ղեղչել տուի 0/10 12ով Բըրըքճեան եւ Ջրուանճ- տեանցին Առաքել Խաչեանի Մարտ 12ին վճարելի 150 Լ. Ի տմաակը Կանխիկ առի 14780 Ղեղչ 12 0/10 44 օրուան 220</p>	15000

<p>Տե՛ս Թ. 373 ուր բուրք զեղչել շալու գործողութիւնը ի՞նչպէս եւ Բանի՞ կերպով Օրհաւի անցրնելու մասին խօսած ենք. Գալով այս յօդուածն Օրհաւի անցրնելու մասին. նախ Պարսական ընելու է Սնուկը՝ առնուած 14780ին եւ Տոկոս եւ Չեղչը՝ սրուած 220ի զեղչին համար, որ վնաս մէ. [Շահ եւ Վնասը Պարսական պիտի ընէինք, երբ Տոկոս եւ Չեղչ հաւուը քաշած ըլլալինք.] իսկ Գանճ. տմաակն այլ Պանանցոյ պիտի ընենք՝ սրուած 15000ի տմաակին համար.</p>	
<p>58 ————— 27 Յունվար 1897 ————— Մախեցի Զ. Ճճարտարասեանի իմ/հ 5/1 անս. իր տմաակովը 412 մէթ. ֆէրազան ստորին Գ. 12 Ֆր. Ֆր. 4944 208¹/₂ » » ծանր » 19 » » 3961¹/₂ 315 » հէրիզ » 14 » » 4410 163 » համէտան » 17 » » 2771 137 » խօրասան » 23 » » 3151 50 հատ սէտճատէ ֆէրզն. » 29 » » 1450 50 » ճիճիմ փէրաւէցու » 17¹/₂ » » 875</p>	
<p>Լիւան 23 Ֆր. Էն Ֆր. 21562¹/₂</p>	93750
<p>59 ————— 28 ————— Գնեցի Ֆոթիատի Ֆրէրէն 10 ծր. կերպաս գունաւոր 450 մէթ. Գ. 70 31500</p>	
<p>Կարգադրեցի այսպէս Ի/հ 31/օր իմ տմաակս 10000 » 61/օր. » » 10000 Կանխիկ վճարածս 6500</p>	
<p>Մնացորդ պահանջը՝ ուզած ասենք վճարելի 5000</p>	31500
<p>Պարսական ընելու է Ընդհ. ապրանքը՝ գնուած 31500ի ապրան- քին համար. իսկ Պանանցոյ ընելու է Վճարելի տմաակը՝ մեր սրուած 20000ի երկու տմաակներուն. Սնուկը՝ վնասուած 6500ին եւ Պորխաի Ֆրէրը՝ մնացորդ 5000ի պահանջին համար.</p>	
<p>60 ————— 29 ————— Գանճեցի Խայիմ Միթրանիի փոխանակագիրը</p>	2300
<p>61 ————— 30 ————— Մախեցի Եօրկաքի Փափազօղլու խանութպանին 30 ծր. սեւ սաթէն բուրք 1410 երա Գ. 7¹/₂ վճարելի կէսը 21 և կէսը 61 օրէն</p>	10575
<p>62 ————— » ————— Գանճեցի Ն. Հանէսեանի փոխանակագիրը</p>	10000

63	3 / Յունիս 1897	Սաացայ իրենց փոխանակագրի պարտքին համար Պ. Ժամակոչեանէ, նօթային մնացորդը	2955	
		Կ. Համամճեանէ թերհաշիւ	30000	32955
64	»	Ղրկեցի Գռէտի Լիօնէին		50000
65	»	Վճարեցի հետեւեալ ամսական ծախքերս Վաճառատանս պաշտօնէից Յնվ. ամսականը	2200	
		Տան ծախքի համար առածս	1500	
		Անձնական ծախքի համար առածս	500	
		Թղթատարի, սուրճի և ուրիշ մանր ծախքերու համար	45 ¹ / ₂	4245 ³⁰
